Գիրքը լուսապատճենվել է «Համահայկական Էլ. Գրադարան» կայքի՝ freebooks.do.am-ի կողմից և ներկայացվում է ընթերցողների ուշադրությանը:

The book created by «PanArmenian E. Library»

Բոլորի կողմից սիրված Գրքամոլ ֆեյսբուքյան էջը սկսել է մի նախաձեռնություն, որի նպատակն է համացանցում էլեկտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև էլեկտրոնային տարբերակով: Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կհայտնվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ինչ-ինչ պատճառներով ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի:7

Գրքամոլ էջը, լինելով միակը ամբողջ համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրատիպերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողներ չկան:

Սիրելի՛ ընթերցողներ, սրանք մեր առաջին քայլերն են այս ասպարեզում, և մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան մեզ օգնել այս հանրօգուտ գործում: Մենք բաց ենք բոլոր նվիրյալ և օգնել ցանկացող մարդկանց համար: Եթե դուք տանը ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող այս հանրօգուտ գործին, ապա գրեք Ձեր ցանկության մասին մեր էլ.- հասցեով՝ grqamol@gmail.com: Շնորհակալություն, որ հետևում եք մեզ: Ցանկանում ենք բոլորիդ հաճելի ընթերցանություն:

Գրքամոլ Նախաձեռնություն

2013-2014 © Grqamol. All Rights Reserved.
URL: www.grqamol.am, e-mail: grqamol@gmail.com

ՀԻՆԳ ՎԻՊԱԿ

ԱՄԱՐԱ

Հրատարակչություն

Երևան – 1991

ԳՄԴ 84.4Ֆր–4
Ք 174

Կազմեց և խմբագրեց
ՎԱՐՈՒԺԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԸ

Ք 174 Հինգ վիպակ
/Ա. Քամյու, Թ. Վուլֆ, Ջ. Օրվել, Ռ. Բախ, Գ. Մարկես/ (բնագրից թարգմ. Գր. Քեշիշյանը, Ա. Ջիվանյանը, Ա. Էմինը, Ն. Հարությունյանը, Հ. Սահակյանը).— Եր.: Ապոլոն, 1991.-228 էջ:

Գրքում ամփոփված են ստեղծագործություններ, որոնք խոր հետք են թողել 20-րդ դարի գեղարվեստական մտածողության վրա:
Բոլոր գործերը հրատարակվում են առաջին անգամ:

ԼԱՔՍ ԷՈՆՆՍՏ. «Մարդիկ դրա մասին ոչինչ չեն իմանալու», 1923

703000000
—————— ...91
19 (01) 1991

5-8079-0277-7

© «Ապոլոն» հրատարակչություն, թարգմանության, կազմելու և ձևավորման համար, 1991.

ԱԼԲԵՐ ՔԱՄՅՈՒ

ԱՆԿՈՒՄ

Ֆրանսերենից թարգմ։ սեց

ԳՐԻԳՈՐ ՔԵՇԻՇ ՆԸ

Կարող եմ, պարոն, իմ ծառայություններն առաջարկել ձեզ, առանց ձանձրալի դառնալու վտանգին ենթարկվելու: Վախենում եմ, որ չկարողանաք ձեզ հասկանալի դարձնել այս հաստատության ճակատագրի վրա իշխող այն հարգելի գորիլլային: Նա միայն հոլանդերեն է խոսում: Եթե ինձ թույլ չտաք ձեր դատը պաշտպանել, նա գլխի չի ընկնի, որ դուք գիհոդի եք ցանկանում: Ահա համարձակվում եմ հուսալ, որ ինձ հասկացել է. գլխի այդ շարժումը պետք է նշանակի, որ նա տեղի է տալիս իմ փաստարկների առջև: Եվ իսկապես, նա դեպի այս կողմն է շարժվում, նույնիսկ շտապում է, բայց ինչ դիտավորյալ դանդաղկոտությամբ: Դուք բախտավոր եք, նա չգոմռաց: Երբ չի ցանկանում սպասարկել, պարզապես գոմռում է, և դա բավական է, որ ոչ ոք այլևս չհամարձակվի պնդել: Սեփական տրամադրությամբ առաջնորդվելը խոշոր կենդանիների մենաշնորհն է: Այժմ ես հեռանում եմ, պարոն, երջանիկ եմ, որ կարողացա ձեզ պարտավորեցնել: Շնորհակալություն, սիրով կընդունեի ձեր հրավերը, եթե վստահ լինեի, որ ձեզ չեմ ձանձրացնում: Դուք շատ բարի եք: Ուրեմն բաժակս կտեղավորեմ ձեր բաժակի կողքին:

Դուք իրավացի եք, նրա լռությունը խլացնող է, նման նախնադարյան անտառների լռության, որ լեցուն է վտանգներով: Երբեմն ես զարմանում եմ այն համր ատելության վրա, որ մեր լռակյաց բարեկամը հանդես է բերում քաղաքակիրթ լեզուների նկատմամբ: Նրա արհեստը բոլոր ազգերի նավաստիներին ընդունելն է Ամստերդամի այս խորտկարանում, որը չգիտես ինչու նա անվանել է «Մեքսիկո-սիտի»: Այդպիսի պարտականությունների դեպքում չեք կարծում, որ նրա տգիտությունը տհաճությունների առիթ կտա: Պատկերացրեք կրոմանոնյան շրջանի մարդը՝ տեղավորված բաբելոնյան աշտարակում: Նա առնվազն կտառապեր իր միջավայրից դուրս ընկած լինելու համար: Բայց ոչ, այս մեկը իր աքսորված վիճակը չի զգում, նա գնում է իր ճանապարհով, և ոչինչ նրան չի խանգարում: Եզակի նախադասություններից մեկը, որ լսել եմ նրա բերանից, «այո» է, կամ «ոչ», այսինքն՝ իր ասածը կարող եմ ընդունել կամ մերժել: Ի՞նչը պետք է ընդունել կամ մերժել: Անշուշտ իրեն, մեր բարեկամին: Խոստովանում եմ, մի ամբողջական կտորից կազմված այս մարդիկ ինձ գրավում են: Երբ քո կոչումի կամ արհեստի բերումով երկար ես խորհում մարդու մասին, պատահում է, որ նախնական տիպերի կարոտ ես զգում: Նրանք առնվազն հետին մտքեր չունեն:

Բայց, ճիշտն ասած, մեր տանտերը ունի նաև հետին մտքեր, թեև դրանք նա թաքցնում է իր հոգու խորքում: Քանի որ չի հասկանում, թե ինչ են խոսում իր ներկայությամբ, նա ձեռք է բերել չվստահող բնավորություն: Դրանից էլ՝ նրա այդ մռայլ, խոժոռ լրջությունը: Կարծես առնվազն կասկածում է, թե մարդկանց մեջ ամեն ինչ չէ, որ կարգին է: Այդ պատճառով էլ դժվար է նրա հետ զրուցել այն ամենի մասին, ինչ նրա արհեստին չի վերաբերում: Նայեցեք, օրինակ, նրա գլխավերևում, պատի վրայի այդ քառակուսի դատարկությանը, որ կարծես իջեցված մի նկարի տեղը լինի: Իսկապես, այդտեղ մի նկար կար, հատկապես հետաքրքրական մի նկար, մի գլուխգործոց: Ես ներկա եմ եղել, թե ինչպես տանտերը ստացավ այն և ինչպես տվեց ուրիշի: Երկու դեպքում էլ՝ նույն անվստահությամբ, շաբաթներ տևող տատանումներից հետո: Այս տեսակետից պետք է ընդունել, որ հասարակությունը մի քիչ փչացրել է նրա բնավորության նախնական պարզությունը:

Նկատի ունեցեք, որ ես նրան չեմ դատապարտում: Ես հարգում եմ նրա արդարացի անվստահությունը և սիրով պիտի բաժանեի այն, եթե, ինչպես նկատում եք, իմ ընկերական բնավորությունը չընդդիմանար դրան: Ափսոս, ես շատախոս եմ և շատ հեշտ եմ ծանոթություններ հաստատում: Գիտենալով հանդերձ, որ պետք է պատշաճ հեռավորություն պահպանել մարդկանց հետ շփվելիս, բոլոր առիթներն ինձ հարմար են թվում: Երբ ապրում էի Ֆրանսիայում, չէի կարող հանդիպել որևէ խելացի մարդու, որի հետ անմիջական ընկերություն չհաստատեի: Ահ, տեսնում եմ, ըղձակականի անկատար ժամանակով խոսելու իմ ձևը ձեր ժպիտն է շարժում: Խոստովանում եմ իմ թուլությունը խոնարհման այդ եղանակի և ընդհանրապես գեղեցիկ լեզվի նկատմամբ: Այդ թուլությունը ես իմ մեջ քննադատում եմ, հավատացեք, ես լավ գիտեմ, որ նուրբ սպիտակեղենի ճաշակը երբեք չի ենթադրում, որ պետք է կեղտոտ ոտքեր ունենալ: Բոլորովին: Թեև ոճը, ինչպես մետաքսը, հաճախ ծածկում է էկզեման: Ի վերջո ես ինձ մխիթարում եմ՝ ասելով, որ ովքեր աղճատում են լեզուն, նույնպես մաքուր չեն: Ահ, այո, մեկական գիհոզի ևս վերցնենք:

Ամստերդամում երկար եք մնալու: Գեղեցիկ քաղաք է, չէ՞: Հմայիչ: Ահա մի ածական, որ վաղուց չեմ լսել: Այն օրվանից, ինչ թողել եմ Փարիզը, իսկ դա արդեն տարիներ առաջ էր: Բայց սիրտը իր հիշողությունն ունի, և ես մեր գեղեցիկ մայրաքաղաքից, նրա գետափնյա փողոցներից ոչինչ չեմ մոռացել: Փարիզը մի իսկական աչք խաբող նկար է, մի հրաշալի զարդանկար՝ չորս միլիոն դիմաստվերներով: Վերջին մարդահամարով՝ մոտ հինգ միլիոն: Դե իհարկե, երեխաներ ծնված պիտի լինեն: Դա ինձ չի զարմացնի:

Ինձ միշտ թվացել է, որ մեր հայրենակիցները երկու կիրք ունեն. գաղափարները և շնանալը: Դրանցով նրանք զբաղվում են, այսպես ասած, որտեղ պատահի: Բայց զգուշանանք նրանց դատապարտելուց, որովհետև նրանք մենակ չեն, ամբողջ Եվրոպան նրանց նման է: Երբեմն մտածում եմ, թե ինչ են գրելու ապագա պատմաբանները մեր մասին: Ժամանակակից մարդուն բնորոշելու համար մի նախադասությունը բավական է լինելու. նրանք շնանում էին և թերթեր կարդում: Այս ուժեղ սահմանումից հետո, համարձակվում եմ ասել, առարկան սպառված կլիներ:

Հոլանդացիները, օ, ոչ, նրանք շատ ավելի նվազ ժամանակակից են: Դիտեցեք, նրանք ազատ ժամանակ շատ ունեն: Ի՞նչ են անում: Օրինակ, այդ պարոնները ապրում են այս կանանց աշխատանքով: Նրանք բոլորն էլ՝ արու և էգ, միջին դասի սովորական էակներ են, որոնք եկել են, ինչպես լինում է սովորաբար, իրենց երազկոտության կամ հիմարության պատճառով: Կարճ ասած՝ ուժեղ երևակայությունից կամ երևակայության պակասից դրդված: Ժամանակ առ ժամանակ այս պարոնները դանակի կամ ատրճանակի հետ են խաղում, բայց մի հավատացեք, որ դրանում լրջություն կա: Խաղացած դերն է ստիպում նրանց, և նրանք վախից մեռնում են վերջին փամփուշտը կրակելուց հետո: Այս բոլորն ասելով հանդերձ, ես նրանց ավելի բարոյական եմ համարում, քան նրանց, ովքեր ընտանիքում հարազատին մաշեցնելով են սպանում: Չենք նկատել, որ մեր հասարակությունը կատարելագործված է այդ ձևի սպանության համար: Բնականաբար դուք լսած կլինեք բրազիլական գետերի այն շատ փոքրիկ ձկնիկների մասին, որոնք հազարներով հարձակվում են անխոհեմ լողորդի վրա և իրենց փոքր ատամների արագ հարվածներով մի քանի վայրկյանում մաքրում-վերջացնում նրան, թողնելով միայն կմախքը: Ահա թե ինչպիսին է նրանց կազմակերպվածությունը: Դուք, անշուշտ, մաքուր կյանքով եք ցանկանում ապրել, ինչպես բոլորը: Դուք բնականաբար «այո» եք ասում: Ինչպես «ոչ» ասել: Համաձայն եմ: Բայց ձեզ կխժռեն: Այդպես է կազմակերպված մեր աշխատանքը, մեր ընտանիքը, այդպես են կազմակերպված մեր հաճույքները: Եվ փոքրիկ ատամները խրվում են մսի մեջ մինչև ոսկորը: Բայց ես անարդար եմ: Պետք չէր խոսել նրանց մասին, որովհետև դա նույն ժամանակ մերն էլ է. հարց է, թե ով է ում առաջինը խժռում:

Վերջապես մեր գիհոդին բերում են: Ձեր բարգավաճման կենացը: Այո, գորիլլան բացեց բերանը, որպեսզի ինձ դոկտոր անվանի: Այս երկրներում բոլորը դոկտոր և պրոֆեսոր են: Հոլանդացիները սիրում են մեծարել. նրանք այդ անում են բարությունից կամ համեստությու-

նից: Նրանց մոտ չարությունը առնվազն ազգային բնավորություն չէ: Ի միջի այլոց, ես բժիշկ չեմ: Եթե ցանկանում եք իմանալ, ասեմ. այստեղ գալուց առաջ ես իրավաբան էի: Այժմ ես խոստովանող դատավոր եմ:

Բայց թույլ տվեք ներկայանալ. Ժան-Բատիստ Քլամանս, ձեր խոնարհ ծառան: Ուրախ եմ ձեզ ճանաչելուս համար: Անկասկած առևտրով եք զբաղվում: Մոտավորապես: Գերազանց պատասխան: Միաժամանակ բազմանշանակալի ու խելամիտ. մենք մոտավորապես ամեն ինչ ենք: Այժմ թույլ տվեք մի փոքր դեդեկտիվ խաղալ: Դուք մոտավորապես իմ տարիքին եք, ունեք քառասնամյա մարդու մոտավորապես ամեն ինչ տեսած վստահ աչքեր, մոտավորապես լավ եք հագնված, այսինքն՝ ինչպես հագնվում են մեզ մոտ, և ունեք ողորկ, փափուկ ձեռքեր: Հետևաբար, մոտավորապես մի բուրժուա եք: Բայց մի բարեկիրթ բուրժուա: Ըղձական եղանակի անկատար ժամանակի իմ գործածության առթիվ ձեր ժպիտը ապացուցում է ձեր կրկնակի կրթվածությունը, որովհետև նախ՝ այդ ոճը ծանոթ է ձեզ, և, ապա, դուք դրանից տհաճություն եք զգում: Ի վերջո ես ձեզ հաճույք եմ պատճառում, որը, առանց սնափառության, ենթադրել է տալիս ձեր որոշ չափով լայնախոհությունը: Ուրեմն դուք մոտավորապես... Բայց ինչ կարևոր է: Մասնագիտությունները ինձ ավելի քիչ են հետաքրքրում, քան կրոնական աղանդները: Թույլ տվեք ձեզ երկու հարց տալ: Մի պատասխանեք, եթե գաղտնիք եք համարում: Հարստություն ունեք: Որոշ չափով: Լավ: Աղքատներին բաժանում եք: Ոչ: Ուրեմն դուք, ինչպես ես եմ անվանում՝ սադուկեցի եք: Եթե դուք Սուրբ Գիրքը մոտիկից չգիտեք, չեք հասկանա, թե ինչ եմ ասում: Հասկանում եք: Նշանակում է՝ մոտիկից գիտեք Սուրբ Գիրքը: Հետևաբար դուք ինձ կրկնակի եք հետաքրքրում:

Իսկ ես... Դե լավ, ինքներդ դատեցեք: Այս հասակով, այս ուսերով և այս դեմքով, որի մասին ինձ հաճախ ասել են, թե բիրտ է, ես ավելի շուտ ռեգբի խաղացողի տեսք ունեմ, չէ՞: Բայց եթե ինձ դատելու լինեն իմ զրույցներով, պետք է ընդունեն, որ որոշ չափով կրթված եմ: Ուղտը, որ իմ վերարկուին մազեր է տրամադրել, անկասկած քոսոտ է եղել, սակայն իմ եղունգները խնամված են: Ես բավականաչափ փորձառու եմ, բայց դատելով ձեր արտաքինից, առանց զգուշավորության վստահում եմ ձեզ: Եվ վերջապես, հակառակ իմ նուրբ ձևերին և գեղեցիկ լեզվին, հաճախում եմ Զեյդկի նավաստիների այս խորտկարանը: Ուրեմն ավելին մի փնտրեք: Հարցն այն է, որ ես երկակի մասնագիտություն ունեմ, ինչպես երկակի է մարդկային էակը: Արդեն ասել եմ, ես խոստովանող դատավոր եմ: Իմ դեպքում մի հարց պարզ է. ոչ, ոչինչ
8 չունեմ: Ժամանակին հարուստ էի, բայց ոչ, ոչինչ չեմ բաժանել

ուրիշներին: Դա ինչ է ապացուցում: Որ ես էլ սադուկեցի եմ... Օ՛հ, լսում եք նավահանգստի շչակները: Այս գիշեր Զույդերզեի վրա մառախուղ է լինելու:

Դուք արդեն մեկնում եք: Ներեցեք ձեզ ուշացնելուս համար: Ձեր թույլատվությամբ ես եմ վճարելու: «Մեքսիկո-սիտիում» դուք իմ հյուրն եք. ես հատկապես ուրախ եղա ձեզ այստեղ ընդունելուս համար: Վաղը ես անպայման այստեղ կլինեմ, ինչպես նաև հաջորդ երեկոները և երախտապարտ կլինեմ ընդունելով ձեր հրավերը: Ձեր ճանապարհը... Դե լավ... եթե առարկություն չունեք, պարզագույն ձևը այն կլինի, որ ուղեկցեմ ձեզ մինչև նավահանգիստ: Այնտեղից, շրջանցելով հրեական թաղամասը, դուք կհասնեք այն գեղեցիկ պողոտաները, ուր ծաղիկներով և խլացնող նվագով ծանրաբեռնված տրամվայներն են երթևեկում: Ձեր հյուրանոցը դրանցից մեկի՝ Դամրակ պողոտայի վրա է: Խնդրում եմ, միայն ձեզանից հետո: Ես ապրում եմ հրեական թաղամասում, կամ այդպես էր կոչվում մինչև այն ժամանակը, երբ մեր հիտլերական եղբայրները այնտեղ մի քիչ ազատ տարածություն ստեղծեցին իրենց համար: Ինչ մաքրագործում: Յոթանասունհինգ հազար հրեաները տեղափոխվեցին կամ սպանվեցին: Դա դատարկությամբ փոխարինված մաքրագործում էր: Ես հիանում եմ դրա իրագործումով, այդ մեթոդական համբերությամբ: Երբ մարդ բնավորության գիծ չունի, պետք է մեթոդ ունենա: Այս դեպքում այն հրաշքներ է գործել, ոչ ոք չի կարող ուրանալ: Եվ ես ապրում եմ պատմության մեջ գործված ամենամեծ ոճիրներից մեկի տեղում: Գուցե դա է ինձ օգնում հասկանալու գորիլլային և իր անվստահությունը: Այսպիսով, ես կարող եմ պայքարել իմ բնական հակման դեմ, որն ինձ անդիմադրելիորեն մղում է դեպի համակրանքը: Երբ մի նոր դեմք եմ տեսնում, իմ մեջ մեկը ահազանգ է հնչեցնում. «Ետ դարձիր: Վտանգ»: Նույնիսկ, եթե համակրանքը շատ ուժեղ է, ես զգուշանում եմ:

Գիտեք, որ իմ փոքր գյուղում, պատժիչ գործողություններից մեկի ժամանակ, գերմանացի մի սպա ասպետական կնամեծարությամբ խնդրել է մի ծեր կնոջ, որ բարի լինի որպես պատանդ ձերբակալված իր որդիներից մեկին ընտրել՝ գնդակահարվելու համար:

Ընտրել, պատկերացնում եք: Այս մեկը: Ոչ, մյուսը: Եվ դիտել, թե ինչպես տանում են նրան: Շատ վստահ չլինեք, բայց հավատացեք, պարոն, բոլոր տեսակի անակնկալներ հնարավոր են: Ես հանդիպել եմ մի մաքուր, բյուրեղյա մարդու, որ բոլորին ամեն ինչում վստահում էր: Նա պացիֆիստ էր, անարխիստ, որ ամբողջական սիրով սիրում էր ոչ միայն բոլոր մարդկանց, այլև անասուններին: Մի ընտրյալ հոգի. այո, վստահ եղեք: Եվ այդպես,

Եվրոպայի վերջին կրոնական պատերազմների ժամանակ նա գյուղ էր քաշվել: Իր տան ճակատին գրել էր. «Որտեղից էլ գալու լինեք, ներս մտեք և բարի գալուստ»: Ըստ ձեզ ո՞վ պատասխանեց այս գեղեցիկ հրավերին: Ոստիկանները, որոնք սեփական տան պես ներս մտան և նրա աղիքները դուրս թափեցին:

Օհ, ներեցեք, տիկին: Սակայն տիկինը ոչինչ չհասկացավ: Այս ուշ ժամին և հակառակ տեղացող անձրևին, որ օրեր ամբողջ չի դադարում, նայեցեք զբոսնող բոլոր այս մարդկանց: Բարեբախտաբար գիհոդին կա, միակ լույսը այս խավարում: Զգո՞ւմ եք ոսկեզօծ, արծաթազօծ լույսը, որ գիհոդին է լցնում ձեր մեջ: Սիրում եմ քայլել քաղաքի միջով, երեկոյան, գիհոդու ջերմության տակ: Ամբողջ գիշերներ քայլում եմ, երազում կամ անվերջ խոսում: Ինչպես այս գիշեր, այո, և վախենում եմ, որ ձեզ մի քիչ կձանձրացնեմ, շնորհակալ եմ, դուք շատ քաղաքավարի եք: Ես պարզապես շատ եմ լցված: Հենց որ բերանս բացում եմ, նախադասությունները իրենք իրենց հոսում են: Մյուս կողմից այս երկիրը ինձ ներշնչում է: Սիրում եմ այս ժողովրդին, այս մարդկանց, որոնք խռնվում են մայթերին, տների և ծովի արանքում սեղմված այս փոքր տարածության վրա, շրջապատված մառախուղով սառած ցամաքով և լվացքաջրի նման ծխացող ծովով: Այս մարդկանց ես սիրում եմ իրենց երկակիության համար: Նրանք այստեղ են և միաժամանակ ինչ-որ շատ հեռու մի ուրիշ տեղ:

Այո, իսկապես: Լսելով նրանց ծանր ոտնաձայները կեղտոտ մայթերի վրա, դիտելով նրանց ծանր քայլերը իրենց խանութների միջով, որոնք լիքն են ոսկեզօծ տառեխներով և մեռած տերևների գույնի գոհարներով, դուք անկասկած համոզված եք, որ նրանք այս երեկո այստեղ են, չէ՞: Դուք էլ բոլորի նման այս բարի մարդկանց համարում եք թոշակառուների մի խումբ կամ առևտրականներ, որոնք հավիտենական կյանքի հույսով իրենց ոսկիներն են հաշվում, և որոնց կյանքի միակ բանաստեղծությունը խոշոր գլխարկներով ծածկված մարդակազմության դասեր սերտելն է:

Սխալվում եք: Նրանք մեր մոտով քայլում են, ճիշտ է, բայց նույն ժամանակ, դիտեցեք, որտե՞ղ են նրանց գլուխները: Նեոնային լույսի, գիհոդու և անանուխի մշուշի մեջ, որ իջնում է կարմիր ու կանաչ ցուցակներից: Հոլանդիան մի երազ է, պարոն, ոսկու և ծխի երազ, առավել տխուր՝ ցերեկը, առավել ոսկեզօծ՝ գիշերը: Գիշեր թե ցերեկ այս երազում են ապրում սրանց նման Լոհենգրինները, որոնք, երազելով իրենց բարձր ղեկերով սև հեծանիվների վրա, շտապ անցնում են. հեծանիվներ չարագուշակ կարապների նման, որոնք անընդհատ պտտվում են ամբողջ երկրում, ծովերի շուրջը, ջրանցքների երկայնքին: Գլուխները պընձագույն ամպերի մեջ,

Նրանք երազում են, շուրջանակի պտտվում, աղոթում, գիշերաշրջիկ նման քայլում են մառախուղի ոսկեզօծ խունկի մեջ: Ոչ, նրանք այլևս այստեղ չեն, այլ հազարավոր կիլոմետրեր հեռու, գնացել են դեպի Ճավա, դեպի հեռավոր կղզին: Նրանք աղոթում են Ինդոնեզիայի ծամածռություն անող աստվածներին, որոնցով լցրել են իրենց ցուցափեղկերը, և որոնք, շքեղ, հոյակապ կապիկների նման, այժմ աննպատակ թափառում են մեր վերևում, ցուցանակների և սանդղավոր տանիքների վրա, հիշեցնելու համար հայրենակարոտ գաղթականներին, որ Հոլանդիան միայն առևտրականների Եվրոպան չէ, այլ նաև ծովը, որ տանում է Սիպանգո և այն կղզիները, ուր մարդիկ մահանում են խենթ ու երջանիկ:

Բայց ես ինձ մոռացա և իսկական իրավաբանի նման կողմնապահություն եմ անում, դատ-եմ պաշտպանում: Ներեցեք ինձ: Սովորությունը, պարոն, ինչպես նաև կոչումս և ցանկությունս են, որ ինձ ստիպում են ձեզ ամբողջությամբ հասկանալի դարձնել այս քաղաքը և իրերի էությունը: Իսկ մենք արդեն իսկ իրերի էության մեջ ենք: Նկատել եք, որ Ամստերդամի համակենտրոն ջրանցքները նման են դժոխքի շրջանակների: Բուրժուական դժոխքի, որ բնակեցված է վատ երազներով: Երբ դրսից եք գալիս և անցնում եք այդ շրջանակները, կյանքը և, հետևաբար, նրա ոճիրները ավելի ընդգծված, ավելի մութ են դառնում: Այստեղ մենք վերջին շրջանակում ենք: Շրջանակ, որ հատուկ է... Ահ, դուք գիտեք այդ: Սատանան տանի, ձեզ որ դասում տեղավորել: Բայց այդ դեպքում դուք կհասկանաք, թե ինչու կարող եմ ասել, որ իրերի կենտրոնը այստեղ է, թեև մենք գտնվում ենք մայր ցամաքամասի հեռավոր ծայրում: Զգայուն մարդը կհասկանա այս տարօրինակությունները: Բոլոր դեպքերում թերթեր ընթերցողներն ու շնացողները ավելի հեռուն գնալ չեն կարող: Գալիս են Եվրոպայի բոլոր անկյուններից և կանգ առնում հենց ծովի շուրջը, գունաթափ այս ափին: Նրանք լսում են շչակների ձայնը, մառախուղի մեջ ապարդյուն փնտրում են նավերի ուրվագծեր, հետո վերադառնում են ջրանցքներով և տուն գնում անձրևի տակ: Մինչև ոսկորները թրջված՝ նրանք վերադառնում և բոլոր լեզուներով գիհոզի են ուզում «Մեքսիկո-սիտիում»: Այստեղ էլ ես սպասում եմ նրանց:

Ուրեմն ցտեսություն մինչև վաղը, պարոն և սիրելի հայրենակից: Ոչ, այժմ դուք ձեր ճանապարհը հեշտությամբ կգտնեք, այս կամրջի մոտ ես բաժանվում եմ ձեզնից: Ես երբեք գիշերով կամրջով չեմ անցնում: Երդվել եմ: Ենթադրենք, որ մեկը իրեն ջուրն է գցում: Վարվելու երկու ձև կա. կամ հետևում եք նրա օրինակին՝ ազատելու համար, և ցուրտ եղանակին դուք ձեզ ավելի մեծ

վտանգի եք ենթարկում, կամ լքում եք նրան և չիրականացված լողը երբեմն ծանր վիշտ է պատճառում: Բարի գիշեր: Ինչպես: Լուսամուտների հետևի կանայք: Երազանք, պարոն, էժանագին երազանք՝ ճանապարհորդություն դեպի Հնդկաստան: Այս կանայք իրենց անուշահոտություններով են պատել: Դուք կմտնեք, նրանք վարագույրները ցած կիջեցնեն, և նավարկությունը կսկսվի: Աստվածները կիջնեն մերկ մարմինների վրա, և կղզիները, քամուց խենթացած արմավենու մազերով կշեղվեն ուղուց, կգժվեն: Փորձեցեք:

***

Ինչ բան է խոստովանող դատավորը: Տեսնում եմ, որ դուք կարգին հետաքրքվեցիք այս պատմությունով: Հավատացեք, չէի խորամանկում, պատրաստ եմ ամեն ինչ խոստովանել և ավելի հստակորեն արտահայտվել: Ինչ-որ իմաստով դա նույնիսկ իմ պարտականությունների մեջ է մտնում: Բայց մինչ այդ անհրաժեշտ է որևէ բան պատմել իմ կյանքից և բացատրել մի շարք փաստեր, որոնք ձեզ կօգնեն ավելի լավ հասկանալու իմ պատմածը:

Մի քանի տարի առաջ ես ապրում էի Փարիզում և, հավատացեք, բավականին հայտնի իրավաբան էի: Բնական է, որ իմ իսկական անունը չեմ ասել ձեզ: Ես մասնագիտացել էի ազնիվ դատեր վարելու գործում: Այլ խոսքով այն անվանում էին, չգիտեմ ինչու, այրիների և որբերի գործեր, որովհետև, ի վերջո, գոյություն ունեն՝ նաև խաբեբա այրիներ և վայրագ որբեր: Սակայն բավական է, որ մեղադրյալի ամենադույզն չափով իսկ անմեղության հոտն առնեի, թևերս քշտում էի և գործի անցնում: Եվ ինչ գործ: Մի իսկական փոթորիկ: Սիրտս կարծես թևերիս մեջ էր լինում: Կարելի էր կարծել, որ արդարությունը ամեն գիշեր ինձ հետ էր քնում: Վստահ եմ, որ ձեզ պիտի հիացներ իմ անկեղծ տոնը, իմ անկեղծ հուզմունքը, իմ վստահությունը և ջերմությունը, իմ պաշտպանական ճառերի տիրական ոճը: Բնությունը իմ արտաքինին լավ ծառայություն է մատուցել, ազնիվ վերաբերմունքը ինձ մոտ հեշտ է ստացվում: Ավելին. ինձ ուժ էին տալիս երկու անկեղծ զգացմունքներ. արդարությունը պաշտպանելու գոհունակությունը և դատավորների նկատմամբ ընդհանրապես ունեցած իմ բնազդական արհամարհանքը: Ճիշտն ասած, այդ արհամարհանքը գուցե այնքան էլ բնազդական չէր: Այժմ ես գիտեմ, որ այն իր պատճառներն ուներ: Բայց, արտաքուստ դատելով, դա ավելի շուտ կրքի էր նման: Չի կարելի ժխտել, որ մեր կյանքում դատավորներ դեռևս անհրաժեշտ են. այդպես չէ, թեև չեմ հասկանում, թե ինչպես որևէ մարդ մի այդպիսի զարմանալի զբաղմունք կարող է ընտրել: Դատավորների գոյության փաստը ընդունում էի, քանի որ տեսնում էի նրանց, բայց ընդունում էի մի քիչ այնպես, ինչպես մորեխների

գոյությունը: Մի տարբերությամբ, որ այդ ուղղաթևների հարձակումը ինձ մի սանտիմի օգուտ չի տվել, մինչդեռ իմ արհամարհած մարդկանց հետ երկխոսելով, ես բավականին լավ էի շահում:

Միևնույն ժամանակ ես ճշմարտությունն էի պաշտպանում, և դա բավական էր իմ խղճի խաղաղության համար: Օրենքի զգացողությունը, իրավունք ունենալու բավականությունը, ինքն իրեն հարգելու հաճույքը, սիրելի պարոն, ուժեղ հենակներ են առաջ գնալու համար: Ընդհակառակը, եթե մարդկանց դրանցից զրկեք, նրանց կվերածեք կատաղի շների: Որքան ոճիրներ են գործվել պարզապես նրա համար, որ նրանց հեղինակները չեն կարողացել ընդունել իրենց սխալված լինելը: Ժամանակին մի արդյունաբերողի էի ճանաչում, որ կատարյալ, բոլորի հիացմունքին արժանացած կին ուներ, որին սակայն դավաճանում էր: Այս մարդը տառացիորեն կատաղում էր իր հանցանքի գիտակցությունից և այն անկարողությունից, որ ոչ մեկին, ոչ իսկ ինքն իրեն չէր կարողանում համոզել իր բարի և բարոյական մարդ լինելը: Որքան ակնհայտ էր դառնում նրա կնոջ անթերիությունն ու անմեղությունը, այնքան նա կատաղում էր: Անիրավացի լինելը նրա համար ի վերջո անտանելի դարձավ: Ինչ եք կարծում, նա ինչ արեց: Դադարեց կնոջը դավաճանելուց: Ոչ: Սպանեց նրան: Այդ գործով էլ ես առնչվեցի նրան:

Իմ վիճակը ավելի նախանձելի էր: Ոչ միայն վտանգ չկար, որ հանցագործների խմբին միանայի (ամուսնացած չլինելով՝ կնոջս սպանելու ոչ մի հնար չունեի), այլև պաշտպանում էի նրանց, սակայն մի պայմանով, որ նրանք լինեին ազնիվ մարդասպաններ, ինչպես ուրիշներ լինում էին ազնիվ վայրենիներ: Նույնիսկ պաշտպանությունը վարելու իմ ձևը ինձ մեծ բավականություն էր պատճառում: Իմ մասնագիտության մեջ ես իսկապես անգերազանցելի էի: Կարիք չկա ասելու, որ երբեք կաշառք չեմ ընդունել, ոչ էլ ստորացուցիչ որևէ գործարք կնքել: Ավելի բացառիկ բան. ես երբեք չհամաձայնեցի սիրաշահել որևէ լրագրողի, որպեսզի իմ մասին նպաստավոր կարծիք ստեղծեմ, ոչ էլ որևէ պաշտոնյայի, որի բարեկամությունը կարող էր օգտակար լինել: Երկու կամ երեք անգամ նույնիսկ հնարավորություն ունեցա Պատվո Լեգեոնի շքանշան ստանալու, բայց ամեն անգամ կարողացա մերժել այնպիսի արժանապատվությամբ, որ իսկական վարձատրություն եղավ: Վերջապես աղքատներից երբևէ վարձ չեմ վերցրել և այդ մասին կտուրներից երբեք չեմ գոռացել: Հավատաք, սիրելի պարոն, որ դրանցով ես ինձ գովում եմ, իմ արժանիքը ոչինչ է, ագահությունը, որ մեր հասարակության մեջ փառասիրության է փոխարինում, ինձ միշտ ծիծաղելի է թվացել: Ես ավելի բարձրին էի ձգտում: Շուտով դուք կտեսնեք, որ այդ արտահայտությունը այս դեպքում շատ ճիշտ էր եղել:

Բայց ուշադրություն դարձրեք իմ բավականությանը: Ես վայելում էի իմ հանդեպ եղած բարեսրտությունը, իսկ մենք բոլորս գիտենք, որ հենց դա է երջանկությունը, թեև մենք մեզ հանգըստացնելու համար երբեմն ձևացնում ենք, թե իբր դատապարտում ենք այդ թուլությունները՝ դրանք եսասիրություն անվանելով: Ես առնվազն հաճույք էի ստանում իմ բնավորության այդ գծից, որ այդքան ճշգրտորեն արձագանք էր գտնում այրու և որբի մոտ և որը, ի վերջո, դադարելով մասնավոր վարժություն լինելուց, իշխում էր իմ ամբողջ կյանքի վրա: Օրինակ, պաշտում էի կույրերին փողոցն անցկացնելու գործը: Հենց որ հեռվից տեսնում էի մի գավազան, որ տատանվում էր մայթի անկյունում, ես շտապում էի, կանխում մի ուրիշի ողորմած ձեռքը, որ արդեն մեկնվում էր, վերցնում էի կույրին ուրիշի օգնությունից և փափուկ ու ամուր ձեռքով նրան տանում էի հետիոտն քայլողների փակուղուց, երթևեկության նշանների միջով մինչև խաղաղ հանգրվան, ուր մենք բաժանվում էինք իրար հանդեպ շնորհակալության ծայրահեղ զգացումով: Ես միշտ սիրել եմ նաև փողոցում մարդկանց տեղեկություն տալ, վառել սիգարետներ, օգնել ծանրաբեռնված սայլերին կամ հրել փչացած ավտոմեքենաները, գնել Փրկության բանակի թերթը և կամ ծեր ծաղկավաճառուհուց ծաղիկներ, թեև գիտեի, որ դրանք գողացված էին Մոնպառնասի գերեզմանատնից: Սիրում էի նաև, ավաղ, սա ավելի դժվար է խոստովանել, սիրում էի ողորմություն տալ: Իմ բարեկամներից մեկը, մի իսկական քրիստոնյա, խոստովանում էր, որ իր տանը մոտեցող մուրացիկ տեսնելիս առաջին հերթին տհաճության զգացում էր ունենում: Ես ավելի վատ էի: Ես հրճվում էի: Բայց այլևս այդ մասին չխոսենք:

Ավելի լավ է խոսենք իմ բարեկրթության մասին: Դա նշանավոր էր և միաժամանակ անվիճելի: Քաղաքավարությունը ինձ մեծ հաճույքներ էր պատճառում: Եթե բախտ էի ունենում առավոտները ավտոբուսում կամ մետրոյում տեղս զիջել բացահայտորեն արժանի մեկին, վերցնել ինչ-որ առարկա, որ մի ծեր կին վայր էր գցել, և այն վերադարձնել մի ժպիտով, որը ես շատ լավ էի յուրացրել, կամ պարզապես իմ տաքսին զիջել մի տիկնոջ, որ ինձնից ավելի էր շտապում, ամբողջ օրս դրանով լուսավորվում էր: Պետք է ասել, որ հրճվում էի նույնիսկ այն օրերին, երբ քաղաքային տրանսպորտի գործադուլի պատճառով հնարավորություն էի ունենում իմ մեքենայով հասնել ավտոբուսի կանգառները և իմ դժբախտ հայրենակիցներից մի քանիսին տուն հասցնել: Թատրոնում իմ աթոռը զիջում էի, որպեսզի ինձ անծանոթ աղջիկ ու տղա կարողանան իրար մոտ նստել, ճանապարհորդության ժամանակ օգնում էի

երիտասարդ կնոջը, նրա ճամպրուկները տեղավորում էի նրա հասակի համար շատ բարձր ցանցի մեջ: Սրանց նման գործեր ավելի հաճախ եմ արել, քան ուրիշները, որովհետև ավելի մեծ ուշադրություն էի դարձնում, որ նման առիթներ բաց չթողնեմ: Եվ ինչ մեծ հաճույքներ էի քաղում դրանցից:

Ես առատաձեռն էի համարվում և այդպիսին էլ էի: Ես շատ եմ տվել հրապարակավ և անձնական կյանքում: Երբեք ցավ չէի զգում, երբ բաժանվում էի մի առարկայից կամ մի գումարից, այլ ընդհակառակը, դրանից քաղում էի տնական հաճույքներ, այդ թվում նաև մի տեսակ տխրություն, որ երբեմն ծնվում էր այն մտքից, որ այդ նվերները անօգուտ են և գուցե նաև ապերախտություն են ծնում: Ես այնպիսի հաճույք էի զգում տալուց, որ ատում էի, երբ տալիս էի ստիպված: Դրամական գործերում ճշգրտությունը ինձ խեղդում էր, և ես այդ անում էի վատ տրամադրությամբ: Ինձ անհրաժեշտաբար պետք էր, որ իմ առատաձեռնությունների տերը զգայի:

Սրանք փոքր գծեր են, բայց ձեզ հասկանալի կդարձնեն այն հարատև հաճույքները, որ ես գտնում էի իմ կյանքում, մանավանդ իմ մասնագիտության մեջ: Օրինակ, կանգնեցվել դատարանի միջանցքներում մի դատապարտվածի կնոջ կողմից, որին պաշտպանել էի միայն արդարության համար կամ կարեկցելուց, ուզում եմ ասել՝ ձրիաբար, լսել այդ կնոջ փսփսուքը, թե ոչինչ, ոչ, ոչինչ չի կարող փոխադարձել այն, ինչ արվել էր իրենց համար, պատասխանել, որ այդ բոլորը բնական բաներ են, որ որևէ մեկը նույնը պիտի աներ, առաջարկել նույնիսկ նյութական օգնություն, ապագայի սև օրերը հաղթահարելու համար, հետո, որպեսզի զեղումները կարճ լինեն և պահպանվեն դրանց արձագանքները, համբուրել այդ խեղճ կնոջ ձեռքը և անմիջապես, ժամանակ չտալով, որ բերանը բանա, հեռանալ, անհետանալ, ինչ եք կարծում, սիրելի պարոն, չի նշանակում հասնել ավելիին, քան գռեհիկ փառասիրությունն է, միթե չի նշանակում հասնել ամենաբարձր գագաթին, ուր առաքինությունը ինքն իրենով է. սնվում:

Կանգ առնենք այս գագաթների վրա: Այժմ հասկանում եք, թե ինչ էի ուզում ասել, երբ խոսում էի աչքը ավելի բարձրերը գցելու մասին: Խոսում էի ճիշտ այս ամենաբարձր կետերի մասին, միակ տեղերը, ուր կարող եմ ապրել: Այո, ես ինձ հանգիստ եմ զգացել միայն բարձր դիրքերում: Նույնիսկ կյանքի մանրուքներում ես կարիք ունեմ բարձրում լինելու: Ավտոբուսը նախընտրում էի մետրոյից, բաց կառքերը՝ տաքսիներից, պատշգամբները՝ նկուղներից: Որպես մարզական ինքնաթիռների սիրող-սավառնորդ, ես սիրում

էի, երբ մարդ կարող էր գլուխը հանել ու քամուն տալ, նավերում բարձր կամրջակների հավերժական քայլողն էի: Լեռներում ես փախչում էի սեղմված ձորերից դեպի լայն կիրճերն ու բարձրավանդակները. կարճ ասած, ես բարձունքների բնակիչ էի: Եթե ճակատագիրը ինձ ստիպեր ընտրել մի արհեստ, խառատի կամ տանիք ծածկող թիթեղագործի, հանգիստ եղեք, ես տանիքները կընտրեի և բարեկամություն կանեի գլխապտույտների հետ: Նավամբարները, քարայրները, գետնուղիները, անձավները, անդունդները ինձ սարսափեցնում էին: Ես հատուկ ատելություն ունեի քարայրագիտության հանդեպ, որը համարձակվում էր մեր թերթերի առաջին էջերն զբաղեցնել, այդ գործի մասնագետների գործունեությունը ինձ սարսափեցնում էր: Ութ հարյուր մետր ցած իջնելու և գլուխը վտանգի ենթարկելու ձգտումը մի ժայռոտ նեղ անցքի մեջ կամ, ինչպես այս խենթերն են անվանում, մի սիֆոնի մեջ, ինձ թվում էր փչացած, կամ հաշմանդամ բնավորության տեր մարդկանց հերոսություն: Այդ բոլորի մեջ հանցագործություն կար:

Լույսով ողողված մի պատշգամբ դեռևս տեսանելի ծովից հինգ կամ վեց հարյուր մետր բարձրության վրա, ընդհակառակը, այն վայրն էր, ուր ես ավելի լավ էի շնչում, մանավանդ, եթե մենակ էի, մրջյուն-մարդկանցից շատ բարձր: Ես շատ լավ հասկանում էի, թե ինչու քարոզները, վճռական կանխագուշակումները, կրոնական գյուտերը կատարվել են հասանելի բարձունքներում: Ըստ իս՝ քարայրներում կամ բանտախցերում մարդիկ չէին երազում (բացառությամբ, եթե դրանք կառուցված էին լինում ամրոցների մեջ, լայն տեսադաշտի դիմաց), մարդիկ այնտեղ մամռակալում էին: Եվ հասկանում էի այն մարդուն, որ կրոնավոր օծվելուց հետո հրաժարական էր տվել, որովհետև իր խուցի դուռը փոխանակ մի ընդարձակ դաշտի վրա բացվելու, ինչպես սպասում էր, դիմացը պատ էր ունեցել: Վստահ եղեք, ինչ ինձ է վերաբերում, ես չէի մամռակալում: Օրվա բոլոր ժամերին ինքս իմ մեջ և մյուսների միջև՝ ես դեպի բարձունքն էի մագլցում. այնտեղ վառում էի բոլորին տեսանելի կրակներ, և մի ուրախ օրհնություն էր բարձրանում առ ինձ: Այս ձևով կյանքից և իմ նորին վսեմություն անձից ես առնվազն հաճույք էի ստանում:

Իմ մասնագիտությունը, բարեբախտաբար, բավարարում էր գագաթների իմ ձգտմանը: Այն ինձնից վերցնում էր ամեն տեսակի դժգոհություն իմ հարևանի նկատմամբ, որին ես պարտավորեցնում էի՝ առանց պարտական լինելու: Այն ինձ դատավորներից ավելի բարձր էր դնում, որոնց ես ինքս դատում էի, և դատապարտյալից բարձր՝ որին ստիպում էի շնորհակալ լինել: Լավ կշռեք այս, սիրելի պարոն, ես ապրում էի անպատիժ: Որևէ դատավճիռ ինձ չէր

վերաբերում, ես ոչ թե դատարանի բեմում էի գտնվում, այլ մի ուրիշ տեղ, ամպերի մեջ, այն աստվածների նման, որոնք ժամանակ առ ժամանակ իջնում են ինչ-որ մեքենայի օգնությամբ, որպեսզի շարժումը կանոնավորեն և իմաստավորեն: Ի վերջո բարձրում ապրելը միակ ձևն է, երբ շատերը կարող են նկատել քեզ և ողջունել:

Իմ բարի հանցագործներից մի քանիսը սպանելիս նույն զգացմանն էին հնազանդվել: Թերթերի ընթերցումը, այն տխուր վիճակը, որի մեջ գտնվում էին, նրանց անկասկած բերում էին մի տեսակ դժբախտ փոխհատուցման անհրաժեշտություն: Ինչպես շատ մարդիկ, անանուն լինելուն այլևս չէին դիմանում, և այս անհամբերությունը կարողանում էր նրանց հասցնել ցավալի ծայրահեղությունների: Ճանաչված լինելու համար բավական է ի վերջո սպանել դռնապանուհուն: Դժբախտաբար դա ժամանակավոր հռչակ է, որովհետև այնքան դռնապանուհիներ կան, որոնք արժանի են դանակի և այն ստանում են: Ոճիրը աշխատում է միշտ մնալ բեմի առաջամասում, բայց ոճրագործները այնտեղ անցողիկ հայտնվում են, որպեսզի անմիջապես փոխարինվեն ուրիշով: Այս կարճ հաղթանակները ի վերջո շատ թանկ են վճարվում: Փառքի ձգտող մեր դժբախտ հաճախորդներին պաշտպանելը, ընդհակառակը, ինձ բերում էր իսկական համբավ նույն ժամանակ և նույն վայրերում, բայց ավելի խնայողական միջոցներով: Այդ քաջալերում էր ինձ նաև ճիգ գործադրել, որպեսզի հնարավորին չափ քիչ վճարեն: Վրդովմունքը, տաղանդը, հուզումը, որ ես ծախսում էի, ինձնից վերցնում էին պարտքի ամեն զգացում նրանց նկատմամբ: Դատավորները պատժում էին, դատապարտյալները՝ քավում, իսկ ես՝ ազատ որևէ պարտականությունից, ենթակա չլինելով դատավճռին, եդեմական լույսի մեջ, ազատորեն տիրում էի:

Միթե դա իսկապես կյանքի եդեմը չէր, սիրելի պարոն: Եթե կյանքը ուղղակի վերցնենք: Դա իմ կյանքն էր: Ես երբեք կարիքը չունեցա ապրել սովորելու: Այս հարցում ես ամեն ինչ գիտեի արդեն ծնվելիս: Կան մարդիկ, որոնց խնդիրը մարդկանց պատրաստարելը կամ առնվազն նրանցով զբաղվելն է: Ինձ համար կարգադրությունը եղել էր: Մտերիմ էի, երբ անհրաժեշտ էր, լուռ՝ եթե պետք էր, ազատ և հեշտ ձևեր գործադրելու կարողությամբ, արժանապատվությամբ և լրջությամբ: Իմ ժողովրդականությունը այնքան մեծ էր, որ իմ հաջողությունները այս աշխարհում այլևս չէի հաշվում: Իմ արտաքինը վատ չէր ստեղծված, ես անդադրում պարող էի և միևնույն ժամանակ խորագիտակությամբ փայլող, ինձ հաջողվում էր միաժամանակ սիրել կանանց ու արդարությունը, որ այնքան էլ հեշտ չէ մեր ժամանակներում, զբաղվում էի

սպորտով և արվեստով, կարճ ասած կանգ եմ առնում, որպեսզի դուք ինձ չկասկածեք ինքնագովության մեջ: Բայց, խնդրում եմ, պատկերացրեք մի մարդ իր ծաղկուն տարիքի մեջ, կատարյալ առողջությամբ, առատաձեռնորեն օժտված կարողություններով, վարժ ինչպես մարմնական, այնպես էլ մտավոր գործունեության, ոչ աղքատ և ոչ էլ հարուստ, որ լավ է քնում և խորապես գոհ է իրենից, և որը այս ամենը ցույց է տալիս միայն երջանիկ և ընկերական պարզությամբ: Այս բոլորից հետո միթե իրավունք չունեի համեստաբար խոսելու իմ հաջողված կյանքի մասին:

Այո, քիչ էակներ են ավելի բնական եղել, քան ես: Իմ հարաբերությունը կյանքի հետ ամբողջական էր, ես ընդունում էի այն, ինչպես նա կար, չմերժելով նրա թերի կողմերը, նրա ծաղրը, տեսնելով նրա մեծությունը, օգտվելով նրա ծառայություններից: Հատկապես չէի մերժում միսը, նյութը. կարճ ասած՝ ֆիզիկականը, որ այնքան մարդկանց անհանգստացնում կամ հուսահատեցնում է սիրո մեջ կամ մենության պահին՝ ինձ բերում էր, առանց ստրկացնելու, հավասար հաճույքներ: Ես ստեղծվել էի մի մարմին ունենալու համար: Այստեղից էլ այդ ներդաշնակությունը իմ մեջ, և թույլ իշխանությունը, որ մարդիկ զգում էին և երբեմն էլ խոստովանում, որ այն իրենց օգնում է ապրել: Հետևաբար փընտրում էին իմ ընկերությունը: Հաճախ նրանց թվում էր, որ ինձ արդեն հանդիպել էին: Կյանքը, մարդիկ և նվերները ինձ ընդառաջ էին գալիս: Ես այդ պատվերները ընդունում էի մեծահոգի հպարտությամբ: Իրականում, այդքան լիքը և պարզ մարդ լինելով, ես ինձ մի քիչ գերմարդ էի զգում:

Ես ծնվել եմ պատվավոր, բայց համեստ ընտանիքում (հայրս սպա էր) և, սակայն, որոշ առավոտներ, համեստորեն խոստովանում եմ, ես ինձ արքայազն էի զգում կամ անշեջ մորենի: Հավատացեք, դա ուրիշ զգացմունք էր, քան բոլորից ավելի խելոք լինելու վստահությունը, որի մեջ ապրում էի. բազմաթիվ հիմարներ նույնը ունենում են: Ոչ, վարանում եմ խոստովանել, ես ինձ ընտրված, նախասահմանված մարդ էի համարում: Բոլորի միջից հատկապես ընտրված այս երկար և հարատև հաջողության համար: Դա նույնպես իմ համեստության արդյունքն էր: Այս բոլոր հաջողությունները ես մերժում էի վերագրել միայն իմ հատկություններին, ես չէի կարող հավատալ, որ մի մարդու մեջ այդքան տարբեր և ծայրահեղ հատկությունների միասնությունը արդյունք լիներ պարզ պատահականության: Ահա թե ինչու, երջանիկ ապրելով հանդերձ, ես հավատում էի, որ այդ երջանկությունը ինձ տրվում էր մի գերագույն ուժի հրամանով: Երբ ձեզ ասում եմ՝ ոչ

մի կրոնի չէի հավատում, դուք ավելի լավ կհասկանաք, թե ինչ տարօրինակ բան կար այս խոստովանության մեջ: Սովորական կամ ոչ՝ այն ինձ երկար ժամանակ ամենօրյա ընթացքից դուրս է հանել, և ես տարիներ ամբողջ տառացիորեն գեղեցիկ ծրագրեր եմ կազմել և որոնց համար, ճիշտն ասած, մինչև այժմ սրտանց ափսոսում եմ: Ես ծրագրեր եմ կազմել մինչև այն երեկոն, երբ... Բայց ոչ, դա մի ուրիշ պատմություն է, որը պետք է մոռանալ: Հետո, գուցե և չափազանցում եմ: Ամեն ինչում ես հանգիստ էի զգում, ճիշտ է, բայց նույն ժամանակ ոչ ոի բանից չէի բավարարվում: Յուրաքանչյուր հաճույք ինձ մղում էր դեպի մի ուրիշը: Ես մի տոնակատարությունից մի ուրիշին էի գնում: Պատահում էր, որ ամբողջ գիշերները պարում էի և մարդկանց ու կյանքի նկատմամբ ավելի կրքոտ դառնում: Երբեմն, ուշ գիշերին, երբ պարը, թեթև հարբածությունը, իմ շղթայազերծումը, ներկաների բուռն ինքնամոռացումը ինձ գցում էր մի հափշտակության մեջ, երբ հոգնած ու մինչև ափը լցված էի զգում, հոգնության գագաթնակետին, ակնթարթի ընթացքում ինձ թվում էր, որ ի վերջո կհասկանամ էակների ու աշխարհի գաղտնիքը: Բայց հաջորդ օրը հոգնությունս անհետանում էր, և նրա հետ էլ գաղտնիքը, ես նորից էի խոյանում նրա հետևից: Այսպես ես վազում էի, միշտ լեցուն, երբեք բավարարված, առանց իմանալու՝ որտեղ պետք է կանգ առնել, մինչև այն օրը, ավելի շուտ մինչև այն երեկոն, երբ նվագը դադարեց, լույսերը մարեցին: Այն տոնակատարությունը, ուր ես երջանիկ էի... Բայց թույլ տվեք կանչեմ մեր բարեկամ նախագահին: Գլխով շնորհակալություն հայտնեցեք և մանավանդ խմեցեք ինձ հետ, ես ձեր համակրանքի կարիքն ունեմ:

Տեսնում եմ, որ այս հայտարարությունը ձեզ զարմացնում է: Երբեք հանկարծակիորեն համակրանքի, օգնության կամ բարեկամության կարիք չեք ունեցել: Այո, անշուշտ: Ես, ես սովորեցի բավարարվել համակրանքով: Դա գտնելը ավելի հեշտ է, որովհետև ոչնչի չի պարտավորեցնում: «Հավատացեք իմ համակրանքին» բարձրաձայն ասված խոսքին անմիջապես հաջորդում է «Իսկ այժմ ուրիշ գործով զբաղվենք» մտքում ասված անլսելի խոսքը: Սա դատական խորհրդի նախագահի զգացում է, որը, աղետից հետո, այնքան էլ դժվար չէ ձեռք բերելը: Բարեկամությունը ավելի պարզ է: Երկար ու ծանր ժամանակ է պետք ստանալու համար, բայց երբ ունենում ես, այլևս դրանից գլուխդ ազատել չես կարող, պետք է դիմանաս: Չկարծեք, թե ձեր բարեկամները ձեզ զանգ կտան ամեն երեկո, ինչպես պարտավոր էին, իմանալու համար, թե արդյոք ճիշտ այդ երեկոյան չէ, որ դուք որոշում եք

ինքնասպան լինել կամ պարզապես ընկերակցության կարիք չունեք, դուրս գալու տրամադրություն չունեք: Բայց՝ ոչ, եթե զանգահարեն, հանգիստ եղեք, դա կլինի այն օրը, երբ դուք մենակ չեք, երբ կյանքը գեղեցիկ է: Ավելի շուտ նրանք ձեզ կմղեն ինքնասպանության, թելադրելով, որ դա միակ ելքն է ձեր դրության մեջ: Աստված տա, սիրելի պարոն, որ մեր բարեկամներից ավելի բարձր լինենք: Գալով նրանց, ում պաշտոնն է մեզ սիրել, ուզում եմ ասել՝ ծնողները, ազգականները, արյունակիցները (ինչ բացատրություն), դա ուրիշ երգ է: Նրանք գիտեն ճիշտ բառը, բայց դա հենց այն բառն է, որ կրակոց է ենթադրում. նրանք զանգահարում են, ինչպես կրակում են հրացանից, և ճիշտ են նշան բռնում: Ահ, հուդաներ:

Ինչպես: Ո՞ր երեկոն: Ես դրան կհասնեմ, ինձ հետ գործ ունենալիս համբերատար պետք է լինել: Ինչ-որ չափով ես արդեն այդ էի պատմում բարեկամների ու ազգականների մասին խոսելիս: Ինձ պատմել են մի մարդու մասին, որի բարեկամը բանտարկված էր. այդ մարդը ամեն գիշեր քնում էր իր սենյակի հատակին, որպեսզի չօգտվի այն հարմարավետությունից, որից զրկված էր իր սիրած անձը: Ո՞վ, սիրելի պարոն, ո՞վ հատակին պիտի քնի մեզ համար: Ես ինքս ընդունակ եմ դրան: Այո, կուզենայի լինել, մի օր կլինեմ: Ճիշտ է, մի օր բոլորս էլ ընդունակ կդառնանք, և դա էլ մեր փրկությունը կլինի: Բայց դա հեշտ չէ, որովհետև բարեկամությունը անուշադիր է կամ, առնվազն, անկարող: Այն, ինչ ցանկանում է, չի կարողանում: Գուցե ի վերջո բավարար չափով չի ցանկանում: Գուցե բավարար չափով չենք սիրում կյանքը: Նկատել եք, մահը միայն արթնացնում է մեր զգացմունքները: Որքա՜ն ենք սիրում մեր հենց նոր մեկնած բարեկամներին, այնպես չէ: Ինչպես ենք հիանում մեր այն ուսուցիչներով, որոնք, բերանները հողով լցված, այլևս չեն խոսում: Այդ ժամանակ հարգանքը տրվում է շատ բնականորեն, այն հարգանքը, որին գուցե մեզնից սպասել են ամբողջ կյանքում: Բայց գիտեք ինչու ենք մենք միշտ ավելի արդար և ավելի առատաձեռն մահացածների նկատմամբ: Պատճառը պարզ է: Նրանց նկատմամբ պարտավորություն չունենք: Նրանք մեզ ազատ են թողնում, կարող են երկար սպասել: Մենք կարող ենք չշտապել, մեր պատիվը դնել կոկտեյլի և սիրուհու միջև վերջին հաշվով կորած ժամանակի ընթացքում: Եթե նրանք որևէ բանով մեզ պարտավորեցնում են, այդ էլ հիշողությունն է, իսկ մենք կարճ հիշողություն ունենք: Ոչ, մենք մեր բարեկամների նոր մեռած լինելն ենք սիրում, նրանց վշտալի մահը, նրանց նկատմամբ մեր հուզումները, կարճ ասած, մենք մեզ ենք սիրում:

Ես մի բարեկամ ունեի, որից հաճախ խուսափում էի: Նա մի քիչ ձանձրացնում էր և, հետո, սիրում էր բարոյախոսել: Բայց մահամերձ վիճակում ինձ կանչեց. հավատացեք: Ես ոչ մի օր չբացակայեցի: Նա մահացավ ինձնից գոհ, ձեռքերս սեղմելով: Մի ուրիշը, այս դեպքում՝ կին, որ ժամանակին ինձ ապարդյուն կերպով հալածում էր, շուտ մեռնելու խելացիությունը ունեցավ: Եվ անմիջապես ինչ տեղ գրավեց սրտումս: Իսկ որքան հրաշալի է ինքնասպանությունը: Աստված իմ, ինչ հրաշալի իրարանցում: Հեռախոսը զանգում է, սիրտդ պայթում, և՝ գիտակցորեն ընտրված կարճ, բայց տողատակով ասված նախադասություններ, որոնց մեջ կա վշտի տիրապետում և նույնիսկ, այո, մի քիչ էլ ինքնադատապարտում:

Մարդը այսպես է, սիրելի պարոն, երկու երես ունի. չի կարող սիրել առանց ինքն իրեն սիրելու: Դիտեցեք ձեր հարևաններին, եթե պատահաբար շենքում մարդ է մահացել: Իրենց փոքրիկ կյանքերից գոհ՝ նրանք քնում էին, և, ահա, օրինակի համար, դռնապանը մեռնում է: Անմիջապես արթնանում են, կայտառանում, իրարից տեղեկություններ են ստանում, իրար կարեկցում են: Դիակը դեռ չի հանված, բայց ներկայացումը սկսված է: Նրանք ողբերգության կարիք ունեն, ինչ եք ուզում, դա նրանց փոքրիկ գերակայության արտահայտությունն է, նրանց ապերատիվը: Կարծում եք պատահաբար եմ դռնապանի մասին խոսում: Ես մեկն ունեի, բոլորի հարգանքը կորցրած մեկը, չոր, աննշան և ոխակալ մի հրեշ, որ կարող էր հուսահատեցնել նույնիսկ ֆրանցիսկյան մի կրոնավորի: Ես նրա հետ չէի էլ խոսում, բայց իր գոյությամբ իսկ խանգարում էր գոհունակության իմ զգացողությունը: Մահացավ, և ես գնացի նրա թաղմանը:

Արարողությանը նախորդող երկու օրերը հետաքրքրությամբ լեցուն եղան: Դռնապանի կինը հիվանդացավ. նա պառկած էր իրենց միակ սենյակում, իսկ դագաղը դրված էր նրա մահճակալի կողքին: Յուրաքանչյուրս մեր նամակները սկսեցինք մեր ձեռքով վերցնել: Դուռը բացում էինք, ասում՝ բարի լույս, տիկին,— լսում էինք գովասանքի խոսքեր մեկնողի մասին, որին դռնապանուհին ձեռքով ցույց էր տալիս, և նամակները տանում էինք: Դրա մեջ ոչ մի զվարճալի բան չկար, այդպես չէ: Սակայն ամբողջ տունը անցավ այդ սենյակով, որ ֆենոլ էր հոտում: Վարձակալները իրենց սպասուհիներին չէին ուղարկում, իրենք էին գալիս օգտվելու անսպասելի հաջողությունից: Սպասուհիները նույնպես հետևում էին նրանց օրինակին: Թաղման օրը դագաղը շատ մեծ եկավ սենյակի դռան համար.— օհ, սիրելիս,— իր անկողնից ասում էր դռնապանուհին զգացմունքով, որ նույն պահին հիացական էր և վշտալի,— ինչքան խոշոր էր նա: — Մի անհանգստացեք, տիկին,— պատաս-

խանեց թաղումը կազմակերպողը,— ոտի վրա կանգկացնենք: Ոտքի վրա անցկացրին, հետո պառկեցրին, և ես միակն էի (կաբարեի մի դռնապանի հետ. հետո իմացա, որ ամեն երեկո հանգուցյալի հետ նրանք միասին են խմել իրենց պերոնոն) մինչև գերեզման գնացողը և ծաղիկներ դնողը դագաղի վրա, որի շքեղությունը ինձ զարմացրեց: Հետո այցելեցի դռնապանուհուն, որպեսզի ստանամ նրա ողբերգական շնորհակալությունները: Ինչ իմաստ ունեն այս բոլորը, ասացեք ինձ: Ոչ մի, բացի ապերատիվ լինելուց:

Ես թաղեցի նաև իրավաբանների միությունից մի ծեր պաշտոնակցի: Բավական արհամարհված մի պաշտոնյա էր նա, որի ձեռքը ամեն օր սեղմում էի: Իմ աշխատանքի վայրում ես բոլորի ձեռքն էլ համենայն դեպս սեղմում էի, և հաճախ մեկի փոխարեն երկու անգամ: Այս մտերիմ պարզությունը, քիչ ծախսով, ինձ բերում էր բոլորի համակրանքը, որ պետք էր իմ առաջխաղացման համար: Դատարանի նախագահը իրեն նեղություն չտվեց ներկա լինելու մեր աշխատակցի թաղմանը: Բայց ես գնացի, հակառակ, որ պատրաստվում էի հաջորդ օրը ճամփորդել, և դրանով իսկ իմ արարքը ավելի ընդգծվեց: Իրականում ես գիտեի, որ իմ ներկայությունը պիտի նշմարվեր նպաստավոր մեկնաբանությամբ: Հետևաբար, հասկանում եք, նույնիսկ այդօր տեղացող ձյունը ինձ հետ չկանգնեցրեց:

Ինչպես: Հասնում եմ, մի վախեցեք, դրանից բոլորովին չեմ հեռանում: Բայց թույլ տվեք ձեզ մատնանշել, որ իմ դռնապանի կինը, որ իրեն նյութապես կործանել էր գերեզմանի վրա խաչ սարքել տալով, լավ շղթա դնել տալու և արծաթե ձեռքեր պատվիրելու համար, որպեսզի ավելի վայելեր իր հուզումը, մի ամիս հետո կապվեց լավ ձայն ունեցող մի պճնամոլի հետ: Նա դռնապանուհուն ծեծում էր, նրանց տնից սարսափելի ձայներ էին լսվում, և անմիջապես հետո նորեկը բացում էր լուսամուտը և արձակում իր նախասիրած սիրերգը. «Կանայք, որքան գեղեցիկ եք»: «Եվ հակառակ դրան». ասում էին հարևանները: Հակառակ դրան ի՞նչ, հարցնում եմ ձեզ: Լավ, բոլոր երևույթները այս բարիտոնին դեմ էին. այդ թվում նաև դռնապանուհու կարծիքը: Բայց այդ բոլորը չէին ապացուցում նաև, որ նրանք իրար չէին սիրում: Ոչինչ չէր ապացուցում նաև, որ դռնապանուհին իր ամուսնուն չէր սիրել: Հետևաբար էլ, երբ պճնամոլը թևերն ու ձայնը հոգնեցնելուց հետո մեկնեց, հավատարիմ կինը վերսկսեց ողորմած հոգու գովքը անել: Բայց ի վերջո, ես ճանաչում եմ ուրիշների, որոնց տեսքը ի նպաստ իրենց է, բայց որոնք ավելի լուրջ և ավելի կայուն չեն: Ես ճանաչում եմ մի մարդու, որ իր կյանքի քսան տարին տվեց մի թեթևամիտ կնոջ, որի համար զոհաբերեց իր բարեկամներին, աշխատանքը, նույնիսկ իր արժանապատվությունը և մի օր հայտնա-

բերեց, որ երբեք չի սիրել նրան: Ձանձրանում էր, ահա ամենը, ձանձրանում էր, ինչպես մարդկանց մեծամասնությունը: ՈՒրեմն նա ստեղծել էր բարդություններով լեցուն դրամատիկ մի կյանք: Պետք է ինչ-որ մի բան պատահի. ահա մարդկային հարաբերությունների մեծամասնության բացատրությունը: Պետք է մի բան լինի, նույնիսկ ստրկություն առանց սիրո, նույնիսկ պատերազմ կամ մահ: ՈՒրեմն, կեցցեն թաղումները:

Ես նույնիսկ այդ արդարացումը չունեի: Ես չէի ձանձրանում, որովհետև տխրում էի: Այն գիշերը, որի մասին խոսում եմ, կարող եմ ասել, որ ավելի քիչ էի ձանձրանում, քան երբևէ: Ոչ, իսկապես չէի ցանկանում, որ որևէ բան պատահեր: Եվ սակայն... լսեցեք, սիրելի պարոն, աշնանային մի գեղեցիկ երեկո էր, դեռևս գաղջ քաղաքում, արդեն խոնավ՝ Սենայի ափին: Գիշերը վրա էր հասնում, արևմուտքում երկինքը դեռևս պայծառ էր, բայց մթագնում էր, լամպերը թույլ փայլում էին: Ես բարձրանում էի ձախ ափով դեպի Արվեստների կամուրջը: Հնագրավաճառների փակ կրպակների արանքից երևում էր փայլող գետը: Քարափի վրա քիչ մարդ կար. Փարիզը արդեն ընթրում էր: Քայլում էի կոխոտելով դեղին և փոշոտ տերևները, որոնք դեռ ամառ էին հիշեցնում: Երկինքը քիչ առ քիչ աստղերով էր լցվում, որոնք խուսափուկ երևում էին մի լամպասյունից մյուսին մոտենալիս: Վայելում էի վերադարձած լռությունը, երեկոյի քաղցրությունը, դատարկ Փարիզը: Ես գոհ էի: Հաջողակ օր էր եղել. հանդիպել էի մի կույրի, մեղմ դատավճռի հույս կար, հաճախորդի ջերմ ձեռքսեղմում էր եղել, մի քանի մեծահոգի արարքներ էի արել և կեսօրից հետո հանպատրաստից մի փայլուն ելույթ էի ունեցել մի քանի բարեկամների առաջ՝ տիրող դասակարգի սրտի կարծրության և ընտրանիի երկերեսանիության մասին:

Բարձրացել էի Արվեստների կամուրջ, ուր այդ պահին մարդ չկար, դիտելու համար գետը, որ հազիվ էր նշմարվում արդեն վրա հասած մթության պատճառով: Դեմքս դեպի Վեր-Գալանը, ես իշխում էի կղզուն: Զգում էի իմ մեջ բարձրացող ուժի և մեծության մի հզոր զգացում և, ինչպես ասեմ ձեզ, մի տեսակ կատարելություն, որ ուռցնում էր սիրտս: ՈՒղղվելով՝ ուզում էի մի սիգարետ վառել, գոհունակության սիգարետը, երբ նույն պահին իմ ետևում մի ծիծաղ պայթեց: Անակնկալի եկած՝ հանկարծակի շուռ եկա. ոչ ոք չկար: Գնացի մինչև կամրջի բազրիքները. ոչ մի առագաստանավ և ոչ մի նավակ: Վերադառնում եմ դեպի կղզին և նորից լսում ծիծաղը իմ ետևում, մի քիչ հեռու, կարծես գետով իջնելիս լիներ: Կանգնեցի այնտեղ անշարժ: Ծիծաղը ցած էր իջնում, բայց դեռևս հստակորեն լսվում էր իմ ետևից, այն կարող էր միայն ջրից գալ:

Նույն ժամանակ զգում էի իմ սրտի ուժգին խփոցը: Ինձ լավ լսեք, ծիծաղը խորհրդավոր ոչ մի բան չուներ, դա շատ լավ, բնական, համարյա բարեկամական ծիծաղ էր, որ ամեն ինչ իր տեղն էր դնում: Քիչ հետո այլևս ոչինչ չլսեցի: Վերադարձա քարափ, մտա Դոֆինի փողոցը, սիգարետ գնեցի, որի կարիքը բոլորովին չէի զգում: Ապշել էի և վատ էի շնչում: Այդ գիշեր կանչեցի մի բարեկամի, բայց նա տանը չէր: Տատանվում էի դուրս գալ, երբ հանկարծ լուսամուտիս տակ ծիծաղ լսեցի: Բացեցի: Մայթի վրա, իսկապես, երիտասարդներ կային, որոնք ուրախ բաժանվում էին իրարից: ՈՒսերս վեր բարձրացնելով փակեցի լուսամուտները: Ձեռքիս ուսումնասիրելու գործ ունեի: Գնացի լողարան մի բաժակ ջուր խմելու: Հայելու մեջ ժպտում էր իմ պատկերը, բայց ինձ թվաց, որ իմ ժպիտը երկակի էր...

Ինչպես, ներեցեք, ուրիշ բանի մասին էի մտածում: Ես ձեզ վաղը անկասկած կտեսնեմ: Վաղը, այո, պայմանավորվեցինք: Ո՛չ, ո՛չ, մնալ չեմ կարող: Բացի այդ խորհրդակցության եմ հրավիրված այն գորշ արջի կողմից, որին տեսնում եք: Պատվավոր մի մարդ, հավանաբար, որին ոստիկանությունը հալածում է պարզապես անբարյացկամությունից: Դուք կարծում եք, որ նա մարդասպանի գլուխ ունի: Վստահ եղեք, որ նրա գործերը իր տեսքին համապատասխանում են: Նա կողոպտիչ է, և դուք պիտի զարմանաք, որ այս քարայրների մարդը մասնագիտացած է նաև գեղարվեստական նկարների առուծախով: Հոլանդիայում ամեն մարդ մասնագետ է յուղանկարի և վարդակակաչի: Այս մեկը, իր համեստ տեսքով, հեղինակ է յուղանկարի ամենանշանավոր գողությունների: Ո՞ր մեկը: Գուցե կասեմ ձեզ: Մի զարմացեք իմ գիտելիքներից: Թեև ես խոստովանեցնող-դատավոր եմ, բայց ես ունեմ նաև իմ էնգրի ջութակը, այս լավ մարդկանց դատական խորհրդատուն եմ: Ես ուսումնասիրել եմ այս երկրի օրենքները և հաճախորդների մեծ ցանց ունեմ այս թաղամասում, որտեղ վկայական չեն պահանջում: Հեշտ չէր, բայց վստահություն եմ ներշնչում, այդպես չէ: Ես անկեղծ ու գեղեցիկ ժպիտ ունեմ, իմ ձեռքսեղմումը պինդ է, դրանք՝ իմ առավելություններն են: Հետո, ես կարգավորել եմ մի քանի դժվար գործեր, սկզբում դրանցով զբաղվել եմ շահի համար, ապա՝ հավատալով: Եթե բախտախաղի տների տերերն ու գողերը միշտ ու ամեն տեղ դատապարտվեն, բոլոր պատվավոր մարդիկ միշտ իրենց անմեղ պիտի կարծեին, սիրելի պարոն: Եվ, ըստ իս, արդեն հասնում եմ գործի էությանը, և դա ոչ մի դեպքում պետք չէ թույլ տալ: Այլապես շատ ծիծաղելի բան է լինելու:

* * *

Իսկապես, սիրելի հայրենակից, ձեր հետաքրքրության համար շատ եմ շնորհակալ, թեև իմ պատմությունը արտակարգ ոչինչ չունի: Եթե այդքան պնդում եք, իմացեք, որ ես մի քիչ, մի քանի օր մտածեցի այդ ծիծաղի մասին, հետո մոռացա այն: Հեռվից հեռու կարծես այն լսում էի իմ ներսում, ինչ-որ տեղ: Բայց ընդհանրապես, առանց ճիգ գործ դնելու, ես ուրիշ բաների մասին էի մտածում:

Սակայն պետք է ընդունեմ, որ այլևս իմ ոտքը Փարիզի գետափնյա փողոցները չդրեցի: Երբ ավտոյով կամ ավտոբուսով կամուրջ էի անցնում, իմ մեջ մի տեսակ լռություն էր տիրում: Կարծես լսում էի: Բայց հասնում էի Սենայի մյուս ափը՝ ոչինչ չէր պատահում, և ես թեթևացած շունչ էի քաշում: Այդ շրջանում ֆիզիկապես մի քիչ վատ էի զգում: Առանձնապես հիվանդ չէի, կարծես մի տեսակ ուժերի անկում ունեի, մի տեսակ դժվարություն իմ լավ տրամադրությունը վերագրտնելու: Բժիշկների մոտ գնացի, որոնք տրամադրությունը բարձրացնող դեղեր տվեցին: Ես «բարձրանում» էի, հետո նորից էի իջնում: Կյանքը ինձ համար դառնում էր նվազ հեշտ. երբ մարմինը տխուր է, սիրտը հյուծվում է: Ինձ թվում էր, որ մասամբ հետ էի սովորում, ինչ երբեք չէի սովորել և որը, սակայն, շատ լավ գիտեի, այսինքն՝ ապրելը, այո, կարծում եմ, որ հենց այն ժամանակ էր, որ ամեն ինչ սկսվեց:

Բայց այս երեկո էլ ես ինձ լավ ձևի մեջ չեմ զգում: Նախադասություններս դժվարությամբ եմ կազմում, ինձ թվում է նույնիսկ, որ նվազ լավ եմ խոսում, և իմ խոսքը նվազ վստահ է հնչում: Անշուշտ, եղանակից է: Վատ եմ շնչում, օդը այնքան ծանր է, որ կուրծքս ճնշում է: Որևէ անհարմարություն կտեսնեիք, սիրելի հայրենակից, եթե դուրս գայինք և քայլեինք քաղաքի փողոցներով: Շնորհակալություն:

Որքան գեղեցիկ են ջրանցքները երեկոյան: Սիրում եմ բորբոսնած ջրերի շունչը, ջրանցքի մեջ թրջված մեռած տերևների և մեծելային այն հոտը, որ բարձրանում է ծաղիկներով լեցուն մակույկներից: Ոչ, ոչ, դա բնավ հիվանդագին ճաշակի նշան չէ, հավատացեք: Ընդհակառակը, ինձ մոտ դա կանխամտածված բան է: Իրականությունն այն է, որ ինձ ստիպում եմ հիանալ ջրանցքներով: Աշխարհում ամենից շատ ես Սիցիլիան եմ սիրում, այն էլ Էթնայի գագաթից, լույսի տակ, այն պայմանով, որ տիրեմ ծովին և կղզուն: Սիրում եմ նաև Ճավան, բայց հողմերի ժամանակ: Այո, երիտասարդ ժամանակս գնացել եմ: Ընդհանուր առմամբ բոլոր կղզիները սիրում եմ: Այնտեղ ավելի հեշտ է տիրելը:

Հրաշալի տուն է, այնպես չէ: Այդ երկու գլուխները, որ տեսնում եք, նեգր ստրուկների գլուխներ են: Ցուցանակ է: Տունը պատկանել է մի ստրկավաճառի: Օհ, այդ ժամանակներում նրանք իրենց

խաղը գաղտնի չէին պահում: Նրանք ուժեղ էին. ահավասիկ, ես փողոցի վրա սեփական տուն ունեմ, ստրուկներ եմ բերում, սև միս եմ ծախում: Պատկերացնում եք, որ որևէ մեկը այսօր հրապարակայնորեն հայտարարի, թե ինչով է զբաղվում: Ինչ խայտառակություն. լսում եմ իմ փարիզյան պաշտոնակիցների ձայնը: Այդ հարցում նրանք անուղղելի են, ոչ մի բանի առաջ կանգ չեն առնի և մի քանի, գուցե և ավելի բողոքի կոչ կարձակեն, ծանր ու թեթև անելուց հետո ես նույնպես իմ ստորագրությունը կավելացնեմ բողոքագրի տակ: Ստրկությունն. ամոթ, ոչ, ոչ, մենք դեմ ենք: Իսկ այն, որ մենք ստիպված ենք նույն ստրկությունը հաստատել մեզ մոտ, ասենք գործարաններում. դա գործերի ընդհանուր կարգի մեջ է մտնում, բայց դրանով հպարտանալն արդեն ավելորդ է:

Ես շատ լավ գիտեմ, որ հնարավոր չէ չիշխել կամ չսպասարկվել: Յուրաքանչյուր մարդ մաքուր օդի պես կարիք ունի ստրուկի: Հրամայել, նշանակում է շնչել, դուք այդ կարծիքին եք: Նույնիսկ ամենաաղքատները կարող են շնչել: Ընկերային սանդուղքի ամենացածր սանդղամատի վրա կանգնածն անգամ իր կինը կամ զավակն ունի: Եթե մենակյաց է՝ մի շուն ունի: Կարևորը, ի վերջո, բարկանալ կարենալն է, առանց դիմացինի պատասխանելու իրավունքի: «Հորը չեն պատասխանի» ձևակերպումը գիտեք, չէ: Որոշ իմաստով դա շատ եզակի է: Ո՞ւմ պիտի պատասխանես այս աշխարհում, եթե ոչ նրան, ում սիրում ես: Ուրիշ իմաստով դա համոզիչ է: Պետք է որ մեկը վերջին խոսքը ունենա: Եթե ոչ, յուրաքանչյուր տրամաբանության կարող է հակառակվել մեկ ուրիշը, և վերջը չես գտնի: Իշխանությունը, ընդհակառակը, ամեն ինչի վերջ է տալիս: Մենք երկար ժամանակ ենք վատնել այս ճշմարտության հասնելու համար, բայց այս մեկը հասկացել ենք: Օրինակ, դուք պետք է նկատած լինեք, թե մեր ծեր Եվրոպան ի վերջո լավ ձևով է փիլիսոփայում: Այլևս չենք ասում, ինչպես ավելի միամիտ ժամանակ ասում էինք. «Ես այսպես եմ կարծում: Ձեր առարկություններն ինչ են»: Այժմ մենք ավելի հստակատես ենք դարձել: Մենք երկխոսությունը փոխարինել ենք հաղորդագրությամբ: «Այս է ճշմարտությունը, ասում ենք մենք: Դուք կարող եք վիճել այդ մասին, դա մեզ չի հետաքրքրում: Բայց մի քանի տարի հետո կգա ոստիկանը և ձեզ ցույց կտա, որ իրավունք ունեցողը ես եմ»:

Ահ, սիրելի մոլորակ: Այստեղ այժմ ամեն ինչ պարզ է: Մենք մեզ ճանաչում ենք, գիտենք, թե ինչի ենք ընդունակ: Վերցրեք ինձ, որպեսզի օրինակը փոխած լինենք, բայց ոչ բովանդակությունը— ես միշտ ուզեցել եմ, որ ինձ ժպտալով սպասարկեն: Եթե աղախինս տխուր դեմք էր ունենում, իմ օրերը թունավորվում

էին: Նա, անշուշտ, իրավունք ուներ ուրախ չլինելու: Բայց վստահ եմ, որ իր համար էլ ավելի լավ կլիներ իր պարտականությունը կատարել ժպիտով, քան լաց լինելով: Դա առնվազն ինձ համար ավելի լավ էր: Գիտեմ, որ նման տրամաբանությունը, եթե ինձ պատիվ չէր բերում, ամբողջապես էլ հիմար չէր: Նույն պատճառով միշտ հրաժարվել եմ չինական ճաշարանում ճաշելուց: Ինչո՞ւ: Որովհետև ասիացիները լուռ նայում են սպիտակներին և միշտ արհամարհող տեսք ունեն: Բնականաբար այդ տեսքը նրանք պահպանում են սպասարկելիս: Այդ ժամանակ ինչպե՞ս վայելել տապակած հավը. մանավանդ նրանց նայելիս ինչպե՞ս կարող եք մտածել, որ իրավացի եք:

Մեր մեջ ասած, ուրեմն, ստրկությունը, նախընտրաբար ժպտացող ստրկությունը, անխուսափելի է: Բայց այն մենք չպետք է բարձրաձայն ընդունենք: Ով չի կարող հրաժարվել ստրուկ ունենալուց, ավելի խելոք կլինի, եթե նրանց ազատ մարդիկ անվանի: Նախ որպես սկզբունք, և, հետո, որպեսզի այդ մարդկանց չհուսահատեցնենք: Նրանց պարտավոր ենք այդ փոխհատուցումը տալ. այդպես չէ՞: Այս ձևով նրանք կշարունակեն ժպտալ, և մենք կպահպանենք մեր հոգու հանգստությունը: Առանց դրան մենք պարտավոր կլինեինք վերանայել մեր կարծիքը մեր մասին, վշտից կխենթանայինք և կամ համեստ կդառնայինք. երկուսն էլ սարսափելի են: Ուրեմն՝ առանց ցուցանակների, կորչե՞ն ամոթալի ցուցանակները: Մյուս կողմից, եթե բոլոր մարդիկ բացվեին, ասեին իրենց իսկական արհեստը, իրենց ինքնությունը, այլևս չէինք իմանա, թե որ կողմը պետք է շուռ գալ: Պատկերացրեք այցետոմսերը. Դյուբոն— վախկոտ փիլիսոփա, կամ քրիստոնյա-կալվածատեր, կամ շնացող-հումանիստ. կարելի է ընտրել: Բայց դա դժոխք կլիներ: Այո, պետք է, որ դժոխքը այդպիսին լինի. ցուցանակներով փողոցներ և ուղղելու ոչ մի միջոց: Մեկընդմիշտ դասակարգված ես:

Դուք, օրինակի համար, սիրելի հայրենակից, մտածո՞ւմ եք, թե ինչ է լինելու ձեր ցուցանակը: Լռո՞ւմ եք: Ոչինչ, հետագայում կպատասխանեք: Իսկ իմը, համենայն դեպս, գիտեմ. երկերեսանի մի դեմք. մի գրավիչ Յանուս, և վրան՝ իմ տան դևիզը. «Մի վստահեք»: Իմ այցետոմսի վրա գրված կլինի. «Ժան-Բատիստ Բլամանս, ծաղրածու»: Լսեցեք. հայտնի գիշերից փոքր անց մի քան հայտնաբերեցի: Երբ մայթի վրա բաժանվում էի մի կույրից, որին օգնել և հասցրել էի այդտեղ, խոնարհվելով նրան բարևեցի: Գլխարկ հանելու այդ շարժումը իսկապես նրան չէր ուղղված, նա այն տեսնել չէր կարող: Ուրեմն ո՞ւմ էր ուղղված: Հասարակութ-

յանը: Դերակատարումից հետո՝ ողջույններ: Վատ չէ, չէ: Մի ուրիշ օր, նույն ժամանակաշրջանում, մի վարորդի, որ շնորհակալություն էր հայտնում իրեն օգնելուս համար, պատասխանեցի, թե՝ ոչ ոք նման բան չէր անի իր համար: Անշուշտ ես ուզում էի ասել, թե ցանկացած մեկը կաներ: Բայց այդ դժբախտ սխալը մնաց սրտիս վրա: Համեստության մեջ ես անմրցելի էի:

Պետք է համեստորեն ընդունել, սիրելի հայրենակից, ես միշտ հպարտությունից պայթել եմ: Ես, ես, ես, ահա իմ սիրելի կյանքի կրկներգը, որ լսվում էր իմ բոլոր ասածների մեջ: Ես երբեք ուրիշ ձևով խոսել չեմ կարողացել, բացի ինձ գովելուց, մանավանդ, երբ այն անում էի ջախջախիչ զգուշավորությամբ, որի գաղտնիքը ես գիտեի: Ճիշտ է, միշտ ազատ և ուժեղ եմ ապրել: Պարզապես ինձ ազատագրված էի զգում բոլորից, այն հրաշալի պատճառաբանությամբ, որ ոչ ոքի ինձ հավասար չէի համարում: Ինչպես ասել եմ ձեզ, ես ինձ ամբողջ աշխարհից ոչ միայն խելացի էի համարում միշտ, այլ նաև ավելի զգայուն և ավելի համարձակ, ընտրյալ կրակող էի, անմրցելի վարորդ, լավագույն սիրող: Նույնիսկ այնպիսի բնագավառներում, ուր հեշտ էր ստուգել իմ ստորակայությունը, օրինակի համար՝ թենիսը, որտեղ ես միջակ խաղընկեր էի, ինձ համար դժվար էր չհավատալ, որ եթե մարզվելու ժամանակ ունենայի, լավագույններին կանցնեի: Ես իմ մեջ միշտ գերակայության զգացում էի տեսնում, մի բան, որով բացատրվում էր իմ ինքնագոհությունն ու հանդարտությունը: Երբ ուրիշով էի զբաղվում, դա պարզապես ազատ կամքով արված զիջողություն էր, որի ամբողջ օգուտը ինձ էր գալիս, իմ ինքնասիրությունը մի աստիճանով բարձրանում էր:

ՈՒրիշ ճշմարտությունների կողքին այս փաստերը ես աստիճանաբար հայտնագործեցի այդ գիշերվան հաջորդող շրջանում, որի մասին խոսել եմ: Ոչ անմիջապես, ոչ էլ շատ հստակորեն: Անհրաժեշտ եղավ, որ նախ վերագտնեմ հիշողությունս: Աստիճանաբար ավելի հստակ տեսա, սկսեցի սովորել մի բան, որ արդեն գիտեի: Մինչ այդ ինձ միշտ օգնել էր մոռանալու զարմանալի մի ուժ: Ես ամեն ինչ մոռանում էի և հատկապես իմ որոշումները: Իրականում ինձ համար ոչ մի բան նշանակություն չուներ: Անշուշտ, երբ դեպքերը ինձ ստիպում էին, ես ուշադրություն էի դարձնում պատերազմի, ինքնասպանության, թշվառության վրա: Թեև մի տեսակ քաղաքավարի և մակերեսային ձևով: Երբեմն ձևացնում էի, թե հոգվում եմ իմ առօրյա օտար մի գործի համար: Խորքում, սակայն, ես դրան չէի մասնակցում, բացի այն պահից, երբ իմ ազատությունն էր վտանգի տակ. ինչպես բացատրել ձեզ: Ամեն ինչ սահում-անցնում էր, այո, ամեն ինչ իմ վրայով սահում-անցնում էր:

Արդար լինենք. պատահում էր, որ իմ մոռացումները գովասանքի արժանի լինեին: Դուք նկատած կլինեք. մարդիկ կան, որոնց կրոնը բոլոր վիրավորանքները ներելն է. նրանք իսկապես ներում են, բայց երբեք չեն մոռանում: Ես այնքան լավ կտորից չէի ստեղծված, որ վիրավորանքները ներեի, պարզապես մոռանում էի: Եվ նա, ով կարծում էր, թե իրեն ատում եմ, ապշում էր՝ տեսնելով, որ ես մեծ ժպիտով եմ դիմավորում իրեն: Ըստ իր բնավորության՝ նա հիանում էր իմ մեծահոգությամբ կամ արհամարհում էր իմ վախկոտությունը, առանց մտածելու, որ իմ տրամաբանությունը ավելի պարզ էր. ես նույնիսկ իր անունը մոռացած էի լինում: Այն անկարողությունը, որ ինձ անտարբեր էր դարձնում կամ ապաշնորհ, ինձ տալիս էր մեծահոգի մարդու տեսք:

Հետևաբար՝ ես շարունակում էի ապրել օր-օրին, իմ սեփական աշխարհում: Ես, ես, ես: Օրը-օրին կանայք, օրը-օրին առաքինություն կամ մոլություն, առանց վաղվա մասին մտածելու, ինչպես շները. բայց միշտ իմ դիրքի վրա հաստատ կանգնած: Այդպես առաջ էի գնում կյանքի մակերեսով, կարծես բառերի մեջ, երբեք՝ իրականության: Բոլոր գրքերը՝ հազիվ կարդացված, բոլոր այս բարեկամները՝ հազիվ սիրված, բոլոր այս քաղաքները՝ հազիվ այցելված, բոլոր այս կանայք՝ հազիվ ունեցած, այդ են ապացուցում: Զանձրույթից կամ անուշադրությունից հազիվ շարժումներ էի անում: Մարդիկ իրար էին հաջորդում, ուզում էին կպչել ինձ, բայց կպչելու ոչինչ չկար, և դա նրանց համար դժբախտություն էր: Որովհետև ես պարզապես մոռանում էի նրանց: Ինձնից բացի ես ուրիշ բան չեմ հիշել:

Սակայն կամաց-կամաց հիշողությունս ինձ վերադարձավ: Կամ, ավելի ճիշտ, ես վերադարձա նրան և այնտեղ գտա հիշատակներ, որոնք ինձ էին սպասում: Նախքան այդ մասին ձեզ պատմելը, թույլ տվեք, սիրելի հայրենակից, մի քանի օրինակներ բերել (որոնք օգտակար կլինեն ձեզ, վստահ եմ), թե ես ինչեր գտա իմ հետազոտությունների ժամանակ:

Մի օր, իմ ավտոմեքենան վարելիս, երբ մի պահ կանգ էի առել կանաչ լույսի տակ, և երբ իմ անհամբեր համաքաղաքացիները անմիջապես իմ հետևից բաց էին թողել իրենց զգուշացնող շչակները, հանկարծ հիշեցի մի ուրիշ դեպք, որ տեղի էր ունեցել նման պայմաններում: Մի մոտոցիկլետ, որը վարում էր մի փոքր, չորուկ, ակնոցավոր և գոլֆ հագած մարդ, ինձնից անցել և առջևս տեղավորվել էր կարմիր լույսի տակ: Կանգնելիս մարդուկը անջատել էր շարժիչը և այժմ զուր ջանքեր էր թափում այն նորից աշխատեցնելու համար: Երբ կանաչ լույսը եղավ, իմ սովորական քաղաքավարությամբ նրանից խնդրեցի իր մոտոցիկլետը մի կողմ քաշել,

որպեսզի կարողանամ անցնել: Մարդուկը, որ շատ էր նյարդայնանում իր հազիվ շնչող մեքենայի պատճառով, փարիզյան քաղաքավարության օրենքների համաձայն ինձ պատասխանեց, որ կարող եմ կորչել գրողի ծոցը: Ես պնդեցի, միշտ քաղաքավարի, բայց ձայնիս մեջ անհամբերության մի փոքր շեշտով: Նա ինձ անմիջապես պատասխանեց որոշակի ձևով, որ կարող եմ կորչել որտեղ ուզենամ: Այդ ընթացքում իմ հետևից սկսել էին ազդանշաններ տալ: Ավելի հաստատակամ ձևով խոսակցիս խնդրեցի առավել քաղաքավարի լինել և նկատի ունենալ, որ երթևեկությանը խանգարում է: Այդ ցասկոտ բնավորությունը, հուսահատված անկասկած իր մեքենայի բացահայտ դարձած վատ կամքից, ինձ ասաց, որ եթե ցանկանում եմ քիթս հողին քսել, մեծ ուրախությամբ ինձ կբավարարի: Այդքան ցինիզմը ինձ լավ բարկացրեց, և ես մեքենայիցս դուրս եկա այս բացբերանի ականջները քաշելու համար: Կարծեմ վախկոտ չեմ (բայց ինչեր ասես չեն մտածի), մի գլուխ բարձր էի իմ հակառակորդից, իմ մկանները միշտ լավ են ծառայել ինձ: Այդ ժամանակ էլ հավատացած էի, որ ավելի շուտ ես նրան փոշեթաթախ կդարձնեի, քան նա ինձ: Բայց հազիվ էի մեքենայից դուրս եկել, ժողովրդի միջից, որը արդեն սկսել էր հավաքվել, մի մարդ մեջտեղ ընկավ, շտապեց իմ կողմը և սկսեց ինձ հավատացնել, որ ես վերջիններից վերջինն էի և ինձ թույլ չէր տա խփել մի մարդու, որը մոտոցիկլետ ուներ սրունքների արանքում և դրանով իսկ գտնվում էր աննպաստ պայմաններում: Ես շուռ եկա այս հրացանակրի կողմը և իրականում նույնիսկ չտեսա նրան: Հազիվ էի գլուխս շուռ տվել, երբ համարյա նույն ժամանակ լսեցի մոտոցիկլետի շարժիչի աշխատելու ձայնը և ականջիս ստացա մի ուժեղ հարված: Հազիվ ժամանակ ունեցա հասկանալ պատահածը, մոտացիկլետը հեռացավ: Ծայրահեղ զայրույթով ես մեքենայաբար քայլեցի դեպի դ'Արտանյանը, երբ, նույն պահին, մեքենաների շչակների անհամբեր ձայներ լսեցի ավտոշարից, որ արդեն պատկառելի էր դարձել: Կանաչ լույսը նորից վառվել էր: Այդ ժամանակ, դեռևս մի քիչ շփոթված՝ փոխանակ ինձ խանգարող ապուշին թափ տալու, ես խելոք վերադարձա դեպի իմ մեքենան և այն ճանապարհ հանեցի, մինչ անցնելու պահին այդ ապուշը ինձ ողջունում էր «վախկոտի մեկը» խոսքով, որը դեռ հիշում եմ:

Անկարևոր պատմություն է՝ պիտի ասեք դուք: Անկասկած: Բայց շատ երկար ժամանակ ես չէի մոռանում: Ահա կարևորը, թեև արդարացումներ ունեի: Ես թողել էի, որ ինձ ծեծեն, առանց պատասխանելու, բայց ինձ վախկոտության մեջ մեղադրել չէր կարելի: Անակնկալի եկած, երկու կողմից խոսքի բռնված, ես ամեն

ինչ խառնել էի, և-շչակներն էլ ավարտել էին իմ շփոթությունը: Սակայն այդ դեպքից ինձ դժբախտ էի զգում, կարծես անպատվել էին: Ես ինձ տեսնում էի առանց որևէ ռեակցիայի իմ մեքենան նստելիս, ամբոխի ծաղրական և ուրախ հայացքի տակ, մանավանդ որ այդ օրը ես հագել էի շատ ճաշակավոր մի կապույտ հագուստ: Լսում էի «վախկոտի մեկը» խոսքը, որ ինձ արդար էր թվում: Ի վերջո, ինձ հասարակության առաջ անպատվել էին: Անշուշտ, դեպքերի ինչ-որ հաջորդականության պատճառով, բայց միշտ էլ դեպքեր լինում են: Հարվածից հետո ես հստակորեն տեսնում էի, թե ինչ պետք էր անել: Տեսնում էի, թե ինչպես բռունցքի մի լավ հարվածով գետին էի գլորում դ'Արտանյանին, նստում էի մեքենա, հետապնդում ինձ խփող կապիկին, հասնում էի, նրա մեքենան սեղմում մայթին, մի կողմ էի քաշում նրան և մի լավ դմփում, ինչին այնքան շատ էր արժանացել: Զանազան տարբերակներով ես հարյուր անգամ դարձնում էի այս փոքրիկ ֆիլմը իմ երևակայության մեջ: Բայց արդեն շատ ուշ էր, և մի քանի օր շարունակ շատ վատ մի նախազգացում էր ինձ պատառոտում:

Սատանան տանի, նորից անձրև է գալիս: ՈՒզո՞ւմ եք, կանգ առնենք այս դռան տակ: Լավ: Որտեղ էի հասել: Ահ, այո, պատիվը: ՈՒրեմն, երբ վերագտա այս արկածի հիշողությունը, հասկացա, թե ինչ էր այն նշանակում: Ի վերջո իմ երազը չդիմացավ փաստերի փորձությանը: Ես երազել էի, այժմ դա արդեն պարզ էր, ամբողջական մարդ լինել, որը պետք է հարգվեր իր անձով, ինչպես նաև իր մասնագիտությամբ: Կիսով չափ Սերդան *, կիսով չափ դը Գոլ, եթե ուզում եք: Կարճ ասած, ես ուզում էի ամեն ինչում առաջինը լինել: Դրա համար էլ ձևեր էի թափում, ամեն առիթով ավելի շատ ցույց էի տալիս իմ ֆիզիկական, քան մտավոր կարողությունները: Բայց հասարակության մեջ առանց պատասխան տալու վիրավորանք ստանալուց հետո ինձ համար այլևս հնարավոր չէր շոյել իմ գեղեցիկ պատկերը: Եթե ես ճշմարտության և խոհեմության բարեկամ լինեի, մի բան, որ ձևացնում էի, ինձ վրա ինչ ազդեցություն պիտի գործեր այս նույնիսկ ներկա եղողներից արդեն իսկ մոռացված արկածը: Ես պետք է ինձ մեղադրեի, որ դատարկ բանի համար բարկացել էի, և նաև, բարկանալուց հետո, լրջախոհության բացակայության պատճառով, չէի կարողացել դիմագրավել հետևանքները: Դրա փոխարեն այրվում էի վրեժ լուծելու, խփելու և հաղթելու ցանկությունից: Կարծես իմ իսկական ցանկությունը ոչ թե ամենախելոք ու ամենաառատաձեռն էակը լինելն էր աշխարհում, այլ պարզապես ուզում էի լինել

* Ֆրանսիացի հայտնի բռնցքամարտիկ:

ամենաուժեղը ամենատարրական ձևով: Ճշմարտությունն այն է, որ յուրաքանչյուր մտավորական մարդ, դուք լավ գիտեք, երազում է գանգստեր լինել և իշխել հասարակության վրա միայն բռնի ուժով: Եվ որովհետև այդ այնքան էլ հեշտ չի ձեռք բերվում, ինչպես հավաստում է մասնագիտացված վեպերի ընթերցումը, մարդիկ սկսում են ընդհանրապես քաղաքականությամբ զբաղվել և վազում են դեպի ամենավայրագ կուսակցությունը: Ի վերջո ինչ կարևորություն ունի, երբ միտքը ստորացնելով մարդ կարողանում է բոլորին տիրել: Ես իմ մեջ հայտանգործում էի ճնշողի քաղցր երանգներ:

Ի վերջո հասկացա առնվազն, որ ես հանցագործի, դատապարտվածի կողմն էի այն չափով միայն, որքանով որ նրանց սխալը ինձ ոչ մի վնաս չէր պատճառում: Նրանց հանցանքը ինձ պերճախոս էր դարձնում, որովհետև զոհը ես՝ չէի: Վտանգի տակ ընկնելով, ոչ միայն իմ հերթին դատավոր էի դառնում, այլև ավելին՝ մի ցասկոտ պարոն, որ ուզում էր, բոլոր օրենքներից դուրս, տապալել յուրաքանչյուր հարձակվողի և նրան ծնկի բերել: Սրանից հետո, սիրելի հայրենակից, շատ դժվար է լրջորեն հավատալ արդարության կամ այրու ու որբի նախասահմանված պաշտպանը լինելուն:

Քանի որ անձրևը սաստկանում է, և մենք ժամանակ ունենք, կարող եմ ձեզ վստահել մի ուրիշ հայտնագործություն, որ արել եմ մի քիչ ուշ, իմ հիշողության մեջ: Նստենք պատսպարված այս նստարանին: Դարեր ամբողջ ծխամորճ ծխողները այստեղ դիտել են նույն անձրևի տեղալը նույն ջրանցքի վրա: Այն, ինչ ձեզ պիտի ասեմ, մի քիչ ավելի դժվար է: Խոսքս այս անգամ մի կնոջ մասին է: Պետք է նախապես ասեմ, որ կանանց հարցում առանց մեծ ճիգի ես միշտ հաջողակ եմ եկել: Չեմ ուզում ասել հաջողակ նրանց երջանկացնելու, ոչ էլ նրանց միջոցով ինձ երջանկացնելու իմաստով: Ոչ, պարզապես հաջողակ: Ես հասնում էի իմ նպատակներին, մոտավորապես երբ ուզում էի: Պատկերացրեք, որ հմայիչ մարդ էի համարվում: Դուք գիտեք, թե ինչ է նշանակում հմայքը. կարողանալ «այո» պատասխանել, առանց որևէ հստակ հարց դնելու: Այդպես էի ես այդ ժամանակ: Սա ձեզ զարմացնում է: Մի ժխտեք: Իմ այժմյան դեմքով ձեր ժպիտը շատ բնական է: Ավաղ, որոշ տարիքից հետո ամեն մարդ պատասխանատու է իր դեմքի համար: Իմը... Բայց դա ինչ կարևոր է: Փաստը կա, կանայք ինձ հմայիչ էին համարում, և ես դրանից օգտվում էի:

Սակայն իմ սիրային գործերին ոչ մի հաշիվ չէի խառնում, ես անկեղծ էի կամ գրեթե անկեղծ: Իմ հարաբերությունը կանանց հետ, ինչպես ասում են, բնական էր, ազատ, հեշտ: Դրա մեջ

 խորամանկություն չկար կամ՝ միայն այնքան, ինչ նրանք հար-

գանքի նշան էին համարում: Ինչպես սրբագործված արտահայտությամբ են ասում՝ «ես նրանց սիրում էի» խոսքը նշանակում էր, որ ոչ մեկին չէի սիրում: Կնատյացությունը ես միշտ գռեհիկ և հիմար եմ համարել, և իմ ճանաչած համարյա բոլոր կանանց ինձնից բարձր եմ դասել: Սակայն, հակառակ դրան, նրանց ավելի հաճախ օգտագործել եմ, քան ծառայել: Ինչպե՞ս հասկանալ այս բոլորը:

Անշուշտ, իսկական սերը բացառիկ երևույթ է, յուրաքանչյուր դարում մոտավորապես երկուսը կամ երեքն են լինում: Մնացած ժամանակ սիրուն փոխարինում է սնափառությունը կամ ձանձրույթը: Իսկ ես բոլոր դեպքերում կրոնամոլ պորտուգալուհին չէի: Ես չոր սիրտ չունեմ, հեռու դրանից, ընդհակառակը՝ խղճահարությամբ եմ լեցուն և հեշտ եմ լաց լինում: Միայն թե իմ հուզական պոռթկումները ուղղված են միշտ դեպի ինձ, խղճահարության իմ զգացումները ինձ են վերաբերում: Ի վերջո սխալ է, թե ես երբեք չեմ սիրել: Իմ կյանքում ես մի մեծ սեր ունեցա՛, և այդ սիրո առարկան միշտ ես եղա: Այս իմաստով, շատ երիտասարդ հասակի անխուսափելի դժվարություններից հետո, ես շատ շուտ կողմնորոշվեցի դեպի զգայնությունը, և միայն դա էր տիրում իմ սիրային կյանքին: Ես միշտ հաճույքի առարկաներ և հաղթանակներ էի փնտրում: Ինձ օգնում էր նաև իմ արտաքինը. բնությունը իմ նկատմամբ առատաձեռն էր եղել: Դրանով ես պակաս հպարտ չէի և դրանից շատ բավականություններ էի քաղում, որոնք, չեմ կարող ասել, հաճույքնե՞ր էին, թե արժանապատվության հաստատումը: Այժմ դուք պիտի ասեք, որ շարունակում եմ գլուխս գովել: Չեմ ժխտում և դրա համար ավելի պակաս հպարտ եմ, որովհետև, այս դեպքում, հպարտանում եմ ճիշտ բանով:

Բոլոր դեպքերում իմ զգայնությունը, եթե դրա մասին է խոսքը, այնքան իրական է, որ տասը րոպեանոց մի արկածախնդրության համար կարող էի ուրանալ հայր և մայր, նույնիսկ եթե հետագայում դառնորեն վշտանայի: Ի՞նչ եմ ասում. հատկապես տասը րոպեի արկածախնդրության կամ ավելի պակասի համար, եթե վստահ լինեի, որ այն հետևանք և շարունակություն չէր ունենալու: Անշուշտ, ես սկզբունքներ ունեի. օրինակ, ընկերներիս կանայք ինձ համար սուրբ էին: Պարզապես, ամենայն անկեղծությամբ մի քանի օր առաջ դադարում էի նրանց ամուսինների հետ բարեկամություն անել: Գուցե սա պետք չէ զգայնություն համարել: Զգայնությունը ինքը դատապարտելի չէ: Ներողամիտ լինենք և խոսենք թուլությունից՝ որպես սիրո մեջ ֆիզիկականից դուրս ուրիշ բան տեսնելու մի տեսակ բնածին անկարողություն: Թուլություն բառը բոլոր դեպքերում հարմար էր: Մոռանալու իմ կարողության հետ միացած, այս թուլությունը նպաստավոր էր իմ

ազատությանը: Մի տեսակ հեռացման և անդարմանալի անկախության հովեր առած՝ այն ինձ նոր հաջողությունների հնարավորություն էր ընձեռում: Որպեսզի ռոմանտիկ չլինեմ, ես մեծ չափով սնունդ էի տալիս վիպականին: Իմ բարեկամուհիները Բոնապարտի հետ հետևյալ ընդհանուր գիծը ունեին. ձգտում էին հաջողության հասնել այնտեղ, որտեղ բոլորը ձախողվել էին:

Այս առևտրում, հետևաբար, բացի իմ զգայնությունից, ես գոհացում էի տալիս նաև մի ուրիշ բանի, խաղի նկատմամբ իմ ունեցած սիրույն: Կանանց մեջ ես սիրում էի այն խաղընկերոջը, որը առնվազն անմեղ լինելու ճաշակը ուներ: Տեսնում եք, չեմ կարող տանել ձանձրույթը և կյանքում գնահատում եմ միայն զբոսանքները: Ամեն մի հասարակություն, նույնիսկ փայլունը, ինձ արագորեն ձանձրացնում էր, մինչդեռ ինձ դուր եկող կանանց հետ ես երբեք չէի ձանձրանում: Ես դժվարանում եմ խոստովանել. կարող էի Էյնշտեյնի հետ ունենալիք տասը զրույցը զանց առնել մի գեղեցիկ պարուհու հետ ունենալիք առաջին ժամադրության գնալու համար: Պարզ է, որ տասներորդ ժամադրությունից հետո պետք է վազեի Էյնշտեյնի մոտ կամ մի լուրջ գիրք կարդայի: Կարճ ասած, ես մեծ հարցերի մասին մտածել եմ միայն փոքր վայելքների արանքում: Եվ քանի անգամ, մայթի վրա տնկված, բարեկամների հետ կրքոտ մի վեճի գագաթնակետին կորցրել եմ իմ տրամաբանության կապը, որովհետև նույն պահին մի կործանող գեղեցկուհի է անցել փողոցով:

ՈՒրեմն, ես խաղում էի: Ես գիտեի, որ կանայք սիրում են, երբ դեպի նպատակը շատ արագ չես գնում: Նախ պետք է հետները զրուցել, շոյել, ինչպես ասում են նրանք: Որպես իրավաբան խոսելու դժվարություն չունեի, շարժուձևերս էլ նուրբ էին, բանակում սիրող-դերասան էի եղել: Ես հաճախ փոխում էի դերերը, բայց միշտ միևնույն պիեսի մասին էր խոսքը: Իմ զինանոցում կային անխոստովանելի մոգական խոսքեր, օրինակ՝ «Չգիտեմ ինչպես պատահեց այս... ամբողջ ուժով չէի ուզում հրապուրվել, ես հոգնել էի սիրուց, բայց հավատացեք», և այլն: Այս խոսքերը միշտ արդյունավետ էին լինում, թեև ծրագրի ամենահին համարներից էին: Կար նաև «խորհրդավոր երջանկությունը, որը ոչ մի կին երբեք ինձ չէր պարգևել, որը գուցե առանց հեռանկարի էր, վստահաբար առանց հեռանկարի (որովհետև ով կարող է ինքն իրեն երաշխավորել), բայց որ առանց նրան կյանքը վճռականապես անհնար է»: Ես կատարելագործել էի մանավանդ մի փոքր ելույթ, որը միշտ լավ էր ստացվում, և որը, վստահ եմ, կծափահարեք: Այս ելույթի հիմնական մասը հաստատումն էր՝ ցավալի և վճռական, որ ես ոչինչ էի, որ չարժեր ինձ հետ կապվել, թե իմ կյանքը արդեն վերջացել էր, և իսկական երջանկությունը ես երբեք չէի

վայելել, մի երջանկություն, որը գուցե ես նախընտրեի ուրիշ որևէ բանից, բայց, ահա, շատ ուշ էր արդեն: Ինչ վերաբերում էր այս վճռական ուշ լինելու պատճառներին, ես գաղտնի էի պահում, իմանալով, որ միշտ ավելի լավ է խորհրդավորության հետ անկողին մտնել: Ես հավատում էի իմ ասածին, ապրում էի իմ դերը: Զարմանալի չէ, ուրեմն, որ իմ ընկերուհիները նույնպես սկսում էին անկեղծորեն խաղալ: Իմ բարեկամներից ամենազգայունները փորձում էին հասկանալ ինձ, և այդ ճիգը նրանց մղում էր զգացական թախծի: Ուրիշները՝ գոհ, որ պահպանում էի խաղի օրենքները և այնքան նրբանկատ կերպով էի խոսում գործելուց առաջ, առանց սպասելու դեպի իրականությունն էին գնում: Այդ ժամանակ ես արդեն կրկնակի էի շահում, քանի որ, բացի նրանց նկատմամբ ունեցած ցանկությունից, ամեն անգամ ստուգելով իմ կարողությունների հզորությունը, բավարարում էի նաև ինքս ինձ՝ իմ հանդեպ ունեցած սիրույս:

Այսպես էր նույնիսկ նրանց նկատմամբ, ովքեր ինձ մի հաճույք էին պատճառում. ես աշխատում էի, այսուհանդերձ, կապս վերահաստատել նրանց հետ, թեկուզ երկար ընդմիջումներով, այն եզակի ցանկության օգնությամբ, որ բացակայությունն է տալիս, երբ դրան հետևում է նաև հանկարծ վերագտնված մեղսակցությունը, բայց նաև ստուգելու համար, որ մեր կապերը միշտ դիմանում էին, և որ ինձ էր պատկանում այդ կապերը նորից ամրապնդելու առանձնաշնորհը: Երբեմն հասնում էի մինչև այնտեղ, որ նրանց երդվել էի տալիս չպատկանել որևէ ուրիշ մարդու, որպեսզի իմ մտահոգությունները մեկընդմիշտ մեղմանան, թեև սիրտը և երևակայությունը ոչ մի մաս չունեին այս մտահոգությունների մեջ: Մի տեսակ հավակնություն էր հաստատվել մեջս: Հակառակ ակնհայտ փաստերին, դժվարությամբ էի պատկերացնում մի կին, որ իմս էր եղել, երբևէ կարողանար մի ուրիշի պատկանել: Բայց այդ երդումը, որ նրանք տալիս էին, ինձ ազատում էր, իսկ նրանց կապում: Այն պահից, որ նրանք ուրիշի չէին պատկանելու, կարող էի ուրեմն խզվել նրանցից, մի բան, որ, այլապես, ինձ համար գրեթե միշտ անհնար էր: Նրանց նկատմամբ ստուգումը մեկընդմիշտ արված էր, և իմ իշխանությունը, երկար ժամանակի համար, հաստատված: Հետաքրքրական է, չէ: Սակայն այդպես էր, սիրելի հայրենակից: Ոմանք բղավում են. «Սիրիր ինձ»: Ուրիշները. «Ինձ մի սիրիր»: Բայց մի ուրիշ դասակարգ էլ կա՝ վատթարագույնը և ամենադժբախտը, որ ասում է. «Ինձ մի սիրիր, բայց ինձ հավատարիմ եղիր»:

Միայն թե ստուգումը երբեք վերջնական չէ, պետք է վերսկսել յուրաքանչյուր էակի հետ: Նման բաները մարդու մեջ սովորույթ են դառնում: Շուտով խոսքերը լեզվիդ գալիս են առանց նույնիսկ

մտածելու, դառնում են ռեֆլեքս, ու մի օր էլ կանանց ունենում ես ավելի շուտ, քան կհասցնես իրապես ցանկանալ: Հավատացեք ինձ, ոմանց համար աշխարհի ամենադժվար բանը ունենալն է, երբ չեն ցանկանում:

Նման մի դեպք պատահեց ինձ հետ. կարիք չկա ձեզ ասելու, թե ով էր այդ կինը. միայն թե, առանց ինձ իսկապես հուզելու, նա ինձ գրավել էր իր կրավորական և անհագ տեսքով: Անկեղծորեն ասած՝ ամեն ինչ շատ միջակ ստացվեց, ինչպես կարելի էր սպասել: Բայց ես կոմպլեքսներ երբեք չէի ունենում և շատ արագ մոռանում էի կանանց, մանավանդ եթե նորից չէինք հանդիպում: Կարծում էի, որ ոչինչ չէր նկատել, և չէի պատկերացնում, որ այդ մասին կարող էր կարծիք ունենալ: Մանավանդ նրա կրավորական տեսքը իմ աչքին նրան աշխարհից կտրված լինելու խաբկանքն էր տվել: Սակայն մի քանի շաբաթ հետո իմացա, որ մի երրորդի հետ խոսել էր իմ պակասությունների մասին: Անմիջապես մի քիչ խաբված լինելու զգացումը ունեցա. ուրեմն նա իմ կարծածի չափ կրավորական չէր և կարող էր դատողություններ անել: Հետո ուսերս բարձրացրի և ձևացրի, թե ծիծաղում եմ: Իսկապես էլ ծիծաղեցի: Պարզ էր, որ այս դեպքը կարևորություն չուներ: Եթե կա մի բնագավառ, ուր գաղտնապահությունը օրենք պետք է լինի, սեռական հարաբերությունները չեն, իրենց բոլոր աննախատեսելի մասերով: Բայց՝ ոչ, նույնիսկ մենության մեջ ուզում ես իմանալ, թե ում համար էր նպաստավոր եղել այդ հարաբերությունը: Հակառակ ուսերս բարձրացնելուս, ինչ եղավ, իրապես, իմ վարքագիծը: Մի քիչ ժամանակ անց աշխատեցի նորից տեսնել այդ կնոջը, արեցի ամեն ինչ, որ անհրաժեշտ էր նրան հրապուրելու և իրապես ունենալու համար: Շատ դժվար չեղավ. նրանք նույնպես չեն սիրում, երբ խաղը պարտությունով է վերջանում: Այդ պահից, առանց իրապես նպատակադրվելու, սկսեցի ամեն ձևով նրան սպանել: Նրան լքում էի ու նորից վերցնում, ստիպում էի տրվել այնպիսի ժամանակներում և այնպիսի վայրերում, որոնք հարմար չէին, հետը վերաբերվում էի այնպիսի կոպտությամբ, որ վերջիվերջո կապվեցի հետը այնպես, ինչպես բանտապահը կապվում է իր բանտարկյալի հետ: Եվ այսպես մինչև այն օրը, երբ հաճույքի և բուռն սիրո մի պահի նա ստիպված բարձրաձայն պատիվ տվեց նրան, ով ստրկացնում էր իրեն: Այդ օրն իսկ սկսեցի հեռանալ նրանից և շուտով մոռացա նրան:

Ձեզ հետ պետք է համաձայնեմ, հակառակ ձեր քաղաքավարի լռությանը, որ այս արկածը այնքան էլ գեղեցիկ չէր: Սակայն մտածեցեք ձեր կյանքի մասին, սիրելի հայրենակից: Փորեք ձեր

հիշողությունը և գուցե այնտեղ գտնեք որևէ նման պատմություն, որը հետո կպատմեք ինձ: Գալով ինձ, երբ այս պատմությունը միտքս եկավ, ես նորից սկսեցի ծիծաղել: Բայց դա ուրիշ ծիծաղ էր, բավականին նման այն մեկին, որ լսել էի Արվեստների կամրջի վրա: Ես ավելի շուտ ծիծաղում էի իմ ճառերի և պաշտպանականների վրա, քան կանանց առաջ արտասանած իմ ճառերի: Կանանց, առնվազն, ես քիչ էի ստում: Իմ վերաբերմունքի մեջ ավելի շուտ խոսում էր բնազդը, առանց կեղծ ու գողունի խոսքերի: Սիրո ակտը, օրինակի համար, խոստովանություն է: Եսասիրությունը այնտեղ բարձրաձայն ինքնիրեն է հայտարարում, սնափառությունը իրեն ցույց է տալիս, և կամ ի հայտ է գալիս իսկական վեհանձնությունը: Ի վերջո, այս ցավալի պատմության մեջ, ավելի լավ, քան իմ մյուս գործերում, ես ավելի անկեղծ էի եղել, քան կարծում էի, ասել էի, թե ով եմ և ինչպես կարող եմ ապրել: Հակառակ երևույթներին, ուրեմն, ավելի արժանի մարդ էի հենց իմ անձնական կյանքում, և մանավանդ, երբ ինձ այդպիսին պահում էի, ինչպես պատմեցի ձեզ, իմ պրոֆեսիոնալ մեծ թռիչքների ժամանակ, երբ խոսում էի անմեղության և արդարության մասին: Առնվազն կենդանի էակների հետ հարաբերվելիս, չէի կարող սխալվել իմ բնավորության ճշմարտացիության մասին: Ոչ մի մարդ կեղծավոր չէ իր հաճույքների ժամանակ: Չեմ հիշում, արդյոք կարդացել եմ այս խոսքը, թե ինքս մտածեցի, սիրելի հայրենակից:

Երբ այսպես քննարկում էի որևէ կնոջից վերջնականապես բաժանվելու իմ դժվարությունը, մի դժվարություն, որ ինձ ստիպում էր ունենալ զուգահեռ կապեր, իմ սրտի փափկությանը չէի մեղադրում: Բայց դուք ինքնասպանություն եք գործել, և միթե կարևոր է՝ ձեզ հավատում են, թե ոչ. դուք այլևս չեք կարող նրանց՝ թեկուզ ակնթարթային զարմանքին և զղջմանը ներկա լինել, չեք կարող մասնակցել, ինչպես երազում է յուրաքանչյուր մարդ, սեփական հուղարկավորությանը: Կասկածելի չլինելու համար անհրաժեշտ է պարզապես դադարել գոյություն ունենալուց:

Հետո, ավելի լավ չէ՞ այդպես լինելը: Մենք շատ ենք տառապում նրանց անտարբերությունից: «Դրա համար դու թանկ կվճարես»,— ասում էր մի աղջիկ հորը, որ արգելել էր նրան ամուսնանալ մի շատ կոկիկ հագնված փեսացուի հետ: Աղջիկը ինքնասպան եղավ: Բայց հայրը բոլորովին ոչինչ չվճարեց: Նա սիրում էր ձկնորսությամբ զբաղվել: Երեք կիրակի հետո նա գետափ վերադարձավ, ինչպես ինքն էր ասում, մոռանալու համար: Հաշվարկը ճիշտ էր, նա մոռացավ: Ճիշտն ասած, հակառակը պիտի ինձ զարմացներ: Երբեմն կարծում են, թե մեռնում են կնոջը պատժելու

համար, մինչդեռ նրան ազատություն են պարգևում: Ավելի լավ է չտեսնել այդ, անկախ այն փաստից, թե կարող ես լսել քո արածի համար տրված բացատրությունները: Ինչ ինձ է վերաբերում, ես դրանք արդեն իսկ լսում եմ: «Նա ինքնասպան եղավ, որովհետև չկարողացավ տանել, որ...»: Ահ, սիրելի բարեկամ, մարդիկ որքան աղքատ երևակայություն ունեն որևէ բան հնարելու համար: Միշտ կարծում են, թե ինքնասպան են լինում մի որևէ պատճառի համար: Բայց կարելի է շատ լավ ինքնասպան լինել նաև երկու պատճառի համար: Ոչ, այդ մեկը նրանց գլուխը չի մտնում: Ուրեմն ինչու մահանալ կամավոր կերպով, զոհվել, որպեսզի մարդիկ բարձր կարծիք ունենան քո մասին: Երբ մահանաք, նրանք առիթից պիտի օգտվեն և ձեր այդ արարքին վերագրեն հիմար կամ գռեհիկ պատճառաբանություն: Մարտիրոսները, սիրելի բարեկամ, պետք է ընտրություն կատարեն մոռացվելու, ծաղրվելու կամ շահագործվելու միջև: Իսկ հասկացվելու մասին թող երբեք չմտածեն:

Հետևաբար դիմենք ուղիղ նպատակին. ես սիրում եմ ապրել, ահա իմ իսկական թուլությունը: Ես կյանքը այնքան եմ սիրում, որ անկարող եմ կյանքից դուրս որևէ բան երևակայել: Այդպիսի ագահությունը ինչ-որ պլեբեյական բան ունի իր մեջ, այդպես չէ: Ազնվականությունը ինքն իրեն չի կարող պատկերացնել առանց մի փոքր հեռանալու իրենից և իր կյանքից: Մահանում են, եթե անհարժեշտ է, կոտրվում են, բայց չեն ծռվում: Բայց ես ծռվում եմ, որովհետև շարունակում եմ ինքս ինձ սիրել: Այս բոլորը ձեզ պատմելուց հետո, ասացեք, ինչ եք կարծում, ինչ եմ զգում իմ նկատմամբ: Նողկանք: Ընդհակառակը, ավելի շուտ ուրիշների հանդեպ եմ զգում այն: Անշուշտ, իմ թուլությունները ճանաչում էի և ցավում դրանց համար: Բայց շարունակում էի մոռանալ դրանք արժանի համառությամբ: Ուրիշների դատը, ընդհակառակը, շարունակում էր իմ սրտում տեղ գրավել: Անշուշտ դա ձեզ զարմացնում է: Գուցե կարծում եք, որ դա տրամաբանական չէ: Բայց հարցը տրամաբանական լինելը չէ: Հարցը դեպի մյուս ափը սահելն է, և մանավանդ, այո, մանավանդ վճռից խուսափելն է: Ես չեմ խոսում պատժից խուսափելու մասին, որովհետև պատիժը առանց վճռի տանելի է: Այն ունի մի անուն, որ մեր անմեղությունը ապահովագրում է՝ դժբախտություն: Մեր խնդիրը, ընդհակառակը, գործը կարճելն է, դատված լինելուց խուսափելը, թույլ չտալը, որ դատավճիռը արտաբերվի:

Բայց դա այնքան էլ հեշտ չէ: Այսօր, դատավճռի համար, ինչպես շնության, մենք միշտ պատրաստ ենք: Այն տարբերությամբ, որ նվաղելուց վախենալու պատճառ չկա: Եթե կասկածում եք, ականջ դրեք օգոստոս ամսին սեղանի շուրջ ընթացող խո-

սակցություններին, ամառանոցային հյուրանոցներում, ուր մեր բարեսիրտ հայրենակիցները գալիս են ձանձրույթից բուժվելու: Եթե դեռևս շարունակում եք եզրակացության չգալ, կարդացեք մեր ժամանակի մեծ մարդկանց գործերը: Եվ կամ դիտեցեք ձեր սեփական ընտանիքը և որոշ բաներ կսովորեք: Սիրելի բարեկամ, պարզապես առիթ չտաք, որ նրանք մեզ դատեն, որքան էլ որ այն փոքր լինի: Ապա թե ոչ մեզ կտոր-կտոր կանեն: Մենք պարտավոր ենք պահպանել նույն զգուշավորությունը, ինչ գազան զսպողը: Եթե նա դժբախտություն ունենա վանդակ մտնելուց առաջ ածելիով իրեն կտրելու, ինչ խնջույք գազանների համար: Ես այս ամենը հասկացել եմ միանգամից, այն օրը, երբ կասկածեցի, թե այնքան էլ հիանալի չեմ: Այդ օրվանից չվստահող դարձա: Քանի՞ որ ինձնից մի քիչ արյուն էր կաթում՝ ինձ համար խուսափել չկար, նրանք ինձ հոշոտելու էին:

Իմ հարաբերությունները մարդկանց հետ երևութապես նույնն էին, բայց նրբորեն անհամաձայնեցված էին դառնում: Իմ բարեկամները չէին փոխվում: Նրանք միշտ, առիթը եկած ժամանակ, դրվատում էին այն հավասարակշռությունն ու ապահովությունը, որ գտնում էին ինձ մոտ: Բայց ես զգայուն էի ինձ լցնող անկանոնության, աններդաշնակության նկատմամբ միայն: Ես խոցելի և հանրության դատապարտմանը թողնված էի զգում: Իմ նմանները իմ աչքում դադարում էին լինել հարգելի ունկնդիրներ, ինչին սովոր էի: Այն շրջանակը, որի կենտրոնն էի, ջարդվում էր, և նրանք մի շարքի վրա էին շարվում, ինչպես դատարանում: Այն պահից, երբ հասկացա, որ իմ մեջ դատապարտելու բան կա, հասկացա նաև, որ նրանց մեջ անդիմադրելի ցանկություն կա դատապարտելու: Այո, նրանք այնտեղ էին, ինչպես առաջ, բայց ծիծաղում էին: Կամ ավելի շուտ ինձ թվում էր, որ նրանցից յուրաքանչյուրը, հանդիպելիս, ինձ դիտում էր թաքնված ծիծաղով: Այդ շրջանում ես նույնիսկ այն տպավորությունն ունեցա, որ ինձ սայթաքեցնում էին նաև նրանք: Իրապես, երկու կամ երեք անգամ, երբ հասարակական որևէ վայր էի մտնում, առանց պատճառի հակադրության էի հանդիպում, մի անգամ նույնիսկ մատնացույց արվեցի: Որպես Դեկարտին հետևող ֆրանսիացի, արագ ինքզինքս հավաքեցի և դեպքերը վերագրեցի մեր տրամաբանությունը հասու աստվածությանը, այսինքն՝ պատահականության: Սակայն, հակառակ դրան, իմ անվստահությունը մնաց:

Արթնացած ուշադրությամբ ինձ համար դժվար չէր իմանալ, որ ես թշնամիներ ունեի: Նախ՝ մասնագիտության մեջ, ապա՝ աշխարհիկ կյանքում: Ոմանց ես պարտավորեցրել էի: Ուրիշներին

պարտավոր էի պարտավորեցնել: Այս բոլորը, ի վերջո, օրինավոր էր, և ես առանց մեծ վշտի էի հայտնագործում: Ինձ համար ավելի դժվար և ավելի ցավալի էր, ընդհակառակը, ընդունել, որ ես թշնամիներ ունեմ այն մարդկանց շարքում, որոնց հազիվ էի ճանաչում և կամ բոլորովին չէի ճանաչում: Ես անկեղծաբար մտածել եմ, որ ապացույցը տվել եմ ձեզ, որ ովքեր ինձ չէին ճանաչում, չէին կարող ինձ չսիրել, եթե պատահեր, որ ծանոթանային հետս: Բայց ոչ, այդպես չէր: Ես թշնամանքների էի հանդիպում մանավանդ նրանց մեջ, ովքեր միայն հեռվից էին ինձ ճանաչում, և որոնց ես ծանոթ չէի: Անկասկած նրանց թվում էր, որ ես ապրում էի ազատ, առատության և ինքնամոռաց երջանկության մեջ. այդ չեն ներում: Հաջողության հովը, երբ որոշակի ձևով է ցուցադրվում, կատաղեցնում է էշին: Իմ կյանքը, մյուս կողմից, պայթելու չափ լեցուն էր, և ժամանակի պակասից ես շատ առաջարկներ մերժում էի: Հետո, նույն պատճառով մոռանում էի իմ մերժումները: Բայց այդ առաջարկները ինձ արվում էին այնպիսի մարդկանց կողմից, որոնց կյանքը լեցուն չէր, և որոնք, ճիշտ նույն պատճառով, հիշում էին իմ մերժումները:

Այդպես էլ, որպեսզի միայն մի օրինակ վերցնենք, ասեմ, որ կանայք, ի վերջո, ինձ վրա թանկ էին նստում: Այն ժամանակը, որ նրանց էի տրամադրում, տղամարդկանց տալ չէի կարողանում, և նրանք միշտ չէ, որ ներում էին ինձ: Ինչպես դուրս գալ այդ վիճակից: Քեզ չեն ների քո երջանկությունը և հաջողությունը, եթե չես համաձայնվում առատաձեռնորեն բաժանել նրանց հետ: Բայց երջանիկ լինելու համար ուրիշներով շատ զբաղվել պետք չէ: Այդ պահից ելքերը փակվում են: Երջանիկ և՝ դատապարտված, կամ թողություն ստացած և՝ թշվառ: Գալով ինձ, անարդարությունը ավելի մեծ էր, ես դատապարտվում էի իմ անցյալ երջանկության համար: Երկար ժամանակ ապրել էի այն խաբկանքի մեջ, որ ընդհանուրի հետ համաձայնության մեջ եմ, մինչդեռ անուշադիր և ժպտուն դատապարտությունները, նետերն ու ծաղրանքները բոլոր կողմերից ինձ վրա էին ուղղվում: Այն օրվանից, որ զգուշացվեցի, ավելի զգոն դարձա: Ես միաժամանակ բազմաթիվ վերքեր ստացա և միանգամից ուժերս կորցրի: Այդ ժամանակ իմ շուրջի ամբողջ աշխարհը սկսեց ծիծաղել:

Ահա մի բան, որ ոչ ոք (բացի նրանցից, ովքեր չեն ապրում, այսինքն՝ իմաստունները) չի կարող հանդուրժել: Պաշտպանվելու միակ ձևը չարությունն է: Մարդիկ շտապում են դատել, որպեսզի իրենք չենթարկվեն դրան: Ի՞նչ եք ուզում: Մարդու համար ամենաբնական գաղափարը, որը ծնվում է ակամա, իր բնավորության խորքից, անմեղ լինելու գաղափարն է: Այս տեսակետից մենք

բոլորս նման ենք այն ֆրանսիացի տղային, որը Բուխենվալդում համառում էր մի բողոքագիր տալ իրենց ելքն ու մուտքը արձանագրող գրասենյակային մի աշխատողի՝ նույնպես բանտարկյալ, որ ուզում էր նրա ազգանունը մտցնել աքսորյալների ցուցակում: Բողոքագիր: Արձանագրողն ու նրա բարեկամները ծիծաղում են. «Անօգուտ է, սիրելիս, այստեղ բողոքներ չեն ընդունում»: «Հարցն այն է, պարոն, որ, հասկանում եք,— ասում էր փոքրիկ ֆրանսիացին,— իմ պարագան բացառիկ է: Ես անմեղ եմ»:

Մենք բոլորս բացառիկներ ենք: Մենք բոլորս ուզում ենք կոչ անել ինչ-որ բանի: Յուրաքանչյուրը պնդում է անմեղ լինել ինչ-որ բանով, նույնիսկ՝ եթե դրա համար պետք է մեղադրել ամբողջ մարդկային ցեղը և երկինքը: Դուք միջակ ուրախություն կպատճառեք որևէ մեկին, եթե նրան հաճոյախոսություն անեք՝ նշելով այն ճիգերը, որոնց շնորհիվ նա դարձել է խելոք ու վեհանձն: Նա, ընդհակառակը, ուշագնաց կլինի, եթե իր բնական վեհանձնությամբ հիանաք: Փոխադարձաբար, եթե դուք մի հանցագործի ասեք, որ նրա սխալը ոչ նրա բնավորությունից և ոչ էլ բնությունից, այլ դժբախտ պարագաների բերումով է, նա ձեզ մեծապես երախտապարտ կլինի: Պաշտպանության ժամանակ նա նույնիսկ ընտրելու այդ պահը՝ լաց լինելու համար: Թեև ոչ մի արժանիք չկա ի ծնե պատվավոր, խելացի լինելու մեջ: Կարծես պատասխանատվությունը բնականից հանցագործ լինելու կամ պարագաների բերումով հանցագործ դառնալու մեջ է: Սիրտը չէր, որ ինձ գործել էր տալիս, երբ իմ բարեկամուհիներից մեկը հոգնում էր մեր կրքի Աուստերլիցին սպասելուց և խոսում էր բաժանվելու մասին: Անմիջապես ես էի, որ մի քայլ առաջ էի անում. պերճախոս կերպով տեղի էի տալիս: Ես նրանց մեջ սրտի փափկություն և թուլություն էի արթնացնում, ինքս զգալով միայն դրա երևութականը, պարզապես մի քիչ հուզվելով այդ մերժումից, ահաբեկվելով նրանց սիրո հնարավոր կորստից: Երբեմն ինձ թվում էր, որ իսկապես տառապում եմ. դա ճիշտ է: Բայց բավական էր, որ ապստամբուհին իսկապես մեկներ, ես նրան առանց ճիգի մոռանում էի, ինչպես մոռանում էի, երբ որոշած էր լինում, ընդհակառակը, վերադառնալ: Ոչ, դա սեր չէր, ոչ էլ վեհանձնություն, որ արթնանում էր մեջս, երբ լքվելու վտանգի տակ էի, այլ միայն սիրվելու և ստանալու ցանկությունը, այն, ինչ ինձ պարտական էին: Սիրվելուց անմիջապես հետո, երբ իմ ընկերուհին նորից էր մոռացվում, ես փայլում էի, ինձ հրաշալի էի զգում, համակրելի դառնում:

Նկատի ունեցեք, վերանվաճելուց անմիջապես հետո զգում էի դրա ծանրությունը: Իմ ջղագրգռության պահերին ես ինձ ասում էի, որ իդեալական լուծումը կլիներ ինձ հետաքրքրող կնոջ մահը: Այդ մահը մի կողմից վերջնականորեն կարգավորած կլիներ մեր

հարաբերությունը, իսկ մյուս կողմից նրան ազատած կլիներ դըժգոհությունից: Բայց հնարավոր չէ ցանկանալ ամբողջ աշխարհի մահը, ոչ էլ մոլորակը զրկել իր բնակչությունից, վայելելու համար այլևս անհանդուրժելի ազատությունը: Իմ զգայնությունը և մարդկանց նկատմամբ իմ սերը հակառակ էին դրան:

Միակ խորը զգացումը, որ ունենում էի այս ինտրիգների ժամանակ, շնորհակալության զգացումն էր, երբ ամեն ինչ լավ էր գնում, և երբ ինձ ոչ միայն թողնում էին խաղաղության մեջ, այլ նաև երբ պահպանում էի գնալու և գալու իմ ազատությունը. ավելի քան բարի և ուրախ էի լինում այն կնոջ մոտ, երբ, թողնելով մի ուրիշի անկողինը, նրա հետ էի լինում, կարծես բոլոր կանանց հանդեպ ունեցած պարտքս տալիս էի նրանցից մեկին: Ինչ էլ լիներ իմ զգացումների երևութական շփոթ վիճակը, իմ ստացած արդյունքը պարզ էր. ես իմ բոլոր սերերին պահում էի իմ շուրջը, որպեսզի դրանցից օգտվեի, երբ ցանկանայի:Ուրեմն, իմ խոստովանությամբ իսկ, կարող էի ապրել այն պայմանով, եթե ամբողջ երկրի բոլոր էակները կամ հնարավոր ամենամեծ թիվը դարձած լինեին դեպի ինձ, հավերժորեն դատարկ լինեին, զրկված անկախ կյանքից, պատրաստ ուզածս պահին պատասխանելու իմ կանչին, այսինքն՝ լինեին անպտղության դատապարտված մինչև այն օրը, երբ պիտի բարեհաճեի նրանց նպաստավորել իմ լույսով: Կարճ ասած, որպեսզի ես երջանիկ ապրեի, իմ ընտրած էակները պետք է բոլորովին չապրեին: Նրանք իրենց կյանքը ժամանակ առ ժամանակ պետք է ստանային միայն իմ հաճույքից:

Ահ, հավատացեք, այս բոլորը ձեզ պատմելուց ես ոչ մի գոհունակություն չեմ զգում: Երբ մտածում եմ այն շրջանի մասին, երբ ամեն ինչ պահանջում էի առանց ինքս ոչինչ վճարելու, կամ այնքան էակներ զորակոչի էի ենթարկում ինձ ծառայելու համար, կամ նրանց բոլորին ինչ-որ ձևով դնում էի սառնարանի մեջ, որպեսզի ցանկացած օրս նրանց ունենայի ձեռքիս տակ, ըստ իմ հարմարության, չգիտեմ ինչպես անվանել այս հետաքրքրական զգացումը, որ տիրում էր ինձ: Ամոթ չէ՞ արդյոք: Ասացեք ինձ, սիրելի հայրենակից, ամոթը մի քիչ չի՞ այրում մարդուն: Գուցե հենց ամոթն է կամ ծիծաղելի այն զգացումներից մեկը, որոնք պատվի հետ են առնչվում: Բոլոր դեպքերում ինձ թվում է, որ այդ զգացումը ինձանից չի հեռացել այդ արկածից հետո, որը գտել եմ իմ հիշողության կենտրոնում, և որը ոչ մի կերպ այլևս չեմ կարող չպատմել: Հակառակ իմ խոստումներին և հնարավի դարձնելու ճիգերին, հույս ունեմ, որ դուք այն պիտի գնահատեք:

Տեսեք, անձրևը դադարել է: Բարի եղեք ինձ ուղեկցել մինչև տուն: Ես հոգնել եմ և, տարօրինակ բան, ոչ թե խոսելուց, այլ միայն այն մտքից, թե դեռևս ինչ պետք է անեմ: Դե լավ, մի քանի բառը բավական կլինի վերագծելու համար իմ հիմնական հայտնագործումը: Ավելին ինչո՞ւ խոսել այդ մասին: Որպեսզի արձանը մեր առջև կանգնի բոլորովին մերկ, բոլոր գեղեցիկ ճառերը պետք է կորչեն: Ահավասիկ. նոյեմբերյան մի գիշեր, երկու կամ երեք տարի առաջ այն գիշերվանից, երբ ինձ թվաց, թե ետևիցս ծիծաղի ձայն եմ լսում, ձախ ափն էի անցնում, դեպի տուն, Թագավորական կամրջով: Կես գիշերից հետո ժամը մեկն էր, մեղմ անձրև էր տեղում, ավելի շուտ մի մառախուղ, որ տարտղնում էր սակավ անցորդներին: Մի բարեկամուհու մոտից էի գալիս, որը վստահաբար արդեն իսկ քնած կլիներ: Ուրախ էի ոտքով գնալուս համար, մի փոքր ընդարմացած, հանգստացած մարմինս ողողված էր մի քաղցր արյունով, ինչպես մաղվող անձրևը: Կամրջի վրա անցնում էի ճաղերին հպված մի մարմնաձևի կողքով, որը թվում էր, թե գետն էր դիտում: Ավելի մոտենալով, նկատեցի սևեր հագած մի նրբակազմ երիտասարդ կնոջ: Մութ մազերի և վերարկուի օձիքի արանքից երևում էր միայն ծոծրակը, թարմ ու թրջված, որը հուզեց ինձ: Մի փոքր տատանվելուց հետո ճամփաս շարունակեցի: Կամրջի ծայրին թեքվեցի դեպի քարափը՝ Սեն-Միշելի ուղղությամբ, որտեղ ապրում էի: Մոտավորապես հիսուն մետր արդեն անցել էի, երբ լսեցի ջրի մեջ ընկնող մարմնի աղմուկը, որ, հակառակ հեռավորությանը, գիշերային լռության մեջ ինձ ահավոր թվաց: Ես միանգամից կանգնեցի, բայց ետ չդարձա: Համարյա անմիջապես մի քանի անգամ կրկնվող ճիչ լսեցի, որը նույնպես գետով իջնում էր, և որը միանգամից մարեց: Հաջորդող լռությունը հանկարծ սառած գիշերվա մեջ ինձ անվերջ թվաց: Ես ուզեցի վազել, բայց տեղիցս չէի շարժվում: Դողում էի, հավանաբար ցրտից և բուռն հուզմունքից: Ես ինձ ասում էի, որ պետք էր շտապել և զգում էի անդիմադրելի մի թուլություն, որ տիրում էր մարմնիս: Մոռացել եմ, թե ինչ եմ մտածել այդ ժամանակ: «Շատ ուշ է, շատ հեռու է...» և կամ սրա նման բաներ: Միշտ անշարժ շարունակում էի լսել: Հետո մանր քայլերով հեռացա: Եղածի մասին ոչ ոքի չհայտնեցի:

Բայց մենք արդեն հասել ենք. ահա իմ տունը, իմ ապաստարանը: Վաղը: Այո, ինչպես ցանկանում եք: Ես սիրով ձեզ կտանեմ Մարկենի կղզին, դուք կտեսնեք Զույդերզեն: Ժամադրվենք ժամը տասնմեկին՝ «Մեքսիկո-սիտիում»: Ինչպես: Այդ կինը: Ա՜հ, ճիշտն ասած, չգիտեմ: Չգիտեմ: Ոչ հաջորդ օրը, ոչ էլ հաջորդող օրերին, թերթերը չկարդացի:

* * *

Տիկնիկների գյուղ է կարծես, այդպես չէ: Շատ նկարչագեղ է: Բայց ես ձեզ այստեղ չեմ առաջնորդել տեսարանի նկարչագեղության համար, սիրելի բարեկամ: Ամեն մարդ կարող է ձեզ հիացնել գյուղական մազահարդարումներով, փայտե կոշիկներով կամ զարդանկարված տներով ու մոմաներկի բույրի մեջ ծխող ձկնորսներով: Ես այն բացառիկներից եմ, ընդհակառակը, որ կարող է ձեզ ցույց տալ ինչ իսկապես կարևոր է այստեղ:

Հասնում ենք թմբին: Որպեսզի հնարավորին չափ հեռու լինենք այս շատ վայելուչ տներից, պետք է հետևենք թմբին: Նստենք, խնդրում եմ: Ի՞նչ եք մտածում այդ մասին: Ամենամռայլ բնանկարներից ամենագեղեցիկը չէ սա: Նայեցեք մեր ձախ կողմը, այս մոխրակույտին, որ այստեղ ավազակույտ են կոչում, աջ կողմի գորշ թմբին, մեր ոտքերի տակ փռվող կապտավուն ափին և մեր առջևի լվացքաջրի գույնի ծովին, ընդարձակ երկնքին, ուր անդրադառնում են դժգույն ջրերը: Մի իսկական խոնավ դժոխք: Ամեն ինչ հորիզոնական է, ոչ մի սլաք, տարածությունը անգույն է, կյանքը՝ մեռած: Արդյոք դա տիեզերական ջնջում չէ, աչքերին մատչելի ոչնչությունը: Մարդիկ չկան, հատկապես մարդիկ չկան: Միայն դուք և ես ենք մոլորակի վրա, որը վերջապես անապատացել է: Երկինքը կենդանի է: Դուք իրավացի եք, սիրելի բարեկամ: Այն թանձրանում է, հետո պատառոտվում, օդի սանդուղքներ բացում, ամպի դռներ փակում: Աղավնիներ են: Չեք նկատել, որ Հոլանդիայի երկինքը լեցուն է միլիոնավոր անտեսանելի աղավնիներով, որովհետև շատ բարձրում են մնում, միևնույն շարժումով թափահարելով բարձրանում կամ իջնում են, երկնային տարածությունը լցնելով գորշագույն և հաստ փետուրներով, որոնք քամին տարուբերում է: Աղավնիները սպասում են: Վերևում, ամբողջ տարին, նրանք սպասում են: Նրանք պտտվում են երկրի վրա, նայում են ցած, ուզենալով իջնել: Բայց իջնելու ոչ մի տեղ չկա. բացի ծովից ու ջրանցքներից, ցուցանակներով պատած տանիքներից՝ և ոչ մի տեղ, ուր հնարավոր լիներ հանգստանալ:

Չեք հասկանում, թե ինչ եմ ուզում ասել: Խոստովանում եմ, որ հոգնած եմ: Խոսքիս թելը կորցնում եմ և այլևս չունեմ մտածողության այն հստակությունը, որը բարեկամներս ուրախությամբ գովում էին: Ասում եմ՝ բարեկամներս, պարզապես սկզբունքի համար: Ես այլևս բարեկամներ չունեմ, այժմ ես միայն մեղսակիցներ ունեմ: Կարծես պակասող բարեկամներիս տեղը բռնելու համար՝ մեղսակիցներիս թիվը բազմացել է, ամբողջ մարդկային ցեղն է դարձել, և մարդկային ցեղում առաջին հերթին՝ դուք: Ով մոտս

է, միշտ առաջինն է: Որտեղից գիտեմ, թե բարեկամ չունեմ: Շատ պարզ է: Ես այդ հայտնագործել եմ այն օրը, երբ մտածեցի ինքնասպան լինել, նրանց խաղի բերելու համար, ինչ-որ ձևով նրանց պատժելու համար: Բայց ո՞ւմ պատժել: Մի քանիսը պիտի անակնկալի գային, ոչ ոք պատժված չէր զգալու: Ես հասկացա, որ բարեկամներ չունեի: Թեև, եթե նույնիսկ ունենայի, ոչ մի բան փոխված չէր լինելու: Եթե կարողանայի ինքնասպան լինել և հետո տեսնել նրանց գլուխները, այդ ժամանակ խաղը կարժենար: Բայց հողը մութ է, սիրելի բարեկամ, փայտը՝ պինդ, պատանքը հաստ է և անթափանց: Հոգու աչքերը կան, այո, անկասկած, եթե որևէ հոգի կա և այն էլ՝ եթե աչքեր ունի: Բայց ահա վստահ չես, երբեք վստահ լինել չես կարող: Եթե ոչ, մի ելք կլիներ, հնարավոր կլիներ լուրջ ընդունել: Մարդիկ համոզվում են ձեր իրավացիության, ձեր անկեղծության և ձեր վշտերի լրջությանը միայն ձեր մահով: Քանի դեռ ապրում եք, ձեր պարագան կասկածելի է, դուք իրավունք ունեք հուսալ միայն նրանց կասկածամտությունը: Ուրեմն, եթե թեկուզ մի երաշխիք լիներ, որ կարող եք վայելել ներկայացումը, արժեր նրանց ապացուցել այն, ինչին նրանք հավատալ չեն ուզում, և նրանց զարմացնել: Բայց այս խաբեբաները թողություն են խնդրում, այսինքն՝ անպատասխանատվություն. նրանք առանց ամոթի բնությունից ու շրջապատից արդարացումներ են պահանջում, նույնիսկ՝ եթե դրանք չհակադրվեն: Կարևորը այն է, որ անմեղ լինեն, որ նրանց առաքինությունը, ծնունդի պատճառով, չի կարող կասկածի տակ դրվել, և որ իրենց սխալները, անցողիկ դժբախտությունից ծնված, միշտ ժամանակավոր լինեն: Ես ձեզ ասում եմ՝ խոսքը դատավճռից խուսափելու մասին է: Քանի որ դժվար է այդ անել և նույնքան նուրբ գործ է իր բնավորությունով հիացնելն ու ներողամտության հասնելը, նրանք ձգտում են հարըստության: Ինչո՞ւ: Մի՞թե պարզ չէ: Ուժի համար: Մասնավորապես այն բանի համար, որ հարստությունը պաշտպանում է անմիջական դատապարտությունից, ձեզ անջատում է մետրոյի ամբոխից, դնում նիկելապատ մի ավտոմեքենայի մեջ, ձեզ բաժանում է պարսպապատ մեծ այգիներով, փափուկ վագոնների լյուքս խցիկներով: Հարստությունը, սիրելի բարեկամ, դեռևս արդարացումը չէ, այլ դատի հետաձգումը, բայց բոլոր դեպքերում արժե ունենալ...

Ձեր բարեկամներին մի հավատացեք, մանավանդ, երբ նրանք ուզում են, որ իրենց հետ անկեղծ լինեք: Նրանք հույս ունեն միայն, որ դուք պիտի քաջալերեք իրենց իսկ մասին ունեցած լավ կարծիքը, նրանց տալով հավելյալ վստահություն՝ ձեր անկեղծության խոստովանությամբ: Ինչպե՞ս կարող է անկեղծությունը բարեկամության պայման լինել: Ճշմարտասիրությունը մի կիրք է, որ ոչինչ

չի խնայում, և որին ոչինչ չի կարող դիմադրել: Դա ախտ է, երբեմն հանգստավետություն կամ եսասիրություն: Եթե, ուրեմն, դուք այդ վիճակում եք, մի տատանվեք. խոստացեք ճշմարիտ լինել և ստեք, որքան կարող եք: Դուք պատասխանած կլինեք նրանց խորունկ ցանկությանը և կրկնակիորեն ապացուցած ձեր համակրանքը:

Անկեղծության մասին խոսելիս պետք է ընդունեք, որ մենք բացառիկ դեպքում ենք միայն վստահում մեզնից լավ մարդկանց: Ավելի շուտ փախչում ենք նրանց ընկերությունից: Հաճախ, ընդհակառակը, մենք խոստովանում ենք նրանց, ովքեր մեզ նման են և ովքեր բաժանում են մեր թուլությունները: ՈՒրեմն՝ չենք ուզում մենք մեզ սրբագրել, ոչ էլ բարելավել. անհրաժեշտ կլիներ, որ մենք դատվեինք մեր թերություններով հանդերձ: Մենք ցանկանում ենք միայն, որ մեզ խղճան և քաջալերեն մեր ճանապարհին: Կարճ ասած մենք ցանկանում ենք հանցավոր չլինել և միաժամանակ մաքրվելու ճիգ չանել: Ոչ բավարար չափով ցինիզմ ունենք, ոչ էլ բավականաչափ առաքինություն: Մենք ոչ չարի ուժը ունենք, ոչ էլ բարու ուժը: Ճանաչո՞ւմ եք Դանտեին: Իսկապե՞ս: Սատանան տանի: ՈՒրեմն դուք գիտեք, որ Դանտեն ընդունում է չեզոք հրեշտակների գոյությունը Աստծո և սատանայի վեճի մեջ: Եվ նրանց տեղավորում է մի նեղ եզրաշերտում, դժոխքի մի տեսակ միջանցքում: Մենք միջանցքում ենք, սիրելի բարեկամ:

Համբերությո՞ւն: Դուք անշուշտ իրավացի եք: Մեզ անշուշտ համբերություն է պետք Վերջին Դատաստանին սպասելու համար: Բայց, ահա, մենք շտապում ենք: Այնքան ենք շտապում, որ ստիպված էի խոստովանեցնող-դատավոր դառնալ: Ստիպված էի կարգավորել իմ հայտնագործությունները և նույն ժամանակ գործերս համաձայնեցնել ժամանակակիցներիս ժպիտների հետ: Այն գիշերվանից, երբ կանչվեցի, որովհետև իսկապես կանչվեցի, պարտավոր էի պատասխանել կամ առնվազն պատասխանը փնտրել: Հեշտ չէր, ես երկար մոլորվեցի: Նախ անհրաժեշտ եղավ, որ տևական ծիծաղը և ծիծաղողները ինձ սովորեցնեին ավելի հստակ տեսնել ինքս ինձ, հայտնագործել ի վերջո, որ ես հակասություններով լեցուն էի: Մի ժպտացեք, այս ճշմարտությունը այնքան հասարակ չէ, որքան թվում է. հասարակ, տարրական են կոչվում այն ճշմարտությունները, որոնք բոլորից հետո են հայտնագործվում:

Եվ այսպես, ինքս իմ վրա կատարած երկար ուսումնասիրությունից հետո գտա մարդ էակի խորապես երկակի բնույթը: Այդ ժամանակ, իմ հիշողության մեջ խորանալով, ես հասկացա, որ համեստությունը օգնում է ինձ փայլել, խոնարհությունը՝ հաղթել և առաքինությունը՝ ճնշել: Խաղաղ միջոցներով ես պատերազմում

էի և, ի վերջո, չշահագրգռվելու միջոցով ստանում էի ցանկացածս: Օրինակ, երբեք չէի բողոքում, երբ բարեկամներս մոռանում էին իմ ծննդյան տարեդարձը. նրանք նույնիսկ զարմանում էին, հիացումի ինչ-որ չափով, այդ հարցի նկատմամբ իմ գաղտնապահության համար: Բայց անշահախնդրությունս ավելի գաղտնի պատճառներ ուներ. ես ուզում էի մոռացված լինել, որպեսզի կարողանայի ինքս ինձ բողոքել: Տարեդարձիս նշանավոր օրվանից օրեր առաջ, որը ես շատ լավ հիշում էի, դարանակալ սպասում էի, որ ոչ մի բան բաց չթողնեմ, որը կարող լիներ հուշադրություն գրավել և արթնացնել այն մարդկանց հիշողությունը, որի թուլացմանը այնպես հետևում էի (չէ՞ որ մի օր հասա այն աստիճանի, որ մի բարեկամի օրացույցը կեղծեցի): Երբ իմ մենակությունը ամբողջովին ապացուցված էր լինում, ես կարող էի ինձ ենթարկել ինքնախղճահարման առնական հաճույքին:

Իմ բոլոր առաքինությունները ունեին առավել քիչ ազդեցիկ հակառակ կողմ, թեև, ինչ-որ իմաստով, իմ թերությունները իմ օգտին էին: Իմ կյանքի թերի կողմերը պահելու պարտավորվածությունս ինձ տալիս էր, օրինակ, սառը տեսք, որ շփոթում էին առաքինության հետ, իմ անտարբերությունը ինձ սիրել էր տալիս, իմ եսասիրությունը իր գագաթնակետին էր հասնում իմ առատաձեռնության մեջ: Կանգ եմ առնում այդտեղ. շատ զուգահեռականներ անցկացնելը կփչացներ իմ անձի ցուցադրումը: Բայց ինչ, ես ինձ կարծր էի ցույց տալիս, մինչդեռ երբեք չեմ կարողացել մերժել ոչ մի բաժակ, ոչ էլ մի կնոջ: Ինձ համարում էի ակտիվ, կորովի, իմ թագավորությունն անկողինն էր: Ես իմ հավատարմությունը բղավում էի, և կարծես չկա իմ սիրած էակներից որևէ մեկը, որին ի վերջո դավաճանած չլինեմ: Անշուշտ, իմ դավաճանությունները իմ հավատարմությանը չէին խանգարում, կուտակված մի հսկա գործ ես ներողամտությամբ գետին էի տապալում, երբեք չեմ դադարել օգնել իմ հարևանին, թեև դա անում էի իմ հաճույքի համար: Բայց որքան շատ էի նման փաստեր կրկնում ինքս ինձ, միայն մակերեսային մխիթարանքներ էի ստանում: Որոշ առավոտներ իմ դեմ եղած մեղադրանքը ուսումնասիրում էի մինչև վերջ և հասնում այն եզրակացության, թե ամենից շատ ես նշանավոր էի իմ արհամարհանքով: Նույնիսկ նրանք, որոնց ես ամենից շատ էի օգնում, հաճախ ամենից շատ արհամարհվածներն էին: Քաղաքավարությամբ, հուզմունքով լեցուն համբերաշխությամբ ես ամեն օր թքում էի բոլոր կույրերի երեսին:

Անկեղծորեն, սրա համար կա՞ որևէ արդարացում: Կա, բայց այնքան խեղճ, որ չեմ կարող մտածել այն արժեքավորելու մասին:

Բոլոր դեպքերում, ահա այն. ես երբեք չեմ կարողացել խորապես հավատալ, որ մարդկային գործերը լուրջ գործեր լինեն: Ո՞ւր էր լրջությունը, չգիտեի,,իմ բոլոր տեսածները ինձ թվում էին պարզապես զվարճալի կամ ձանձրալի խաղ: Անշուշտ կան ճիգեր և գաղափարներ, որոնք երբեք չեմ հասկացել: Ես միշտ զարմացած և մի քիչ էլ կասկածոտ նայում էի այն տարօրինակ էակներին, որոնք մեռնում էին փողի համար և հուսահատվում մի «պաշտոնի» կորստով և կամ մեծ հովերով զոհաբերվում էին իրենց ընտանիքի բարգավաճման համար: Ես ավելի լավ հասկանում էի այն բարեկամին, որ որոշել էր ծխելը թողնել, և կամքի ուժով հաջողվել էր: Մի առավոտ նա բացեց օրվա թերթը և կարդաց, որ առաջին ջերմամիջուկային ռումբը արդեն պայթեցվել է, տեղեկություններ ստացավ դրա հրաշալի արդյունքների մասին և, առանց ուշանալու, ծխախոտի մի խանութ մտավ:

Անկասկած, երբեմն ցույց էի տալիս, որ կյանքին լուրջ եմ վերաբերվում: Բայց շատ արագ երևում էր լրջության ունայնությունը, և ես պարզապես շարունակում էի իմ դերը խաղալ, որքան հնարավոր է լավ: Ես ինձ ցույց էի տալիս ազդեցիկ, խելոք, առաքինի, լավ քաղաքացի, վիրավորված, ներողամիտ, պատասխանատու, լրջախոհ... Կարճ ասած, ես կանգ եմ առնում, դուք արդեն հասկացեք, որ ես հոլանդացիների նման էի, որոնք այստեղ են առանց այստեղ լինելու. ես բացակա էի այն պահին, երբ բոլորից շատ տեղ էի գրավում: Ես իսկապես լուրջ և խանդավառ եմ եղել միայն այն ժամանակ, երբ սպորտով էի զբաղվում, և բանակում, երբ խաղում էի այն պիեսներում, որոնք բեմադրում էինք մեր հաճույքի համար: Երկու դեպքում էլ կար խաղի օրենքը, որ լուրջ չէր, և հաճելի էր դրանք իրենց եղածի պես ընդունելը: Նույնիսկ այժմ կիրակնօրյա մրցումները, պայթելու աստիճան լեցուն մարզադաշտը և թատրոնը, որը ես սիրել եմ հավասարը չունեցող կրքով, աշխարհի միակ վայրերն են, ուր ես ինձ անմեղ եմ զգում:

Բայց ո՞վ պիտի ընդունի, որ նման վերաբերմունքը օրինավոր է, երբ խոսքը վերաբերում է սիրո, մահվան և թշվառների օրավարձին: Սակայն ինչ անել: Իզոլդայի սերը ես պատկերացնում էի միայն վեպերում և կամ բեմի վրա: Մահամերձները երբեմն ինձ թվում էին իրենց դերերի մեջ համոզվածներ: Իմ աղքատ հաճախորդների պատասխանները այնքան նման էին լինում իրար, որ դժվար էր անկեղծ համարել: Այդ օրվանից, ապրելով մարդկանց մեջ՝ առանց բաժանելու նրանց շահերը, չէի կարողանում հավատալ իմ ստանձնած պարտավորություններին: Ես բավականին քաղաքավարի և բավականին բարի էի, ուզում էի անել այն, ինչ սպասում էին ինձնից, այդպես էի իմ մասնագիտության մեջ, իմ ընտանիքում կամ քաղաքացու իմ

կյանքում, բայց ամեն անգամ, հանդիպելով մի տեսակ անտարբերության, ամեն ինչ փչանում էր, ոչնչի հավասարվում: Իմ ամբողջ կյանքը ես ապրեցի կրկնակի խորհրդանիշի տակ, իմ ամենալուրջ արարքները կատարելիս ես շատ սառն էի: Ի հավելումն իմ հիմարություններին, ի վերջո երկվությունն էր, որ ես չկարողացա ներել ինքս ինձ, որ ինձ ավելի բուռն կերպով ոտքի հանեց դատապարտվածության դեմ, որը զգում էի իմ մեջ և իմ շուրջը, և որը ինձ ստիպեց մի ելք փնտրել:

Իմ կյանքը, երևութապես, որոշ ժամանակ շարունակվեց այնպես, կարծես ոչինչ չէր փոխվել: Եվ անիվների վրա էի և արագ առաջ էի շարժվում: Գովասանքները հատուկ կերպով կարծես կրկնապատկվում էին շուրջս: Եվ հենց այդտեղից եկավ չարիքը: Դուք հիշո՞ւմ եք. «Վայ ձեզ, երբ բոլոր մարդիկ ձեր մասին լավ են խոսում»: Սրանք ոսկի խոսքեր են: Վայ ինձ. մեքենան ուրեմն սկսեց քմահաճույքներ անել, անբացատրելի կանգ առնել:

Այդ պահին էր, որ մահվան գաղափարը մուտք գործեց իմ առօրյա կյանքում: Ես չափում էի ինձ իմ վախճանից բաժանող տարիները: Իմ տարիքի մարդկանց օրինակներ էի փնտրում, որոնք արդեն մեռած էին: Եվ ես տակնուվրա էի լինում այն գաղափարից, որ իմ գործը վերջացնելու ժամանակ չեմ ունենա: Ինչ գործ: Չգիտեի: Անկեղծորեն ասած, այն, ինչ անում էի, արժեր շարունակել: Բայց հարցը այդ չէր: Ծիծաղելի մի վախ հետապընդում էր ինձ, իսկապես, չի կարելի մեռնել առանց սեփական բոլոր ստախոսությունները խոստովանելու: Ոչ Աստծուն, ոչ էլ նրա ներկայացուցիչներից որևէ մեկին. ես դրանից բարձր էի, հուսով եմ, որ հավատում եք դրան: Ոչ, խոսքը մարդկանց խոստովանելու մասին էր, մի բարեկամի կամ սիրած մի կնոջ, օրինակ: Հակառակ դեպքում, եթե կյանքում մի սուտ իսկ պահված լիներ, մահը այն վերջնական կդարձներ: Այլևս ոչ ոք չէր իմանա ճշմարտությունը այս հարցում, քանի որ միակ մարդը, որ այն գիտեր, հենց ինքը, մահացածն էր, որ հետը գերեզման էր տարել: Ճշմարտության այս բացարձակ մարդասպանը ինձ դող էր պատճառում: Այսօր, փակագծերի մեջ պետք է ասեմ, նման միտքը ինձ ավելի շուտ հաճույք պիտի պատճառեր: Միակ գաղափարը, օրինակի համար, որ ես միակ իմացողն եմ, այն, ինչ ամեն մարդ փնտրում է, որ ինձ մոտ գտնվում է մի առարկա, որը ապարդյուն կերպով վազել է տվել բազմաթիվ ոստիկանների, պարզապես հրաշալի է: Բայց թողնենք այդ: Այդ ժամանակ ես դեռ հասույթը չէի գանձել և դրա համար տառապում էի:

Անկասկած ես ինձ թափ էի տալիս: Ի՞նչ կարևորություն ուներ մի մարդու սուտը սերունդների պատմության մեջ և ինչ հավակնություն ցանկանալ ճշմարտության լույսի մեջ բերել դարերի օվկիանոսում

կորած մի թշվառ խաբեություն, ինչպես ավազի հատիկը ծովում: Ես ինձ ասում էի նաև, որ մարմնի մահը, եթե դատելու լինեի նրանցով, ինչ տեսել էի, ինքն իր մեջ բավարար պատիժ էր ծածկելու համար որևէ հանցանք: Մարդը իր փրկությունը գտնում էր (այսինքն՝ վերջնականորեն ջնջվելու իրավունքը) մահվան քրտինքների մեջ: Բայց, հակառակ դրան՝ չարիքը մեծանում էր, մահը հավատարիմ կանգնում էր իմ մահճի գլխավերևում, ես քնում և արթնանում էի նրա հետ, և ծանոթներիս գովասանքներն ու հաճոյախոսությունները գնալով անտանելի էին դառնում: Ինձ թվում էր, որ սուտը դրանց հետ աճում էր այնքան անչափելիորեն, որ այլևս երբեք չէի կարող ինձ ուղղել:

Հասավ մի օր, որ այլևս չդիմացա: Իմ առաջին հակազդեցությունը անկանոն էր: Քանի որ ստախոս էի, պետք է այն արտահայտեի և իմ էության երկակիությունը նետեի բոլոր այդ ապուշների երեսին, նախքան այդ ճշմարտության նրանց հայտնագործելը: Քանի որ ճշմարտությունը ասպարեզ էր կանչում, ես պետք է մարտահրավերը ընդունեի: Ծիծաղը կանխելու համար ես ինձ նետում էի ընդհանուր ծաղրանքի գիրկը: Ի վերջո խոսքը դարձյալ գնում էր դատապարտվածությունից խուսափելու մասին: Ես ուզում էի, որ ծիծաղողները իմ կողմը լինեին կամ, առնվազն, ես լինեի նրանց կողմը: Ես երազում էի փողոցում կույրերին հրմշտկել, և այդ միտքը ինձ պատճառում էր անխոստովանելի չարախնդություն, և դրանով էլ հայտնագործում էի, թե ինչ աստիճան իմ հոգու մի մասը արհմարհում էր նրանց: Ծրագրում էի պայթեցնել հաշմանդամների փոքրիկ ավտոմեքենաների դողերը, շինարարության վրա աշխատող բանվորներին բղավել «կեղտոտ աղքատներ», մետրոյում ապտակել ծծկեր երեխաներին: Այս բոլորի մասին երազում էի, սակայն ոչինչ չէի անում կամ, եթե նույնիսկ դրա նման մի բան էլ անում էի, անմիջապես մոռանում էի: Բոլոր դեպքերում նույնիսկ «արդարություն» բառը ինձ տարօրինակ կատաղության մեջ էր գցում: Ես շարունակում էի այն ստիպված օգտագործել իմ պաշտոնական ճառերում: Բայց դրանից վրեժ էի լուծում՝ հանրության առաջ անիծելով մարդկության գաղափարը. ես հայտարարում էի այն հրամանագրի հռչակման անհրաժեշտությունը, որ վերացներ ճնշվածների կողմից ազնիվ մարդկանց վրա գործադրված ճնշումը: Մի օր, երբ ես խեցգետին էի ուտում ճաշարանի պատշգամբում, մի մուրացկան սկսեց անհանգստացնել ինձ, ես իսկույն կանչեցի ճաշարանատիրոջն ու խնդրեցի նրան վռնդել և բարձրաձայն ծափահարեցի այս դատավորի ճառը. «Մի խանգարեք այս տիկիններին և պարոններին, մի պահ դուք ձեզ դրեք նրանց տեղը»: Ես բոլորին ասում էի նաև իմ ցավը, որ հնարավոր չէր այլևս գործել այն ռուս կալվածատիրոջ նման, որի բնավորությամբ հիա-

նում էի: Նա խարազանով ծեծել էր տալիս իր գյուղացիներից նրանց, ովքեր բարևում էին իրեն, և նրանց, ովքեր չէին բարևում, պատժելու համար մի համարձակություն, որը երկու դեպքում էլ նա համարում էր հավասարապես վիրավորական:

Հիշում եմ նաև ավելի լուրջ զեղումներ: Ես գրեցի «Գեղոն ոստիկանին» և «Կառափնարանի աստվածացումը» բանաստեղծությունները: Ինձ ստիպելով, կանոնավոր կերպով այցելում էի մասնագիտացված սրճարաններ, ուր հավաքվում են մեր պրոֆեսիոնալ հումանիստները: Իմ լավ անցյալի պատճառով, բնականաբար, ինձ լավ էին ընդունում: Այնտեղ, կարծես առանց նպատակադրվելու, ես մի մեծ բառ էի բաց թողնում: «Փառք Աստծու» ասում էի, կամ, ավելին, պարզապես՝ Աստված իմ..., և դուք պետք է տեսնեիք, թե ինչ ամաչկոտ երեխաներ են մեր սրճարանային աթեիստները: Այս սարսափելի հայտարարությունը մի պահ շփոթություն էր ստեղծում, նրանք իրար էին նայում, հետո պայթում էր ժխորը, ոմանք սրճարանից դուրս էին փախչում, ուրիշները բարկությունից այնպես էին վրա տալիս, որ հնարավոր չէր հասկանալ կամ լսել, բոլորը ջղաձգությունից խեղդվում էին, կարծես սատանան սուրբ ջրի մեջ մտած լիներ:

Դուք այս բոլորը կարող եք երեխայական համարել: Գուցե այս կատակների համար ավելի լուրջ պատճառներ կային: Ես ուզում էի խաղը խանգարել և, մանավանդ, այո՛, ուզում էի փուլ տալ այն շոյիչ համբավը, որի մասին մտածելն անգամ ինձ կատաղեցնում էր: «Ձեզ նման մի մարդու...» ասում էին: Նրանց հարգանքի կարիքը չունեի, քանի որ այն բոլորին չէր տրվում, և ինչպե՞ս կարող էր բոլորին տրվել, քանի որ այն չէի կարող բաժանել: Հետևաբար ավելի լավ էր ամեն ինչ, դատողություն և հարգանք, ծածկել ծիծաղելիության թիկնոցով: Պետք էր ազատվել բոլոր տեսակի զգացումներից, որոնք խեղդում էին ինձ: Հայացքների առջև բացվելու, ցույց տալու համար, թե ինչ ունեի կրծքիս տակ, ուզում էի ջարդել-բացել այն գեղեցիկ մանեկենը, որը ներկայացնում էի ամեն տեղ: Հիշում եմ մի զրույց, որ պետք է ունենայի երիտասարդ իրավաբանների առջև, որոնք ստաժավորվում էին: Ձայրացած ինձ ներկայացնող իրավաբանների կոլեգիայի նախագահի անհավատալի գովասանքներից, ես երկար չկարողացա դիմանալ: Իմ ելույթը սկսել էի ինձնից սպասվող խանդավառությամբ և հուզումով, մի բան, որ ըստ պահանջի արտաբերելը, ինձ համար ոչ մի դժվարություն չէր ներկայացնում: Բայց հանկարծ սկսեցի ամեն ինչ իրար խառնելը ներկայացնել որպես պաշտպանության միջոց: «Բայց ես նկատի ունեմ,— ասացի նրանց,— ոչ այն խառնաշփոթը, որից օգտվում են ժամանակակից կատարելագործված հավատաքննութ-

յան մեջ, որոնք միևնույն ժամանակ դատում են և գողին և պատվավոր մարդուն, առաջինի ոճիրներով երկրորդին ընկճելու, այլ՝ ընդհակառակը, ես ուզում եմ պաշտպանել գողին՝ ընդգծելով պատվավոր մարդու, այս դեպքում իրավաբանի ոճիրները»: Վերջին կետի մասին ես շատ հստակորեն էի արտահայտվում:

«Ենթադրենք, որ ես ընդունել եմ պաշտպանությունը համակրելի մի քաղաքացու, որը խանդից սպանություն է կատարել: Նկատի ունեցեք, պարոն երդվյալներ, պետք է ասեմ, թե ինչքան ներելի է բարկությունը, երբ մեկը տեսնում է, թե ինչպես իր բնական բարությունը չարաշահվում է գեղեցիկ սեռի կողմից: Մի՞թե ավելի լուրջ բան չէ, ընդհակառակը, նստարանի այս կողմում՝ իմ նստարանին լինելը առանց երբևէ բարի լինելու, ոչ էլ խաբված լինելուց տառապելու: Ես ազատ եմ, ազատ ձեր խստություններից, բայց ո՞վ եմ ես, իսկապես: Մի հպարտ ու աչքի ընկնող քաղաքացի, մի հարուստ ու ճոխ ապրող նոխազ, մի բարկացած փարավոն, արևելյան մի ծույլ տիրակալ: Ես ոչ ոքի չեմ սպանել: Անկասկած, դեռևս ոչ: Բայց արդյո՞ք արժանավոր մարդկային էակներ չեմ թողել, որ աչքիս առջև մահանան: Գուցե: Եվ գուցե պատրաստ եմ նույնը կրկնելու: Բայց նայեցեք այս մեկին, նա այլևս չի կրկնի այն, ինչ արել է: Նա դեռևս հուզված է իր կատարածի, իր քայլի համար»: Այս ճառը մի քիչ հուզեց իմ երիտասարդ պաշտոնակիցներին: Մի պահ հետո նրանք սկսեցին ծիծաղել: Նրանք իրենց լրիվ ապահով զգացին իմ ճառի եզրակացությանը հասնելիս, երբ պերճախոս կերպով վեր հանեցի անհատի մարդկային գծերը և նրա ենթադրյալ իրավունքները: Այդ օրը, ի վերջո, սովորությունը ավելի ուժեղ եղավ ինձնից:

Ժամանակ առ ժամանակ, կրկնելով այս հաճելի արտառոցությունները, ինձ հաջողվեց միայն մարդկանց կարծիքը մի քիչ ապակողմնորոշել: Ոչ թե նրանց զինաթափ անել, ոչ էլ, հատկապես, ինձ զինաթափ անել: Զարմանքը, որ ընդհանրապես նկատում էի իմ ունկնդիրների մեջ, նրանց մի քիչ լուռ և մտախոհ անհանգստությունը, բավականին նման ձեր ցույց տվածին,— ոչ, մի բողոք,— ինձ ոչ մի թեթևացում չէր բերում: Տեսնո՞ւմ եք, ինքն իրեն մեղադրելը բավական չէ չքմեղանալու համար. այդպես լինելու դեպքում ես վաղուց մի անմեղ գառ դարձած կլինեի: Պետք էր այնպիսի ձևով ինքնիրեն մեղադրել, մի բան, որը հասկանալու և կարողանալու համար բավական ժամանակ պետք եղավ, և որը չգտա, մինչև ինքս ինձ գտնեի ամենակատարյալ լքումի մեջ: Իսկ մինչ այդ ծիծաղը շարունակեց հնչել շուրջս, և իմ անկանոն ճիգերը չկարողացան նրանից խլել ինչ-որ հովանավորող, համարյա քնքուշ շեշտը, որը ինձ վիրավորում էր:

—

Բայց ինձ թվում է, որ ծովը բարձրանում է: Շուտով մեր նավը ճանապարհ կընկնի. օրը ավարտվում է: Նայեցեք, աղավնիները հավաքվում են երկնքում: Մեկը մյուսի մոտ է շտապում, հազիվ են շարժվում, և լույսը պակասում է: Եթե դեմ չեք, եկեք լռենք և ավելի լավ վայելենք այս բավականին աղետաբեր ժամը: Ո՞չ, ես ձեզ հետաքրքրո՞ւմ եմ: Դուք շատ քաղաքավարի եք: Ավելի շուտ, ձեզ իսկապես հետաքրքրելու վտանգին եմ ինձ այժմ ենթարկում: Նախքան բացատրելս, թե ինչ բան է խոստովանող դատավորը, պետք է ձեզ հետ խոսեմ շվայտության և անհարմարավետության մասին:

Սխալվում եք, սիրելիս, նավը լրիվ արագությամբ է գնում: Բայց Զույդերզեն մեռած ծով է, կամ համարյա թե մեռած: Մառախուղի մեջ կորած իր հարթ ափերի պատճառով մարդ չի իմանում՝ որտեղ է սկսվում այն և որտեղ վերջանում: Մենք առաջ ենք գնում առանց որևէ տեղանշանի և, հետևաբար, չենք կարող իմանալ մեր արագությունը: Մենք առաջ ենք գնում, իսկ մեր շուրջը ոչինչ չի փոխվում: Սա նավարկություն չէ, կարծես երազում լինենք:

Հունական կղզիներում ինձ հակառակն էր թվում: Միշտ նոր կղզիներ էին երևում հորիզոնի վրա: Նրանց մերկ գծերը ցույց էին տալիս երկնքի սահմանը, նրանց ժայռոտ ափերը հստակորեն բաժանում էին երկինքն ու ծովը: Ոչ մի շփոթ. հստակ լուսավորության մեջ ամեն ինչ տեղանշան էր դառնում: Եվ երբ մեր փոքր նավով, առանց վանգ առնելու, գիշեր ու ցերեկ առաջ էինք շարժվում ու մի կղզուց մյուսն անցնում, ինձ թվում էր, որ մենք մի ալիքի կատարից անցնում էինք մյուսը, փրփուրով և ծիծաղով լեցուն ընթացքի մեջ: Այդ ժամանակից Հունաստանը իմ մեջ, իմ հիշողության ափում լողում է անդադար... Էհ, ես ինքս արդեն լողում եմ, զգացական եմ դառնում: Կանգնեցրու ինձ, սիրելիս, խնդրում եմ:

Ի միջի այլոց, եղել եք Հունաստանում: Ո՞չ: Ավելի լավ: Ի՞նչ պիտի անեիք այնտեղ, հարցնում եմ ձեզ: Այնտեղ մաքուր սրտեր են պետք: Գիտեք, որ այնտեղ բարեկամները փողոցում ման են գալիս երկու-երկու, իրար ձեռք բռնած: Այո, կանայք տանն են մնում, կարելի է տեսնել հասուն, հարգանքի արժանի, բեղավոր մարդկանց, որոնք լուրջ դեմքով մայթերն են չափում, մատները բարեկամի մատների մեջ: Արևելքում էլ են երբեմն այդպես անում: Թող այդպես լինի: Բայց ասացեք ինձ, Փարիզի փողոցներում դուք կբռնեիք իմ ձեռքը: Ահ, կատակում եմ: Մենք վարվեցողության մեր ձևերն ունենք, փչացածությունը մեզ հպարտ է դարձրել: Նախքան հունական կղզիներ գնալը, մենք պետք է երկարորեն լվացվենք: Օդը մաքուր է այնտեղ, ծովը և զվարճությունները մեծ են: Եվ մենք...

Նստենք այս կամրջակի նստարաններին: Ի՞նչ մառախուղ է: Ես իմ պատմությունը ընդհատեցի կարծես անհարմարավետության մասին խոսելիս: Այժմ կասեմ ձեզ, թե ինչի մասին է խոսքը: Ինքս ինձ հետ ապարդյուն կերպով պայքարելուց, ինքնագոհության իմ հովերը սպառելուց հետո, իմ անօգուտ ջանքերից հուսահատված, ես որոշեցի հեռանալ մարդկային հասարակությունից: Ոչ, ոչ, անմարդաբնակ կղզի չփնտրեցի: Պարզապես ապաստանեցի կանանց մոտ: Դուք գիտեք, նրանք ոչ մի թուլություն իրապես չեն դատապարտում. նրանք ավելի շուտ կփորձեն խոնարհեցնել կամ անզեն դարձնել մեր ուժերը: Ահա թե ինչու կինը պարգև է ոչ թե ռազմիկի, այլ հանցագործի համար: Կինը նրա նավահանգիստն է, նրա վերջին հանգրվանը կնոջ անկողնում է, ուր նրան սովորաբար ձերբակալում են: Միթե միայն նա չէ, որ մեզ մնում է երկրային դրախտից: Հուսահատության մեջ ես վազեցի դեպի իմ բնական նավահանգիստը: Բայց այլևս ճառեր չարտասանեցի: Ըստ սովորության դեռ մի քիչ խաղում էի, բայց ստեղծագործությունը, այսուհանդերձ, պակասում էր: Տատանվում եմ խոստովանել, վախենալով, որ էլի մեծ խոսքեր կարտասանեմ. ինձ թվում է, որ այդ ժամանակ ես սիրո կարիք զգացի: Լկտիություն է, այդպես չէ: Բոլոր դեպքերում զգում էի մի խուլ տառապանք, մի տեսակ զրկվածություն, որ ինձ ավելի դատարկ դարձրեց և թույլ տվեց, կիսով չափ ստիպողաբար, կիսով չափ հետաքրքրությունից, մի քանի ձեռնարկներ անել: Քանի որ սիրելու և սիրվելու կարիք ունեի, ինձ թվաց, թե սիրահարված եմ: Այլ կերպ ասած, հիմար ձևացա:

Հաճախ ես ինձ բռնում էի հարցեր տալիս, որից ինձ նման փորձված մարդը մինչ այդ խուսափում էր: Ես ինձ լսում էի հարցնելիս. «Ինձ սիրո՞ւմ ես»: Դուք գիտեք, թե սովորաբար ինչ են պատասխանում նման դեպքում. «Իսկ դո՞ւ»: Եթե «այո» պատասխանեի, իմ իսկական զգացումներից ավելի պարտավորված էի համարելու ինձ: Եթե համարձակվեի «ոչ» ասել, չսիրվելու վտանգին էի ենթարկվում և դրանից տառապում էի: Որքան վտանգի տակ էր թվում այն զգացումը, ուր հույս էի ունեցել հանգիստ գտնել, այնքան ավելին էի պահանջում իմ ընկերուհուց: Պահանջում էի ավելի ու ավելի խորունկ զգացում: Այդպիսի մի կեղծ զգացումով բռնվեցի մի գրավիչ խենթուկի նկատմամբ, որ այնքան լավ կարդացել էր սրտի մասին եղած գրականությունը և սիրո մասին խոսում էր անդասակարգ հասարակություն քարոզող մտավորականի վստահությամբ և համոզումով: Այս համոզմունքը, դուք այդ գիտեք, վարակիչ է: Ես նույնիսկ փորձում էի խոսել սիրո մասին և ավարտեցի ինքս ինձ համոզեցի, մինչև այն պահը, երբ նա իմ սիրուհին դարձավ: Եվ այդ ժամանակ էլ հասկացա, որ սիրո

մասին գրված գրքերը, որոնք սովորեցնում են խոսել սիրո մասին, սիրել չեն սովորեցնում: Մի թութակ սիրելուց հետո, ես ստիպված եղա օձի հետ պառկել: Հետևաբար, սկսեցի ուրիշ տեղ փնտրել գրքերի խոստացած սերը, բայց որին երբեք կյանքում չհանդիպեցի:

Բայց սիրո հարցում ես փորձ չունեի: Ավելի քան երեսուն տարի ես բացառապես ինքս ինձ էի սիրել: Ինչպես հուսալ, որ կարելի է կորցնել նման մի սովորույթ: Ես այն երբեք չկորցրի և կրքի հարցում մնացի կամայական: Ես կրկնապատկում էի իմ խոստումները: Զուգահեռ սերեր էի կնքում՝ ինչպես անցյալում, բազմաթիվ կապեր էի ունենում: Հետևաբար՝ ուրիշների համար ավելի շատ դժբախտություն էի կուտակում, քան իմ հրաշալի անտարբերության ժամանակ: Ասացի ձեզ, որ իմ թութակը, հուսահատ, ուզեց սովամահ լինել: Բարեբախտաբար ժամանակին վրա հասա և որոշեցի ձեռքից բռնել, մինչև որ Բալի կատարած մի ճամփորդության վերադարձին հանդիպեց սպիտակած քունքերով ինժեներին, որը լրիվ համապատասխանում էր նրա նախասիրած շաբաթաթերթի կողմից նկարագրվածին: Բոլոր դեպքերում, ինչպես ասում են, հավերժության մեջ տարվելու և կրքի մեջ լուծվելու վիճակից հեռանալով, ես ավելացնում էի իմ սխալների և մոլորությունների քաշը: Ես սիրուց այնպիսի սարսափ զգացի, որ տարիներ ամբողջ, առանց ատամներս սեղմելու, չկարողացա լսել «Վարդագույն կյանքը» կամ «Իզոլդայի սիրո մահը»: Դրանից հետո փորձեցի ինչ-որ ձևով հրաժարվել կանանցից և ապրել ժուժկալ կյանքով. ի վերջո նրանց բարեկամությունից պետք է բավարարված զգայի: Բայց այդպիսով դուրս էր գալիս, որ խաղից էի հրաժարվում: Ցանկությունից դուրս կանայք ինձ չափազանց ձանձրացնում էին, և, նկատելիորեն, ես էլ նրանց էի ձանձրացնում: Առանց խաղի, առանց թատրոնի, ես անկասկած ճշմարտության մեջ էի: Բայց ճշմարտությունը, սիրելի բարեկամ, ձանձրալի էր:

Հուսահատված սիրուց և ժուժկալությունից, ես որոշեցի տրվել շվայտության, որ կարող էր փոխարինել սիրույն, լռեցնել ծիծաղները, վերադարձնել լռությունը և, մանավանդ, անմահություն շնորհել: Հարբեցողության բարձր աստիճանին, ուշ գիշերին, երբ պառկում ես երկու պոռնիկների արանքում, շատ բաներ հստականում են, դատարկվում ես ամեն տեսակ ցանկությունից, հույսը դադարում է տանջանք լինելուց, ուղեղը իշխում է բոլոր ժամանակների վրա, բայց ապրելու ցավը երբեք չի անցնում: Ինչ-որ իմաստով ես միշտ ապրել եմ շվայտության մեջ, բայց երբեք չեմ դադարել անմահ [illegible]ել ցանկանալուց: Այս չէր, արդյոք, իմ բնավորության բանալին և նաև արդյունքը ինքս իմ հանդեպ զգացած

մեծ սիրույն, որի մասին պատմել եմ ձեզ: Այո, ես մահանում էի անմահ լինելու ցանկությունից: Ես ինձ չափազանց շատ էի սիրում, որպեսզի չցանկանայի, որ իմ սիրո թանկագին առարկան երբեք չանհետանար: Արթուն վիճակում և մի քիչ էլ ինքն իրեն ճանաչելով, հնարավոր չէր բավարար պատճառներ տեսնել, որոնցով անմահությունը տրված լիներ մի վավաշոտ կապիկի, հետևաբար անհրաժեշտ էր այդ անմահության համազորները ճարել: Եվ որովհետև ես ցանկանում էի հավերժական կյանքը, պառկում էի, ուրեմն, պոռնիկների հետ և ամբողջ գիշերներ խմում էի: Առավոտյան, անշուշտ, բերանումս մահվան դառն համն էի զգում: Բայց չէ՞ որ երկար ժամեր շատ երջանիկ սավառնել էի: Կհամարձակվե՞մ ձեզ խոստովանել: Դեռևս հուզմունքով եմ հիշում այն գիշերները, երբ գնում էի որևէ կեղտոտ գիշերային ակումբ, մի հեշտ տրվող պարուհի գտնելու, որն ինձ պատվում էր իր շնորհներով, և որի համար մի երեկո նույնիսկ ծեծկվեցի մի մորուքավոր պարծենկոտի հետ: Ամեն գիշեր ես երկար կանգնում էի խմիչքի սեղանի դիմաց և հաճույքի այս վայրի կարմիր լույսի տակ ու կեղտոտության մեջ ուտում ու երկար խմում էի: Սպասում էի արշալույսին և օրը ավարտում էի իմ իշխանուհու միշտ չհավաքված անկողնում, որը մեքենայաբար տրվում էր հաճույքին և ապա մեռածի պես քնում: Առավոտը դանդաղորեն գալիս էր լուսավորելու այս անկանոնությունը, և ես, լուռ վեր կենալով, անշարժ կանգնում էի առավոտվա փառավոր լույսի մեջ:

Ալկոհոլն ու կանայք ինձ տվեցին, խոստովանում եմ, միակ թեթևությունը, որին արժանի էի: Իմ այս հայտնագործությունը ձեզ եմ թողնում, սիրելի բարեկամ, և մի վախեցեք այն օգտագործելուց: Այդ ժամանակ դուք կտեսնեք, որ իսկական շվայտությունը փրկարար է, որովհետև ոչ մի պարտավորվածություն չի դնում: Այնտեղ դու քո տերն ես, հետևաբար այն կմնա իրենց սեփական անձին խորապես սիրահարվածների նախընտրած զբաղմունքը: Դա մի ջունգլի է առանց ապագայի և անցյալի, մանավանդ առանց խոստումի և առանց անմիջական դատավճռի: Նրա տեղը աշխարհից անջատված է: Այնտեղ մտնելիս դրսում ես թողնում և վախը, և հույսը: Զրույցը այնտեղ պարտադիր չէ. այն, ինչ փնտրում ես այնտեղ, կարելի է ստանալ առանց խոսքերի և հաճախ նույնիսկ առանց դրամի: Խնդրում եմ, թույլ տաք ինձ մասնավոր պատիվ տալ անծանոթ և մոռացված այն կանանց, որոնք այդ ժամանակ ինձ օգնել են: Նրանցից պահած հիշատակիս մինչև այսօր խառնվում է մի բան, որ նման է հարգանքի:

Ամեն դեպքում ես լայնորեն օգտվում էի այս ազատագրումից: Նույնիսկ ինձ տեսան մի, ինչպես ասում են, մեղքի մեջ թաղված հյուրանոցում, ուր միաժամանակ կենակցում էի մի հասուն տարիքի

պոռնիկի և բարձր հասարակության պատկանող մի չամուսնացած աղջկա հետ: Առաջինի հետ ասպետ էի խաղում, իսկ երկրորդին հնարավորություն տվեցի կյանքի մի քանի իրողություններ սովորել: Դժբախտաբար պոռնիկը միջին դասակարգի շեշտված բնավորություն ուներ. նա հետագայում համաձայնվեց իր հուշերը գրել և տպագրել մի կրոնական ամսագրում, որ իր էջերը տրամադրում էր ժամանակակից գաղափարներին: Երիտասարդը իր հերթին ամուսնացավ, բավարարելու համար իր սանձազերծ բնազդները և կիրառել... իմ դասերից արթնացած իր փայլուն տվյալները: Պակաս հպարտ չեմ նաև, որ այդ շրջանում որպես հավասարի ընդունվել եմ տղամարդկանց մի ընկերությունում, որը հաճախ զրպարտվում էր: Սակայն դրա վրայով անցնելու եմ: Դուք գիտեք, որ նույնիսկ խիստ մտավորական մարդիկ հպարտանում են, երբ հարևանից մի շիշ ավելի են դատարկում: Թվում էր, որ կարող էի խաղաղություն ու ազատագրում գտնել այս երջանիկ մսխումների մեջ: Բայց նույնիսկ այնտեղ ինքս իմ մեջ արգելքի հանդիպեցի: Դա իմ լարդն էր և մի այնպիսի սարսափելի հոգնություն, որ դեռևս ինձ չի թողել: Մարդիկ անմահություն են խաղում, մինչդեռ նույնիսկ չգիտեն՝ մի քանի շաբաթ հետո կամ թեկուզ հաջորդ առավոտը կարող են ոտքի կանգնել:

Այս փորձառության միակ օգուտը, գիշերային քաջագործություններից իմ հրաժարվելուց հետո, այն եղավ, որ կյանքը ինձ համար դարձավ նվազ ցանկալի: Մարմնիս կրծող հոգնությունը իմ մեջ ջնջել էր շատ սուր կետեր: Յուրաքանչյուր պոռթկում նվազեցնում է կենսունակությունը, հետևաբար՝ տառապանքը: Խելացնոր շվայտությունը, հակառակ տիրող կարծիքի, բնավ վատ բան չէ: Դա մի երկար քուն է: Դուք պետք է նկատած լինեք, որ իսկապես խանդից տառապող տղամարդիկ շտապում են պառկել այն կնոջ հետ, ով դավաճանում է իրենց: Դրանով նրանք մի անգամ ևս ուզում են իրենք իրենց համոզել, որ այդ թանկագին գանձը իրենց է պատկանում: Ինչպես ասում են, ուզում են նրան սեփականացնել: Եվ ճիշտ է նաև, որ անմիջապես հետո դառնում են նվազ խանդոտ: Ֆիզիկական խանդը երևակայության և սեփական անձի մասին նրանց ունեցած մեծ կարծիքի արդյունքն է: Նրանք մրցակցին մտածել են տալիս այնպիսի հիմարություններ, որ իրենք պիտի ունենային միևնույն պայմաններում: Բարեբախտաբար սեռական բավարարումը թուլացնում է և երևակայությունը, և դատողությունը: Այդ ժամանակ տառապանքը առնականության հետ երկար քնում է: Նույն պատճառներով երիտասարդները իրենց առաջին սիրուհիների հետ պառկելուց հետո կորցնում են փիլիսոփայական անհանգստությունը, և որոշ ամուսնություններ, որոնք

պարզապես ձևակերպված շվայտություններ են, դառնում են համարձակության և հնարամտության միապաղաղ դագաղակիրներ: Այո, սիրելի բարեկամ, քաղքենիական ամուսնությունը մեր երկիրը դրել է հողաթափերի մեջ և շուտով կհասցնի մահվան դուռը:

Չափազանցո՞ւմ եմ: Ոչ, բայց նյութից շեղվում եմ: Ուզում եմ ձեզ ասել միայն այն առավելությունը, որ քաղում էի այս օրգյան ամիսներից: Ապրում էի մի տեսակ մշուշի մեջ, ուր ծիծաղը այն աստիճան էր խլացնում, որ դադարում էի այն լսել: Անտարբերությունը, որ արդեն մեծ տեղ էր գրավում մեջս, այլևս դիմադրության չէր հանդիպում և վերածվում էր մի տեսակ սկլերոզի: Ոչ մի հուզում: Հավասարաչափ մի հումոր կամ հումորի ամբողջական բացակայություն: Հիվանդացած թոքերը առողջանում են չորանալով և քիչ առ քիչ շնչահեղձ անում իրենց երջանիկ սեփականատիրոջը: Այդպես էլ ես, ապաքինվելով, խաղաղությամբ մահանում էի: Շարունակում էի ապրել իմ մասնագիտությամբ, թեև իմ համբավը բավականին վնասված էր իմ լեզվի խոտորումների պատճառով: Իմ աշխատանքի կանոնավորությունը խախտված էր իմ կյանքի անկանոնությամբ: Հետաքրքրական է նշել, սակայն, որ իմ լեզվական գրգռությունները ինձ ավելի վնաս պատճառեցին, քան իմ գիշերային ծայրահեղությունները: Ակնարկությունները, նույնիսկ բանավոր ակնարկությունները, որ երբեմն անում էի Աստծո մասին իմ պաշտպանողականների մեջ, իմ հաճախորդներին անվստահություն էին ներշնչում: Նրանք անկասկած վախենում էին, որ երկինքը չի կարող իր ձեռքը վերցնել նրանց շահերը այնքան լավ, որքան մի իրավաբան, որ օրենքների գիտության մեջ անպարտելի է: Այդտեղից այն եզրակացությունը, որ երկնային դիմելու և իմ տգիտության միջև մի քայլ կար՝ իմ հաճախորդները արեցին այդ քայլը և քչացան: Երբեմն դատեր էի պաշտպանում: Երբեմն, մոռանալով նույնիսկ, որ այլևս չեմ հավատում իմ ասածին, լավ էի պաշտպանում: Սեփական ձայնս տանում էր ինձ, և ես հետևում էի նրան, գետնից մի քիչ բարձրանում էի, խուզող թռիչք էի անում, սակայն, ինչպես առաջներում, իսկապես թռչել չէի կարողանում: Իմ մասնագիտությունից դուրս եմ՝ շատ քիչ մարդկանց էի հանդիպում, քարշ էի տալիս մեկ կամ երկու կապի հոգնած շարունակությունը: Պատահեց նույնիսկ, որ մասնակցեցի բարեկամական մաքուր երեկոների, առանց որևէ ցանկության մասնիկի, այն քիչ տարբերությամբ, որ ձանձրույթի հետ հաշտված՝ հազիվ էի լսում, թե ինչ են ասում: Մի քիչ գիրանում էի և ի վերջո կարողացա հավատալ, որ տագնապը անցել էր: Իրականում, պարզապես ծերանում էի:

Սակայն մի օր, մի ընկերուհու հետ ճանապարհորդության ընթացքում, որին չէի ասել, թե այդ ուղևորությամբ տոնում էի իմ ապաքինումը, հանկարծ հեռվում, երկաթագույն օվկիանոսի մի սև կետ նշմարեցի: Անշուշտ, նավի վերջին կամրջակի վրա էի: Անմիջապես հայացքս հեռացրի, սիրտս սկսեց խփել: Երբ ինձ ստիպեցի նորից նայել, սև կետը անհետացել էր: ՈՒզում էի բղավել, հիմարի պես օգնություն կանչել, երբ այն նորից երևաց: Պարզապես մի բեկոր էր, որ նավերը իրենց ետևից թողնում են: Սակայն չէի կարողանում դրան նայել, անմիջապես մտածում էի մի խեղդվողի մասին:

Այդ ժամանակ հասկացա, շատ պարզ ձևով հասկացա, ինչպես հասկանում եմ մի գաղափար, որի ճշմարիտ լինելը վաղուց գիտեն, որ այն աղաղակը, որ տարիներ առաջ հնչել էր Սենայի վրա, իմ ետևում, չէր դադարել հնչելուց, այլ գետով իջել էր դեպի Լա Մանշի ջրերը, պտույտ էր գործել աշխարհում, օվկիանոսի անսահման տարածության մեջ և ինձ էր սպասել ծովերի ու գետերի վրա, ի վերջո ամեն տեղ, ուր գտնվելու էր իմ մկրտության դառն ջուրը: Այստեղ ես, ասացեք ինձ, միթե ջրի վրա չենք: Հարթ, միապաղաղ, անվերջանալի ջրերի վրա, որ իր սահմանները շփոթում է երկրի սահմանների հետ: Ինչպես հավատալ, որ Ամստերդամ ենք հասնելու: Ինձ թվում է, որ մենք երբևէ դուրս չենք գալու սուրբ ջրի այս հսկայական ավազանից: Անտեսանելի ծովորորների աղաղակը չեք լսում: Եթե մեզ դիմելով են կանչում, ինչ բանի համար են արդյոք կանչում:

Նույն ծովորորներն էին, որ կանչում, բղավում էին Ատլանտայում: Եվ այդ օրը ես վերջնականորեն հասկացա, որ չեմ բուժվել, որ միշտ անկյուն եմ կանգնեցված, և որ անհրաժեշտ է ինձ կարգի բերել: Վերջացել էր փառավոր կյանքը, բայց ավարտվել էին նաև կատաղությունն ու հուզումնալից օրերը: Պետք էր ենթարկվել և ընդունել հանցավոր լինելը: Պետք էր ապրել անհարմարավետության մեջ: Վստահ եմ, որ դուք չգիտեք այն զնդան-խցիկի մասին, որ միջին դարերում անվանում էին անհարմարավետ: Ընդհանրապես այնտեղ ձեզ ցկյանս մոռանում էին: Այս խցիկը ուրիշներից տարբերվում էր իր հնարամիտ չափսերով: Դրանք այնքան բարձր չէին, որ հնարավոր լիներ ոտքի կանգնել, ոչ էլ այնքան լայն, որ կարողանայիր պառկել: Պետք էր ընդունել ամենահարմար դիրքը, ապրել անկյունագիծ վիճակում. այնտեղ քունը մի անկում էր, արթնանալը՝ մարմնի կծկում: Սիրելիս, այս այնքան պարզ գյուտի մեջ հանճար կար, և ես բառերս կշռում եմ: Ամեն օր, անշարժության դատապարտված վիճակում, երբ աղիքները իրար են կպչում, դատապարտյալը համոզվում էր իր մեղավորության մեջ, և՝ որ անմեղությունը կայանում է մարմինը ազատորեն երկարել կարողանալու ուրախության մեջ:

Կարող եք այս խցիկում պատկերացնել գագաթների և բարձր կամրջակների սովոր մեկին: Ինչպես: Կարելի էր ապրել այս խցիկում և լինել անմեղ: Անհավանական է, բացարձակապես անհավանական: Եվ կամ իմ տրամաբանությունը արդեն փուլ է գալիս: Այն, որ անմեղությանը վիճակված լիներ կուզ ապրել, մի վայրկյան իսկ չեմ կարող հավատալ: Եվ հետո, մենք չենք կարող որևէ մեկի անմեղությունը հաստատել, մինչդեռ մի հարվածով կարող ենք հաստատել բոլորի հանցավոր լինելը: Յուրաքանչյուր մարդ ուրիշների հանցանքի համար վկա է. ահա թե ինչի վրա է հիմնվում իմ հավատը և իմ հույսը:

Հավատացեք ինձ, կրոնները սխալվում են այն պահից, երբ սկսում են բարոյախոսել և շանթահարող հրամանաներ արձակել: Աստված անհրաժեշտ չէ հանցանքը ստեղծելու և ոչ էլ պատժելու համար: Մեր նմանները, մեր օգնությամբ բավական են այդ գործի համար: Խոսում էինք վերջին դատաստանի մասին: Թույլ տվեք դրա վրա հարգանքով ծիծաղել: Ես դրան սպասելու եմ վճռական, որովհետև ճանաչել եմ ավելի վատթարը, այսինքն՝ մարդկանց դատաստանը: Նրանց համար մեղմացուցիչ հանգամանքներ չկան, նույնիսկ լավ ցանկությունը հանցանք է համարվում: Թուքի խուցերի մասին առնվազն լսած պետք է լինեք: Այն հնարեց մի ժողովուրդ ապացուցելու համար, որ աշխարհի ամենամեծն է: Դա քարե մի տոպրակ է, ուր բանտարկյալը ամբողջ հասակով կանգնում է բայց չի կարող շարժվել: Ամուր, հաստատուն դուռը, որ նրան անշարժացնում է այդ ցեմենտե կեղևի մեջ, կոկորդի բարձրության վրա է: ՈՒրեմն միայն նրա գլուխն է երևում, որի վրա յուրաքանչյուր անցնող պահակ առատորեն թքում է: Խուցի մեջ սեղմված բանտարկյալը չի կարող երեսը սրբել, թեև դա թույլ է տրվում, բայց կարող է աչքերը փակել: Այս մեկը, սիրելիս, մարդկանց հնարանքն է: Նրանք Աստծո կարիքը չեն ունեցել այս փոքրիկ գլուխգործոցը հնարելու համար:

ՈՒրեմն՝ ինչ: Աստծո միակ օգտակարությունը կայանում է անմեղությունը ապահովելու մեջ, այդ դեպքում ես կրոնը ավելի շուտ կհամարեմ մաքրման մի ձեռնարկություն, ինչպես եղել է անցյալում, կարճ ժամանակի համար, ուղիղ երեք տարի, և կրոն չէր կոչվում: Այն օրվանից, ինչ օձառը պակասել է, մեր քթերը կեղտոտվել են, և մենք փոխադարձաբար իրար ենք մաքրում: Բոլորը ագահ են ու ծույլ, բոլորը պատժված են, թքենք վրաները և շտապենք դեպի անմահություն: Ո՞վ է առաջինը թքելու, ահա ամբողջ հարցը: Ես ձեզ մի գաղտնիք եմ հայտնելու, սիրելիս: Վերջին դատաստանին մի սպասեք: Այն ամեն օր տեղի է ունենում:

Ոչ, դատարկ բան է, այս անիծյալ խոնավության մեջ պարզապես մի քիչ դողում եմ: Արդեն հասնում ենք: Ահավասիկ: Ձեր

ետևից, խնդրում եմ: Բայց դեռ մնացեք, եթե կարելի է, և ինձ ընկերակցեք: Պատմությունս չեմ ավարտել, պետք է շարունակել: Շարունակել. ահա թե ինչն է դժվար: Լսեցեք, գիտեք ինչու խաչեցին այն մյուսին, որի մասին հավանաբար մտածում եք այս պահին: Լավ, բազմաթիվ պատճառներ կային դրա համար: Մարդուն սպանելու համար միշտ պատճառներ լինում են: Ընդհակառակը՝ անկարելի է արդարացնել մարդուն, որ նա ապրի: Դրա համար էլ հանցանքը միշտ պաշտպան փաստաբաններ է գտնում, իսկ անմեղությունը՝ երբեմն միայն: Բայց այն պատճառների կողքին, որ մեզ երկու հազար տարի շատ լավ բացատրել են, կար մի մեծը այս սոսկալի վշտի համար, և ես չգիտեմ, թե ինչու այդքան խնամքով այն պահում են: Իսկական պատճառն այն էր, որ նա գիտեր իր բոլորովին անմեղ չլինելը: Եթե չէր կրում հանցանքի ծանրությունը, որով մեղադրում էին, դրա փոխարեն գործել էր ուրիշները, նույնիսկ եթե չգիտեր դրանք: Արդյո՞ք չգիտեր: Ի վերջո չէ՞ որ սկզբնաղբյուրի մոտ էր, նա պետք է լսած լիներ անմեղ երեխաների մի ջարդի մասին: Հուդայի զավակների ջարդը, երբ իր ծնողները իրեն ապահով վայր էին տանում, ինչու՞ համար էր: Ինչու՞ էին մահացել երեխաները, եթե ոչ իր պատճառով: Անշուշտ, ինքը չէր ցանկանում նրանց մահը: Սակայն այդ արյունոտ զինվորները, երկուսի կիսված այդ երեխաները նրան սարսափ էին պատճառում: Բայց ինչպես էլ որ եղած լիներ, ես վստահ եմ, որ նրանց մոռանալ չէր կարող: Եվ այն տխրությունը, որ երևում է նրա բոլոր գործերում, անբուժելի տխրությունը չէ՞ այն մարդու, որ ամբողջ գիշերներ լսում էր իր փոքրի վրա ողբացող ու ամեն սփոփանք մերժող Ռաքելի ձայնը: Ողբը բարձրանում էր գիշերները, Ռաքելը կանչում էր իր պատճառով սպանված զավակներին, մինչ ինքը՝ պատճառը, դեռ ողջ էր:

Իմանալով այն, ինչ գիտեր, ճանաչելով ամեն ինչ մարդու մեջ, ա՜հ, ո՞վ պիտի հավատար, որ ուրիշներին մահացնելը պակաս հանցանք է, քան չմեռնելը: Օր ու գիշեր երես-երեսի հանդիպելով իր անմեղ ոճրի հետ, նրա համար շատ դժվար էր իր կյանքը պահելն ու ապրել շարունակելը: Պետք էր այն ավարտել, չպաշտպանվել, մեռնել, որպեսզի այլևս ապրողների մեջ մենակ չլիներ, որպեսզի մի ուրիշ աշխարհ գնար, ուր գուցե պաշտպանված լիներ: Այստեղ, երկրի վրա նրան ոչ ոք չպաշտպանեց, և նա դառնորեն լաց եղավ, և որի համար, վերջին հաշվով, ենթարկվեց խիստ գրաքննության: Այո, կարծեմ երրորդ ավետարանիչն էր, որ սկսեց նրա գանգատները ջնջել: «Աստված իմ, ինչու՞ ինձ լքեցիր»: Միթե այդ ճիչում ինչ-որ ապստամբություն չկար: Ճիչ էր, չէ՞: ՈՒրեմն, մկրատները: Նշեցեք նաև, որ եթե Ղուկասը ոչինչ ջնջած չլիներ, մենք հազիվ թե ուշադրություն դարձրած կլինեինք դրան: Բոլոր դեպքերում ավետարանում այդքան տեղ գրված չէր լինի: Այսպես, գրաքննիչը բարձր բղավում է այն, ինչ մերժում է: Աշխարհը նույնպես երկդիմի է:

Դա չխանգարեց, սակայն, որ գրաքննվողն ինքը չկարողացավ շարունակել: Եվ ես, սիրելիս, գիտեմ այն, ինչի մասին խոսում եմ: Կար ժամանակ, որ ամեն վայրկյան անգիտանում էի, թե ինչպես կարող եմ հաջորդ վայրկյանին հասնել: Այո, կարելի է պատերազմ անել այս աշխարհում, կապկել սերը, չարչարել իր նմանին, թերթերում փայլել և կամ պարզապես հյուսք անելիս իր հարևանին չարախոսել: Բոլոր դեպքերում շարունակել, միայն շարունակել, ահա թե ինչն է գերմարդկային: Եվ նա գերմարդ չէր, կարող եք ինձ հավատալ: Մահվանից առաջ նա իր տառապանքը բղավել է, և դրա համար էլ ես սիրում եմ նրան, այդ մահացածին, որ այդպես էլ չիմացավ, թե ինչո՞ւ է մահանում:

Դժբախտությունն այն է, որ մեզ մենակ թողեց, որպեսզի շարունակենք ապրել ինչ էլ պատահի, նույնիսկ եթե ապրենք անհարմարավետի մեջ, մեր հերթին իմանալով ինչ նա գիտեր, բայց չկարողանալով անել այն, ինչ նա էր արել և չկարողանալով նրա նման մեռնել: Բնականաբար, շատ հաճախ իր օրինակը փորձեցին օգտագործել: Ի վերջո հանճարեղ բան էր մեզ ասելը. «Դուք այնքան էլ փայլուն տեսք չունեք, դա փաստ է, բայց մանրամասնությունների մեջ մի մտեք, այն մի հարվածով կարելի է վերացնել խաչի վրա»: Բայց մեր ժամանակներում շատ մարդիկ մագլցում են խաչի վրա, որպեսզի ավելի հեռվից երևան, այդ ճանապարհին կոխկրտելով նույնիսկ նրան, ով այդքան երկար այդտեղ էր գտնըվում: Շատ մարդիկ որոշել են հրաժարվել վեհանձնությունից, որպեսզի բարություն անեն: Օ, այդ անարդարությունը, այդ ցածր անարդարությունը, որ ցույց են տալիս նրա նկատմամբ: Այդ մասին մտածելիս սիրտս սեղմվում է:

Ահա նորից բռնում է իմ դատ պաշտպանելու սովորությը: Ներեցեք ինձ, հասկացեք, որ պատճառներ ունեմ: Լսեցեք, այստեղից մի քանի փողոց այն կողմ մի թանգարան կա, որը կոչվում է «Մեր տիրոջ մսուրը»: Ժամանակին այստեղի քրիստոնյաները իրենց տիրոջը տեղավորել են կտուրների տակ: Ի՞նչ անեին. այստեղի քարայրները միշտ ջրով են լցվում: Բայց այսօր, կարող եք վստահ լինել, նրանց տերը ոչ մսուրում է, ոչ քարայրում: Նրանք իրենց տիրոջը այժմ բարձրացրել են դատարանի ամբիոնից վերև, իրենց սրտից հեռու մի տեղ, և նրա անունով մեխում են մարդկանց, նրա անունով մանավանդ դատում են: Նա մեղավորների հետ ցածր ձայնով էր խոսում: «Ես ինքս քեզ չեմ դատապարտում», ասում էր, սակայն այդ չի խանգարում, որ այժմ նրանք դատապարտեն, նրանք ոչ ոքի թողություն չեն շնորհում: Տիրոջ անունով ահա քո հաշիվը, ստացիր: Աստվա՛ծ: Նա այդքան չէր պահանջում, բարեկամս: Անշուշտ կան մարդիկ, որ սիրում են նրան, նույնիսկ քրիստոնյաների մեջ: Բայց նրանց մատների վրա

կարելի է հաշվել: Թեև Քրիստոսը այդ կանխատեսել էր, նա հումորի զգացում ուներ: Պետրոսին, այդ վախկոտին, ճանաչում էր: Պետրոսը ուրանում է նրան. «Ես այդ մարդուն չեմ ճանաչում, չգիտեմ ինչ եք ուզում ասել...» և այլն: Իսկապես, Քրիստոսը չափազանցում էր: Եվ նա, ցույց տալով Պետրոսին, բառախաղ է անում. «Այս անկյունաքարի վրա ես կառուցելու եմ իմ եկեղեցին»: Երգիծանքը ավելի հեռուն տանել հնարավոր չէր, այդպես չեք կարծում: Բայց ոչ, նրա հաջորդները շարունակում են հաղթանակել: «Տեսնում եք, նա շատ լավ հասկանում էր, բայց այդպես ասաց»: Եվ հետո նա ընդմիշտ գնաց, նրանց թողնելով դատել և դատապարտել՝ ներողամտությունը բերանում և դատավճիռը՝ սրտում:

Քանի չի կարելի ասել, որ այլևս խիղճ չկա, հետևաբար, տեր աստված, դրա մասին խոսելու համար կանգ չենք առնի: Պարզապես այլևս ոչ ոքի չեն արդարացնում: Մահացած անմեղության վրա երդվում են բոլոր ցեղերի դատավորները, քրիստոնյաներն ու հակաքրիստոնյաները, որոնք ի վերջո նույնն են, անհարմարավետի մեջ իրար միացած: Պետք չէ միայն քրիստոնյաներին մեղադրել: Մյուսները ավելի մաքուր չեն և պակաս կեղտոտ գործերի մեջ չեն խառնված: Գիտեք, թե ինչի են վերածել այն տներից մեկը, ուր ինչ-որ ժամանակ ապրել է Դեկարտը: Գժանոցի: Այո, ընդհանուր խելացնորություն է, ընդհանուր հալածանք: Մենք մեր հերթին ստիպված ենք դրան հասնել: Դուք կարողացաք նկատել, որ ոչինչ չեմ խնայում, և գիտեմ նաև, որ դուք էլ այս բոլորի մասին ինձնից պակաս չեք մտածում: ՈՒրեմն, քանի որ մենք բոլորս դատավորներ ենք, բոլորս մեղավոր ենք մեկս մյուսիս առջև, բոլորս քրիստոնյաներ ենք մեր էժան ու հասարակ ձևով, մեկ առ մեկ խաչված և միշտ առանց գիտակցելու: Բոլոր դեպքերում ամեն ինչ այդպես կմնար, եթե ես, Քլամանսս, չգտնեի ելքը, միակ լուծումը, ճշմարտությունը...

Ոչ, կանգ եմ առնում, սիրելի բարեկամ, ոչնչից մի վախեցեք: Բաժանվելու եմ ձեզնից, արդեն իմ դռանն ենք: Մենակության մեջ և հոգնած, ինչ եք ուզում, մարդ կամավոր մարգարե է դառնում: Ի վերջո ես այն եմ, ինչ կամ, քարեղեն անապատի, մշուշի և հոտած ջրերի մեջ ապաստանած, մեր շատ միջակ ժամանակներին համար մի սուտ մարգարե: Առանց միսիայի եղիա, ջերմությամբ և ալկոհոլով լցված, կռնակը տված այս բորբոսնած դռանը, մատը բարձրացրած դեպի մի ցածր երկինք, անեծքով ծածկելով անօրեն մարդկանց, որոնք ոչ մի դատապարտության չեն կարող դիմանալ, որովհետև ընդհանրապես չեն կարող դիմանալ, սիրելիս, և ամբողջ ցավն այդ է: Նա, ով հարում է մի օրենքի, դատավճռից չի վախենում, որովհետև այդ դատավճիռը նրան իր տեղն է դնում, իր իսկ հավատացած օրենքի տրամադրությամբ: Բայց մարդկային տառապանքներից ամենաանտանելին առանց օրենքի դատվելն է: Իսկ մենք

այդ տառապանքի մեջ ենք: Զրկված իրենց պահող արգելակներից, շղթաներից, պատահաբար ազատված դատավորները մեծ եռանդով իրենց գործն են անում: Այդ դեպքում պետք է փորձել նրանցից արագ քայլել: Եվ դա իսկական գժանոց է: Ամեն օր ի հայտ են գալիս և բազմանում են մարգարեներ ու բուժող-փրկիչներ, որոնք շտապում են գտնել մի լավ օրենք կամ ստեղծել մի անխորտակելի կազմակերպություն, նախքան երկրի անապատ դառնալը: Բարեբախտաբար ես արդեն հայտնել եմ մարդկությանը: Ես վախճանն եմ և սկիզբը, ես օրենք եմ հռչակում: Կարճ ասած, ես խոստովանեցնող-դատավոր եմ:

Այո, այո, վաղը ձեզ ասելու եմ, թե ինչ բան է այս ազնիվ մասնագիտությունը: Վաղը չէ մյուս օրը դուք մեկնում եք, ուրեմն մենք պետք է շտապենք: Վաղ եկեք ինձ մոտ, ուզում եք. երեք անգամ զանգ տվեք: Դուք Փարիզ եք վերադառնալու: Փարիզը հեռու է, Փարիզը գեղեցիկ է, նրան չեմ մոռացել: Հիշում եմ նրա վերջալույսերը տարվա մոտավորապես այս շրջանում: Ձոր և կարկափող երեկոն իջնում է ծխից կապտած տանիքների վրա, քաղաքը խուլ հռնդում է, գետը կարծես դեպի ետ է հոսում: Այդպիսի երեկոներին ես թափառում էի փողոցներում: Ես գիտեմ, այժմ էլ թափառում են: Թափառում են՝ ձևացնելով, թե իբր շտապում են դեպի իրենց հոգնած կանայք, դեպի իրենց անհրապույր տունը: Ահ, բարեկամս, գիտեք, թե ինչ է նշանակում մենակ էակը, որ թափառում է մեծ քաղաքներում:

* * *

Ներեցեք, որ ձեզ անկողնում եմ ընդունում, և դրա համար էլ շփոթված եմ: Բան չկա, մի փոքր ջերմություն է, որը բուժում եմ գիհօղիով: Ես սովոր եմ նրա հարձակումներին: Մալարիա է կարծեմ, որով պապ եղած ժամանակս վարակվեցի: Ոչ, կիսով չափ եմ կատակում: Գիտեմ, թե ինչ եք մտածում. դժվար է իմ պատմածների մեջ ճիշտը սխալից անջատել: Խոստովանում եմ, որ դուք իրավացի եք: Ես ինքս... Գիտեք, իմ շրջապատի մի մարդ մարդկանց բաժանում էր երեք խմբի. առաջինները նախընտրում են գաղտնի ոչինչ չունենալ, քան թե ստիպված լինել ստելու, երկրորդ խումբը նախընտրում է ասել, քան թե պահելու ոչինչ չունենալ և, վերջապես, երրորդ խմբի մարդիկ՝ որոնք միևնույն ժամանակ սիրում են և սուտը, և գաղտնիքը: Ձեզ եմ թողնում ընտրել, թե ես որ խմբին եմ լավագույնս սազում:

Բայց ինչ նշանակություն ունի: Ստերը ի վերջո ճշմարտության չեն առաջնորդում մարդուն: Եվ իմ պատմությունները, ճիշտ կամ սխալ, բոլորն էլ նույն վախճանին չեն միտում, նույն ուղղությունը չունեն: Այդ դեպքում ինչ կարևոր է, թե նրանք ճիշտ են, թե սխալ, եթե երկու դեպքում էլ նրանք իմաստավորվում են իմ անցյալում եղածից և ապագայում լինելիքից: Երբեմն ավելի հստակ ես տեսնում նրա մեջ, ով ստում է, քան նրա՝ ով ճշմարիտն է ասում:

Ճշմարտությունը լույսի նման կուրացնում է: Սուտը, ընդհակառակը, գեղեցիկ կիսամութ է, որը յուրաքանչյուր առարկա արժեքավորում է: Ի վերջո, հասկացեք ինչպես ուզում եք, բայց ես պապ էի նշանակված բանտարկյալների մի ճամբարում:

Նստեցեք, խնդրում եմ: Սենյակն եք զննում: Մերկ է, ճիշտ է, բայց մաքուր է: Մի իսկական Վերմեր, առանց կահկարասու և սպասեղենի: Նաև առանց գրքի. վաղուց դադարել եմ կարդալ: Ժամանակին իմ տունը լիքն էր կիսատ կարդացված գրքերով: Եվ դա զզվելի էր, ինչպես այն մարդիկ, որոնք չաղ լարդից մի կտոր ուտում են, իսկ մնացածը նետել տալիս: Բոլոր դեպքերում այլևս միայն խոստովանություններն եմ սիրում, իսկ խոստովանությունների հեղինակները հատկապես գրում են, որպեսզի չխոստովանեն, որպեսզի իրենց իմացածից ոչինչ չասեն: Երբ ձևացնում են, թե անցնում են խոստովանությունների, ժամանակ է չվստահել, որովհետև նշանակում է՝ պատրաստվում են դիակը զգեստավորել: Հավատացեք ինձ, գիտեմ, թե ինչ եմ ասում: Եվ ես կարճ կտրեցի: Ոչ մի գիրք, ոչ մի ավելորդ առարկա, միայն ամենախիստ անհրաժեշտը, մաքուր և փայլեցված՝ ինչպես դագաղը: Մյուս կողմից, հոլանդական այս անկողիններում, որոնք այսքան չոր են, ձյունասպիտակ սավաններով, թվում է, թե արդեն իսկ պատանքի մեջ ես, մեռնում ես մաքրությամբ ողողված:

Դուք հետաքրքրվում եք իմ պապական արկածներով: Հավատացեք, անսովոր բան չկա: ՈՒԺ կունենամ դրա մասին խոսելու: Այո, ինձ թվում է, որ ջերմությունս պակասում է: Շատ ժամանակ առաջ էր, Աֆրիկայում, ուր պարոն Ռոմելի շնորհիվ պատերազմ էր փոթորկում: Ոչ, չէի խառնվել դրան, վստահ եղեք: Եվրոպական պատերազմից արդեն դուրս էի եկել: Անշուշտ, զորակոչվեցի, բայց ոչ մի անգամ կրակը չտեսա: Ինչ-որ իմաստով դրա համար ցավում եմ: Գուցե դա շատ բան փոխեր: Ֆրանսիական բանակը ռազմաճակատում իմ կարիքը չունեցավ: Այն ինձնից պահանջեց միայն նահանջին մասնակցել: Կարճ ժամանակ հետո ես վերադարձա Փարիզը և այնտեղ՝ նաև գերմանացիներին: Ես հրապուրվեցի դիմադրությամբ, որի մասին սկսել էին խոսել. մոտավորապես այդ ժամանակներում էլ հայտնաբերեցի, որ հայրենասեր եմ: Դուք ժպտում եք: Սխալվում եք: Ես իմ հայտնագործությունը կատարեցի Շադելեում, մետրոյի միջանցքներում: Ինչ-որ մի շուն կորել էր լաբիրինթոսի մեջ: Խոշոր, կոշտ թավամազով, մի ականջը կտրված, զվարճալի աչքերով մի շուն, որ ոստոստում էր՝ հոտոտելով անցորդների ոտքերը: Ես շներին սիրում եմ հնուց եկող շատ նուրբ զգացումով: Սիրում եմ, որովհետև նրանք միշտ ներում են: Նրան մոտս կանչեցի, մի պահ տատանվեց, բայց ակնհայտ համակրանքով սկսեց

ոգևորված պոչը շարժել, ինձնից մի քանի մետր հեռվում: Այդ պահին մի երիտասարդ գերմանացի զինվոր արագ քայլերով ինձանից անցավ: Շան մոտ հասնելով շոյեց նրա գլուխը: Ոչ մի պահ չտատանվելով շունը նրա քայլին հետևեց նույն համակրանքով և նրա հետ անհետացավ: Ատելությունից և մի տեսակ բարկությունից, որ զգացի գերմանացի զինվորի դեմ, պետք էր ընդունեի, որ իմ հակազդեցությունը հայրենասիրական էր: Եթե շունը հետևեր քաղաքացիական հագնված մի ֆրանսիացու, այդ մասին նույնիսկ մտածած չէի լինի: Ընդհակառակը, պատկերացնում էի այս համակրելի կենդանուն գերմանական մի վաշտի սիրելին դարձած, և այդ միտքը ինձ կատաղեցնում էր: Հայրենասիրությանս փորձաքար հանդիսացող այս քնքշությունը լրիվ համոզիչ էր:

Ես հասա հարավային գոտի՝ դիմադրության մասին տեղեկություն ստանալու համար: Բայց հասնելով և տեղեկություն ստանալով, տատանվեցի: Ձեռնարկը ինձ մի քիչ խելառ թվաց, մի խոսքով, ռոմանտիկ: Մանավանդ կարծում եմ, որ ընդհատակի աշխատանքը հարմար չէր ոչ իմ բնավորությանը և ոչ էլ օդասուն գագաթների իմ ճաշակին: Ինձ թվում էր, որ ինձնից պահանջում են օրեր ու գիշերներ գորգագործություն անել մի քարայրում, սպասելով, որ ինչ-որ անբաններ գան ինձ այդ տեղից վանելու, նախ քանդելու իմ գորգը և ինձ քարշ տալու մի ուրիշ քարայր և մինչև սպանելը ծեծելու: Հիանում էի նրանցով, որ տրվում էին այդ խորությունների հերոսությանը, բայց նրանց օրինակին հետևել չէի կարող:

Հետևաբար անցա Հյուսիսային Աֆրիկա, այնտեղից Լոնդոն հասնելու անորոշ մտադրությամբ: Բայց Աֆրիկայում դրությունը պարզ չէր, հակադիր կուսակցությունները ինձ հավասարապես իրավացի էին թվում, և ես մի կողմ քաշվեցի: Ձեր տեսքից կռահում եմ, որ շատ արագ եմ անցնում այս մանրամասնությունների վրայով, որոնք ըստ ձեզ, կարևոր են: Այդպես եմ անում, որովհետև ձեզ դատում եմ ձեր իսկական արժեքով և վստահ եմ, որ դուք այդ բոլորը լավ կհասկանաք, նույնիսկ՝ եթե կես բերան ասեմ: Այնուհետև ես վերջապես անցա Թունիս, ուր մի քնքուշ բարեկամուհի ինձ ապահովեց գործով: Այս բարեկամուհին շատ խելացի մի էակ էր, որ կինոյով էր զբաղվում: Ես նրան հետևեցի դեպի Թունիսի մայրաքաղաք, բայց թե իրականում նա ինչով էր զբաղվում, իմացա միայն Դաշնակիցների Ալժիր ցամաքահանում կատարելուց հետո: Այդ օրը գերմանացիները ձերբակալեցին իմ բարեկամուհուն, ինչպես նաև ինձ, բայց ես ոչ մի հանցանք չունեի: Չգիտեմ ինչ եղավ նա: Գալով ինձ, ոչ մի վատ բան չարեցի, և ծանր մտահոգություններից հետո հասկացա, որ ձերբակալությունը հիմնականում իմ նկատմամբ ապահովության

միջոցառում էր: Ես բանտարկվեցի Տրիպոլիի մոտ մի ճամբարում, ուր ծարավից և ազատազրկումից ավելի էինք տառապում, քան կոպիտ վերաբերմունքից: Դրա նկարագրությունը չեմ անի ձեզ: Մենք, դարի այս կեսի զավակներս, գծագրության կարիք չունենք նման վայրեր պատկերացնելու համար: Հարյուր հիսուն տարի առաջ մարդիկ զգացական են դարձել լճերի և անտառների վրա: Այսօր մենք ունենք խցիկների լիրիզմը: Մի խոսքով, վստահում եմ ձեզ: Դուք հազիվ մի քանի մանրամասն կարող եք ավելացնել. շոգը, ուղղահայաց արևը, ճանճերը, ավազը, ջրի պակասը:

Այնտեղ ինձ հետ մի երիտասարդ ֆրանսիացի կար, որ հավատացյալ էր: Այո, նա հեքիաթի մի ասպետ էր ապահովաբար: Դյուկեկլենի * տիպի, եթե ուզում եք: Նա Ֆրանսիայից անցել էր Իսպանիա, որպեսզի Հյուսիսային Աֆրիկա հասներ: Կաթոլիկ գեներալը նրան բանտարկել էր, և նա, տեսնելով, որ ֆրանկոյական ճամբարում սիսեռը, թող թույլ տրվի ասել, օրհնված է Հռոմի կողմից, նրան նետել էր մի խորունկ տխրության մեջ: Ոչ Աֆրիկայի երկինքը, ուր նա ընկել էր հետո, ոչ ճամբարի ժամանցները նրան այդ տխրությունից չէին ազատել: Բայց խոհերն ու արևը նրան մի քիչ հանել էին բնական վիճակից: Մի օր, հալած կապարից փայլփլող մի վրանի տակ, երբ շնչահատ էր լինում ճանճերի միջև, կրկնեց իր պարսավանքները նրա դեմ, ում հռոմայեցի էր անվանում: Նա մեզ նայում էր շփոթված տեսքով, բազմաթիվ օրերի իր մորուքով: Նրա մերկ կուրծքը քրտինքով էր պատած, նրա ձեռքերը նվագում էին իր կողերի տեսանելի ստեղնաշարի վրա: Նա հայտարարում էր, որ մի նոր պապ է պետք, որ ապրեր թշվառների մեջ, փոխանակ գահի վրա նստած աղոթելու, և որքան արագ լիներ դա, այնքան լավ: Նա մեզ նայում էր իր շփոթված հայացքով, գլուխը շարժելով: «Այո, հնարավորին չափ արագ»,— կրկնում էր նա: Հետո միանգամից հանգստացավ և թախծոտ ձայնով ասաց, որ պապին պետք է ընտրել մեր միջից, պետք է վերցնել մի կատարյալ մարդ՝ իր թերություններով և առաքինություններով, և նրան հավատարմության երդում տալ, միակ պայմանով, որ համաձայներ իր և ուրիշների մեջ կենդանի պահել մեր տառապանքների ընդհանրությունը:

«Մեզանից ով բոլորից շատ թուլություններ ունի»,— ասաց նա: Կատակելու համար ես մատս բարձրացրի, և ես միակ ձեռք բարձրացնողն էի: «Լավ, Ժան-Բատիստը հարմար է»: Ոչ, նա իմ անունը չտվեց, քանի որ այդ ժամանակ ուրիշ անուն ունեի: Նա հայտարարեց, որ ինքն իրեն նշանակելը, ինչպես ես էի արել, առնվազն

---

* Դյուկեկլեն — 16-րդ դարի ֆրանսիացի հայտնի զորավար:

ենթադրում էր նաև ամենամեծ առաքինությունը և առաջարկեց ինձ ընտրել: Մյուսները կատակով, բայց համենայն դեպս լրջության շեշտով համաձայնեցին: Ճշմարտությունն այն էր, որ Դյուկեկլենը մեր վրա ազդել էր: Ես էլ, ինձ թվում է, ամբողջովին չէի ծիծաղում: Նախ գտնում էի, որ իմ փոքրիկ մարգարեն իրավացի էր, և հետո՝ արևը, մաշող աշխատանքը, կռիվը ջրի համար, կարճ ասած, մենք բոլորս մի քիչ ուրիշ տեսակ էինք դարձել: Համենայն դեպս ես իմ պապությունը կատարում էի բազմաթիվ շաբաթներ, և ամեն օր ավելացող լրջությամբ էի վերաբերում դրան:

Իրականում ինչ էր դա նշանակում: Ճիշտն ասած, կարծես մի տեսակ խմբի պետն էի կամ բջիջի քարտուղարը: Մյուսները բոլոր դեպքերում, նույնիսկ նրանք, ովքեր չէին հավատում, սովորություն դարձրին ինձ հնազանդվել: Դյուկեկլենը տառապում էր, ես նրա տառապանքը մեղմում էի: Այդ ժամանակ նկատեցի, որ այնքան էլ հեշտ չէր պապ լինել, ինչպես կարծում էի, և այդ երեկ նորից հիշեցի, երբ դատավորների, մեր եղբայրների մասին այնքան արհամարհական ճառեր էին արտասանում: Ճամբարում մեծ խընդիրը ջրի բաժանումն էր: Ուրիշ խմբեր էլ էին կազմված, քաղաքական և հավատի հիման վրա, և յուրաքանչյուրը իր ընկերներին էր առավելություն տալիս: Հետևաբար, ես սկսեցի մերոնց առավելություն տալ, մի բան, որ արդեն մի փոքր զիջում էր: Նույնիսկ մերոնց մեջ չկարողացա կատարյալ հավասարություն պահպանել: Նայած իմ ընկերների վիճակին և այն աշխատանքին, որ նրանք պետք է կատարեին, սրան կամ նրան առավելություն էի տալիս: Այս տարբերությունները հեռուն են տանում, կարող եք ինձ հավատալ: Բայց վստահաբար ես հոգնել եմ և այլևս փափագ չունեմ այդ ժամանակաշրջանի մասին մտածելու: Ասեմ, որ եկավ մի ժամանակ, որ շրջանակը փակվեց, երբ խմեցի մի մահացող ընկերոջ ջուրը: Ոչ, ոչ, Դյուկեկլենը չէր, նա կարծեմ արդեն մահացել էր, նա իրեն շատ էր զրկում: Հետո, եթե նա այնտեղ լիներ, նրա սիրույն ավելի երկար կդիմանայի, որովհետև սիրում էի նրան, այո, սիրում, ինձ առնվազն այդպես է թվում: Բայց ես ջուրը խմեցի, սա հաստատ է, ինձ համոզելով, որ մյուսները ավելի շատ իմ կարիքը ունեն, քան նրա, որ ամեն դեպքում մեռնելու էր: Ես ինձ պետք է պահպանեի նրանց համար: Այսպես մահվան արևի տակ ծնվում են կայսրություններն ու եկեղեցիները, սիրելիս: Եվ սրբագրելու համար մի քիչ իմ երեկվա ճառերը, ձեզ հայտնելու եմ մեծ գաղափարը, որ ունեցա բոլոր այս բաների մասին խոսելիս, որոնք այլևս նույնիսկ չգիտեմ, ապրելն եմ, թե երազել: Իմ մեծ գաղափարն այն է, որ պետք է ներել պապին: Նախ նա ավելի կարիք ունի ներողամտության, քան ուրիշ

մեկը: Հետո, դա միակ ձևն է ինքն իրեն նրանից բարձր դասելու համար...

Օհ, դուռը լավ ծածկել եք: Այո: Ստուգեցեք, եթե կարելի է: Ներեցեք ինձ, ես կողպեքի տարօրինակ բարդույթ ունեմ: Քնելու պահին երբեք չեմ կարող հիշել, թե սողնակը գցել եմ: Ամեն երեկո պետք է վեր կենամ ու ստուգեմ: Ոչ մի բանի վստահ լինել չես կարող, ինչպես ասել եմ ձեզ: Չկարծեք սակայն, որ դուռը կողպված պահելու այս անհանգստությունը՝ վախեցած կալվածատիրոջ արարք է: Կար ժամանակ, որ իմ բնակարանը չէի կողպում, ոչ էլ ավտոմեքենաս: Ես իմ փողը չէի պահում, կապված չէի իմ ունեցածին: Ճիշտն ասած, մի քիչ ամաչում էի ունենալուց: Եվ հաճախ դահլիճներում իմ ելույթների ընթացքում խորը համոզումով բղավում էի. «Ունեցվածքը, պարոններ, սպանություն է»: Բավականին մեծահոգի չլինելով, որպեսզի իմ հարստությունները բաժանեի կարիքավոր մի աղքատի հետ, ես այն թողնում էի պատահական գողի տրամադրության տակ, այսպիսով հուսալով ուղղել պատահական անարդարությունը: Այժմ ես ոչինչ չունեմ: Հետևաբար իմ ապահովությամբ չեմ մտահոգված, այլ ինքս ինձնով և իմ պատրաստաբանությամբ, ինքնատիրապետումով: Բացի դրանից, ես պետք է վստահ լինեմ, որ իմ փոքր տիեզերքի դուռը ամուր փակված լինի, մի աշխարհ, որի և թագավորն եմ, և պապը, և դատավորը:

Խնդրում եմ, եթե կարելի է, բացեք այս որմնադարանը: Այդ նկարը, այո, նայեցեք այդ նկարին: Չեք ճանաչում: «Արդար դատավորներն» է: Զարմանքից վեր-վեր չեք թռչում: Ձեր դաստիարակությունը պակասներ ունի: Սակայն, եթե թերթերը կարդացած լինեիք, կհիշեիք 1934 թվականին Գենտի Սուրբ Բավոնի եկեղեցում կատարված մի գողություն: Անհետացավ Վան Էյքի նշանավոր «Խորհրդավոր Գառնուկը» խորանի նկարազարդումներից մի պանոն, որ կոչվում էր «Արդար դատավորներ»: Այդ պանոնն ներկայացնում էր ձիավոր դատավորներ, որոնք գալիս էին սուրբ կենդանուն պաշտելու: Դրա տեղը մի հիանալի կրկնօրինակ դրեցին, որովհետև բնանկարը չգտնվեց: Դե, ահավասիկ այն: Ոչ, ոչ, ես ոչ մի դեր չունեմ: «Մեքսիկո-սիտիի» մի հաճախորդ, որին դուք նշմարեցիք անցյալ օրը, հարբեցողության մի երեկո մի շիշ խմիչքով ծախեց նկարը գորիլլային: Մեր բարեկամին ես խորհուրդ տվեցի պատի վրա մի լավ տեղ կախել այն և երկար ժամանակ թողնել: Մինչ գաղտնի ոստիկանները այն փնտրում էին ամբողջ աշխարհում, մեր արդար դատավորները մի քանի տարի տիրություն էին անում «Մեքսիկո-սիտիում», հարբեցողների և խաբեբաների գլխավերևում: Հետո գորիլլան իմ պահանջի վրա այն դրեց պահեստում, այստեղ:

Նա մի քիչ դժկամում էր, բայց վախեցավ, երբ գործը ինչպես պետք էր բացատրեցի: Այդ օրվանից դատարանի այս հարգարժան ներկայացուցիչները իմ միակ ընկերակիցներն են: Ներքևում դուք տեսաք, թե ինչ դատարկություն են դրանք ստեղծել դրամարկղի վերևում:

Ինչու պաննոն չվերադարձրի: Ահ, ա՜հ: Դուք ոստիկանի բնազդ ունեք: Շատ լավ, ձեզ կպատասխանեմ, ինչպես պիտի պատասխանեի քննիչին, եթե որևէ մեկը հայտարարեր, որ այս նկարը սխալմամբ իմ սենյակն է ընկել: Առաջին, որովհետև իմը չէ, այլ «Մեքսիկո-սիտիի» տիրոջը, որը նույնքան արժանի է դրան, որքան Գենտի եպիսկոպոսը: Երկրորդ, որովհետև «Խորհրդավոր Գառնուկի» առջևով անցնողներից ոչ մեկը կարողություն չուներ կրկնօրինակը բնագրից զատորոշելու և, հետևաբար, ոչ ոք իմ պատճառով անիրավված չէր: Երրորդ, որովհետև շնորհիվ այս պատմության, ես զգում էի իմ հզորությունը: Կեղծ դատավորներ են դրված աշխարհի հիացումի առջև, և ես միակն եմ, որ գիտեմ իրականների տեղը: Չորրորդ, որովհետև այս ձևով ես հնարավորություն ունեմ բանտարկվելու, որոշ իմաստով հրապուրիչ մի գաղափար, մի հնարավորություն: Հինգերորդ, որովհետև այս դատավորները գառնուկի մոտ ժամադրության են գնում, երբ այլևս գառնուկ չկա, ոչ էլ անմեղություն, և, հետևաբար, ճարպիկ ավազակը, որ գողացել էր պաննոն, անծանոթ արդարության մի գործիք էր դարձել, որին պետք չէր հակառակվել: Եվ վերջապես, որովհետև այս ձևով ամեն ինչ իր տեղն էր դրվում: Այսպիսով, արդարությունը վերջնականապես բաժանվում էր անմեղությունից, առաջինը խաչ բարձրանալով, իսկ երկրորդը՝ մտնելով այս որմնախորշը, և ես ազատ դաշտ էի ունենում աշխատելու ըստ իմ համոզմունքների: Ես կարող եմ մաքուր խղճով կատարել խոստովանեցնող-դատավորի իմ աշխատանքը, որին հասել եմ այնքան տառապանքներից, կասկածներից և հակասություններից հետո: Արդեն ժամանակն է, քանի որ դուք շուտով գնալու եք, ասել, թե վերջապես այդ ինչ մասնագիտություն է:

Նախքան այդ, թույլ տվեք մի քիչ բարձրանալ, որպեսզի ավելի լավ շնչեմ: Օ՜հ, որքան հոգնած եմ: Իմ դատավորներին իրենց տեղը դրեք և կողպեք: Այժմ խոսենք խոստովանեցնող-դատավորի իմ աշխատանքի մասին: Սովորաբար իմ գրասենյակները գտնվում են «Մեքսիկո-սիտիում»: Բայց մեծ կոչումները շարունակվում են նաև աշխատանքի վայրից դուրս: Նույնիսկ անկողնում, նույնիսկ ջերմության մեջ ես աշխատում եմ: Այս գործը, ճիշտն ասած, չեն անում, այլ ամեն ժամ շնչում են: Չկարծեք, որ հինգ օր ես ձեզ այնքան երկար ճառեր եմ ասել միայն հաճույքի համար: Ոչ, անցյալում բավականին շատ խոսել եմ, աշխատելով որևէ բան չասել: Այժմ իմ ճառերը

նպատակ ունեն: Նրանք իրականում ուզում են ծիծաղները լռեցնել, ինձ օգնել դատապարտությունից խուսափելու, թեև, ըստ երևույթին, ոչ մի ելք չկա: Դրանից խուսափելու ամենամեծ արգելքը այն է, որ մենք առաջինն ենք մեզ դատապարտողը: Ուրեմն, պետք է սկսել դատապարտումը բոլորի վրա տարածելով, առանց խտրության, որպեսզի մեր պարտքը հնարավորին չափ պակաս լինի:

Ոչ ոքի համար ներում չի լինելու, ահա իմ հիմնական սկզբունքը: Ես ուրանում եմ բարի ցանկությունը, հարգելի սխալը, անզգույշ քայլը, մեղմացուցիչ հանգամանքները: Ինձ մոտ չեն օրինում, թողություն չեն բաժանում: Պարզապես գումարում են և հետո ասում. «Այսքան է անում: Դուք խաթարված եք, կնամոլ, ստախոս, արվամոլ, արվեստագետ, և այլն»: Այսպես չոր: Փիլիսոփայության մեջ, ինչպես քաղաքականության, ես կողմ եմ ամեն մի տեսության, որ մարդուն մերժում է անմեղություն, կողմ եմ ամեն մի գործնական միջոցառման, որ նրան հանցավոր է համարում: Սիրելիս, դուք իմ մեջ տեսնում եք ստրկության մի լուսավորված կողմնակից:

Առանց ստրկության, ճիշտն ասած, վերջնական լուծում չկա: Ես դա շատ շուտ հասկացա: Անցյալում ազատության մասին միայն խոսում էի: Առավոտյան նախաճաշին ես այն դնում էի իմ հացի շերտի վրա, ամբողջ օրը ծամում և աշխարհ տանում ազատությամբ հրաշալիորեն թարմացած մի շունչ: Տիրական այս բառով հարվածում էի, ով ինձ հակաճառում էր, ես այն դրել էի իմ ցանկությունների և իմ հզորության ծառայության տակ: Ես այն շշնջում էի անկողնում, իմ քնած ընկերուհիների ականջին, և այն ինձ օգնում էր՝ երբ ցանկանում էի հեռանալ նրանցից: Ես այն սահեցնում էի... Դե լավ, հուզվում եմ և չափը կորցնում: Ի վերջո ազատությունը ես դարձրի շատ անշահախնդիր գործունեության առարկա, և, նույնիսկ իմ միամտության չափը դատեցեք, երկու կամ երեք անգամ պաշտպանել եմ այն, անշուշտ, առանց նրա համար մեռնելու աստիճանին հասնելու, բայց որոշ վտանգի ենթարկվելով: Պետք է ինձ ներել այդ անզգուշությունների համար. չէի հասկանում, թե ինչ եմ անում: Չէի հասկանում, որ ազատությունը վարձատրություն չէ, ոչ էլ շքանշան, որ շամպայն գինիով են նշում: Ոչ էլ, անշուշտ, մի նվեր, քաղցրավենիքի մի տուփ, որ երեխայի նման ձեր մատները լիզեք: Օ՛հ, ո՛չ, ընդհակառակը, ազատությունը տառապարհակ աշխատանք է և երկար տաքածության միայնակ և շատ հոգնեցուցիչ վազք: Շամպայն չկա, բարեկամներ չկան, որոնք բաժակները բարձրացրած, քնքշությամբ քեզ նայեն: Մենակ՝ տխուր ու խոժոռ մի դահլիճում, մենակ՝ բանտախցում և դատավորների դիմաց, մենակ ինքդ քո և ուրիշների նկատողության առաջ, և պետք է որոշես: Բոլոր ազատությունները

վերջանում են դատապարտումով, ահա թե ինչու ազատությունը շատ ծանր է տանելու համար, մանավանդ երբ ոչ ոքի չես սիրում:

Ահ, սիրելիս, ով մենակ է, առանց Աստծո և առանց տիրոջ, նրա համար օրերի ծանրությունը սարսափելի է: Ուրեմն պետք է մի տեր ընտրել, քանի որ Աստված այլևս մոդա չէ, թեև այս բառը այլևս իմաստ չունի և չարժե դրանով որևէ մեկին զարմացնելու փորձ անել: Վերցրեք այնքան լուրջ մեր բարոյախոսներին, որոնք սիրում են իրենց հարևանին և ամեն ինչ, և ի վերջո ոչինչ նրանց չի բաժանում քրիստոնյաների վիճակից, եթե ոչ միայն այն, որ եկեղեցում չեն քարոզում: Ըստ ձեզ ինչն է նրանց խանգարում դարձի գալուց: Հարգանքը գուցե, մարդկանց հարգանքը, այո, մարդկային հարգանքը: Նրանք չեն խայտառակել, նրանք իրենց զգացումները իրենց են պահում: Ես ճանաչում էի, օրինակ, մի աթեիստ վիպագրի, որ ամեն գիշեր աղոթում էր: Դա բոլորովին չէր խանգարում, թե ինչպես էր նա բնութագրում աստծուն իր գրքերում. ինչ ժանգոտություն, ինչ փոշի պիտի ասեր արդեն չգիտեմ ով: Մի շատ ազատամիտ ակտիվիստ, որին ես բացվեցի, առանց վատ նպատակների թևը երկինք բարձրացրեց. «Դուք ինձ նոր բան չեք սովորեցնում,— հոգոց հանեց այդ առաքյալը,— բոլորն այդպես են»: Ըստ նրա, մեր գրողների ութսուն տոկոսը, եթե միայն կարողանար չստորագրել, գրելու և օրհներգելու էր աստծո անունը: Բայց ստորագրում են, ըստ նրա, որովհետև սիրում են իրենք իրենց և ոչ մի բան չեն օրհներգում, որովհետև իրենք իրենց ատում են: Եվ որովհետև, համենայն դեպս, չեն կարող դատելուց դադարել, հետևաբար հարձակվում են բարոյականության վրա: Կարճ ասած, նրանց սատանայությունը առաքինի է: Տարօրինակ ժամանակներ են, իրապես: Ի՞նչ զարմանալի բան կա, որ մտքերը շփոթ են. իմ բարեկամներից մեկը, որ աթեիստ եղած ժամանակ օրինակելի ամուսին էր, հավատքի դարձի գալուց հետո շնացող դարձավ:

Ահ, փոքրիկ, ծածկամիտ սմսեղուկներ, ծաղրածուներ, երկերեսանիներ և, դրանով հանդերձ, սրտաշարժ մարդիկ: Հավատացեք ինձ, բոլորն էլ այդպես են, նույնիսկ եթե երկնքին կրակ տան: Աթեիստ լինեն, թե հավատացյալներ, մոսկվացիներ, թե բոստոնցիներ, բոլոր այդ նորից որդի քրիստոնյաները: Բայց ճիշտն ասած, այլևս հայրեր չկան, ոչ էլ օրենք: Ուրեմն ազատ են և պետք է գլուխները պահեն, որովհետև նրանք մանավանդ ազատություն չեն ուզում, ոչ էլ նրա դատավճիռը: Նրանք խնդրում են, որ ամեն ինչ իրենց առձեռն տրվի, նրանք սարսափելի օրենքներ են հնա-

ռում. նրանք վազում են խարույկներ սարքելու, որպեսզի դրանցով եկեղեցիներին փոխարինեն: Սավոնարոլաներ * են, իսկական սավոնարոլաներ: Նրանք միշտ պատրաստ են հավատալու միայն մեղքին, բայց երբեք ներողամտությանը: Անկասկած նրանք այդ մասին են մտածում: Ներողամտություն. ահա թե ինչ են ուզում նրանք իրենց համար, նրանք ուզում են իրենց արածի հաստատումը, իրենց ուժերի նկատմամբ վստահություն, կյանքի ամբողջական վայելում: Նրանք նաև զգայական էակներ են, դրա համար էլ երազում են նշանդրեքներ, երիտասարդ թարմ աղջիկներ, նվիրված ընկերներ, հրաշալի երաժշտություն: Ես, որ սենտիմենտալ չեմ, գիտեք, թե ինչ եմ երազում. մի իդեալական սեր, որ լցնում է ամբողջ հոգին և մարմինը ցերեկ թե գիշեր, անդադրում գրկախառնումների մեջ, մարմնական վայելքներով և մտային հուզումով լեցուն, և այս թող իրականանար հինգ տարի անընդհատ և թող մահվամբ վերջանար: Ավա՜ղ:

Այն ժամանակ, իդեալական սիրո և նշանդրեքի արարողության փոխարեն կլինի ամուսնություն, կոպիտ ուժի և գավազանի օգնությամբ: Կարևորն այն է, որ ամեն ինչ պարզ է դառնում, երեխայական, որի յուրաքանչյուր արարքը պետք է հրամայվի, որին բարին ու չարը պետք է ցույց տրվի մի անգամ ընդմիշտ ու վերջնականապես: Եվ ես լրիվ համաձայն եմ դրա հետ, որքան էլ սիցիլիացի կամ ճավայեցի լինեմ, թեև երբեք ուղղափառ քրիստոնյա չեմ եղել, որքան էլ համակրանք ունենամ առաջինի նկատմամբ: Ժամանակին, Փարիզի կամուրջների վրա, ես հասկացա, որ ազատությունից վախենում եմ: ՈՒրեմն՝ կեցցե՛ տերը, ով էլ լինի, քանի այն փոխարինում է երկնային օրենքին: «Հայր մեր, որ ժամանակավորապես այստեղ ես... Մեր առաջնորդը, մեր քնքշորեն խիստ պետը, ո՜, վայրագ և շատ սիրված ղեկավար...»: Վերջապես, տեսնում եք, կարևորը այլևս ազատ չլինելն ու զղջալով հնազանդվելն է մի ավելի հարպիկի, քան ինքդ ես: Երբ մենք բոլորս ընդունենք մեր հանցավոր լինելը, այդ ժամանակ դեմոկրատիա կլինի: Պետք է հաշտվել, սիրելի բարեկամ, որ պարտավոր ենք վրեժ լուծել մենակ մեռնելու ստիպված լինելու համար: Մահը մենակ է, մինչ ստրկությունը հավաքական է: Ամեն մարդ իր բաժինը կստանա, բայց ամենակարևորն այն է, որ կստանա ուրիշների հետ: Եվ այսպես, բոլորս ի վերջո միացած ենք, բայց ծնկի եկած, գլուխներս խոնարհած:

Ավելի լավ չէ՞, իսկապես, ապրել հասարակության նմանողությամբ, և դրա համար անհրաժեշտ չէ՞, որ հասարակությունը ինձ նմանվի:

---

* Սավոնարոլա — Դոմինիկյան կարգի իտալացի կրոնավոր:

Սպառնալիքը, անպատվությունը, ոստիկանը այս նմանության սրբա-
գործումներն են: Արհամարհված, հալածված, դժգոհ, ուրեմն կարող
եմ ցույց տալ իմ արժեքը, վայելել իմ ունեցած վիճակը, վերջապես
բնական լինել: Ահա թե ինչու, սիրելիս, հանդիսավորապես ողջունե-
լուց հետո ազատությունը, ես որոշեցի գաղտնորեն և անհապաղ այն
տալ որևէ ուրիշի: Եվ յուրաքանչյուր անգամ, որ կարող եմ, քարոզում
եմ իմ «Մեքսիկո-սիտիի» եկեղեցում, բարի մարդկանց հորդորում եմ
ենթարկվել իշխանության և վայելել ստրկության հարմարավետութ-
յունը, որը ներկայացնում եմ որպես իսկական ազատություն:

Բայց ես խենթ չեմ, ես շատ լավ հասկանում եմ, որ ստրկությունը
մոտակա ժամանակների համար չէ: Դա ապագայի օրինություններ-
ից մեկն է լինելու, ահա ամբողջը: Մինչ այդ ես պետք է կարգավո-
րեմ ներկան և առնվազն ժամանակավոր մի լուծում գտնեմ: Հետե-
վաբար ինձ պետք եղավ ուրիշ միջոց գտնել դատապարտությունը
բոլորի վրա տարածելու համար, որպեսզի այն ավելի թեթև դարձ-
նեմ իմ սեփական ուսերին: Ես գտա այդ միջոցը: Մի քիչ լուսամուտ
բացեք, խնդրում եմ, այստեղ անսովոր տաք է: Շատ մի բացեք,
որովհետև նաև մրսում եմ: Իմ գաղափարը միաժամանակ պարզ
է և բեղմնավոր: Ինչպես անել, որ ամբողջ աշխարհը բաղնիք մտնի,
որպեսզի ես իրավունք ունենամ ինքս ինձ արևի տակ չորացնել:
Ինչպես իմ բազմաթիվ նշանավոր ժամանակակիցները, պիտի ես
բարձրանամ քարոզիչի ամբիոն և անիծեմ մարդկությանը: Ոչ, դ
շատ վտանգավոր է: Մի օր կամ մի գիշեր ծիծաղը կպայթի առան
զգուշացնելու: Ուրիշների վրա արձակված վճռի նետը կշրջ
ուղիղ դեպի ձեզ և այնտեղ վերադառնալով ավերներ կգործի: Ի
անել այդ ժամանակ: Ասացեք: Եվ ահա իմ հանձարի հարվածը:
հայտնաբերեցի, որ տերերի և նրանց մտրակների գալստյան
սպասելիս մենք պարտավոր էինք, հանուն վերջնական հաղթանա
կի, Կոպեռնիկոսի նման, շուռ տալ տրամաբանությունը: Քանի
հնարավոր չէր մյուսներին դատապարտել, առանց անմիջապ
ինքն իրեն դատելու, պետք էր մենք մեզ դատապարտեինք ամենա
խիստ կերպով, ուրիշներին դատելու իրավունք ունենալու համա
Քանի որ յուրաքանչյուր դատավոր ավարտում է մի օր խոստովա
նեցնող դառնալով, պետք է հակառակ ուղղությամբ ճանապա
ելնել և սկզբում խոստովանեցնող լինել որպես դատավոր ավա
տելու համար: Հասկանո՞ւմ եք ինձ: Լավ: Բայց ավելի պարզ լինե
համար ես ձեզ պիտի ասեմ, թե ինչպես եմ աշխատում:

Նախ փակեցի իրավաբանի իմ գրասենյակը, հեռացա Փարիզ
ճանապարհորդեցի: Ես փորձեցի ուրիշի անվան տակ, ուրիշ
վայրում հաստատվել, ուր աշխատելը ինձ հարմար լիներ: Աշխարհ

շատ վայրեր կան, բայց պատահականությունը, հարմարավետությունը, ծաղրը և մահացության անհրաժեշտությունը ինձ ընտրել տվեցին ջրերի և մառախուղների մայրաքաղաքը, որ սեղմված է ջրանցքների արանքում, ուր հատկապես խռնվում են ամբողջ աշխարհից եկած այցելուները: Ես իմ գրասենյակը հաստատեցի նավաստիների թաղամասում: Նավահանգիստների հաճախորդները բազմատեսակ են լինում: Աղքատները փայլուն թաղամասեր չեն գնում, մինչդեռ հարուստ մարդիկ միշտ ավարտում են ձախողելով ու գոնե մեկ անգամ վատահամբավ վայրերում կորցնում են իրենց հոգեկան հավասարակշռությունը: Դուք օրինակը տեսաք: Ես հատկապես հսկում եմ բուրժուաներին, և նրանք այնտեղ թափառում են: Նրանցից է, որ լավագույն արդյունքներ եմ ստանում: Ես նրանցից քաղում եմ, զարմանալի վիրտուոզությամբ քաղում եմ ամենանուրբ հնչյունները:

ՈՒրեմն, որոշ ժամանակ է, ինչ ես «Մեքսիկո-սիտիում» գործադրում եմ իմ օգտակար մասնագիտությունը: Այն նախ և առաջ կազմված է, դուք դրա փորձառությունը ունեցաք, որքան հնարավոր է հաճախ հասարակության առաջ խոստովանելուց: Ես ինձ դատապարտում եմ լայնքով և երկայնքով: Դա շատ դժվար չէ այժմ, երբ ես հիշողություն ունեմ: Բայց՝ ուշադրություն, ես ինձ կոպիտ կերպով չեմ դատապարտում, կրծքիս ուժգին հարվածներ տալով: Ոչ, ես նավարկում եմ ճկունությամբ, բազմապատկում եմ նրբերանգները, նաև շեղումները, ես իմ ճառերը հարմարեցնում եմ ունկնդիրներին, այս վերջինին հարստացնում եմ: Խառնում եմ ինչ ինձ է վերաբերում և ինչ ուրիշներին է վերաբերում: Ես վերցնում եմ ընդհանուր գծերը, այն փորձառությունները, որոնցով միասին տառապել ենք, թուլությունները, որ բաժանում ենք, բարի տոնը, վերջապես օրվա մարդը՝ այնպես, ինչպես հարատեվում է իմ և ուրիշների մեջ: Դրանով ես ստեղծում եմ մի դիմանկար, որ բոլորինն է, և ոչ մեկինը: Մի դիմակ, վերջապես, բավականին նման դիմակահանդեսի դիմակներին, միաժամանակ նման և պարզեցված, և որի առջև ասում են. «Դե, անշուշտ, այս մեկին հանդիպել եմ»: Երբ դիմանկարը ավարտված է, ինչպես այս երեկո, ես այն ցույց եմ տալիս մեծ վշտով. «Ահա, ավաղ, այն, ինչ ես եմ»: Ամբաստանագիրն ավարտված է: Բայց նույն հարվածով այդ դիմանկարը, որ մեկնում եմ իմ ժամանակակիցներին, հայելի է դառնում:

Մոխիրներով պատած, դանդաղորեն մազերս պոկելով, դեմքս եղունգներիցս վիրավոր, բայց ծակող հայացքով ես կանգնում եմ ամբողջ մարդկության առջև, ցուցադրում իմ ամոթները, բայց առանց աչքից կորցնելու տպավորությունը, որ գործում եմ, ասելով. «Ես վերջիններից վերջինն էի»: Այդ ժամանակ, անզգայա-

բար, իմ խոսքի մեջ «ես»-ից անցնում եմ «մենք»-ի: Երբ հասնում եմ «Ահա թե ինչ ենք մենք»-ի, խաղը խաղացված է, կարող եմ նրանց ասել ճշմարտությունը: Ես նրանց նման եմ, անշուշտ, մենք նույն կաթսայի մեջ ենք եփվում: Միայն թե ես մի առավելություն ունեմ, իմանալու առավելությունը, որը ինձ խոսելու իրավունք է տալիս: Վստահ եմ, այդ առավելությունը տեսնում եք: Որքան ես դատապարտում եմ ինձ, այնքան իրավունք եմ ունենում դատելու ձեզ: Ավելին, ես ձեզ մղում եմ ինքներդ ձեզ դատելուն, մի բան, որ ինձ թեթևացնում է: Ահ, սիրելիս, մենք տարօրինակ, թշվառական էակներ ենք և որքան էլ քիչ հետադարձ հայացք նետենք մեր կյանքին, առիթներ չեն պակասում զարմանալու և ամոթահարվելու: Փորձեցեք հիշել ձեր մոռացածը: Վստահ եղեք, որ եղբայրորեն, մեծ զգացումով լսելու եմ ձեր սեփական խոստովանությունը:

Մի ծիծաղեք: Այո, դուք դժվար հաճախորդ եք, ես այդ առաջին հայացքից իսկ հասկացա: Բայց ուշ կամ կանուխ իմ օրինակին կհետևեք, դա անխուսափելի է: Իմ զրուցակիցներից շատերը ավելի զգացական են, քան խելացի, նրանց անմիջապես կարելի է ապակողմնորոշել: Խելացիների հետ պետք է շատ ժամանակ կորցնել: Նրանց բավական է մեթոդը խորապես բացատրել: Նրանք այն չեն մոռանում, նրանք կշռադատում են: Եվ մի օր կամ մյուսը, կիսով չափ որպես խաղ, կիսով չափ որպես հոգեկան բավարարում, նստում են սեղանի առաջ: Դուք, դուք ոչ միայն խելացի եք, դուք շրջահայաց տեսք ունեք: Խոստովանեցեք սակայն, որ դուք այսօր ավելի պակաս եք գոհ զգում, քան հինգ օր առաջ: Այժմ ես կսպասեմ, որ դուք ինձ գրեք կամ վերադառնաք: Որովհետև պիտի վերադառնաք, վստահ եմ: Եվ ինձ կգտնեք նույն վիճակում: Ինչո՞ւ պիտի փոխվեմ, քանի որ գտել եմ ինձ հարմար երջանկությունը: Ես ընդունել եմ երկակիությունը, փոխանակ դրանից հուսահատվելու: Ես հաստատվել եմ դրա մեջ, ընդհակառակը, և այնտեղ գտել եմ հարմարավետությունը, որը ամբողջ կյանքիս ընթացքում փնտրել եմ: Իրականում ես սխալ արեցի ասելով ձեզ, որ կարևորը դատապարտությունից խուսափելն էր: Կարևորը ամեն ինչ ինքն իրեն թույլ տալ կարողանալն է, նույնիսկ սեփական անարժանությունը ժամանակ առ ժամանակ բարձր ձայնով քարոզելը: Ես ինձ նորից ամեն ինչ թույլ եմ տալիս, այս անգամ առանց ծիծաղելու: Ես կյանքիս ձևը չեմ փոխել, շարունակում եմ ինձ սիրել և ուրիշներին օգտագործել: Իմ սխալների խոստովանությունը ինձ թույլ է տալիս ավելի թեթև ձևով վերսկսել և երկու անգամ վայելել սկիզբը՝ շնորհիվ իմ բնավորության, հետո՝ ի հաշիվ իմ հմայիչ զղջումի:

Այն ժամանակվանից, որ ելք եմ գտել, ես ինձ ամեն ինչ թույլ
 եմ տալիս. սիրել կանանց, հպարտ լինել, ձանձրանալ, զղջալ

և նույնիսկ ջերմություն ունենալ, որի բարձրանալը հաճույքով զգում եմ այս պահին: Ի վերջո իշխում եմ, բայց այս անգամ իմ իշխանությունը արդեն մշտական է: Գտել եմ նաև մի գագաթ, ուր մենակս եմ մագլցել և որտեղից կարող եմ ամբողջ աշխարհը դատել: Երբեմն, հեռվից հեռու, երբ գիշերը իսկապես գեղեցիկ է, հեռավոր մի ծիծաղ եմ լսում, նորից սկսում եմ կասկածել: Բայց արագ հաղթահարում եմ ինքս ինձ, ամեն տեսակ էակ և ստեղծագործություն ճզմում եմ իմ անկարողության ծանրության տակ... վերածնվում եմ:

Ուրեմն ձեզ կսպասեմ «Մեքսիկոպիտիում», որքան ժամանակ որ անհարժեշտ լինի: Վստահ եմ, որ կվերադառնաք ձեր հարգանքները մատուցելու ինձ: Խնդրում եմ այս ծածկոցը քիչ բարձրացնել, ուզում եմ ազատ շնչել: Գալու եք, չէ: Ձեզ նույնիսկ ցույց կտամ իմ տեխնիկայի մանրամասները, որովհետև ձեր նկատմամբ մի տեսակ համակրանք ունեմ: Դուք կտեսնեք, թե ինչպես, ամբողջ երեկոյի ընթացքում, նրանց կսովորեցնեմ ստորհոգի լինել: Այս գիշեր իսկ վերսկսելու եմ աշխատել: Չեմ կարող դրանից ձեռք քաշել, ոչ էլ ինձ զրկել այն պահերից, երբ նրանցից մեկն ու մեկը փուլ է գալիս ալկոհոլի օգնությամբ և կուրծքն է ծեծում: Այդ ժամանակ ես մեծանում եմ, սիրելիս, մեծանում եմ, ազատ եմ շնչում, և մինչ դաշտը փռվում է հայացքիս առաջ, ինձ զգում եմ լեռան վրա: Ինչ գինովություն, իրեն զգալ հայր աստված և վատ վարքի ու կյանքի վերջնական վկայագրեր բաժանել: Ես թագավորում եմ իմ հիմար հրեշտակների մեջ, հոլանդական երկնքի գագաթին, դիտում եմ ջրից և մառախուղից դեպի ինձ բարձրացող վերջին դատաստանի բազմությունը: Նրանք դանդաղ են բարձրանում, արդեն տեսնում եմ նրանցից առաջինին: Նրա շփոթված, մի ձեռքով կիսաածկած դեմքի վրա կարդում եմ նրա ընդհանուր վիճակի տխրությունը և անհուսությունը դրանից խուսափել չկարողանալու համար: Եվ ես խղճում եմ առանց վերլուծելու, հասկանում եմ առանց ներելու և, մանավանդ, ահ, վերջապես զգում եմ, որ ինձ պաշտում են: Այո, վեր եմ կենում, ինչպես կարող էի պառկած մնալ: Ես պետք է ձեզնից բարձր լինեմ, իմ մտածածները ինձ բարձրացնում են: Այս գիշերներին, մանավանդ այս առավոտներին, որովհետև անկումը տեղի է ունենում արշալույսին, ես դուրս եմ գալիս, երազուն հայացքով քայլում եմ ջրանցքների երկայնքով: Գունաթափ երկնքում փետուրների շերտերը նոսրանում են, աղավնիները մի քիչ բարձրանում են, տանիքների վրա ընկած վարդագույն լույսի շերտը ավետում է իմ ստեղծագործության մի նոր օրը: Դամրակի վրա առաջին տրամվայը աղմկում է խոնավ օդում և կյանքի զարթոնքն է հնչեցնում Եվրոպայի այս ծայրում,

ուր, նույն պահին հարյուր միլիոնավոր մարդիկ, իմ ենթակաները, դժվարությամբ իրենք իրենց անկողնուց դուրս են քաշում, դառը բերաններով գնալու համար մի աշխատանքի, որը նրանց չի ուրախացնում: Այդ ժամանակ ես մտքով թռածում եմ ինձ ենթարկվող այս ամբողջ երկրի վրա, որը այն չի գիտակցում խմելով աբսենտով ողողված լույսը, որ բարձրանում է: Վերջապես հարբած վատ խոսքերից, ես երջանիկ եմ, ես երջանիկ եմ, ասում եմ ձեզ, ես ձեզ արգելում եմ չհավատալ, որ ես երջանիկ եմ, մեռնելու աստիճան երջանիկ: Օ՛հ, արև, ծովեզերք և քամուց ծեծված կղզիներ, երիտասարդություն, որի հիշողությունը ինձ հուսահատեցնում է:

Ես նորից պառկում եմ, ներեցեք ինձ: Վախենում եմ, որ հոգնեմ, սակայն լաց չեմ լինում: Երբեմն մարդ շփոթվում է, փաստի վրա կասկածում, նույնիսկ, երբ գտնում է լավ կյանքի գաղտնիքը: Իմ լուծումը, անշուշտ իդեալական չէ: Բայց երբ սեփական կյանքը չես սիրում, երբ գիտես, որ պետք է այն փոխել, ընտրություն չունես, այդպես չէ: Ինչպես անել ուրիշ մարդ դառնալու համար: Անկարելի է: Պետք է մոռանալ որևէ մեկ լինելդ, ուրիշի համար ինքդ քեզ մոռանալ, առնվազն մի անգամ: Բայց ինչպես: Իմ նկատմամբ շատ խիստ մի եղեք: Ես այն ծեր մուրացկանի նման եմ, որ չէր ուզում ձեռքս թողնել մի օր, մի սրճարանի պատշգամբում: «Ահ, պարոն,— ասում էր նա,— վատ մարդիկ պարզապես չեն լինում, այլ՝ մարդիկ, որ լույսը կորցրած են լինում»: Այո, մենք մեր լուսատու աստղն ենք կորցրել, մեր առավոտները, մեր սուրբ անմեղությունը, որ ինքն իրեն ներում է:

Լուսամուտից դուրս նայեցեք, ձյուն է տեղում: Օհ, պետք է դուրս գամ: Ամստերդամը՝ քնած սպիտակ գիշերվա մեջ, ջրանցքների մութ նեֆրիտները, ձյունածածկ կամրջատակերը, դատարկ փողոցները, իմ խեղդված ոտնաձայները... Այո, դա հենց մաքրություն է, կարճատև մաքրություն վաղվա ցեխից առաջ: Նայեցեք հսկա ձնագնդերին, որոնք թռչկոտում են ապակիների դիմաց: Դրանք ապահովաբար աղավնիներ են: Նրանք ի վերջո որոշել են ցանկանալ, այս սիրելիները, նրանք ծածկում են ջրերն ու տանիքները փետուրների հաստ շերտով, որոնք դողդողում են բոլոր լուսամուտներին: Ինչ արշավանք: Հուսանք, որ նրանք բարի լուր են բերում: Ամբողջ աշխարհի փրկության լուրը, լսում եք, և ոչ միայն ընտրյալների, հարստություններն ու վշտերը պիտի բաժանվեն, և դուք, օրինակ, այսօրվանից, ամեն գիշեր պիտի քնեք գետնի վրա, ինձ համար: Իրականանում է անիրականալին: Դե լավ, խոստովանեցեք, որ շունչներդ պիտի կտրվեր, եթե հանկարծ երկնքից մի աթոռ իջներ, և ինձ երկինք տաներ, կամ թե հանկարծ ձյունը կրակ դառնար: Չեք հավատում: Ես էլ բոլոր դեպքերում, պետք է տնից դուրս գամ:

Լավ, լավ, խելոք կմնամ, մի մտահոգվեք: Այդպես լուրջ մի ընդունեք իմ հուզական պոռթկումները, ոչ էլ իմ ցնդաբանությունները: Դրանց ես եմ ղեկավարում: Այժմ, երբ ուզում եք խոսել ձեր մասին, ես պիտի իմանամ, որ իմ ոգևորված խոստովանությունների մի նպատակը իրագործված է: Ես միշտ հույս ունեմ, իսկապես, որ իմ զրուցակիցը ոստիկան լինի և ինձ ձերբակալի «Արդար դատավորների» գողության համար: Մնացածի համար ոչ ոք չի կարող ինձ ձերբակալել: Բայց այս գողությունը օրենքի հարվածի տակ է ընկնում, և ես ամեն ինչ կարգավորել եմ ինձ հանցագործ դարձնելու համար. ես պահում եմ այս նկարը և ցույց ես տալիս, ով ուզում է տեսնել այն: Ուրեմն դուք ինձ կձերբակալեք, և դա շատ լավ սկիզբ կլինի: Գուցե հետո կզբաղվեն նաև մնացածով, նրանք ինձ կտոր-կտոր կանեն, բայց մինչ այդ ես մահանալուց այլևս չեմ վախենա, որովհետև փրկված կլինեմ: Հավաքված մարդկանցից վերև դուք գուցե կբարձրացնեք դեռևս թարմ իմ գլուխը, որպեսզի նրանք իմ մեջ իրենց ճանաչեն, և որպեսզի ես նորից ներեմ նրանց, և նրանք ինձ որպես օրինակ ընդունեն: Ամեն ինչ սպառված և շրջանակը վերջապես փակված է, և ես, առանց ինքս ինձ տեսնելու, կավարտեմ կեղծ մարգարեի իմ միսիան, որ բղավում է անապատում և մերժում է այնտեղից դուրս գալ:

Բայց, դժբախտաբար, դուք ոստիկանության հետ կապ չունեք: Դա մի քիչ շատ պարզ ու հասարակ կլիներ: Ինչպե՞ս: Ահ, կասկածում էի, հավատում եք: Այն տարօրինակ համակրանքը, որ զգում էի ձեր նկատմամբ, ուրեմն իմաստ ուներ: ՈՒրեմն Փարիզում դուք իրավաբանի գեղեցիկ մասնագիտությամբ եք զբաղվում: Ես շատ լավ գիտեի, որ մենք միևնույն ցեղին էինք պատկանում: Մենք բոլորս իրար նման չենք արդյոք, որ մեր դիմաց եղած մարդկանց և իրար հետ միշտ նույն հարցերի մասին ենք խոսում, թեև պատասխանները վաղօրոք գիտենք: Դե հիմա պատմեցեք, խնդրում եմ, թե ինչ է պատահել մի գիշեր Սենայի կամուրջների վրա և թե ինչպես ձեզ հաջողվեց բոլորովին վտանգի չենթարկել ձեր կյանքը: Դուք ինքներդ արտասանեցեք այն բառերը, որոնք արդեն տարիներ ի վեր չեն դադարել հնչել իմ գիշերներում, և որ, վերջապես, պիտի ասեմ ձեր բերանով. «Օ, երիտասարդ աղջիկ, քեզ նորից ջուրը գցիր, որպեսզի երկրորդ անգամին առիթ ունենամ մեզ երկուսիս փրկելու»: Երկրորդ անգամ, էհ, ինչ անզգամություն: Ենթադրեցեք, սիրելի պաշտոնակից, որ մեզ բառացի հասկանան: Եվ պետք լինի այն ի կատար ածել: Բռռռ... իսկ ջուրը սառն է: Բայց մի մտահոգվեք, այժմ արդեն շատ ուշ է: Միշտ շատ ուշ է լինելու: Բարեբախտաբար:

ԹՈՄԱՍ ՎՈՒԼՖ

ԵՐԿՐԻՈՍՏԱՅՆԸ

Անգլերենից թարգմանեց
ԱԼՎԱՐԴ ՋԻՎԱՆՅԱՆԸ

Էդ տարի ծառի եղած-չեղածը մորեխը տարավ, էդ տարի ես ձայներ լսեցի... վաղուց էր դա, որդիս... այգին մորեխատար եղավ... է, ինչքան ջուր է հոսել դրանից հետո...

— Ի՞նչ ձայներ:

— Զույգ-զույգ,— ասում էր մեկը,— քսան-քսան՝ կանչում էր մյուսը:

— Չես լսում,— գոռացի հորդ,— բան է ասում:

Ու նորից՝ զույգ-զույգ... քսան-քսան:

— Մարդ աստծո, չե՞ս լսում:

— Բան էլ չկա,— ասում է,— ինչ ես դուրս տալիս:

— Ախր էդ ոնց չկա... ու էլի՝ «զույգ-զույգ... քսան-քսան» ... հիմա հո լսո՞ւմ ես:

— Զահլես տարար, կնիկ,— քնով ես ընկել ու երազի մեջ ես:

— Երազ-մերազ չգիտեմ. հրես, էլի են կանչում:

— Ես հո գիտեի, որ կանչում են, ախր պարզ լսում էի:

Իսկ հերդ թե՝ «պատճառավոր ես, դրանից կլինի, կամ էլ հոգնած ես, ու ականջիդ ձայներ են հասնում»: Հետո զանգերը տվեցին, հերդ վեր կացավ, որ գնա:

— Մի գնա,— ասում եմ,— ինչ կլինի, որ չգնաս,— ոնց որ սիրտս վկայեր, չէի ուզում մենակ մնայի:

— Զույգ-զույգ,— կանչում էր առաջին ձայնը, —քսան-քսան,— ձայն էր տալիս էն մյուսը: Աստված ջան, ես գիտեի, գիտեի, որ մի բան լինելու է: Համ տարին եմ հիշում, համ ժամանակը, հլա օրն էլ վրայից: Էդ տարի մորեխը վրա տվեց, ու ծառերը մերկ մնացին...

Հա ուրեմն, Բեն... Ստիվ... Լյուկ, ուֆ, ասում եմ Լյուկ, Ջին (Լյուկը հաստատ անուս տվեց)... Ինչ էի ասում...

— Ձայները:

— Հա, ասածիդ պես... էդ ինչ էր:

— Նավեր են, մամ, նավահանգստին մոտիկ ենք:

— Հա՛, նավերն են, ճիշտ որ, էս կողմն է նավահանգիստը:

— Չէ, մամ, ուղիղ հակառակ կողմը, մեջքով ես կանգնել, այ էնտեղ:

— Վայթե սխալ ես ասում, որդիս, հաստատ... չե՞ս խաբում, վույ, ճիշտ որ, գլխիս խելք չի մնացել: Գյուղ տեղը կյանքում չես կորչի, էնքան որ մի նշան ունենամ, հա, տղաս, ճիշտ եմ ասում... Էլի նավ է, ոնց որ պառավ կով լինի: Դու էլ հենց էստեղ պիտի ապրեիր: Ոնց էլ գտել ես: Ականջ արա: Մեծ նավ է, ճամփա է ընկնում: Աստված, հորդ կտորն ես. տեղ լինի՝ քոչեք գնաք: Ես որ չլինեի,

աշխարհիս երեսին հայրդ մի անտուն թափառական էր լինելու... Սիրտս ցավում է, որ հիշում եմ՝ դու հեռու, օտար տեղ, օտար մարդկանց մեջ: Պապերիդ երկիրը դարձիր, տղաս, մարդ ամբողջ կյանքում չի կարող թափառական մնալ, տուն դարձիր, տղաս:

Էդ գիշեր ձայներ լսեցի. մեկը կանչում էր... լսո՞ւմ ես, էլի նավեր են: Որ ինձ մնա, տղաս, հենց էդ նավով ճամփա կընկնեմ, կգնամ, ամեն բանը տեղը տեղին կտեսնեմ: Անգլիա կգնամ - քո պապոնք էնտեղից են, հետո՝ Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա էլ, բա: Մտքիս միշտ եղել է Շվեյցարիա գնալ, պիտի որ սիրուն տեղ լինի, ո՞նց են ասում... հա, բնության հրաշք... Վույ, հիմի պարզ լսում եմ. էս կողմն են նավերը: Բա կամուրջն ո՞ւր է, գիշերս կամրջով անցանք ախր:

— Այստեղ է, փողոցի ծայրին, թե՞ չես հիշում ճանապարհը:

— Չեմ հիշում, ինձ հարցնում է՝ չեմ հիշում: Որդիս, իմ հիշածնե-րը քո գրքերի մեջ էլ չկան: Էդ ո՞վ պիտի գրեր: Բան չեմ ասում, փորձել են գրել, պատմել եղած-չեղած պատերազմներից ու կռիվ-ներից, բայց, սուրբ Աստվածածին, իրենք ինչ գիտեն, թե ոնց է եղել, ախր չկային, որ տեսնեին: Գրում են, կարծես վաղուց է եղել, հեռու-հեռու աշխարհներում, բայց ի՞նչ իմանան, որ էդ ժամանակ քամի էր փչում, արևի փայլ կար, որ ծխի հոտը բռնել էր բակը, մայրս երգում էր, որ սագի ճերմակ փետուրներ կային, որ այդ գարնանը անձրև էր եկել, ու գետն ուռչում էր: Իսկ ես հիշում եմ, որ բան էինք խոսում, և որ էդ օրը գետի ափերով մարդիկ տուն դարձան՝ կռվից էին գալիս, ես մեռելների ձայներն եմ հիշում. ու ելումուտը արևի լույսի ու տխրությունն իմ, հիշում եմ՝ ինչպես մարդիկ քայլում էին, իսկ կանայք՝ լալիս Փեթոնի բակում... մարդկանց ոտքերից փոշի բարձրացավ, ու մենք իմացանք, որ կռիվ չկա...

Սուրբ Աստվածածին, հիշո՞ւմ եմ արդյոք... իմ հիշածները սրանք են, որդիս, էսպես է եղել... Երկու տարեկանիցս հիշում եմ արդեն, շա՞տ քիչ բան կա, որ մոռացել եմ...

Մի օր Բոբ Փեթոնն ու քո քեռի Ջորջը թևիցս բռնեցին ու տարան հետները. իրենց արևին Վիլի և Լյուսինդի Փեթոններին էին քան-դակել հոտած, սև ցեխից. փափուկ, ճկուն ցեխ էր, բռիդ մեջ կարող էիր ձև տալ: Մենակ տեսնեի՞ր, ոնց էի ծղրտում, ախր ճանաչում էի էդ սևերին. Վիլին ու Լյուսինդին կապիտան Փեթոնի ստրուկներն էին՝ Աֆրիկայում ծնված ամենասև նեգրերը: Հայրս ասում էր. «Ածուխը դրանց երեսին սպիտակ հետք կթողնի», ատամներն էլ, ժպտալիս, պսպղում էին: Բա էդ ահավոր հոտը, ծանոթ սև նեգրահոտը, որ ոչ մի ջրով չի լվացվում: Խեղճ մայրս չէր դիմանում, սիրտը խառնում էր: Նեգրերը սենյակով անցնում, գնում էին, իսկ հոտը մնում էր:

Էս երկու սատանի ճտերն, ուրեմն, նեգրերին արձան էին կանգնեցրել, ատամների տեղակ խճաքարեր շարել ու ինձ պես մի մատ երեխին էլ բացատրում էին.— Ո՞ւշքդ վրադ պահիր, աղջի, սրանք քեզ մի օր ուտելու են,— ոնց էի լալիս, էսօրվա պես միտքս է: Մի օր էլ երկուսով Վիլ ապորս տարան հնդկացոց

բլուրը, ասում էին՝ բլրին հնդկացիներ կային թաղված, բլրից նավթի պես սև ջուրը իջնում՝ առուն էր լցվում, հերս ասում էր՝ էդ տեղերում նավթ պիտի լիներ, որոշել էին հոր փորել, որ նավթը հանեն ու հարստանան: Վիլն էդ ժամանակ երկուսուկես տարեկան էր, ու քո քեռի Ջորջը նրան ասել էր, թե սև ջուրը հնդկացիների դիակներից են քամում: Ոնց էր լալիս Վիլը: Մեջտեղից ճղվում էր: Մայրս էլ քեռուդ ասաց. «Վիզդ կպոկեմ, մեկ էլ երեխին էդպես լեղաճաք ես արել»:

Էհ, որ մեկը հիշեմ: Ձմռանը բլրի կողմից եղջերու եկավ գյուղ. ցատկոտելով իջավ ու մի քանի քայլ հեռու կանգնած՝ նայեց վրաս: Ես էլ հենց դրա հեղյուրները տեսա՝ սկսեցի լաց լինել. ախր օրումս էդ տեսակ կենդանի չէի տեսել: Նա հետո իր անտառը գնաց, տեսածս տանը պատմեցի, ու մայրս ասաց՝ եղնիկ տեսած կլինես, որսորդներից փախել՝ եկել է մոտդ:

Գարնանը չորս տարիս լրացավ, էդ տարի մեր կողմերում յանկիներ լույս ընկան, երկուսին էս աչքերովս եմ տեսել. թոկից փախած բաներ էին, գողացած ձիերով էնպես արանքը ճղեցին, ոնց որ սատանեքն ընկել էին ետևներից: Կռացած, քրջոտ-մրջոտ մարդիկ էին, ձիերը խելագարի պես մտրակելով՝ էնպես էին առաջ սուրում, որ վզերի պտավոր թաշկինակները, ոնց որ հենց նոր օսլայած ու արդուկած, շփշփացնում էին ուսերին: Մարդիկ գոռգոռում էին, բղավում: Կանայք ամուսիններին էին թաքցնում, մայրս, տրորվելով, Աստված էր կանչում ու ասում՝ էս է, գալիս են: Էդի Փեթոնը, որ էն ժամանակ դեռ երեխա էր, սարսափած մագլցում էր բլուրն ու ճչում.— Գալիս են, գալիս, պապս էնտեղ մենակ է, գալիս են պապիս սպանեն: Ինչ իմանայինք, թե էդ շրջմոլիկները մենակ էին, մեզ թվում էր Շերմանի զորագնդերից մեկը ետևները գցած գալիս են, բայց՝ չէ, մենակ էին, մնացածները մի շաբաթից հազիվ տեղ հասան: Մերոնք սկսեցին կրակել, բայց սրանք, որ տեսան մենակ են ու առանց զորքի, ձիերից թռան ու իրենց մոտիկ սարը գցեցին: Կռվից հետո Բեդֆորդից մարդիկ եկան ձիերն ետ ուզելու, գտան իրենց ապրանքն ու ասացին, որ էն երկուսն են գողացել: Էդ մարդկանցից իմացանք, որ Սեվիեի մյուս ափին Ամանդա Ստիվենսը կամուրջը կրակի էր տվել ու Թեննեսիից եկող զինվորներին մի շաբաթ էնտեղ կանգնեցրել, ինքն էլ մի լավ ծիծաղել էր վրաները: Ասել էր ... սուրբ Աստվածածին, ես միշտ էլ էն կարծիքին եմ եղել, որ Ամանդան դժվար թե էդ տեսակ բան ասած լինի, չնայած շատ մեծ բերան էր. տակից վրայից դուրս էր տալիս, հա ուրեմն, սրանց ասելով զինվորները մնացել էին էն ափին, իսկ Ամանդան թե. «Տնաշեններ, էս բարակ առուն անցնելու համար կամուրջն ինչ եք անում, էդ ինչ անպետք տղամարդ եք, մեր կողմերում տղամարդիկ էդ տեսակ գետերը ք...ով են անցնում»,— ասել էր, ու զինվորներն էլ ծիծաղել էին:

Էդ տարին չէր, որ յանկիները մտան քաղաք ու Մեքրի բիձային բռնեցին, ուզում էին գլխին խաղ խաղալ: Մեքրի բիձան խոշոր,

հաստկեկ մարդ էր. երեսը դեղին, մազը՝ կռինջ: Ասում էին՝ սևի արյուն կար մեջը, ինքն էլ էր ասում: Յանկիների մեծին էլ բացատրեց, որ իրեն հանգիստ թողնեն:

— Թե ապացուցես, որ նեգր ես՝ բաց կթողնենք,— խոստացան: Մեքրին թե՝ կապացուցեմ: — Էդ ինչ,— զարմացան յանկիները: Իսկ նրանց կապիտանն ասաց.— Ես գիտեմ, թե ոնց: Ջիմ, սրան փողոցով մի լավ վազեցրու:

Էդ խարկող արևին Մեքրին ու զինվորը սկսեցին վազել: Երբ ետ եկան, Մեքրին քրտնքի մեջ լողում էր: Ասում են, յանկին մոտեցել, մի լավ հոտ էր քաշել վրայից ու ծիծաղել էր.— Արևս վկա, տղերք, նեգր է, թողեք գնա:

Հիշում եմ, տղամարդիկ գետի ափով քաղաք էին իջնում՝ զորացրվելու, իսկ մենք հավաքվել էինք քեռի Ջոնի բակում, որ նայենք նրանց. հայրս էր էնտեղ, մայրս՝ երեխեքի հետ, Փեթոն-ներն ու Փենթլանդները ամբողջ գերդաստանով, մեկ էլ Ջոն Փեթոնի նեգրերը՝ Վիլին ու Լյուսինդին:

Քո ապուպապն էլ էր էնտեղ, տղաս, պառավ Բիլ Փենթլանդը: Մարդիկ նրան վարպետ Բիլ էին ասում, գիտես թաղիքից ինչ գլխարկներ էր սարքում. բուրդը մոխրաջրով նրա պես ոչ ոք չէր կարողանում մշակել: Հիմի էդ տեսակ գլխարկներ էլ չկան: Էսօրվա պես միտքս է. տարիքն առած մի ֆերմեր գլխարկը մեր տուն էր բերել, որ Սեմը կարկատի, ու ասում էր. «Սեմ, էս գլխարկը պառավ Բիլ Փենթլանդն է կարել ինձ համար, էէ քսան տարի առաջ ու հլա նոփ-նոր է, մենակ մի քիչ վրա գցել է պետք ու մաքրել»:

Ու որ շիտակ խոսենք, իմ պապ Բիլ Փենթլանդը բոլորի կարծիքով էլ գլխով մարդ էր: Իմացած լինես, տղաս, որ քո շնորհքը պապիդ կողմից է գալիս: Նա որ կրթություն ունենար, շատ առաջ կգնար: Կյանքում մի տող չէր կարդացել, բայց ամեն ինչից խելքը հասնում էր: Կաղնու պես մարդ էր, մեռնելուց առաջ լուր է ուղարկում Սեմին թե՝ արի ինձ տես: Սեմը գալիս է ու տեսնում, որ հայրը կրակ է արել ու սաղմոս է կարդում, ինքն էլ ողջ ու առողջ, հետո դառնում է Սեմին թե՝ «Լավ արիր եկար, քեզ բան ունեմ ասելու: Պառկիր էստեղ՝ կարգին խոսենք»:

Սեմին էլ էդ էր պետք, աշխարհիս երեսին նրանից թամբալ մարդ չկար. որ տեղից չհանեիր, օրերով կպառկեր ու լեզվին կտար:

— Պառկեմ, հայրիկ,— ասում է,— հո վատ չեմ:

— Չէ,— ասում է Բիլը,— էսպես լավ հեչ չեմ զգացել, բայց շուտով գնալու եմ, որոշել եմ, որ ժամանակն է, ուզում եմ տունս կարգի գցել՝ հետո գնամ:

— Էդ ինչ ես խոսում, հայրիկ,— ասում է Սեմը,— քեզ բան էլ չկա:

— Հա, ինձ բան չկա հիմա, բայց մինչև դու տեղ հասնեիր՝ տարին կանցներ, չէ, Սեմ, մտքիս դրել եմ գնամ, էս աշխարհում էլ անելիք չունեմ ու ուզում եմ ճամփա ընկնեմ:

— Ոնց թե ուզում ես,— վրա է տալիս Սեմը,— ինչ ես ուզում:
— ՈՒզում եմ մեռնեմ, Սեմ:
— Այ հայրիկ, էդ ինչ ես խոսում, ինչի պիտի մեռնես:
— Էհ,— ասում է Բիլը,— մտքիս կա վաղն էս ժամանակ մեռնեմ, ուզում եմ երեկոյան վեցի կողմերը գնամ, դրա համար էլ ետևիցդ մարդ ուղարկեցի, որ կանչեն:

Հետո հայր ու որդի մի մեծ կրակ են անում ու գիշերն անքուն զրուցում: Ողջ գիշերը քամին ոռնում, կլանչում է, ու, սրանք ողջ գիշեր զրույց են անում: Լուսադեմին կերակուր են սարքում, հետո պառկում ու խոսում են իրար հետ, ճաշը վրա են դնում ու վերսկսում զրույցը, հայրը՝ առողջ, հուժեղ, աշխարհի հետ հաշտ, անդարդ ու անցավ:

Վեցը խփելուն պես, լսում ես, ուղիղ վեցին, շուռ է գալիս, թե՝ պինդ կաց, Սեմ, վեցն անց տասին նորից է դառնում թե՝ մնաս բարով, որդիս, ժամս եկել է, գնում եմ, ու մեռնում է՝ երեսը պատին արած: Էս տեսակ կամքի տեր մարդ էր իմ պապը, ու, որ ճիշտն ասեմ՝ մերոնց բոլորի մեջ էլ էդ բանը կա. որ ժամը գալիս է՝ զգում են: Հերս էլ էդպես գնաց. էդ օրը գնում-գալիս հարցնում էր ինձ ու եղբորս. «Ժամի վեցը կա՞»: — Չէ,— ասում էի,— հայրիկ, դեռ կեսօր է, ու ինքս ինձ մտածում էի, թե ժամի վեցն ինչ է անում: Վեցը խփելուն պես հանգավ. ես կամաց ասացի եղբորս՝ վեցն է: Նա էլ հասկացավ ու գլխով արեց:

Ինչ էի ասում, հա, էդպես խմբով կանգնել էինք բակում, պապս էլ ողջ ու առողջ մեզ հետ, ու նայում էինք անցնող-դարձող զինվորներին: Պապս երկու անգամ ամուսնացած մարդ էր, մի տուն էլ երեխեք ուներ. ութը Մարթա Փեթոնից (հայրս էլ սրանց մեջ), տասնչորսն էլ երկրորդ կնոջից, հա, մի երեխա էլ էն կնկանից ուներ Հարավային Կարոլինայում, ճիշտ է, օրենքով պսակված չէին, բայց պապս երեխային բերել էր տուն, նստեցրել մյուսների կողքին ու ասել. «Էսօրվանից սա ձեր քույրն է», ու պապիս ասածն օրենք էր: Որ մեռածներին ու կռվի տարին զոհվածներին չհաշվենք, հիմա նրա երեխեքն ամենքը իր մեծ ընտանիքն ունի ու հարյուրներով ապրում են լեռների վրա՝ Կատավաբայում, Տեխասում, արևմուտքում՝ Կալիֆոռնիայի ու Օրեգոնի կողմերը, ոստայնի պես տարածվել են, բայց բոլորն էլ մի հատիկ պապիցս են եղել: Նա մենակ էր սկսել ամեն ինչ: Հայրը անգլիացի էր ու հեղափոխության ժամանակ Յենսիում պղնձի հանք էր փորում: Ասում էին՝ Անգլիայում նա մեծ կալվածքներ է թողել մեզ: Հիշում եմ. պապիս մեռնելու ժամանակ հորեղբայր Բոբը եկավ հորս մոտ, ասաց՝ մի բան անենք, բայց բան էլ չարեցին, ծախսերի հետ էր կապված: Պատերազմի վերջանալուն պապս դեռ կար:

Զորքը ցրվում էր, կանայք լալիս էին, զինվորներն ուրախանում ու հենց մի բան էին ասում, կանայք վերսկսում էին լացը: Բոբն էլ էդ ժամանակ զորացրվեց. տասնվեց տարեկան տղա էր, բայց ինձ հասակն առած տղամարդ էր թվում՝ գլխին մետաքսե բարձ գդակ

(տեսնես ՞ր խանութից էր թռցրել), ոտքերն էլ բոբիկ ու էդպես ոտաբոբիկ ու գդակավոր գալիս էր. մենք էլ լաց էինք լինում:

— Պահ, պահ,— ասաց,— էս ինչ լավ ընդունելություն են սարքել:— Խեղճն ուզում էր կատակի տալ ու մեզ ուրախացնել: —Ես էլ կարծում եմ ինձ տեսնեք, կուրախանաք, իսկ դուք լալիս եք: Որ էդպես է, ես գնացի:

— Ախ, Բոբ, զավակս,— ասաց մայրը,— դու կոշիկ չունես, խեղճ երեխաս:

— Չէ,— ասում է,— չունեմ, ճամփին մաշվեցին, էնքան էի շտապում՝ պլոկվեցին, հագիցս դուրս եկան: Բայց որ իմանայի էսպես եք անելու՝ ինձ համար դանդաղ կգայի:

Ոնց էինք ծիծաղում:

Իսկ կանայք, տղաս, ուրիշ բանի համար էին լալիս: Էնքան մարդ էր գնացել ու ետ չէր գալու, բոլորս էլ գիտեինք էդ մասին, բոլորս...

Վերջում ցրվեցինք տուն, ու յոթ օր կերուխում էր: Մենք չունևոր էինք, տղաս, բայց էդ շաբաթ կուշտուկուռ կերանք, ոչ թե օյինբազ բաներ, որ հիմիկվաններն առաջդ են դնում, այլ տեղը տեղին. մի քսան հատ մենակ ճուտ էինք տապակել, խոզի միս խաշել ու ապխտել, կարտոլ էինք դրել ու սիմինդր, լոբի ու գոգերով ճերմակ հաց, տաք-տաք գաթեք, դեղձով, խնձորով բլիթներ, հազար տեսակ ջեմ ու կարկանդակ, վրայից էլ սիդր՝ ինչքան փորներումս տեղ կաներ: Մենակ տեսնեիր, թե ոնց էին ուտում Բոբը, Ռուֆուս Ալեքսանդրն ու Ֆեյթ Փեթոնը. խեղճ մերս ասում էր. «Վայթե մեկ էլ կռվից առաջ եմ կուշտ փորով հաց կերել»,— բայց որ ճիշտն ասեմ ինքն էլ էր նրանց օրին: Ես հինգ տարեկան աղջիկ էի էդ ժամանակ, ինչ եղել-չի եղել հիշում եմ, դրանից առաջ եղածն էլ եմ հիշում, ու միտքս են բաներ, որ դու չես էլ լսել, տղաս, չնայած մեր միջի ուսումնականը դու ես: Էն ժամանակ ամեն ինչ ինքներս էինք անում. մեր կերածը մենք էինք աճեցնում ու բուրդը, որ պիտի գործեինք ու հագնեինք, մեր ձեռքով ներկում էինք, գնում էինք անտառ ընկուզենու կեղև ու պտղի կճեպ, աղտոր ու շամբուկ հավաքելու: Հետո բուրդը ներկում էինք ու էնքան ցայում պղնձարջասպի լուծույթի մեջ, մինչև մեր ուզած փայլուն սևը բռներ: Հիմիկվա ներկերը խանգրած բաներ են: Իմ բռնած կարմիր-կանաչն ու դեղինը անուշ պայծառ էին: Վուշը մանում էին, լեղակում ու սիրուն շապիկ, սավան ու սփռոց կարում: Հիշում եմ՝ մայրս բակում նստած հավ էր փետրում. կծու, թանձր հոտը բռնել էր տուն ու դուռ, ցախատնից կաղնու մատղաշ ոստերը ծխախառն անուշ բուրում էին, չոր, սմքած խոտի միջից քամին կլանչում էր, էդ տարի Սելին մեռավ, նստած թել էի մանում, ու սիրտս նեղվում էր... Հիշում եմ, գետի կողմից մարդիկ էին գալիս ու ձայնում. «ուռա՛, ուռա՛»: Հաստատ ընտրություններ էին եղել, ու կեսը գոռում էր. «Կեցցե Հեյզը»,— մյուսներն էլ՝ «Թիլդենը կեցցե»: Իմ հիշածներն էս են, տղաս, ու սրանք ոչ մի տեղ էլ գրած չեն:

— Բա ձայներն ինչ եղան:

— Էս է, ասում եմ, ախր դրանից սկսեցի, «զույգ-զույգ, քսան-քսան» կանչում էին:

— Էդ ինչ էր,— ասում եմ ինքս ինձ, ու նորից՝ «զույգ-զույգ, քսան-քսան»: Մտածում եմ ու բան չեմ հասկանում, ոչ էլ հաջորդ օրը գլուխ հանեցի, տաօրինակ բան էր, էդ օրը սեպտեմբերի քսանյոթն էր, հիշում եմ, որովհետև երկու օր առաջ, առավոտվա կողմը հերդ իր արհեստանոցում տապանաքար էր տաշում բիվրդեմցի մի կնոջ համար, մեկ էլ ներս է գալիս Մել Փորթերն ու գլուխը դողացնելով կանգնում: Հերդ ասում էր՝ էնպես կապտած ու խեղճ տեսք ուներ, ոնց որ մի ահավոր դժբախտություն պատահած լիներ: Հերդ հարցնում է. «Բա՞ն է եղել, Մել, քեզ էդպես տխուր օրումս չեմ տեսել»:

— Ախ, Վիլ,— ասում է ու գլուխը թափահարում:

— Թե իմանաս ոնց եմ նախանձում քեզ: Ձեռքիդ լավ արհեստ ունես ու քեզ էլ ոչինչ պետք չէ: Ունեցած-չունեցածս կտայի մենակ քո տեղը լինեի:

— Էդ ինչ ես խոսում, Մել,— ասում է հերդ,— դու առաջին կարգի իրավաբան ես, գործդ էդպես լավ, իսկ դու ուզում ես քարտաշի հետ տեղդ փոխել: Քարն էս ձեռքերովս եմ տաշում ու չգիտեմ էլ վաղը գործ կճարվի, թե չէ: Գրողի բաժին դառնա սրա նման գործը,— էդպես էլ ասում է, քո հերը բան ասելուց երկար-բարակ չէր մտածում:— Անիծվի էն օրը, որ խելքս մտավ, պիտի սպասես մինչև մարդ մեռնի, որ հետո էլ մեռնողի բարեկամները քարն ուրիշի գցել տան: Չէ, էս գործն իմ խելքի բանը չէր: Ես օրենք պիտի սովորեի ու իրավաբան դառնայի: Էս մեկը հերդ ճիշտ էր ասում, բոլորն էլ էն կարծիքին էին, որ պարոն Գանտից չտեսնված դատավոր դուրս կգար, էն ճարտար լեզուն, որ նա ուներ: Բայց Մել Փորթերն ասում է. «Ախ, Վիլ, Վիլ, Վիլ, ծնկաչոք շնորհակալ եղիր Աստծուց, որ էդպես բան չես արել: Գոնե հիմա կուշտ փորով հաց ես ուտում ու որ գործից տուն ես գալիս, գիշերը հանգիստ քնում ես»:

— Չէ, Մել,— ասում է հերդ,— հաստատ բան է պատահել:

— Հա, Վիլ,— նորից գլուխն է թափահարում սա,— գիշերներն էդ մարդկանց երեսից չեմ կարողանում քնել: — Ու թեև չի ասում որ մարդկանց, հայրդ գլխի է ընկնում, որ խոսքը էդ Միրզի, Լորենս Վեյնի ու բանտը նստած էն մյուս մարդասպանների մասին է: Մելը դրանց դատապաշտպանն էր ու հենց էդ օրը բանտից էր գալիս. կոշիկներն ու շալվարի փեշերը Նիգերթաունի կարմիր ցեխի մեջ կորած են եղել:

—Ինչ արած, Մել,— ասում է հայրդ,— դու մեղք չունես, ձեռքիցդ եկածն արել ես, հիմա պետք չի, որ էդպես տանջվես:

— Ախ, Վիլ,— ասում է,— ինչ որ կարող էի, արեցի դրանց փրկելու համար, բայց վայթե կախեն, կանայք, երեխեքն ու ազգականներն էլ խնդրում-աղաչում են թե՝ ազատիր մերոնց, ինչքան գլուխ ջարդեցի՝ բան դուրս չեկավ, էս գործից ես կախաղանի հոտ եմ առնում: Ահավոր բան է, դրանց երեխեքը մեծանալու են ամոթի կնիքը ճակատներին, որ իրենց ծնողներին որպես մար-

դասպան կախաղան են հանել: Սրանց երեսից,— ասում է,— քուն չի գալիս աչքերիս:

Էդ օրը հերդ արհեստանոցից տուն եկավ ու ասում է ինձ.— Մեղքս շատ եկավ Մելին, խեղճը ձեռքից եկածն արեց ու ոնց որ մի բան էլ մեղավոր լինի, կարող է մի ճար կա դրանց ազատելու, Մելի վրա գույն չկար, մի շաբաթ աչք չէր կպցրել:

Իսկ ես ասում եմ հորդ,— ինձ լսիր,— նա քեզ հաստատ ձեռ է առնում, դեռ ոչ մի դատապաշտպան քունը չի կորցրել թե՝ վայթե պաշտպանյալիս կախեն: Գրազ կգամ, որ Մելը ուրիշ պատճառով է քնահարամ եղել, դրանք կամ վախենում են փողը լրիվ չստանան, կամ էլ մտմտում են, ոնց անեն, ավելի շատ փող պլոկեն, իսկ որ Մելը գլուխդ լավ յուղել է, էդ հաստատ:

— Էդպես մի խոսի,— ասում է հերդ,— մեղք է:

— Չէ մի, մեղք է, դու հո երեկվա երեխեն չես,— ասում եմ,— էդ պատմության մեջ մի ճիշտ խոսք չկա, ուզում են իրենց խղճաս, դու էլ ամեն ասածի հավատում ես: — ՈՒ ճիշտ հավատում էր. հայհոյում էր, հազար տեսակ հիշոց թափում եկողի գլխին, բայց վերջը համոզում էին, ուզածդ բանը ձեռքից խլում՝ տանում: Մեկը հենց Մել Փորթերի Ռուֆուս եղբայրն էր՝ կապից փախած անտերը, թե երկնքում աստված կա, նա իր արժանի պատիժը պիտի ստանա: Էնքան էր խմում. երեսը ոնց որ լխկած պոմիդոր լիներ: Աղջիկ ժամանակս դրան մի անգամ տեսել էի. Ջիթեր Ալեքսանդրի թևը մտած գիշերով եկել էր սթափության կոմիտեի հավաքին երդում տալու, չնայած մենակ էդ երկուսի խմած արաղը հերիք էր, որ մի նավ լողալով անցներ: Մի օր էդ Ռուֆուս չեղածը գալիս է հորդ մոտ, թե՝ ինձ համար հազար չորս հարյուր դոլարի չեկ ստորագրիր: Որ չեմ հիշում, հերսիցս տրաքվում եմ: Կախել էր պետք դրան, պարանն իմ ձեռքով կձգեի:

— Մի վախենա, Վիլ,— ասում է,— էնպես կանեմ, որ դու շահով դուրս գաս: Ասա իր անունով մի քոռ կոպեկ ուներ բանկում: Հորդ հարցնում եմ.— ինձ ասա, թե էդ հիմարությունն ինչի արիր:

— Եսիմ,— ասում է,— երդում-պատառ եղավ, որ շահով դուրս կգամ:

— ՈՒ դու էլ, խելքի ծարավ, հավատացիր:

— Էս ինձ դաս,— ասում էր,— էլ էսպես բան չեմ անի:

— Կապրենք, կտեսնենք,— ասում եմ: Երկու տարին չէր լրացել, Ռուֆուսը նորից որոշեց խաղ խաղալ մեր գլխին, առանց ամոթի գնացել էր հորդ մոտ, թե՝ հինգ հարյուր դոլարի չեկ տուր: Սրա վրա հերդ էնպես էր կատաղել, որ օձիքից բռնած փողոց էր շպրտել ու ասել.— Թե մեկ էլ էս կողմերն երևաս, կաշիդ կքերթեմ: Հերդ որ գժվում էր, Աստված հասներ: Ոստիկանապետ Բիլ Սմեթերսն էլ մոտերքում է լինում ու կանչում է հորդ.— Որ մեկ էլ գա, ես էլ էստեղ լինեմ, միասին կքերթենք, բայց որ հենց տեղում վերջը տայիք, լավ կլիներ:

— Ճիշտ է,— ասում եմ,— հենց տեղում դրա հաշիվը պիտի մաքրեիր՝ հոգիներս ազատվեր:

— Ախր շատ էի դառնացած, եղած փողն էդ քոսոտ հարբեցողի ձեռքն էր տվել, վեց երեխի տեր էինք: Քիչ էր մնում հերսիցս պայթեի: Էս քեզ դաս,— ասում եմ,— էլ մարդու փող չտաս, ոչ էլ պարտքով տուր, ամուսնացած մարդ ես, ընտանիք, երեխեք ունես ու մենակ նրանց ես պարտական, ուրիշ ոչ ոքի:

— Հա,— ասում է,— էսպես բան էլ չեմ անի:

Ես էլ հավատացի: Երեք օր հետո գնաց քեֆի ու որ տուն եկավ, ոտքի վրա հազիվ էր կանգնում: Ամբրոզ Ռադիկերի մոտից լուր հասցրին, թե՝ եկեք ձեր հորը տարեք: Իրենք չէին կարողացել հախից գային: Վեր կացա գնացի, Աստված, դու ախր հորդ կարգին չես տեսել, քո ժամանակ հոգնած էր, արդեն հասակով: Ռադիկերի նեգրը ինձ ասում էր... գիտես, էլի, էն դեղնած-մեղնած, ծաղկատար երեսով,— ասում էր. «պարոն Գանտը ավելի շատ է խմում, քան չորս տղամարդ միասին», էդ օրը հերդ կանգնել էր բարում ու երկու լիտրանոց տարեկանի օղին քաշել գլուխը:

— Զորանաք,— ասում եմ Ռադիկերին,— դուք էլ կանգնած նայում էիք, կին, երեխեք ունես ու երեսդ բռնել է փող պոկել քո պես ընտանիքավոր մարդուց: Քո պեսների հերն եմ անիծել, ձեզ քաղաքից քշել է պետք,— ասում եմ ու զգում, որ մի քիչ չափն անցա, բայց ասել պրծել էի: Շատ էր ազդվել, ձայն չհանեց, բայց քիթ ու մռութն իրար խառնած կանգնել էր ու երևի մտքում ասում էր՝ գետինը պատռվեր, տակն անցնեի:

— Էդպես մի խոսի, Էլայզա,— ասում է,— քո մարդու փողն ինձ պետք չէ, ինչ ենք անում էդ փողը, գիտես օրը քանի հոգի է ոտս գալիս, շնորհքով խմում-վեր կենում: Քո մարդուն խելքից հանողը մենք չենք: Թող պարոն Գանտը երդվի, որ էլ խմիչք չի առնելու բերանը, չուզողն էլ ես լինեմ: Նա էն մարդն է, որ իրավունք չունի խմելու: Գոնե մի բաժակ խմեր, ու դրանով բանը վերջանար: Բայց մի բաժակը նրա բերանն էլ չի թրջում, կես շշից հետո նոր զգում է, որ ինքը խմել է: Չնեղանաս, Էլայզա, բայց քո մարդը տեղով փորձանք է: Դու չգիտես,— ասում է,— գլուխն ինչ տարօրինակ մտքեր են գալիս: Մի օր ձայնը գլուխը գցած՝ սկսեց Լիդիայի մասին՝ խոսել: Երդում-պատառ էր լինում, թե Լիդիան հարություն է առել ու եկել իր ետևից:

— Ահա, ահա,— գոռում էր,— մի դրան նայեք,— ու մատով ցույց էր տալիս սենյակում ինչ-որ տեղ, բացատրում, թե Լիդիան ուսիս վրայով իրեն է նայում:

— Բան էլ չկա, Վիլ,— համոզում՝ ենք,— աչքիդ է երևում:

— Չէ, Լիդիան է,— գոռում է,— միք խաբի, ճամփիցս էլ հեռու, թե չէ կտամ կսպանեմ: — Էդ՝ խոսքի վրա երկու լիտրանոց կիսատ շիշը շպրտեց վրաս, հրաշքով փրկվեցի, տեսա շիշը վրաս է գալիս՝ գլուխս իջեցրի, դարակում ինչքան բաժակ կար փշուր-փշուր եղավ: Հետո ծնկի եկավ ու սկսեց աղաչել մեռածին.— Լիդիա, փոքրիկս, ասա, որ ներում ես ինձ... տեսեք, տեսեք, ոնց է աչքերը

փայլեցնում, Աստված, դու ինձ ներիր, էնտեղից եկել է, որ ինձ անիծի: — Վախներիցս չորացել էինք, իմ Դեն նեգրը հենց էդ ժամանակ ծլկեց ու մի քանի օր չէր երևում, սևերը մեզնից սնահավատ են, լավ վախեցել էր:

— Կվախենա, բա ոնց,— ասում եմ,— և բանը մենակ սնահավատությունը չէ: Էնպես որ ասի, Ռադիկերն աչքերը չռեց վրաս. — ուզում ես ասել էդ բոլորը լուրջ էր, Էլայզա:

— Ինչ իմանամ,— ասում եմ,— բայց ինքս էլ եմ շատ տարօրինակ բաներ տեսել, ու թե էդ բոլորը ճիշտ է, ուրեմն մեռածները մեկ-մեկ հարություն են առնում:

Ռադիկերը գույնը գցեց.— իսկ ո՞վ էր էդ Լիդիան,— հարցնում է,— էդ անունով կին նա ճանաչե՞լ է:

— Հա,— ասում եմ,— բայց էն ժամանակ նա դեռ ամուսինս չէր, ու չգիտեմ ով է:

— Հո նրա առաջին կինը չէ՞, էն, որ մահացել է,— պոկ չի գալիս Ռադիկերը:

— Հենց ինքն է,— ասում եմ,— պարոն Գանտն էդ կնոջից վախենալու պատճառներ շատ ունի,— էլ ուրիշ բան չավելացրի, չասի, որ հերդ, Լիդիայից բացի, երկու կին էլ ջոկ է առել, որ նրանից առաջ էն կողմերում ամուսնացել ու բաժանվել է մի ուրիշ կնոջից: Մարդիկ մենակ էդ մեկի մասին գիտեին: Ամաչում էի Մեգի Էֆիրդի մասին որևէ մեկին պատմել: Էն ժամանակ ամուսնացած-բաժանված մարդ առնելը ամոթ-խայտառակություն էր, իսկ մարդաթող կինն ու դուրս ընկածը մի հաշիվ էին: Մինչև ամուսնանալս որ իմանայի, բա ես քո հորը կառնեի ու էդպես կխայտառակվե՞ի: Մի տարվա ամուսիններ էինք, նոր իմացա: Հերդ ինքն իր բերանով ասաց: Խեղճ միսիս Մեյսոն, ինչ՞ եր քաշեց էդ խեղճ կինը. որ ամուսնացանք մեզ հետ էր ապրում. ուզում էր Վիլին հունի մեջ գցել ու հետո նոր իր ընտանիքում կարգ ու կանոն հաստատել. համոզել, որ Ջոնն ու Էլեր Բիլզը միանան:

Ջոնն ու Լիդիան Միսիս Մեյսոնի առաջին ամուսնուց էին: Ինձ ասում էր.— Էլայզա, քանի կարող եմ, քեզ կօգնեմ, էնքան որ Էլերին համոզեմ ձեռք քաշի մարդուցդ ու պատվով վերադառնա իր մարդու՝ Ջոնի մոտ: Էլ ուրիշ բան չեմ ուզում էս աշխարհում: Գոնե հանգիստ կմեռնեմ: Ասում էր ու լալիս.— դու չգիտես, իմ քաշածը դու չգիտես: Հետո ինձ պատմեց, թե ոնց էին եկել էստեղ, դեռ Միդնեյում հանդիպել էին Վիլին, նա էլ էր գալիս հարավում ապրելու, Ջոն Արթուրի մոտ քարտաշի գործ էր ճարել, սկզբում ընկեր-բարեկամ չուներ, ախր հերդ յանկի էր, էդ ժամանակ մարդիկ դեռ դժվար էին հաշտվում նրանց հետ:

Ինքն էլ պատմում էր, որ Բալթիմորում էլ մերոնց չէին սիրում: — Գալս պատահական ստացվեց,— ասում էր,— մտքիս կար արևմուտք գնալ, տղա ժամանակվանիցս ուզում էի, բայց Ջոն Արթուրը գրեց, թե՝ էստեղ լավ գործ կա, արի:

Էն ժամանակ հորդ կարծիքով մենք անիծյալ խառնակիչներ էինք ու մեզ կախել էր պետք: Հերդ չէր, որ ուզում էր Լիին ու Ջեֆերսոն

Ինիսին դատի տալ որպես դավաճանների: Հորդ ավագ եղբորը՝ Ջորջին Գեթիսբուրգում սպանել էին, ու պարզ է, նա երկու ձեռքով մեր դեմ էր, մինչև մի օր ինքն էլ ուշքի եկավ ու սկսեց հայհոյել կառավարությանը՝ սևերի օրենսդիրներին Սիդնեյի դեպքերի համար: Էդ ժամանակ էլ օգնեց Ջոն Արթուրին, որ Կոլումբոսում՝ Հարավային Կարոլինայում ուղղիչ տուն բացեն: Էդտեղ աշխարհի ամենասև նեգրերին էին պահում: Դրանք էլ՝ ընտիր հագած, լակում էին, հսրբում, եղած փողերը մսխում ու հաստ-հաստ սիգարներ էին ծխում, գարշահոտ անտերները, ոտքերն էլ կարմիր փայտից սեղաններին էին դնում: Էս բոլորը, ոնց որ ասում եմ, կինոյի մեջ էլ կա. «Ազգի ծնունդ» է վերնագիրը՝ ըստ Թոմ Դիքսոնի գրքի: Հայրդ ասում էր, որ էդ նկարը սկզբից մինչև վերջ ճիշտ է, ու որ ինքը էլ բեթար բաներ է տեսել:

Ինչ էի ասում, հա, հերդ գալիս է միսիս Մեյսոնի տուն, Մեյսոնն ու աղջիկը՝ Լիդիան նրան կենվոր են վերցնում:

— Շատ ուրախացանք,— ասում էր միսիս Մեյսոնը,— մենք մենակ էինք, տանը տղամարդ չկար, ու որ Վիլը եկավ, մեզ ավելի ապահով զգացինք, Վիլն իսկական տան տղամարդ էր: Նրա հավասարը ես որ չեմ տեսել:

Ինչ որ ճիշտ էր, ճիշտ, հորդ խելքն ու միտքը էստեղ-էնտեղ թափառելն էր, բայց նրա պես տան տղամարդ քաղաքում չկար, ձեռքից ամեն ինչ գալիս էր: Առավոտները զարթնում էիր, կրակը բուխարիկում թեժ: Չէր թողնում, որ սպասեիր, գնայիր-գայիր մինչև կրակ լիներ: Լավ էլ ուտող էր ու դրա համար օջախը միշտ տաք էր պահում: Ասում էի՝ քո նման կրակ անել ես էլ եմ կարող, ամեն անգամ կես շիշ կերոսին ես լցնում, հեչ խիղճ ունես, մի օր կտաս կվառես բոլորիս,— էդ ինչ տեսակ անխնա, անհոգ մարդ էր քո հայրը, նրա սարքած կրակից ծխնելույզը դղրդում էր ու տունը հիմքից ցնցում:

Էն պատմության համար ես մենակ հորդ չեմ մեղադրում: Պառավին ասում էի.— միսիս Մեյսոն, ոնց՝ որ դուք Վիլի մասին մինչև ձեր տուն գալը ոչ մի բան չգիտեիք, նա հո նույն քաղաքում էր ապրում, ոնց էլ լիներ մի երկու բան կիմանայիք Մեգի Էֆիրդի հետ ունեցած կապի մասին, էս քաղաքն էսքան փոքր, ու դուք էդպես անտեղյակ:

— Գիտեինք,— խոստովանեց,— աղջկա հայրն ու եղբայրներն էին ստիպել, որ ամուսնանա, ու Վիլը նրանց երեսից էդ աղջկան ոնց որ չէր սիրում: Դրա համար էլ բաժանվեց:

— Գիտեիք,— ասում եմ,— ու թողեցիք, որ գա ինձ առնի, իր ամուսնացած-բաժանված տեղովը, գոնե մի կերպ հասկացնեիք:

— Չէ, բան էլ չասացին, որ մնայի իրենց ասելուն, կյանքում չէի իմանա: Մեր ամուսնությունից մի քանի ամիս անց հին կաղնե— փայտե պահարանն էի սրբում, որ հորդ շապիկներին տեղ անեմ, մեկ էլ աչքովս ընկավ նամակների մի կապոց: Ձեռքս առա ու էն է, ուզում էի կրակը գցել, բայց ոնց որ մի ձայն ինձ ասեր՝ կաց: Ոնց որ

մեկը էդ նամակները հատուկ ինձ համար պահած լիներ: Ամեն բան տեղում էր՝ Մեգի Էֆիրդից ամուսնալուծվելու թղթերն էլ մեջը: Ես թղթերին էի նայում, էդ թղթերն էլ ինձ... Սպասեցի մինչև իրիկունը հերդ տուն եկավ, հետո կապոցը ձեռքն եմ տալիս ու ասում. — Էսօր գրասեղանդ էի մաքրում՝ հին թղթեր գտա, պահեմ, թե թափեմ,— հարցնում եմ իբր բանից անտեղյակ: Հայրդ գույն առավ, գույն տվեց.— տուր,— ասում է,— տուր էդ թղթերը ինձ,— ու ձեռքը գցում է կապոցին: Հետո էլ թե՝ դու կարդացել ես, Էլայզա:

Ձայն չեմ հանում:

— Դե,— ասում եմ,— ինչ էլ մի չհասկանալու բան է, էստեղ ամեն ինչ տեղը տեղին, սևը սպիտակի վրա գրված է, դու կին ես ունեցել ու ինձ էդ մասին մի բառ էլ չես ասել: Եվ քեզ առա՝ կարծելով, թե մենակ հանգուցյալ Լիդիան է եղել, իսկ դու էլի կին ես ունեցել: Իմ հասկացածն էս է, ուրիշ ոչ մի բան:

— Էդ ամուսնությունն իմ կյանքում մեծ անհաջողություն էր, իմ կամքին հակառակ ստացվեց, չէի էլ ուզում, որ դու էդ մասին իմանաս:

— Էդ հասկացանք,— ասում եմ,— դե հիմի բացատրիր, թե բաժանվելուդ պատճառն ինչ էր:

— Ամուսնալուծությունը ձևակերպեցին անհամապատասխանության հիմունքներով: Ինքը հրաժարվում էր ինձ հետ որպես կին ապրելուց, ուրիշ մեկը կար, դրան էր սիրում, ու նրա ջգրու էլ ինձ հետ ամուսնացավ: Ինձ հետ, ամուսնանալուց հետո, կապ չի ունեցել, որպես մարդ ու կին մի օր էլ չենք ապրել:

— Ով ապահարզան պահանջեց,— հարցնում եմ:

— Ես,— վրա տվեց հերդ,— որոշումն ընդունվեց ըստ իմ դիմումի:

Ձայն չհանեցի, բայց գիտեի, որ խաբում էր: Էդ թղթերը սկզբից մինչև վերջ կարդացել էի: Մեգի Էֆիրդն էր ապահարզան պահանջել:

— Ասում ես նա քեզ կին չի՞ եղել:

— Չէ,—ասում է,— կարող եմ երդվել:

Էստեղ էլ չդիմացա, ախր էդ լինելու բան չէր: Միսիս Մեյսոնի ասելով Մեգի Էֆիրդը դուրեկան, տեսքով աղջիկ էր, մինչև Վիլին առնելը ահագին ուզողներ էր ունեցել, հորդ հետ կամքին հակառակ էր պսակվել:

— Էդ հավատալու բան չի,— ասում եմ հորդ,— գլուխս մի յուղի: Դու ինչ կարող էիր տարի ու կես էդ կնոջ հետ ապրել ու մի անգամ ձեռք չտալ: Ես ախր քեզ լավ գիտեմ, մոտերքում կին լինի, դու պատն էլ կծակես-կանցնես,— ասում եմ ու նայում աչքերին: Իսկ նա հայացքը շուռ էր տվել ու ուրիշ կողմ էր նայում՝ տխմար ժպիտը բերանին:

— Հիմի էս թղթերն ինչ ենք անում,— հարցնում եմ,— պահելուց օգուտ չկա:

— Հա,— ասում է,— ճիշտ ես, ատելով ատում եմ դրանք, կրակ ու պատիժ են գլխիս, լավն էն է վառեմ, վերջանա գնա:

— Բա ոնց,— ձեռք եմ առնում,— վառիր, տհաճ հիշողություններ են արթնացնում:

— Հենց կվառեմ,— ասում է,— արևս վկա, կվառեմ:

— Միսիս Մեյսոն,— հարցնում եմ պառավին,— մինչև Վիլին ձեր տուն թողնելը էս բոլորը դուք գիտեիք:

— Բա ոնց,— ասում է,— գիտեինք,— հիմա քեզ ասեմ ոնց եղավ:

ՈՒ պատմեց ինչ որ գիտեր. որ պատմեց, տղաս, հասկացա, որ էս բոլորը մենակ հորդ մեղքով չի եղել: Ոչ էլ Լիդիային եմ մեղադրում, ես նրան շուտվանից գիտեի, դեռ հորիցդ էլ առաջ, Լիդիան մոր հետ տեղափոխվել էր էստեղ ու գլխարկի փոքրիկ խանութ բացել Ակադեմիայի փողոցում, որտեղ որ հիմա Գրինվուդ Հոթելն է: Իսկական «խանութի գլխարկ» առաջին անգամ Լիդիայի մոտից եմ առել: Զմեռը Յենսի կոմսությունում ուսուցիչ էի ու խնայածս ողջ դրամն էդ գլխարկին տվեցի: Ամիսը քսան դոլար փող էի ստանում ու ինձ հարուստից հարուստ էի կարծում, բա ոնց, նույնիսկ փող էի ետ գցում, որ սեփականության տեր դառնամ: Էդ ետ գցած փողերով հողամասի առաջին վարձը մուծեցի, հրապարակի մոտի անկյունում ընկած հողակտորն էր: Քսաներկու տարեկան չկայի էդ ժամանակ ու ոնց որ մի մեծ բան էր արածս, ոնց որ ես էլ էի սեփականատեր Բոբ Փեթոնի ու գեներալ Ալեքսանդրի պես, ախ, տղաս, էնքան չունևոր էինք, էնքան փորձանք էր եկել գլխներիս կռվի տարիներին, որ սրտանց ուզում էի մի բան էլ ես ունենամ. էսօրվա պես հիշում եմ, առաջին անգամ որ հարկաթերթիկը ստացա, մինչև քաղաք վազելով գնացի: Առանձնապես փող էլ չէր, բայց ոնց էի վազում: Ինձ պես անխելք մեկ էլ ես էի, տղաս, վախենում էի ուշանամ՝ հողը ձեռքիցս առնեն ու մինչև տեղ հասնելս աճուրդի հանեն: Էս հեչ, ինչ էի ասում, հա, Լիդիային ուրեմն ես վաղուց գիտեի, հյուսիս-արևելյան թաղամասում գլխարկի խանութ էր բացել ու նրա մոտից առաջին անգամ իսկական «խանութի գլխարկ» առա: Լիդիային իսկի չեմ մեղադրում, տղաս, իմ գիտենալովս մինչև հորդ հանդիպելը խելքը գլխին, աշխատող կին էր: Հորդ վրա տասը տարով մեծ էր, ու համը հանողը հենց էդ էր: Էս գործում մենակ հորդ չեմ մեղադրում, նա որ Մեյսոնենց տուն եկավ, քսան-քսաներկու տարեկան տղա էր, իսկ Լիդիան էդ ժամանակ երեսունվեցն էլ անց էր: Ջահել աղջիկ չէր, որ խաբեին՝ ճամփից հանեին, փորձված կին էր: Ճիշտ է, հայրդ տեսքով, ուժեղ տղամարդ էր, կանայք նրանից պոկ չէին գալիս, բայց Լիդիայի տարիքի կինը պիտի արժանապատվություն ունենար, ընկել էր հորդ ետևից ու վզից էր կախվում: Ես որ մեռնեի էլ՝

էդ բանը չէի անի: Մայրն էլ էր ասում.— ախ, Լիդիաս, Վիլի համար գժվում էր: — Ամբողջ կյանքում կարգին, նամուսով կին էր եղել, տանը մնացած աղջիկ էր, խանութ ուներ, ու մարդիկ նրան հարգում էին:

— Էդ ինչ էր անում,— պատմում էր միսիս Մեյսոնը,— Վիլին հանգիստ չէր տալիս, ետևից վազում էր: — Հորդ էլ լավ գիտես. կնիկարմատ տեսնելիս ճռները թուլանում էին: Էս անգամ էլ փորձանքի մեջ ընկավ. Լիդիան հղիացավ, ու հորդ խելքը մտավ թե՝ «ինձ խայտառակությունից փրկելու համար պիտի ամուսնանաս հետս»:

Հայրդ գլուխը կորցրել էր: Հետո ինձ պատմում էր, որ Լիդիային չի սիրել ու չի էլ ուզեցել հետն ամուսնանալ: Վերջը որոշել էր նրան ուղարկել Վաշինգտոն՝ բժշկի մոտ ու նամակ էր գրել Ջիլին: Էդ ժամանակ Ջիլը դեռ հարավ չէր տեղափոխվել ու հորաքրոջդ՝ Մերիի հետ ապրում էր Վաշինգտոնում, բրուտ էր էնտեղ: Եղբայրն էր, պիտի ձեռք բռներ: Լիդիային ուղարկեցին Վաշինգտոն, չգիտեմ հետո ինչ եղավ-չեղավ, Ջիլը մարդու բան ասողը չի, ես էլ սիրտ չունեի հարցնելու, էդ կինը ժամանակից շուտ ծննդաբերեց: Ցավերը գնացքի մեջ էին բռնել, տուն դառնալու ճանապարհին մի փոքր քաղաքով անցնելիս: Ուղեկցորդը Ջիլին օգնել էր, որ Լիդիային կայարան հասցնեին, իսկ դա դեռ մի օր չանցած թողել, տուն էր եկել: Շատ սրտոտ կին էր: Էս պատմությունն, իհարկե, մարդկանց ականջն է ընկնում, ու հերդ ուզած-չուզած ամուսնանում է Լիդիայի հետ: Քաղաքում, պարզ է, հորդ թշնամաբար էին նայում. նա յանկի էր, ոնց որ մենք էինք ասում՝ սատանի յանկի, որ եկել էր մեր քաղաք ու տեղի կանանց էլ ճամփից հանել: Մի կին-լիներ, էլի ոչինչ, բայց երկրորդը համը հանում էր: Ստիպված էին քաղաքից հեռանալ: Հենց էդ ժամանակ էլ որոշեցին գնալ Ալտամոնտ. Լիդիան թոքախտավոր էր, ու հայրդ մտածեց, որ լեռնային օդը օգտակար կլինի նրան, երևի վախենում էր, որ ինքն էլ է հիվանդ. էդ կնոջ հետ ապրել էր ու կարող էր վարակված լինել: Առաջին անգամ, որ հորդ տեսա, ոնց որ ուրվական լիներ. երեսը դեղնած, ինքն էլ՝ կաշի ու ոսկոր, ինչեր էր քաշել խեղճը... Երբ Լիդիան ունեցած-չունեցածը ծախեց ու խանութը փակեց, հայրդ նրան միսիս Մեյսոնի հետ ուղարկեց Ալտամոնտ, իսկ ինքը որոշեց արհեստանոցի գործերը կարգի բերել, որ ձեռքը մի քիչ փող ընկնի, նոր գնա: Հորդ ու Լիդիայի մասին էսքան բանը գիտեի, մեկը գլխարկի առևտուր էր անում, մյուսն էլ արհեստանոցում գլուխը կախ իր բանին էր:

Հիմի պատմեմ քեզ էն մյուս կնոջ՝ Էլեր Բիլզի մասին: Սիդնեյից գալուց առաջ նա հորդ հետ կապ չուներ, ճանաչում էր որպես իր տալի՝ Լիդիայի ամուսին, բայց Ջոնն ու ինքը հորդ պես հասարակ քարտաշին

բանի տեղ դնողը չէին, մանավանդ որ խայտառակել էր իրենց ընտանիքը: Ոնց էին կատաղել ու փրփրել, որ Լիդիան երեխով էր, հորդ հետ ոչ խոսել, ոչ էլ երեսը տեսնել էին ուզում, ատում էին նրան. հայրդ էլ նրանց տանել չէր կարողանում: ՈՒ արի տես, որ կես տարի հետո էդ Էլեր Բիլզն իր չունեցած ամոթը կորցրած վեր կացավ եկավ Ալտամոնտ: Ճիշտն ասած, նրան էլ մեղադրել չէր լինի. նրա Ջոն Բիլզ կոչված ամուսինը շատ անպետք ու անբան մարդ էր, չէր կարողանում կնոջը պահել: Սա էլ գրել էր սկեսրոջը, թե գալիս եմ: Լիդիան ու միսիս Մեյսոնը վախեցել էին հորդ ասեին, որոշել էին, որ կգա՝ մի բան կմտածեն: Մի օր հայրդ գալիս է տուն, որ մեր տիկինը ներկված, ճոթվորած բազմել է: Հայրդ էնքան էր ատում էդ կնոջը, որ ուզում է գլուխն առնի գնա տնից: Բայց Էլերը վեր է կենում ու իր նորաձև սանրվածքով ու շքեղ գլխարկն էլ գլխին մոտենում է հորդ, հետո էլ իր շաքար ձայնով, թե՝ «Վիլ, ինձ չես ուզում համբուրել, Վիլ»: Լիրբը, Վիլը որ Վիլ լիներ, հենց էս խոսքի վրա վիզը պիտի ոլորեր:

— Վիլ, արի հաշտվենք, Վիլ,— ասում է:

Ոնց էլ երեսը բռնում էր էդքան բանից հետո հաշտությունից խոսել, էդ էլ քիչ էր՝ կնկա ու զոքանչի ներկայությամբ քսմսվում էր էդ մարդուն:

— Ինչ եղել է, եղել, Վիլ,— ասում է ու հերդ ստիպված պաչում է էդ կնկան:

— Տեղն էր քեզ,— ասում էի հորդ,— քո պես անխելքներին էդ էլ է քիչ: — ՈՒ գիտես, չէր վիճում հետս, լուռ ընդունում էր իր սխալ լինելը:

Էլեր Բիլզ ասածդ փոքր-մոքր, մի տեսակ սև ու սպիտակ կին էր. մաշկը ճերմակ, մազերը՝ ղշի թև, աչքերն էլ ածխի զույգ կտոր: Խոսում էր ալարկոտ, փափուկ-ծորուն ձայնով, ոնց որ մի կուշտ քնել ու նոր վեր էր կացել: Հենց առաջին անգամ տեսա, ասի՝ լրբի մեկն է. խելքն ու միտքը տղամարդկանց ճամփից հանելն ու նրանց ունեցվածքը տակով անելն էր: Սուտ չեմ խոսի, դուրեկան կին էր. մարմինը, բանը տեղը, մաշկն էլ մաքուր՝ վրեն մի բիծ չկար: Հերդ էլ էր ասում՝ լավիկն է... Ինչի լավիկը չէր լինի, ես էլ որ մատս մատիս չտայի՝ սիրուն էլ կլինեի, լավիկն էլ, որ առավոտից իրիկուն երեխա չպահեինք, ու մեր տեղը եփող-թափող լիներ, մենք էլ սիրուն կլինեինք:

— Ճիշտ ես,— ասում էր հերդ,— ճիշտ:

ՈՒղիղ Լիդիայի քթի տակ էդ անզգամը սկսում է հորդ հետ սիլի-բիլի անել, առավոտից իրիկուն վրա—գլուխն էր շտկում, շպարվում, որ օր-օրի հորդ խելքահան անի: Էդ նույն տան մեջ Լիդիան հիվանդ մեռնում էր. էնքան էր հազում՝ թոքերը բերանն էին

գալիս, մեռնում էր ու լավ էլ տեղյակ էր, թե ինչ է կատարվում, մի օր հորդ ասում է. «Վիլ, ես հիվանդ եմ, գիտեմ, քեզ էլ պետք չեմ, ինձ էլ երկար կյանք չի մնացել ապրելու, գնացեք, ուր ուզում եք, Վիլ: Բայց իմ տան մեջ էդ բանը միք անի, թե դու խիղճ ունես՝ հարսիցս վազն արի»:

Հերդ ասում էր.— Մեղքի տակ ընկա, թե վերևում Աստված կա, պիտի մի օր պատժվեմ:

Էն խեղճ պառավ կնիկն էլ էնտեղ էր տանջվում. տան գործը վրեն, բոլորի համար եփում-թափում էր, իսկ էն ալրաթաթախ ջլթիկը տեղը պնդացրած հորդ էր սպասում. գոնե մտքով չէր անցնում մի բանով էլ ինքը օգներ: Դրա բուրդը քամուն պիտի տային, որ լավ լիներ:

Լիդիայի մեռնելուց հետո էլ փասափուսեն չհավաքեց էդ տնից: Հերդ էլ, պարզ բան է, արդեն գլուխը կորցրել էր ու չէր ուզում, որ սա գնա: Որտեղից որտեղ Զոն Բիլզը եկավ կնոջն այցելելու, գցեց-բռնեց ու տեսավ, որ բանը բանից անցել է, ու էլ չհամբերեց: Մեղքս ինչ թաքցնեմ, Զոնին միշտ էլ փալասանքի մեկն եմ համարել. կարծում էի չտեսնելու կտա, կթողնի, որ կինը դուրս ընկնի, բայց էդ մարդը դեռ նամուս ուներ, գնաց Զոնսոն Միթի՝ Թեննեսի, հյուրանոցում իր համար գործ գտավ, հետո էլ գրեց կնոջը թե՝ արի: Բայց սա նամակ գրեց մարդուն, թե՝ «ես քեզ չեմ սիրում, հետդ չեմ ապրի ու էստեղից էլ ուրիշ տեղ գնացողը չեմ»: Հաստատ որոշել էր ապահարզան ստանալ ու ամուսնանալ հորդ հետ: Հերդ էլ աղոթած էշի պես լսում էր դրան, փողերը քամուն տալիս ու նվերներ առնում էդ կնկան: Խեղճ պառավ Մեյսոնը նեգրի պես բանում էր, արցունքն աչքերին աղաչանք-պաղատանք անում հարսին, որ գնա ամուսնու մոտ. ինքն ասում էր, ինքը՝ լսում: Էլերը մինչև ականջները սիրահարված էր ու հաստատ որոշել էր հորդ իրենով անել: Շուտով Զոն Բիլզից երկրորդ նամակն եկավ, ու հասկացանք, որ մարդու համբերության բաժակը լցվել է. «Շտապ որոշիր անելիքդ,— գրում էր,— քո նազերը տանելու հավես էլ չունեմ: Կամ ինքդ ես գալիս, կամ ես կգամ քեզ տանելու, բայց ականջիդ օղ արա, որ ես եկա, քո կեղտոտ յանկիին իր տան մեջ կսատկացնեմ»:

— Էլերն էս նամակին չպատասխանեց, ու Զոնն իսկապես եկավ, գնացքով եկավ, որ կնոջը տանի: Ախ, ոնց էր վախեցել պառավ Մեյսոնը:

— Էլայզա,— պատմում էր ինձ,— էդ ինչ ահավոր օր էր: Էն աղջիկը վերևի սենյակում էր փակվել, էստեղ Զոնը, լցրած ատրճանակը գրպանը, սենյակն էր չափչփում ու գոռում էր կնոջը. «Կես ժամից դուրս չեկար, սիրողիդ գանգը կփշրեմ»: Վիլը, երեսի

գույնը թռած, դռանը ետ ու առաջ էր անում, էն անաստվածն էլ երկու ոտքը մի կոշիկն էր դրել, թե՝ էստեղ եմ մնում: Վերջը մի կերպ համոզեցին, հասկացրին, որ չգնա՝ արյուն կթափվի, վեր կացավ գնաց Թեննեսի: Բայց չուզելով գնաց, մարդուն ատում էր, տղաս, ու անիծելով գնաց: Դրանից հետո հայրդ ինձ հետ ամուսնացավ. ամուսնացավ, բայց էդ կինը հա գրում էր հորդ: Մի օր էլ չդիմացա ու պարտքս համարեցի Ջոն Բիլզին գրել, որ «ձեր կինը իրեն անվայել է պահում, քանի որ նամակագրական կապի մեջ է ամուսնացած մարդու հետ, և որ իր՝ ամուսնու պարտականությունն է վերջ դնել էդ բանին»: Էլերը հորդ նամակ գրեց, որ ես իր ամուսնուն տեղյակ եմ պահել: Նամակի մեջ ինչ անեծք գիտեր՝ թափել էր հորդ գլխին: Հա, մեկ էլ գրել էր, թե՝ «ես որ գիտենայի դրան ես առնելու, քո մասին ամեն ինչ կպատմեի էդ աղջկան: Էդքանը լսելուց հետո ոչ մի կին չէր ուզենա քեզ առնել, էս հաստատ: Բարով վայելի քեզ: Ինչքան էլ ատեմ կնոջդ, ավելի լավ պատիժ, քան քեզ հետ ամուսնանալը դժվար թե գտնեի նրա համար»: Հերդ էդ օրը տուն եկավ ու նամակը շպրտեց երեսիս:

— Առ,— ասաց,— հերդ եմ անիծել, քո արածներն են, չէ: Դե հիմա լսիր,— ասում է,— ուզում եմ հիմիկվանից իմանաս, իմ տանը դու նրա տեղն ես նստել, որովհետև նա թողեց գնաց. որ չգնար, դու էստեղ չէիր լինի, իմացար, էս մեկը ականջիդ օղ արա:

Ջահել էի, տղաս, հպարտ, որ էդպես խոսեց, շատ նեղացա, վեր կացա, կանգնեցի դռանը, ուզում էի հենց էդ օրը թողնեմ գնամ տնից, բայց արդեն երեխով էի, ու անձրև էր եկել, վարդ ու շուշան անուշ հոտ էին գցել, ցախկեռասը կամացուկ բուրում էր, խաղողը հասնում էր. մութն ընկել էր, ու մարդիկ, դռներին կանգնած, զրույց էին անում, ու ես տեղ չունեի գնալու: «Աստված ջան,— ասում էի,— Աստված ջան, ինչ անեմ»:

Իսկ հերդ վեր կացավ, գնաց Ամբրոզ Ռադիկերի մոտ խմելու: Ամբրոզն ինձ հետո ասաց, որ հարբած ժամանակ աչքին Լիդիան է երևացել, ուզեցել է հետը տանի: Ինչ իմանաս, տղաս, մի գուցե իսկապես Լիդիան է եղել:

— Դրանով հո չպրծանք,— պատմում էր Ամբրոզը,— մի օր էլ կպավ Դենից, թե՝ դու չինացի ես:

Դենին հիշում ես. խոշոր, դեղնած նեգր էր, չեչոտ երեսներով: Հորդ համար էլ ինչ մի դժվար բան էր հարբած-հարբած բաներ երևակայելը: Կպել էր խեղճից, թե՝ «քեզ հատուկ մարդիկ են ուղարկել ինձ սպանելու համար»:

— Ես գիտեմ,— գոռացել էր,— թե դու ինչի համար ես էստեղ, հենց հիմա երկուսիս վերջն էլ կտամ: Գրողի բաժին դառնաս,— ասել էր,— հիմի լեշդ կփռեմ:

— Էնպես էր քրքջում, որ արյունս երակներումս սառել էր,— պատմում էր Ամբրոզը,— հետո էլ սեղանից մի դանակ ճանկեց ու նետվեց բարի կողմը, որ հասնի Դենին: Ահավոր բան էր, մեր խափշիկը տեղում չորացել էր, մի կերպ կմկմում էր. «Դենը մարդու բան չի արել, Դենը ոչ ոքի վատություն չի արել»: — Ստիպված դանակը խլեցինք ձեռքից, ու ես էլ փորձեցի խելք հասկացնել մարդուդ: «Ինձ լսիր, Վիլ,— ասում եմ,— էս խեղճից ինչ ես ուզում: Նա քեզ վատություն չի արել»: Իսկ նա թե՝ «Քեզ ասում եմ՝ չինացի է, զզվանքս գալիս է՝ վրան նայեմ»:

Գժվածի պես էր, նրան բան հասկացնելն անհույս գործ էր:

— Էդ ինչ ես խոսում, Վիլ,— ասում եմ,— քանի տարի էստեղ ես ապրում, ինձանից լավ գիտես, որ նա չինացի չէ:

— Ճիշտ է, միսթահ Գանտ,— իր կողմից վրա է տալիս Դենը, գիտես, էլի, նեգրերին,— ախր ես չինացի չեմ:

— Շատ լավ էլ չինացի ես,— ձեռք չէր քաշում մարդդ,— արևս վկա, քեզ հիմա կմորթեմ:

— Վիլ,— ասում եմ,— մեր Դենը նեգր է, համ էլ չինացի լինելը պատճառ չէ, որ տաս էդ մարդուն սպանես: Ինքդ մտածիր, չինացին էլ մեզ պես մարդ է, Աստված նրանց էլ է մի բանի համար ստեղծել: Ոնց կլինի անմեղ տեղը խփես սպանես, ինչ է թե՝ չինացի է:

— Լավ էլ կանեմ,— ասում է,— սրանք դժոխքից փախած չարքերի ոհմակ են, սրտիցս արյուն են ծծել ու հիմա էլ սպասում են, որ շունչս փչեմ:

— Սա հո միակ դեպքը չէ, Էլայզա,— ասում էր Ամբրոզը:

— Ոնց թե,— զարմանում եմ,— չեմ ուզում՝ էլի Ամբրոզը գլխի ընկնի, որ ես ամեն բան գիտեմ,— ուզում ես ասել Վիլի հետ էլի են էդպես բաներ եղել:

— Շատ,— ասում է,— զարմանալի բան է, ոնց որ ոխ ունենա չինացոց դեմ ու անընդհատ դրանց փորձանքի մեջ է ընկնում:

— Չէ,— ասում եմ,— ոչ էս կյանքում, մի ուրիշ տեղ, կարող է:

— Ոնց թե,— աչքերը չռում է վրաս:

— Սրանից ավել բան չեմ կարող բացատրել, բաներ կան, որ դու չես հասկանում:

— Քո մոտ էլ է էդպես բաներ խոսում,— հարցնում է:

— Խոսում է,— ասում եմ ու վերջակետ դնում: Սկզբում ուզում էի պատմել Ամբրոզին, բայց հետո ասի՝ պետք չէ:

— Շատ լավ ես արել, որ չես պատմել,— ասաց հայրդ:

— Ախր ինչ է եղել, այ մարդ,— հարցնում եմ,— ինչ ես էդ չինացոց գլուխդ գցել: — Ուզում էի հասկանալ, թե բանն ինչ էր, տղաս: Հայրդ միշտ էլ դաժան էր չինացոց նկատմամբ, ատում էր դրանց:

— Վիլ,— ասում էի,— պիտի որ մի պատճառ լինի, մարդիկ առանց պատճառի չեն ատում, դրանց ազգից մեկը քեզ վնաս տվել է, գոնե մի չինացու ճանաչում ես:

— Չէ,— ասում է,— ոչ մեկին էլ չեմ ճանաչում, բայց ինչ տեսել, չեմ տեսել դրանց Բալթիմորի փողոցներում, զզվում եմ:

Տղա երեխա էի, որ Սան Ֆրանցիսկո գնացի. հենց նավից դուրս եկա՝ մի չինացի դեմս ելավ՝ դեղին-դեղին, էդ օրվանից ատեցի էդ քաղաքը, բայց, Աստված վկա, չգիտեմ ինչու եմ զզվում դրանցից: Զարմանք բան է, գուցե իսկապես մի ուրիշ կյանքում, ուրիշ մի կերպարանքով ճանաչել եմ չինացիներին, չգիտեմ:

Քանի տարի հետ, Բոքսերի * ապստամբության օրերին հայրդ տուն եկավ ու վրա տվեց.— Վերջապես, չինացոց պատերազմ են հայտարարել, գնում եմ զինվորագրվեմ: Էլ համը հանեցին: — Երկու ձեռքով դեմ էր չինացոց ու պատրաստ տուն ու տեղը, երեխեքին թողնել՝ կռիվ գնալու:

— Ոչ մի տեղ էլ չես գնա,— ասում եմ,— դու ամուսնացած մարդ, մի տուն էլ լիքը երեխեք ունես: Զինվոր են գրում, թող ուրիշ կամավոր գտնեն, քո տեղն էստեղ է: Համ էլ,— ասում եմ,— քեզ բանակ տանող չկա.— դու հասակդ առած մարդ ես, նրանց ջահել տղերք են պետք:

Էս խոսքս շատ դիպավ հորդ սրտին, ոնց կլինի նրան ասես, թե՝ դու էլ ջահել չես, ու բորբոքվեց. «Որպես տղամարդ, ես էդ ջահելների պես տասը արժեմ, հիմի այլասերվածների դարն է, թե՞ կարծում ես էդ թշվառական հիմարների չափ էլ չկամ, էն որ ծխախոտը բերաններից կախած՝ քարշ են գալիս խաղատների պատերի տակ, խղճուկ բաներ են, ու դու ճիշտ չես խոսում, կնիկ, քո տանդ կտուրն ես քար գցում: Հենց էս րոպեիս նրանց չորսի չափ գործ կարող եմ անել: Որ էդպես խոսեց, էլ չհակառակվեցի, հայրդ շատ ուժեղ մարդ էր, տղաս, պատմում էին, որ արհեստանոցում ութ հարյուր ֆունտանոց քարը բմբուլի պես վեր է թռցրել, իսկ քարի մյուս կողմից բռնած երկու աժդահա նեգրերը քրտնակոխ կուչ ու ձիգ էին լինում:

Որ առաջին անգամ հորդ տարանք Հոպկինսի մոտ, ես ասացի Վեյդ Էլիոթին.

— Բժիշկ, ես իմ ախտորոշումն արել եմ, իմ կարծիքով, ամուսինս էս հիվանդությունը իր ձեռքով վաստակեց, էսպես չլսված բաներ անելով: Մարդիկ ասում էին. «պարոն Գանտ, որպես ինչ ես էդպես տանջվում, իզուր մեջտեղից մի ճղվի, նեգրերին հենց դրա համար ես վարձել, որ ծանր աշխատանքը իրենք անեն»:

---

*Բոքսեր-չինական գաղտնի ընկերության անդամ, 1900 թ. մասնակցեց այս ընկերության բարձրացրած ապստամբությանը, որը ճնշվեց:

— Ախր ինչ կլինի,— ասում է,— նեգրերի հույսին որ մնամ, գործս վարի կգնա:

Միշտ ասում էի բժիշկ Էլիոթին.— Բժիշկ,— ասում էի,— ամուսինս ինքն իր ձեռքով կյանքը կարճացնում է:

— Այո,— ասում էր ինձ,— համաձայն եմ ձեզ հետ, ճիշտ եք ասում: Իսկ հորդ հետ ես կարճ կապեցի. — դու ընտանիքի տեր ես,— ասացի,— ու ոչ մի կռիվ էլ չես գնա: — Բայց, Աստված, էդ ինչ տեսակ մարդ էր. որ բան չասեիր, ուզածդ պահին գործը կթողներ կգնար ուր որ խելքին փչեր՝ էստեղից էնտեղ քոչելը, որ հորդ կինը չդառնայի, իր օրում մի սեփական չոփ էլ չէր ունենա: Մի անգամ Տրումենից նամակ ստացավ, Տրումենը Կալիֆոռնիայում պրոֆեսոր էր, էն պատմածս երկու մարդասպանների անները՝ Էդի ու Լորենսի... աղջիկներին դրանց էր տվել, բայց ինքը ուսումնական, խելքը գլխին մարդ էր: Էդ մարդասպանների հետ նա կապ չուներ, կյանքում իր ձեռքերն արյունով չէր կեղտոտի, նրբագույն բրդից հյուսած շորեր էր հագնում ու ընտիր կաշվե կոշիկներ: ՈՒ էդ Տրումենը նամակ էր գրել հորդ թե՝ արի. «զի տերն իր շռայլ օրհնանքներով հեղեղել է երկիրն այս», էսպիսի բաներ էր գրել մեր ուսյալ պարոնը, էդ ինչ լեզու էր թափել, իր ձոխ, ծաղկեցրած անգլերենով գրել էր հորդ... «եկ, այստեղ է բնության հրաշքը, այստեղ է, ուր առատորեն հոսում է ամեն բարիք՝ բավական անգամ ագահ սիրտը գոհացնելու համար, դեռ ձեռք չի կպել էս հարստությանը, եկ ու մի տասնհինգ տարուց ունևոր մարդ կլինես, վաճառիր կայքդ ու եկ»: Մի խոսքով՝ համոզում էր:

— Պա՛հ, պա՛հ,— ասում եմ,— ինչ-որ շատ է ուզում գնաս, չէ՞:

— Հա,— ասում է հերդ,— նոր տեղ է, նոր երկիր, հավաքվենք գնանք: —Հետո էլ, թե՝ էդ ինչի՞ ես մի տեսակ նայում: Ձայն չեմ հանում, մենակ հարցնում եմ. «դու որ գնաս, մեր բանը ինչ է լինելու»:

— Ձեզ էլ եմ տանում,— ասում է,— Տրումենը գրել է՝ Էլայզային, երեխեքին առ՝ արի:

— Բա ոնց,— ասում եմ,— կգրի, էդպես էլ կարծում էի: — ՈՒզենայի՝ հորդ կպատմեի, բայց չուզեցի գլուխը ցավեցնեմ, ես գիտեի ինչն ինչոց է, քեզ էլ հո կարող եմ պատմել, տղաս, էդ մարդը մի օր եկել էր մնաս բարով ասելու ու աչքերը տնկել էր վրաս:

— Ափսոս, որ գնում եք,— ասում եմ նրան,— ձեր պակասը շատ կզգացվի: — Իսկ նա պլշում է վրաս ու.— հարկավ,— ասում է,— ես էլ ձեր պակասը կզգամ:

— Ես ու ամուսինս՝ պարոն Գանտը, ձեզ շատ կկարոտենք,—

ասում եմ ու որոշում մի քիչ աշխուժացնել խեղճին,— որ տեղ հասնեք, մեզ չմոռանաք, նամակ գրեք, թե ճիշտ էդպես զարմանք տեղ է ու փողոցներում ոսկի է շաղ տված՝ մեզ իմաց արեք՝ գանք, ունեցած-չունեցածներս հավաքենք, գանք: — Իհարկե,— ասում է,— իմ ուզածն էլ էդ է:

Հենց էդ ժամանակ ես ամեն ինչ գլխի ընկա: Դրանից հետո մի քանի տարի անցավ, ու հերդ գնաց Տրումենի մոտ, մեջն իսկի օգուտ չկար, թե ինչ դարդն էր կտրել՝ վեր կացավ գնաց, էդքան էլ փող ծախսեց ու ետ դարձավ եկավ:

— Տեսա՞ր պրոֆեսոր Տրումենին,— հարցնում եմ:

— Տեսա,— ասում է ու մի տեսակ նայում:

— Ոնց է, ինչ է անում:

— Լսիր,— ասում է հայրդ,— էդ մարդն օրնիբուն քեզնից էր խոսում, վայթե պառավ ցնդած հալին սիրահարվել է քեզ:

Ես իսկի չեմ խոսում, որ հորդ չջղայնացնեմ, բայց ամեն ինչ հասկանում եմ:

Էհ, տղաս, ես մենակ մի բան գիտեմ. հերդ աշխարհում ամենից շատ թափառել էր սիրում: Ճիշտ էր ասում Ամանդա Ստիվենսը, էլի... Ամանդան ութ տղա ուներ, ութն էլ գնացին քաղաքացիական կռիվներին մասնակցելու: Մարդիկ գալիս շնորհավորում էին Ամանդային, որ էդպես տղաներ ունի, իսկ նա ասում էր. «Մի գիշերվա մեջ ութն էլ գնացին, ինձ մի բառ չասացին, թե՝ գնում ենք: Որ ինձ խոսք հասներ՝ ութին էլ ետ կբերեի, որ ինձ օգնեին, տուն ու տեղին նայեին»: — Մարդիկ ասում էին.— Մի՞թե հպարտ չես, որ էդպիսի տղաներ ունես:

— Հպարտ, չէ մի,— գոռում էր, վո՛ւյ, էդ ինչ լեզու ուներ էդ կնիկը,— էստեղ հպարտ-մպարտի հարց չկա, տղամարդիկ բոլորն էլ մի սանրի կտավ են, հլա չեմ տեսել մի տղամարդ, որ հինգ րոպե տեղում դադար մնա, ոնց որ քամակները սկիպիդար լցրած լինեն:

Խեղճը վառված էր, տղաներն առանց մի բառ ասելու գնացել էին ու թողել, որ մայրը մենակ նայի տանը: Ամանդայի պես կնիկ մեկ էլ ինքն էր: ՈՒթսունյոթ տարի ապրեց ու մի անգամ չտընքտնքաց: Էն ձմռան ցրտին էլ որ մի տեղ հիվանդ լիներ, կհասներ՝ կօգներ: Պատմում էին, որ Ամանդան ... վույ, Աստված ջան, ես չեմ հավատում, որ նա ասած լինի, մարդ էլ իր աղջկան էդպես բան ասի, այ թե կնիկ էր, հա, պատմում էին, որ Ամանդայի աղջիկը՝ Կլարիսան, էն, որ պսակվել էր Ջոն Բերգինի հետ... սա էն Ջոն Բերգինն էր, որ, քեզ պատմել եմ, քեզ հեռավոր ազգական է մորդ կողմից: Խեղճին էդ Միրզը սպանեց: Հերդ էլ եկել էր տուն ու դարդ էր անում էդի ու նրա դատապաշտպան Մել Փորթերի համար: Ես հորդ ասացի. «կախում են՝ կախեն, լավ էլ անում են, ոնց խիղճները կորցրած սպանեցին էն տղին». խելոք, աշխատող

տղա էր, մի տուն երեխեք ուներ.ու ոչ մեկի խաթրին չէր կպչում: Էդպես էլ խղճամեռ, անսիրտ մարդ կլինի:

Հա, Ամանդայի աղջիկը՝ Կլարիսան, որ պսակվեց, յոթ ամիսը չլրացած երեխա ունեցավ: Էդպես մեկ-մեկ լինում է, ու նրան ոչ ոք չէր մեղադրում, մտքներովս էլ չէր անցնում ուրիշ բան, բայց ծննդկանը խելքը թռցրածի պես ձայնը գլուխը գցեց ու սկսեց ճղճղալ: Բժիշկն էլ ասաց. «Առողջ լավ երեխա է, բան էլ չկա, բայց որ էդ աղջկա ճղճղոցը չկտրեք, երեխան որբ կմնա»:

— Դրա բերանը փակելն ինձ վրա,— ասում է Ամանդան, գնում ննջասենյակ ու նստում ծննդկանի կողքին:

— Մի ինձ նայիր,— ասում է,— քեզ բան էլ չկա, դու շատ լավ ես, ես էլ գիժ խաղացնելու հավես չունեմ:

— Ախ,— ասում է Կլարիսան,— ամոթից կմեռնեմ, ոնց եմ մարդկանց աչքերին նայելու,— ու նորից սկսում է ողբալ:

— Ի՞նչ է եղել,— հարցնում է Ամանդան,— ինչ ես արել, որ էդպես ամաչում ես:

— Բան էլ չեմ արել, բայց երեխես ժամանակից շուտ ծնվեց...

— Եղած-չեղած էդ է ու դրա համար քեզ էդպես կոտորում ես:

— Հա,— ասում է Կլարիսան,— ախր մարդիկ կմտածեն, որ մինչև պսակվելս Ջոնի հետ եղել եմ:

— Էնքա՛ն մտածեն,— ասում է Ամանդան,— դու էլ ասա՝ ո...ս իմս է, ինչ ուզեմ կանեմ: — Էդպես էլ ասում է: Հորդ պատմեցի. «սուտ կլինի», զարմացավ: Ինչ սուտ...

— Հա, ուրեմն, հերդ գնում էր, ես չէի թողնում, «չես գնա», ասում եմ ու ոտքս գետին խփում: Նա էլ տեսավ, որ լուրջ եմ ասում, ու մնաց. մնաց, բայց կյանքում նրա ուզածը մի բան էր՝ թողնել գնալ, կարևոր չի ուր: Էդքան տարի հերդ ապրեց ու չկարողացավ չինացոց հանդեպ իր թշնամանքը մոռանալ:

Էդ ժամանակ դու էլ էիր մեզ հետ, թե չէ, հա, դու կոլեջում էիր, պատերազմը դեռ չէր վերջացել, մենք հորդ հետ վեր կացանք գնացինք՝ ես, Լյուկը, Բենս... խեղճ երեխաս, հեչ կմոռանամ: Բոլորս սպասում էինք, որ հայրդ ուր որ է մեռնելու է (դրանից հետո նա դեռ հինգ տարի էլ ապրեց), բայց մահացավ իմ Բենը, մի տարվա մեջ երեխես գնաց... թաղեցինք եղբորդ... իսկ հերդ, հերդ իր ահավոր քաղցկեղով ապրեց, Աստված, դիմացավ իրեն կրծող էդ նեխած ցավին, որ օր-օրի արմատակալում, տարածվում էր արյան մեջ: Վեյդ Էլիոթն ինձ ասում էր՝ չեմ հասկանում ինչն է պահում ամուսնուդ, չէի հավատում,— որ նրան էլ կենդանի կտեսնեմ, չլսված բան է,— ասում էր,— այսպիսի դեպք ինձ դեռ չի հանդիպել:

— Դուք անունով բժիշկ եք,— ասում եմ,— էդքան մարդ եք վիրահատել, ոնց չեք հասկանում, դուք հո գիտեք բոլոր նշաննե-

ը,— էդպես էի ասում, որ մի խոսք քաշեի, իմանայի ինչ էր մտածում:

— Դուք, անշուշտ, ձեր կարծիքը կունենաք, բժիշկ Էլիոթ,— ասում եմ,— և ես ուզում եմ իմանալ այն, Գրանտի ընտանիքն իրավուք ունի իմանալու: Ինչքա՞ն է մնում ամուսնուս ապրելու,— հարցնում եմ ու նայում ուղիղ աչքերի մեջ: Բայց Էլիոթը ետ ընկավ աթոռին ու սկսեց ծիծաղել:

— Ինչքա՞ն է մնում... պնհոգ եղեք, նա մեզ էլ ճանապարհ կգցի. ու հավատա, էդ մարդու ասածի մեջ ճշմարտություն կար: Նա ինքը տեսքով տղամարդ էր, էն ամենալավ տարիքում, ո՞ւմ մտքով կանցներ... նույնիսկ Վուդրոու Վիլսոնին նայելու համար նրան էին հրավիրում: Անթիվ մարդկանց կյանք էր փրկել, բայց որ հերթը հասավ իրեն, բան չկարողացավ անել: Բժիշկները ձեռքներից եկածն արեցին, ամեն հնար մեջտեղ բերեցին, բայց ինչ օգուտ, էն մարդը վերցրեց ու մահացավ, հորդ մեռնելուց երկու տարի հետո գնաց: Ես էլ Մակգայրին ասացի.— Էդպես է, պարոն Մակգայր, որ ժամանակը գալիս է, էլ փրկություն չկա, չգիտեմ ինչ բան է դա, բայց մի զորավոր ուժ կա, ու որ նա կանչում է, բոլորս էլ գնում ենք:

— Այո,— ասաց,— ճիշտ ես ասում, մի բան կա, որ մեզ տրված չէ հասկանալ:

Մի տարի չանցած Մակգայրն էլ մեռավ, էնքան խմեց՝ մեռավ, էն կնիկն էր մեղավոր: Հիվանդանոցի նեգրը Լյուկին պատմել էր. «Գիշերները հարբում էր ու հսկա արջի պես չորեքթաթ բարձրանում աստիճաններով: Առավոտներն էլ միշտ վիրահատություն ուներ: Ստիպված նստեցնում էի սառը ջրով լի թասը, մեջն էլ սառույցի կտորներ գցում, հետո էլ պառկեցնում տեղը»...

Ինչ էի պատմո՞ւմ, հա, Էլիոթն ասում էր.— Գլուխ չեմ հանում՝ ինչն է ձեր ամուսնուն ուժ տալիս: Մի բան հաստատ է, նա չորս ուժեղ տղամարդ արժի, մեջն էլ ավելի շատ կյանք կա, քան բոլորիս մեջ միասին վերցրած:

Ո՞Ր ճիշտ որ, հորդ մի անգամվա կերածը ուրիշ մարդու տայիր՝ շունչը կփչեր: Մինչև վերջին օրն էլ միանգամից ուտում էր երկու դյուժին ոստրե, մի ամբողջ տապակած հավ, խնձորով կարկանդակ, սրճամանն էլ երեք անգամ դատարկում էր: Ես հորդ գիտեմ-չգիտեմ էդպես էր. հետն էլ հազար տեսակ բանջարեղեն, կարտոֆիլ, լոբի, սիմինդր ու սպանախ էր ուտում: Բժիշկ Էլիոթը հենց սկզբից ասաց, որ բան չի հասկանում:

— Մինչև հիվանդանոց տեղավորվելը հետևեք, որ ճիշտ սընվի,— խորհուրդ էր տալիս ինձ:

— Բա ոնց,— ասում եմ,— ինքը խոստացել է, մենք էլ մեր հերթին կօգնենք: Իսկ ինչ եք խորհուրդ տալիս, որ ուտի,— հարցնում եմ,— հատուկ դիետա՞ է պետք: Որ ոստրե ուտի, ինչ

կլինի որ: — Ոնց էր ծիծաղում Էլիոթը: — Լսեք,— ասում էր,— ո՞վ է տեսել հիվանդ մարդուն էդպիսի դիետա նշանակեն:

— Ախր շատ է սիրում,— բացատրում եմ,— սիրտն էլ ուզում է ուտի, միշտ հիշում է, թե տղա ժամանակ ոնց է դյուժիններով կուլ տվել. որ չթողնեմ, շատ կտխրի:

— Դե լավ,— ասում է Էլիոթը,— թող ուտի, նրան ուտելուց բան էլ չի պատահի, բայց լավ լսեք ինչ եմ ասում. ինձ ավելի շատ նրա խմելն է անհանգստացնում, հետևեք չխմի, հիվանդանոցում ես նրան հարբած չտեսնեմ: Աստծո անունով սաստեք, ես ձեզ լավ գիտեմ,— ասում է,— դուք կարող եք համոզել, ասեք, որ մեկ էլ խմի՝ վերջը կգա, հայտնեք ձեր ամուսնուն, որ դա իմ կարծիքն է:

Պատմեցի հորդ, ասացի, որ ոստրե կարող է ուտել, բայց խմել չի կարելի,— ասացի,— թե չէ դիակդ տուն կբերեն:

— Ինչ ես խոսում, այ կնիկ,— վրա տվեց հերդ,— ես ոնց կարող է էդպես բան անեմ, ով ինձ ասի «խմի», պատուհանից դուրս կշպրտեմ, խմիչքի տեսքից զզվանքս է գալիս: — Էդպես խոստացավ, ու մենք էլ հավատացինք: Բայց արի տես, որ հենց հաջորդ գիշեր քեֆը լավ տուն եկավ, էնքան էր խմել, չէր կարողանում ոտքի վրա կանգնել: Էդ ժամանակ մենք միսիս Բարեթի տանն էինք մնում՝ հիվանդանոցից ոչ հեռու: Հերդ որ հարբած տուն եկավ, մեղքս շատ տվեց էդ կնկան, բարի, աստվածավախ, ժամասեր ու շատ խելոք կին էր, աղջկա հետ էր ապրում, փեսան մի ուրիշ կնկա հետ փախել էր: ՈՒ քո հերը առավոտ գիշերով ներս է ընկնում էս խեղճի տունը, ուշունց տալով, հարայ-հրոցով, հետն էլ գոռում է, թե՝ «սա տուն չէ, անառականոց է, հլա աղջիկներին բերեք»:

Բոլոր կենվորներն արթնացան ու վրա հասան՝ տեսնեն ինչ է կատարվում: Միսիս Բարեթը՝ կիսահագնվել, մենակ գիշերանոցով, ծեծում էր մեր դուռն ու աղաչում.

— Ախ, տիկին Գանտ, լռեցրեք ձեր ամուսնուն, թե չէ նա ինձ կկործանի, դուրս տարեք նրան, իմ տանն այսպիսի բան երբեք չի եղել, ուրիշներն իմանան՝ խայտառակ կլինեմ: — Իր թոռներին միսիս Բարեթը քշել էր կտուր, ու սրանք էնտեղ կապիկների պես ծվարել էին, մարդիկ էլ մի գլուխ փսփսում էին ու նայում մեր կողմը:

Բենս իրեն էնպես նվաստացած էր զգում ու էնպես վիրավորված հոր փոխարեն:

— Որ մեռնի էլ,— ասում էր,— նրան տեղն է: Էսօրվա արածներից հետո մեղքս անգամ չի տա: — Հորդ գրպաններում փնտրեցի ու թաքցրած շիշը գտա. մի քիչ որ անցավ, սկսեց խմելու բան խնդրել:

— Չէ,— ասացի,— սիրելիս,— էլ ոչ մի կաթ, դու հիվանդ մարդ ես, որ էսպես գնա՝ ոտներդ կտնկես:

— Պետքս չի,— ասում է,— լավ է հիմի մեռնեմ, քան էսքան

տանջանքը քաշեմ: — ՈՒ նորից կսեց գոռգոռալ, թե խմելու բան տվեք, բայց տվողն ո՞վ էր: Շիշն իմ ձեռքով վերցրեցի ու դատարկեցի, ինքն էլ քնեց վերջապես: Ես էլ շորերը հավաքեցի ու սնդուկում պահեցի, որ տանից դուրս չգա: Թողեցինք մի լավ քնի, ու որ մյուս օրը զարթնեց, ոնց որ թե լավ էր: ՈՒտել չէր ուզում, ասում էր. «ուտեմ՝ կվատանամ» զոռով տաք սուրճ խմեցրինք, միսիս Բարեթը բերեց: Իսկական քրիստոնյա կին էր՝ բարի, գթասիրտ, հայրդ էլ շատ անհարմար զգաց իրեն էդպես պահելու համար: Իրիկունը որոշեցինք հորդ էլ մեզ հետ տանենք ճաշարան, բոլորս էլ սոված էինք: Իսկ նա թե՝ չէ, դեռ թույլ եմ, դուք գնացեք կերեք: Ասի՝ «գնանք երեխեք», մոտը խմելու բան չկար. եղած-չեղածը թափել էի, տնից դուրս գալ էլ չէր կարող. շորերը՝ սնդուկում, սնդուկն էլ՝ կողպած: Վերջը. ինքը մնաց տանը, մենք գնացինք ճաշելու: Մի ժամ չանցած տուն եկանք, որ ինչ... խմել փռվել է տեղաշորին ու գժի պես երգում է ինքն իրեն: Բենս ասաց.— Մամ, բա ասում էիր եղած խմիչքը թափել ես:

— Էլի որ թափել եմ,— ասում եմ:

— ՈՒրեմն երկու շիշ է ունեցել, մեկը չես գտել, իսկ որ հիմա լավ հարբած է, էդ հանտատ:

— Վայթե մեր գնալուց հետո է ճարել: Մենք որ դուրս եկանք, էս սենյակում խմիչք չկար, ես ախր եղած—չեղածը տակնուվրա արեցի, ինչ-որ մեկը բերել է,— ասաց Բենս,— ու ես էս ոոպեիս կպարզեմ թե՝ ով: Արի միսիս Բարեթին հարցնենք, թե մեր բացակայության ժամանակ մոտը մարդ մտել է, թե չէ:

Խմբով իջանք ներքև՝ միսիս Բարեթի մոտ ու հարցրինք՝ հորդ մոտ հեչ մարդ բարձրացել է:

— Չէ,— ասում է,— էնտեղ մարդ ոտք չի դրել, աչքերս չորս արած նայել եմ, որ մարդ անցներ, հաստատ կտեսնեի:

— Չէ,— մտածում եմ,— էստեղ ինչ-որ բան էն չի, պարտքս լինի լուծեմ էս հանելուկը: Երեխեք, գնացինք,— ասում եմ Լյուկին ու Բենիս,— գնանք պարզենք՝ էս ինչ խորհրդավոր բաներ են կատարվում մեր տանը: — Բարձրացանք հորդ մոտ: Նայենք, որ էլի է խմել, քանի մենք Բարեթի մոտ էինք, լավ կոնծել է:

— Էյ,— ասում եմ,— ո՞վ է քեզ համար խմելու բան ճարել:

— Ինչ խըմմելու բան,— բռբռում է,— դու հո գիտես, ցավդ տանեմ, որ ես խմիչքի վրա նայողը չեմ: — Ու հալին էլ չի մնում, ուզում է ինձ պաչպչել, ձեռք է գցում, հա: Սենյակը քարուքանդ արինք, խմիչքի հետք չկար: Շատ որ գլուխ ջարդեցի, հասկացա... թե ոնց առաջ էդ մասին չէի մտածել...

— Երեխեք,— ասում եմ ու աչքով անում նրանց,— իջնենք քաղաք, մի քիչ զբոսնենք: Մի ժամից էստեղ ենք, ամուսնյակս, պատրաստվիր,— ասում եմ,— որ ժամը երեքին գնանք հիվանդա-

նոց: Հորդ էլ էդ էր պետք.— գնացեք, գնացեք ման եկեք,— ասում է, մտքինն էն է՝ մենակ մնա, մի քիչ էլ խմի:

Կամաց իջանք իմ սենյակն ու դուռը փակեցինք:

— Այ մամ,— ասում է Լյուկը,— որ գնանք քաղաք, իրեն էլ մենակ թողնենք, էլի կհարբի, ախր նրան ինչ-որ մեկը խմիչք է բերում, գնամ տեսնեմ ո՞վ է:

— Ոչ մի տեղ էլ չես գնա,— ասում եմ,— ոնց առաջ գլխի չէինք ընկնում: Գաս Թոլիին գիտեք, սենեկացին՝ հարբեցող անտերը, էստեղ է մնում՝ հորդ սենյակին կպած: Նա էլ է բժիշկ Հոպկինսի մոտ հերթագրված հորդ պես, որոշել են երկուսով քեֆ անեն, կեղտոտի մեկը, նա է խմիչք ճարում:

— Ես դրա վիզը կքաշեմ,— ասում է ախպերդ ու ուզում է վերև վազի:

— Կաց,— ասում եմ,— կաց, դրա հախից մենակ ես կգամ:

Հինգ րոպե չէր անցել, դուռը բացվեց, հերդ սողեսող դուրս եկավ, ու էն լսեցի, որ Գաս Թոլիի դուռն է ծեծում, նա էլ հարցնում է, թե՝ «ձերոնք գնացի՞ն»:

Մի քիչ էլ սպասեցինք, մինչև երկուսով փակվեցին, ու բարձրացանք վերև: Քշեցի ուղիղ դեպի Թոլիի սենյակն ու դուռը թակեցի:

— Էդ ո՞վ է,— հարցնում է Թոլին:

— Բաց՝ կտեսնես,— ասում եմ:

Թոլին դուռը բացեց ու սկսեց իշավարի վրես նայել:

— Էդ դո՞ւք եք, միսիս Գանտ,— ասում է,— ես էլ կարծում եմ երեխեքին զբոսանքի եք տարել:

— Հերիք եղավ,— ասում եմ,— ձեզ լավ ձեռ եք առել:

— Պարոն Գանտն ինձ մոտ է,— զզվելի, խռպոտ ձայնով բացատրում է ինձ, քիթն էլ կարմիր, բուշտ-բուշտ, ոնց որ թոր դրած վարունգ: — Զրուցում ենք պարոն Գանտի հետ,— ասում է:

— Կզրուցեք, բա ինչ կանեք,— ասում եմ,— վախենամ ուրիշ բան էլ անեք: Էդ ինչ տեսակ զրույց է, որ շունչս կտրվում է, ձեր զրույցի հոտից մարդու քիթ է թափվում: — Հո գիտես գարու արաղի կծու հոտը:— Մենք էլ ենք մեկ-մեկ զրույց անում, բայց էդ օրը չենք ընկնում: Լյուկն էլ իր կողմից թե՝ «սեղանին ձեր զրույցից մի շիշ էլ կա»: Մի քիչ որ առաջացանք, տեսանք հերդ բազմել է սեղանի գլխին, արդեն կես ընկած շշից լցնում է, ոչ խմի: Մեզ որ տեսավ, մի նայել նայեց, տեղում սառեցինք, հետո հայհոյանքի պոչը բռնեց, բայց որ ձեռքս գցեցի շշին, սկսեց խնդրել, թե՝ մի կում տուր խմեմ:

— Չէ,— ասում եմ,— դու հիվանդանոց ես գնում ու հենց հիմա ես գնում, հերիք եղավ: — Հորդ զսպելու միակ ձևը էդ էր: Ես նրան լավ էի ճանաչում ու գիտեի, որ տանը մնա, գետնի տակից էլ լինի,

խմիչք կճարի: — Հենց հիմա գնում ենք,— ասաց Լյուկը,— չգաս՝ զոռով կտանեմ, Բենը ինձ կօգնի:

— Մտքովս էլ չի անցնում,— ասաց Բենը,— ես նրա հետ էլ գործ չունեմ, ինչ ուզում է՝ թող անի:

— Որ թողնենք էստեղ,— ասում է Լյուկը,— էնքան կխմի, վերջը կգա:

— Թող գա,— չէր համոզվում Բենը,— որ ուզածն էդ է՝ թող գա վերջը, մեր հոգին էլ կազատվի: Միշտ էլ իր ուզածն է արել ու մենակ իր մասին է մտածում: Հիմա արդեն մեկ է, ինչ է լինում: Ոնց էի ուզում, որ գանք էստեղ, մտածում էի՝ մի քիչ կցրվենք, կհանգստանանք: Իսկ նա մեզ խայտառակեց թողեց: Ձեզ դուր է գալիս՝ դայակություն արեք, ես գործ չունեմ:

Խեղճ երեխես դառնացած էր, մեր ճանապարհածախսը ինքն էր հավաքել կոպեկ-կոպեկ, նոր, ընտիր կոստյում էր պատվիրել, իսկ հերդ էդպես վարվեց ու բոլորիս վշտացրեց: Մտածում էինք՝ իրեն կտեղավորենք հիվանդանոցում, մենք մի քիչ ման կգանք, տեղ-մեղ կգնանք: Ինչ ման գալ: Հորդ հսկելու համար մի ջոկ զինվոր էր պետք: Էդ անգամ չէր ուզում հիվանդանոց գնալ, բայց որ տեսավ լուրջ ենք խոսում, Լյուկի հետ գնաց, շորերը բերեց՝ հագցրեցինք: Ես էլ հավաքեցի հիվանդանոցի համար անհարժեշտ իրերը՝ գիշերանոցը, խալաթը, հողաթափերը, հետո ման եկա, տեսնեմ՝ մաքուր շապիկ չունի, հագինը կեղտոտ էր, ինձ էլ էր ամոթ էդպես գնար բժիշկների մոտ, համ էլ փոխնորդ էր պետք:

— Ինչ ես արել շապիկներդ,— հարցնում եմ,— վեց հատ դրել էի, հո չես կորցրել, ո՞ւր են:

— Իրենք վերցրին, իրենք,— ասում է լացակումած ու ոնց է հայհոյում,— թող վերցնեն, սրիկաները վերջին գրոշս էլ խլեցին, որ էս օրն ընկա, սրտիցս արյուն են ծծել դրանք, ինչ որ մնացել է, թող էդ էլ վերցնեն:

— Ինչ ես դուրս տալիս,— ասում եմ:

— Լվացքատանն են, մամ,— ասում է Լյուկը,— էն չինացիների մոտ: Ես եմ տարել մի շաբաթ առաջ, գիտեի արդեն վերցրել է:

— Գնանք բերենք,— ասում եմ,— հո չենք թողնի անփոխնորդ գնա հիվանդանոց, մեզ էլ խայտառակ անի: — Հորդ էլ բան էր պետք: Դուք գնացեք,— ասում է,— մինչև գաք՝ ես պատրաստ կլինեմ: — Մենակ որ մնար, էլի խմելու էր, պակասը լրացներ:

— Չէ, ամուսնյակս,— ասում եմ,— առանց քեզ ոտս տնից դուրս չեմ դնի: — Վերջը բոլորս միասին դուրս եկանք, Լյուկը հորդ հետ առջևից էր գնում, Բենս՝ ինձ հետ, հպարտ էր տղաս, ասում էր՝ «Ճամպրուկը կտանեմ, բայց կողքով չեմ քայլի, քեզ հետ կգնամ»:

— Ոնց չես քայլի,— ասում էր Լյուկը,— ինչքան իմ հերն է, էնքան էլ քոնն է, ամաչում ես քեզ հետը տեսնեն:

— Հա,— ասում է,— ամաչում եմ, թող չիմանան, որ հերս է, ես ձեզ համար դայակ չեմ, ինչ ձեռքիցս գալիս էր՝ արեցի:

Վերջը, գնացինք լվացքատուն, աղյուսե հին, փոքր շինություն էր, հիվանդանոցից մի երկու թաղամաս ներքև, մտանք ներս, երկու չինացի կանգնած արդուկ են անում, էնպես են արդուկները տանում բերում՝ էլ դու սուս:

— Երևի էս է,— ասում եմ:

— Հա, մամ,— ասում է Լյուկը,— ես էստեղ եմ բերել:

— Ի՞նչ եք ուզում,— հարցնում է չինացին:

— Շապիկս եմ ուզում, գրողը քեզ տանի,— գոռում է հերդ:

Իսկ չինացին վրա է տալիս.— տոմակ, տոմակ...

Հերդ, իհարկե, բան չի հասկանում.— Գլուխդ ուտի տոմակը, - գոռում է,— շապիկներս տուր:

— Սուս կաց,— ասում եմ,— մի անհանգստանա, եթե շապիկներդ իսկապես էստեղ են, կտան:

— Էնքան որ ինձ հասկացնեք՝ ինչ եք ուզում,— խնդրում եմ չինացուն:

— Տոմակ, տոմակ,— ասում է: Պարզ էր, որ էդ մարդը ինչ-որ բան էր ուզում:

— Դեռ չեք լվացել շապիկները: Ինչ կա որ,— մտածում եմ, — կարող է չեն հասցրել, բայց մի շաբաթ ինչ էին անում:

— Չէ,— ասում է,— լվացրել ենք, տոմակ-տոմակ,— հետո ինչ-որ բան ասաց էն մյուս չինացուն, ու երկուսն էլ սկսեցին իրենց անդուր լեզվով ճղճղալ:

— Հերիք եղավ,— ասում է հերդ,— ես հիմի սրանց բլբլոցին վերջ կդնեմ:— ՈՒմ մտքով կանցներ, որ բանն էստեղ է հասնելու:

— Կաց,— ասում եմ,— դու մի խառնվի, հիմի կպարզենք ինչ՝ ինչոց է: Թե դու էստեղ շապիկ ունես կվերցնենք:

Չինացիք արդեն իրար հետ էին վրճում, մեկը ոնց որ բացատրում էր էն մյուսին, որ մենք չենք հասկանում իր ասածը, որովհետև էն մյուսը թղթի մի կտոր հանեց՝ վրեն էլ ոնց որ հավի ճանկեր գծած լինեին ու բլբլաց՝ տոմակ-տոմակ...

Իսկույն գլխի եմ ընկնում, ոնց էլ չէինք հասկանում, տոմսակ են ուզում, տոմսակ:

— Այո,— ժպտաց չինացին,— տոմակ ենք ուզում:

— Էս որպեիս,— ասում եմ,— հիմի գտնենք քո «տոմակը»: — Ոնց էլ գլխի չէի ընկնում ինչ է ասում խեղճը, հորդ գոռգոռոցը կթողներ մարդ բան հասկանա:

— Հանձնելուց քեզ տոմսակ են տվել, այ մարդ, մոռդ է:

Իսկ նա թե՝ տոմսակ-մոմսակ չգիտեմ, շապիկներս եմ ուզում:

— Քեզ ասում են՝ տոմսակ պիտի լինի,— բացատրում եմ,— ինչ ես արել, կորցրել ես:

— Ինձ տոմսակ չեն տվել,— մրթմրթում է:

— Ոնց թե չեն տվել,— ասում է Լյուկը,— ես քեզ տվեցի, չե՞ս հիշում, ո՞ւր է տոմսակը, ասա, քեզ հետ եմ,— ու սկսեց ցնցել հորը,— մի մրթմրթա, տոմսակը տուր,— խեղճ երեխեն շատ էր վրդովվել հոր արածից: Ման եկանք գրպաններում, ինչ կար չկար խառնշտեցինք, ոչ տոմսակ, ոչ բան:

— Ինձ լսիր,— ասում եմ չինացուն,— պարոն Գանտը տոմսակը մոռացել է տանը, շապիկները հիմա՞ տվեք, հետո տոմսակը կգըտնեմ կբերեմ: Ուզում էի իբր համոզեմ: Իսկ նա թե՝ «ոչ, էդպիսի բան չենք կարող անել», հետո սկսեց ինչ-որ բան բլբլացնել, որ իբր չգիտի շապիկներն ուր են, ու առանց տոմսակի չի կարող գտնել: Իր բլբլոցով իրեն փորձանքի մեջ գցեց, որովհետև հերդ հարձակվեց վրան ու վզից պինդ բռնեց: — Քեզ հիմա շանսատակ կանեմ,— ու սեղանի էն կողմից խփում է էդ մարդուն: — Անզգամներ, դուք իմ վերջին կոպեկն եք խլել, մահվան դուռն եք ինձ հասցրել, բայց մինչև գնալս ձեզ էլ գերեզման կիջեցնեմ...

Բենն ու Լյուկը ետ քաշեցին, որ վնաս չտա, բայց արդեն ուշ էր: Չինացին ճղճղալով իրեն դուրս գցեց ու վերադարձավ ոստիկանի հետ:

— Այս ինչ է կատարվում,— հարցնում է ոստիկանը:

— Ինձ թալանել են,— գոռում է հերդ,— իրենց կեղտոտ, անզգամ տեղով ուզում են ինձ կործանեն: — Որ էդպես շարունակեր, վերջներս լավ չէր լինի, Լյուկս բռնեց նրան, թե՝ սուս մնա, թե չէ հիմի էլ բանտ կընկնես, հերիք եղավ:

— Բան էլ չկա, պարոն ոստիկանապետ,— ուզում եմ աչքը [illegible]նեմ, էլի,— ամուսնուս ուզում ենք հիվանդանոց պառկեցնենք, էս էլ դիտավորյալ եմ ասում, որ իմանա հիվանդի տեր [illegible]ք,— եկել ենք սպիտակեղեղը վերցնենք:

— Բա ինչ է պատահել, չե՞ն տալիս,— հարցնում է:

— Հասկանո՞ւմ եք, պարոն ոստիկանապետ, սրանք ամուսնուս տոմսակ են տվել, իսկ նա ոնց որ թե կորցրել է, այսինքն դեռ չենք գտել, բայց շապիկներն հաստատ էստեղ են, տղաս է բերել մի շաբաթ առաջ:

Ոստիկանը նայեց Լյուկին, դե դու էլ գիտես, մենակ նրա տեսքը ինչ ասես արժի, երեխես սիրուն, նավաստու համազգեստով էր, Նորֆոլկից հատուկ թույլատվություն էր խնդրել, որ գա մեզ հետ: Միսիս Բարեթը միշտ ասում էր՝ այ լավ տղա, մարդ նայում է, քեֆը գալիս է, քանի այսպիսի տղաներ ունենք մեզ պաշտպան՝ մեր հոկրին բան չի լինի:

Հա, իսկ Լյուկս ասում է.— Այո, պարոն կապիտան,— էդպես է ասում, որ սա լավ զգա,— շապիկներն այստեղ են, անցյալ շաբաթ ինքս բերեցի, բայց հայրիկս պատահմամբ կորցրել է տոմսակը:

— Որ շապիկները տեսնեք, կջոկեք որն է ձերը,— հարցնում է ոստիկանը:

— Վո՛ւյ, ոնց չեմ ջոկի,— ասում եմ,— մութ տեղն էլ կգտնեմ, հեչ որ չլինի՝ չափից կհասկանամ: Ինքներդ մտածեք,— ասում եմ,— էս լվացքատանը ամուսնուս հագով ուրիշ շապիկ դժվար թե ճարվի:

Ոստիկանը նայեց հորդ ու սկսեց ծիծաղել.— Ճիշտ որ,— ասում է,— արի կլինի, դուք գնացեք ներս ու փնտրեք շապիկները, իսկ ես այստեղ կսպասեմ մինչև գտնեք:

Էդպես էլ արեցինք: Ես գնացի ներս, իսկ նա սպասեց մինչև դուրս եկա:

— Ահա,— ասում եմ,— ամենատակն էին դրած, մի հիսուն փաթեթ բացեցի, մինչև գտա,— էս բոլորը, իհարկե, չինացոց դուրն էնքան էլ չեկավ, էնպես էին կատաղած մեզ նայում: Որ ոստիկանը չլիներ, ես վայթե վախենայի դրանցից. էդ տեսակ մարդիկ ինչի ասես ընդունակ են, մանավանդ որ հերդ էլ չէր ուզում սսկվել ու վրաները գոռում էր:

Հետո, որ հորդ արդեն պառկեցրել էինք, Լյուկին ասում եմ.— ինչ լավ եղավ էդ բնից դուրս եկանք, հեչ դուրըս չեկան էդ չինացիք, էնպես են նայում՝ մարդ փշաքաղվում է:

— Հա,— ասում է Լյուկը,— հայրիկը ճիշտ էր էլի ասում, դրանցից ինչքան հեռու մնաս, էնքան լավ:

— Հայրդ միշտ էլ ունեցել է էդ զգացողությունը, տղաս, վստահ եմ, որ մի բան կա, ու մենք չենք հասկանում: Վաղուց, շատ վաղուց էս նույն բանը ես Ամբրոզ Ռադիկերին էլ ասացի: Նա էլ համաձայնվեց.— հա,— ասաց,— որ պարոն Գատը չինացիներին հիշում է, թող ու փախի: Ես, օրինակ, չգիտեմ ինչպես վարվեմ հետը:

— Ասեմ քեզ ինչպես, իմ ամուսնուն խմիչք մի ծախի ու վերջ: Փորձանքի մեջ չընկնելու մենակ մի ձև կա՝ փորձանքից հեռու մնալ:

— Ճիշտ ես,— ասում է:

— Որպես ինչ պիտի դիմանաս մարդուս գժություններին: Էդքան ուժ չունես, որ ստիպում են չուզածդ բանը անել:

— Ես ինչ մեղք ունեմ,— ասում է Ամբրոզը:

— Ոնց թե ինչ, որ մեկ էլ գա, խմելու բան մի տուր, ուրիշ ոչ մի մեղք չունես:

— Որ իրեն չտամ, ինչ, Էլայզա,— ասում է: — Փողը կտա Ռուֆ Փորթերին ու կճամփի մոտս: Ինձ համար ավելի լավ է փողը մենակ իր վրա ծախսի, քան էդ գինեմոլին խմեցնի:

— Ոնց թե,— ասում եմ,— էդպես բան էլ է եղել:

— Բա ոնց, միշտ էլ էդպես է անում. Ռուֆը գալիս է ու պարոն Գանտի համար խմիչք առնում, հետո երկուսով նստում՝ արհեստանոցում խմում են :

— Այ թե ինչ,— ասում եմ,— այ թե որտեղ է շան գլուխը թաղված... սրիկա, ասա մարդուս բուռն է հավաքել, էլի, միշտ խմիչք է բերել, սա էլ ասածն արել է:

Էդ օրը հերդ գործից տուն եկավ ու պատմեց, որ Մել Փորթերը եկել է արհեստանոց՝ իր մոտ ու հեչ տրամադրություն չի ունեցել, որովհետև իր պաշտպանյալներին որոշել են կախաղան բարձրացնել:

— Հեչ էլ չեն բարձրացնում,— ասում եմ հորդ,— որ Փորթերի թշվառական եղբորն էլ կախեին, չէր խանգարի:

— Էդպես մի խոսի,— ասում է,— չեմ ուզում, որ դու էդպես բաներ ասես: — Ինչ ասեմ, հերսս ելած էր էդ ժամանակ:

— Մեղքս շատ տվեց Մելին,— ասում է հերդ,— էդքան տանջվեց, չարչարվեց, ու արի տես, որ հինգին էլ կախում են:

— Թող մեղքդ շատ չտա,— ասում եմ,— իսկ որ էդ պատմությանը հավատացել ես, ուրեմն ինձնից միամիտ ես: Մել Փորթերի մասին ինձնից շատ բան դու չես իմանա: Դու էսօրվա օրը լավ հիշիր, նրան ուրիշ ցավ է կպել:

— Ճիշտ չես ասում,— չէր համաձայնվում հերդ:

— Շատ լավ,— ասում եմ,— թող հլա մի ժամանակ անցնի՝ կտեսնես:

Հենց նույն գիշեր էդ մարդիկ բանտից փախան՝ հինգն էլ: Ու ոչ մեկին չբռնեցին:

— Ես քեզ ինչ էի բացատրում,— ասում եմ հորդ,— իսկ դու միամիտ-միամիտ հավատացել էիր, թե Մել Փորթերին նրանց կախելն էր մտահոգում, հիմա հասկացար:

— Հա, իսկապես, դու ճիշտ էիր ասում,— ուրեմն նա գիտեր, որ փախչելու են:

— Բա իհարկե գիտեր, նրան վաղուց հայտնի էր, որ գիշերով փախչելու են, ու վախենում էր հանկարծ բան պատահի՝ էլի արյուն թափեն, դրանք իրենց գլխներից ձեռք քաշած, արնախում մարդիկ էին, ու եթե իրենց ճանապարհին մեկը կանգներ, առանց երկար-բարակ մտածելու կվերացնեին մեջտեղից: Դրա համար էր Մել Փորթերի խիղճը տանջում:

Մի օր էլ հերդ եկավ, թե՝ «Դոկ Հենզլին էր եկել մոտս ու առաջարկում էր երկու տոմս վերցնեմ, որ գնանք նայենք ոնց են դրանց կախում»:

Դու մենակ մտածիր, կես տարի առաջ անբաժան ընկերներ էին, իսկ հիմա Դոկը սպասում էր, թե երբ են իր ընկերներին էն աշխարհ ուղարկելու: Էդ Միրզը, Լորենս Վեյնն ու Դոկ Հենզլին քսան տարվա մոտ ընկերներ էին: Ճիշտ ասած Հենզլին նրանցից ոչ մի

բանով պակաս չէր, բոլորն էլ նույն սանրի կտավ էին՝ թոկից փախածները: Դոկ Հենզլին նրանցից քիչ արյուն չի թափել, ինքն էլ գիտի: Տարբերությունն այն է, որ Հենզլին անունով ընտանիքից էր, ու օրենքը նրան պաշտպանում էր: Ռիզ Մակլենդոնին էլ նա էր սպանել, բայց դատարանը արդարացրեց նրան, որպես թե ինքնապաշտպանության է դիմել ոստիկանական իր պարտականությունները կատարելիս: Այնինչ մտածված սպանություն էր: Ճիշտ է, Ռիզը ահավոր ուժեղ մարդ էր, որ խմում էր՝ աստված հասներ, նրա ձեռքով էլ ահագին մարդ փչացավ, բայց նա Հենզլիի մոտ ընկերն էր, իրար հետ շատ լավ էին, մինչև որ Ռիզին նստեցրին հարբած վիճակում գտնվելու և կարգուկանոնը խանգարելու համար: Ասում էին՝ էնքան է աղմկում, մինչև բանտախցից հանում են, ամբողջ հրապարակով նրա գոռգոռոցն ու հարայ-հրոցն էր, վերջը տանում են գետնահարկի խցերը. հին խցեր էին՝ կեղտոտ հատակներով, մի ժամանակ քաղաքի ախոռատունն էր: Մի օր Հենզլին գնում է, որ իբր հասկացնի Ռիզին, բայց իր պատմելով Ռիզը ախոռից մնացած մի հին պայտ է ձեռքին ունեցել, ու հենց ինքը ներս է մտել, հասել է, որ գլխովը տա: Էնպես որ Հենզլիի ասելով, կյանքի ու մահու հարց է եղել, դրա համար էլ պայտը Ռիզի ձեռքից իսկույն խլել է ու ամբողջ թափով հասցրել նրա ճակատին:

Հետո, արյան մեջ կորած, վերև է բարձրացել ու մարդկանց ասել.— Գնացեք բժիշկ բերեք, բայց ոնց որ թե սպանեցի Ռիզին:

Բժիշկը գալիս է ու ասում, որ էլ ոչ մի բան տուժածին չի օգնի: Նրա կարծիքով, Ռիզին ոչ թե մեկ, այլ մի հարյուր անգամ էին խփել, գլխի մի կողմը լխկել էր, ինքն էլ արյան մեջ ճղփում էր: Ասում են՝ ահավոր բան է եղել: Հայրդ էլ էր գնացել Հենզլիի դատին: Հետո տուն եկավ ու ինձ ասում է.— Կյանքումս Զեբ Փենթլանդի ելույթին հավասար բան չեմ լսել: Քո զարմիկը,— ասում է ինձ,— դիմեց երդվյալ ատենակալներին՝ պահանջելով պատժել Հենզլիին: Չտեսնված բան էր,— ասում էր հայրդ,— ափսոս ներկա չէիր:

— Իսկ ինչ որոշեցին,— հարցնում եմ,— նստեցնո՞ւմ են:

— Չէ մի,— ասում է,— կազատեն, կազատեն որպես ինքնապաշտպանության դիմած քաղաքացի, բայց մեկ է, չէի ուզենա էսօր Հենզլիի տեղը լինեի: Նա էլ կյանքում չի մոռանա Զեբ Փենթլանդի խոսքերը, երեսին գույն չէր մնացել: Զեբն ապացուցեց, որ Հենզլին ոստիկանատանը ծառայելու տարիներին տասնութ մարդ էր սպանել:

— Դուք ոստիկանի համազգեստ, օրենքի ուժ և իրավունք եք տվել մի մարդու, որ ոչ խիղճ ունի, ոչ գութ, զենք եք տվել մեկի ձեռքը, որի համար մարդկային արյուն թափելն ու ճանճ սպանելը նույն բաներն են: Դուք, պարոնայք երդվյալ ատենակալներ,— ասում էր Զեբը,— ազատ եք արձակում այս կատաղած գազանին, որ

շարունակի հոշոտել ու ավերել, սպանել անմեղ ու անպաշտպան մարդկանց: Նայեցեք նրան, Կայենի դրոշմը ճակատին կծկվել ու դողում է, ձեռքերը կարմիր են ներկվել անմեղ մարդկանց արյունից: Նրա զոհերի ձայները դեռ չեն լռել, ու նրանց արյունը, եթե խոսել կարողանար, կճչար, որ ըստ արժանվույն պատժեք նրան, կճչար նրա մեղքով այրիացած ու որբացած մարդկանց ձայնով:

Հերդ ասում էր, որ էս խոսքերից հետո Հենզլին գույնը էնպես էր գցել ու դողացրել, ոնց որ մեռելները իարություն էին առել ու ընկել ետևից:

Էս բոլորը հեչ, Հենզլիին, իհարկե, ազատեցին: Բայց ես, տղաս, ճիշտն ասած սիրտ էլ չէի անում մոտենալ Հենզլիին դեռ էն օրվանից, երբ որ մեզ իր տուն ճաշի էր հրավիրել: Էսպես բան ո՞վ էր տեսել, Աստված, ճաշի սեղանի ուղիղ մեջտեղը գանգ էր դրել,— էդ էն նեգրի գանգն է,— բացատրում էր մեզ,— որ մի կրակոցով սպանել եմ:

— Աստված,— ասում եմ հորդ,— գոնե էնքան շնորհք չունի՝ հյուրերի մոտ չասի, մարդիկ իր տուն հաց ուտելու են եկել, կամ էլ երեխեքից թաքցնի, չէ, հլա որ ուզում ես իմանալ, երեխեքը էդ գանգը որպես շաքարաման էին գործածում: Էնպես էլ գլուխ էր գովում, ոնց որ արածը մեծ բան էր: Գանգի վերևի մասը սղոցել էր, որ կափարիչ ունենա, գնդակի ծակած տեղից էլ շաքարավազն էր լցնում թեյի մեջ: Մարդու սիրտը ետ կգա էդպես բաներից, իսկի մի պատառ բան չկարողացա բերանս դնել: Որ դուրս եկանք, հորդ ասում եմ.— Ես էս մարդու հետ չեմ ուզում գործ ունենալ, ոտքս էլ նրա տունը չեմ դնի, էդ գանգը որ տեսա, արյունս սառեց: Նա վերջում ինքնասպան եղավ, մենք Գիլմերից իմացանք, էդ ժամանակ նա Հենզլիի տանն էր մնում ու մեզ ամեն ինչ պատմեց:

— Ահավոր տեսարան էր,— ասում էր,— ես առաջինը վրա հասա, ընկել էր կիտած աղյուսների ետևում, սկզբում չճանաչեցի ով է, գլխի վերևի մասը ցրիվ էր եկել, ահավոր բան էր, ահավոր:

Իսկ ես ասում եմ.— Զարմանալու ինչ կա, էդպես էլ պիտի լիներ, սուր հանողը սրից է ընկնում: Խիղճը տանջում էր, դրա համար էլ ինքն իր վրա ձեռք բարձրացրեց, էդքան արյունը, որ նա էր թափել... Հենզլիի աղջիկը՝ Էմին, ինստիտուտում մեր Դեյզիին ասել էր.— Չենք իմանում ինչ անենք, հերս ոնց որ խելքը թռցնում է, գիշերվա կեսին մեկ էլ վեր է թռչում ու սկսում գոռգոռալ: Վախենում ենք խելագարվի:

— Էդպես է,— ասում եմ հորդ,— մեղավորը սկսում է փախչել, երբ ոչ ոք չի հետապնդում:

— Նա փախչելու պատճառներ շատ ունի,— ասում է հերդ, խելքը կթռցնի, բա ոնց,— էդքան մեղքը մոռանա՞լ կլինի: **Խիղճը** ուրիշ բան է:

Ահագին ժամանակ Հենզլին, ոնց որ թե լավ էր, ծառայությունը թողել ու դարձել էր մոլի հավատացյալ, տեղի մեթոդական եկեղեցու նեցուկն էր, ամեն կիրակի եկեղեցի էր գնում աղոթելու: Քաղաքի մեջ ման էր գալիս շքեղ մեքենայով, իրեն էլ մեծ բանի տեղ էր դնում: Էդ ընթացքում ահագին փող սարքեց:

Երբ որ Բրայենից մեր հողամասն առա, ինձ ասաց, որ Հենզլիի հետ մի երկու գործ է արել ու շատ գոհ էր. մի գլուխ պարծենում էր.— Հենզլին շատ ուղիղ տղա է, էդքան գործ եմ ունեցել հետը՝ մի անգամ մի կոպիտ խոսք կամ անպատշաճ բառ նրա բերանից չեմ լսել:

Ես լսում եմ ու ձայն չեմ հանում: Մենակ ինքս ինձ ասում եմ՝ ճիշտ որ հիմի ուրիշ ժամանակներ են:

— Ճիշտ եմ ասում,— չէր հանգստանում Բրայենը,— էդքան գործ եմ ունեցել հետը, մի անազնիվ բան նրա կողմից չեմ տեսել: Կհավատաք, ամեն կիրակի գնում է եկեղեցի: Իր ասելով ոչ մի կրթություն էլ չունի. Սուրբ Գիրքը անգիր է արել, Աստվածաշունչը նրա պես ոչ ոք չգիտի: Ինքս եմ ստուգել: Մեր օրերում գործի մարդիկ հազվադեպ են հետաքրքրվում հոգևոր բաներով: Մեր համայնքին նա պատիվ է բերում:

— Ճիշտ եք,— ասում եմ,— բայց դուք վերջերս եք եկել, ու մեր համայնքում բաներ կան, որոնցից դուք տեղյակ չեք: Կար ժամանակ, երբ Դոկ Հենզլին առանձնապես պատիվ չէր բերում մեր համայնքին:

— Էդ ե՞րբ էր էդ ժամանակը,— հարցնում է:

— Ո՞վ իմանա,— ասում եմ ու աչքով անում,— վաղուց էր, չեմ հիշում, ինչ պետք է անցած-գնացած բաները քրքրել: Էն ժամանակ դուք նոր սկսել էիք ձեր թեկնածությունն առաջադրել նահանգապետի համար:

Էս խոսքիս վրա Բրայենը սկսեց քահ-քահ ծիծաղել.— Ճիշտ որ,— ասում է,— էդ շատ վաղուց էր, կարող եք չշարունակել, բայց որ ուզենայի որևէ բան իմանալ՝ կհիշեիք:

— Կարող է և հիշեի,— ասում եմ,— ես պարծենկոտ կին չեմ, բայց բոլորն էլ ասում են, որ հիշողությունս լավ է:

— Այո, այո, գիտեմ,— ասում է Բրայենը,— անցյալ օրը կնոջս ասում էի՝ ուղղակի հրաշալի է, որ տիկին Գանտը այդպես հետաքրքվում է օրվա անցուդարձով, իսկ իր կյանքի բոլոր մանրամասները հիշում է առանց բացառության:

— Էդ մեկը չափազանցնում եք,— ասում եմ,— որոշ բաներ, իհարկե, մոռացել եմ, բայց երկու տարեկանիցս սկսած վայթե ամեն բան իր կարգով հիշում եմ:

— Հավատում եմ, հավատում,— քռքռում է Բրայենը:

— Ես չէի ուզում Հենզլիին վիրավորել,— ասում եմ,— մարդուն մեղադրելուց հեշտ բան չկա, պարոն Բրայեն, մենք բոլորս էլ մեղքի տեր ենք:

— Այո, ճիշտ եք, տիկին Գանտ,— ասում է,— պետք է մեծահոգի և ներողամիտ լինենք:

Որ ուզենայի Հենզլիի մասին շատ բան կպատմեի, բայց ախր մյուս կողմից բոլորն էլ գիտեին, որ նա իսկական ընտանիքի մարդ էր ու լավ հայր: Ինչ էլ արած լինի, անբարոյականությամբ երբեք չի զբաղվել: Դատի ժամանակ ուզեցել էին էդ մեղքն էլ վրան բարդել, որ, իբր, իր կողակցին թողած՝ ուրիշ կանանց ետևից է ընկել, բայց բան դուրս չեկավ, էն մարդը բարոյական մարդ էր:

Հայրդ մի օր Հենզլիին ասել էր.— Դուք Էդի ու Լորենսի հետ քսան տարվա ընկերներ եք եղել, ձեռքդ ոնց կգնա նրանց կախես:

— Հա,— ասել էր Հենզլին,— ահավոր բան է, բայց մեկը պետք է անի էդ բանը: Իմ գործն էլ էդ է, դրա համար են ինձ ռատիկան նշանակել: Համ էլ,— ասում է,— Էդի ու Լորենսի համար ավելի լավ է ես լինեմ, նրանց հետ արդեն խոսել եմ:

ՈՒ ճիշտ որ, ասում են Հենզլին գնացել էր բանտ նրանց տեսության, երեքով էլի սանձարձակություններ էին արել:

— Նրանց համար ավելի լավ է ես անեմ էդ բանը, քան օտար մարդ,— ասել էր Հենզլին:— Հա, ճիշտ է,— համաձայնվել էր հայրդ,— բայց ինձ թվում էր խիղճդ կտանջի, ախր դրանից հետո ոնց ես գիշերները քնելու:

— Ինչ ես խոսում, այ մարդ,— ծիծաղել էր Հենզլին,— ինձ համար էդ հավի վիզը քաշելու պես բան է:

Խեղճ հերդ շշմել էր.— Այ քեզ մարդ,— ասում էր,— ոնց որ մեջը խղճի կտոր չլինի:

Էդպես էլ չպարզեցին, էդ երկուսի փախուստի մեջ Հենզլիի մատը խառն էր, թե՝ չէ, ես որ բան չհասկացա: Հերդ մի օր տուն եկավ, թե՝ «Էդն ու Լորենսը փախել են: Իզուր էինք Հենզլիին մեղադրում, նա գիտեր, դրա համար էլ էդպես հեշտ ու հանգիստ էր խոսում»:

— Դժվար թե,— ասում եմ,— որ նախօրոք իմանար, ինչի պիտի գար մոտդ, ձևեր թափեր, մեզ էլ հրավիրեր, թե՝ եկեք նայեք:

— Կարող է դիտավորյալ էր եկել,— ասում է հերդ,— որ չկարծենք ինքը փախուստից տեղյակ է եղել:

— Չէ,— ասում եմ,— էդպես բան չկա, նրանց կախաղան բարձրանալը շատ էլ Հենզլիի ուզածով էր, էդ մասին որ մտածում

էր՝ սրտին մի թիզ յուղ էր կանգնում:

Հերդ, մեկ էլ, իրենն էր պնդում՝ «Մարդ չի կարող էդքան անսիրտ լինել»: Հետո իմացանք, որ Էդի ու Լորենսի փախուստը նախօրոք մտածված բան էր, ասում էին ինքը՝ բանտապահ Ջոն Ռենդն էր կազմակերպել, վրան, իհարկե, չհաստատեցին, կարող է և ազնիվ, խելքը գլխին մարդ էր, բայց, մեկ է, ինչ որ հավատալս չի գալիս: Ջոն Ռենդին գտել էին Էդի բանտախցում՝ ձևի համար կապկպած, վրան մի նշան չկար, որ երևար՝ զոռով էին կապել: Իր ասելով իրիկունը Էդին ու Լորենսին ընթրիք է տարել, մեկ էլ սըրանք երկուսով հարձակվել են վրան, բանալիները խլել ձեռքից, ազատել մյուս երեք բանտարկյալներին ու միասին փախել: Էն մյուս երեքը Էդի ու Լորենսի հետ կապ չունեին, շարքային հանցագործներ էին, մանր-մունր բաներ, խելոք սպասում էին, երբ են իրենց կախելու, իսկ Էդը Լորենսին ասել էր՝ «Արի ձեռքներիս հետ սրանց էլ ազատենք»:

Ջոն Ռենդի անմեղ լինելուն մենք էնքան էլ չհավատացինք: Ընդամենը կես տարում մեծ գործ սկսեց, զոդման մի մեծ արհեստանոց բացեց, որ ամենաքիչը մի 3-4 հազար դոլար կարժենար: Հորդ ասելով, Ջոն Ռենդին կաշառել էին:

— Շատ հնարավոր է,— ասացի,— ո՞վ էր տեսել ամիսը հիսուն դոլարի վրա նստած մարդը մեկ էլ էդպես գործ սկսի, էդքան փող նրան որտեղից, թող իզուր չփորձի մարդկանց գլուխները յուղել:

— Բայց նրան ո՞վ պիտի կաշառեր,— ասում էր հերդ:

— Ոնց թե, Էդի ու Լորենսի ազգուտակը Յենսիում է,— բացատրում եմ,— նրանք էլ հավաքել են փողը:

— Իսկ էդ մարդկանց փող որտեղից:

— Ունևոր մարդիկ են,— ասում եմ,— համ էլ դրանց ազատելու համար հագների շորերն էլ կտային: Ես գիտեմ ինչ եմ ասում, ամբողջ կյանքս էդ մարդկանց մեջ եմ ապրել ու նրանց քեզնից լավ եմ ճանաչում, նրանց ճանապարհին կանգնողը դեռ չի ծնվել: Ասում էին ահագին փող են ընկել դրանց ազատելու համար. մենակ դատավոր Տրումենը՝ պրոֆեսոր Տրումենի եղբայրը, տասը հազար դոլար էր ծախսել: Էդն ու Լորենսը պրոֆեսոր Տրումենի աղջիկներին էին առել, նրանց դատավոր հորեղբայրը Յենսիի ամենահարուստ իրավաբաններից էր: Էնպես որ,— ասում եմ,— դրանք ունևոր մարդիկ են ու քո խղճալու կարիքը չեն զգում:

— Ինչ որ է,— ասում է հայրդ,— գոնե լավ է գլուխները պրծացրին, հերիք է ինչքան արյուն թափվեց, ինչ պետք էր հիմա էլ դրանց կախեին:— Այ էդ մեկը սխալ ես,— ասում եմ,— դրանց

կախելը ճիշտ կլիներ, շատ ափսոս, որ փրկվեցին: Որ հիմա բռնեին ետ բերեին՝ լավ կլիներ, չնայած չեմ ուզում, որ արյուն թափվի՝ անմեղ, թե մեղավոր, մեկ է:

— Ես էլ չեմ ուզում,— ասում է հայրդ:

— Բայց դու գիտես, դու հո շատ լավ գիտես, որ էդ երկուսը շան պես մեղավոր էին, նրանց արածը անխիղճ, միտումնավոր սպանություն էր: Դատի ժամանակ պատմում էին, որ էդ կիրակի երկուսով գնացել են թերթաքարի հանքերը իբր թե նայելու՝ ոնց են բանվորները վերջնահաշիվ ստանում, բայց, իհարկե, ձեռքները քոր են գալիս կռիվ սարքելու համար: Որ ուզածները փող լիներ, ասեմ թե՝ հա, բայց չէ, մտքներին տուրուդմբոց սարքելն էր, ուրիշ ոչ մի բան: Երկուսն էլ հարբած էին, իսկ դրանք որ խմում էին՝ էլ դու սուս: Սկսում են հանքատիրոջն անպատվել, նա խելքը գլխին, օրենքի հարկն իմացող մարդ էր, թույլ չեն տալիս, որ քարհատների վարձը տա: Հենց էդ ժամանակ գալիս է Ջոն Բերգինը:

— Տղերք,— ասում է,— ճիշտ բան չեք անում: Լավ կլինի թողնեք գնաք էստեղից, քանի փորձանքի մեջ չեք ընկել,— իբր ուզում է սրանց խոսք հասկացնել:

— Գրողը տանի քեզ,— ասում է Լորենսը,— քո ինչ գործն է:

— Իմ գործը չէ, բայց լավ չեք անում, համոզված եմ՝ վաղն առավոտյան վեր կենաք՝ փոշմանելու եք:

— Քո ինչ գործն է՝ էգուց վեր կենանք ինչ ենք անելու, բանիդ կաց: Դու կարող է հեչ վեր չկենաս, գրողի տարած,— ասում է,— մռութդ էլ ոնց որ դուրս չի գալիս, քանի ողջ ես, ռադդ քաշի էստեղից:

— Շատ լավ,— ասում է Ջոնը,— կգնամ, ես ձեզ հետ գործ չունեմ, ուզում էի ուշքի գայիք, հանուն ձեր կանանց ու երեխաների, բայց որ չեք ուզում՝ դուք գիտեք: — Էստեղ Ջոնը շուռ է գալիս, որ գնա, մեկ էլ էդ Միրզը կրակում է, նայում է Լորենսին ու հարբած ժպտալով ասում է. «որ էստեղից դրան խփեմ՝ կկպնի», ու կրակում, տալիս սպանում է էն մարդուն, թե ինչ էր արել իրեն:

Հետո անցնում են հանքատիրոջն ու օգնականին, էդ երկուսին էլ էնտեղ են սպանում ու նոր պոչները հանքից քաշում են: Ուզում էին էդ խեղճ մարդկանց գլուխն ուտել, ուրիշ ոչ մի դրդապատճառ էլ չունեին, ու դրանց արդարացում չկա: Իսկ հայրդ ինձ ասում է.— Մեկ է, չեմ փոշմանել, որ էն ժամանակ դրանց էդ լավությունն արեցինք: Հիմա քեզ պատմեմ, թե էդ ինչ լավություն էր...

— Ջույգ, զույգ ... քսան-քսան,— կանչում էին ձայները: Էսօրվա պես հիշում եմ, սեպտեմբերի քսանյոթն էր, իրիկվա տասը չկար: Միտքս եմ պահել, որովհետև դրանից երկու օր առաջ ամսի քսանհինգն էր, որ Ամբրոզի հետ զրուցում էի, լավ էլ հիշում եմ, էդ օրը

հերդ էլի քեֆ էր արել, լուր էին ուղարկել, թե եկեք ձեր ամուսնուն տարեք: Էդ ժամանակ էր, որ ասացի՝ «էլ վերջ, հերիք եղավ» ու գնացի էս անգամ ինքս պարզեմ ինչն ինչոց է: Գնացի տեսա, որ Ամբրոզը ճիշտ էր ասում. հերդ ուզածիդ պես խմած, չինացոց ողջն ու սատկածը իրար է խառնել, էն խեղճ մարդկանց գլուխը տարել է: Ամբրոզը, ճիշտ է, պանդոկապետ էր, բայց հորդ հետ ոնց որ ազնիվ վարվեց:

— Ձեռքիցս եկածն արել եմ,— ասում էր,— ու որ գիտենամ մի հնար կա, կգտնեմ, որ պարոն Գանտը չխմի:

Մի իրիկուն նստած ընթրում էինք, հայրդ էլ ինձ համար թերթ էր կարդում, մեկ էլ Ամբրոզը մոտեցավ ու ասաց հորդ.— Վիլ, հենց հիմա ինձ խոսք տուր, որ կթարկես, քո խմելը հեչ իմ սրտով չէ, էդ խելքի ու ձիրքի մարդն էլ խմի, ախր դու ինչի էլ ձեռք զարկես կաջողի:

— Բա ոնց,— ասում եմ,— գիտես ինչ գլուխ ունի: Էստեղ նրա կեսի չափ ընդունակ մարդ չկա, անտեր խմիչքը որ չլիներ, նա շատ առաջ կգնար: Ես մի բան հաստատ գիտեմ, խմել նա իմ հորանցից չի սովորել, հերս՝ մայոր Փենթլանդը, իր օրում մի կաթիլ բան չի խմել, ոչ էլ թույլ էր տալիս, որ հարբած մարդ իր տունը ոտք դնի:

— Գիտեմ, լսել եմ,— ասում է Ամբրոզը,— դու շատ լավ մարդ ես, Վիլ, մեր համայնքին պատիվ է քո նման անդամ ունենալը, երջանիկ լինելու համար ամեն բան ունես. հրաշալի կին, երեխաներ, տուն ունես, ձեռքիդ էլ էդպես լավ գործ կա: Գոնե սրանց մեղքա, մի խմի: Հայրդ խոստացավ, որ էլ չի խմելու, ու Ամբրոզը գնաց...

Ինչ որ ասում եմ հենց էդ գիշեր եղավ, սեպտեմբեր ամսի քսանյոթն էր:

— Զույգ-զույգ, քսան-քսան,— կանչում էին...

— Բան էլ չկա, այ կնիկ,— ասում է հերդ,— քեզ է թվում,— նայում է լուսամուտից դուրս ու նորից՝ բան էլ չկա:

— Շատ լավ էլ կա,— ասում եմ,— ախր ես պարզ լսում եմ, ոնց որ հիմա քո ձայնը, այ, էլի են կանչում, «զույգ-զույգ», 22նջում է լուսամուտի կողմից, «քսան-քսան»՝ կանչում է ականջիս:

Զանգերը տալիս էին՝ դատարանի զանգերը, էնպես էլ բարձր էին տալիս: — Աստված ջան,— ասում էի,— բան չպատահի, տեսնես ինչ է եղել: — Լսվում էր ոնց էին մարդիկ գոռգոռոցով, հարայհրոցով վազվզում, հետո Բլեկի երկաթեղենի խանութում ջարդեցին ապակիները, որ զենք վերցնեն: Հերդ էլ ձեռքը գցեց գլխարկին, թե՝ «գնամ տեսնեմ էս ինչ է եղել»:

— Մի գնա,— ասում եմ,— ինչ կլինի՝ մնաս տանը, ինձ էսպես ոնց ես թողնում գնում:

— Մի վախենա,— ասում է,— կես ժամից էստեղ եմ, քեզ ինչ կա որ, բան էլ չի լինի կես ժամում:

— Չէ,— ասում եմ,— ոնց որ զգայի, որ մի վատ, շատ վատ բան է լինելու:

— Երանի չգնայիր,— ասում եմ, բայց հերդ հագավ ու դուրս գնաց: Նայեցի ժամացույցին, տասին քսան էր պակաս: Նստած սպասում եմ ինչ է լինելու, չգիտեմ ինչ, բայց որ լինելու է, զգում եմ, սպասում եմ՝ ականջս փայտե ժամացույցի ձայնին,— թոկ-թոկ, թոկ-թոկ,— հաշվում է ժամանակը՝ դանդաղ-դանդաղ, ամեն րոպեն՝ մի ժամ, սպասում էի, ժամը տասը խփեց ու մեկ էլ լսում եմ. ծառերի միջով ցանկապատի ճռռոցը գալիս, թեթև ընկնում է մարգերի վրա, հետո լուռ ու անձայն փորձում է խցկվել հյուրասենյակ: — Աստված ջան, ոնց որ մեկից գլխիս տային, նոր հասկացա: Էստեղ են, եկել են, հիմի ես ինչ անեմ, երեխեքի հետ մենակ, ինչ անեմ էդ արյունախում մարդկանց: Նոր գլխի ընկա էդ ձայներն ինչի էին ասում՝ զույգ-զույգ, քսան-քսան, ախր զգուշացնում էին մեզ՝ ինձ ու հորդ, որ քսան րոպեից գալիս են դրանք: Գոնե մնար, ինձ լսեր ու մնար:

Ճարս կտրած վեր կացա, գնացի դեպի դուռը. ոնց էլ էդ վիճակիս ուժ ու կող արեցի, հեչ չհասկացա, տղաս, ես գիտեմ, թե վերևից մի զորավոր ոգի ինձ ուժ պարգևեց, որ կարողանամ դրանց երեսը տեսնեմ: Գիշեր էր՝ աշնան գլուխ, մութը ծանրումեծ չոքել էր այգուն, անձրև էր եկել, դրսում ինչ կար-չկար քար էր կտրել՝ սառել ու ծանրացել, դրա համար էլ ամեն բան պարզ լսվում էր, բայց հիմա դուռը բացել եմ, ու մի շշուկ անգամ չկա:

— Դե լավ, լավ,— կանչում եմ մթան մեջ,— իբր հեչ չեմ վախենում, էլի: — Գիտեմ, որ էդտեղ ես, էդ,— ասում եմ,— ներս արի:

Ձայն չկա, բայց լսում եմ նրա ծանր շնչառությունը: — Ներս արի,— ասում եմ,— անպաշտպան կին եմ, վախենալու բան չունես, տանը մենակ եմ, ներս արի: Էդպես եմ ասում, որ համոզեմ՝ գա, ու ոնց որ թե հպարտությունը խոցվեց, թաքնված տեղից դուրս եկավ ու մտավ սենյակ:

— Ես ոչ ոքից չեմ վախենում,— ասում է,— ոչ տղամարդուց, ոչ կնոջից:

— Իհարկե, չես վախենա,— ասում եմ,— ոչ էլ Զոնին սպանելուց վախեցար, չէ, էդքան մարդու արյունը որ դուք եք թափել, ինչից պիտի վախենաք:

— Հա, Էլայզա,— ասում է,— չեմ վախենում, դրա համար էլ եկել եմ մոտդ, քեզ վստահում եմ, գիտեմ, չես ծախի, օգնիր ինձ, Էլայզա,— ասում է ու նայում ոնց որ թակարդն ընկած գազան, չէի ուզի որևէ մեկի աչքերն էդպես նայեին: Աստված, լավ էր մեռնեի, քան դրան էդպես տեսնեի: Մի բան ինձ համար պարզ էր: Ինչ էլ էդը արած լիներ, ես նրան ոստիկանության ձեռքը տվողը չէի:

— Մի վախենա, էդ,— ասում եմ,— մարդու բան չեմ ասի:

Ընկերոջդ՝ Լորենսին էլ ասա՝ ներս գա: Գիտեմ, հետդ է: — Էդը շշմած ինձ նայեց:

— Ինչ ես խոսում, Էլայզա,— ասում է,— Լորենսը չի եկել, հետս մարդ էլ չկա:

— Ես գիտեմ, կա, թե՝ չէ,— ասում եմ,— թող ներս գա:

— Դու ինչ գիտես հետս է,— ասում է,— ինչի՞ ես էդպես համոզված:

— Ինձ զգուշացրել էին, էդ, ես նախօրոք գիտեի, որ երկուսդ էլ մոտս եք գալու:

— Ո՞վ էր զգուշացրել,— ասում է վախեցած,— ո՞վ գիտեր, որ զգուշացներ:

— Մի վախենա,— ասում եմ,— ոչ ոք չգիտի, որ դու էստեղ ես, իսկ զգուշացնողի մասին հեչ մի մտածիր: Նա էս աշխարհից չի, ավելի պարզ չեմ կարող բացատրեմ, ինքդ մի օր կհասկանաս: Էս խոսքիս վրա Էդի աչքերը չռվեցին:

— Չլինի՞ քեզ ոգիներն են զգուշացրել:

— Հա,— ասում եմ,— ոնց էլ իմացար, եկել էին, ականջիս կանչում էին, որ Լորենսն ու դու ճամփին եք ու քսան րոպեից էստեղ եք լինելու:

Էդը մնաց-մնաց, հետո, թե՝ «սխալվում ես, Էլայզա, չեմ ուզում քեզ վախեցնել, բայց թե էստեղ ոգի է եղել, հաստատ ուրիշ բանի համար եկած կլինի»:

— Դու ինչ գիտես,— հարցնում եմ:

— Ասացի, չէ՞, որ Լորենսը հետս չի, բանտից դուրս եկանք ու ջոկ-ջոկ գնացինք: Մտածեցինք՝ էդպես լավ կլինի: Լորենսը փախավ Հարավային Կարոլինա: Ես էլ ասի՝ լավ է լեռներով գնամ, որ կարողանանք ձեռքից պրծնենք, էնտեղ արևմուտքում կարող է հանդիպենք:

— Ինձ նայիր,— ասում եմ,— հո չե՞ս խաբում:

Էդը նայեց ուղիղ աչքերիս ու՝ արևս վկա, ճիշտ եմ ասում:

— Ուրեմն, էն ուրիշ բանի համար էին կանչում,— մտածում եմ,— բայց ոչինչ, էդ էլ կպարզենք: Դե հիմի ասա, թե ինչի ես եկել, ուզածդ ինչ է:

— Էլայզա,— ասում է,— գիշերս լեռներով պիտի անցնեմ հագիս էլ ոտնաման չկա, բոբիկ եմ:

Ոնց էլ չէի նկատել. ոտաբոբիկ էր, գջլոտ, արյունլվիկ, հագին մի կարգին շոր չկար: Վրայինը մի քրջոտ շալվար էր, վայթե ինչ բանտ էր ընկել, հագից չէր հանել, մի հատ էլ հին, կեղտոտ ֆլանելե շապիկ էր հագել՝ ուսերից հետ ճղրտած. մազերը թնջուկ ընկած, լցվել էին աչքերը. էդքան ժամանակ դրա գլխին սանր չէր դիպել, երկու ամսվա թրաշն էլ եկել, աչք ու երեսը փակել էր: Մի խոսքով, նայողը լեղապատառ կլիներ: Հետո որ հերդ եկավ, ասում եմ.— Էդպես բան ոչ լսել էինք, ոչ տեսել, Էդին ամեն ինչ տվել էին, բացի ամենապետքական բաներից. գրպանն ատրճանակ ու փամփուշտ էին լցրել, որ պետք եղած ժամանակ գործի դնի, իբր

քիչ մարդու գլուխ է կերել... չէին մտածել, թե սրան, որ էսպես անկոշիկ, անշոր վեր ենք վարում, ախր կսառի:

— Ուրիշ ճար չունեմ,— ասում է,— դրա համար էլ քեզնից եմ խնդրում, թե չէ ոտքերս սարերում բզիկ-բզիկ կլինեն, իսկ որ չքայլեմ, կորած եմ, հաստատ կբռնեն:

— Էլի որ կբռնեն,— ասում եմ:

— Դրա համար էլ եկել եմ, Էլայզա, գիտեմ՝ մարդու բան չես ասի, ոտքերս անճոռնի մեծ են,— ասում է,— մենակ քո մարդու կոշիկներն իմ հագը կլինեն, մի զույգ հին կոշիկ որ տաս, ինչ կլինի, տեղը փող կտամ քեզ, փող շատ ունեմ: — Ու հանեց խրձով փողի կապոցները,— ուզի՝ տամ,— ասում է:

— Չէ,— ասում եմ,— էդ մեկն ինձ պետք չէ: — Դրա փողն ախր տեղով արյուն էր, բա ես ձեռք կտայի:

— Հիմի բերեմ կոշիկները,— ասում եմ ու պահարանից հանում մի զույգ նոփ-նոր կոշիկ, հայրդ մի քանի ամիս առաջ էր առել, իսկ նա շատ խնամքով հագնվող մարդ էր:

— Առ,— ասում եմ,— Աստծո օգնությամբ տեղ հասնես:

Հագավ, ու ոնց որ ոտքով կարած լինեին: Հիմի էդ կոշիկները հագին՝ բռնել է ձեռքս ու լաց է լինում, երևի մարդասպանի մեջ էլ մեկ-մեկ զգացմունք ու խիղճ է մնում:

— Քո արածը,— ասում է,— կյանքում չեմ մոռանա, ասա, ես քո լավության տակից ոնց եմ դուրս գալու:

— Ասեմ ոնց,— իսկույն գլխի եմ ընկնում,— էդ կոշիկները բարով մաշես, փողդ էլ քեզ լինի, բայց գրպանիդ ատրճանակը քեզ հեչ պետք չի: Ինչքան արյուն թափել ես՝ հերիք է: Մեկ էլ չլսեմ, որ քո ձեռքից մարդ է տուժվել: Որ քեզ բռնեն էլ, սրանից օգուտ չկա:

Էս որ ասի, գլուխը քարշ գցած մի քիչ մնաց, հետո ատրճանակն հանեց ու տվեց ինձ:

— Կարող է ճիշտը դու ես,— ասում է,— բայց բռնեն էլ՝ պետքս չի, էդքան մեղքի տակից ոնց եմ դուրս գալու:

— Էդպես մի ասա,— համոզում եմ,— կին, երեխեք ունես՝ աչքները քո ճամփին, նրանց մասին բա չես մտածում: Ինձ որ լսես, կգնաս մի օտար տեղ, որ քեզ ճանաչող չլինի, ու ամեն բան սկզբից կսկսես, հենց տեղավորվեցիր՝ մարդ ուղարկիր կնոջդ մոտ, երեխեքին առնի գա: Իմ գիտենալով նա լավ կին է՝ կգա:

Երևի խելքը մտավ ասածս, շուռ էր եկել ու ձայն չէր հանում:

— Դե հիմի գնա,— ասում եմ,— լավ չի լինի քեզ իմ տանը տեսնեն, գնա ու Աստված քեզ օգնական:

— Մնաս բարով,— ասում է,— այ գնում եմ՝ ուրիշ կյանք սկսեմ:

— Գնա, ճիշտ էլ կանես, էդպիսով համ մեղքերդ կքավես, համ էլ նոր մեղքի տակ չես ընկնի:

Նրան էլ չտեսա, էդ գնալն էր, որ գնաց:

Տասը րոպե չանցած, հերդ շնչակտուր տուն ընկավ, որ իբր ինձ լուր բերի:

— Բա չես ասի,— վրա է տալիս,— հինգն էլ փախել են: Հենզլին էլ խուժանի գլուխն անցած, Բլեկի խանութի ապակիները ջարդել է, որ զենք վերցնի՝ փախստականներին ետ բերի:

— Դրա համար արժեր, որ քաղաքի կեսը վազելով անցնես,— ծիծաղում եմ,— գոնե էնպես լուր բերեիր՝ չիմանայի:

— Ո՞նց թե,— ասում է,— դու էս բոլորը գիտեիր:

— Մի բան էլ ավել գիտեմ,— ասում եմ,— ոտս էլ տանից դուրս չեմ դրել:

— Բա էդ ինչ եղավ,— հարցնում է:

— Դու որ տանը չէիր, էստեղ մի մարդ էր եկել:

— Ո՞վ:

— Էդ Միրզը,— ասում եմ:

— Ինչ թե,— գոռում է հայրդ,— խելքդ գլխիդ է, բա օգնության կանչեիր, հարևաններին ձայն չտվեցիր:

— Որ ինչ,— հարցնում եմ:

— Դե ես գնամ ոստիկանատուն, քանի ուշ չէ:

— Չէ,— ասում եմ,— էդ մեկը չես անի: Ես էն մարդուն խոսք եմ տվել, էնպես չանես, որ ուխտադրուժ դուրս գամ, դու քո գործին կաց:

Հերդ մի քիչ մնաց, հետո էլ, թե՝ «ճիշտ ես ասում, երևի էդպես պիտի լիներ, բայց զարմանք բան է, զարմանք»:

Էդին ու Լորենսին էդպես էլ չկարողացան բռնեն: Հետո հերդ Կալիֆոռնիայում իմացավ, որ երկուսն էլ եղել են Տրումենի տանը, վեց ամիս հետո կանայք էլ գնացին մոտները: Տարին չլրացած՝ Լորենսի կինը Կոլորադոյում թոքախտից մեռավ, իսկ մարդն ինչ եղավ, էդպես էլ չիմացանք: Ասում էին Կանզասում նորից է պսակվել ու մի հինգ-վեց երեխա էլ էս կնոջից ունի: Պատմում են, որ կարգին տունուտեղ ունի, շատ էլ հարգված մարդ է, բա...

Էդի մասին ամեն բան Հենզլիից իմացանք: Տրումենն ասում էր՝ Էդը գնացել է Կոլորադո՝ կորած-մոլորած ինչ-որ հանքում աշխատելու: Հենց տեղավորվել էր, կնոջը իմաց էր տվել, թե՝ արի: Կինն Էլ էնտեղ մի տարու չափ մնացել էր ու նորից ետ եկել հորանց տուն, ասել էր՝ «դիմանալու բան չի, մարդս խելքը թռցրել է, միամիտ տեղը մեկ էլ սկսում է գոռգոռալ, թե՝ մեռելներն ընկել են ետևիցս, իմ սպանած հոգիներն հարություն են առել՝ եկել են ինձ տանեն»:

— Տեսնում ես,— ասում եմ հորդ,— դրանց բոլորի վերջը էդ է:

— Հաստատ խիղճն է տանջում,— ասում է հայրդ:

Տրումենը աղջկան տարել էր արևելք, որ էլ մարդու երեսը չտեսնի: Էդն, իհարկե, դեմ էր, սպառնացել էր աներոջը, վախեցրել, որ կսպանի: Տրումենն ասում էր. «Չթողեցի աղջկաս վերադառնա, ես հո տեսնում էի, որ էդ մարդը խելագարվում էր»:

Վերջը Էդի կինը ապահարզան ստացավ. ամուսնալուծության գործը Ջեթերին էին տվել, էդ ժամանակ նա դեռ սենատում չէր: Ջահել, նոր ավարտած իրավաբան էր: Ասում էին՝ հենց էդ գործի ժամանակ սիրահարվում է Էդի կնոջն ու ամուսնանում հետը՝

բաժանվելուց վեց ամիս էլ չանցած: Հորդ ասում եմ.— Բա էդ անելու բան էր, գոնե մի քիչ սպասեին:

— Հա,— ասում է,— էստեղ են ասել, էլի.

Խնայողություն, խնայողություն, Հորացիո:

Մեռելճաշի կերակուրները պաղ մատուցվեցին

Հարսնասեղանի հրավիրյալներին *:

Մի անգամ Հենզլիին ուղարկել էին արևմուտք մի հանցագործի ետևից ու որ վերադարձավ՝ պատմեց, որ Մեխիկոյում տեսել է էդ Միրզին. երկուսով Տեխասից Մեխիկո գնացող նույն նավի վրա են եղել: Էդը մորուքով է եղել, բայց ինքը, մեկ է, ճանաչել է:

— Շատ էր փոխվել,— ասում էր,— էլ էն էդը չէր, ոնց որ էն աշխարհից եկած լիներ՝ կաշի ու ոսկոր, մի սկյուռի չափ միս էլ չկար վրեն:

— Ինքը քեզ չճանաչեց, հետդ չխոսեց,— հարցնում ենք:

— Բա ոնց,— ասում է,— նույն նավախցում չորս օր մնացինք, ախպոր պես ենք եղել էդ չորս օրը: Սկզբում մտածեց՝ իր համար եմ եկել:

— Դոկ,— ասում է,— գիտեմ, եկել ես ինձ տանելու, ինչ արած, գնանք:

— Էդ ինչ ես խոսում,— ասում եմ,— քեզ հո չէի փնտրում, ուրիշ մարդու համար եմ եկել, դու իմ ինչին ես պետք, նույնիսկ քեզ ձերբակալելու իրավունք չունեմ, մոտս արտոնագիր չկա:

— Մեկ է,— ասում է,— մի օր ինքս կգամ: Մենակ թե մինչև մեռնելս մեկն էլ կա, դրան էլ էն աշխարհ ուղարկեմ, ու էն ժամանակ կարող եք ինձ բռնել՝ ուզածներդ անել:

— Էդ ո՞վ է էդ մեկը,— հարցնում է Հենզլին,— ինչի՞ ես ուզում սպանես:

— Զեթերը,— պատասխանում է:— Էդը նրա դեմ շատ էր չարացած, համ կնոջ ապահարզանի գործն էր գլուխ բերել, համ էլ վերջում ամուսնացել հետը:

Հենզլիին էդը մի նամակ է տալիս, որ սա հանձնի Զեթերին: Հենզլին կարդացել էր նամակն ու ասում էր.— Կյանքումս էդպես բան չեմ տեսել:

— Թող ես մարդասպան լինեմ,— գրել էր,- բայց երբեք էնքան նամարդ չեմ եղել, որ ուրիշի կնկան գողանամ:

Իմացած լինես, Զեթեր, որ ես գալիս եմ, տուն ու դուռդ հավաքիր ու ինձ սպասիր: Կարող է մի ամսից գամ, կարող է մի տարուց, ուզեմ տասը տարի կսպասեմ՝ նոր: Բայց որ կգամ, էդ հաստատ: Հետդ հաշիվ ունեմ մաքրելու: Պատրաստ կաց:

Հենզլին ասում էր, որ երբ նամակը տվել է Զեթերին՝սրա

---

* Վ. Շեքսպիր, «Համլետ», արարված 1-ին, տեսարան 2-րդ, թարգմ. Հ. Մասեհյանի:

գույնը երեսից թռել է, սկսել է դողացնել: Նամակը ստանալուց հետո էդ մարդու քաշածը կյանք չէր, էնքան տանջվեց, մինչև որ մի անգամ եկան ասին, թե՝ էդը սպանվել է: Էդը չհասցրեց իր սպառնալիքն իրագործել, բայց որ չսպանեին, կգար կհասներ: Էսպես բաներ, տղաս...

— Զույգ-զույգ, քսան-քսան,— կանչում էին ձայները:

— Ինչ եք ուզում,— հարցնում եմ:

— Բան էլ չեն ուզում,— վրա է տալիս հերդ,— քեզ է թվում:

— Համբերիր,— ասում եմ,— մի քիչ կաց՝ կտեսնես:

Ու ճիշտ որ, շատ երկար չսպասեցինք: Օրը ճաշ չդառած՝ ցավերս սկսվեցին: Էդ ինչ քաշեցի, Աստված, ոնց որ մարդու մեջտեղից ճղեին:

Հերդ էդ օրը շուտ էր եկել տուն ու բակում կանգնած խոզի ճարպ էր հալում:

— Տնաշեն,— ասում եմ,— էդքան խոզի միսը առել ես, որ ինչ: Քո հոր պես անտնտես մարդ աշխարհիս երեսին չկար, տղաս, փողը բուռ-բուռ էր ծախսում ու՝ որ ինձանից չվախենար, էն չունեցած կոպեկն էլ գինետանը կմսխեր կամ միս կառներ, կամ էլ գյուղացիք կհամոզեին ու հեչ բանի դեմ փողը ձեռքից կառնեին:

— Քո տունը շինվի,— ասում եմ,— ով խնդրեց էդքան միս առնես: Մառանը լիքը միս էր, մենակ վեց կտոր խոզապուխտ ունեինք ու էդ անաստված հերդ հսկա կրտած խոզը շալակել, բերել էր:

— Մարդ աստծո, էդքան խոզի միսը ո՞վ պիտի ուտի,— ասում եմ,— երեխեքն էլ կհիվանդանան շատ միս ուտելուց:

Էհ, տղաս, էնքան եմ հորդ երեսից լաց եղել, ունեցած փողը քամուն էր տալիս: Մեկ-մեկ դիտմամբ ասում էի.— Քո պես շատակեր մեկ էլ դու ես, բկիդ համար մեռած ես, էսպես որ գնա, բանի տեր չենք դառնա, աշխատածդ փորդ ես լցնում: Հո խելքդ էլ փորումդ չէ:

Մեկ էլ տեսար ծանոթ գյուղացու էր հանդիպում ու էս մարդու վրան մնացած ապրանքը առնում բերում էր: Մի օր էլ էդ տնաքանդը հինգ հարյուր հատ ձու առավ՝ բերեց տուն: Հերսիցս քիչ մնար ձվերը գլխովը տայի: Հեչ ասա մենք հավ ունեինք կամ մեր հավերը ձու ածո՞ւմ էին:

— Էս ինչի՞ ես էսքան ձուն շալակել բերել,— հարցնում եմ:

— Եսիմ,— ՀՀմած-ՀՀմած նայում է վրաս,— դյուժինը յոթ ցենտով էին տալիս, ասի՝ առնեմ էլի, ասի՝ էդպես էժան ապրանք եսիմ էլ ե՞րբ լինի...

— Որ երկու ցենտով էլ տային, չպիտի բերեիր,— ասում եմ,— ձեռքինդ չիր չի, փող է: Հիմա էս ձվերն ինչ ենք անելու:

— Ոնց թե,— ասում է,— երեխեքը կուտեն:

— Կուտեն, բա ոնց, էնքան ուտեն, զզվեն, էլ չուզենան ձվի երես նայել:

— Ինչ ասեմ, էլայզա, ուզում էի մի օգտակար բան արած լինեի, բայց ոնց որ թե սխալվել եմ:

Մի անգամ էլ տուն եկավ՝ հետը մի սել ձմերուկ ու սեխ, քսանչորս հատ ձմերուկ էր առել, մի հարյուր հատ էլ սեխ:

— Էս ինչ ես բերել,— ասում եմ,— հեչ գլխումդ խելք մնացել է:

— Ինչ ես գոռգոռում,— նեղանում է,— երեխեքը կուտեն:

Լյուկն էնքան կերավ, անկողին ընկավ, ահագին փող էլ բժշկին տվեցինք:

Բա որ մեկ-մեկ գալիս էր՝ հետը բեռներով սիմինդր ու պոմիդոր, լոբի ու անուշ ոլոռ, բերում էր սոխ, բազուկ ու շաղգամ, տեսակ-տեսակ պտուղներ. տանձ ու խնձոր, դեղձ ու սալոր, ոնց որ տան կողքի այգին՝ հազար տեսակ բարիքներով մերը չէր: Բան ու գործս թողած՝ մտածում էի ինչ անեմ՝ էդքան ապրանքը չփչանա:

— Անաստված,— ասում եմ,— հիմի էսքան բանը տեղավորեմ, թե երեխեքիդ նայեմ: Էդ վիճակով սկսեցի հորդ բերած պտուղները լցնել բանկաներն ու փակել, փակում եմ ու հեչ վերջը չի երևում: Հերդ էլ էդ անտեր խոզով է ընկել. ճարպի կծու հոտը բռնել է տուն ու դուռ, իսկ ես բանկաներն եմ վրա-վրա լցնում, չորս հարյուր երեսունյոթ բանկա բալ, խնձոր ու դեղձ, սալոր ու խաղող էի փակել, հետն էլ սերկևիլի մուրաբա ու տանձ, տոմատի խյուս, երկու տեսակի թթու էի դրել՝ վարունգը ջոկ, էն մեկելը՝ ջոկ: Մառանը ոտք դնել չէր լինում, մինչև առաստաղ լցրել էինք: Բայց հերդ էլ լավ ուտող էր: Ես լավ ուտող շատ եմ տեսել, բայց նրա պես մեկ էլ ինքն էր, հաստատ պապոնց կողմին էր քաշել: Ինքն էլ էր ասում. «Որ տղա ժամանակ հացի էինք նստում, մեր կերածը մի եզ կկշտացներ»: Տատիդ հաց ուտելն էլ հո ես եմ տեսել: Հավի ճուտն ու կես բաղարջը մի բերան էր անում, հլա Ավգուստային էլ ասում էր. «Աղջի ջան, ափսես մեկ էլ լցրու»: Յոթանասուն տարեկան պառավ կնիկ էր էդ ժամանակ: Ինսունվեց տարի ապրեց, ու նրան էլի բան չէր լինի. բկի երեսից մեռավ: Մի օր իմացանք, որ նստած տեղից ձեռքը երկարացրել է, որ սիմինդր վերցնի ուտի, աթոռից ընկել էր, էլ վեր չկացավ, ոտը կոտրել էր, ինքն էլ պառավ էր, ու ոսկորը չէր կպչում: Ես էլ սկեսուրս:

Հերդ ոնց էր դիմանում էդքան ուտելուն, գլուխ չէի հանում. առավոտը ձվածեղ էր ուտում խոզապխտի հետ, հետո ձավարով շիլա, երշիկ, տապակած միս ու նոր թխած խմորեղեն, բաժակներով սուրճն էլ չափվում էր ու վեր կենում: Ճաշին ու ընթրիքին էլ նորից տեսակ-տեսակ բաներ. խոզ ու ձուկ, հավ ու լարդ, բանջարեղեն, սուքոտաշ *, լոբի, բակլա, կարտոլ ու շաղգամ, վրայից էլ դեղձի-մեղձի մուրաբա: Մի անգամ Վեյդ Էլիոթին ասացի.— Բժիշկ, էս բոլորն ուտելն արեց, ամուսինս իր ձեռքով իր գերեզմանն է փորում:

— Այո,— ասաց,— բայց ախր ահագին ժամանակ է փորում:

Ու ճիշտ որ, դիմացկուն մարդ էր հերդ, որ ինձ լսեր, հիմի ողջ ու առողջ մեր կողքին կլիներ:

---

* Սուքոտաշ- լոբիով ու եգիպտացորենով պատրաստված ճաշ:

Նոր ինչ էի պատմում, հա, ճաշի ժամանակ ցավերս բռնեցին, ոնց որ դանակներ խրեին մեջս: Զոռով-զոռով հասա լուսամուտին ու գոռում եմ հորդ.

— Արի, շուտ-շուտ արի:

Խեղճը գործը թողեց ու վազելով եկավ:

— Էս ոնց եղավ,— ասում եմ,— ախր հլա շուտ է, դեռ ժամանակս չի:

— Չէ,— ասում է հերդ,— հենց էդ է, գնամ բժշկին բերեմ:

Էդ տարի մորեխը այգին տարավ... վաղուց էր, քանի տարի է անցել... էդպես էլ չհասկացա, ինչի էդքան շուտ եղան երեխեքս... Աստված ջան, ինչեր եմ քաշել, ինչեր, հիմի էլ ողջ-առողջ կողքդ նստած զրույց եմ անում: Քո մայրը, տղաս, հոգի ուժ ուներ մեջը, էդքան երեխա եմ բերել, ութը դուք, մի էդքան էլ մահացավ՝ չմնացին, դրանց մասին դու չգիտես: Իմ քաշածին ոչ մի ուրիշ կնիկ չէր դիմանա, հորդ հայհոյանքն ու ծաղրն էլ վրայից: Գժի պես մեկ էս կնկա հետ էր ընկնում, մեկ՝ մյուս, վերջում էլ ինքն իր արածից ամաչում էր ու գազան կտրում: Էդ ինչ տեսակ մարդ էր. անզուսպ, վայրենի, մեկ-մեկ ինձ թվում էր, որ նրան բոլորովին չեմ ճանաչում, մեջը սատանա կար, անսանձ, սարսափելի մի բան, նրա արածները իմ հասկանալու բանը չէին: Էնքան եմ դառնացած աղոթել, որ Աստված պատժի նրան: Բայց մեկ էլ հիշում եմ մորեխի տարին, նարնջի ծառերը, թզենին, մեր երգելը ու, որ միասին էինք, մեր լավ ու վատ ժամանակները: Լավն էլ եմ հիշում, վատն էլ, վշտաքամ իմ արցունքներն եմ հիշում ու երջանկությունս, որ ուզեմ էլ չեմ կարող քեզ ասել, թե ինչն էր լավը: Ուզում էի ատել հորդ, բայց հիմի բերանս չի բռնում մի վատ խոսք ասեմ նրա մասին: Տարօրինակ մարդ էր, բայց նրա կողքին ոչ մրսում էիր, ոչ սոված մնում, բոլորս կուշտ ու կուռ ուտում էինք: Որ հիշում եմ... էնքան վաղուց էր, սիրտս ուզում է մի լավ, շատ լավ բան ասեմ նրա մասին, բայց չգիտեմ, թե ինչ:

Էդ տարի երեխեքս տիֆ ընկան. Ստիվն ու Դեյզին հենց մի քիչ ոտի ելան, մենակս առա, տարա սրբի դուռը: Հերդ չդիմացավ՝ վեր կացավ եկավ ու հլա չհասած՝ սկսեց խմել: Որոշեցի խմիչքը ձեռքից առնեմ, բայց Ստիվի հետ թաղել էր տան մոտի ավազի մեջ: Ինձ որ էդտեղ տեսավ, սկսեց գոռգոռալ ու հայհոյել.— Ձեռք չտաս 22ին, թե չէ հերդ կանիծեմ, գրողի բաժին դառնաս դու:

Էդպես որ խոսում էր, սրտիցս արյուն էր կաթում, ինձ պատեպատ էի տալիս, տեղացիներից մի խրճիթ էինք վարձել, կանգնում էի դռանն ու մտածում. ոչ երկաթգիծ կար, ոչ բան, որ կողմ նայեիր ավազ էր, փափուկ, սորուն ավազ. երեխեն էլ ընկներ՝ բան չէր լինի, ու ասում էի՝ Աստված ջան, ինչ անեմ ես, ինչ:

Մյուս օրը հերդ արդեն լավ էր: Երեկոյան կողմ երեխեքին առանք գնացինք Մարիոնի ամրոցը, Պոնս դը Լեոնի մոտ: Ահագին ժողովուրդ էր հավաքվել, բոլորը հագած-կապած, նվագախումբն էլ ոնց որ պետք էր, ու հենց դրոշակն երևաց, սկսեցին կրակել ու

փող հարել՝ տուդլու, տուդլու ... մանր երեխեքն էլ ձեռքերը կլոր արած դրել էին բերաններին ու իրենք էլ էին տուդլու կանչում. էնպես անուշ նվագ էր, ծտեր էին խուրձ-խուրձ պտտվում, չորս կողմը արմավի ծառեր էին, ջրի կողքի նարնջենին ծաղկել էր, մայրամուտին արևը՝ կլոր ու մեծ նարնջի պես ընկավ սև ամրոցի ետևը: Մարդիկ խումբ-խումբ կանգնած երաժշտություն էին լսում:

Հունվարին այգին մորեխ ընկավ, ձմեռ օր էր, իրիկունը ցավերս բռնեցին:

— Վեր կաց,— ասում եմ հորդ,— գնանք:

— Ինչ է եղել,— հարցնում է:

— Շուտ արա, Աստված, մեռնում եմ, շուտ արա, տեղ հասնենք: Գնացինք, վայ էն գնալուն՝ երեխեքը հետներս, ոտքներս սահում են, մտնում ավազի մեջ:

— Չեմ հասնի,— մտածում էի,— էլ կյանքում տուն չեմ հասնի, ու ցավից գժվում եմ:

Ճամփի կեսին ստիպված ինձ ձեռքերին առավ, ու էդպես գնացինք մինչև տուն:

— Տեսար արածդ,— ասում եմ,— քո մեղքով էսպես եղա:

Հերդ գույնը գցեց ու լավ վախեցավ:

— Տեր Աստված,— ասում էր ու ետ ու առաջ քայլում սենյակում:

Մութն ընկել էր, երեխեքը կողքիս կուչ եկած քնել էին: Հորդ հետ դուրս եկա բակ. թզի ծառ ունեինք, պառկեցի մոտը: Մարդիկ էին գալիս գնում, երգի, նվագի ձայն էր լսվում: Ծառերն անուշ բուրում էին: Մագնոլիայի, վարդի ու շուշանի, դաշտավլուկի, ուրիշ տեսակ-տեսակ ծաղիկների հոտ էր ընկել. երեխեքը տանը քնած էին, նարինջը ծաղկել էր, գլխիս վերև փունջ-փունջ աստղեր էին...

Վաղուց էր սա, որդիս, էդ տարի մորեխն այգին տարավ...

Նելսոնն ինձ ասում էր.— Մեջդ հողի ուժ կա, քո պես կին հեչ չեմ տեսել: — ՈՒ ճիշտ էր ասում, տղաս, ձեռքս չկպած՝ հողը բարով էր լցվում: Մի մատ երեխա էի. ծառ էի տնկում, պոմիդոր, տեսակ-տեսակ ծաղիկներ, մատներս հողն էի խրում, ու հասկս ծլում էր: Պառավ Շումախերը ժամերով բզբզում էր իր այգում, մարգերը շախմատի վանդակների պես կոկել էր, քաղհանել, ամեն բույս իր տեղը զգաստ կանգնեցրել. գերմանացիներն էին էդպես սովորեցրել: Ինձ էլ ասում էր.— Միք թողնի այգին բարձիթողի, էդպես չի կարելի, էդքան մոլախոտի մեջ ինչ պիտի աճի:

— Կապրենք՝ կտեսնենք,— ասում եմ,— ամեն բան էլ իր հերթով կաճի, քոնից պակաս որ չի լինի, իմոնք առանց էդ շան չարչարանքի էլ կաճեն: ՈՒ աճում էին, Շումախերի աչքը մեջն էր մնում, սոխ, պոմիդոր, բողկ ու կաղամբ հողից տռուզ-տռուզ դուրս էին ցցվում: Որ ճարս կտրվեր ու փողս հատներ, սոված չէինք մնա, վար ու ցանք կանեի, կապրեինք: Շատ եմ էդպես ապրել, որ պետք լիներ, էլի կապրեի:

Անցած ձմեռ գնացել էի Կատավաբա, ածխահատների ընկերություն՝ վարձը մուծելու, էնտեղ Միլեր Ռայթին տեսա, դրանից երկու օր չանցած մեռավ սրտի կաթվածից: Յոթանասուն տարեկան մարդ էր: Էդ օրը երեսին գույն չկար ու հա դողացնում էր:

— Էդ ինչ է եղել, Միլեր,— հարցնում եմ,— գույնդ հեչ դուրս չի գալիս:

— Ախ, էլայզա,— կմկմաց,— շատ եմ դարդ անում, շատ:

— Ինչ է եղել:

— Ապրուստս ձեռքիցս գնաց, մի քոռ կոպեկ էլ չունեմ: Ունեցած-չունեցածս բանկն էի գցել, ու փակվեցին անտերները: Ինչ եմ անելու:

— Ինչ կա, որ ինչ անես,— ասում եմ,— սկզբից սկսիր, բայց նույն սխալներն էլ չանես:

— Ախ, էլայզա, ուշ է, պառավ ենք, պառավ, յոթանասունս լրացել է:

— Պառավս ո՞րն է,— ասում եմ,— ինձ որ մնա, հենց վաղվանից կսկսեմ, համ կվարեմ, համ կցանեմ:

— Ախր ոնց սկսեմ, էլայզա, ոնց:

— Վաղվանից գործի կկպչենք,— ասում եմ,— ու քանի կանք, կբանենք: Էնպես գործ անես, որ բոլորի աչքը դուրս գա: — Էդպես եմ ասում, որ սիրտը առնեմ, էլի: Ոնց որ թե մի քիչ գույնը բացվեց,— լավ ես ասում, էլայզա:

— Հա, էնպես որ գործիդ կաց ու դարդ մի անի: Բոլորս էլ էդ ճամփով անցել ենք: Մեր քաշածը մենակ մենք գիտենք: Հիմիկվանների խելքը ինչ է հասնում, ամեն ինչ պատրաստ ձեռքերն ենք տվել:

Ես ու Միլերը նույն տեղի ծնունդ էինք: Էսօրվա պես հիշում եմ. տղամարդիկ շարքերով գնում էին կռիվ, կանայք լալիս էին, փոշուն ամպը բռնել էր չորս կողմ, էդ ինչ օրեր տեսանք, դառն էր մեր դատածը, բուրդ գզելն ու մանելը մի կողմից, վարել ցանելն էն մյուս ու ուրիշ բաներ, որ ոչ լսել ես, ոչ տեսել, զավակս:

Ամառնամուտ էր, ջրի ափին երգում էինք՝ անհաց, անշոր ու դարդոտ, հազար ցավի տեր:

— Հիշո՞ւմ ես, Միլեր,— հարցնում եմ:

— Հիշում եմ,— ասում է,— էլայզա, բայց հիմի էլ էն չենք, հիմի կարո՞ղ ես էդպես աշխատել:

— Մի բան էլ լավ կաշխատեմ, Միլեր, ինչ անենք, որ էս անգամ տուժողը ես ու դու եղանք, մեր պես էնքան կա, մեր կարճ խելքով ուզում էինք էնպես անենք, լավ լիներ: Ու թույլ տվեցինք մեզ խաբեն, որ մտածում եմ... էն ժամանակ մտքիս կար ... որոշել էի մի երկու անգամ էլ գործ բռնել դրանց հետ ու մի կողմ քաշվել: Էս փորձանքը մեր գլխին էն ,խարդախ անտերներն ու Նյու Յորքի ջհուդները բերեցին, մի օրում ինչքան դրամաշորթ կար լցվեց էստեղ: Թե փոթորիկը չլիներ, Ֆլորիդայում առած ապրանքին բան էլ չէր լինի: Էսքանը քիչ էր, Կալիֆոռնիայի թոկից փախածները լուր էին տարածել, թե Միջերկրականի կողմից ծառի ճիճու է անցել Ֆլորիդա: Թե հյուսիսային բևեռում էդ ճիճվից կար, նույնն էլ Ֆլորիդայում

Դիտմամբ էդ լուրը տարածեցին, որ մեզ վնաս տան, սնանկացնեն: Փորները չէր տանում, որ Ֆլորիդան իրենցից առաջ է: Հուվերն էլ էդ հրոսակախմբի գլուխն անցած՝ օգնում էր չարագործներին, ինչ է թե ինքը ծնունդով Կալիֆոռնիայից էր: Բայց մեկ է, Ֆլորիդան կա ու կմնա. բանկերն էլ մեղք չունեն, նրանց ձեռքն ինչ կա, ուզեն էլ բան չեն կարող անել: Հիմա քեզ մի բան ասեմ, Միլեր, գաղտնիք է, բայց քեզ կասեմ. մի բուռ հող ունեմ գյուղում, ոչ ոք չգիտի, սև օրվա համար եմ պահել, որ շատ նեղն ընկա, կգնամ ու իմ օրվա հացը վար ու ցանքով կհանեմ: Ուզենաս դու էլ կգաս, իմ տանը մարդ սոված չի մնա:

Ախ, Էլայզա,— ասում է,— ուշ է, ուշ, սկսելու համար ես շատ պառավ եմ, ամեն ինչ գնաց կորավ:

— Մի ասա, Միլեր, ամեն ինչ չէր կարող կորել, մի բան էլ ունենք:

— Ինչ ունենք,— հարցնում է:

— Հողը, Միլեր, հողը միշտ էլ մերն է: Ամուր, երկու ոտքով կկանգնենք հողին ու կփրկվենք: Հողը տիրոջը չի ուրանում, Միլեր...

Ցավը գալարվում էր մեջս: Հայրդ բժիշկ Նելսոնի հետ վազեվազ եկավ:

— Չէ,— ասում եմ,— բժիշկ, չի կարող պատահի, ժամանակս չէ, երկու շաբաթ էլ ունեմ:

— Մի վախենա, Էլայզա,- ասում է,— ժամանակդ է:

— Ուի ճիշտ որ, էդ էր, որ կար:

— Զույգ-զույգ, քսան-քսան,— կանչում էին:

Գիշերով, էդ Միրզի գալուց քսան օր հետո, հոկտեմբեր ամսի տասնյոթին (տասից քսան պակաս) զույգ տղա բերեցի: Բենս ու Գրովելը գիշերով ծնվեցին: Որ լուսացավ, ամեն ինչ պարզվեց. հասկացա ձայներն ինչ էին անում: Էն է իմ պատմությունը, տղաս: Հորդ ասում եմ.— տեսնեում ես, ինձ չէիր հավատում:

— Դու ճիշտ ես, Էլայզա,— ասում է,— զարմանք բան է, զարմանք:

Լսում ես, որդիս, նավահանգստի կողմից ձայներ են գալիս, էլի նավեր են անցնում:

Ապրիլ ամսին տուն կգնամ. ծառերս ծաղկած կլինեն. բալենին, դեղձի ծառն ու դափնին, հոնի, յասամանի թփերը: Այգում մի խնձորենի ունեմ, հունիս ամիսը չմտած՝ մեր կողմերում ինչքան ծիտ կա, հավաքվում է գլխին: Քո տնկած հասմիկի թուփը հիմի պատուհանի կողքին ծաղկել է:

Քեզ լավ նայիր, զավակս, լավ սնվիր... Ինչ գործ ունեիր էստեղ՝ մեզնից հեռու, օտար մարդկանց մեջ... Սարերն էլի սիրունացել են՝ գարուն է գալու... Ինչ ունեիր էստեղ, տղաս, հեռու, մենակ, տուն դարձիր, զավակս... Էլի նավերն են... Աստված, հորդ պես թափառական ես ծնվել... չես լսում, տղաս. նավերը ճամփա են ընկնում...

ՋՈՐՋ ՕՐՎԵԼ
ԱՆԱՄՆԱՖԵՐՄԱ

Անգլերենից թարգմանեց
ԱՐՏԱՇԵՍ ԷՄԻՆԸ

ԳԼՈՒԽ 1

Գիշերվա դեմ «Մենը» ֆերմայի տեր Զոնզը կողպեց հավաբները, սակայն չափից դուրս հարբած էր, որպեսզի հիշեր գոմերը փակել: Շորորալով, լապտերի լույսը դեսուդեն պար տալով, նա ետնամուտքի մոտ դեն շպրտեց սապոգները և, լվացքասենյակի տակառից մի վերջին կուժ գարեջուր քաշելով, դիմեց վեր, ուր արդեն խռմփում էր միսիս Զոնզը:

Ննջասենյակի լույսը մարելուն պես՝ ֆերմայի կառույցներով մեկ իրարանցում սկսվեց: Ցերեկով խոսք էր տարածվել, թե ծեր Գնդապետը, մրցանակակիր ճերմակ կինճը, նախորդ գիշեր արտասովոր մի երազ է տեսել և ուզում է այն հաղորդել մնացած անասուններին: Որոշվել էր հավաքվել մեծ ամբարում, հենց որ միստր Զոնզը բարով խերով քաշվի մի կողմ: Ծեր Գնդապետը (նրան միշտ այդպես էին կոչում, չնայած նա ցուցադրվում էր ուրիշ անվան տակ՝ Վիլինգդոնյան Հրաշք) ֆերմայում այնքան մեծ հարգանք էր վայելում, որ ամեն ոք հոժարաբար զոհեց իր մեկ ժամվա քունը՝ նրա ասելիքը լսելու համար:

Ամբարի մի ծայրում, հեծանից կախված լապտերի տակ, Գնդապետն արդեն թիկն էր տվել ծղոտին, բեմի նման մի հարթակի վրա: Նա տասներկու տարեկան էր և վերջերս բավական գիրացել էր, բայց և այնպես դեռևս սքանչելի տպավորություն գործող մի խոզ էր, իմաստուն ու բարյացակամ տեսքով, չնայած այն հանգամանքին, որ նրա ժանիքները երբեք չէին կտրվել: Շատ չանցած սկսեցին ժամանել նաև մյուս անասունները և իրենց հարմար ձևով տեղավորվել: Առաջինը երեք շներն էին՝ Զանգակը, Ջեսին ու Փինչերը, ապա՝ խոզերը, որոնք ծղոտին փռվեցին անմիջապես հարթակի կողքին: Հավերը թառեցին պատուհաններին, աղավնիները թևածելով ծվարեցին կտուրի շեղ գերաններին, ոչխարներն ու կովերը պառկեցին խոզերի հետևում ու սկսեցին որոճալ: Երկու գրաստները՝ Դմբուզն ու Երեքնուկը, ներս մտան միասին, դանդաղ ու զգուշորեն գցելով իրենց փոչոտ սմբակները, որ հանկարծ հարդի մեջ մի մանր էակի չտրորեն: Երեքնուկը կյանքի կեսը բոլորող պարարտ մի զամբիկ էր, որն իր չորրորդ քուռակից հետո այդպես էլ չէր վերականգնել նախկին կեցվածքը: Դմբուզը հսկա մի գազան էր, համարյա տասնութ թիզ բարձրությամբ՝ երկու սովորական ձիու ուժի տեր: Քթով իջնող սպիտակ բիծը նրան փոքր-ինչ տխմար տեսք էր տալիս. ինչևէ, նա օժտված չէր առաջնակարգ բանականությամբ, սակայն համատարած հարգանք էր վայելում որպես կայուն նկարագրի և անսահման աշխատունակության տեր: Չիերից հետո ներս մտան Մյուրիելը՝ սպիտակ այծը, և Բենիամինը՝ էշը: Բենիամինը ֆերմայի ամենասերկարակյաց անասունն էր և՝ ամենադժվարահաճը: Նա սակավախոս էր, իսկ խոսելիս սովորաբար ցինիկ մի դիտողություն

էր անում, օրինակ, ասում էր, որ Աստված իրեն պոչ է պարգևել ճանճերին քշելու համար, սակայն ինքը կնախընտրեր, որ ոչ պոչը լիներ, ոչ էլ ճանճերը: Նա միակն էր ֆերմայի անասուններից, որը երբեք չէր ծիծաղում: Պատճառը հարցնելիս, նա պատասխանում էր, որ ծիծաղելու առիթ չի տեսնում: Բաց և այնպես, առանց բացեիբաց այդ ընդունելու, նա նվիրված էր Դմբուզին, և հաճախ երկուսը կիրակիներն անց էին կացնում միասին՝ բոստանի հետևից փոքրիկ ցանկապատած հողամասում կողք-կողքի լուռ կանգնելով:

Հազիվ էին երկու ձիերը տեղավորվել, երբ ամբար լցվեց մորը կորցրած բադիկների մի երամ՝ կամացուկ ծվծվալով, նրանք դես ու դեն էին անում, որ ոտքի տակ չընկնեն: Երեքնուկն իր հսկա ոտքով նրանց պատսպարեց, և բադիկները տեղնուտեղը պառկեցին ու քուն մտան: Վերջին րոպեին, մի կտոր շաքարը բերնին, կոտրատվելով ներս ճեմեց Մոլլին, սիրունիկ ու հիմար զամբիկը, որը քաշում էր միստր Ջոնզի երկանիվ կառքը: Նա տեղ գրավեց առջևում և սկսեց տարուբերել իր ճերմակ բաշը՝ հուսալով ուշադրություն հրավիրել մազերին հյուսված կարմիր ժապավենին: Կատուն եկավ ամենավերջում, սովորականի պես նայեց շուրջը՝ ամենատաքուկ տեղը փնտրելով, և վերջապես խցկվեց Դմբուզի և Երեքնուկի միջև, ինքնագոհ մռմռալով Գնդապետի ճառի ամբողջ ընթացքում՝ առանց ականջ դնելու վերջինիս և ոչ մի խոսքին:

Հիմա արդեն ներկա էին բոլոր անասունները, բացի Մովսեսից, ձեռնասուն ագռավից, որը քնում էր ետնամուտքի կողքի ցցին թառած: Համոզվելով, որ բոլորը, հարմար դիրք ընդունած, ուշադիր սպասում են, Գնդապետը կոկորդը մաքրեց և սկսեց.

— Ընկերներ, դուք արդեն լսել եք անցյալ գիշեր իմ տեսած արտասովոր երազի մասին: Սակայն դրան ես կանդրադառնամ ավելի ուշ: Նախքան այդ ես ուրիշ ասելիք ունեմ: Ես չեմ կարծում, ընկերներ, որ դեռ շատ ամիսներ ունեմ ձեզ հետ անցկացնելու, բայց նախքան մեռնելը ես իմ պարտքն եմ համարում ձեզ փոխանցել ունեցած-չունեցածս փորձը: Բավական երկար ապրելով՝ ես շատ ժամանակ եմ ունեցել գոմում մենակ պառկած մտածելու և, թերևս, իրավունք ունեմ հավակնելու, որ աշխարհիս կյանքը հասկանում եմ ցանկացած այլ կենդանուց ոչ պակաս: Եվ այդ մասին է ահա, որ այժմ կցանկանայի խոսել ձեզ հետ:

Ուրեմն, ընկերներ, ինչ է իրենից ներկայացնում մեր այս կյանքը: Եկեք ծուռ նստենք, բայց շիտակ խոսենք. մեր կյանքը ողորմելի է, տքնաջան և կարճատև: Մենք ծնվում ենք, մեզ մի բուռ լափ են տալիս՝ ինչ է, թե շունչներս չփչենք, նրանց, ովքեր ընդունակ են, անխնա բանեցնում են, քամելով ուժերի վերջին կաթիլը, և այն նույն պահին, երբ մեր պիտանիությունը սպառվում է, մեզ հրեշավոր անգթությամբ մորթում են: Մեկ տարին բոլորած և ոչ մի կենդանի Անգլիայում չգիտե, թե ինչ է երջանկությունը կամ հանգիստը: Անգլիայում և ոչ մի կենդանի ազատ չէ: Կենդա-

ու կյանքն անցնում է թշվառության և ստրկության մեջ՝ ահա դուտ եղելությունը:

Սակայն արդյոք սա է իրերի բնականոն ընթացքը: Միթե մեր այս երկիրն այնքան աղքատիկ է, որ ի վիճակի չէ ապահովել իր բնակիչների պատշաճ կյանքը: Ոչ, ընկերներ, հազար անգամ ոչ: Անգլիայի հողը բերրի է, եղանակը՝ նպաստավոր: Մեր երկիրն այժմ կարող է պարենով լիուլի ապահովել իրեն բնակեցնող կենդանիներից բազմապատիկ ավելիին: Հենց միայն մեր ֆերման կկերակրեր հազարյակ ձիերի, քսան կովի, հարյուրավոր ոչխարների և այն էլ՝ կյանքի այնպիսի հարմարավետ ու արծանավայել պայմաններում, որոնք այժմ գրեթե վեր են մեր երևակայությունից: Ապա ինչո՞ւ է, որեմն, շարունակվում մեր այս ողորմելի վիճակը: Որովհետև մեր աշխատանքի համարյա ամբողջ արդյունքը բռնագրավվում է մարդկային ցեղի կողմից: Ահա, ընկերներ, մեր բոլոր հարցերի պատասխանը: Այն պարփակված է միակ բառի մեջ՝ Մարդ: Մարդն է մեր տնեցած միակ թշնամին: Վերացրեք ասպարեզից մարդուն, և մեր բաղցի ու շահագործման հիմնական պատճառը կչքվի հավիտյան:

Մարդը միակ արարածն է, որը սպառում է առանց արտադրելու: Նա ոչ կաթ է տալիս, ոչ՝ ձու, նա գութանը քաշելու ուժ չունի, նա հասկարող է անգամ ընկնել նապաստակների հետևից: Եվ չնայած դրան, նա բոլոր կենդանիների տերն է: Նա անխնա բանեցնում է կենդանիներին, վերադարձնելով նրանց արտադրածի չնչին մի մասնիկը՝ նվազագույնը սովամահ չլինելու համար, և յուրացնում մնացածը: Մեր ջանքերով հողը մշակվում է, մեր թրիքով՝ պարարտացվում, բայց մեզանից և ոչ մեկը չի տիրում ոչնչի, սեփական դաշվից բացի: Ահա դուք, կովեր, որ նստած եք իմ առջև, քանի՞ հազար լիտր կաթ եք տվել թեկուզ հենց վերջին տարում: Իսկ ինչ եղավ այդ կաթը, որը պիտի ժիր հորթուկներ սներ: Դրա ամեն մի կաթիլ լցվեց մեր թշնամիների կոկորդը: Իսկ դուք, հավեր, քանի՞ ձու եք ածել այս տարում, և քանիսից են երբևէ ճտեր դուրս եկել: Մնացածը տարվեց շուկա, որ Ջոնզի ու իր մարդկանց համար փող բերի: Իսկ դու, Նրեքնուկ, որտե՞ղ են քո բերած չորս քուռակները, որ ծերության դրդք պիտի քո զորավիգն ու մխիթարությունը լինեին: Նրանցից ամեն մեկը տարին չբոլորած հանվեց վաճառքի՝ դու նրանց էլ երբեք չես տեսնի: Եվ ինչ ես դու ստացել քո քառակի երկունքի և չարքաշ աշխատանքի դիմաց՝ ոչինչ, չնչին օրաբաժնից ու դամից բացի:

Ավելին՝ ողորմելի այս կյանքի բնական տևողությունն իսկ բռնադատվում է: Ես ինձ համար չեմ տրտնջում՝ ես երջանիկ բացառությունների թվին եմ պատկանում: Ես տասներկու տարեկան եմ ունեցել եմ չորս հարյուրից ավել զավակներ: Եվ դա է խոզի բնական կյանքը: Սակայն ոչ մի կենդանու չի հաջողվում վերջում փրկվել անգութ դանակից: Դուք, ջահել գոճիներ, որ նստած եք իմ առջև, ձեզանից ամեն մեկը մի տարի չանցած վնգստալու է սպանդանոցում: Եվ այդ արհավիրքը վիճակված է բոլորիս՝ կովերին, խոզերին,

հավերին, ոչխարներին, բոլորին: Անգամ ձիերն ու շները չեն արժանանա ավելի լավ բախտի: Այդ դու, Դմբուզ, այն նույն օրը, երբ քո վիթխարի մկանները կորցնեն իրենց ուժը, Ջոնզը կծախի քեզ քերթողին, որ քեզ կտոր-կտոր անեն ու խաշեն որսաշների համար: Ինչ վերաբերում է շներին՝ երբ ծերությունից նրանց ատամները թափվեն, Ջոնզը նրանց վզից աղյուս կկապի ու կխեղդի մոտակա ջրափոսում:

Միթե պարզից էլ պարզ չէ, ուրեմն, ընկերներ, որ մեր կյանքի բոլոր չարիքները մարդու բռնակալության հետևանք են: Վերացրեք մարդուն, և մեր աշխատանքի պտուղները մեզ կմնան: Գրեթե մեկ օրում մենք ազատ ու հարուստ կդառնանք: Ուրեմն ինչ անել: Անշուշտ՝ գիշեր ու ցերեկ, հոգով ու մարմնով, ջանք չխնայել մարդկային ցեղը տապալելու համար: Ահա իմ պատգամը ձեզ, ընկերներ՝ Ապստամբություն: Ես չգիտեմ, թե երբ կգա Ապստամբությունը, գուցե մի շաբաթից կամ թերևս հարյուր տարուց, բայց ես գիտեմ, նույնքան ստույգ, ինչպես տեսնում եմ ոտքիս տակի հարդը, որ վաղ թե ուշ կհաստատվի արդարությունը: Մի՛ մոռացեք այդ մասին, ընկերներ, ձեր կյանքի չնչին մնացորդների ընթացքում: Եվ, ամենակարևորը, փոխանցեք իմ այս պատգամը ձեր հաջորդողներին, որպեսզի ապագա սերունդները պայքարը շարունակեն մինչև հաղթանակ:

Հիշեք, ընկերներ, որ ոչինչ չի կարող սասանել ձեր հաստատակամությունը: Ոչ մի փաստարկ չպետք է ձեզ ուղուց շեղի: Մի լսեք, երբ ձեզ հորդորեն, թե Մարդն ու կենդանիներն ընդհանուր շահեր ունեն, թե մեկի բարգավաճումը նակ մյուսի բարգավաճումն է: Բոլորը սո՛ւտ է: Մարդն ուրիշ ոչ մի էակի շահ չի հետապնդում, բացի իրենից: Թող և մեր՝ կենդանիների միջև կատարյալ միասնություն տիրի, կատարյալ ընկերություն հանուն պայքարի: Բոլոր մարդիկ թշնամի են: Բոլոր կենդանիներն ընկեր են:

Այդ պահին իսկական մի իրարանցում սկսվեց: Գնդապետի ճառի ընթացքում չորս մեծ առնետ դուրս էին սողացել իրենց ծակուռներից և հետև թաթերին նստած, ականջ էին դնում: Շները հանկարծ նկատեցին նրանց, և առնետներին փրկել էր միայն կայծակնային փախուստը: Գնդապետը բարձրացրեց տոտիկը, լռության հրավիրելով:

— Ընկերներ,— ասաց նա,— այդ հարցը պետք է քննել: Արդյո՞ք վայրի էակները, ինչպես, օրինակ, առնետներն ու նապաստակները, մեր բարեկամն են, թե թշնամին: Եկեք քվեարկենք: Ժողովին առաջարկում են հետևյալ հարցը. բարեկա՞մ են արդյոք առնետները:

Տեղնուտեղը քվեարկելով, ճնշող մեծամասնությամբ որոշվեց, որ առնետները բարեկամ են: Այլախոհներն ընդամենը չորսն էին՝ երեք շներն ու կատուն, որն, ինչպես պարզվեց հետագայում, երկու կողմից էլ քվեարկել էր: Գնդապետը շարունակեց.

— Ես ուրիշ ասելիք համարյա չունեմ: Պարզապես կրկնում եմ, երբեք չմոռանաք մարդու և նրա հետ կապված ամեն ինչի հանդեպ թշնամության պատգամը: Ամեն երկոտանի թշնամի է: Ամեն չոր

քոտանի կամ թևավոր ընկեր է: Հիշեցեք նաև, որ Մարդու դեմ պայքարելով, մենք չպետք է նմանվենք նրան: Անգամ նրան նվաճելով, մի որդեգրեք նրա արատները: Ոչ մի կենդանի երբևէ չպետք է ապրի տան մեջ, կամ քնի անկողնում, հագուստ կրի, գործածի ոգելից խմիչքներ, ծխի, շփվի փողի հետ կամ առևտուր անի: Մարդու բոլոր սովորությունները չարիք են: Եվ, ամենից կարևորը՝ ոչ մի կենդանի երբևէ չպետք է բռնանա իր նմանների վրա: Ուժեղ, թե տկար, խելոք, թե միամիտ, մենք բոլորս եղբայրներ ենք: Ոչ մի անասուն երբևէ չպետք է սպանի մի ուրիշ անասունի: Բոլոր կենդանիները հավասար են:

Իսկ այժմ, ընկերներ, ես կպատմեմ ձեզ երեկվա իմ երազը: Ես չեմ կարող այն ձեզ նկարագրել: Դա մի երազ էր այն երկրի մասին, որը կլինի, երբ վերանա Մարդը: Այդ երազն ինձ հիշեցրեց վաղուց մոռացված մի բան: Շատ տարիներ առաջ, երբ ես փոքրիկ մի խոճկոր էի, մայրս և ուրիշ մերունները մի հին երգ էին երգում, որի միայն մեղեդին գիտեին և առաջին երկու բառը: Ես էլ էի իմացել այդ մեղեդին, բայց այն վաղուց արդեն ջնջվել էր իմ հիշողությունից: Բայց և այնպես անցյալ գիշեր երազում ես նորից այն գտա: Դեռ ավելին՝ խոսքերը նույնպես վերադարձան: Վստահ եմ, որ կենդանիներն անհիշելի ժամանակներից են երգել այդ երգը, բայց հետագա սերունդները կորցրել են խոսքերը: Ընկերներ, հիմա ես ձեզ համար կերգեմ այդ երգը: Ես ծեր եմ և իմ ձայնը՝ խռպոտ, բայց եթե ես ձեզ մեղեդին սովորեցնեմ, դուք ավելի լավ կերգեք: Երգը կոչվում է «Անգլիայի գազաններ»:

Ծեր Գնդապետը մաքրեց կոկորդն ու սկսեց երգել: Ձայնը, ինչպես և նա զգուշացրել էր, խռպոտ էր, բայց նա բավական լավ էր երգում, իսկ մեղեդին հուզիչ էր՝ «Clementine»-ի և «La Cucuracha»-ի միջև ընկած մի բան: Բառերը հետևյալն էին.

Օ՛, գազաններ Անգլիայի
Եվ գազաններ ողջ աշխարհի,
Ավետիսն եմ բերել ես ձեզ
Մեր գալիքի ոսկեդարի:

Շուտով անդարձ կտապալվի
Բռնակալ Մարդը չարանենգ,
Եվ բերրի հողն Անգլիայի
Մենք, միայն մենք կկոխկրտենք:

Կընկնի լուծը մեր ուսերից,
Կժանգոտեն սանձ ու լկամ,
Կփշրվեն բիրտ մտրակներն
Ու շղթաները ստրկական...

Այդ օրը մերը կլինեն
Լափն ու կերը ողջ աշխարհի —
Առվույտ լինի, թարմ ճակնդեղ,
Թե անհատնում խոտ ու գարի...

Ազատության այդ մեծ տոնին
Ջրերն ուրախ կկարկաչեն,
Լույսն ավելի վառ կշողա,
Դաշտ ու արոտ կկանաչեն:

Կովեր, ձիեր, սագ ու հավեր,
Առաջ հանուն ազատության,
Եթե անգամ մարտում զոհվենք,
Չտեսած օրն այդ փրկության:

Օ՜, գազաններ Անգլիայի
Եվ գազաններ ողջ աշխարհի,
Ավետիսն եմ բերում ես ձեզ
Մեր նոր կյանքի ոսկեդարի:

Երգն ալեկոծեց կենդանիներին: Գնդապետը դեռ չէր հասցրել վերջացնել, երբ նրանք իրենք սկսեցին երգել: Նույնիսկ ամենից տխմարներն ընկալել էին մեղեդին և որոշ խոսքերը, իսկ խելացիները՝ ինչպես, օրինակ, խոզերը կամ շները, ամբողջ երգն արդեն անգիր էին արել: Ի վերջո, մի քանի նախնական փորձից հետո, ամբողջ ֆերման միաձայն պոռթկաց «Անգլիայի գազանները»: Կովերն այն բառաչում էին, շները՝ կաղկանձում, ոչխարները՝ մայում, ձիերը՝ խրխնջում, բադերը՝ կռկռում: Երգն այն աստիճան բոլորի սրտովն էր, որ այն երգեցին հինգ անգամ անընդմեջ, և թերևս շարունակեին ամբողջ գիշեր, եթե նրանց չընդհատեին:

Դժբախտաբար աղմուկն արթնացրել էր միստր Ջոնզին, որն անկողնուց վեր էր ցատկել, միանգամայն վստահ, թե բակն աղվես է մտել: Նա ճանկեց ննջարանի անկյունում մշտապես դրված իր հրացանն ու 6 համարի կոտորակը պարպեց մթության մեջ: Գընդակները մխրճվեցին ամբարի պատը, և ժողովը շտապ կարգով ցրվեց: Ամեն մեկը պատսպարվեց իր քնելու տեղում: Թռչունները ցատկեցին իրենց թառերին, անասունները թաղվեցին հարդի մեջ, և քիչ անց ամբողջ ֆերման խորը քուն մտավ:

ԳԼՈՒԽ 2

Երեք գիշեր անց ծեր Գնդապետը քնի մեջ խաղաղ վախճանվեց: Նրան թաղեցին բոստանում:

Մարտի սկիզբն էր: Հաջորդ երեք ամիսները լցվեցին ակտիվ ընդհատակյա գործունեությամբ: Գնդապետի ճառը ֆերմայի առավել խելացի անասուններին հիմնովին նոր աշխարհայացք էր պարգևել: Նրանք չգիտեին, թե երբ է գալու Գնդապետի կանխագուշակած Ապստամբությունը և հիմքեր չունեին կարծելու, թե այն պիտի հենց իրենց կյանքի ընթացքում լինի, սակայն նրանք պարզ գիտակցում էին այն նախապատրաստելու իրենց պարտքը: Մնացածներին կազմակերպելու և քարոզելու աշխատանքը բնակա-

հաբար վիճակվեց խոզերին, որոնք բոլորի կողմից ճանաչված էին որպես անասուններից ամենախելացիները: Խոզերի մեջ ամենից շատ աչքի էին ընկնում երկու երիտասարդ արու՝ Զնագնդին ու Նապոլեոնը, որոնց միստր Զոնզը բուծում էր վաճառքի հանելու համար: Նապոլեոնը խոշոր, կատաղի տեսքով բերքշիրյան մի նին ճ էր, ֆերմայում բերքշիրյան ցեղի միակ նմուշը, սակավախոս, բայց իր ուզածին հասնողի համբավով: Զնագնդին ավելի աշխույժ մի խոզ էր, ավելի պերճախոս և հնարամիտ, սակայն, ըստ ընդհանուր կարծիքի, պակաս կուռ խառնվածքի տեր: Ֆերմայի բոլոր մնացած արու խոզերը մսացու էին: Դրանց միջի ամենահայտնին Զռանն էր, փոքրիկ գիրուկ մի խոզ, կլոր այտերով, պրպտուն աչքերով, ժիր շարժուձևով և բացառիկ զիլ ձայնով: Նա փայլուն բանախոս էր, և, որևէ խրթին հարց քննելիս, սովորություն ուներ տեղից տեղ ցատկել և պոչը շարժել, որը բավական համոզիչ էր: Զռանի մասին ասում էին, որ նա կարող է սևը սպիտակ դարձնել:

Երեքով նրանք մշակեցին ծեր Գնդապետի ուսմունքը, վերածելով մի ավարտուն, բանական համակարգի, որն անվանեցին Անասնիզմ: Շաբաթական մի քանի գիշեր, երբ միստր Զոնզը քուն էր մտնում, նրանք ամբարում գաղտնի ժողովներ էին վարում, լուսաբանելով Անասնիզմի հիմունքները: Սկզբում նրանք դեմ առան բացառիկ տխմարության ու անտարբերության: Անասուններից ոմանք վկայակոչում էին միստր Զոնզին հավատարիմ մնալու պարտքը, «Տեր» կոչելով վերջինիս, մյուսները տարրական դիտողություններ էին անում, ինչպես, ասենք. «Միստր Զոնզը կերակրում է մեզ: Եթե նա չլինի, մենք սովամահ կլինենք»: Ուրիշներն ասում էին. «Մեր ինչ գործն է, թե մեր մահից հետո ինչ կլինի», կամ հարցնում. «Եթե Ապստամբությունն անխուսափելի է, էլ ինչ տարբերություն, մենք դրա համար կպայքարենք, թե ոչ»: Խոզերից մեծ ջանքեր էր պահանջվում պարզաբանելու համար, որ այդ ամենը հակասում է Անասնիզմի ոգուն: Ամենից տխմար հարցերը տալիս էր Մոլլին, սպիտակ զամբիկը: Զնագնդուն ուղղված նրա առաջին իսկ հարցն էր. «Ապստամբությունից հետո շաքար կլինի՞»:

— Ոչ,— վճռական ասաց Զնագնդին,— մենք այս ֆերմայում շաքար արտադրելու հնարավորություն չունենք: Բացի այդ, դուք շաքարի կարիք չեք էլ ունենա: Դուք ինչքան հարկն է գարի ու հարդ կունենաք:

— Իսկ ինձ թույլ կտրվի՞ բաշիս մեջ ժապավեններ կրել:— Հարցրեց Մոլլին:

— Ընկեր,— ասաց Զնագնդին,— ձեր սրտին այդքան մոտ ժապավենները ստրկության կնիքն են: Մի՞թե չեք կարող հասկանալ, որ ազատությունը ժապավեններից ավել արժե:

Մոլլին համաձայնվեց, սակայն այնքան էլ համոզված տեսք չուներ:

Խոզերը ստիպված էին անգամ ավելի դժվարին պայքար մղել Մովսեսի՝ ձեռնասուն ագռավի տարածած ստերի դեմն առնելու համար: Մովսեսը, միստր Զոնզի սիրեցյալը, լրտես էր ու փչան,

բայց միևնույն ժամանակ նաև խելացի հռետոր էր: Նա պնդում էր, որ գիտե խորհրդավոր մի երկրի՝ Շաքարաքլոր Լեռան գոյության մասին, ուր մահից հետո հայտնվում են բոլոր անասունները: Երկիրն այդ գտնվում էր ինչ-որ տեղ երկնքում, ամպերից քիչ վեր, ասում էր Մովսեսը: Շաքարաքլոր Լեռան վրա շաբաթական յոթ օր կիրակի է, կլոր տարի կանաչում է երեքնուկը, իսկ թփերի վրա աճում են կտոր շաքար ու կտավատի սերմերից կեքսեր: Անասունները Մովսեսին չէին սիրում, որովհետև նա հեքիաթներ էր պատմում ու չէր աշխատում, բայց ոմանք հավատում էին Շաքարաքլոր Լեռանը, և խոզերը ստիպված էին բացատրական ակտիվ աշխատանք տանել համոզելու համար, որ նման վայր գոյություն չունի:

Նրանց ամենահավատարիմ աշակերտները երկու լծկան ձիերն էին՝ Դմբուզն ու Երեքնուկը: Այս երկուսը մեծագույն դժվարությամբ էին սեփական մտքեր ծնում, սակայն, խոզերին ուսուցիչ ընդունելուց հետո, նրանք հեշտությամբ ընկալեցին ուսմունքը և տարրական փաստարկների միջոցով սկսեցին տարածել մնացած անասունների մեջ: Նրանք անխտիր ներկա էին բոլոր գաղտնի ժողովներին և առաջինն էին սկսում «Անգլիայի գազանները», որով միշտ ավարտվում էին այդ ժողովները:

Այնպես ստացվեց, որ Ապստամբությունը գլուխ եկավ շատ ավելի վաղ և դյուրին, քան որևէ մեկը կարող էր ակնկալել: Անցյալում միստր Ջոնզը, չնայած իր անխղճությանը, ընդունակ ֆերմեր էր, սակայն վերջերս նրա համար վատ օրեր էին սկսվել: Դատական գործի հետ կապված զգալի գումար կորցնելով, նա թևաթափ էր եղել և սկսել էր խմել ավելին, քան կարող էր տանել: Երբեմն նա օրերով մնում էր խոհանոցի իր աթոռին փռված, լրագրեր կարդալով, խմելով և մեկ-մեկ էլ Մովսեսին գարեջրի մեջ թաթախած հացի փշրանքներ տալով: Նրա աշխատավորները ծույլ էին ու խարդախ, դաշտերը՝ մոլախոտերով լի, շինությունները նորոգման կարիք էին զգում, ցանկապատերը բարձիթողի վիճակում էին, իսկ անասունները՝ սոված:

Հունիսին հասավ խոտհնձի ժամանակը: Շաբաթ օրով միստր Ջոնզը գնաց Վիլինգդոն և այնպես հարբեց գինետանը, որ տուն չհասավ մինչև հաջորդ կեսօր: Նրա աշխատավորներն առավոտյան կովերին կթել ու թողել-գնացել էին նապաստակ բռնելու, առանց անասուններին կերակրելու: Տուն գալուն պես միստր Ջոնզը փռվեց հյուրասենյակի թախտին, **Աշխարհի լուրերը** դեմքին խռմփացնելով, այնպես որ իրիկնամուտին անասուններին դեռևս ոչ ոք չէր կերակրել: Վերջիվերջո նրանց համբերությունը հատնեց: Կովերից մեկը պոգահարեց շտեմարանի դուռը, և անասունները հարձակվեցին պաշարների վրա: Ահա այստեղ էր, որ միստր Ջոնզն արթնացավ: Հաջորդ ակնթարթին նա իր աշխատավորնե-

ի հետ արդեն շտեմարանում էր, չորս կողմը մտրակելով: Դրան դիմանալը քաղցած անասունների ուժերից վեր էր: Միասնական մի պոռթկումով, չնայած նախօրոք ոչ մի նման բան չէր ծրագրված, նրանք նետվեցին իրենց կեղեքիչների վրա: Ջոնզն ու իր մարդիկ հանկարծ հայտնվեցին քացի տվող ու պոզահարող շրջանի կենտրոնում: Նրանք այլևս չէին տնօրինում իրավիճակը: Անասունների նման վարքագիծ նրանք երբեք չէին տեսել և քիչ էր մնում վախից խելքները կորցնեին այն էակների անսպասելի ըմբոստացումից, որոնց մինչ այդ սովոր էին քեֆներն ուզածի պես մտրակել ու քամահրել: Մեկ-երկու պահ չանցած՝ նրանք դադարեցրին պաշտպանվելու ապարդյուն փորձերը և թողեցին-փախան: Հաջորդ րոպեին բոլոր հինգը լեղապատառ սուրում էին մայրուղի տանող ճանապարհով, իսկ անասունները ցնծագին հետապնդում էին նրանց:

Միսիս Ջոնզը, այդ ամենը տեսնելով ննջարանի պատուհանից, հապճեպ մի երկու փալաս հավաքեց և ուրիշ ճանապարհով ֆերմայից դուրս սպրդեց: Մովսեսն իր ցցից վեր թռավ ու հետևեց նրան, բարձր կռկռալով: Այդ ընթացքում անասունները Ջոնզին ու իր մարդկանց արդեն ֆերմայի սահմաններից դուրս էին քշել, նրանց հետևից շրխկացնելով հնգահեծան դարպասը: Այսպիսով, դեռ ոչ ոք չհասցնելով գիտակցել կատարվածը, Ապստամբությունն ամենայն հաջողությամբ իրագործվեց՝ Ջոնզը վռնդված էր, և «Մենը»՝ ֆերման իրենցն էր:

Առաջին րոպեներին անասուններն իրենց բախտին չէին հավատում: Նախ և առաջ նրանք բոլորը միասին վազքով շրջանցեցին ամբողջ ֆերման, ասես համոզվելու համար, որ ոչ մի մարդ այնտեղ չի ծպտվել, ապա հետ վազեցին շինությունների մոտ, որպեսզի բնաջնջեն Ջոնզի ատելի իշխանության վերջին հետքերը: Նրանք ջարդեցին գոմի պահասենյակի դուռը՝ լկամները, քթօղակները, շների շղթաները, անգութ դանակները, որոնցով Ջոնզը կռտում էր խոզերին ու գառներին, այդ ամենը նետվեց ջրհորը: Սանձերը, ակնակապերը, նվաստացուցիչ քթապարկերը շպրտվեցին բակում վառվող աղբախարույկի մեջ: Դրանց հետևեցին նաև մտրակները: Բոլոր անասունները թռչկոտում էին ցնծությունից, տեսնելով մտրակները խժռող բոցը: Ձնագնդին կրակի մեջ գցեց նաև շուկա գնալիս սովորաբար ձիերի բաշերը զարդարող ժապավենները:

— Ժապավենները,— ասաց նա,— համարվելու են հագուստ, իսկ դա մարդու հատկանիշ է: Բոլոր անասունները պետք է մերկ լինեն:

Այդ լսելով, Դմբուզը բերեց փոքրիկ ծղոտե մի գլխարկ, որն

ամռանը պաշտպանում էր նրա ականջները ճանճերից, և մնացա
ծի հետ այն նետեց խարույկի մեջ:

Շատ չանցած անասունները ոչնչացրին այն ամենը, ինչ հի
շեցնում էր միստր Ջոնզի մասին: Դրանից հետո Նապոլեոն
նրանց առաջնորդեց շտեմարան և բոլորին կրկնակի բաժին հա
ցահատիկ բաշխեց, իսկ շներին՝ երկուական բլիթ: Ապա նրանց
յոթ անգամ ծայրից ծայր երգեցին «Անգլիայի գազանները», որից
հետո պառկեցին և քնեցին այնպես, ինչպես մինչ այդ երբեք չէին
քնել:

Սովորականի պես առավոտյան արթնանալով և հանկարծ վեր
հիշելով փառավոր եղելությունը, բոլորը միասին դուրս վազեցին
արոտավայր: Դաշտի մեջ մի բլրակ կար, որից երևում էր համարյա
ամբողջ ֆերման: Անասունները նետվեցին բլրակի գագաթը և այ
գաբացի ջինջ լույսի ներքո սկսեցին չորս կողմ նայել: Այո, այ
ամենն, ինչ նրանք տեսնում էին, իրենցն էր: Այդ մտքի բերկրան
քից նրանք անդադար թռչկոտում էին բլրակի շուրջը, հսկա ցն
ծագին ոստյուններով օդ նետվելով: Նրանք թավալվում էին եղ
յամի մեջ, ամառային քաղցր խոտ ճաշակում, վեր էին նետում
սևահողն ու ըմբոշխնում նրա թարմ հոտը: Նրանք ստուգայցով
շրջեցին ամբողջ ֆերման, անխոս հիացմունքով դիտելով վարե
լահողը, արոտը, բոստանը, լճակը, անտառուտը, ասես առաջին
անգամ տեսնելով և նույնիսկ այժմ չհավատալով, որ այդ ամենն
իրենց է պատկանում:

Ապա նրանք վերադարձան ֆերմայի կառույցների մոտ և կանգ
առան տան մուտքի առջև: Տունը նույնպես իրենցն էր, չնայած
վախենում էին ներս մտնել: Ինչևէ, հաջորդ պահին Նապոլեոնը
և Ջնագնդին ուսերով հրեցին դուռը, և անասունները շարքով
ներս մտան, որևէ բան վնասելու երկյուղից ծայր աստիճան զգույշ
շարժվելով: Կճղակների ծայրերի վրա նրանք շրջեցին սենյակից
սենյակ, վախենալով բարձր խոսել, մի տեսակ երկյուղածությամբ
դիտելով անհավատալի շքեղությունը՝ փետուրե ներքնակներով
անկողինները, հայելիները, բազմոցը, բրյուսելյան խալին, Վիկ-
տորիա թագուհու վիմագրությունը հյուրասենյակի բուխարու վրա:
Նրանք արդեն իջնում էին աստիճաններով, երբ հայտնաբերեցին,
որ պակասում է Մոլլին: Հետ վերադառնալով, նրան գտան ննջա-
սենյակում: Միսիս Ջոնզի զարդասեղանից մի կապույտ ժապավեն
դնելով ուսին, նա հայելու մեջ զմայլվում էր իր հիմար արտացո-
լումով: Մնացածները խստիվ հանդիմանեցին նրան, և բոլորը
միասին տնից դուրս եկան: Ճանապարհին վերցրին խոհանոցում
կախված ապխտած բդերը և դուրս տարան թաղելու, իսկ Դմբուզը
սմբակով ծակեց լվացքասենյակի գարեջրի տակառը: Մնացած
ամեն ինչ մնաց անձեռնամուխ: Տեղում միաձայն որոշում ընդուն-
վեց տունը պահպանել որպես թանգարան: Բոլորը համաձայնվե-
ցին, որ ոչ մի անասուն տանը երբեք չպիտի ապրի:

Նախաճաշից հետո Ջնագնդին և Նապոլեոնը նորից բոլորին հավաքեցին:

— Ընկերներ,— ասաց Ջնագնդին,— դեռևս վեցն անց կես է և առջևում մեզ երկար օր է սպասում: Այսօր մենք սկսում ենք խոտհունձը: Սակայն մինչ այդ մենք ևս մեկ խնդիր ունենք:

Այստեղ խոզերը բացահայտեցին, որ անցած երեք ամսվա ընթացքում նրանք աղբակույտում գտած Ջոնզի երեխաների նախկին այբբենարանով գրել և կարդալ են սովորել: Նապոլեոնն ուղարկեց սև և սպիտակ ներկի հետևից և բոլորին առաջնորդեց հնգահեծան դարպասի մոտ: Ապա Ջնագնդին (քանի որ ամենագրագետը նա էր) վրձինը սեղմեց իր տոտիկի երկու հոդերի միջև, դարպասի վերին գերանից ջնջեց «ՄԵՆԸՐ ՖԵՐՄԱ» գրությունը և փոխարենը գրեց. «ԱՆԱՍՆԱՖԵՐՄԱ»: Այդուհետև ֆերման այդպես էր կոչվելու: Դրանից հետո նրանք վերադարձան շինությունների մոտ, ուր Ջնագնդին և Նապոլեոնը կարգադրեցին սանդուղք բերել և դեմ տալ ամբարի պատին:Նրանք բացատրեցին, որ անցած երեք ամսվա պրպտումներից հետո խոզերին հաջողվել է Անասնիզմի հիմունքները շարադրել Յոթ Պատվիրաններում: Այժմ այդ Յոթ Պատվիրանները պիտի գրանցվեն պատին, վերածվելով անխախտ մի օրենքի, որով Անասնաֆերմայի բոլոր անասունները պարտավոր են այսուհետև առաջնորդվել հավիտյան: Որոշ դժվարությամբ (քանի որ խոզի համար հեշտ չէ սանդուղքի վրա հավասարակշռություն պահպանելը) Ջնագնդին վեր բարձրացավ և անցավ գործի, մինչ Ջռանը փոքր-ինչ ներքև ներկի դույլն էր պահել: Պատվիրանները սև պատի վրա գրվեցին խոշոր սպիտակ տառերով, որոնք կարդացվում էին երեսուն մետրից.

ՅՈԹ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ

1. ***Բոլոր երկոտանիները թշնամի են:***
2. ***Բոլոր չորքոտանիները կամ թևավորները բարեկամ են:***
3. ***Անասունը երբեք հագուստ չի հագնի:***
4. ***Անասունը երբեք անկողնում չի քնի:***
5. ***Անասունը երբեք ոգելից խմիչք չի գործածի:***
6. ***Անասունը երբեք ուրիշ անասունի չի սպանի:***
7. ***Բոլոր անասունները հավասար են:***

Ամեն ինչ լավ էր գրված, և, եթե չհաշվենք, որ «բարեկամ»-ը գրված էր «բարիկամ», իսկ «տ»-երից մեկը շուռ էր տրված, ուղղագրությունն անթերի էր: Ջնագնդին բոլորի համար բարձրաձայն կարդաց գրությունը: Բոլոր անասունները գլխով էին անում ի նշան հավանության, իսկ ամենից խելացիները սկսեցին հենց տեղում անգիր անել Պատվիրանները:

— Իսկ այժմ, ընկերներ,— ասաց Ջնագնդին, վրձինը ցած

նետելով,— դեպի դաշտ: Եկեք մեր պատվի խնդիրը դարձնենք խոտը հնձել ավելի արագ, քան կարող էին Զոնգն ու իր մարդիկ:

Սակայն այդ պահին երեք կովերը, որոնք արդեն բավական ժամանակ անհանգիստ էին, սկսեցին բարձրաձայն բառաչել: Նրանց արդեն քսանչորս ժամ չէին կթել, և նրանց կուրծքերը քիչ էր մնում պայթեին: Որոշ մտորումներից հետո խոզերն ուղարկեցին դույլեր բերելու և կովերին բավական հաջող կթեցին՝ նրանց տոտիկներն այդ գործի համար հարմար էին:

— Իսկ կաթն ինչ է լինելու:— Հարցրեց ինչ-որ մեկը:

— Զոնգը երբեմն մի քիչ խառնում էր մեր կուտին:— Ասաց հավերից մեկը:

— Այժմ էականը կաթը չէ, ընկերներ:— Գոռաց Նապոլեոնը, դույլերի առջև կանգնելով:— Դրանով կզբաղվեն: Խոտհունձը հիմա ավելի կարևոր է: Ընկեր Զնագնդին ձեզ կառաջնորդի: Մի քանի րոպեից ես կմիանամ ձեզ: Առաջ, ընկերներ: Արտը մեզ է սպասում:

Եվ այսպես անասունները գնացին արտ խոտհունձը սկսելու, իսկ երբ երեկոյան վերադարձան, կաթը անհետացել էր:

ԳԼՈՒԽ 3

Պիտի տեսնեիք, թե ինչպես էին նրանք քրտնաջան աշխատում խոտը հնձելու համար: Սակայն նրանց ջանքերը լիովին վարձատրվեցին, որովհետև խոտհունձն ավելի հաջող ընթացավ, քան ակնկալվում էր:

Դժվարություններ կային՝ չէ՞ որ գործիքները նախատեսված էին մարդու համար, ոչ թե անասունների, և այն փաստը, որ նրանցից ոչ մեկն ի վիճակի չէր կանգնել հետևի ոտքերի վրա, մեծ թերություն էր ներկայացնում: Բայց խոզերն այնքան խելացի էին, որ ամեն դժվարությունից գտնում էին համապատասխան ելքը: Ինչ վերաբերում է ձիերին, ապա նրանք ճանաչում էին դաշտի ամեն մի թիզը, և, փաստորեն, հնձելու ու դիզելու գործն ավելի լավ գիտեին, քան երբևէ կկարողանային Զոնգն ու իր մարդիկ: Խոզերը որոշակի աշխատանք չէին կատարում, բայց վերահսկում ու ղեկավարում էին մնացածներին: Նրանց հարուստ գիտելիքներով հանդերձ միանգամայն բնական էր, որ հենց իրենք պիտի ստանձնեին ղեկավարությունը: Դմբուզն ու Երեքնուկը լծվում էին հնձանին (լկամի կամ սանձերի կարիք, ինչ խոսք, այդ օրերին չէր զգացվում) ու դոփում դաշտով մեկ: Նրանց հետևից քայլում էր խոզերից մեկն ու ըստ հանգամանքների բացականչում «Ընկեր, չո՛ւշ», կամ «Ընկեր, հո՛»: Անասուններից ամեն մեկը, անգամ ամենից նվաստները, օգնում էին խոտը հնձելուն ու դիզելուն: Նույնիսկ բադերն ու հավերը ամբողջ օրն արևի տակ դես ու դեն էին անում, կտուցներում ծղոտներ կրելով: Ի վերջո նրանք խոտհունձն ավարտեցին

Ջոնզի և իր մարդկանց սովորական ժամկետից երկու օրով շուտ: Դեռ ավելին՝ կուտակված հարդն ամենաշատն էր ֆերմայի ամբողջ պատմության ընթացքում: Ոչինչ չէր կորել՝ հավերն ու բադերն իրենց կտուցներով ու սուր աչքերով հավաքել էին վերջին ծղոտն անգամ: Անասուններից ոչ մեկը կես բերան անգամ չէր յուրացրել:

Ամբողջ ամառ ֆերմայի աշխատանքներն ընթանում էին ժամացույցի ճշտությամբ: Անասունները երջանիկ էին իրենց երբևէ երևակայած հնարավորից առավել: Ամեն կերակուր սուր հաճույքի աղբյուր էր՝ այժմ, երբ ամբողջ ուտելիքն իսկապես իրենցն էր, սեփական աշխատանքի արդյունքը, և ոչ թե բաշխվում էր տիրոջ դժկամ ձեռքով: Պորտաբույծ ու անպետք մարդկանց վերանալու հետ նաև ավելացել էր սննդի քանակը: Ազատ ժամանակը նույնպես շատացել էր, չնայած անասուններն այդ հարցում դեռևս անփորձ էին: Ավելի ուշ, բերքահավաքին, անասունները բազմաթիվ դժվարությունների առնչվեցին, օրինակ ստիպված եղան հացահատիկը սմբակներով ծեծել և թեփն անջատել փչելով, քանի որ ֆերմայում կալսիչ չկար, բայց խոզերն իրենց խելքով և Դրմբուզն իր ամեհի մկաններով ամեն անգամ փրկում էին իրադրությունը: Բոլորը զմայլվում էին Դմբուզի վրա: Նա լավ աշխատող էր նույնիսկ Ջոնզի ժամանակներում, իսկ այժմ կարծես երեք ձի դարձած լիներ՝ պատահում էին օրեր, երբ ֆերմայի ամբողջ աշխատանքը նրա ամուր ուսերին էր: Առավոտից երեկո նա քաշում էր ու ձգում, միշտ հայտնվելով այնտեղ, ուր աշխատանքն ամենից ծանրն էր: Նա պայմանավորվել էր աքլորներից մեկի հետ, որ վերջինս իրեն արթնացնի մնացածներից կես ժամ շուտ, և այդ ընթացքում կամավոր որևէ պիտանի գործ էր անում, նախքան առօրյա աշխատանքներն սկսելը: Ցանկացած հարցի, ամեն դժվարության նա պատասխանում էր մի նախադասությամբ. «Ես ավելի եռանդուն կաշխատեմ», դարձնելով այն իր անձնական նշանաբանը:

Ամեն մեկն աշխատում էր ուժերի ներածին չափ: Հավերն ու բադերը, օրինակ, բերքահավաքի ընթացքում թափված հատիկները հավաքելով, հինգ բուշել ցորեն խնայեցին: Ոչ ոք չէր գողանում, ոչ ոք իր բաժնի վրա չէր փնթփնթում: Հին կյանքի համար բնական գզվռտոցն ու նախանձը համարյա վերացել էին: Գլուխ պահողներ չկային կամ գրեթե չկային: Ճիշտ է, Մոլլին լուսաբացին արթնանում էր դժկամությամբ, իսկ աշխատանքից հեռանում էր սովորականից շուտ, պատրվակ բռնելով սմբակի միջի քարը: Կատվի վարքագիծը նույնպես յուրօրինակ էր: Շուտով նկատեցին, որ գործ տնելու դեպքում նրան ոչ մի կերպ գտնել չէր լինում: Կատուն ժամերով չքվում էր, սակայն միշտ, կարծես թե ոչինչ չի եղել, հայտնվում էր ճաշի կամ հանգստի ժամերին, երբ ամեն ինչ արդեն արված էր լինում: Բայց նա միշտ անթերի պատճառաբանությունը էր ներկայացնում և այնքան սիրալիր էր մռլտում, որ նրա

մտադրությունների ազնվությունը կասկածի տակ առնել հնարավոր չէր: Ծեր Բենիամինը, ավանակը, թվում էր, թե Ապստամբության օրերից ամենևին չէր փոխվել: Նա աշխատում էր նույն համառ դանդաղկոտությամբ, ինչ և Ջոնզի ժամանակ, առանց գլուխ պահելու, բայց և առանց ավելորդ խանդավառության: Ապստամբության և նրա արդյունքների մասին նա ոչ մի կարծիք չէր հայտնում: Երբ հարցնում էին, թե արդյո՞ք նա ավելի երջանիկ չէ հիմա, երբ Ջոնզը չկա, նա սոսկ ասում էր. «Էշերը շատ երկար են ապրում: Ձեզանից ոչ մեկը դեռ սատկած էշ տեսած չկա»: Բոլորը ստիպված էին բավարարվել այդ առեղծվածային պատասխանով:

Կիրակի օրերն աշխատանք չկար: Նախաճաշը մեկ ժամով ուշ էր լինում, որից հետո սկսվում էր անխտիր ամեն շաբաթ անցկացվող արարողությունը: Սկզբում բարձրացվում էր դրոշը: Գոմի պահասենյակում Ձնագնդին գտել էր միստր Ջոնզի հին կանաչ սփռոցը և վրան սպիտակ ներկով կճղակ ու պոզ էր նկարել: Ամեն կիրակի առավոտ դրոշը հանդիսավոր կերպով բարձրացվում էր տան հետևի պարտեզում: Դրոշի կանաչ գույնը, բացատրում էր Ձնագնդին, մարմնավորում է Անգլիայի արոտները, իսկ կճղակն ու պոզը խորհրդանշում են ապագա Անասնական Հանրապետությունը, որը պիտի հաստատվեր մարդկային ցեղի վերջնական տապալումից հետո: Դրոշի արարողությունից հետո բոլոր անասունները լցվում էին մեծ ամբարը ընդհանուր հավաքի, որը կոչվում էր Միտինգ: Այստեղ պլանավորվում էր գալիք շաբաթվա աշխատանքը, առաջարկվում և քննարկվում էին բանաձևերը: Բանաձևերը միշտ խոզերն էին առաջ քաշում: Մյուս անասունները հասկացել էին քվեարկելու էությունը, բայց իրենք երբեք բանաձև հորինել չէին կարողանում: Քննարկումների ընթացքում ամենամեծ ակտիվությունը ցուցաբերում էին Ձնագնդին ու Նապոլեոնը: Ստացվել էր այնպես, որ այս երկուսը երբեք համաձայնության չէին գալիս՝ եթե մեկը մի առաջարկ էր անում, մյուսն անպայման դրան հակադրվում էր: Երբ որոշվեց (որին ինքնին ոչ ոք չէր կարող հակադրվել) բոստանի հետևի փոքրիկ ցանկապատած տարածքը հատկացնել որպես տարիքն առած անասունների հանգստավայր, անգամ այդ դեպքում փոթորկոտ բանավեճ բռնկվեց անասունների տարբեր դասերի հանգստի անցնելու ճշգրիտ տարիքների շուրջ: Միտինգները միշտ ավարտվում էին «Անգլիայի գազանները» երգով, և օրվա մնացած մասը նվիրվում էր հանգստին:

Պահասենյակը խոզերն առանձնացրին որպես սեփական շտաբ: Այստեղ նրանք երեկոները տնից բերված գրքերով ուսումնասիրում էին դարբնություն, փայտամշակում և այլ անհրաժեշտ արհեստներ: Ձնագնդին նաև զբաղվում էր մյուս անասուններին կազմակերպելով իր այսպես կոչված Անասնական Կոմիտեների մեջ, երբեք չհոգնելով այդ աշխատանքից: Նա կազմեց Ձվաստեղծ Կոմիտե հավերի համար, Մաքուր Պոչերի Միություն կովերի համար, Վայրի Ընկերների Վերապատրաստման Կոմիտե (վերջինիս

նպատակն առնետներին ու նապաստակներին ընտելացնելն էր), Առավել Ճերմակ Բրդի Կոմիտե ոչխարների համար և նման շատ ուրիշներ, չհաշված գրել-կարդալու դասընթացները: Ընդհանուր առմամբ, սակայն, այդ նախաձեռնությունները հաջողությամբ չըպսակվեցին: Վայրի ընկերներին ընտելացնելու փորձը ձախողվեց հենց սկզբից: Նրանք իրենց շարունակում էին առաջվա պես պահել, պարզապես օգտվելով կոմիտեի առատաձեռնությունից: Կատուն անդամագրվեց Վերապատրաստման Կոմիտեին և որոշ ժամանակ ակտիվ աշխատանք էր ծավալել: Նրան տեսել էին կտուրին նստած ծիծեռնակների հետ. բացատրական աշխատանք տանելիս: Նա պատմում էր, որ բոլոր կենդանիներն արդեն ընկերներ են, և որպես ապացույց ցանկացած ծիծեռնակ կարող է գալ ու հանգիստ թառել թեկուզ իր թաթին: Ծիծեռնակները նախընտրում էին չմոտենալ:

Ինչևէ, գրել-կարդալու դասընթացները մեծ հաջողություն էին վայելում: Աշնան դեմ համարյա բոլոր անասուններն արդեն քիչ թե շատ գրագետ էին:

Ինչ վերաբերում է խոզերին, ապա նրանք կատարելապես տիրապետել էին գրագիտությանը: Շները նույնպես բավական լավ էին կարդում, բայց Յոթ Պատվիրաններից բացի ուրիշ ոչ մի ընթերցանությամբ չէին հետաքրքրվում: Մյուրիել այծը շներից փոքր-ինչ լավ էր կարդում և երբեմն երեկոյան մյուսների համար կարդում էր աղբակույտում գտած լրագրերի պատառները: Բենիամինը խոզերից պակաս գրագետ չէր, սակայն երբեք չէր բանեցնում իր իմացությունը: Որքանով որ ինքը գիտի, ասում էր նա, կարդալու արժանի ոչ մի բան չկա: Երեքնուկն ամբողջ այբուբենը սովորել էր, բայց բառեր կազմել չէր կարողանում: Դմբուզը Դ տառից այն կողմ չէր անցնում: Նա փոշու մեջ իր խոշոր սմբակով գծում էր Ա, Բ, Գ, Դ, ապա, ականջները ցցած՝ հայացքը հառում այդ տառերին, երբեմն թափ տալով բաշը, ամբողջ ուժով ջանալով ու չկարողանալով վերհիշել, թե ինչ է գալիս հետո: Թեպետ մի քանի անգամ նրան իսկապես հաջողվել էր սովորել Ե, Զ, Է, Թ-ն, բայց նա միշտ հայտնաբերում էր, որ այդ դեպքում արդեն չի հիշում Ա, Բ, Գ և Դ-ն: Վերջապես նա որոշեց բավարարվել առաջին չորս տառով և օրը մեկ-երկու անգամ դրանք գրում էր, որ հիշողությունը թարմացնի: Մոլլին հրաժարվեց սովորել իր անունը գրելու համար պահանջվող հինգ տառից ավելին: Նա փոքրիկ ճյուղերից խնամքով շարում էր անունը, ապա ծաղիկներով զարդարում ու զմայլվելով պտտվում շուրջը:

Ֆերմայի մնացած անասուններից ոչ մեկը չկարողացավ Ա տառից այն կողմ անցնել: Պարզվեց նաև, որ առավել բթամիտ անասունները, ինչպես, օրինակ, ոչխարները, հավերն ու բադերը, ի վիճակի չէին Յոթ Պատվիրաններն անգիր անել: Երկար խորհրդածություններից հետո Զնագնդին ազդարարեց, որ Յոթ

Պատվիրանները, փաստորեն, կարելի էր հանգեցնել մի ասույթի, մասնավորապես. «Չորս ոտք լավ, երկու ոտք վատ»: Այդ ասույթը, ասաց նա, պարունակում է Անասնիզմի հիմնարար սկզբունքը: Դրան կատարելապես տիրապետողն արդեն ապահով է մարդկային ազդեցություններից: Սկզբում թռչուններն առարկում էին, քանի որ նրանց թվաց, թե իրենք նույնպես երկու ոտք ունեն, սակայն Զնագնդին նրանց ապացուցեց, որ դա այդպես չէ:

— Թռչնի թևը, ընկերներ,— ասաց նա,— շարժման և ոչ թե գործառության օրգան է: Այդպիսով առկա են բոլոր հիմքերը այն ոտք համարելու: Մարդու որոշիչ հատկանիշը ձեռքն է, չարիք գործելու նրա հարմարանքը:

Թռչունները Զնագնդու ասածից բան չհասկացան, բայց բացատրությունն ընդունեցին, և բոլոր բթամիտ անասունները սկսեցին անգիր անել նոր ասույթը: ՉՈՐՍ ՈՏՔ ԼԱՎ, ԵՐԿՈՒ ՈՏՔ ՎԱՏ գրվեց ամբարի պատին, Յոթ Պատվիրանների վերևում և ավելի խոշոր տառերով: Անգիր անելով, ոչխարները խիստ հավանեցին այդ ասույթը և դաշտում պառկած բոլորը միասին սկսում էին մկկալ. «Չորս ոտք լավ, երկու ոտք վատ, չորս ոտք լավ, երկու ոտք վատ» և այդպես շարունակ, երբեք չհոգնելով:

Նապոլեոնը Զնագնդու կոմիտեներով չէր հետաքրքրվում: Նա ասաց, որ մատաղ սերնդի դաստիարակությունը շատ ավելի կարևոր խնդիր է, քան այն, ինչ կարելի է անել արդեն հասունացածների համար: Այնպես պատահեց, որ բերքահավաքից անմիջապես հետո Զանգակն ու Զեսին ցնկնեցին, երկուսը միասին ինը ժիր քոթոթ բերելով: Ծծից կտրելուց անմիջապես հետո Նապոլեոնը մայրերից նրանց անջատեց, ասելով, որ նրանց դաստիարակության համար ինքն է պատասխանատու: Նա քոթոթներին տարավ աղավնատուն, ուր կարելի էր հասնել միայն պահասենյակից բարձրացող սանդուղքով, և այնտեղ նրանց պահեց այնպիսի մեկուսացման մեջ, որ շուտով ֆերման նրանց գոյության մասին մոռացավ:

Կաթի անհայտանալու առեղծվածը որոշ ժամանակ անց պարզվեց: Այն ամեն օր ավելացնում էին խոզերի լափին: Վաղահաս խնձորներն արդեն լցվել էին, և պարտեզի խոտին ցիրուցան էին եղել քամուց թափված պտուղները: Անասունները բնականաբար ենթադրեցին, որ դրանք կբաժանվեն իրենց միջև, սակայն մի օր հրահանգ ստացվեց թափված խնձորները հավաքել և տեղափոխել պահասենյակ խոզերի համար: Այստեղ մնացած անասուններից ոմանք մրթմրթացին, բայց ապարդյուն: Տվյալ կետում խոզերը ոչ մի տարաձայնություն չունեին, անգամ Զնագնդին ու Նապոլեոնն էին համերաշխ: Զռանին ուղարկեցին մնացածներին անհրաժեշտ բացատրությունները տալու:

— Ընկերներ,— բացականչեց նա,— հուսով եմ, որ դուք չեք կարծում, թե մենք, խոզերս, այդ անում ենք եսասիրության ու

արտոնվածության ոգով դրդված: Մեզանից շատերն իրականում չեն սիրում կաթը և խնձորները: Ես ինքս դրանք չեմ հավանում: Դրանք վերցնելիս մեր միակ մտահոգությունը մեր առողջության ապահովումն է: Կաթը և խնձորները (դա ապացուցված է գիտության կողմից, ընկերներ) պարունակում են խոզերի բարեկեցության համար վճռականապես անհրաժեշտ նյութեր: Մենք, խոզերս, մտքի աշխատավորներ ենք: Ֆերմայի կազմակերպչական և վարչական ամբողջ աշխատանքը մեր ուսերին է: Մենք գիշեր-ցերեկ մտահոգված ենք ձեր բարեկեցությամբ: Մեզ համար չէ, որ մենք խմում ենք կաթն ու ուտում այդ խնձորները: Գիտեք, թե ինչ կլիներ, եթե խոզերը թերանային իրենց պարտականություններում: Ջոնզը կվերադառնար: Այո՛, Ջոնզը կվերադառնար: Անշուշտ, ընկերներ,— համարյա պաղատագին վնգստաց Ջռանը, պոչը շարժելով,— ձեր մեջ, իհարկե, չկա մեկը, որը ցանկանար Ջոնզի վերադարձը:

Եթե կար մի բան, որում անասունները միանգամայն վստահ էին, դա այն էր, որ Ջոնզի վերադարձը ոչ ոք չի ուզում: Երբ հարցը դրվեց այդ կտրվածքով, նրանք այլևս ասելիք չունեին: Խոզերի առողջությունը հոգալու անհրաժեշտությունը չափից ավելի ակնհայտ էր: Եվ այդպիսով, առանց հետագա վիճաբանության որոշվեց, որ կաթը և քամուց թափված խնձորները (ինչպես նաև հասուն խնձորների հիմնական բերքը) առանձնացվելու են միայն խոզերի համար:

ԳԼՈՒԽ 4

Աշնան դեմ Անասնաֆերմայի դեպքերի լուրը տարածվեց երկրով մեկ: Ամեն օր Նապոլեոնն ու Ձնագնդին աղավնիների երամներ էին ուղարկում, որոնց հանձնարարված էր մերվել հարևան ֆերմաների անասուններին, պատմել նրանց Ապստամբության մասին և սովորեցնել «Անգլիայի գազանների» մեղեդին:

Այդ ընթացքի մեծ մասը միստր Ջոնզը անց էր կացնում Վիլինգդոնի **Կարմիր Առյուծ** գինետանը, լսել ցանկացողներին գանգատվելով զարհուրելի անարդարությունից, որի պատճառով սեփական ֆերմայից վռնդվել էր անբան անասունների ոհմակի կողմից: Մնացած ֆերմերները սկզբունքորեն նրան համակրում էին, բայց տակավին առանձնապես մեծ աջակցություն չդրսևորեցին: Հոգու խորքում ամեն մեկը միտք էր անում, թե ինչպես մի ձև գտնի Ջոնզի դժբախտությունից օգուտ քաղելու: Բարեբախտաբար Անասնաֆերմային կից երկու տնտեսությունների տերերը վաղուց ի վեր գժտված էին: Դրանցից մեկը, Ֆոքսվուդը, մի խոշոր, բարձիթողի վիճակում գտնվող հնաոճ ագարակ էր՝ մեծ մասն անտառապատ,

անխնամ արոտներով ու խարխուլ ցանկապատերով: Դրա տեր միստր Փիլքինգտոնն անհոգ մի ֆերմեր էր, որն իր ժամանակի մեծ մասը նվիրում էր որսորդությանն ու ձկնորսությանը: Մյուս ֆերման, որ կոչվում էր Փինչֆիլդ, ավելի փոքր էր և ավելի բարվոք: Դրա տերը, միստր Ֆրեդրիքը, ճարպիկ ու կամակոր մի մարդ էր, որն անվերջ խառնված էր դատական գործերի մեջ և առուծախի անգերազանցելի գիտակ էր համարվում: Այդ երկուսն այն աստիճան իրար հետ չունեին, որ համաձայնության չէին գա անգամ հանուն իրենց ընդհանուր շահերի պաշտպանության:

Բայց և այնպես Անասնաֆերմայի ապստամբությունը երկուսին էլ հիմնովին վախեցրել էր, և նրանք աշխատում էին սեփական անասուններին զերծ պահել այդ մասին չափից շատ բան իմանալուց: Սկզբում նրանք ծաղրուծանակի ենթարկեցին այն գաղափարը, թե անասուններն իրենք են տնտեսություն վարելու: Այդ ամենը մի երկու ամիս էլ չի տևի, ասում էին նրանք: Նրանք լուր տարածեցին Մենորը ֆերմայի անասունների մասին («Անասնաֆերմա» անունը չհանդուրժելով, նրանք շարունակում էին այն կոչել «Մենորը ֆերմա»), թե իբր վերջիններս անընդհատ գզվրռտոցների մեջ են և ուր որ է սովամահ են լինելու: Որոշ ժամանակ անց, երբ անասուններն ակներևաբար սովամահ չեղան, Ֆրեդրիքն ու Փիլքինգտոնն իրենց երգը փոխեցին ու սկսեցին պատմել Անասնաֆերմայում տիրող սոսկալի այլասերության մասին: Պարզվեց, որ անասուններն այնտեղ զբաղվում էին կանիբալիզմով, շիկացած պայտերով իրար էին խոշտանգում և էգերից օգտվում էին ընդհանուր հիմունքներով: Ահա թե ինչ է դուրս գալիս Բնության օրենքների դեմ ապստամբելուց, ասում էին Ֆրեդրիքն ու Փիլքինգտոնը:

Ինչևէ, այդ պատմություններին մինչև վերջ ոչ ոք չէր հավատում: Շարունակում էին անորոշ ու աղավաղված լուրեր տարածել հեքիաթային մի ֆերմայի մասին, որտեղից մաքդիկ արտաքսված էին, և ուր անասուններն իրենք էին իրենց գլխի տերը: Այդ տարում ամբողջ երկրամասով մեկ խռովարարության ալիք անցավ: Նախկինում միշտ հեզ ցուլերը հանկարծ կատաղում էին, ոչխարները փլում էին ցանկապատներն ու սրբում երիցուկի դաշտերը, կովերը դույլը շուռ էին տալիս, որսաձիերը մեխվում էին խոչընդոտների առջև, տերերին թամբից շպրտելով: Եվ ամենակարևորը՝ «Անգլիայի գազանների» մեղեդին և անգամ բառերը ամենուր հայտնի էին դարձել: Այն տարածվել էր ապշեցուցիչ արագությամբ: Մարդիկ անկարող էին զսպել իրենց կատաղությունն այդ երգը լսելիս, թակայն ձևացնում էին, թե այն պարզապես ծիծաղելի է: Անհասկանալի է, ասում էին նրանք, թե ինչպես

նույնիսկ անասունները կարող են իրենց թույլ տալ երգել նման անարժան ոչնչությունը: Այդ անելիս բռնված անասունները տեղնուտեղը մտրակահարվում էին: Բայց և այնպես այդ երգն անպարտելի էր: Կեռնեխներն այն ծլվլում էին թփուտներում, աղավնիները սուլում էին ծփիների վրա, այն լսվում էր դարբնոցների աղմուկի մեջ և եկեղեցական զանգերի դողանջում: Մարդկանց սիրտն այդ երգից ծածուկ դող էր ընկնում՝ նրանք լսում էին իրենց կործանման մարգարեությունը:

Հոկտեմբերի սկզբին, երբ հացահատիկն արդեն հավաքված ու կապված էր, իսկ որոշ մասը՝ նաև կալսված, աղավնիների ծայր աստիճան հուզված մի երամ վայրէջք կատարեց Անասնաֆերմայի բակում: Ջոնզն ու իր աշխատավորները և նրանց հետ Ֆոքսվուդից ու Փինչֆիլդից մի տասնյակ մարդիկ ներս էին անցել հնգահեծան դարպասից ու այժմ առաջնորդվում էին ֆերմայի կողմը: Բոլորը զինված էին փայտերով, բացի Ջոնզից, որ, հրացանը ձեռքին, քայլում էր առջևից: Կասկած չկար, որ նրանք մտադիր էին ֆերման հետ գրավել:

Այդ ամենը վաղուց էր ակնկալվում, և անհրաժեշտ պատրաստություններն արված էին: Զնագնդին, որն ուսումնասիրել էր Հուլիոս Կեսարի արշավների մասին տանը հայտնաբերված հին գիրքը, դարձավ պաշտպանական միջոցառումների պատասխանատուն: Նա շտապ հրահանգներ արձակեց, և երկու րոպե չանցած ամեն անասուն արդեն իր տեղում էր:

Երբ մարդիկ մոտեցան ֆերմայի շինություններին, Զնագնդին նախաձեռնեց առաջին գրոհը: Բոլոր երեսունչորս աղավնիները սկսեցին դես ու դեն անել մարդկանց գլխավերևում և նրանց վրա ծրտել, մինչ թփերում թաքնված սագերը դուրս պրծան ու սկսեցին քինոտ կտցել մարդկանց սրունքները: Բայց և այնպես դա ընդամենը թեթև մի ընդհարում էր իրարանցում ստեղծելու նպատակով, և մարդիկ սագերին հեշտությամբ քշեցին փայտերով: Այժմ Զնագնդին մարտի կոչեց երկրորդ շարասյունը: Մյուրիելը, Բենիամինը և ոչխարները Զնագնդու գլխավորությամբ նետվեցին առաջ և սկսեցին չորս կողմից պոզահարել ու հարվածել մարդկանց, մինչ Բենիամինը նրանց սմբակներով հետևանց քացի էր տալիս: Սակայն այս անգամ էլ փայտերով ու նալած կոշիկներով մարդիկ ավելի ուժեղ դուրս եկան, և, Զնագնդու կտրուկ վնգստոցին ենթարկվելով, որը նահանջի նշան էր, անասունները շուռ եկան ու փախան ֆերմայի բակը:

Մարդիկ ցնծագին աղաղակներ արձակեցին: Նրանց թվաց, թե թշնամին տեղի է տալիս, և նրանք անկանոն նետվեցին առաջ: Դա հենց այն էր, ինչ նախատեսել էր Զնագնդին: Հենց որ մարդիկ

խորացան բակում, գոմում դարան մտած երեք ձիերը, երեք կովերը և մնացած խոզերը հանկարծակի դուրս պրծան և կտրեցին նահանջի ճանապարհը: Զնագնդին հարձակման նշան տվեց և ինքը նետվեց Զոնզի վրա: Զոնզը բարձրացրեց հրացանն ու կրակեց: Կոտորակը Զնագնդու մեջքին արյունոտ գծեր քաշեց, սպանելով ոչխարներից մեկին: Մի պահ անգամ չվարանելով, Զնագնդին իր վեց փթանոց իրանով նետվեց Զոնզի ոտքերին: Վերջինս տապալվեց թրիքի կույտի մեջ, հրացանը վայր գցելով: Սակայն ամենից սարսռազդու տեսարանը ներկայացնում էր Դմբուզը՝ հետևի ոտքերին բարձրացած, նա իսկական հովատակի պես հարվածների տարափ էր հասցնում իր սմբակներով: Առաջին իսկ հարվածը հասավ ֆոքսվուդցի մի ջահել գանգին, նրան անկենդան փռելով ցեխին: Այդ տեսնելուն պես մարդկանցից ոմանք, փայտերը գցելով, փորձեցին փախչել: Նրանք խուճապի մատնվեցին, և կենդանիները սկսեցին բակով մեկ հետապնդել նրանց: Նրանց խփում էին, կծում, քացի տալիս, ոտնահարում: Ֆերմայում չմնաց ոչ մի անասուն, որն իր վրեժը յուրովի ձևով չհաներ: Նույնիսկ կատուն՝ կտուրից անսպասելիորեն ցատկեց մեկի ուսերին ու ճանկերը մխրճեց նրա վիզը, որից վերջինս սկսեց սոսկալի աղաղակել: Հարմար պահ ընտրելով, մարդիկ բակից դուրս պրծան ու նետվեցին դեպի ճանապարհը: Այդպիսով, ներխուժումից հինգ րոպե չանցած, նրանք իրենց եկած ճամփով մատնվեցին անփառունակ նահանջի, մինչ սագերի երամը, հետևից ընկած, ֆշշացնում էր ու կտցում նրանց սրունքները:

Բոլոր մարդիկ գնացին, բացի մեկից: Բակի խորքում Դմբուզը փորձում էր սմբակով շուռ տալ երեսնիվայր ցեխի մեջ փռված ջահելին: Տղան չէր շարժվում:

— Նա մեռած է:— Ափսոսանքով ասաց Դմբուզը:— Ես այդ անելու մտադրություն չունեի: Ես մոռացել էի, որ սմբակներս պայտած են: Հավատացեք, ես դա դիտմամբ չեմ արել:

— Ոչ մի ավելորդ գթասրտություն, ընկեր:— Բացականչեց Զնագնդին, որի վերքերից արյուն էր կաթում:— Պատերազմը պատերազմ է: Լավագույն մարդը մեռած մարդն է:

— Ես չեմ ուզում ուրիշին կյանքից զրկել: Անգամ՝ մարդուն:— Կրկնեց Դմբուզը, աչքերը թաց:

— Մոլլին ինչ եղավ:— Բացականչեց ինչ-որ մեկը:

Մոլլին չկար: Մի պահ բոլորն իրար անցան այն վախից, թե մարդիկ կարող էին նրան վնասած կամ փախցրած լինել: Սակայն վերջում նրան գտան գոմում թաքնված, գլուխը թաղած մսուրի մեջ: Նա փախուստի էր դիմել կրակոցից անմիջապես հետո: Իսկ

երբ վերադարձան նրան փնտրելու գնացած մյուս անասունները, պարզվեց, որ բակի տղան, որը, փաստորեն, միայն շշմած էր, արդեն ուշքի է եկել ու թողել-փախել:

Բոլոր անասունները ծայր աստիճան գրգռված էին, ամեն մեկը բաձրաձայն վերապատմում էր ճակատամարտին ցուցաբերած իր մասնակցությունը: Տեղնուտեղը հանպատրաստից ծագեց հաղթանակին նվիրված տոնակատարություն: Բարձրացնելով դրոշը, բոլորը մի քանի անգամ երգեցին «Անգլիայի գազանները», ապա կատարվեց զոհված ոչխարի հանդիսավոր թաղումը: Գերեզմանին ալոճենու թուփ տնկեցին: Ձնագնդին փոքրիկ ճառ արտասանեց, շեշտելով, որ բոլոր կենդանիները հարկ եղած դեպքում պետք է պատրաստ լինեն կյանքները զոհել հանուն Անասնաֆերմայի:

Անասունները միաձայն որոշում ընդունեցին սահմանել մարտական շքանշան՝ «Հերոս Անասուն, Առաջին Կարգի», և իսկույն ևեթ դրանով պարգևատրեցին Ձնագնդուն ու Դմբուզին: Շքանշանը պղնձե մի մեդալ էր (պահասենյակում գտած հին թամբերի զարդերից), որը հարկ էր կրել տոն և կիրակի օրերին: Սահմանվեց նաև երկրորդ կարգի «Հերոս Անասուն», որով հետմահու պարգևատրվեց զոհված ոչխարը:

Ապա երկար քննարկում ծավալվեց այն հարցի շուրջ, թե ինչպես կոչել ճակատամարտը: Վերջիվերջո այն կոչվեց Գոմի ճակատամարտ՝ դարանի պատվին: Միստր Ջոնզն իր հրացանը թողել էր ցեխի մեջ, հայտնի էր նաև, որ տանը փամփուշտների պաշար կա: Որոշվեց հրացանը թնդանոթի պես ամրացնել դրոշի տակ և տարին երկու անգամ կրակոց արձակել՝ հոկտեմբերի տասներկուսին, Գոմի ճակատամարտի օրը, և հունիսի քսանչորսին, Ապստամբության հոբելյանին:

ԳԼՈՒԽ 5

Ձմեռվա մոտենալուն պես Մոլին սկսեց անհանգստության գնալով ավելի շատ առիթներ տալ: Ամեն օր նա ուշանում էր աշխատանքից, ասելով, թե չէր կարողացել արթնանալ, և գանգատվում էր ինչ-որ խորհրդավոր ցավերից, թեպետ հրաշալի ախորժակ ու տեսք ուներ: Նա աշխատանքից խուսափելու զանազան պատրվակներ էր գտնում և գնում կանգնում էր ջրավազանի ափին, ժամերով հիմարաբար դիտելով սեփական արտացոլումը: Սակայն լուրեր էին շրջում նաև ավելի լուրջ բանի մասին: Մի օր, երբ Մոլլին, իր երկար պոչն օրորելով ու մի ծղոտ ծամելով, զվարթ մտավ բակ, Երեքնուկը նրան մի կողմ քաշեց:

— Մոլլի,— ասաց նա,— ես քեզ շատ լուրջ ասելիք ունեմ: Այս

առավոտ ես տեսա, թե ինչպես էիր դու նայում Անասնաֆերման Ֆոքսվուդից բաժանող ցանկապատից այն կողմ: Մյուս կողմում կանգնած էր միստր Փիլքինգտոնի մարդկանցից մեկը: Եվ... Ես բավական հեռու էի, բայց համարյա վստահ եմ, որ տեսա, թե ինչպես էր նա քեզ հետ խոսում, իսկ դու թույլ էիր տալիս քիթդ շոյել: Սա ինչ է նշանակում, Մոլլի:

— Նա ոչինչ չէր անում: Ես չէի... Սուտ է:— Գոռաց Մոլլին, խլրտալով ու գետինը դոփելով:

— Մոլլի, նայիր աչքերիս: Կարող ես ազնիվ խոսք տալ, որ այդ մարդը քիթդ չի շոյել:

— Դա ճիշտ չէ:— Կրկնեց Մոլլին, բայց երեքնուկի աչքերին նայել չկարողացավ ու վարգով փախավ դաշտ:

Երեքնուկի մտքով հանկարծ մի վատ բան անցավ: Առանց մյուսներին որևէ բան ասելու, նա գնաց գոմի Մոլլիի անկյունը, և կճղակով հարդը շրջելով, շաքարի կտորներ ու մի փունջ գունավոր ժապավեններ գտավ:

Երեք օր անց Մոլլին անհայտացավ: Մի քանի շաբաթ նրա մասին ոչ մի տեղեկություն չկար, բայց հետո աղավնիները հայտնեցին, որ նրան տեսել են Վիլինգդոնից այն կողմ: Նա լծված էր պանդոկի դռանը կանգնած սև ու կարմիր գեղեցիկ մի սայլակի: Վանդակավոր շալվարով, պանդոկապանի նման գիրուկ կարմրաթուշ մի տղամարդ նրան շաքար էր տալիս ու շոյում էր քիթը: Նա կոկիկ տեսք ուներ և նրա ճակատին ալ կարմիր ժապավեն էր կապված: Անասուններից ոչ մեկը այլևս երբեք Մոլլիի անունը չտվեց:

Հունվարին դաժան ցրտեր սկսվեցին: Հողը երկաթի պես կարծրացավ, և դաշտերում այլևս աշխատել չէր լինում: Միտինգների մեծ մասն անց էր կացվում մեծ ամբարում, ուր խոզերը զբաղվում էին գարնանացանի աշխատանքները ծրագրելով: Բոլորն ընդունում էին, որ խոզերը, բացահայտորեն մյուսներից խելացի լինելով, որոշելու են ֆերմայի գործունեության հետ կապված բոլոր հարցերը, թեև նրանց որոշումներն անպայման պետք է հաստատվեին մեծամասնության քվեարկությամբ: Նման կարգը բավական արդյունավետ կլիներ, եթե չհաշվեինք Զնագընդու և Նապոլեոնի միջև անընդհատ ծագող տարաձայնությունները: Այդ երկուսը վիճում էին ցանկացած կետի շուրջ, որը դրա համար հնարավորություն էր ընձեռում: Եթե մեկն առաջարկում էր ավելի շատ գարի ցանել, մյուսն ավելի շատ վարսակ էր պահանջում, իսկ եթե մեկն ասում էր, որ այսինչ դաշտը կաղամբի համար շատ հարմար է, մյուսը հայտարարում էր, որ պտղարմատներից բացի այն ուրիշ ոչ մի բանի պետք չէ: Ամեն մեկն իր հետևորդներն

ուներ, և բանը երբեմն հասնում էր կատաղի վեճերի: Միտինգների ժամանակ Զնագնդին հաճախ հաղթանակ էր տանում իր փայլուն ելույթներով, սակայն Նապոլեոնն ավելի լավ էր կազմակերպում իր հետևորդներին և մասնավորապես՝ ոչխարներին: Վերջերս ոչխարները սովորություն էին ձեռք բերել տեղի-անտեղի մկկալ «չորս ոտք լավ, երկու ոտք վատ», երբեմն դրանով ընդհատելով Միտինգը: Նկատվել էր նաև, որ առավել հաճախ նրանք այդ անում էին Զնագնդու ճառերի ամենից վճռական պահերին: Զնագնդին մանրամասն ուսումնասիրել էր տանը գտնված «Ֆերմեր» հանդեսի հին համարները և լի էր նորամուծությունների ու բարեփոխումների ծրագրերով: Նա գիտուն տեսքով խոսում էր դրենաժի, սիլոսի ու խարամի մասին և խրթին մի սխեմա էր մշակել, ըստ որի բոլոր անասունները պիտի թրքեին ուղղակի դաշտում և ամեն օր տարբեր մի տեղ, պարարտացման գործը հեշտացնելու նպատակով: Նապոլեոնն անձամբ ոչ մի սխեմա չէր առաջարկում, հանգիստ ասելով, որ Զնագնդու ծրագրերից ոչինչ դուրս չի գա, և կարծես սպասողական դիրք էր ընդունել: Նրանց ամենից սուր վիճաբանությունը ծավալվեց հողմաղացի շուրջը:

Շինություններից քիչ հեռու արոտավայրի մեջ կար փոքրիկ մի բլուր, որը ֆերմայի ամենաբարձր կետն էր: Տեղանքն ուսումնասիրելով, Զնագնդին հայտարարեց, որ դա իսկը հողմաղացի տեղն է, որի աշխատեցրած դինամոն ֆերմային կապահովի էլեկտրականությամբ: Դա թույլ կտա լուսավորել ու ձմռանը ջերմացնել գոմերը, ինչպես նաև պտտասղոց, կալսիչ, ճակնդեղկտրիչ ու կթելու էլեկտրական մեքենա բանեցնել: Անասունները նման բաների մասին երբեք չէին լսել (ֆերման բավական հետամնաց էր և միայն տարրական մեխանիզմներ ուներ) և ապշահար ականջ էին դնում, իսկ Զնագնդին նորանոր ֆանտաստիկ մեքենաներ էր խոստանում, որոնք պիտի անեին ամբողջ գործը, մինչ անասուններն իրենց քեֆին կարածեին կամ ընթերցանությամբ ու բանախոսություններով կզարգացնեին մտավոր ունակությունները:

Մի քանի շաբաթից Զնագնդու հողմաղացի մանրամասն նախագիծը պատրաստ էր: Մեխանիկական նրբությունները հիմնականում քաղված էին միստր Զոնզի երեք գրքերից՝ «Տնավարության հազար ու մի պիտանի խորհուրդ», «Ինքնուս որմնադիր» և «Էլեկտրականություն սկսնակների համար»: Զնագնդին աշխատանոցի էր վերածել և ժամերով փակվում էր նախկին ինկուբատորում, որի հատակի ղողրկ տախտակները շատ հարմար էին վրան գծելու համար: Բաց գրքերը քարով սեղմած, նա արագարագ հետ ու առաջ էր անում, տոտիկի հոդերի միջև բռնած կավիճով

գծեր քաշելով ու բավականությունից խռնչալով: Աստիճանաբար ուրվագծվեց լծակների ու ատամնանիվների խրթին մի կուտակում, որը մնացած անասունների համար բացարձակապես անընթեռնելի էր և միևնույն ժամանակ՝ խիստ տպավորիչ: Բոլորն օրական առնվազն մեկ անգամ գալիս էին Զնագնդու գծածը նայելու: Գալիս էին անգամ հավերն ու բադերը, ջանալով չտրորել կավճե գծերը: Այդ ամենին անմասն էր մնում միայն Նապոլեոնը, որը հենց սկզբից հակադրվել էր հողմաղացի գաղափարին: Բայց և այնպես մի օր նա անսպասելիորեն եկավ նախագիծն ուսումնասիրելու: Նա մռայլ հետ ու առաջ արեց ինկուբատորով մեկ, ուշադիր զննեց ամեն մանրամասն, մի երկու տեղ նույնիսկ հոտոտեց ու կանգ առավ, աչքի տակից որոշ ժամանակ գնահատելով տեսածը, ապա հանկարծ ոտքը բարձրացրեց և, նախագծի վրա միզելով, առանց որևէ բան ասելու դուրս եկավ:

Հողմաղացի վերաբերյալ ֆերմայի կարծիքները կիսվել էին: Զնագնդին չէր ժխտում, որ այն կառուցելը հեշտ գործ չէ: Հարկ էր լինելու քար կտրել, շարել պատերն ու առագաստ կարել, որից հետո գալու էր դինամոյի և հաղորդալարերի հերթը: (Թե որտեղից էին դրանք ճարելու, նա չասաց) : Սակայն Զնագնդին պնդում էր, որ այդ ամենն իրագործելի է մեկ տարվա ընթացքում: Որից հետո, ասաց նա, այնքան ժամանակ կխնայվեր, որ անասունները կաշխատեին շաբաթական ընդամենը երեք օր: Մյուս կողմից Նապոլեոնն առարկում էր, որ ներկայիս հրատապ պահանջը սննդի արտադրության ավելացումն է, իսկ եթե ժամանակը վատնվի հողմաղացի վրա, բոլորը վերջում սովամահ կլինեն: Անասունները բաժանվեցին երկու խմբավորման, հետևյալ նշանաբաններով՝ «Կեցցե Զնագնդին և եռօրյա աշխատանքային շաբաթը» և «Կեցցե Նապոլեոնը և լիքը կերակրատաշտը»: Բենիամինը միակ անասունն էր, որը ոչ մի խմբավորման չհարեց: Նա ոչ հավատում էր կերակրի գալիք առատությանը, ոչ էլ նրան, որ հողմաղացն աշխատանք կխնայի: Հողմաղացով, թե առանց դրա, ասում էր նա, կյանքը կմնա առաջվա պես, այսինքն՝ վատ:

Հողմաղացից զատ ծագել էր նաև ֆերմայի պաշտպանության հարցը: Բոլորը հասկանում էին, որ, Գոմի ճակատամարտում պարտություն կրելով հանդերձ, մարդիկ կարող են ֆերման վերագրավելու ու Զոնզին վերադարձնելու մի նոր ավելի վճռական փորձ ձեռնարկել: Նրանք լուրջ առիթներ ունեին այդ անելու, քանի որ մարդկանց պարտության լուրը տարածվել էր երկրամասով մեկ, և հարևան տնտեսությունների անասունները նախկինից ավելի անհնազանդ էին դարձել: Այդ հարցում, ինչպես միշտ, Զնագնդին ու Նապոլեոնը տարաձայնություններ ունեին: Ըստ Նապոլեոնի, անասունները պետք է հրազեն ճարեին ու վարժվեին այն գործածելուն: Ըստ Զնագնդու, անհրաժեշտ էր գնալով ավելի շատ աղավնիներ ուղարկել, հարևան ֆերմաների անասուններին ապստամբության կոչելու: Մեկի կռվանն այն էր, որ եթե անասունները չկարողանան պաշտպանվել, նրանց անխուսափելիորեն

նորից կստրկացնեն: Մյուսը պնդում էր, որ եթե ամենուր ապըստամբություններ ծագեն, պաշտպանվելու կարիք չի լինի: Անասուններն ականջ էին դնում մեկ Նապոլեոնին, մեկ Ջնագնդուն և չէին կարողանում որոշել, թե ով է ճիշտը. փաստորեն, նրանք ամեն անգամ համաձայն էին նրա հետ, ով խոսում էր տվյալ պահին:

Վերջապես հասավ այն օրը, երբ Ջնագնդու նախագիծն ավարտված էր: Հաջորդ կիրակի օրվա Միտինգին քվեարկության էր դրվելու հողմաղացի աշխատանքները սկսելու անհրաժեշտության հարցը: Երբ անասունները հավաքվեցին ամբարում, Ջնագնդին ոտքի կանգնեց և, չնայած տեղ-տեղ ոչխարների մկըկոցին, շարադրեց կառույցի անհրաժեշտության իր փաստարկները: Ապա պատասխան խոսքով հանդես եկավ Նապոլեոնը: Նա շատ հանգիստ ասաց, որ հողմաղացի գաղափարն անհեթեթություն է և, խորհուրդ տալով դրա օգտին չքվեարկել, նստեց իր տեղը: Նա կես րոպե էլ չխոսեց, և թվում էր, թե գրեթե անտարբեր է իր ասածի թողած տպավորությանը: Այստեղ Ջնագնդին ոտքի ցատկեց և, ոչխարներին լռեցնելով, բոլորին դիմեց բոցաշունչ մի կոչով հօգուտ հողմաղացի: Մինչ այդ անասունների նախապատվությունները բաշխված էին հավասարապես, բայց Ջնագնդու պերճախոսությունը շատ չանցած գրավեց նրանց: Վառվռուն նախադասություններով նա պատկերեց ֆերմայի կյանքն այն բանից հետո, երբ ծանր աշխատաքի բեռ կընկնի անասունների ուսերից: Նրա երևակայությունն այս անգամ տարածվեց սղոցներից ու ճակնդեղկտրիչներից շատ ավելի հեռու: Էլեկտրականությունը, ասաց նա, կարող է աշխատեցնել գութաններ, խոփեր, ճմլիչներ, հնձող ու դիզող մեքենաներ և, բացի այդ, սեփական լույսով, ջերմությամբ և տաք ու սառը ջրով ապահովել ամեն անասունի անկյուն: Երբ նա ավարտեց իր խոսքը, ոչ մի կասկած այլևս չկար, թե ում օգտին կանցնի քվեարկությունը: Սակայն նույն այդ պահին ոտքի կանգնեց Նապոլեոնը և, կողքից տարօրինակ մի հայացք նետելով Ջնագնդու վրա, արտասովոր զիլ մի վնգստոց արձակեց, որի նմանը մինչ այդ նրանից ոչ ոք չէր լսել:

Դրսից լսվեց սոսկալի մի հաչոց, և պղնձե վզնոցներով ինը ահռելի շուն ներս նետվեցին ամբար: Նրանք հարձակվեցին ուղիղ Ջնագնդու վրա, որը ճիշտ ժամանակին վեր թռավ, ահարկու երախներից մազապուրծ լինելու համար: Հաջորդ պահին նա արդեն դռնից դուրս նետվեց, շները հետևից: Անխոս զարմանքով ու երկյուղածությամբ, անասունները խմբվեցին դռան մոտ, որ նայեն: Ջնագնդին արոտի երկայնքով վազում էր դեպի ճանապարհը: Նա սուրում էր միայն խոզին վայել ավյունով, սակայն շները հետ չէին մնում: Մի պահ նա սայթաքեց և թվում էր, թե ուր որ է զոհ կգնա: Թեև նա վեր ցատկեց ու վազեց ավելի արագ, քան երբևէ, շները շուտով կրկին վրա հասան: Նրանցից մեկը քիչ էր

մնում երախը փակեր Ձնագնդու պոչին, բայց նա վերջին վայրկյանին հազիվհազ հասցրեց պոչը փախցնել: Ապա նոր թափով նետվեց առաջ և, մի երկու մատնաչափի առավելությամբ, դուրս պրծավ ցանկապատի անցքից ու այլևս չերևաց:

Լուռ ու ահաբեկված, անասունները գլխիկոր ներս մտան ամբար: Քիչ անց վազքով վերադարձան նաև շները: Սկզբում ոչ ոք չէր հասկանում, թե դրանք որտեղից են հայտնվել, բայց շուտով պարզվեց, որ դրանք Նապոլեոնի կողմից մայրերից խլած և անձամբ դաստիարակած լակոտներն են: Չնայած նրանք դեռ լրիվ հասակ չէին առել, բայց ամեհի շներ էին՝ գայլերի պես կատաղի տեսքով: Բոլորը նկատեցին, որ նրանք Նապոլեոնից չեն հեռանում և նրան տեսնելուն պես պոչ են խաղացնում, ինչպես մինչ այդ շներն անում էին Ջոնզի ներկայությամբ:

Նապոլեոնը շների ուղեկցությամբ բարձրացել էր այն հարթակը, ուր ժամանակին իր ճառն էր արտասանել Գնդապետը: Նա ազդարարեց, որ այսուհետև կիրակնօրյա միտինգներ չեն լինի: Դրանք ժամանակի ավելորդ վատնում են, ասաց նա: Առաջիկայում ֆերմայի տնտեսության հետ կապված բոլոր հարցերը կլուծվեն խոզերի հատուկ կոմիտեի կողմից, որի նախագահը լինելու է ինքը: Կոմիտեի դռնփակ նիստերի որոշումները կհաղորդվեն նաև մնացածներին: Անասուններն առաջվա պես կիրակի առավոտյան կհավաքվեն դրոշի արարողությանը՝ «Անգլիայի գազանները» երգելու և շաբաթական հանձնարարություններ ստանալու, սակայն քննարկումներ այլևս չեն լինի:

Չնայած Ձնագնդու վտարման առաջացրած շփոթությանը, անասուններն այդ հայտարարությունից սրտնեղեցին: Նրանցից ոմանք անգամ կբողոքեին, եթե կարողանային գտնել ճիշտ փաստարկները: Նույնիսկ Դմբուզը աղոտ մի անհանգստություն էր զգում: Նա ականջները հետ տարավ, մի երկու անգամ թափահարեց իր բաշը և ճգնեց մտքերն ի մի բերել, բայց ի վերջո ոչ մի ասելիք չգտավ: Բայց և այնպես հենց խոզերից ոմանք ավելի ակտիվ գտնվեցին: Դժգոհության սուր վնգստոցներով, առաջին շարքից վեր թռան չորս երիտասարդ գոճի և բոլորը միանգամից սկսեցին խոսել: Իսկույն ևեթ Նապոլեոնի շուրջը նստած շներն անսպասելի բարձր ու սպառնալից գռմռոց արձակեցին, և խոզերը սսկված նստեցին իրենց տեղները: Դրանից հետո ոչխարները բարձրաձայն պոռթկացին «Չորս ոտք լավ, երկու ոտք վատ», որը շարունակվեց քառորդ ժամից ավել, վերջ դնելով որևէ քննարկության հնարավորությանը:

Որոշ ժամանակ անց Ջռանին ուղարկեցին մնացածներին բացատրելու նոր կարգը:

— Ընկերներ,— ասաց նա,— հուսով եմ, որ ամեն կենդանի ըստ արժանավույն գնահատեց ընկեր Նապոլեոնի անձնվիրությունը, որով նա իր ուսերին հավելյալ աշխատանք բարդեց: Մի կարծեք, ընկերներ, թե առաջնորդելը հաճույք է: Ընդհա-

պառակը՝ դա ծանր և խորին մի պատասխանատվություն է: Ոչ ոք վստահ չէ ընկեր Նապոլեոնից առավել, որ բոլոր անասունները հավասար են: Նա ավելի քան ուրախ կլիներ ձեզ տրամադրել սեփական որոշումներ ընդունելու հնարավորությունը: Բայց երբեմն, ընկերներ, դուք կարող եք նաև սխալ որոշումներ ընդունել՝ պատկերացնում եք, թե դա մեզ ուր կհասցնի: Ենթադրենք, թե դուք որոշեիք հետևել Զնագնդուն, իր հողմաղացի ցնորական ծրագրով, Զնագնդուն, որը, ինչպես հիմա գիտենք, ոճրագործից ոչնչով չէր տարբերվում...

— Նա քաջ կռվում էր Գոմի ճակատամարտում: — Ասաց ինչ-որ մեկը:

— Քաջությունը բավական չէ:— Ասաց Զռանը:— Նվիրվածությունն ու հնազանդությունը շատ ավելի կարևոր են: Ինչ վերաբերում է Գոմի ճակատամարտին, ապա հավատացած եմ, կգա այն ժամանակը, երբ մենք կհասկանանք, որ նրա դերն այդ ճակատամարտում խիստ չափազանցված էր: Կարգապահություն, ընկերներ, երկաթյա կարգապահություն: Ահա այսօրվա մեր նշանաբանը: Մի սխալ քայլ, և մեր թշնամիները չեն հապաղի առիթից օգտվել: Ի՞նչ խոսք, ընկերներ, որ դուք չեք ուզում Զոնզի վերադարձը:

Եվ վերստին այդ փաստարկն անառարկելի էր: Ոչ ոք, իհարկե, Զոնզի վերադարձը չէր ուզում՝ եթե կիրակնօրյա քննարկումները կարող էին դրան նպաստել, ուրեմն քննարկումները պետք է դադարեցվեին: Դմբուզը, որն արդեն ժամանակ էր ունեցել ամեն ինչ կշռադատելու, ի մի բերեց ընդհանուր տրամադրությունը, ասելով՝ «Եթե ընկեր Նապոլեոնն այդպես է ասում, ուրեմն ճիշտը դա է»: Այնուհետև նա որդեգրեց հետևյալ ասույթը՝ «Նապոլեոնը միշտ ճիշտ է», միացնելով այն իր անձնական նշանաբանին՝ «Ես ավելի եռանդուն կաշխատեմ»:

Եղանակն արդեն փոխվում էր՝ հասել էր գարնանային հերկի ժամանակը: Ինկուբատորը, որտեղ Զնագնդին ստեղծում էր հողմաղացի իր նախագիծը, կողպվել էր՝ ենթադրվում էր, որ նախագիծը ջնջված է: Ամեն կիրակի առավոտյան ժամը տասին անասունները հավաքվում էին մեծ ամբարում հրահանգներ ստանալու: Մեր Գնդապետի գանգը պարտեզից հողահան էր արվել և այժմ տեղակայված էր դրոշի տակ, կոճղի վրա: Դրոշի բարձրացումից հետո, նախքան ամբար մտնելը, անասունները պարտավոր էին շարք կազմած պատշաճ հարգանքով անցնել գանգի կողքով: Նրանք այլևս բոլորը միասին չէին նստում, ինչպես առաջներում: Նապոլեոնը, Զռանը և Մինիմուս անունով մի խոզ, որը բանաստեղծություններ ու երգեր կազմելու ակնառու ձիրք էր դրսևորել, նստում էին հարթակի առջևում, ինը շների միջև, մինչ մյուս խոզերը տեղավորվում էին նրանց հետևում: Մնացած անասունները նստում էին ամբարում, դեմքով դեպի հարթակը: Նապոլեոնը դրի զինվորական ոճով շարադրում էր շաբաթվա առաջադրանքը,

և, մեկ անգամ «Անգլիայի գազանները» երգելով, բոլոր անասունները ցրվում էին:

Զնագնդու վտարման երրորդ կիրակի օրը անասունները որոշ զարմանքով Նապոլեոնից տեղեկացան, որ հողմաղացն այնուամենայնիվ կառուցվելու է: Նա ոչ մի բացատրություն չտվեց, պարզապես անասուններին զգուշացնելով, որ հավելյալ այդ նախաձեռնությունը ծանր աշխատանք է պահանջելու, և կարող է անգամ անհրաժեշտություն ծագել օրաբաժինները կրճատելու: Ինչևէ, նախագծերն արդեն պատրաստ էին՝ դրանով վերջին երեք շաբաթվա ընթացքում զբաղվել էր խոզերի հատուկ մի հանձնաժողով: Հողմաղացի և օժանդակ կառույցների շինարարությունը նախատեսված էր ավարտել երկու տարում:

Երեկոյան Զռանը մյուս անասուններին ներքին կարգով բացատրեց, որ իրականում Նապոլեոնը հողմաղացի ծրագրին երբեք դեմ չի եղել: Ընդհակառակը, այդ գաղափարը սկզբում առաջ է քաշել հենց նա, և ինկուբատորի հատակին Զնագնդու գծած նախագիծը պարզապես գողացված էր Նապոլեոնի թղթերից: Փաստորեն, հողմաղացը հենց Նապոլեոնի գյուտն է: Ապա ինչո՞ւ էր նա, հարցրեց մեկը, հողմաղացին այդքան կրքոտ առարկում: Դա, խորհրդավոր տեսքով բացատրեց Զռանը, Նապոլեոնի խորամանկությունն էր: Նա *ձևացրել* էր հողմաղացին դեմ լինել, պարզապես ազատվելու համար Զնագնդուց, որը վտանգավոր տարր էր վնասակար ազդեցությունների կրող: Այժմ, երբ Զնագնդին այլևս չի խանգարում, ծրագիրը կարելի է իրականացնել առանց նրա միջամտության: Դա, ասաց Զռանը, կոչվում է տակտիկա: Նա մի քանի անգամ կրկնեց՝ «Տակտիկա, ընկերներ, տակտիկա», դեսուդեն անելով և ուրախ քրքիջով շարժելով պոչը: Անասունները վստահ չէին, թե հասկացել են այդ բառի իմաստը, սակայն Զռանի խոսքն այնքան համոզիչ էր, իսկ կողքին պատահաբար հայտնված երեք շներն այնքան սպառնալից էին գոռոռում, որ բացատրությունն առանց ավելորդ հարցերի ընդունվեց:

ԳԼՈՒԽ 6

Այդ ամբողջ տարին անասուններն աշխատում էին ստրուկի պես: Բայց նրանք երջանիկ էին, ջանք ու եռանդ չխնայելով, քանի որ գիտեին, որ այդ աշխատանքի պտուղներն իրենց և իրենց նմանների սերունդների համար են և ոչ թե՝ անբան ավազակների մարդկային ոհմակի:

Ամբողջ գարունն ու ամառը նրանք աշխատեցին շաբաթական վաթսուն ժամ, իսկ օգոստոսին Նապոլեոնը հայտարարեց, որ կիրակի օրերը մինչև կեսօր նույնպես կլինեն աշխատանքային: Այդ օրերի աշխատանքը խստիվ կամավոր էր, սակայն բացակայողների օրաբաժինը կիսով չափ կկրճատվեր: Դրանով հանդերձ անհրաժեշտ եղա-

որոշ ծրագրեր թողնել անավարտ: Բերքահավաքը նախորդից պակաս հաջող դուրս եկավ, իսկ վաղ ամռանը պտղարմատների համար նախատեսված երկու դաշտը չցանվեցին, որովհետև ժամանակին չէին հերկվել: Կարելի էր կանխատեսել, որ ձմեռը ծանր է անցնելու:

Հողմաղացի շինարարությունն անսպասելի դժվարությունների հանգեց: Ֆերմայում կրաքարի լավ հանք կար, իսկ պահեստներից մեկում՝ բավական քանակությամբ ցեմենտ ու ավազ, այնպես որ շինանյութի պակաս չէր զգացվում: Սակայն սկզբում անասունները չէին կարողանում լուծել քարերը հարմար կտորների կիսելու հարցը: Թվում էր, թե դա հնարավոր է միայն քլունգների ու բրիչների օգնությամբ, իսկ անասուններն այդ անել չէին կարող, քանի որ ընդունակ չէին կանգնել հետևի ոտքերի վրա: Մի քանի շաբաթվա ապարդյուն փորձերից հետո միայն ինչ-որ մեկը երկնեց ճիշտ գաղափարը, մասնավորապես՝ օգտագործել ձգողության ուժը: Քարհանքով մեկ հսկա ապառաժներ էին ցրված, որոնք որպես այդպիսին ոչ մի բանի պիտանի չէին: Դրանց շուրջը պարաններ գցելով, բոլոր անասունները՝ կովերը, ձիերը, ոչխարները, ամեն ոք, ով կարող էր պարան բռնել,— վճռական պահերին միանում էին անգամ խոզերը,— կրիայի արագությամբ ապառաժները քաշում էին քարհանքի եզրն ու ցած հրում, մանր կտորների փշրելով: Բեկորները տեղափոխելն արդեն համեմատաբար հեշտ էր: Ձիերը քարը տեղափոխում էին սայլերով, իսկ ոչխարները քարշ էին տալիս առանձին բեկորներ: Մի հին սայլակի լծվելով, իրենց լուման էին ներդնում նույնիսկ Մյուրիելն ու Բենիամինը: Ամառվա վերջին, երբ արդեն բավականաչափ քար էր կուտակվել, խոզերի վերահսկողությամբ սկսվեց շինարարությունը:

Աշխատանքը դանդաղ ու ծանր էր ընթանում: Հաճախ մի ամբողջ օրվա ուժասպառ ջանքեր էին պահանջվում ընդամենը մեկ ապառաժ վեր հանելու համար, իսկ ցած գցելուց այն երբեմն չէր փշրվում: Առանց Դմբուզի ոչ մի բան գլուխ չէր գա, նրա ուժը գրեթե հավասար էր մնացած անասունների գումարված զորությանը: Երբ ապառաժը ցած էր սողում, իսկ անասունները սկսում էին հուսահատ ճչալ, լանջն ի վար սահելով, ամեն անգամ միայն Դմբուզն էր, որ, պարանին ուժ տալով, կասեցնում էր սողքը: Ամենքը լցվում էին հիացմունքով, տեսնելով, թե ինչպես նա, կողերը քրտնաթաթախ, սմբակները հողին մխրճելով, հևալով, քայլ առ քայլ ընթանում էր վեր: Երեքնուկը նրան բազմիցս զգուշացրել էր, որ խուսափի ուժերի գերլարումից, բայց Դմբուզը նրան ականջ չէր դնում: Նրա համար իր երկու կարգախոսները՝ «Ես ավելի եռանդուն կաշխատեմ» և «Նապոլեոնը միշտ ճիշտ է», բավարար պատասխան էին թվում բոլոր հարցերին: Նա անգամ պայմանավորվել էր, որ աքլորը կես ժամի փոխարեն իրեն արթնացնի մնացածներից քառասունհինգ րոպե շուտ: Իսկ իր ազատ

պահերին, որոնք վերջերս այնքան էլ շատ չէին, նա մենակ գնում էր քարհանք, բեկորներ հավաքում և առանց օգնության քարշ տալիս շինհրապարակ:

Չնայած աշխատանքի ծանրությանը, անասուններն այդ ամառն այնքան էլ վատ չանցկացրեցին: Եթե նրանց ստացածները Ջոնզի օրերից շատ չէր, համենայն դեպս պակաս էլ չէր: Սեփական ջանքերով կերակրվելու առավելությունը, առանց հինգ անբան մարդկանց ապրուստ ապահովելու անհրաժեշտության, այնքան զգալի էր, որ այն վարկաբեկելու համար չափից շատ ձախողություններ կպահանջվեին: Բացի այդ շատ բաներում անասունների գործելակերպը մարդկայինից ավելի արդյունավետ էր ու խնայողական: Օրինակ, քաղհանելու տիպի աշխատանքները կատարվում էին մարդու համար անհասանելի մանրախնդրությամբ: Դեռ ավելին, քանի որ ոչ մի անասուն այլևս չէր գողանում, վերացել էր արոտները դաշտերից անջատելու անհրաժեշտությունը, որից խնայվում էր ցանկապատների ու դարպասների նորոգման աշխատանքը: Չնայած այդ ամենին, աշնան գալուստի հետ սկսեցին նկատվել մի շարք չնախատեսված պակասություններ: Առաջացավ պարաֆինայուղի, մեխերի, պարանների, շների բլիթների և պայտերի պակասորդ, որը հնարավոր չէր բավարարել ֆերմայի միջոցներով: Ավելի ուշ պահանջվելու էին նաև սերմեր ու արհեստական պարարտանյութ, չհաշված բազմապիսի գործիքները և, վերջապես՝ հողմաղացի համար մեքենաներ: Ոչ ոք պատկերացում չուներ, թե ինչպես է այդ ամենը ձարվելու:

Հերթական կիրակի առավոտյան, երբ անասունները հավաքվել էին հրահանգներ ստանալու, Նապոլեոնն ազդարարեց նոր քաղաքականության սկիզբը: Այսուհետև Անասնաֆերման առևտուր էր անելու հարևան ֆերմաների հետ. անշուշտ, ոչ թե շահադիտական նկատառումներով, այլ պարզապես հրատապ անհրաժեշտություն կազմող որոշ նյութեր ձեռք բերելու համար: Հողմաղացի կարիքները պետք է գերիշխեն մնացած ամեն ինչի վրա, ասաց նա: Դա նրան ստիպում է վաճառքի հանել խոտի մեկ դեզ և ցորենի բերքի մի մասը, իսկ ավելի ուշ, եթե դրամի կարիք առաջանա, այն կծածկվի ձվերի վաճառքով, որոնք Վիլինգդոնում միշտ լայն պահանջարկ ունեն: Հավերը, ասաց Նապոլեոնը, պիտի ողջունեն այդ զոհողությունը որպես իրենց հատուկ ներդրում հողմաղացի շինարարության գործին:

Անասուններին այս անգամ էլ ինչ-որ անորոշ անհանգստություն համակեց: Երբեք գործ չբռնել մարդկանց հետ, երբեք առևտուր չանել, փողի հետ չշփվել՝ արդյոք Ջոնզին վռնդելուց հետո կայացած ցնծագին Միտինգում նման որոշումներ չէին ընդունվել: Բոլոր անասունները հիշում էին, որ ընդունվել են, համենայն դեպս նրանց թվում էր, թե հիշում էին: Չորս երիտասարդ գոճիները, որոնք բողոքել էին Նապոլեոնի կողմից Միտինգների վերացման դեմ, փորձեցին երկչոտ առարկել, բայց շների սարսռազդու գոռոցը նրանց լռեցրեց: Ապա, ինչպես միշտ, ոչխարներ-

սկսեցին՝ «Չորս ոտք լավ, երկու ոտք վատ», և փոքրիկ թյուրիմացությունը հարթվեց: Վերջապես Նապոլեոնը բարձրացրեց իր տոտիկը, լռություն պահանջելով, և հայտնեց, որ արդեն տեսել է բոլոր անհրաժեշտ պատրաստությունները: Անասուններից և ոչ մեկը կարիք չի ունենա շփվել մարդկանց հետ, որն անկասկած խիստ անցանկալի է: Նապոլեոնն ամբողջ ծանրությունը վերցնում է իր ուսերին: Ոմն միստր Վիմփըր, Վիլինգդոնում բնակվող մի փաստաբան, համաձայնվել էր միջնորդ ծառայել Անասնաֆերմայի և արտաքին աշխարհի միջև, և ամեն երկուշաբթի պիտի առավոտյան այցելի ֆերմա հանձնարարություններ ստանալու: Նապոլեոնն իր ելույթն ավարտեց սովորական կոչով՝ «Կեցցե՛ Անասնաֆերման», և, «Անգլիայի գազանները» երգելուց հետո, անասունները ցրվեցին:

Ավելի ուշ Զռանը ֆերմայով մեկ պտույտ գործեց, փարատելով անասունների կասկածները: Նա հավաստիացրեց, որ առևտրի և դրամի դեմ որոշում երբեք չի ընդունվել կամ անգամ առաջարկվել: Այն մաքուր երևակայության արդյունք է, որի հետքերը, թերևս, հասնում են Զնագնդու տարածած հերյուրանքներին: Անասուններից ոմանք դեռևս երկմտում էին, բայց Զռանը նրանց կտրուկ հարցրեց՝ «Դուք վստա՞հ եք, ընկերներ, որ այդ ամենը երազում չեք տեսել: Որտե՞ղ է հիշատակվում նման որոշումը: Որտե՞ղ է այն արձանագրված»: Եվ քանի որ միանգամայն ակնհայտ էր, որ նման բան ոչ մի տեղ արձանագրված չէ, անասունները ստիպված էին ընդունել, որ սխալվել են:

Ամեն երկուշաբթի միստր Վիմփըրն ըստ պայմանավորվածության այցելում էր ֆերմա: Նա խարդախ տեսքով ու այտմորուսով փոքրիկ մի մարդ էր, ցածրորակ փաստաբան, սակայն բավականաչափ ճարպիկ, մնացածներից շուտ հասկանալու համար, որ Անասնաֆերման միջնորդի կարիք կունենա, և որ գործը եկամտաբեր է: Անասունները որոշակի երկյուղով էին հետևում նրա անցուդարձին և նրանից հնարավորին չափ խուսափում էին: Բայց և այնպես Նապոլեոնի տեսքը, որը չորեքթաթ հրահանգներ էր՝ տալիս երկու ոտքի վրա կանգնած Վիմփըրին, հպարտությամբ էր լցնում նրանց սրտերը և մասամբ հաշտեցնում նոր կարգի հետ: Նրանց հարաբերությունները մարդկային ցեղի հետ այժմ փոքր-ինչ այլ էին, քան նախկինում: Հիմա, երբ Անասնաֆերման բարգավաճում էր, մարդիկ նրան պակաս չէին ատում՝ իրականում ատում էին ավելին: Ամեն մարդ անսասան հավատում էր, որ ֆերման վաղ թե ուշ կսնանկանա, իսկ հողմաղացի ծրագիրը կձախողի: Նրանք հավաքվում էին գինետներում ու գրաֆիկների միջոցով փորձում իրար ապացուցել, որ հողմաղացն ուզած-չուզած պիտի փլվի, իսկ եթե անգամ չփլվի, ապա երբեք չի գործելու: Բայց և այնպես, հակառակ իրենց կամքին, նրանք որոշակի հարգանք էին տածում սեփական գործերն արդյունավետ կերպով վարելու անասունների հատկության հանդեպ: Դրա դրսևորումներից մեկն այն էր,

որ նրանք սկսել էին Անասնաֆերման կոչել իր իսկական անունով, փոխանակ ձևացնելու, թե այն «Մենքը ֆերմա» է կոչվում: Նրանք նաև դադարել էին օգնել Ջոնզին, որը հրաժարվել էր ֆերման վերագրավելու իր հույսերից և տեղափոխվել էր ապրելու ուրիշ երկրամասում: Վիմփրին չհաշված, Անասնաֆերման արտաքին աշխարհի հետ դեռ կապեր չէր պահպանում, սակայն համառ լուրեր էին շրջում, որ Նապոլեոնն ուր որ է գործնական համաձայնություն է կնքելու Ֆոքսվուդի միստր Փիլքինգդոնի կամ Փինչֆիլդի միստր Ֆրեդրիքի հետ, սակայն՝ ոչ, նշվում էր, երկուսի հետ միաժամանակ:

Մոտավորապես հենց այդ ժամանակ էր, որ խոզերը տեղափոխվեցին բնակելի տունը և հաստատվեցին այնտեղ: Անասուններին վերստին թվաց, որ ժամանակին դրա դեմ ընդունված է եղել բանաձև, սակայն Ջռանը կրկին կարողացավ նրանց համոզել, որ դա այդպես չէ: Բացարձակապես անհրաժեշտ է, ասաց նա, որպեսզի խոզերը, որոնք ֆերմայի ուղեղն են, աշխատելու հարմարավետ պայմաններ ունենան: Բացի այդ Առաջնորդին (վերջերս նա սկսել էր Նապոլեոնին անդրադառնալ «Առաջնորդ» տիտղոսով) ավելի վայել է ապրել տանը, քան գոմում: Չնայած դրան, այն լուրը, թե խոզերը ոչ միայն ուտում են խոհանոցում և հանգըստանում հյուրասենյակում, այլ նաև քնում անկողիններում, որոշ անասունների մոտ անհանգստություն առաջացրեց: Դմբուզը սովորականի պես դրան պատասխանեց՝ «Նապոլեոնը միշտ ճիշտ է», սակայն Երեքնուկը, որը կարծես թե անկողինների դեմ որոշակի օրենք էր հիշում, գնաց ամբարի մոտ և փորձեց վերծանել պատին գրանցված Յոթ պատվիրանները: Չկարողանալով կարդալ առանձին տառերից ավելին, նա կանչեց Մյուրիելին:

— Մյուրիել,— ասաց նա,— կարդա ինձ համար Չորրորդ պատվիրանը: Այնտեղ ոչինչ չի՞ գրված անկողնում երբեք չքնելու մասին:

Մյուրիելը որոշ դժվարությամբ հանգերով կարդաց Պատվիրանը:

— Այսեղ գրված է՝ «Անասունը երբեք չի քնի անկողնում *սավանով*»:— Վերջապես հայտնեց նա:

Զարմանալի է՝ սակայն Երեքնուկը Չորրորդ պատվիրանում սավանների հիշատակություն չէր մտաբերում, բայց քանի որ դա գրված էր պատին, ուրեմն այդպես էլ կար: Ջռանը, որը մի երկու-երեք շան ուղեկցությամբ պատահաբար անցնում էր կողքով, հարցը լուսաբանեց ճիշտ անկյան տակ:

— Ուրեմն դուք, ընկերներ,— ասաց նա,— արդեն լսել եք, որ մենք, խոզերս, անկողնի մեջ ենք քնում: Իսկ ի՞նչ կա որ: Դուք, իհարկե, չէի՞ք կարծում, թե երբևէ օրենք է եղել անկողինների դեմ: Անկողին պարզապես նշանակում է քնելու տեղ: Խոտի խուրձը գոմում փաստորեն նույնպես անկողին է: Օրենքը սավանով անկողնի դեմ է, որը մարդու հնարանքն է: Մենք հանել ենք տանից անկողինների սավանները և քնում ենք վերմակների միջև: Պետք է ասել, որ դրանք շատ հարմարավետ անկողիններ են: Սակայն ոչ

ավել, քան մեզ հարկավոր է, ընկերներ, հաշվի առնելով մեզանից պահանջվող մտավոր աշխատանքը: Դուք հո չեք ուզում մեզնից խլել մեր հանգիստը, ընկերներ: Դուք չեք հանդուրժի, որ մենք հոգնածության պատճառով թերանանք մեր պարտականություններում: Ձեզանից ոչ մեկն, իհարկե, չի ցանկանում Զոնզի վերադարձը, այդպես չէ՞:

Անասուններն իսկույն հավաստեցին նրա իրավացիությունը, և անկողիններում քնելու հարցին ոչ ոք այլևս չանդրադարձավ: Իսկ երբ որոշ ժամանակ անց հայտարարվեց, որ այսուհետև խոզերն առավոտյան արթնանալու են մնացածներից մեկ ժամ ուշ, այդ հարցով նույնպես ոչ մի գանգատ չեղավ:

Աշնանն անասունները հոգնած էին, բայց երջանիկ: Դժվարին տարուց, խոտի և հացահատիկի մի մասը վաճառելուց հետո անասնակերի ձմռան պաշարն այնքան էլ առատ չէր, բայց հողմաղացը հատուցում էր այդ ամենը: Այն համարյա կիսով չափ կառուցված էր: Բերքահավաքից հետո եղանակը դեռ որոշ ժամանակ բարենպաստ էր, և անասուններն աշխատում էին ավելի եռանդուն, քան երբևէ, արդարացված համարելով ամբողջ օրը քար կրելը, եթե դրանով հողմաղացի պատերը գեթ մի քիչ պիտի բարձրանային: Դմբուզը լուսնի լույսի տակ մեկ-երկու ժամ աշխատում էր անգամ գիշերները: Ազատ պահերին անասունները ճեմում էին կիսավարտ հողմաղացի շուրջը, զմայլվելով պատերի ուղղաձիգությամբ ու ամրությամբ և հիանալով, որ ընդունակ են եղել այդքան տպավորիչ մի կառույց ստեղծել: Միայն ծեր Բենիամինն էր հրաժարվում հողմաղացով խանդավառվել, չնայած, ինչպես միշտ, ոչինչ չէր ասում, բացի իր առեղծվածային դիտողությունից, որ էշերը երկար են ապրում:

Նոյեմբերին սկսվեցին հարավ-արևմտյան կատաղի քամիները: Շինարարությունն ընդհատվեց, որովհետև ցեմենտ շաղախելու համար օդը չափից ավելի խոնավ էր: Վերջապես մի գիշեր քամին այնքան սաստկացավ, որ ֆերմայի կառույցները սկսեցին դղրդալ, իսկ ամբարի տանիքից մի քանի կղմինդր պոկվեց: Հավերն արթնացան, սարսափից կչկչալով՝ նրանք երազում հրացանի հեռավոր կրակոց էին լսել: Առավոտյան գոմից դուրս գալով, անասունները հայտնաբերեցին, որ դրոշի կայմն ընկած է, իսկ բոստանի ծայրի ծփին բողկի պես արմատախիլ է արված: Հազիվ էին նրանք հասցրել դա նկատել, երբ բոլորի կոկորդից հուսահատության ճիչ դուրս թռավ: Նրանց առջև սոսկալի մի տեսարան էր: Հողմաղացն ավերված էր:

Մի ընդհանուր մղումով նրանք նետվեցին դեպի բլուրը: Նապոլեոնը, որը հազադեպ էր շտապում, վազում էր բոլորի առջևից: Այո, նրանց տքնաջան աշխատանքի արդյունքը հավասարեցված էր հողին, այդքան դժվարություններով կտրած ու կրած քարերը թափված էին շուրջ բոլորը: Չկարողանալով խոսել, բոլորը վշտա-

հար նայում էին ցաքուցրիվ քարերին: Նապոլեոնը լուռ հետ ու առաջ էր անում, երբեմն հոտոտելով գետինը: Նրա պոչը տնկվել և կտրուկ տարուբերվում էր, որը լարված մտավոր գործունեություն էր վկայում: Հանկարծ նա կանգ առավ, ասես որոշում կայացնելով:

— Ընկերներ,— ասաց նա անվրդով,— գիտեք, թե ո՞վ է սրա պատասխանատուն: Ո՛վ է այն թշնամին, որը գիշերով եկել ու փլել է մեր հողմաղացը: ՁՆԱԳՆԴԻՆ:— Հանկարծ բացականչեց նա ամպագորգոռ մի ձայնով:— Ձնագնդին է արել այս ամենը: Քինախնդրությունից դրդված, ցանկանալով լուծել իր անփառունակ արտաքսման վրեժը, այդ դավաճանը գիշերով սպրդել է ներս և ավերել է մոտ մեկ տարվա մեր աշխատանքի արդյունքը: Հենց այստեղ, ընկերներ, ես մահվան եմ դապատարտում Ձնագնդուն: Երկրորդ կարգի «Հերոս Անասուն» և կես բուշել խնձոր կստանա նա, ով իրագործի դատավճիռը: Մի ամբողջ բուշել խնձոր նրան, ով դավաճանին կենդանի բռնի:

Անասուններն անսահման ցնցված էին, իմանալով, որ անգամ Ձնագնդու պես մեկն ընդունակ էր այդ աստիճանի չարագործության: Լսվեցին վրդովմունքի բացականչություններ, ամեն մեկը սկսեց Ձնագնդուն բռնելու ձևեր հորինել, եթե վերջինս փորձեր վերադառնալ: Բլրակից ոչ հեռու համարյա իսկույն խոզի ոտնահետքեր հայտնաբերվեցին: Դրանք կարծես թե տանում էին ցանկապատի միջի անցքի ուղղությամբ: Հետքերը հոտոտելով, Նապոլեոնը հայտարարեց, որ դրանք Ձնագնդունն են: Նրա կարծիքով, Ձնագնդին ամենայն հավանականությամբ եկել էր Ֆոքսվուդ ֆերմայի կողմից:

— Ընկերներ, այլևս ոչ մի որպես չենք կորցնում:— Ասաց Նապոլեոնը, հետքերն ուսումնասիրելուց հետո:— Անելիք դեռ շատ կա: Հենց այս առավոտից սկսում ենք հողմաղացի վերականգնումը և կշարունակենք ամբողջ ձմեռ, անկախ եղանակից: Մենք ցույց կտանք այդ ողորմելի դավաճանին, որ մեզ այդքան էլ հեշտ չէ կասեցնել: Լավ հիշեք, ընկերներ, ոչ ոք չի կարող խափանել մեր ծրագրերը՝ դրանք անշեղորեն կիրագործվեն մինչև վերջ: Առաջ, ընկերներ: Կեցցե՛ հողմաղացը: Կեցցե՛ Անասնաֆերման:

ԳԼՈՒԽ 7

Ձմեռը շատ դժվարին էր: Փոթորկոտ եղանակը փոխարինվեց անձրևներով ու ձյունով, իսկ ապա՝ սառնամանիքով, որը տևեց մինչև փետրվարի կեսերը: Անասուններն ուժերի ներածին չափով շարունակում էին հողմաղացի վերականգնումը, լավ գիտակցելով, որ արտաքին աշխարհը հետևում է իրենց, և որ նախանձ մարդիկ կցնծան ու հաղթանակ կտոնեն, եթե հողմաղացը չկառուցվի ժամանակին: Մարդիկ, ի հեճուկս նրանց, ձևացնում էին, թե չեն հավատում

որ հողմաղացն ավերել է Զնագնդին՝ նրանք պնդում էին, որ հողմաղացը փլվել է պատերի բարակության հետևանքով: Անասունները, սակայն, գիտեին, որ դա այդպես չէ: Այնուամենայնիվ այս անգամ որոշվեց երկու թիզի փոխարեն պատերը շարել երեք ոտք հաստությամբ, իսկ դա նշանակում էր, որ հարկավոր է անհամեմատ մեծ քանակությամբ քար հավաքել: Երկար ժամանակ քարհանքը ծածկված էր ձյունով, և ոչինչ անել հնարավոր չէր: Որոշ առաջընթաց նկատվեց դրան հաջորդած չոր սառնամանիքին, բայց դա դաժան աշխատանք էր, և անասունները դժվարությամբ էին վերականգնում իրենց առաջվա խանդավառությունը: Նրանք անընդհատ մրսում էին և սովորաբար նաև քաղցած էին: Թևաթափ չէին լինում միայն Դմբուզն ու Երեքնուկը: Զռանը հիանալի ճառեր էր ասում նվիրման բերկրանքի և աշխատանքի արժանապատվության մասին, բայց մյուս անասուններն ավելի շատ ներշնչվում էին Դմբուզի ուժից և նրա մշտական բացականչությունից՝ «Ես ավելի եռանդուն կաշխատեմ»:

Հունվարին անասնակերը պակասեց: Հացահատիկի օրաբաժինը կտրուկ կրճատվեց և հայտարարվեց, որ փոխարենը սահմանվում է կարտոֆիլի լրացուցիչ նորմա: Սակայն պարզվեց, որ կարտոֆիլի բերքի մեծ մասը ցրտահարված է, քանի որ կույտերը բավականաչափ հաստ շերտով չէին ծածկվել: Կարտոֆիլները փափկել էին ու դալկացել, մեծ մասն ուտելու պիտանի չէր: Անասուններն օրերով ոչինչ չէին ուտում, դարմանից ու ճակընդեղից բացի: Սովամահությունը դարձավ իրական հնարավորություն:

Այդ փաստն անհրաժեշտ էր արտաքին աշխարհից թաքցնել: Հողմաղացի փլուզումից քաջալերվելով, մարդիկ սկսել էին նորանոր ստեր հորինել Անասնաֆերմայի մասին: Նորից պնդում էին, թե անասունները սատկում են սովից ու համաճարակներից, որ նրանք անվերջ գզվռտվում են և զբաղվում կանիբալիզմով ու մանկասպանությամբ: Նապոլեոնը լավատեղյակ էր այն բացասական հետևանքներին, որոնց կարող էին հասցնել անասնակերի պակասորդին վերաբերող իրական տվյալները, և նա որոշեց Վիմփերին օգտագործել հակառակ տպավորությունը ստեղծելու համար: Այսուհետև անասունները Վիմփերի շաբաթական այցելությունների ժամանակ նրա հետ բոլորովին չէին շփվում: Միևնույն ժամանակ հատուկ ընտրված մի քանիսին, մեծ մասամբ ոչխարներին, ցուցմունք էր տրված նրա ներկայությամբ իմիջիայլոց նկատել, որ օրաբաժիններն ավելացել են: Բացի այդ Նապոլեոնը հրամայել էր համարյա դատարկ շտեմարանները բերնեբերան ավազ լցնել, իսկ վրայից ծածկել հացահատիկի ու անասնակերի մնացորդներով: Մի հարմար պատրվակով Վիմփերին անց էին կացրել ամբարի միջով, հնարավորություն ստեղծելով տեսնել շտեմարանները: Այդպես խաբվելով, նա շարունակում էր աշխարհին պատմել, որ Անասնաֆերմայում սննդի պակաս չի զգացվում:

Բայց և այնպես հունվարի վերջին պարզ դարձավ, որ ինչ-որ տեղից անհրաժեշտ է լրացուցիչ հացահատիկ ձարել: Այդ օրերին Նապոլեոնը հազվադեպ էր հրապարակ դուրս գալիս, ժամանակի մեծ մասն անցկացնելով բնակելի տանը, որի ամեն մի դուռ պահպանում էր կատաղի տեսքով մի շուն: Դուրս գալու դեպքում նրան միշտ հանդիսավոր կերպով ուղեկցում էին վեց շուն, չորս կողմից շրջապատելով և գոռոալով, եթե մեկը փորձեր չափից ավելի մոտենալ: Հաճախ նա անգամ չէր հայտնվում կիրակի առավոտներին, իր հրամաններն արձակելով ուրիշ խոզերի, սովորաբար Զոնի միջոցով:

Մի կիրակի Զոնը հայտարարեց, որ հավերը, որոնք ուր որ է պիտի ածեին, պարտավոր են ձվերը հանձնել: Վիմփերի միջոցով Նապոլեոնը շաբաթական չորս հարյուր ձու մատակարարելու պայմանագիր էր կնքել: Դրանից ստացված գումարով հացահատիկ ու անասնակեր էր գնվելու մինչև ամառ, երբ պայմանները կթեթևանան:

Այդ լսելուն պես հավերը սոսկալի աղաղակ գցեցին: Նրանց զգուշացրել էին նման զոհողության հավանականության մասին, բայց հավերը չէին հավատացել, որ դա հնարավոր է: Նրանք արդեն պատրաստվում էին գարնանային թուխս նստել և ընդվզեցին, պնդելով, որ ձվերի բռնագրավումը սպանություն է: Զոնզի վտարման օրից առաջին անգամ ֆերմայում ապստամբության պես մի բան տեղի ունեցավ: Երեք երիտասարդ սև վառեկների առաջնորդությամբ հավերը վճռական մի փորձ ձեռնարկեցին խափանել Նապոլեոնի նախաձեռնությունը: Նրանք թառեցին տանիքի հեծաններին և սկսեցին ածել այնտեղ՝ ձվերն ընկնում էին հատակին ու փշրվում: Նապոլեոնի անգութ պատասխանը հետևեց անհապաղ: Նա հրամայեց կտրել հավերի օրաբաժինը և մահապատիժ սահմանեց ցանկացած անասունի համար, որը կփորձի նրանց թեկուզ մեկ հատիկ տալ: Շները հետևում էին այդ հրահանգների իրագործմանը: Հինգ օր դիմանալուց հետո հավերը հանձնվեցին և վերադարձան իրենց թառերը: Ինը հավ այդ ընթացքում սատկեց: Նրանց թաղեցին բոստանում, լուր տարածելով, թե մահվան պատճառը կոկցիդիոզն էր: Վիմփերն այդ մասին ոչինչ չիմացավ, և ձվերը ժամանակին հանձնվեցին նպարավաճառին, որն այդուհետև գալիս էր ամեն շաբաթ:

Այդ ամբողջ ընթացքում Զնագնդուն ոչ ոք չէր տեսել: Ասում էին, թե նա թաքնվում է հարևան ֆերմաներից մեկում՝ Ֆոքսվուդում կամ Փինչֆիլդում: Նապոլեոնը դրանց տերերի հետ նախկինից փոքր-ինչ ավելի լավ հարաբերություններ ուներ: Ֆերմայի բակում տաս տարուց ի վեր գերանների մի կույտ էր դարսված, որ գոյացել էր ժամանակին հաճարենու անտառուտը մաքրելուց: Փայտը լավ չորացած էր, և Վիմփերը Նապոլեոնին խորհուրդ էր տվել կույտը վաճառել՝ միստր Փիլքինգտոնը և միստր Ֆրեդրիքը երկուսն էլ ցանկանում էին այն գնել: Նապոլեոնը չէր կարողանում որոշել, թե նրանցից ում ընտրի: Նկատել էին, որ երբ նա հակվում էր Ֆրեդրիքի կողմը, հայտարարվում էր, որ Զնագնդին թաքնվում

է Ֆոքսվուդում, իսկ երբ նախապատվությունը տրվում էր Փիլ-քինգտոնին, Զնագնդին հայտնվում էր Փինչֆիլդում:

Վաղ գարնանն անսպասելիորեն տագնապալի մի բան հայտնաբերվեց: Զնագնդին գիշերները գաղտագողի թափանցում էր ֆերմա: Անասուններն այն աստիճան հուզված էին, որ չէին կարողանում գոմում հանգիստ քնել: Ասում էին, որ նա մթության մեջ ամեն գիշեր սողոսկում է ֆերմա և ամեն տեսակի չարիք գործում: Նա գողանում էր ցորենը, շուռ էր տալիս կաթով դույլերը, կոտրում ձվերը, տրորում էր ցանքը, կրծոտում պտղատու ծառերը: Ամեն մի ձախորդություն իսկույն ևեթ վերագրվում էր Զնագնդուն: Եթե լուսամուտ էր կոտրվում կամ խցանվում էր ջրատարը, մեկնումեկն անպայման կասեր, որ այդ Զնագնդին է գիշերով եկել ու արել: Երբ շտեմարանների բանալին կորավ, ամբողջ ֆերման վստահ էր, որ Զնագնդին այն գցել է ջրհորը: Նրանք շարունակում էին դրան հավատալ, անգամ այն ժամանակ, երբ բանալին գտնվեց ալյուրի պարկի տակ: Կովերը միաձայն հայտարարեցին, որ Զնագնդին սպրդում է գոմ և քնի մեջ թաքուն կթում իրենց: Առնետները, որոնք այդ ձմեռ բավական նեղություն էին պատճառել, հայտարարվեցին Զնագնդու դաշնակիցներ:

Նապոլեոնն ազդարարեց Զնագնդու գործունեության համակողմանի հետաքննություն: Շների ուղեկցությամբ նա մանրամասն զննեց ֆերմայի բոլոր շինությունները, մինչ մնացած անասունները հետևում էին պատշաճ հեռավորության վրա: Մի քանի քայլը մեկ Նապոլեոնը կանգ էր առնում ու հոտոտում ամեն անկյուն՝ ամբարում, գոմում, հավաբնում, բոստանում, համարյա ամեն տեղ գտնելով Զնագնդու հետքերը: Դունչը սեղմելով գետնին, նա մի քանի անգամ խորը շունչ էր քաշում և սոսկալի ձայնով բացականչում՝ «Զնագնդին: Նա այստեղ էր: Ես հստակ զգում եմ նրա հոտը»: «Զնագնդի» խոսքի վրա բոլոր շները սարսռազդու գոռոցներ էին արձակում, ժանիքները ցցելով:

Անասունները սաստիկ վախեցած էին: Նրանց թվում էր, թե Զնագնդին մարմնավորում է անտեսանելի մի սպառնալիք, որը համակել է ամբողջ շրջապատը և հղի է ամեն տեսակի փորձանքով: Երեկոյան Զռանը բոլորին կանչեց և տագնապած տեսքով ասաց, որ լուրջ նորություն ունի հայտնելու:

— Ընկերներ,— բացականչեց նա, ջղային դես ու դեն անելով,— քիչ առաջ հայտնաբերվել է սոսկալի մի փաստ: Զնագնդին ծախվել է Փինչֆիլդի Ֆրեդրիքին, որը դավեր է նյութում մեր դեմ ֆերման զավթելու նպատակով: Պատրաստվող գրոհի ժամանակ Զնագնդին ծառայելու է որպես նրա ուղեվար: Սակայն ամենավատը դեռ դա չէ: Մենք բոլորս կարծում էինք, թե Զնագնդու ըմբոստացման պատճառը նրա հավակնոտ և ունայն նկարագիրն է: Պարզվեց, ընկերներ, որ մենք մոլորվում էինք: Գիտեք, թե ինչն է իսկական պատճառը: Զնագնդին սկզբից ի վեր եղել է Զոնզի դաշնակիցը: Այդ ամբողջ ընթացքում նա Զոնզի գաղտնի գործա-

կալն էր: Դա ապացուցվում է նրա թողած փաստաթղթերով, որոնք մենք քիչ առաջ հայտնաբերեցինք: Ըստ իս դա շատ բան է բացատրում, ընկերներ: Չէ որ մենք ինքներս ականատես եղանք, թե ինչպես նա, բարեբախտաբար անհաջող, փորձ արեց մեզ պարտության մատնել և ոչնչացնել Գոմի ճակատամարտում:

Անասունները մնացել էին ապշած: Նման նենգությունը բազմապատիկ ավելի սոսկալի էր, քան հողմաղացի ավերումը: Որոշ ժամանակ նրանք անգամ չէին կարողանում այն լիովին ընկալել: Բոլորը հիշում էին կամ կարծում էին, որ հիշում են, թե ինչպես է Զնագնդին նրանց առաջնորդել Գոմի ճակատամարտում, ինչպես է քաջալերել և գրոհի կոչել, ինչպես մարտում մի պահ անգամ չի վարանել նույնիսկ Զոնզի կրակոցից վիրավորվելուց հետո: Առաջին պահերին փոքր-ինչ դժվար էր հասկանալ, թե ինչպես է այդ ամենը կապվում Զոնզի կողմնակից լինելու հետ: Նույնիսկ Դմբուզը, որը հազվադեպ էր հարցեր տալիս, զարմացած էր: Ոտքերը տակը ծալելով, նա պառկեց, փակեց աչքերն ու մեծագույն դժվարությամբ կարողացավ ձևակերպել իր միտքը:

— Ես դրան չեմ հավատում:— Ասաց նա:— Զնագնդին քաջ կռվում էր Գոմի ճակատամարտում: Ես ինքս եմ այդ տեսել: Չէ որ մենք նրան իսկույն ևեթ առաջին կարգի «Հերոս Անասուն» շնորհեցինք:

— Ընկերներ, դա մեր սխալն էր: Քանի որ հիմա ստույգ հայտնի է,— այդպես է գրված մեր հայտնաբերած գաղտնի փաստաթղթերում,— որ իրականում նա փորձում էր մեզ ծուղակը գցել ու կործանել:

— Բայց չէ որ նա վիրավորվեց:— Ասաց Դմբուզը:— Բոլորս տեսանք, թե ինչպես էր նրա վերքերից արյուն կաթում:

— Դա նախնական պայմանավորվածության մասն էր կազմում:— Գոռաց Զռանը:— Զոնզի կոտորակը նրան ընդամենը քերծեց: Ես ձեզ ցույց կտայի իր վկայությունը, եթե դուք կարդալ կարողանայիք: Ըստ այդ դավադրության, վճռական պահին Զնագնդին պիտի փախուստի նշան տար և ռազմի դաշտը թողներ թշնամուն: Քիչ էր մնում, որ դա նրան հաջողվեր, ես անգամ կասեի, ընկերներ, որ նա անպայման հաջողության կհասներ, եթե չլիներ մեր հերոսական Առաջնորդը՝ ընկեր Նապոլեոնը: Հիշո՞ւմ եք, թե ինչպես ճիշտ այն պահին, երբ Զոնզը իր մարդկանց հետ մտավ բակը, Զնագնդին հանկարծ շուռ եկավ ու փախավ, և կենդանիներից շատերը հետևեցին նրան: Ինչպե՞ս կարող եք նաև չհիշել, որ նույն այդ պահին, երբ թվում էր, թե ամեն ինչ կորել է, և արդեն խուճապ էր սկսվում, ընկեր Նապոլեոնը, «Կորչի՛ մարդկությունը» ճիչով, առաջ ցատկեց և ատամները մխրճեց Զոնզի ոտքի մեջ: *Այդքանը* հո հիշում եք, չէ՞, ընկերներ:— Բացականչեց Զռանը, դեսից դեն ցատկելով:

Հիմա, երբ Զռանն ամեն ինչ պատկերավոր նկարագրեց, անասուններին թվաց, որ նրանք իսկապես դա հիշում են: Ամեն դեպքում նրանք հիշեցին, որ ճակատամարտի վճռական պահին Զնագնդին փախուստի է դիմել: Սակայն Դմբուզը դեռևս թեթևակի անհանգստացած էր

— Ես չեմ հավատում, որ Զնագնդին դավաճան էր հենց սկզբից:— Վերջապես ասաց նա:— Հետագայի նրա արարքներն ուրիշ բան: Բայց Գոմի ճակատամարտում նա իսկական ընկեր էր:

— Մեր Առաջնորդ ընկեր Նապոլեոնը,— դանդաղ ու հատ-հատ ազդարարեց Զռանը,— վճռականապես հայտարարել է,— վճռականապես, ընկերներ,— որ Զնագնդին սկզբից ի վեր եղել է Զոնզի գործակալը, այո՛ անգամ Ապստամբության գաղափարը ծագելուց շատ ավելի առաջ:

— Այ, դա ուրիշ բան:— Ասաց Դմբուզը:— Եթե ընկեր Նապոլեոնն այդպես է ասում, ուրեմն ճիշտը դա է:

— Ահա՛ ճիշտ մոտեցումը, ընկերներ:— Բացականչեց Զռանը, միևնույն ժամանակ իր փոքրիկ պսպղուն աչքերով ծայր աստիճան անդուր մի հայացք նետելով Դմբուզի կողմը: Նա շրջվեց, որ գնա, և ազդեցիկ ձայնով ավելացրեց:— Զգուշացնում եմ բոլոր կենդանիներին՝ աչքերդ լայն բաց պահեք: Մենք հիմքեր ունենք կասկածելու, որ հենց այս պահիս Զնագնդու ծպտված գործակալներ կան նաև մեր մեջ:

Չորս օր անց կեսօրից հետո Նապոլեոնը հրամայեց անասուններին հավաքել բակում: Երբ բոլորն եկան, Նապոլեոնը, իր երկու շքանշանը կապած (վերջերս նա իրեն առաջին և երկրորդ կարգի «Հերոս Անասուն» էր շնորհել) տնից դուրս եկավ ինը ամեհի շների ուղեկցությամբ, որոնց սահմռկեցուցիչ գռմռոցներից անասունների մեջքով դող էր անցնում: Բոլորն անխոս կծկվեցին իրենց տեղերում, կարծես կանխազգալով, որ սարսափելի մի բան է պատահելու:

Նապոլեոնը խոժոռ հայացքով աչքի էր անցկացնում ներկաներին: Հանկարծ նա զիլ մի խռինչ արձակեց: Նույն պահին շները նետվեցին առաջ և, ականջներից բռնելով, սարսափից ու ցավից վնգստացող չորս խոզերի քարշ տվեցին Նապոլեոնի ոտքերի տակ: Խոզերի ականջները արնել էին, շները, արյուն ճաշակելով, էլ ավելի գազազեցին: Նրանցից ոմանք, ի զարմանս բոլորի, հարձակվեցին Դմբուզի վրա: Տեսնելով այդ, Դմբուզն օդի մեջ սմբակով գետնին գամեց շներից մեկին: Շունը կաղկանձեց, գթություն աղերսելով, իսկ մնացածները փախան, պոչերը սեղմած ոտքերի արանքում: Դմբուզը նայեց Նապոլեոնին, որ իմանա, շանը ջախջախի՞, թե բաց թողնի: Այլայլված Նապոլեոնը կտրուկ հրամայեց շանն ազատ արձակել և ճմրթված ու կաղկանձող շունը ծլկեց:

Իրարանցումը խաղաղվեց: Չորս դողդողացող խոզերը մեղավոր տեսքով սպասում էին: Նապոլեոնը նրանց պատվիրեց խոստովանել իրենց հանցանքը: Դրանք հենց այն խոզերն էին, որոնք բողոքել էին կիրակնօրյա միտինգների վերացման դեմ: Առանց թելադրանքի նրանք խոստովանեցին, որ գաղտնի կապ են պահպանել Զնագնդու հետ՝ սկսած վերջինիս արտաքսումից, օժանդակել են նրան հողմաղացի կործանման գործում և դաշինք էին կնքել նրա հետ Անասնաֆերման միստր Ֆրեդրիքին հանձնելու նպա-

տակով: Նրանք նաև ավելացրին, որ Ջնագնդին ներքին կարգով ընդունել է, որ երկար տարիների ընթացքում Ջոնզի գործակալն է եղել: Խոստովանությունից հետո շները ճարպկորեն պատռեցին նրանց կոկորդները, և Նապոլեոնը սարսռազդու ձայնով տեղեկացավ, թե արդյո՞ք ուրիշ անասուններ խոստովանելիք չունեն:

Ձվերի ապստամբության անհաջող փորձի պարագլուխ երեք հավերն առաջ եկան և խոստովանեցին, որ Ջնագնդին նրանց երազում հրահրել է Նապոլեոնի կարգադրություններին չենթարկվել: Սրանք նույնպես մորթվեցին: Ապա մի սագ խոստովանեց, որ անցյալ տարվա բերքահավաքին թաքցրել ու գիշերով կերել է գարու վեց հատիկ: Մի ոչխար խոստովանեց, որ Ջնագնդու դրդմամբ միզել է խմելու ջրավազանի մեջ, ուրիշ երկուսն ընդունեցին, որ սպանել են Նապոլեոնին հատկապես նվիրված մի ծեր խոյի, վերջինիս խարույկի շուրջը վազեցելով: Բոլորին տեղնուտեղը մորթեցին: Խոստովանությունների և մահապատիժների պատմությունը շարունակվեց, մինչև որ Նապոլեոնի առջև դիակների մի կույտ գոյացավ, և օդը լցվեց արյան ծանր շնչով, որն անծանոթ էր Ջոնզի վտարման օրից ի վեր:

Երբ ամեն ինչ ավարտվեց, ընկճված ու ցնցված անասունները, բացի խոզերից ու շներից, առանց խոսքի թողեցին-հեռացան: Նրանք չգիտեին, թե որն է ավելի սոսկալի՝ Ջնագնդու հետ դաշնակցած անասունների դավաճանությունը, թե այն դաժան հատուցումը, որին իրենք ականատես եղան: Հին օրերին նրանք հաճախ ներկա էին գտնվել ոչ պակաս արյունահեղ տեսարանների, սակայն բոլորին թվում էր, որ այժմ ամեն ինչ շատ ավելի վատ է, քանի որ տեղի է ունեցել հենց իրենց մեջ: Ջոնզի փախուստից մինչև օրս ոչ մի կենդանի ուրիշ կենդանու չէր սպանել: Անգամ առնետներին վնաս չէր հասցվել: Բոլորը դիմեցին դեպի կիսավարտ հողմաղացի բլրակը և, կուչ գալով, պառկեցին ու իրար սեղմվեցին, ասես տաքանալու համար՝ Երեքնուկը, Մյուրիելը, Բենիամինը, կովերը, ոչխարները, հավերն ու սագերը, փաստորեն՝ բոլորը, բացի կատվից, որն անհետացել էր ճիշտ Նապոլեոնի կանչած ժողովից առաջ: Որոշ ժամանակ ոչ ոք չէր խոսում: Միայն Դմբուզն էր մնացել ոտքի վրա: Երկար սև պոչը խփելով կողերին, նա դես ու դեն էր անում, երբեմն զարմանքից թեթևակի խրխնջալով: Վերջապես նա ասաց:

— Ես ոչինչ չեմ հասկանում: Երբեք չէի հավատա, որ մեր ֆերմայում կարող են նման բաներ պատահել: Երևի թերությունը հենց մեր մեջ է: Միակ ելքն, ըստ իս, ավելի եռանդուն աշխատանքի մեջ է: Այսուհետև ես առավոտյան մեկ ժամով շուտ կարթնանամ:

Այդ ասելով, նա դիմեց դեպի քարհանքը և մինչև քուն մտնելը երկու բեռ քար հավաքեց ու քարշ տվեց հողմաղացի մոտ:

Անասուններն անձայն կուչ եկան Երեքնուկի շուրջը: Բլրակից լայն տեսարան էր բացվում շուրջբոլորը: Անասնաֆերմայի մեծ մասը երևում էր՝ ճանապարհին հասնող երկար արոտը, խոտհնձ

արտը, անտառուտը, ջրավազանը, ցորենի կանաչ ծիլերով դաշտերը, շինությունների կարմիր կտուրները, ծխնելույզներից գալարվող ծխով: Արևի հորիզոնական ճառագայթները ոսկեզօծել էին խոտն ու թփուտների եզրերը: Դեռ երբեք ֆերման,— նրանք մի տեսակ զարմանքով հիշեցին, որ դա հենց իրենց ֆերման է՝ ծայրից ծայր անասունների սեփականությունը,— այդքան բաղձալի վայր չէր թվացել: Բլրակից ցած նայելով, Երեքնուկի աչքերն արցունքով լցվեցին: Եթե նա ի վիճակի լիներ ձևակերպել իր մտքերը, ապա կասեր, որ նրանք բոլորվին այլ նպատակներ ունեին, երբ տարիներ առաջ սկսեցին պայքարել մարդու բռնակալության դեմ: Սարսափի ու կոտորածի տեսարաններ չէին, որ ակնկալել էին նրանք այն գիշերը, երբ ծեր Գնդապետը նրանց Ապստամբության կոչ արեց: Երեքնուկն այն ժամանակ ապագան պատկերացնում էր որպես սովից ու մտրակից ազատ անասունների մի հասարակարգ, ուր բոլորը հավասար էին, ամեն մեկն աշխատում էր իր ուժերի ներածին չափով, իսկ ուժեղները պաշտպանում էին թուլներին, ինչպես ինքն էր պաշտպանել բադիկներին Գնդապետի ճառի գիշերը: Փոխարենը,— և նա չգիտեր, թե ինչու,— եկել էր մի ժամանակ, երբ շուրջը ոչ ոք չէր հանդգնում արտահայտել իր կարծիքը, ամենուր կատաղած շներ էին վխտում, իսկ ընկերները, սոսկալի ոճիրներ խոստանալով, աչքիդ առջև հոշոտվում էին: Երեքնուկը չէր մտածում ապստամբության կամ անհնազանդության մասին: Նա գիտեր, որ այդ ամենով հպանդերձ, իրենց վիճակը շատ ավելի լավ է, քան Զոնզի օրոք, և որ ամեն ինչից առաջ անհրաժեշտ է կանխել մարդկանց վերադարձը: Ինչ էլ լիներ, նա շարունակելու է հավատարիմ մնալ, քրտնաջան աշխատել և կատարել ստացվող հրամանները, Նապոլեոնի առաջնորդության ներքո: Բայց և այնպես նա և մնացած բոլոր անասունները դրա համար չէ, որ պայքարել էին ու աշխատել: Հանուն դրա չէր, որ նրանք վառուցել էին հողմաղացն ու կուրծք տվել Զոնզի գնդակներին: Ահա թե ինչ էր մտածում Երեքնուկը, չկարողանալով դրան համապատասխան խոսքեր գտնել:

Վերջապես, փորձելով ինչ-որ չափով արտահայտել այն, ինչն անկարող էին իր իմացած խոսքերը, նա սկսեց երգել «Անգլիայի գազանները»: Նրան միացան շուրջը նստած անասունները, երեք անգամ անընդմեջ երգելով այդ երգը՝ մեղմ, դանդաղ ու վշտահար՝ այնպես, ինչպես մինչ այդ երբեք չէին երգել:

Հազիվ էին նրանք ավարտել երրորդ անգամը, երբ Զռանը, երկու շների ուղեկցությամբ, կարևոր ասելիք ունեցողի տեսքով մոտեցավ նրանց: Նա տեղեկացրեց, որ, Նապոլեոնի հատուկ հրովարտակով, «Անգլիայի գազանները» հայտարարվում է չեղյալ: Այսուհետև այդ երգն արգելված է:

Անասունները շանթահար էին:

— Ինչու:— Գոռաց Մյուրիելը:

— Դրա կարիքն, ընկերներ, այլևս չկա:— Սառը պատասխանեց Զռանը:— «Անգլիայի գազանները» Ապստամբության երգն էր: Սակայն Ապստամբությունն այժմ արդեն ավարտված է: Դավաճանների մահապատժով այսօր այն հասավ իր վերջակետին: Եվ արտաքին, և ներքին թշնամին պարտված է: «Անգլիայի գազաններ»-ում մենք արտահայտում էինք գալիք կատարյալ հասարակարգի մեր բաղձանքը: Սակայն, քանի որ այդ հասարակարգն արդեն հաստատված է, պարզ է դառնում, որ նշված երգն այլևս իմաստ չունի:

Չնայած իրենց երկյուղածությանը, անասուններից ոմանք թերևս բողոքեին, բայց այդ պահին ոչխարները սկսեցին իրենց սովորական մկկոցը. «Չորս ոտք լավ, երկու ոտք վատ», որը շարունակվեց մի քանի րոպե, վերջ դնելով ցանկացած վիճաբանության:

Այդուհետև «Անգլիայի գազաններն» էլ ոչ ոք չլսեց: Դրա փոխարեն բանաստեղծ Մինիմուսը գրեց մի ուրիշ երգ, որը ըսկսվում էր հետևյալ տողերով.

Երբեք, օ ֆերմա անասունների,
Դու իմ պատճառով վնաս չես կրի...

Այս երգը կատարվում էր ամեն կիրակի, առավոտյան դրոշը բարձրացնելուց հետո: Բայց անասուններին չգիտես ինչու թվում էր, որ ոչ բառերը, և ոչ էլ մեղեդին «Անգլիայի գազաններին» չէին հասնի:

ԳԼՈՒԽ 8

Մի քանի օր անց, երբ մահապատիժների պատճառած սարսափը մարեց, անասուններից ոմանք հիշեցին, համենայն դեպս նրանց թվաց, թե հիշեցին, որ Վեցերորդ Պատվիրանն ազդարարում է՝ «Անասունը երբեք ուրիշ անասունի չի սպանի»: Ու չնայած խոզերի կամ շների ներկայությամբ ոչ ոք հարկ չհամարեց նշել այդ փաստը, անասունները զգում էին, որ կատարված սպանությունները դրա հետ չեն համատեղվում: Երեքնուկը Բենիամինին խնդրեց իր համար կարդալ Վեցերորդ Պատվիրանը, իսկ երբ Բենիամինն ըստ իր սովորության ասաց, որ նման գործերի չի խառնվում, նա խնդրեց այդ անել Մյուրիելին: Մյուրիելը կարդաց. «Անասունը երբեք ուրիշ անասունի չի սպանի առանց պատճառի»: Չգիտես ինչու վերջին երկու բառը դուրս էին ընկել անասունների հիշողությունից: Սակայն այժմ նրանք համոզվեցին, որ Պատվիրանը չի խախտված՝ պարզ էր, որ Չնագնդու հետ դաշնակցած դավաճաններին սպանելու համար ծանրակշիռ պատճառներ կային:

Այդ ամբողջ տարին անասուններն աշխատեցին ավելի եռանդուն, քան նախորդին: Հողմաղացի վերականգնումը նախկինից հաստ պատերով և նշանակված ժամկետին, չհաշված ֆերմայի առօրյա աշխատանքները, սաստիկ ծանր գործ էր: Լինում էին

պահեր, երբ անասուններին թվում էր, որ իրենք ավելի երկար-են աշխատում և ուտում են ոչ ավելին, քան Զոնզի ժամանակներում: Ամեն կիրակի առավոտ Զռանը, տոտիկով թղթի երկար մի թերթ սեղմած, բարձրաձայն թվեր էր կարդում, որոնք ապացուցում էին, թե անասնակերի ամեն տեսակի արտադրությունն աճել է 200, 300 կամ 500 տոկոսով: Անասունները նրան չհավատալու պատճառ չունեին, մանավանդ որ ոչ ոք հստակ չէր հիշում, թե ինչպիսին էր եղել վիճակն Ապստամբությունից առաջ: Չնայած դրան, լինում էին օրեր, երբ անասունները կկախընտրեին ավելի քիչ թվեր և ավելի շատ կեր ստանալ:

Բոլոր հրամաններն այժմ արձակվում էին Զռանի կամ մնացած խոզերից մեկի միջոցով: Նապոլեոնն անձամբ երևում էր ամիսը մեկ-երկու անգամ: Շների շքախմբից բացի, նրան ուղեկցում էր նաև մի սև աքաղաղ, որը, առջևից քայլելով, շեփորահարի պես բարձր «ծուղրուղու» էր կանչում Նապոլեոնի ամեն խոսելուց առաջ: Ասում էին, որ անգամ տան մեջ Նապոլեոնը մնացածներից զատ առանձին հարկաբաժին է զբաղեցնում: Նա ճաշում էր մենակ, երկու սպասավոր շների ներկայությամբ և ուտում էր միայն Արքայական Դերբի սպասքից, որը գտնվում էր հյուրասենյակի ապակեպատ պահարանում: Ազդարարվել էր նաև, որ հրացանն ամեն տարի պարպվելու է Նապոլեոնի ծննդյան օրը, մյուս երկու հոբելյաններից բացի:

Նապոլեոնին այլևս երբեք պարզապես «Նապոլեոն» չէին կոչում: Պաշտոնական ոճում նրան անդրադառնում էին որպես «Մեր Առաջնորդ ընկեր Նապոլեոն»-ի, իսկ խոզերը նրա համար բազմապիսի կոչականներ էին հորինում, ինչպես, օրինակ՝ Անասունների Հայր, Մարդկության Սարսափ, Ոչխարների Պահապան, Բադիկների Բարեկամ և այլն: Զռանն արցունքախեղդ էր լինում իր ճառերում, վկայակոչելով Նապոլեոնի իմաստությունը, անսահման բարությունը ու այն խորը սերը, որը նա տածում է բոլոր անասունների և մանավանդ այն թշվառների հանդեպ, որոնք դեռ տգիտության ու ստրկացման մեջ են մյուս ֆերմաներում: Սովորություն էր դարձել Նապոլեոնին փառք տալ ամեն նվաճման ու բախտի բերման համար: Հաճախ կարելի էր լսել, թե ինչպես հավերից մեկը մյուսին ասում է. «Շնորհիվ մեր Առաջնորդ ընկեր Նապոլեոնի ղեկավարության, ես այսօր հինգ ձու ածեցի», կամ ինչպես երկու կով ջրավազանի մոտ բացականչում էին. «Փառք ընկեր Նապոլեոնին, ինչ համեղ է ջուրը»: Ֆերմայում տիրող ընդհանուր տրամադրությունը լավ էր արտահայտում «Ընկեր Նապոլեոն» բանաստեղծությունը, որը գրել էր Մինիմուսը.

Ով զրկվածների միակ հենարան,
Ով երջանկության առատ շատրվան,
Բոցավառվում է հոգիս ոնց կերոն,

Երբ ես նայում եմ,— օ՛ լափի արքա,—
Քո ղեկավարող աչքին հայրական.
Արևի պես ջերմ ու հավերժական,
Ընկեր Նապոլեոն:

Ով առատաձեռն բաշխողդ վերին
Նրա, ինչ թանկ է քո զավակներին՝
Թավալվելու հարդ ու լափի թափոն.
Ամեն փոքր ու մեծ թռչուն ու գազան
Երջանիկ է իր որջում սեփական
Հոգատար աչքի տակ քո հայրական,
Ընկեր Նապոլեոն:

Եթե իմ կինը մի խոճկոր ծներ,—
Թեկուզ գրտնակի չափ էլ նա լիներ—
Որպես օրինակ, իդեալ, էտալոն
Քեզ պիտի ընտրեր, ղեկավա՛ր ճարտար,
Քեզ իր առաջին սուրբ երդումը տար
Եվ ճղճղար քո անունն արդար՝
Ընկեր Նապոլեոն:

Նապոլեոնն այդ բանաստեղծությանը հավանություն էր տվել և պատվիրել էր հավերժացնել մեծ ամբարի պատին, Յոթ Պատվիրանների դիմաց: Կողքին Նապոլեոնի կիսադեմն էր, որը սպիտակ ներկով նկարել էր Զռանը:

Ֆերմայի բակում դիզված փայտանյութը դեռևս չէր վաճառվել, և Նապոլեոնը, Վիմփըրի միջնորդությամբ, բարդ բանակցություններ էր վարում Ֆրեդրիքի ու Փիլքինգտոնի հետ: Ֆրեդրիքը փայտը գնելու ավելի մեծ ցանկություն ուներ, բայց հարմար գին չէր առաջարկում: Միևնույն ժամանակ նորոգվել էին այն լուրերը, թե Ֆրեդրիքը, որը պայթում է հողմաղացի հանդեպ նախանձից, Անասնաֆերման գրոհելու և հողմաղացը ոչնչացնելու դավադրություն է նյութում: Հայտնի էր նաև, որ Զնագնդին շարունակում է թաքնվել Փինչֆիլդ ֆերմայում: Ամառվա կեսին անասունները խիստ անհանգստացան, լսելով երեք հավերի խոստովանության մասին: Զնագնդու հրահրությամբ նրանք դավադրություն էին ծրագրել Նապոլեոնին սպանելու նպատակով: Նրանց անմիջապես մահապատժի ենթարկեցին, իսկ Նապոլեոնի ապահովության համար նախաձեռնվեցին նոր միջոցներ: Գիշերով նրա անկողինը սկսեցին հսկել չորս շուն, իսկ Կարմրուկ անունով մի խոճկորի հանձնարարվեց նրանից առաջ համտես անել բոլոր կերակուրները, որ հանկարծ դրանք թունավորված չլինեն:

Միևնույն ժամանակ հայտնի դարձավ, որ Նապոլեոնը պայմանավորվել է փայտը վաճառել Փիլքինգտոնին, վճռված էր նաև որոշ ապրանքների կանոնավոր փոխանակություն հաստատել

Անասնաֆերմայի և Ֆոքսվուդի միջև: Նապոլեոնի և Փիլքինգտոնի հարաբերություններն արդեն գրեթե բարեկամական էին, չնայած իրագործվում էին բացառապես Վիմփերի միջոցով: Անասունները Փիլքինգտոնին, որպես մարդու, չէին վստահում, սակայն նախընտրում էին նրան Ֆրեդրիքից, որից վախենում և որին ատում էին: Ամառվա վերջերին, երբ հողմաղացի շինարարությունն արդեն ավարտին էր մոտենում, էլ ավելի սաստկացան ֆերմային սպառնացող նենգ հարձակման մասին լուրերը: Ասում էին, որ Ֆրեդրիքը գալու է հրացաններով զինված քսան մարդկանցով, և որ նա արդեն կաշառել է իշխանություններին և ոստիկանությանը, որպեսզի անպատիժ բռնագրավի Անասնաֆերմայի փաստաթղթերը: Դեռ ավելին, Փինչֆիլդից սարսռազդու պատմություններ էին հասնում այն կեղեքումների մասին, որոնց Ֆրեդրիքը ենթարկում էր իր անասուններին: Նա մտրակել-սպանել էր մի ծեր ձիու, սովամահ էր անում կովերին, շներից մեկին նետել էր հնոցը, իսկ երեկոյան զվարճանում էր խթաններին ածելի կապած աքլորներ կռվեցնելով: Անասունների արյունը կատաղությունից եռում էր իրենց եղբայրների մասին նման պատմություններ լսելիս, և ժամանակ առ ժամանակ նրանք բողոքաձայն պահանջում էին իրենց թույլ տալ հարձակվել Փինչֆիլդի վրա, վռնդել մարդկանց ու ազատագրել իրենց եղբայրներին: Սակայն Զռանը նրանց ամեն անգամ հորդորում էր հապճեպ քայլերի չդիմել և վստահել ընկեր Նապոլեոնի ստրատեգիային:

Չնայած դրան հակաֆրեդրիքյան տրամադրությունները շարունակում էին բորբոքվել: Մի կիրակի Նապոլեոնն առավոտյան անձամբ եկավ ամբար և բացատրեց, որ երբեք մտադրություն չի ունեցել փայտանյութը Ֆրեդրիքին վաճառելու, ասելով, որ իր արժանապատվությունից ցածր է համարում նման սրիկաների հետ գործ բռնելը: Ամենուր Ապստամբություն քարոզող աղավնիներին արգելվեց ոտք դնել Ֆոքսվուդ, իսկ նրանց «Մահ մարդկությանը» կոչը փոխարինվեց մեկ ուրիշով՝ «Մահ Ֆրեդրիքին»: ՈՒշ ամռանը բացահայտվեց Զնագնդու բանսարկություններից ևս մեկը: Ցորենի արտը մոլախոտերով լի էր՝ պարզվեց, որ իր գիշերային այցերից մեկի ընթացքում Զնագնդին մոլախոտի սերմեր է խառնել սերմացու ցորենին: Դավադրությանը մասնակից մի սագ խոստովանվել էր Զռանին և ինքնասպան եղել՝ թունավոր հատապտուղ կուլ տալով: Անասունները նաև իմացան, որ Զնագնդին երբեք, ինչպես իրենք էին մինչ այդ կարծել, առաջին կարգի «Հերոս Անասուն» չի ստացել: Դա մի առասպել էր, որը Գոմի ճակատամարտից հետո տարածել էր ինքը Զնագնդին: Նա ոչ միայն չէր պարգևատրվել, այլև հանդիմանություն էր ստացել ճակատամարտում թուլամորթություն դրսևորելու համար: Անասուններից ոմանք այս անգամ էլ քիչ էր մնում զարմանային, բայց Զռանը նրանց շուտափույթ համոզեց, որ իրենց հիշողությունը կաղում է:

Աշնանը, սոսկալի ջանքերի գնով,— քանի որ պետք էր ապա-

հովել նաև բերքահավաքը,— ավարտվեց հողմաղացի շինարարությունը: Մնում էր տեղադրել մեքենաները, որոնց համար Վիմփըրն արդեն բանակցություններ էր վարում: Ամեն դժվարության հակառակ, չնայած փորձառության պակասին, պրիմիտիվ գործիքներին, բախտի քմահաճույքներին և ի հեճուկս Զնագնդու դավաճանությանը, աշխատանքներն ավարտվեցին ճիշտ նշանակված օրը: Ուժասպառ, բայց հպարտ, անասուններն անդադար պտտվում էին իրենց գլուխգործոցի շուրջը, որն այժմ նրանց ավելի գեղեցիկ էր թվում, քան երբ կառուցվել էր առաջին անգամ: Բացի այդ պատերն այժմ նախկինից կրկնակի հաստ էին՝ այս անգամ նրանց էլ ոչինչ չէր փլի: Իսկ երբ անասունները մտածում էին, թե ինչ ծանր աշխատանք են իրենք թափել, ինչպիսի հիասթափություններ են հաղթահարել և ինչքան կփոխվի իրենց կյանքը, երբ հողմաղացի թևերը պտտվեն ու աշխատի դինամոն, նրանք, հոգնածությունը թոթափելով, սկսում էին թչկոտել կառույցի շուրջն ու ցնծագին ճիչեր արձակել: Նապոլեոնը, շների և աքլորի ուղեկցությամբ, եկավ հողմաղացը զննելու և անձամբ շնորհավորեց անասուններին իրենց նվաճման առթիվ, հայտարարելով, որ կառույցը կկոչվի Նապոլեոնի Հողմաղաց:

Երկու օր անց անասուններին կանչեցին ամբար հատուկ ժողովի: Նրանք զարմանքից շանթահար եղան, լսելով Նապոլեոնի հայտարարությունը, թե փայտանյութը վաճառվել է Ֆրեդրիքին: Վաղը Ֆրեդրիքի ուղարկած սայլերով այն սկսելու էին տանել: Փիլքինգտոնի հետ իր թվացյալ բարեկամության ամբողջ ընթացքում Նապոլեոնն իրականում գաղտնի համաձայնության մեջ է եղել Ֆրեդրիքի հետ:

Ֆոքսվուդի հետ բոլոր կապերը խզվեցին, Փիլքինգտոնին վիրավորական ուղերձներ հղվեցին: Աղավնիներին հանձնարարվեց չմտնել Փինչֆիլդ և «Մահ Ֆրեդրիքին» կոչը փոխարինել «Մահ Փիլքինգտոնին» կոչով: Բացի այդ Նապոլեոնը բոլորին հավաստիացրեց, որ Անասնաֆերմայի վրա պատրաստվող հարձակման լուրերը միանգամայն սխալ են, իսկ անասունների հանդեպ Ֆրեդրիքի դաժանության մասին պատմությունները՝ խիստ չափազանցված: Այդ ամենն ըստ երևույթին Զնագնդու և նրա գործակալների տարածած բամբասանքներն էին: Պարզվեց նաև, որ Զնագնդին, ի վերջո, Փինչֆիլդում չի թաքնվում և ընդհանրապես երբևէ այնտեղ չի եղել՝ նապրում է (և, ասում են՝ բավական շքեղ) Ֆոքսվուդում և իրականում վաղուց ի վեր հանդիսանում է Փիլքինգտոնի վարձկանը:

Խոզերը հիացած էին Նապոլեոնի խորամանկությամբ: Փիլքինգտոնի բարեկամ ձևանալով, Նապոլեոնը Ֆրեդրիքին ստիպել էր տեսներկու ֆունտով բարձրացնել առաջարկած գինը: Սակայն Նապոլեոնի գերազանցությունը երևում էր նաև այն բանում, ասաց Զռանը, որ նա ոչ ոքի չի վստահում՝ անգամ Ֆրեդրիքին: Ֆրեդրիքը փորձել էր փայտանյութի դիմաց չեկ դուրս գրել, որը, ասում
 են, վճարելու խոստումով թղթի մի կտոր է: Բայց Նապոլեոնը

հիմար չէ: Նա պահանջել է իսկական հինգանոցներ, որոնք պետք է վճարվեին ապրանքը տանելուց առաջ: Ֆրեդրիքն արդեն վճարել է, և այդ գումարը ճիշտ և ճիշտ բավական է հողմաղացի սարքավորումը ձեռք բերելու համար:

Փայտանյութը սկսեցին սայլերով շուտափույթ տանել: Երբ վերջին սայլը գնաց, մի նոր հատուկ ժողով հրավիրվեց, Ֆրեդրիքի մուծած դրամը ցուցադրելու համար: Երկու շքանշանը կրծքին, երանյալ ժպիտով, Նապոլեոնը փռվել էր հարթակի վրայի հարդին, դրամը գեղեցիկ դարսած իր կողքին, խոհանոցից բերված ճենապակյա պնակի վրա: Անասունները դանդաղ անցնում էին նրա կողքով, հերթով զննելով դրամը: Դմբուզն անգամ թղթադրամները հոտոտեց, և նրա շնչից առանձին թերթիկները շարժվեցին ու խշխշացին:

Երեք օր անց սոսկալի իրարանցում սկսվեց: Ափրթնած Վիմփերը ներս սուրաց ֆերմա, հեծանիվը գցեց բակում և նետվեց ուղիղ տուն: Հաջորդ պահին Նապոլեոնի հարկաբաժնից կատաղի մռլտոց լսվեց: Լուրը հրդեհի պես տարածվեց ֆերմայով մեկ՝ թղթադրամները կեղծ էին: Ֆրեդրիքը փայտը ձրի է տարել:

Նապոլեոնն անմիջապես անասուններին ժողովեց և ահարկու ձայնով Ֆրեդրիքին դատապարտեց մահապատժի: Բռնելու դեպքում վերջինիս հարկավոր էր կենդանի խաշել: Միևնույն ժամանակ նա զգուշացրեց, որ այդ դավաճանությունից հետո պետք է ակնկալել ամենավատը, և որ Ֆրեդրիքն ու իր մարդիկ ամեն վայրկյան կարող են իրագործել վաղուց սպասվող հարձակումը: Ֆերմայի մատույցներում դետեր նշանակվեցին: Բացի այդ Ֆոքսվուդ հաշտվողական նամակով ուղարկվեցին չորս աղավնի:

Գրոհը սկսվեց հաջորդ առավոտյան: Նախաճաշին վազելով եկան պահակայիններն ու հաղորդեցին, որ Ֆրեդրիքն իր հետևորդներով արդեն ներս է անցել հնգահեծան դարպասից: Անասուններն արիաբար նետվեցին նրանց ընդառաջ, բայց այս անգամ Գոմի ճակատամարտի պես հեշտ հաղթանակ չտարան: Տասնհինգ մարդիկ իրար մեջ վեց-յոթ հրացան ունեին և իսկույն կրակ բացեցին: Անասունները չդիմացան սոսկալի պայթյուններին ու կոտորակին և, չնայած Նապոլեոնի ու Դմբուզի կոչերին, քիչ անց նահանջեցին: Ոմանք արդեն վիրավորված էին: Բոլորը թաքնվեցին շինություններում և սկսեցին ծակուծուկերից զգուշորեն դուրս նայել: Ամբողջ արոտավայրը, հողմաղացի հետ միասին, թշնամու ձեռքում էր: Մի պահ անգամ Նապոլեոնն էր թվում մոլորված: Նա լուռ հետ ու առաջ էր անում, ջղային ցնցելով պոչը: Ֆոքսվուդի կողմը թախծոտ հայացքներ էին ուղղվում: Փիլքինգտոնի ու իր մարդկանց օգնությամբ դեռ կարելի կլիներ ինչ-որ բան անել: Բայց այդ պահին նախորդ օրն ուղարկված աղավնիները վերադարձան, Փիլքինգտոնից մի թուղթ բերելով: Թղթի վրա մատիտով գրված էր. «Տեղն է ձեզ»:

Ֆրեդրիքն իր մարդկանցով կանգ էր առել հողմաղացի մոտ:

Ահաբեկված մրմունջով, անասունները նրանցից երկուսի ձեռքի լինգ ու մի ծանր մուրճ տեսան: Նրանք պատրաստվում էին հողմաղացը փլել:

— Անհնարին է:— Բացականչեց Նապոլեոնը:— Մեր կառուցած պատերը դրա համար չափից ավելի հաստ են: Նրանք այդ պատերը մի շաբաթում էլ չեն փլի: Արիացեք, ընկերներ:

Սակայն Բենիամինն ուշադիր հետևում էր մարդկանց գործողություններին: Մուրճով ու լինգով երկուսը անցք էին փորում հողմաղացի հիմքում: Դանդաղ, համարյա զարմանքով, Բենիամինը դնչով արեց:

— Ես այդպես էլ կարծում էի:— Ասաց նա:— Տեսնում եք, թե նրանք ինչ են անում: Հիմա այդ անցքի մեջ պայթուցիկ փոշի կլցնեն:

Անասուններն ահաբեկված սպասում էին: Ոչ ոք այլևս չէր հանդգնի ապաստանից դուրս գալ: Քիչ անց մարդիկ վազքով ցրվեցին չորս կողմը: Ապա լսվեց խլացուցիչ մի դղրդյուն: Աղավնիները նետվեցին վեր, բոլոր անասունները, բացի Նապոլեոնից, փռվեցին գետնին ու թաքցրեցին գլուխները: Երբ նրանք ոտքի ելան, հողմաղացի տեղում կախված էր սև ծխի հսկա մի ամպ: Զեփյուռը դանդաղ ցրեց այդ ամպը՝ հողմաղաց չկար:

Այդ տեսարանից անասունների արիությունը վերադարձավ: Քիչ առաջ ապրած նրանց վախն ու վհատությունը խորտակվեցին այն ցասման մեջ, որը ծնեց այդ պիղծ ու անարգ գործողությունը: Վրեժի հուժկու աղաղակով, առանց հրամանի սպասելու, նրանք միահամուռ դուրս նետվեցին ուղիղ թշնամու վրա: Այս անգամ նրանք էլ չէին երկյուղում կարկուտի պես թափվող անգութ կոտորակից: Ճակատամարտը կատաղի էր ու դաժան: Մարդիկ անընդհատ կրակում էին, իսկ երբ անասունները մոտեցան, սկսեցին փայտերով ու ծանր կոշիկներով հարվածել: Սպանվեցին մի կով, երեք ոչխար և երկու սագ, համարյա բոլորը վիրավոր էին: Նույնիսկ Նապոլեոնի մոտ, որը մարտական գործողությունները ղեկավարում էր թիկունքից, գնդակը թռցրել էր պոչի ծայրը: Բայց մարդիկ նույնպես էժան չէին պրծել: Դմբուզն իր սմբակներով կոտրել էր երեքի գլուխը, մեկին պոզահարել էր կովը, իսկ մի ուրիշի շալվարը գզգզել էին Զանգակն ու Զեսին: Իսկ երբ Նապոլեոնի թիկնապահ ինը շները, որոնց նա հանձնարարել էր թփերի հետևով շրջանցում կատարել, կատաղի հաչոցով կողքից հարձակվեցին մարդկանց վրա, վերջիններս խուճապի մատնվեցին: Նրանք հասկացան, որ իրենց շրջապատման վտանգ է սպառնում: Ֆրեդրիքն իր մարդկանց գոռաց, որ պետք է փախչել, քանի դեռ ուշ չէ: Հաջորդ պահին մորթապաշտ թշնամին արդեն վազում էր, որ կյանքը փրկի: Անասունները մարդկանց հետապնդեցին մինչև դաշտի ծայրը, ցանկապատից դուրս սպրդելուց առաջ մի քանի վերջին քացի կերցնելով նրանց:

Անասունները հաղթեցին, սակայն ուժասպառ էին ու արյունլվա: Նրանք դանդաղ քարշ եկան ֆերմայի կողմը: Խոտին փռված

զոհված ընկերների տեսարանը շատերի աչքերին արցունք բերեց: Վշտահար լռությամբ նրանք մի պահ կանգ առան նաև հողմաղացի տեղում: Այո, հողմաղացը չկար՝ նրանց աշխատանքից չնչին հետք անգամ չէր մնացել: Մասամբ ոչնչացվել էր նաև հիմքը: Չկային նույնիսկ նախորդ անգամվա պես վերականգնման համար պիտանի քարեր: Պայթյունի ուժը դրանք ցրել էր հարյուրավոր մետրերով: Թվում էր, թե հողմաղացը երբեք չի եղել:

Ֆերմայի մոտ Զռանը, որն անբացատրելի պատճառներով կռվի ժամանակ չկար, ցատկոտելով մոտեցավ նրանց, գոհունակությամբ ժպտալով ու պոչը շարժելով: Շները հետևից անասունները հրացանի հանդիսավոր կրակոց լսեցին:

— Ինչո՞ւ է կրակում հրացանը:— Հարցրեց Դմբուզը:

— Մեր հաղթանակը նշելու համար:— Բացականչեց Զռանը:

— Ի՞նչ հաղթանակ:— Ասաց Դմբուզը: Նրա ծնկներից արյուն էր կաթում, նա կորցրել էր մի պայտն ու ճեղքել սմբակը, հետևի ոտքի մեջ կոտորակ էր մխրճված:

— Ինչպես թե ինչ հաղթանակ, ընկեր: Չէ՞ որ մենք վռնդեցինք թշնամուն Անասնաֆերմայի սրբազան հողից:

— Բայց նրանք ոչնչացրին հողմաղացը: Մեր երկու տարվա աշխատանքը:

— Հետո՞ ինչ: Մենք կկառուցենք նորը: Մենք վեց հողմաղաց կկառուցենք, եթե ցանկանանք: Դուք չեք գնահատում, ընկերներ, մեր մեծ հաղթանակի կարևորությունը: Թշնամին զավթել էր այս նույն հողը, որին մենք հիմա կանգնած ենք: Իսկ այժմ, շնորհիվ ընկեր Նապոլեոնի առաջնորդության, մենք հետ ենք գրավել մեր հողի վերջին թիզը:

— Այսինքն հետ ստացանք այն, ինչ ունեինք:— Ասաց Դմբուզը:

— Հենց դրանում է մեր հաղթանակը:— Ասաց Զռանը:

Նրանք քարշ եկան բակ: Դմբուզի ոտքի կոտորակը ցավ էր պատճառում: Նա պատկերացրեց հողմաղացը հիմքից վերականգնելու ծանր աշխատանքը և մտովի արդեն հավաքագրեց իր ուժերը: Բայց և առաջին անգամ հիշեց, որ արդեն տասնմեկ տարեկան է, և իր հուժկու մկաններն այլևս այն չեն, ինչ առաջներում:

Սակայն երբ անասունները տեսան ծածանվող կանաչ դրոշը և լսեցին հրացանի թնդյունը՝ ամբողջ յոթ կրակոց, իսկ ապա ունկնդրեցին Նապոլեոնի ճառը, որում նշվում էր իրենց արիությունը, նրանց ի վերջո իսկապես թվաց, որ իրենք մեծ հաղթանակ են տարել: Ճակատամարտում զոհված անասուններին պատվով թաղեցին: Դմբուզն ու երեքնուկը քաշում էին դիակառք ծառայող սայլը, մինչ Նապոլեոնն ինքը գլխավորում էր թափորը: Ամբողջ երկու օր նվիրվեց հանդիսություններին: Երգերից, ճառերից և հրացանի նոր կրակոցներից հետո ամեն անասուն ստացավ մեկական խնձոր, թռչուններին հատկացվեց երկուական բուռ հատիկ, իսկ շներին՝ երեքական բլիթ: Հայտարարվեց, որ ճակատամարտը կկոչվի Հողմաղացի ճակատա-

մարտ, և որ Նապոլեոնը սահմանում է մի նոր պարգև՝ Կանաչ Դրոշի Շքանշան, որը շնորհվում է իրեն: Համատարած ցնծության մեջ թղթադրամների չարաբաստիկ հարցը մոռացվեց:

Դրանից մի քանի օր անց խոզերը մառանում մի արկղ վիսկի գտան, որը տունը բնակեցնելիս աչքաթող էին արել: Այդ գիշեր տան պատուհաններից բարձր երգեցողություն լսվեց, որում, ի զարմանս բոլորի, առկա էին նաև «Անգլիայի գազանների» ելևէջները: Ինն անց կեսի կողմերը պարզ երևաց, թե ինչպես Նապոլեոնը, Զոնգի հին թասակը գլխին, ետնամուտքից դուրս եկավ, վարգով վազ տվեց բակով մեկ և նորից մտավ տուն: Սակայն առավոտյան տանը կատարյալ լռություն էր տիրում: Խոզերից ծպտուն չէր գալիս: Ժամը ինևին մոտ, դանդաղ ու տրտում քայլելով, հայտնվեց Զռանը: Նրա աչքերը խամրած էին, պոչը՝ կախված, և ընդհանրապես նա լուրջ հիվանդի տեսք ուներ: Նա անասուններին ժողովեց և ասաց, որ սոսկալի բոթ ունի հայտնելու՝ ընկեր Նապոլեոնը մեռնում է:

Անասելի ողբ ու կոծ սկսվեց: Տան մուտքի առջև ծղոտ փռեցին, անասունները սկսեցին քայլել կճղակների ծայրերին: Բոլորը լացակումած իրար հարց էին տալիս, թե ինչ պիտի անեն, եթե զրկվեն իրենց Առաջնորդից: Լուր տարածվեց, թե Զնագնդուն վերջիվերջո հաջողվել է թունավորել Նապոլեոնի սնունդը: Ժամը տասնմեկին Զռանը դուրս եկավ նոր հայտարարություն անելու: Իր վերջին կամքով Նապոլեոնը հրովարտակ է արձակում՝ ոգելից խմիչքների գործածությունը պատժվում է մահով:

Բայց և այնպես երեկոյան կողմ Նապոլեոնի վիճակը կարծես թե լավացավ, իսկ հաջորդ առավոտյան Զռանը հաղորդեց, որ նա շուտով միանգամայն կապաքինվի: Նույն օրվա երեկոյան Նապոլեոնն անցավ աշխատանքի, իսկ հաջորդ օրը հայտնի դարձավ, որ նա Վիմփերին պատվիրել է Վիլինգդոնից ձեռնարկներ բերել խմորման ու թորման մասին: Մի շաբաթ անց Նապոլեոնը հրամայեց հերկել պարտեզի հետևի փոքրիկ հողամասը, որը ժամանակին նախատեսվել էր որպես տարիքն առած անասունների հանգստավայր: Հայտարարվեց, որ այդ արոտը հյուծված է և նոր ցանքի կարիք է զգում, սակայն շուտով ակնհայտ դարձավ, որ Նապոլեոնը մտադիր է այնտեղ գարի ցանել:

Համարյա նույն ժամանակ տեղի ունեցավ արտասովոր մի դեպք, որը ոչ ոք ի վիճակի չեղավ հասկանալ: Մի գիշեր ժամը տասներկուսի կողմերը անասուններին արթնացրեց բակից լսված բարձր աղմուկը: Լուսնի լույսի ներքո, ամբարի այն պատի տակ, որին գրված էին Յոթ Պատվիրանները, գետնին էր ընկած կոտրրված մի սանդուղք: Ժամանակավորապես շշմած Զռանը փռված էր դրա կողքին, իսկ շուրջն ընկած էին մի լապտեր, վրձին ու սպիտակ ներկի շուռ տրված մի դույլ: Շներն իսկույն ևեթ օղակ կազմեցին Զռանի շուրջն ու վերջինիս ուղեկցեցին տուն, հենց որ

նա կարողացավ շարժվել: Անասուններից ոչ մեկը չըմբռնեց, թե դա ինչ էր նշանակում, բացի Բենիամինից, որը հասկացող տեսքով շարժեց դունչը, բայց ոչինչ չասաց:

Մի քանի օր անց Մյուրիելը, սեփական նախաձեռնությամբ վերընթերցելով Յոթ Պատվիրանները, նկատեց, որ անասունները ևս մի Պատվիրան սխալ են հիշել: Նրանք կարծել էին, թե Հինգերորդ Պատվիրանը եղել է. «Անասունը երբեք ոգելից խմիչք չի գործածի», սակայն երկու բառ մոռացել էին: Իրականում Հինգերորդ Պատվիրանն ասում էր. «Անասունը երբեք ոգելից խմիչք չի գործածի *չափից առավել*»:

ԳԼՈՒԽ 9

Դմբուզի ճեղքված սմբակը երկար ժամանակ չէր ապաքինվում: Հաղթանակի հանդիսությունների հաջորդ օրն ևեթ անասունները սկսեցին վերականգնել հողմաղացը: Դմբուզը հրաժարվեց գեթ մեկ օրվա հանգիստ վերցնել և իր համար պատվի խնդիր դարձրեց ցավը թաքցնել: Սակայն երեկոները նա երեքնուկին խոստովանում էր, որ սմբակն իրեն շատ է նեղում: Երեքնուկը սմբակին իր ծամած դեղաբույսերով թրջոցներ էր դնում և, Բենիամինի հետ միասին, համոզում էր նրան պակաս եռանդուն աշխատել: «Ձիու թոքերը հավերժ չեն», ասում էր նա: Բայց Դմբուզը չէր լսում: Նա պատասխանում էր, որ իր կյանքում միայն մեկ իսկական նպատակ է մնացել՝ տեսնել հողմաղացի կառուցումը թոշակի անցնելուց առաջ:

Սկզբում, երբ Անասնաֆերմայի օրենքներն առաջին անգամ էին ձևակերպվում, ձիերի և խոզերի թոշակի տարիքը որոշվել էր տասներկու, կովերինը՝ տասնչորս, շներինը՝ ինը, ոչխարներինը՝ յոթ, իսկ հավերինն ու սագերինը՝ հինգ տարեկան: Թոշակները նույնպես մեծահոգաբար էին հաստատվել: Ոչ մի կենդանի դեռևս թոշակի չէր անցել, բայց վերջերս այդ նյութը սկսել էին գնալով ավելի հաճախ շոշափել: Այժմ, երբ այգու հետևի հողամասը գարի էր ցանված, լուրեր էին շրջում, որ որպես զառամյալ անասունների հանգստավայր առանձնացվելու է մեծ արոտի մի անկյունը: Ասում էին, որ ձիերի թոշակը լինելու է օրական հինգ ֆունտ հացահատիկ, իսկ ձմռանը՝ տասնհինգ ֆունտ հարդ, ինչպես նաև մեկական գազար կամ անգամ խնձոր տոն օրերին: Դմբուզի տասներկու տարին լրանալու էր հաջորդ ամռան կեսին:

Իսկ մինչ այդ կյանքը շատ դժվարին էր: Ձմեռը նույնքան ցրտաշունչ էր, ինչքան նախորդը, իսկ անասնակերն անգամ ավելի պակաս էր: Վերստին կրճատվեցին բոլորի օրաբաժինները, չհաշված շներինն ու խոզերինը: Օրաբաժինների չափից ավելի խիստ հավասարեցումը, ինչպես բացատրեց Զռանը, հակասում է Անասնիզմի սկզբունքներին: Ամեն դեպքում նրա համար բոլորովին դժվար չէր մնացած անասուններին համոզել, որ իրակա-

նում, ինչ էլ որ թվա, նրանք կերի պակաս չեն զգում: Առայժմ իհարկե, անհրաժեշտ էր օրաբաժինները ժամանակավորապես շտկել (Զռանը միշտ ասում էր «շտկել» և ոչ թե՝ «կրճատել»), սակայն Զոնզի ժամանակների համեմատ առաջընթացն անվիճելի էր: Զիլ ձայնով շուտասելուկի պես կարդալով թվերը, Զռանը հանգամանորեն ապացուցում էր, որ նրանք ավելի շատ վարսակ, խոտ ու շաղգամ ունեն, քան Զոնզի ժամանակ, որ նրանք այժմ ավելի քիչ են աշխատում, որ նրանց խմած ջուրն ավելի բարձրորակ է, կյանքի տևողությունն՝ ավելի երկար, որ մատղաշների մահացությունը պակասել է, իսկ գոմերի ծղոտն՝ ավելացել, և, վերջապես, որ ոջիլներն այժմ ավելի քիչ են անհանգստացնում: Անասունները հավատում էին դրա ամեն մի բառին: Եթե ճիշտն ասենք, նրանց հիշողությունից արդեն ջնջվել էին Զոնզն ու իր մարմնավորած ամեն ինչը: Նրանք գիտեին, որ ներկայիս կյանքը դաժան է ու անպաճույճ, որ իրենք հաճախ մրսում ու մեծ մասամբ քաղցած են, և որ արթուն ժամանակ սովորաբար միշտ աշխատում են: Սակայն կասկած չկար, որ նախկինում ամեն ինչ ավելի վատ է եղել: Նրանք ուրախ էին հավատալ այդ մտքին: Բացի այդ, նախկինում նրանք ստրուկ էին, իսկ այժմ՝ ազատ, և դրանում էր հիմնական առավելությունը: Զռանը չէր մոռանում ամեն անգամ շեշտել այդ փաստը:

Կերակրելու բերաններն ավելացել էին: Աշնանը չորս մերուն ցնկնել էին համարյա միաժամանակ, բոլորը միասին բերելով երեսունմեկ գոճի: Գոճիները խայտաբղետ էին, բայց քանի որ Նապոլեոնը ֆերմայի միակ կինճն էր, հայրությունը հնարավոր էր գուշակել: Այդ տարվա մեջ, ավելի ուշ, աղյուս ու տախտակներ գնելուց հետո, հայտարարվեց, որ տան հետևի այգում դասասենյակ է կառուցվելու: Իսկ մինչ այդ խոճկորների դաստիարակությամբ տան խոհանոցում կզբաղվեր անձամբ Նապոլեոնը: Խոճկորները վազվզում էին պարտեզում և խուսափում էին մյուս անասունների մատղաշների հետ խաղալուց: Համարյա նույն ժամանակ օրենք դարձավ, որ, կածանի վրա խոզի հանդիպելով, մնացած անասունները պարտավոր էին ճանապարհը զիջել: Բացի այդ խոզերին արտոնված էր կիրակի օրերին պոչին կանաչ ժապավեն կապել:

Տարին բավական հաջող անցավ, սակայն ֆերման շարունակում էր դրամի կարիք զգալ: Դասասենյակի համար պետք էր աղյուս, ավազ ու կիր ձեռք բերել, անհրաժեշտ էր նաև կրկին միջոցներ կուտակել հողմաղացի սարքավորումների համար: Բացի այդ տան համար լամպի յուղ և մոմեր էին պետք, իսկ Նապոլեոնի սեղանի համար՝ շաքար (նա մնացած խոզերին դա արգելել էր, պատճառաբանելով, որ շաքարը գիրացնում է), չհաշված սովորական պետքերը, ինչպես, օրինակ՝ գործիքներ, մեխեր, պարաններ, ածուխ, երկաթ և շների բլիթներ: Խոտի մի դեզ և կարտոֆիլի բերքի

մի մասը վաճառվեցին, իսկ ձվեր մատակարարելու պարտավորությունը բարձրացվեց շաբաթական վեց հարյուրի, այնպես որ այդ տարի հավերը հազիվ կարողացան պահպանել իրենց քանակը:

Դեկտեմբերին կրճատված օրաբաժինները փետրվարին կրճատվեցին նորից, և, յուղը խնայելու համար, գոմերում արգելվեց լույս վառել: Սակայն խոզերն իրենց կարծես թե վատ չէին զգում և փաստորեն անգամ գիրանում էին: Փետրվարի վերջին օրերից մեկի կեսին մի ջերմ, ախորժելի ու գրգռիչ բույր, որպիսին անասունները մինչ այդ երբեք չէին զգացել, տարածվեց բակով մեկ խոհանոցի հետևի այն փոքրիկ գարեջրանոցից, որը Ջոնզի օրոք չէր գործածվել: Ինչ-որ մեկն ասաց, որ այդպիսի հոտ գալիս է գարի եփելուց: Քաղցած անասուններն անհամբեր հոտոտում էին օդը, կարծելով, թե ընթրիքին տաք լափ են ուտելու: Սակայն ոչ մի լափ չեղավ, իսկ հաջորդ կիրակի հայտարարվեց, որ այդուհետև գարու ամբողջ բերքը վերապահվելու է խոզերի համար: Այգու հետևի արտն արդեն ամբողջովին գարի էր ցանված: Շուտով նաև հայտնի դարձավ, որ ամեն խոզ օրական ստանում է մեկ փինթ գարեջուր: Նապոլեոնին հասնում էր կես գալոն, որը նրան մատուցվում էր *Արքայական Դերբի* սպասքի ապուրամանով:

Բայց և այնպես բոլոր զրկանքները մասամբ հատուցվում էին նրանով, որ այդ օրերի կյանքում ավելի շատ արժանապատվություն կար: Երգերը, ճառերն ու երթերը նախկինից ավելի շատ էին: Նապոլեոնի հրամանով ամեն շաբաթ անց էին կացվում այսպես կոչված Ինքնաբուխ Ցույցեր, որոնց նպատակն էր փառաբանել Անասնաֆերմայի պայքարն ու նվաճումները: Նշված ժամին բոլոր անասունները թողնում էին աշխատանքն ու շարքերով համաքայլ դոփում ֆերմայի շուրջը: Առջևից ընթանում էին խոզերը, ապա՝ ձիերը, կովերը, ոչխարներն ու թռչունները: Շները քայլում էին կողքերից, իսկ ամենքի առջևում գնում էր Նապոլեոնի սև աքլորը: Դմբուզն ու Երեքնուկը միշտ երկու կողմից պահում էին կանաչ դրոշը, որի վրա, սմբակից ու պոզից բացի, կար նաև նշանաբան՝ «Կեցցե՛ ընկեր Նապոլեոնը»: Երթից հետո արտասանվում էին Նապոլեոնին նվիրված բանաստեղծություններ, որին հետևում էր Զռանի ճառը անասնակերի արտադրության ընթացիկ հաջողությունների մասին: Վերջում ամեն անգամ պարպում էին հրացանը: Ինքնաբուխ Ցույցերի ամենանվիրյալ մասնակիցները ոչխարներն էին, և եթե որևէ մեկը տրտնջար (ինչպես ոմանք անում էին խոզերի ու շների բացակայությամբ), թե իզուր ժամանակ է վատնվում ցրտին կանգնելով, ոչխարներն իսկույն նրան լռեցնում էին իրենց զարհուրելի մկկոցով՝ «Չորս ոտք լավ, երկու ոտք վատ»: Սակայն, ընդհանուր առմամբ, անասուններն այդ ցույցերը վայելում էին: Նրանք շոյվում էին, վերհիշելով, որ, վերջիվերջո, իրե՛նք էին իրենց իսկական տերերը, և որ իրենց աշխատանքն ուղղված է սեփական բարօրությանը: Եվ այդպես՝ երգերի, երթե-

րի, Զռանի թվերի, հրացանի կրակոցների, աքլորականչի և ծածանվող դրոշի օգնությամբ, նրանք մոռանում էին, որ իրենց ստամոքսը դատարկ է, համենայն դեպս՝ ժամանակի մեծ մասը:

Ապրիլին Անասնաֆերման հռչակվեց Հանրապետություն և Պրեզիդենտ ընտրելու անհրաժեշտություն առաջացավ: Կար միայն մի թեկնածու՝ Նապոլեոնը, որն ընտրվեց միաձայն: Նույն օրը հայտարարվեց, որ երևան են եկել նոր փաստաթղթեր, որոնք թարմ մանրամասներ են բացահայտում Ջնագնդու և Ջոնզի դավադրությունից: Պարզվում էր, որ Ջնագնդին ոչ թե, ինչպես անասուններն էին կարծել, պարզապես փորձել է ռազմական հնարքների միջոցով տանուլ տալ Գոմի ճակատամարտը, այլ բացեիբաց կռվել է Ջոնզի կողմից: Փաստորեն հենց նա է եղել մարդկանց հրամանատարը, մարտի նետվելով «Կեցցե՛ մարդկությունը» կոչը շուրթերին: Ջնագնդու մեջքի վերքերը, որոնց տեսքն անասուններից ոմանք դեռ հիշում էին, իրականում Նապոլեոնի ատամներից էին:

Ամռան կեսին, տարիների բացակայությունից հետո, ֆերմայում հանկարծ նորից հայտնվեց Մովսես ագռավը: Նա բոլորովին չէր փոխվել, նորից ոչ մի աշխատանք չէր անում և առաջվա պես շարունակում էր նույն ոգով պատմություններ անել Շաքարաքլոր Լեռան մասին: Նա թառում էր մի որևէ կոճղի, թևերը թափահարում և, եթե լսող կար, ժամերով խոսում: «Վերևում, ընկերներ», հանդիսավոր ասում էր նա, մեծ կտուցը վեր տնկելով, «հենց ձեր տեսած այն մութ ամպի հետևում գտնվում է երջանիկ մի երկիր՝ Շաքարաքլոր Լեռը, որտեղ մենք, թշվառ կենդանիներս, հավիտյան կազատվենք մեր չարչարանքներից»: Նա նույնիսկ պնդում էր, որ իր բարձր թռիչքներից մեկի ժամանակ եղել է այնտեղ և տեսել է երեքնուկի մշտադալար արոտներն ու թփերի վրա աճող շաքարն ու կարկանդակները: Անասուններից շատերը հավատում էին նրան, մտածելով, որ եթե իրենց կյանքն այժմ սովյալ է ու տքնաջան, ապա արդար չէ՞ արդյոք, որ մի տեղ պիտի լինի նաև ավելի լավ մի աշխարհ: Խոզերի վերաբերմունքը Մովսեսի հանդեպ դժվար էր հասկանալ: Նրանք արհամարհանքով ժխտում էին Շաքարաքլոր Լեռան գոյությունը, միևնույն ժամանակ թողնելով, որ Մովսեսը մնա ֆերմայում, չաշխատի և նույնիսկ գարեջրի օրաբաժին ստանա:

Սմբակը բուժելով, Դմբուզը սկսեց նախկինից ավելի եռանդուն աշխատել: Այդ տարի բոլոր անասուններն էին աշխատում ստրուկի պես: Ֆերմայի առօրյա գործերից և հողմաղացի վերականգնումից բացի, ավելացել էր խոճկորների դպրոցի կառուցումը, որի պարապմունքները սկսվելու էին մարտին: Կիսաքաղց վիճակում երկար աշխատելը երբեմն անտանելի էր, բայց Դմբուզը երբեք չէր տրտնջում: Նրա արարքներն ու խոսքերը ոչ մի առիթ չէին տալիս կարծելու, թե նախկին ուժը լքել է նրան: Թեթևակի փոխվել էր միայն նրա արտաքինը՝ մաշկի փայլը խամրել էր, իսկ ազդրերը՝

սմքել: Մյուսներն ասում էին՝ «Գարնան խոտի հետ Դմբուզը կարգի կգա»: Սակայն գարունը եկավ, իսկ Դմբուզը չկազդուրվեց: Երբեմն, երբ նրա մկանները լարվում էին մի մեծ քարաբեկորի քաշից, թվում էր, թե միայն շարունակելու կամքն է նրան ոտքի վրա պահում: Այդ պահերին նրա շուրթերը կազմում էին «Ես ավելի եռանդուն կաշխատեմ» խոսքերը՝ արտասանելու համար ձայն չէր մնացել: Երեքնուկն ու Բենիամինը կրկին անգամ նրան զգուշացրեցին, որ հետևի իր առողջությանը, բայց Դմբուզը դրան ուշադրություն չէր դարձնում: Մոտենում էր նրա տասներկուերորդ տարեդարձը: Նրան հուզող միակ խնդիրը թոշակի անցնելուց առաջ բավականաչափ քար կուտակելն էր:

Ամառային ուշ մի երեկո հանկարծակի լուր տարածվեց, թե Դմբուզին ինչ-որ բան է պատահել: Նա մենակ գնացել էր հողմաղացի համար հերթական անգամ քար կրելու: Պարզվեց, որ լուրը ստույգ է: Մի քանի րոպեից երկու աղավնի բերեցին մանրամասնությունները: «Դմբուզը վայր է ընկել: Կողքի վրա պառկած, չի կարողանում վեր կենալ»:

Անասունների կեսից ավելին նետվեցին բլրակի կողմը: Սայլի կողափայտերի միջև վիզը ձգած ընկած էր Դմբուզը՝ անկարող անգամ բարձրացնել գլուխը: Նրա աչքերը մշուշված էին, կողերը՝ քրտնաթաթախ: Բերանից արյան բարալիկ շիթ էր ծորում: Երեքնուկը ծունկի իջավ նրա կողքին:

— Դմբուզ,— կանչեց նա,— ո՞նց ես:

— Թոքերս են:— Նվաղ ձայնով ասաց Դմբուզ:— Բան չկա: Հուսով եմ, կկարողանաք առանց ինձ ավարտել հողմաղացը: Արդեն բավականաչափ քար է կուտակվել: Ամեն դեպքում ինձ ընդամենը մի ամիս էր մնացել: Ճիշտն ասած, ես սպասում էի թոշակի անցնելուս: Թերևս, քանի որ Բենիամինն էլ ծերանալու վրա է, նրան թույլ տան թոշակի անցնել ինձ հետ միաժամանակ, որ միասին լինենք:

— Պետք է անհապաղ օնություն կանչել:— Ասաց Երեքնուկը:— Շո՛ւտ, մեկնումեկդ վազեք ու իմաց տվեք Զռանին:

Մնացած բոլոր անասուններն իսկույն հետ վազեցին Զռանին լուրը հաղորդելու: Մնացին միայն Երեքնուկն ու Բենիամինը, որը լուռ պառկեց Դմբուզի կողքին, իր երկար պոչով ճանճերին քշելով: Քառորդ ժամից հայտնվեց Զռանը, կարեկցանքով ու հոգատարությամբ լի: Նա ասաց, որ ընկեր Նապոլեոնը խորապես վշտացավ, իմանալով, որ ֆերմայի ամենից նվիրված աշխատավորներից մեկին նման դժբախտություն է պատահել, և արդեն կարգադրություններ է անում Դմբուզին Վիլինգդոնում հիվանդանոց տեղավորելու համար: Այդ լսելով, անասունները փոքր-ինչ սրտնեղեցին: Մոլլիից ու Ձնագնդուց բացի, ուրիշ ոչ մի անասուն երբևէ ֆերման չէր լքել, և նրանց դուրը չեկավ հիվանդ ընկերոջը մարդկանց ձեռքը հանձնելու միտքը: Սակայն Զռանը հեշտութ-

յամբ նրանց համոզեց, որ Վիլինգդոնի անասնաբույժը Դմբուզին շատ ավելի լավ կխնամի, քան հնարավոր է ֆերմայի պայմաններում: Մոտ կես ժամ անց Դմբուզը փոքր-ինչ խելքի եկավ և, մեծ դժվարությամբ ոտքի կանգնելով, քարշ եկավ իր գոմը, ուր Երեքնուկն ու Բենիամինը նրա համար ծղոտե փափուկ անկողին էին պատրաստել:

Հաջորդ երկու օրը Դմբուզը մնաց գոմում: Խոզերը նրա համար լողասենյակի դեղադարակում գտնված վարդագույն դեղով մի մեծ շիշ էին ուղարկել, և Երեքնուկը օրական երկու անգամ ճաշից հետո տալիս էր նրան այդ դեղը: Երեկոները Երեքնուկը պառկում էր Դմբուզի կողքին ու նրա հետ զրուցում, իսկ Բենիամինը քշում էր ճանճերին: Դմբուզը նրանց խոստովանեց, որ չի ափսոսում կատարվածի համար: Լավ ապաքինվելու դեպքում, նա կապրի ևս մի երեք տարի և հաճույքով կանխաճաշակում է այն խաղաղ օրերը, որ անց է կացնելու մեծ արոտից առանձնացված հողամասում: Նա առաջին անգամ հնարավորություն և ժամանակ կստանա զբաղվելու իր մտքի կատարելագործմամբ: Նա մտադիր է իր կյանքի մնացորդը նվիրել այբուբենի մնացած քսաներկու տառերը սովորելուն:

Ինչևէ, Բենիամինն ու Երեքնուկը կարող էին նրան ընկերակցել միայն աշխատանքային ժամերից հետո, իսկ երբ ֆուրգոնը եկավ նրան տանելու, դեռ կեսօր էր: Անասունները, խոզերից մեկի ղեկավարությամբ, զբաղված էին շաղգամի արտը քաղհանելով, երբ հանկարծ ապշահար տեսան, թե ինչպես Բենիամինը, բարձրաձայն զռալով, վազում է իրենց կողմը: Նրանք առաջին անգամ էին Բենիամինին հուզված տեսնում, և ընդհանրապես նրան դեռ ոչ ոք երբևէ վազելիս չէր տեսել: «Արագ, արագ...», գոռում էր նա, «Վազեք: Դմբուզին տանում են»: Առանց խոզի կարգադրությանը սպասելու, անասուններն, աշխատանքը թողած, նետվեցին շենքերի կողմը: Իսկապես, բակում կանգնած էր երկու ձի լծած մի մեծ փակ ֆուրգոն, որի կողքերին ինչ-որ բան էր գրված:Վարորդի տեղում խարդախ տեսքով թասակավոր մի մարդ էր նստած: Դմբուզի տեղը գոմում դատարկ էր:

Անասունները խմբվեցին ֆուրգոնի շուրջը: «Ցտեսություն, Դըմբուզ», բացականչեցին բոլորը միասին, «Ցտեսություն»:

—Հիմարներ: Հիմարներ:— Գոռաց Բենիամինը, ցատկոտելով նրանց շուրջն ու փոքրիկ սմբակներով դոփելով գետինը:— Հիմարներ: Միթե չեք տեսնում, թե ֆուրգոնին ինչ է գրված:

Անասունները լռեցին, և Մյուրիելը սկսեց տառ-տառ վերծանել գրությունը: Բայց Բենիամինը նրան մի կողմ հրեց և մեռյալ լռության մեջ կարդաց:

— «Ալֆրեդ Սիմոնդզ — Ձի Քերթող և Սոսինձ Եփող, Վիլինգդոն: Կաշվի և աղացած ոսկորների առևտուր: Շան բների վաճառք»: Միթե չեք հասկանում, թե դա ինչ է նշանակում: Դմբուզին տանում են մորթելու:

Անասունները սարսափահար ճիչ արձակեցին: Նույն պահին ֆուրգոնավարը ձիերին մտրակեց, և ֆուրգոնը բակից արագ դուրս

եկավ: Անասունները, բարձր ճչալով, նետվեցին դրա հետևից: Երեքնուկն ամենքից առաջ ընկավ: Ֆուրգոնի ընթացքն արագացավ: Երեքնուկը փորձեց անցնել վարգի, բայց չկարողացավ: «Դմբուզ», գոռում էր նա, «Դմբուզ, Դմբուզ, Դմբուզ»: Հենց այդ ժամանակ, ասես լսելով դրսի աղաղակը, ֆուրգոնի հետևի փոքրիկ պատուհանում հայտնվեց Դմբուզի սպիտակ գծով մռութը:

— Դմբուզ:— Սոսկալի ձայնով գոռաց Երեքնուկը:— Դմբուզ, դուրս արի: Շուտ դուրս արի: Նրանք քեզ տանում են մորթելու:

Բոլոր անասունները միացան այդ կանչին՝ «Դուրս արի, Դմբուզ, դուրս արի»: Բաց ֆուրգոնն արդեն թափ էր առել և աստիճանաբար հեռանում էր: Պարզ չէր՝ արդյոք Դմբուզը հասկացել է Երեքնուկի գոռոցը: Սակայն հաջորդ պահին նրա մռութը պատուհանից հեռացավ, և ֆուրգոնի ներսից սմբակների սոսկալի դոփյուն լսվեց: Դմբուզը փորձում էր դուրս պրծնել: Ժամանակին նրա սմբակների մի երկու հարված կհերիքեր ֆուրգոնը ջախջախելու համար: Բայց, ավաղ, ուժը լքել էր նրան. շուտով դոփյունը թուլացավ և մարեց: Վհատված անասունները սկսեցին կոչ անել ֆուրգոնը քաշող ձիերին: «Ընկերներ, ընկերներ», գոռում էին նրանք, «Ձեր եղբորը մի՛ տարեք մորթելու»: Բայց տխմար գրաստները, առանց կատարվածը հասկանալու, միայն խլրտացրին ականջներն ու ավելի արագ վազեցին: Դմբուզի մռութն այլևս պատուհանի մեջ չերևաց: Ինչ-որ մեկը գլխի ընկավ, որ հարկավոր է առաջ վազել ու փակել հնգահեծան դարպասը, բայց արդեն ուշ էր: Ֆուրգոնն անցավ դարպասի միջով դեպի ճանապարհը և շուտով անհայտացավ: Դմբուզին այլևս ոչ ոք չտեսավ:

Երեք օր անց հայտարարվեց, որ Դմբուզը վախճանվել է Վիլինգդոնի հիվանդանոցում, չնայած ձիուն վայել լավագույն խնամքը ստանալուն: Տխուր լուրը հայտնեց Զռանը, ասելով, որ անձամբ ներկա է եղել Դմբուզի վերջին ժամերին:

— Դա իմ երբևէ ապրած ամենահուզիչ տեսարանն էր:— Ասաց Զռանը, տոտիկով արցունքը սրբելով:— Ես նրա մահճի մոտ էի մինչև վերջին պահը: Մեռնելուց առաջ, արդեն համարյա խոսելու անկարող, նա ականջիս շշնջաց, թե զղջում է միայն նրա համար, որ վախճանվելու է նախքան հողմաղացի ավարտը: «Առաջ, ընկերներ», շշնջաց նա, «Առաջ հանուն Ապստամբության: Կեցցե՛ Անասնաֆերման: Կեցցե՛ ընկեր Նապոլեոնը: Նապոլեոնը միշտ ճիշտ է»: Ահա նրա վերջին խոսքերը, ընկերներ:

Այստեղ Զռանի կեցվածքն անսպասելիորեն փոխվեց: Նա մի պահ լռեց, շարունակելուց առաջ կասկածանքով լի հայացքներ նետելով շուրջը:

Իր ականջներին հասել է, ասաց նա, որ Դմբուզի մեկնման պահին անասունների մեջ հիմար ու անհիմն բամբասանք է շրջել: Ոմանք նկատել են, որ նրան տանող ֆուրգոնի կողքին գրված է եղել «Ձի քերթող», և հանգել են այն շուտափույթ եզրակացությանը, թե Դմբուզին տանում են մորթելու: Համարյա անհավատալի

է, ասաց Զռանը, որ կարելի էր այդպիսի հիմար բան մտածել: Միթե, վրդովված բացականչեց նա, դեսուդեն անելով և պոչը շարժելով, միթե նրանք իրենց Պաշտելի Առաջնորդ ընկեր Նապոլեոնից նման բան էին սպասում: Այնինչ բացատրությունն ավելի քան պարզ է՝ անասնաբույժն այդ ֆուրգոնը վերջերս է գնել քերթողից և դեռ չի հասցրել ջնջել հին գրությունը: Հենց դա էլ հանդիսացել է թյուրիմացության պատճառը:

Այդ լսելով, անասունների սրտից մի ծանր քար ընկավ: Իսկ երբ Զռանը պատկերավոր նկարագրեց Դմբուզի ստացած հրաշալի խնամքը և այն թանկարժեք դեղերը, որոնց համար առանց մտածելու վճարել էր ընկեր Նապոլեոնը, նրանց վերջին կասկածներն անգամ չքացան, և Դմբուզի մահվան պատճառած վիշտը մասամբ փարատվեց այն մտքից, որ իրենց ընկերն առնվազն երջանիկ է մեռել:

Հաջորդ կիրակի առավոտ Նապոլեոնն անձամբ ներկայացավ ժողովի և մի կարճ ճառ արտասանեց Դմբուզի պատվին: Ցավոք, ասաց նա, իրենց հանգուցյալ ընկերոջ դիակը ֆերմա տեղափոխել հնարավոր չէ, սակայն ինքը հանձնարարել է պարտեզի դափնիներից մի մեծ պսակ հյուսել և ուղարկել նրա գերեզմանին: Բացի այդ, խոզերը նախատեսում են մի քանի օրից Դմբուզի հիշատակին նվիրված բանկետ կազմակերպել: Նապոլեոնն ավարտեց իր ճառը, հիշեցնելով Դմբուզի սիրելի «ես ավելի եռանդուն կաշխատեմ» և «Ընկեր Նապոլեոնը միշտ ճիշտ է» ասույթները, որոնք, ասաց նա, լավ կանի որդեգրի ամեն մի անասուն:

Բանկետի նշանկված օրը Վիլինգդոնից ժամանեց նպարավաճառի ֆուրգոնը, տան առաջ մի մեծ արկղ բեռնաթափելով: Այդ գիշեր տնից բարձր երգեցողություն էր լսվում, ապա՝ կատաղի վեճի պես մի բան, որը ժամը տասնմեկի կողմերն ավարտվեց փշրվող ապակու սոսկալի աղմուկով: Հաջորդ օրը մինչև կեսօր տնից ոչ մի ծպտուն չեկավ, և լուր տարածվեց, թե խոզերն ինչ-որ տեղից փող են ճարել մի նոր արկղ վիսկի գնելու համար:

ԳԼՈՒԽ 10

Անցան տարիներ: Փոխվում էին տարվա եղանակները, անցնում-գնում էին անասունների կարճատև կյանքերը: Եկավ մի ժամանակ, երբ էլ ոչ ոք չէր հիշում նախաապստամբական օրերը, բացի Երեքնուկից, Բենիամինից, Մովսես ագռավից և մի քանի խոզերից:

Մյուրիելը մեռել էր, չկային Զանգակը, Զեսին և Փինչերը: Մեռել էր նաև Զոնգը՝ ուրիշ մի երկրամասի գինեմոլների հանգրվանում: Դմբուզին հիշում էին միայն նրան անձամբ ճանաչած քչերը: Երեքնուկը պառավ ու պարարտ մի ձի էր, փայտացած հոդերով ու թրջվելու հակված աչքերով: Երկու տարի առաջ լրացել էր նրա թոշակի տարիքը, սակայն դեռ ոչ մի անասուն իրականում թոշակի չէր անցել: Արոտի մի մասը զառամյալ անասունների

համար առանձնացնելու մասին վաղուց արդեն ոչ ոք չէր խոսում: Նապոլեոնն այժմ մեկնկես ցենտներանոց հասուն մի կինճ էր: Զռանն այնքան էր գիրացել, որ ծալքերի միջից հազիվ էր կարողանում տեսնել: Միայն Բենիամինը համարյա չէր փոխվել՝ թերևս մռութն էր փոքր-ինչ մթնել և մեկ էլ խառնվածքը. Դմբուզի մահից հետո նախկինից խոժոռ ու լռակյաց էր դարձել:

Ֆերմայի գլխաքանակը մեծապես աճել էր, բայց ոչ այնքան, ինչքան նախատեսվել էր վաղ տարիներին: Ծնվել էին շատ անասուններ, որոնց համար Ապստամբությունը սոսկ ուրիշներից լսած աղոտ մի հուշ էր: Բացի այդ ձեռք էին բերվել նաև նորերը, որոնք նախքան ֆերմա գալն ընդհանրապես երբևէ նման բան չէին լսել: Երեքնուկից բացի, ֆերմայում այժմ երեք ուրիշ ձի կար: Նրանք հրաշալի անասուններ էին, եռանդուն աշխատողներ և լավ ընկերներ, բայց՝ բացառիկ բութ: Նրանցից ոչ մեկն այբուբենի Բ տառից այն կողմ չսովորեց: Նրանք ընդունում էին Ապստամբության և Անասնիզմի սկզբունքների մասին իրենց լսած ամեն ինչը, մանավանդ, երբ պատմողը Երեքնուկն էր, որի հանդեպ նրանք համարյա որդիական հարգանք էին դրսևորել, սակայն կասկած չկար, որ նրանք այդ ամենից ոչինչ չէին հասկանում:

Ֆերման այժմ ավելի բարգավաճ էր և ավելի լավ կազմակերպված: Նրան անգամ կցվել էր երկու նոր դաշտ, որոնք ձեռք էին բերվել միստր Փիլքինգտոնից: Վերջապես բարեհաջող ավարտվել էր հողմաղացի շինարարությունը, և ֆերման այժմ կալսիչ ու հարդի սեփական էլևատոր ուներ, չհաշված բազում այլ նոր շինությունները: Վիմփերն իր համար երկանիվ կառք էր գնել: Այդուհանդերձ հողմաղացն այդպես էլ չգործածվեց էլեկտրականություն ստանալու համար՝ նրանում ալյուր էին աղում, որը շոշափելի եկամուտ էր տալիս: Անասունները տքնաջան աշխատում էին երկրորդ հողմաղացի շինարարության վրա. ասում էին, թե դինամոները տեղադրվելու են այնտեղ: Այն ամենն, ինչ անասուններին սովորեցրել էր երազել Զնագնդին՝ էլեկտրական լուսավորությամբ տաք ու սառը ջրով գոմեր և եռօրյա աշխատանքային շաբաթ, այլևս չէր հիշատակվում: Նապոլեոնը դատապարտել էր այդ գաղափարները որպես Անասնիզմի ոգուն հակասող: Իսկական երջանկությունը, ասում էր նա, անդադար աշխատանքի և ժուժկալ կյանքի մեջ է:

Մի տեսակ այնպես էր ստացվել, որ ֆերման կարծես հարստացել էր՝ առանց անասունների կյանքի բարելավման, չհաշված, իհարկե, խոզերին ու շներին: Թերևս դրա պատճառը մասամբ նաև այն էր, որ խոզերն ու շները շատ ու շատ էին: Չի կարելի ասել, որ վերջիններս յուրովի չէին աշխատում: Ֆերմայում, ինչպես երբեք չէր հոգնում բացատրել Զռանը, վարչական և կազմակերպչական բնույթի անծայրածիր աշխատանք կար անելու: Այդ աշխատանքի մեծ մասի էությունը հասկանալու համար անասունները չափից ավելի թանձրամիտ էին: Օրինակ, Զռանը նրանց բացատրում էր, որ խոզերն

ամեն օր ստիպված են տաժանակիր աշխատանք կատարել ինչ-որ խորհրդավոր «հաշվետվություններ», «հանձնարարականների», «հաշվեկշիռների» ու «քաղվածքների» հետ: Մեծ-մեծ թղթեր ոտքից-գլուխ ծածկվում էին մանր ձեռագրով, իսկ լրացվելուց հետո նետվում էին արխիվը: Զռանն ասում էր, որ ֆերմայի բարեկեցության համար դա մեծագույն կարևորություն է ներկայացնում: Դրանով հանդերձ ոչ շները, և ոչ էլ խոզերն իրենց աշխատանքով անասնակեր չէին արտադրում, չնայած միշտ հիանալի ախորժակ ունեին:

Ինչ վերաբերում է մնացածներին, ապա նրանց կյանքը, ինչքան որ իրենք էին հասկանում, միշտ էլ նույնն էր եղել: Նրանք հիմնականում քաղցած էին, քնում էին ծղոտի վրա, խմում էին ջրափոսից, աշխատում էին դաշտում, ձմռանը հանգիստ չունեին ցրտից, իսկ ամռանը՝ ճանճերից: Երբեմն առավել տարեցները քրքրում էին իրենց աղոտ հիշողությունը, փորձելով որոշել, թե արդյոք Ապստամբության օրերին, երբ Զոնզը նոր էր վտարվել, կյանքն ավելի լավ էր, թե վատ: Չկար ոչինչ, որի հետ կարելի լիներ ներկան համեմատել, միակ չափանիշը Զռանի թվերն էին, որոնք անշեղորեն հավաստում էին, թե ամեն ինչ գնալով ավելի ու ավելի լավ է դառնում: Անասունների համար այդ հարցը մնում էր անլուծելի, ամեն դեպքում նրանք այժմ նման բաների մասին մտածելու ժամանակ էլ չունեին: Ծեր Բենիամինը պնդում էր, որ պարզ հիշում է իր կյանքի բոլոր մանրամասները, ասելով, որ ոչինչ երբևէ ավելի վատ կամ ավելի լավ լինել չէր կարող. ըստ նրա քաղցը, զրկանքներն ու հիասթափությունը կյանքի անսասան օրենքներն էին:

Բայց և այնպես անասունները երբեք չէին դադարում հույս փայփայելուց: Դեռ ավելին, նրանք երբեք, մի ակնթարթ անգամ չէին կորցնում Անասնաֆերմայի անդամների իրենց արտոնության պարծանքը: Նրանք շարունակում էին մնալ ամբողջ երկրի,— ամբողջ Անգլիայի,— միակ ֆերման, որը պատկանում էր անասուններին: Նրանցից ոչ մեկը, անգամ մատղաշները, անգամ հեռավոր տեղերից բերված նորեկները, չէին դադարում հիանալ այդ փաստով: Իսկ երբ նրանք լսում էին հրացանի կրակոցը և տեսնում ծածանվող կանաչ դրոշը, նրանց հոգիներն անսահման հպարտությամբ էին լցվում, և խոսակցությունն անպայման դառնում էր այն հերոսական օրերին, երբ վռնդվեց Զոնզը, գրվում էին Յոթ Պատվիրանները և պանծալի ճակատամարտներում ջախջախվում էին զավթարար մարդիկ: Անցյալի երազանքներից ոչ ոք չէր հրաժարվել: Բոլորը հավատում էին Գնդապետի կանխատեսած Անասունների Հանրապետությանը, որում Անգլիայի հողին չպիտի ոտք դներ մարդը: Այդ օրը դեռ գալու էր, թեկուզ ոչ շուտ, գուցե անգամ ոչ իրենց կյանքի ընթացքում, բայց անպայման գալու էր: Թերևս տեղ-տեղ նույնիսկ կամացուկ լսվում էր «Անգլիայի գազանների» մեղեդին, համենայն դեպս ֆերմայի բոլոր անասուններն այն

գիտեին, չնայած ոչ ոք չէր համարձակվում բարձրաձայն երգել, եթե անգամ կյանքը չարքաշ էր և ոչ բոլոր իղձերն էին իրականացել, նրանք գիտեին, որ տարբերվում են մնացած անասուններից, եթե նրանք քաղցած էին, ապա պատճառը բռնակալ մարդկանց կերակրելու կարիքը չէր, եթե նրանք հյուծվում էին աշխատանքից, ապա գոնե իրենց համար էին աշխատում: Ոչ ոք նրանց մոտ երկու ոտքի վրա չէր քայլում: Ոչ ոք ուրիշին «տեր» չէր կոչում: Բոլոր անասունները հավասար էին:

Մի օր ամռան սկզբին Զռանը ոչխարներին հրամայեց հետևել իրեն դեպ տարավ ֆերմայի հեռավոր ծայրի մի տափարակը, որը ծածկված էր ծփիների մատղաշ ծառերով: Ոչխարներն ամբողջ օրը մնացին այնտեղ, արածելով Զռանի հսկողության ներքո: Երեկոյան նա վերադարձավ ֆերմա, բայց, քանի որ եղանակը տաք էր, ոչխարներին հետ չբերեց: Ոչխարներն այնտեղ մնացին մի ամբողջ շաբաթ, որի ընթացքում նրանց ոչ ոք չէր տեսնում: Օրվա մեծ մասը Զռանն անց էր կացնում նրանց հետ: Նա ասաց, որ ոչխարներին սովորեցնում է մի նոր երգ, որի համար առանձնացում է պահանջվում:

Ոչխարների վերադարձից շատ չանցած, երբ գեղեցիկ մի երեկո անասունները հետ էին գալիս դաշտային աշխատանքներից, ֆերմայի բակից ձիու սարսափահար մի խրխինջ լսվեց: Ընկրկելով, անասունները մեխվեցին իրենց տեղերում: Խրխինջը կրկնվեց: Ճանաչելով երեքնուկի ձայնը, բոլորը վարգով նետվեցին բակը և տեսան... Երեքնուկի տեսածը:

Մի խոզ քայլում էր հետևի ոտքերի վրա:

Այո, հենց Զռանը: Մի քիչ անշնորհք, ասես դեռ անսովոր իր զգալի քաշը պահելուն, սակայն կատարյալ հավասարակշռությամբ, նա կտրում-անցնում էր բակը: Հաջորդ պահին տան դռնից դուրս եկավ խոզերի երկար մի շարան՝ բոլորը հետևի ոտքերի վրա: Ոմանք մյուսներից ավելի լավ էին քայլում, իսկ մի երկուսը թեթևակի երերում էին, ասես ձեռնափայտի կարիք զգալով, բայց բոլորը հաջողությամբ անցան ամբողջ բակով մեկ: Վերջապես, շների զարհուրելի հաչոցի ու սև աքաղաղի զիլ կանչի ներքո, տնից դուրս եկավ փառավորապես ուղղաձիգ Նապոլեոնը: Նա ամբարտավան հայացքներ էր գցում չորս կողմը, շուրջը թռչկոտում էին շները:

Նրա տոտիկում մտրակ էր սեղմված:

Մեռյալ լռություն տիրեց: Ապշահար ու ահաբեկված, անասուններն իրար սեղմված դիտում էին խոզերի դանդաղ երթը բակով մեկ: Աշխարհն ասես շուռ էր եկել: Ապա, առաջին ցնցումը հանդարտվելուն պես, եկավ մի պահ, երբ, հակառակ ամեն ինչի,— հակառակ շների վախի, հակառակ երբեք չտրտնջալու, ինչ էլ որ լինի՝ երբեք չբողոքելու տարիներով մշակված սովորության,— անասուններն ուր որ է կընդվզեին: Սակայն հենց այդ պահին, ասես ազդանշանով, ոչխարները սկսեցին բարձր մայել:

— Չորս ոտք լավ, երկու ոտք *ավելի լավ*: Չորս ոտք լավ, երկու ոտք *ավելի լավ*: Չորս ոտք լավ, երկու ոտք *ավելի լավ*:

Այսպես շարունակվեց հինգ րոպե անընդմեջ: Երբ ոչխարները լռեցին, բողոքելու հնարավորությունն արդեն անցել էր, քանի որ խոզերը շարքով մտել էին տուն:

Ինչ-որ մեկը հպվեց Բենիամինի ուսին: Նա շուռ եկավ: Երեքնուկն էր: Նրա ծեր աչքերն ավելի մշուշված էին, քան երբևէ: Առանց որևէ բան ասելու, նա կամացուկ քաշեց Բենիամինի բաշից ու տարավ նրան ամբարի այն պատի տակ, որին գրված էին Յոթ Պատվիրանները: Մի քանի պահ նրանք լուռ նայում էին սպիտակ տառերով սև պատին:

— Ես արդեն լավ չեմ տեսնում:— Վերջապես ասաց Երեքնուկը:— Նույնիսկ ջահել օրերին ես, միևնույն է, չէի կարողանա կարդալ: Բայց ինձ թվում է, որ գրությունը փոխվել է: Ասա ինձ, Բենիամին, Յոթ Պատվիրանները նույնն են, թե չէ:

Կյանքում առաջին անգամ Բենիամինը խախտեց իր օրենքը և բարձրաձայն կարդաց պատի գրությունը: Այնտեղ ոչինչ չկար, միակ Պատվիրանից բացի.

ԲՈԼՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՀԱՎԱՍԱՐ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ՈՐՈՇ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԱՎԵԼԻ ՀԱՎԱՍԱՐ ԵՆ, ՔԱՆ ՄՅՈՒՍՆԵՐԸ

Դրանից հետո արդեն զարմանալի չթվաց, որ հաջորդ օրն աշխատանքները վերահսկող բոլոր խոզերը մտրակներ ունեին: Զարմանալի չթվաց, որ խոզերը ռադիոընդունիչ են գնել, հեռախոս են անցկացնում և բաժանորդագրվել են «Զոն Բուլ», «Դեսից-դենից» և «Դեյլի միրոր» թերթերը: Զարմանալի չթվաց, որ Նապոլեոնը պարտեզում զբոսնում է ծխամորճը բերնին, և որ խոզերը պահարանից հանել ու հագնում են միստր Զոնզի շորերը: Նապոլեոնը սև բաճկոն, որսորդական անդրավարտիք ու կաշվե ոտնակալներ էր հագնում, իսկ իր սիրելի մերունը՝ միսիս Զոնզի կիրակնօրյա մետաքսե զգեստը:

Մեկ շաբաթ անց ֆերմա ժամանեցին մի քանի երկանիվ կառքեր: Հարևան ֆերմերների պատվիրակությունը հրավիրված էր ստուգայցի: Ամբողջ ֆերման ուսումնասիրելով, նրանք իրենց հիացմունքը հայտնեցին տեսածով և մանավանդ՝ հողմաղացով: Անասուններն այդ ժամանակ զբաղված էին շաղգամի արտը քաղհանելով: Նրանք ջանասիրաբար աշխատում էին, խուսափելով հողից կտրել մռութները, չիմանալով՝ խոզերից ավելի վախենալ, թե մարդկանցից:

Այդ երեկո տնից բարձր ծիծաղ ու երգեցողություն լսվեց: Խառը ձայները հանկարծ շարժեցին անասունների հետաքրքրասիրութ-

յունը: Ինչ էր այնտեղ կատարվում այժմ, երբ անասուններն ու մարդիկ առաջին անգամ հանդիպում էին որպես հավասարներ: Միասնական մղումով նրանք սկսեցին հնարավորին չափ անձայն սողոսկել տան հետևի այգին:

Դռնակի մոտ նրանք կանգ առան, վախենալով անցնել, բայց երեքնուկը նրանց առաջնորդեց ներս: Կճղակների ծայրերին նրանք մոտեցան տանը, և այն անասունները, ում հասակը բավարարում էր, ներս նայեցին հյուրասենյակի պատուհանից: Երկար սեղանի շուրջ նստած էին Հինգ-վեց ֆերմերներ և նույնքան բարձրաստիճան խոզեր: Նապոլեոնը գրավում էր սեղանի գլխի պատվավոր տեղը: Խոզերն իրենց աթոռներին նստած էին միանգամայն անբռնազբոս: Բոլորն ակներևաբար մի պահ ընդհատել էին թղթախաղը կենաց ասելու համար: Մի մեծ սափոր փոխանցվում էր մեկից մյուսին, թարմացնելով գավաթների պարունակությունը: Պատուհանից նայող ապշահար անասուններին ոչ ոք չէր նկատել:

Ֆոքսվուդի միստր Փիլքինգտոնը ոտքի կանգնեց, գավաթը ձեռքին: Քիչ անց, ասաց նա, ինքը ներկաներին խնդրելու է կենաց խմել: Սակայն նախքան այդ ինքն իր պարտքն է համարում մի քանի խոսք ասել:

Ինքը, ինչպես և, անկասկած, բոլոր ներկաները, մեծագույն գոհունակությամբ է ընդունում այն փաստը, որ կասկածամտության և թյուրիմացությունների շրջանն ի վերջո ավարտված է: Եղել է ժամանակ, իհարկե, ներկաները չեն հարել նման հայեցակետերի, բայց եղել է ժամանակ, երբ Անասնաֆերմայի մեծապատիվ տերերը հարևան մարդկանց մոտ, ինքը չէր ասի թշնամական, համենայն դեպս որոշ չափով անբարյացակամ վերաբերմունք էին հարուցում: Եղել են դժբախտ միջադեպեր, հաճախ տարբեր տեսակի տարաձայնություններ են ծագել: Խոզերին պատկանող ֆերմայի գոյությունը համարվել է աննորմալ և շրջապատի համար գաղափարապես վտանգավոր: Շատ ֆերմերներ, առանց նյութի մեջ խորանալու, համարել են, որ նման ֆերմայում տիրելու է թողտվության ու անկարգապահության ոգին: Նրանց անհանգստացրել է սեփական անասունների և անգամ աշխատավորների վրա դրա թողած հնարավոր ազդեցությունը: Սակայն այժմ բոլոր նման կասկածները ցրված են: Այսօր, ընկերների հետ այցելելով Անասնաֆերման և սեփական աչքերով ուսումնասիրելով դրա ամեն մի թիզը, ինքը տեսավ ոչ միայն ամենաժամանակակից մեթոդների կիրառություն, այլև այնպիսի մի կարգապահություն, որը կարող է օրինակ ծառայել բոլոր մնացած ֆերմերների համար: Ինքը չի մեղանչի ճշմարտության դեմ, եթե ասի, որ Անասնաֆերմայի ստորին անասուններն ավելի շատ են աշխատում և ավելի

քիչ կեր են ստանում, քան երկրի ցանկացած այլ անասուն: Հիրավի, ինքը, իր ընկերների հետ միասին, այսօրվա տեսածից շատ բան մտադիր է անմիջապես ներմուծել իրենց ֆերմաներում:

Ինքը ուզում է ավարտել, կրկին անգամ շեշտելով, որ Անասնաֆերմայի և իր հարևանների միջև հաստատված բարեկամական զգացումները միանգամայն օրինաչափ են: Մարդկանց և խոզերի միջև շահերի որևէ ընդհարում երբեք չի եղել և չպիտի լինի: Նրանց դժվարություններն ու պայքարն ընդհանուր են: Չէ որ աշխատուժի հետ կապված պրոբլեմներն ամենուր միևնույնն են: Այստեղ պարզ դարձավ, որ միստր Փիլքինգտոնը մտադրվում է խնամքով պատրաստված մի սրամտություն անել, բայց հրճվանքից մի պահ չէր կարողանում այն արտաբերել: Մի քանի անգամ փղձկալով, որից նրա բազմաթիվ կզակները շառագունեցին, նա վերջիվերջո կարողացավ ասել. «Եթե դուք ստիպված եք զսպել ձեր ստորին անասուններին, մենք էլ մեր ստորին դասակարգերն ունենք»: Այդ սրամտությունից սեղանը պոռթկաց ծիծաղով, իսկ միստր Փիլքինգտոնը նորից խոզերին շնորհավորեց ֆերմայի ցածր օրաբաժինների, երկար աշխատաժամերի և ընդհանուր երեսառածության բացակայության համար:

Վերջապես, ասաց նա, ժամանակն է ոտքի կանգնել և լցնել գավաթները: «Պարոնայք», եզրափակեց միստր Փիլքինգտոնը, «պարոնայք, ես առաջարկում եմ խմել Անասնաֆերմայի բարգավաճման կենացը»:

Սենյակը լցվեց խանդավառ բացականչություններով ու դոփյունով: Նապոլեոնն այն աստիճան շոյված էր, որ, տեղից ելնելով, սեղանը շրջանցեց, իր գավաթը Փիլքինգտոնի հետ չխկացնելու համար: Երբ իրարանցումն ավարտվեց, Նապոլեոնը, որը մնացել էր կանգնած, տեղեկացրեց, որ ինքն էլ մի քանի խոսք ունի ասելու:

Ինչպես Նապոլեոնի բոլոր ճառերը, այս մեկն էլ կարճ էր ու տեղին: Նա նույնպես ասաց, որ ուրախ է տեսնել փոխադարձ կասկածամտության դարաշրջանի ավարտը: Երկար ժամանակ տարածված էր այն տեսակետը,— նա հիմք ուներ կարծելու, որ դա չարակամ թշնամիների բանսարկության հետևանքն է,— թե իր և իր գործընկերների աշխարհայացքը քայքայիչ և անգամ հեղափոխական տարրեր է պարունակում: Նրանց վերագրում էին հարևան ֆերմաների անասուններին ապստամբության հրահրելու նկատառումներ: Դրանից մեծ սուտ դժվար է հորինել: Նրանց միակ ցանկությունն ինչպես այժմ, այնպես և անցյալում, հարևանների հետ խաղաղ և գործնական հարաբերությունների պահպանումն է: Այս ֆերման, որը պատիվ ունի ղեկավարելու ինքը, կոոպերատիվ հաստատություն է: Այդ ապացուցող իրավական փաստաթղթերը, որոնք գտնվում են իր մոտ, հանդիսանում են բոլոր խոզերի միասնական սեփականությունը:

Հավատալով, որ նախկին կասկածամտությունը հաղթահարված .. ֆերմայում, այդուհանդերձ, մի շարք միջոցառումներ են ձեռնարկվել, որոնք պիտի ծառայեն վստահության հետագա ամրապնդմանը: Անասունների միջև մինչ այդ տարածված էր իրար դիմելու «ընկեր» հիմար ձևը: Այսուհետև այն հայտարարվում է ապօրինի: Կար նաև տարօրինակ մի սովորույթ, որի ծագումն անհայտ է, ամեն կիրակի շարքով անցնել այգում գամված մի ծեր խոզի գանգի կողքով: Դա նույնպես պիտի դադարեցվի: Այցելուները նկատած կլինեն այգում ծածանվող կանաչ դրոշը: Նրանց ուշադրությունը հրավիրվում է այն փաստին, որ նախկինում դրոշի վրա տեղ գտած սպիտակ կճղակն ու պոզն այլևս չկան: Այսուհետև դրոշը լինելու է պարզապես կանաչ:

Նապոլեոնն ավելացրեց, որ ընդամենը մի ճշտում է ուզում մտցնել միստր Փիլքինգտոնի սքանչելի հարևանական ճառի մեջ: Միստր Փիլքինգտոնն իր խոսքում բազմիցս անդրադարձավ «Անասնաֆերմային»: Նա, իհարկե, չէր կարող իմանալ, քանի որ Նապոլեոնն առաջին անգամ է դա ազդարարում, որ «Անասնաֆերմա» անունը վերացվում է: Այսուհետև այն կոչվելու է «Մենոր ֆերմա», որն, ըստ նրա, հանդիսանում է ֆերմայի իսկական և ստույգ անվանումը:

— Պարոնայք,— եզրափակեց Նապոլեոնը,— ես առաջարկում եմ նույն կենացը, սակայն փոքր-ինչ ձևափոխված: Բերնեբերան լցրեք ձեր գավաթները: Խմենք Մենոր ֆերմայի բարգավաճման կենացը:

Հետևեցին նույն սրտաբուխ բացականչությունները, և գավաթները մինչև վերջ խմվեցին: Մինչ դրսի անասունները դիտում էին, նրանց թվաց, որ ներսում տարօրինակ մի բան է կատարվում: Ի՞նչ էր պատահել խոզերի դեմքերին: Ծեր երեքնուկի մշուշոտ աչքերը դառնում էին մեկից մյուսին: Ոմանք հինգ կզակ ունեին, ոմանք՝ չորս, ոմանք՝ երեք: Սակայն ինչ-որ բան կարծես երերար ու հալչեր: Ծափահարությունից հետո վերսկսվեց ընդհատված թղթախաղը, և անասունները լուռ ու մունջ հեռացան:

Հազիվ էին նրանք մի քսան քայլ հեռացել, երբ հանկարծ կտրուկ կանգ առան: Տնից սոսկալի աղաղակ էր գալիս: Հետ նետվելով, անասունները նորից հպվեցին պատուհանին: Ներսում կատաղի վեճ էր բռնկվել: Բոլորը գոռում էին, գազազած ինչ-որ բան հերքում, խփում սեղանին ու կասկածոտ հայացքներ փոխանակում: Պատճառը կարծես թե այն էր, որ Նապոլեոնն ու միստր Փիլքինգտոնը միաժամանակ ագռավի մեկնոց էին դրել:

Լսվում էր տասներկու գազազած ու միանման ձայն, և արդեն պարզ էր, թե ինչ է կատարվել խոզերի դեմքերի հետ: Դրսի անասունները նայում էին մեկ խոզին, մեկ մարդուն, ապա նորից խոզին ու նորից՝ մարդուն, սակայն անկարող էին արդեն մեկին մյուսից տարբերել:

ՌԻՉԱՐԴ ԲԱԽ

ՋՈՆԱԹԱՆ ԼԻՎԻՆԳՍԹՈՆ ՃԱՅԸ

Իսկական Ջոնաթան Ճային, որն ապրում է յուրաքանչյուրիս մեջ:

Անգլերենից թարգմանեց
ՆԱԻՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Առավոտ էր, ծագող արևը ոսկեշողում էր հանդարտ ծովի մեղմ ծփանքում: Ափից մի մղոն հեռավորության վրա ինչ-որ ձկնորսանավ ակոսեց ջուրը, և Նախաճաշող Երամի ճիչը ակնթարթորեն ծակեց օդը, մինչ հազարավոր ճայերի ամբոխը կխռնվեր այնտեղ՝ ճարպկորեն իրար խաբս տալու ու գզվռտվելու կերակրի կտորտանքի համար: Սկսվում էր ևս մի հոգսաշատ օր:

Հեռվում, ձկնորսանավից ու ափից անդին, միայնակ ու ինքնամոռաց մարզվում էր Ջոնաթան Լիվինգսթոն Ճայը: Հարյուր ոտնաչափ բարձրության վրա նա իջեցրեց թաղանթավոր թաթերը, բարձրացրեց կտուցը և լարվեց՝ թևերը ոլորուն կորագծի դժվարին, ցավեցնող դիրքում պահելու համար: Այդ կլոր դիրքը նշանակում էր, որ թռչելու էր դանդաղ, և հիմա նա դանդաղեցնում էր այնքան, մինչև որ քամին շոյում էր դեմքը, մինչև օվկիանոսը հանդարտվում էր ցածում: Ուժեղ կենտրոնացումից նա աչքերը կկոցեց, շունչը պահեց, ճիգ գործադրեց՝ մեկ... էլի մի անգամ... քիչ էլ... մի մատնաչափ և... նորից... կորագիծ... Նրա փետուրները ցնցվեցին, նա կանգ առավ և ընկավ:

Ճայերն, ինչպես գիտեք, երբեք չեն երերում և երբեք կանգ չեն առնում: Օդում կանգ առնելը նրանց համար ամոթ է ու խայտառակություն:

Բայց Ջոնաթան Լիվինգսթոն Ճայը չէր ամաչում, այլ կրկին լարում էր թևերը՝ պահելով դրանք կորագծի դժվարին, դողացող դիրքում, դանդաղում էր, ավելի դանդաղում և նորից կանգ առնում. նա սովորական թռչուն չէր:

Ճայերի մեծ մասի մտքով իսկ չի անցնում սովորել ավելին, քան թռիչքի ամենապարզունակ գործողությունը՝ ափից մինչև կերը հասնելն ու վերադառնալը: Ճայերի մեծ մասի համար էականը թռիչքը չէ, այլ կերը: Իսկ այս ճայի համար էականը կերը չէր, այլ՝ թռիչքը: Աշխարհում ամեն ինչից ավելի Ջոնաթան Լիվինգսթոն Ճայը թռչել էր սիրում:

Նա գտնում էր, որ այս մտածելակերպն իրեն անընդունելի կդարձնի մյուս թռչունների համար: Նույնիսկ ծնողները ահաբեկված էին, որ Ջոնաթանն ամբողջ օրեր է կորցնում մենության մեջ՝ փորձեր անելով, հարյուրավոր անգամներ սահելով ծովի մակերեվույթի վրայով:

Նա չգիտեր ինչու է այդպես, բայց ծովի մակերևույթից իր թևաբացվածքի կեսից ավելի փոքր բարձրությամբ թռչելիս ինքը կարողանում էր ավելի քիչ լարվելով առավել երկար մնալ օդում: Նրա ճախրանքներն ավարտվում էին ոչ թե սովորական ճողփյու-

նով, այլ երկար ձգվող հետքով, որ իրենց ետևից գծում էին նրա ոտքերը՝ ծովի մակերեսին շփվելով: Սկսելով սահասավառնել ու ոտքերն իրեն քաշած վայրէջքի գալով ափում՝ նա շարունակում էր ընթացքը՝ սահքի երկար հետագիծը թողնելով ավազի մեջ: Նրա ծնողներն իսկապես խիստ ահաբեկված էին:

— Ինչու, Ջոն, ինչու,— հարցնում էր մայրը,— ինչու է բոլորի նման լինելն այդքան դժվար: Ինչու չես կարողանում ապրել ցածր թռչելը ձկնկուլներին ու ալբատրոսներին թողնելով: Ինչու ոչինչ չես ուտում, փետուր ու ոսկոր ես մնացել, որդիս:

— Թող որ փետուր ու ոսկոր դառնամ, մայրիկ, ես ուզում եմ իմանալ, թե ինչ կարող եմ անել օդում և ինչ չեմ կարող. սեա և բոլորը, ես միայն ուզում եմ իմանալ:

— Լսիր, Ջոնաթան,— ասում էր հայրը ոչ անբարյացակամորեն,— ձմեռն այնքան էլ հեռու չէ, ձկնորսանավեր շատ քիչ կլինեն, իսկ մակերևույթի ձկները կլողան դեպի ծովի խորքերը: Եթե անպատճառ ուզում ես սովորել, սովորիր, թե ինչ է կերը և ինչպես պիտի այն հայթայթել: Թռչելն ընդհանրապես հրաշալի է, բայց, ինքդ էլ գիտես, դրանով չես կշտանա: Մի մոռացիր նպատակը՝ թռչում ես, որ ուտես:

Ջոնաթանը հնազանդորեն գլխով արեց: Հաջորդ մի քանի օրերը նա փորձում էր լինել մյուս ճայերի նման, նա իսկապես փորձում էր. բարձր ճչում էր և կառանացցերի ու ձկնորսանավերի շուրջը պտտվելով՝ կռվում երամի մյուս ճայերի հետ, ձկան ու հացի փշրանքների համար ջուրը սուզվում, բայց ոչինչ չէր ստացվում:

Որքան անմիտ է այս ամենը, մտածեց նա, այնքան դժվարությամբ որսացած անձրուկը իրեն հետապնդող քաղցած ծեր ճային շպրտելով: Այս ամբողջ ժամանակը ես կարող էի ծախսել թռչել սովորելու վրա, դեռ այնքան բան կա սովորելու:

Կարճ ժամանակ անց Ջոնաթան Ճայը կրկին մենակ էր ծովի հեռուներում՝ քաղցած, երջանիկ, հարցախույզ:

Նա ուսումնասիրում էր թռիչքի արագությունը և մարզումների մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին ավելին իմացավ, քան ամենաարագընթաց ճայն աշխարհում:

Հազար ոտնաչափ բարձրությունից հնարավորին չափ ուժգին թափահարելով թևերը՝ նա նետվեց խիստ կտրուկ խոյաթռիչքի՝ սլանալով դեպի ծովը, և հասկացավ, թե ինչու ճայերն այդպիսի հզոր խոյաթռիչքներ չեն գործում: Վեց վայրկյանի չափ նա թռչում էր ժամում յոթանասուն մղոն արագությամբ, որից թևերն անհետացել էին շարժման թրթռոցի մեջ:

Ծայրահեղ քրտնաջան աշխատանքով հասնելով իր հնարավորությունների վերջին սահմանին՝ ավելի բարձր արագությամբ թռչելիս նա կորցնում էր կառավարումը:

Նա բարձրանում էր հազար ոտնաչափ, ավելի ուժգին թափ առնում և, թափահարելով թևերը, նետվում ուղղահայաց խոյաթռիչքի: Վեր թափահարելիս ձախ թևն ամեն անգամ արգելակվում

էր, ու նա կտրուկ թավալվում էր դեպի ձախ, ապա, հավասարակշռելով, արգելակվում էր աջը, և նա, ասես տենդի մեջ ցնցվելով, խելահեղորեն թավալգլոր տալով պտույտէջք էր գործում դեպի աջ:

Չնայած իր բոլոր ջանքերին, դեպի վեր թևաթափահարումը չէր ստացվում: Նա տաս անգամ փորձեց և ամեն անգամ, երբ անցնում էր ժամում յոթանասուն մղոն արագությունից, վերածվում էր չկառավարվող փետրագնդի և գահավիժում ջրի մեջ:

Ողջ գաղտնիքն այն է, ամբողջովին թրջվելուց հետո վերջապես հասկացավ նա, որ բարձր արագությունների դեպքում հարկավոր է թևերն անշարժ պահել՝ հասցնել ժամում հիսուն մղոնի, ապա պահել անշարժ:

Երկու հազար ոտնաչափ բարձրության վրա նա նորից փորձեց. կտուցը ցած պարզած, թևերն անշարժ տարածած նետվելով խոյաթռիչքի՝ մի րոպե անց նա արդեն գերազանցեց ժամում հիսուն մղոն արագությունը: Դա հսկայական լարում պահանջեց, բայց նրան հաջողվեց այդ անել: Սուրալով ժամում իննսուն մղոն արագությամբ՝ տաս վայրկյանի չափ նա գրեթե անտեսանելի էր: Ջոնաթանը ճայերի թռիչքային արագության համաշխարհային ռեկորդ սահմանեց:

Բայց հաղթանակը կարճ տևեց: Հենց որ նա փորձեց դուրս գալ խոյաթռիչքից, հենց փոխեց թևերի դիրքը, վայրկենապես հայտնվեց անկառավարելիության նույն աղետալի վիճակի մեջ և, ժամում իննսուն մղոն արագությամբ թռչելիս մի կողմ շպրտվեց ուժանակի պես: Ջոնաթան Ճայը չդիմացավ, թավալվեց օդում ու գահավիժեց քարից կոշտ ջրի մեջ:

Արդեն խոր գիշեր էր, երբ նա ուշքի եկավ ու լուսնի լույսով սկսեց լողալ օվկիանի մակերևույթով: Թևերը կապարի պես ծանրացած էին, բայց անհաջողության բեռն ավելի ծանր էր նրա թիկունքին: Հուսահատված, նա ուզում էր, որ այդ բեռն ի զորու լիներ իրեն ծովի հատակը տանելու, և այնժամ ամեն ինչ կվերջանար:

Որքան էլ խորն էր սուզվում ջրի մեջ, միևնույն է, ներսում անընդհատ մի տարօրինակ խուլ ձայն էր հնչում. «Ելք չկա: Ես ճայ եմ, իմ կարողությունները սահմանափակ են: Եթե ես ստեղծված լինեի թռչելու մասին շատ բան իմանալու համար, ապա ուղեղի փոխարեն գլխումս հաշվիչ մեքենա-կունենայի: Եթե ծնված լինեի արագ թռչելու համար, բազեի կարճ թևեր կունենայի և ձկների փոխարեն մկներով կսնվեի: Հայրս իրավացի էր: Ես պետք է մոռանամ այս խենթությունը, պետք է թռչեմ տուն՝ Երամի մոտ և գոհ լինեմ, որ այնպիսին եմ, ինչպիսին կամ՝ խեղճ, ավելիին անընդունակ ճայ»:

Ճայնը մարեց, և Ջոնաթանը հնազանդվեց նրան: Գիշերով ճայի տեղը ափն է. ու նա երդվեց այսուհետև սովորական ճայ լինել: Այդպես բոլորի համար էլ ավելի լավ կլինի:

Նա հոգնած պոկվեց գիշերային ծովի մթամած ջրերից և ուղղվեց դեպի ափ, գոհ, որ սովորել էր ուժերը խնայող ցածր թռիչքներ գործել:

Բայց՝ ոչ, մտածեց նա: Ես ստեղծված եմ լինելու այնպիսին,

ինչպիսին որ էի, օժտված այն ամենով, ինչ արդեն տրված էր ինձ: Ես ճայ եմ, նման մյուս բոլոր ճայերին, ու նրանց նման էլ պիտի թռչեմ: Եվ նա մի կերպ բարձրացավ ու դեպի ափ շտապելով սկսեց թևերը թափահարել:

Մյուս բոլոր երամակիցների նման լինելու այդ որոշումից նա իրեն զարմանալիորեն թեթևացած զգաց: Այլևս չեն լինի այն խոչընդոտները, որ ստիպում էին իրեն սովորել: Չի լինի պայքար, չի լինի և պարտություն: Պարզապես հրաշալի էր ոչինչ չմտածել ու խավարի միջով սլանալ դեպի առափնյա լույսերը:

— Խավար,— տագնապալի հնչեց խուլ, բեկբեկուն ձայնը,— ճայերը երբեք չեն թռչում խավարում:

Ջոնաթանն ուշադրություն չդարձրեց: Ինչ հաճելի է, մտածեց նա: Լուսինն ու աստղերը առկայծում էին ջրում, փոքրիկ փարոսող ցոլքեր սփռելով գիշերվա մեջ, ամեն ինչ այնպես լուռ էր ու խաղաղ...

— Իջիր, ճայերը երբեք չեն թռչում խավարում: Եթե դու ծնված լինեիր խավարում թռչելու համար, բվի աչքեր կունենայիր. հաշվիչ մեքենա՝ ուղեղի փոխարեն ու բազեի կարճ թևեր:

Գիշերային մթնում, հարյուր ոտնաչափ բարձրության վրա Ջոնաթան Լիվինգսթոն Ճայի միտքն հանկարծ առկայծեց: Նրա ընկճվածությունը, նրա բոլոր վճիռները վայրկենապես չքացան:

Կարճ թևեր, բազեի կարճ թևեր:

Ահա լուծումը: Ինչ հիմարն եմ եղել ես. ողջ պահանջվածը փոքրիկ, շատ փոքրիկ թևն է, ողջ պահանջվածը թևերը ծալելն է ու միայն դրանց ծայրերով թռչելը: Կարճ թևեր:

Նա երկու հազար ոտնաչափ բարձրացավ գիշերային ծովից և, անհաջողության կամ մահվան մասին վայրկյան իսկ չմտածելով, թևերի լայն մասն ամուր ծալելով կպցրեց մարմնին, միայն թևածայրերի սուր ու կեռ դաշույնները պարզեց քամուն ու նետվեց ուղղահայաց խոյաթռիչքի:

Քամին հրեշային շաչյունով ոռնում էր նրա շուրջը: Ժամում յոթանասուն մղոն, ինսուն, հարյուր քսան, ավելի արագ: Այժմ, երբ նա թռչում էր ժամում հարյուր քառասուն մղոն արագությամբ, թևերի լարումն ավելի փոքր էր քան նախկին յոթանասունի դեպքում, ու հիմա թևածայրերի նվազագույն լարումով նա հանգիստ դուրս եկավ խոյաթռիչքից ու լուսնի լույսի տակ գորշ արկի պես սլացավ ալիքների վրայով:

Նա փակեց աչքերը քամուն ընդդեմ և խենթացավ ուրախությունից. ժամում հարյուր քառասուն մղոն և՝ առանց կառավարումը կորցնելու: Եթե երկու հազարի փոխարեն հինգ հազար ոտնաչափ բարձրությունից նետվեմ խոյաթռիչքի, հետաքրքիր է՝ ինչ արագությամբ...

Քիչ առաջվա նրա երդումներն իսպառ մոռացված էին ու հեռու քշված քամու հուժկու թափի հետ: Դրանք խախտելը նա ամենևին էլ մեղք չէր համարում: Այդպիսի վճիռներն այն ճայերի համար են միայն, որոնց բավարարում է շարքային լինելը: Նրա համար, ում միտքն առնչվում է կատարյալին, նման բաները նշանակություն չունեն:

Լուսաբացին Ջոնաթանը վերսկսեց մարզումները: Հինգ հազար ոտնաչափ բարձրությունից ծովի կապույտ հարթության մեջ ձըկնորսանավերը նրան տաշեղներ էին թվում, Նախաճաշող երամը՝ պտտվող փոշեհատիկների թեթև ամպ:

Նա առույգ էր, հաճույքից փոքր-ինչ դողահար, հպարտ, որ հաղթահարել է սարսափը: Նա ծալեց թևերը, դրանց կարճ, անկյունաձև ծայրերը միայն պարզեց ու շեշտակի սլացավ դեպի ծովի հեռուները: Անցնելով չորս հազար ոտնաչափ, նա հասավ առավելագույն արագության: Բամին վերածվել էր հնչյունների խիտ, շրթռացող պատի, որին հակառակ ավելի արագ թռչելն այլևս անկարելի էր: Այժմ նա շեշտակի ցած էր սուրում ժամում երկու հարյուր տասնչորս մղոն արագությամբ: Նա լավ գիտեր, որ եթե նման արագությամբ թռչելիս թևերը հանկարծ բացվեին, ապա ինքը ցրիվ կգար միլիոնավոր մանր կտորների: Բայց, միևնույն է, արագությունն ուժ է, արագությունը բերկրանք է, արագությունը կատարյալ գեղեցկություն է:

Հազար ոտնաչափ բարձրությունից թփթփացնելով թևածայրերն ու լուծվելով ահռելի քամու մեջ, նա սկսեց դուրս գալ խոյաթռիչքից: Ուղիղ իր դիմաց, արագորեն կրճատվող տարածության մեջ, պտտվում ու մեծանում էին նավն ու ճայամբոխը:

Նա չկարողացավ կանգ առնել, նա չգիտեր անգամ, թե ինչպես կարելի է շրջվել նման արագության դեպքում:

Բախումը վայրկենական մահ էր:

Նա փակեց աչքերը:

Դա պատահեց առավոտյան, արևածագից անմիջապես հետո: Սուրալով ժամում երկու հարյուր տասներկու մղոն արագությամբ, աչքերը փակ, քամու ու փետուրների խլացուցիչ վժժոցով Ջոնաթան Լիվինգսթոն Ճայը շեշտակի մխրճվեց Նախաճաշող երամի մեջ. Այս անգամ Բախտի Ճայը ժպտաց նրան, և ոչ ոք չզոհվեց:

Խոյաթռիչքից դուրս գալու ժամանակ, կտուցը պարզած դեպի երկինք, նա դեռևս սլանում էր ժամում հարյուր վաթսուն մղոն արագությամբ: Երբ նա ընթացքը դանդաղեցրեց-հասցրեց ժամում քսան մղոնի և վերջապես նորից տարածեց թևերը, չորս հազար ոտնաչափ բարձրությունից նավը մի փոքրիկ կետ էր թվում ծովում:

Նրա կարծիքով դա հաղթանակ էր՝ ժամում երկու հարյուր տասնչորս մղոն, առավելագույն արագություն ճայի համար: Դա իսկական հեղաշրջում էր՝ մեծագույն, անկրկնելի պահ երամի պատմության մեջ և մի նոր սկիզբ Ջոնաթանի կյանքում: Նա միայնակ թռչում-գնում էր մարզումների և, ութ հազար ոտնաչափ բարձրությունից ծալելով թևերն ու նետվելով խոյաթռիչքների, միանգամից ձեռնամուխ եղավ շրջադարձներ անել սովորելուն:

Նա գիտեր, որ նման ահռելի արագության դեպքում թևածայրի մեկ-մի փետուրի աննշան շարժումով իսկ կարելի է ողորկ ու կոր աղեղ առանալ: Նա վաղուց գիտեր դա, բայց և հասկանում էր, որ նման արագության դեպքում մի ավելորդ փետուրի շարժումն իսկ հրացանի

գնդակի պես կպտտեցներ իրեն... և, այնուամենայնիվ, Ջոնաթանն առաջին ճայն էր աշխարհում, որ ձևավոր թռիչքներ էր կատարում:

Ժամանակ չկորցնելով մյուս ճայերի հետ շաղակրատելու վրա, այդ օրը մայրամուտից հետո էլ դեռ նա թռչում էր: Այդ նա էր, որ հայտնագործեց ճայերի մահվան օղակը, դանդաղեցված և բազմապտույտ գալարաթռիչքները, հակառակ հրումը, պտույտընթացքն ու հակառակ պտույտէջքը:

Խոր գիշեր էր, երբ Ջոնաթան Ճայը մոտեցավ ափում ծվարած երամին: Նա սարսափելի հոգնած էր և գլխապտույտ էր զգում: Եվ, չնայած դրան, վայրէջքի գալով՝ ոգևորության մեջ նա մահվան օղակ կատարեց, վայրկենական պտույտ գործելով ափ հասնելուց անմիջապես առաջ: Երբ նրանք իմանան կատարված հեղաշրջման մասին, մտածեց նա, կխենթանան երջանկությունից: Այժմ որքան ավելին է ապրելը: Ձկնորսանավերի ու ափի արանքում միապաղաղ կերպով քարշ գալու փոխարեն մեր կյանքն այժմ իմաստ կունենա: Մենք կարող ենք բարձրանալ տգիտությունից, կարող ենք դառնալ խելամիտ, հմուտ ու կատարյալ արարածներ: Մենք կարող ենք լինել ազատ, կարող ենք սովորել թռչել:

Գալիքը բժժում էր խոստումնալից ու պայծառ-պայծառ շողշողում:

Երբ նա ափ իջավ, ճայերը հավաքվել էին Խորհրդի Ափում և, ակնհայտորեն, վաղուց էին հավաքվել: Իրականում նրանք իրեն էին սպասում:

— Ճայ Ջոնաթան Լիվինգսթոն, կանգնիր կենտրոնում: — Տոհմապետի խոսքերը հնչեցին ծայրահեղ հանդիսավորությամբ: Կենտրոնում կանգնելը կամ գերագույն անարգանքի, կամ գերագույն պատվո նշան էր: Վերջինս միջոց էր, որով ճայերը պատվում էին իրենց մեծագույն առաջնորդներին: Դե իհարկե, մտածեց նա, Նախաճաշող երամն առավոտյան վկա եղավ կատարվածին, նրանք տեսան Հեղաշրջումը: Բայց ինձ պատիվներ պետք չեն, ես ցանկություն չունեմ առաջնորդ դառնալու, ես միայն ուզում եմ կիսել նրանց հետ իմ իմացածը. ցույց տալ նրանց մեր առջև բացվող հորիզոնները: Նա քայլ արեց դեպի առաջ:

— Ճայ Ջոնաթան Լիվինգսթոն, — ասաց Տոհմապետը, — կանգնիր կենտրոնում ցեղակիցներիդ կողմից անարգվելու համար:

Ասես տախտակով հարվածեցին նրան: Ծնկները թուլացան, փետուրները կախ ընկան, աղմուկ էր ականջներում: Կենտրոն գա անարգվելու համար: Անկարելի է: Իսկ Հեղաշրջումը նրանք չեն հասկացել: Նրանք իրավացի չեն, իրավացի չեն:

— ... իր թեթևամիտ անպատասխանատվության համար — հանդիսավորությամբ ծորում էր ձայնը, — Ճայերի Տոհմի արժանապատվությունն ու սովորությունները ոտնահարելու համար...

Անարգանքի կենտրոնում լինելը նշանակում էր, որ նա վտարվելու էր ճայերի երամից և աքսորվելու մենակեցության Հեռավոր ժայռերը:

— ... օրերից մի օր, Ջոնաթան Լիվինգսթոն Ճայ, դու կհասկանաս, որ անպատասխանատվությունը չի վարձատրվում: Կյանքը իմաստն անիմանալի է և անհասանելի, բացառությամբ նրա, ո

մենք աշխարհ ենք եկել ուտելու համար, որպեսզի կենդանի մնանք այնքան ժամանակ, որքան կարող ենք:

Ճայը երբեք չի հակաճառում Երամի Խորհրդին, բայց ահա հնչեց Ջոնաթանի ձայնը:

— Անպատասխանատվություն: Եղբայրներ, — բացականչեց նա, — ո՞վ է իրեն ավելի պատասխանատու զգում, քան այն ճայը, որը հետամուտ է գտնելու կյանքի իմաստը, նրա բարձրագույն նպատակը: Հազարավոր տարիներ ի վեր մենք չափչփում ենք ծովը՝ ձկան գլուխ որոնելով, բայց այժմ մեր կյանքն իմաստ կունենա՝ սովորել, հայտնագործել, լինել ազատ: Թույլ տվեք ինձ, գեթ մեկ հնարավորություն տվեք ցույց տալ ձեզ իմ սովորածը:

Երամն ասես քար էր կտրել:

— Եղբայրությունը քանդված է, — միաձայն շեշտեցին ճայերը և միահամուռ կերպով հանդիսավորությամբ փակեցին ականջներն ու թիկունքները դարձրին նրան:

Իր մնացյալ օրերը Ջոնաթանն անց էր կացնում մենության մեջ: Նա թռչում-գնում էր Հեռավոր ժայռերից շատ ու շատ անդին: Մենակությունը չէ, որ տխրեցնում էր նրան, այլ այն, որ ճայերը չուզեցին հավատալ թռիչքի հրաշքին, այն վեհ կյանքին, որ իրենց էր լինելու, չուզեցին բացել աչքերը և տեսնել:

Նա օրը նոր բան էր սովորում: Սովորեց, օրինակ, շեշտակի թռչահոսուն խոյաթռիչքների միջոցով ծովում տաս ոտնաչափ խորությունից համեղ ու հազվագյուտ ձկներ որսալ և այլևս ձկնորսանավերի ու չոր փշրանքների կարիքը չուներ: Նա սովորեց օդում մնել. գիշերով ուղղություն վերցնել ափից փչող քամուն հակառակ՝ հարյուրավոր մղոններ հաղթահարելով արևամուտից մինչև արևածագ: Նույն ինքնատիրապետմամբ նա թռչում էր թանձր ծովամշուշի միջով ու նրանից բարձրանալով հասնում շլացուցիչ պայծառ երկնքին նույն այն ժամանակ, երբ մնացած ճայերը սեղմվում էին գետնին՝ չիմանալով, թե ինչ կա մշուշից ու անձրևից անդին: Նա սովորեց քամուն համընթաց թռչել՝ ցամաքի խորքը՝ համեղ միջատներով ճաշելու:

Մի ժամանակ հույսեր կապելով Երամի հետ՝ նա միայն մենություն գտնստակեց, բայց սովորեց թռչել և չէր ափսոսում այն գինը, որ վճարել էր դրա համար: Ջոնաթանը հասկացավ, որ ձանձրույթից, վախից ու տարությունից է, որ ճայերն այդքան քիչ են ապրում, ու երբ այդ ամենը կորցրեցին նրա հոգուց, նա երկար, իսկապես երջանիկ կյանք ապրեց:

Նրանք եկան երեկոյան և գտան Ջոնաթանին իր սիրած երկնքում մենակ հանգիստ ճախրելիս: Այդ երկու ճայերը, որ հայտնվեցին նրա թևերի մոտ, աստղերի պես շողշողում էին և փափուկ ու հաճելի ոճով ցոլարձակում գիշերային բարձր երկնակամարում: Ամենից հետաքրքրալին, սակայն, թռչելու նրանց հմտությունն էր. նրանք շարունակ շարժվում էին հստակ ու անփոփոխ պահելով իրենց ու Ջոնաթանի թևածայրերի միջև եղած մի մատնաչափ տարածությունը:

Առանց մի խոսքի Ջոնաթանը նրանց փորձության տարավ,

փորձություն, որին ոչ մի ճայ երբեք չէր դիմանա: Նա թեքեց թևերի դիրքը և այնքան դանդաղեցրեց ընթացքը, որ դրանից փոքր-ինչ ավելի դանդաղն անգամ անկման էր հավասար: Շողարձակող երկու թռչունները նույնպես դանդաղեցրին, ապա սահուն կերպով տեղում կասեցրին ընթացքը: Նրանք գիտեին դանդաղ թռչել:

Նա ծալեց թևերը, ճոճվեց և ժամում հարյուր ինն սուն մղոն արագությամբ ցած նետվեց խոյաթռիչքի: Նրանք էլ իր հետ սուրացին՝ վայրընթաց անթերի աստիճանաձև շարք կազմած:

Վերջապես նա շրջվեց և նույն արագությամբ ուղիղ նետվեց երկարատև ուղղահայաց դանդաղեցված գալարաթռիչքի: Նրանք ժպտալով գալարվեցին իր հետ:

Նա նորից անցավ հորիզոնական թռիչքի: Որոշ ժամանակ նա լուռ էր, հետո խոսեց.

— Հիանալի է, — ասաց նա,— ո՞վ եք դուք:

— Մենք քո երամից ենք, Ջոնաթան, մենք քո եղբայրներն ենք:

— Այդ խոսքերը հնչեցին մեղմ ու վստահ: — Մենք եկել ենք քեզ վերև տանելու, տանելու տուն:

— Ես Տուն չունեմ, ես երամ չունեմ, ես Աքսորյալ եմ: Մենք այժմ թռչում ենք դեպի Հողմերի Մեծ Լեռան գագաթը, այնինչ ես չեմ կարող այս ծեր մարմինը մի քանի հարյուր ոտնաչափից ավելի բարձրացնել:

— Կարող ես, Ջոնաթան, չէ՞ որ դու սովորել ես: Դու ավարտեցիր մի դպրոց, ժամանակն է մի ուրիշն սկսելու:

Իր ողջ կյանքում դա ցոլցլացել էր նրա խորքերում, և հիմա Ջոնաթան Ճայի միտքը հանկարծ լուսավորվեց: Նրանք ճիշտ էին: Ինքը կարող էր էլ ավելի բարձր թռչել, և, բացի այդ, տուն գնալու ժամանակն էր:

Նա մի վերջին երկար հայացք գցեց երկնքին, ապա կարոտով նայեց հիասքանչ, արծաթյա երկրին, ուր այնքան բան էր սովորել:

— Ես պատրաստ եմ, — ասաց նա վերջապես:

Եվ ահա Ջոնաթան Լիվինգսթոն Ճայը վեր բարձրացավ երկու առկայծող թռչունների հետ ու անհետացավ երկնքի անթափանց խավարում:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Ուրեմն սա՞ է երկինքը, մտածեց նա ինքն իրեն ժպտալով: Թերևս այնքան էլ հարգալից չէ դատել երկնքի մասին, երբ դեռ նոր ես հասել այնտեղ:

Այժմ, թողնելով երկիրը և երկու ադամանդափայլ ճայերի հետ թև-թևի բարձրանալով ամպերից էլ վեր, նա տեսավ, որ իր սեփական մարմինը ևս փոխվում-դառնում է նրանց պես շողշողուն: Դա, իհարկե, իր ոսկեգույն աչքերի առջև ապրած նույն երիտասարդ Ջոնաթանն էր, միայն թե փոխված արտաքին ձևերի մեջ:

Մարմինն էլի ճայի էր, բայց հիմա արդեն նա թռչում էր շատ ավելի լավ, քան թռել էր երբևէ: Այդ ինչ՞ու, մտածեց նա, կիսով

չափ քիչ լարվելով՝ ես հիմա թռչում եմ կրկնակի շատ ու կրկնակի արագ, քան լավագույն օրերիս երկրի վրա:

Նրա փետուրներն այժմ շողշողում էին ադամանդի սպիտակ փայլով, իսկ թևերը ողորկ էին, արծաթյա փայլեցրած թիթեղների պես անթերի: Նա հիացած սկսեց ուսումնասիրել դրանք, ուժը փորձել նոր թևերին:

Ժամում երկու հարյուր հիսուն մղոն թռչելիս նա զգաց, որ մոտեցել է հորիզոնական թռիչքի իր համար առավելագույն արագությանը: Ժամում երկու հարյուր յոթանասուներեք մղոն անցնելիս մտածեց, որ թռչում է այնքան արագ, որքան միայն կարող է ու մի քիչ հիասթափվեց: Ուրեմն նոր մարմնի կարողությունները նույնպես սահմանափակ էին, ու թեև դրանք շատ ու շատ անգամ գերազանցում էին իր իսկ ռեկորդը, բայց սահման այնուամենայնիվ կար և մեծ լարում կպահանջվեր այն հաղթահարելու համար: Երկնքում, մտածում էր նա, սահմաններ չպետք է լինեն:

Ամպերը մնացին հեռվում: Նրա ուղեկիցները բացականչեցին.

Երջանիկ վայրէջք, Ջոնաթան, — և անհետացան անսոսր երկնի խորքերում:

Ծովի վրայով նա թռչում էր դեպի կտրտված ափեզրը: Ժայռերի մոտ մի քանի մարզվող ճայեր էին ուրվագծվում: Հեռու հյուսիսում, հորիզոնին մոտ ճախրում էին ևս մի քանիսը: Նոր պատկերներ, նոր մտքեր, նոր հարցեր. ինչո՞ւ են ճայերն այսքան քիչ, Երկինքը պիտի որ լի լիներ ճայերի երամներով: Եվ ինչո՞ւ հանդարծ ինքն այսպես հոգնեց, չէ՞ որ ճայերը, ինչպես ընդունված է համարել, երբեք չեն հոգնում և չեն քնում երկնքում:

Որտեղ էր նա այդ լսել: Իր երկրային կյանքի հիշողություններն աստիճանաբար հեռանում էին: Նա, իհարկե, երկրում շատ բան էր սովորել, բայց մանրամասներն այժմ աղոտացել էին. ինչ-որ բան էր հիշում հանուն սննդի թռչելու մասին, Աքսորյալ լինելու մասին:

Ափեզրի մոտ մի խումբ ճայեր առանց բառ իսկ արտասանելու ընդառաջ եկան նրան: Նա զգաց միայն, որ սա տուն է և որ ինքը դանկալի է այստեղ: Դա նրա համար մեծ օր էր, օր, որի արևածագը նա վաղուց արդեն չէր հիշում:

Ափում վայրէջք կատարելու համար նա շրջվեց, մի մատնաչափ բարձրության վրա թևերը թափահարելով՝ կանգ առավ, ապա թեթևորեն իջավ ավազին: Մյուս ճայերը նույնպես իջան՝ և առանց փնտրուր իսկ շարժելու: Լուսաճերմակ թևերը տարածած՝ նրանք համաչափորեն ճոճվեցին օդում, ապա սկսեցին իրենց փետուրների կորությունն ինչ-որ կերպ փոփոխել այնքան, մինչև որ լրիվ կանգ առան: Նույն վայրկյանին էլ նրանց թաթերը դիպան գետնին: Դա հրաշալի ինքնակառավարում էր, բայց Ջոնաթանը շատ հոգնած էր այն կրկին փորձելու համար: Ափ հասնելուն պես, դեռ բառ իսկ չարտասանած, նա քնեց:

Արդեն հաջորդ օրերին Ջոնաթանը հասկացավ, որ թռիչքի համար այստեղ նույնքան շատ բան կար սովորելու, որքան ինքը սովորել էր իր ողջ անցած կյանքի ընթացքում: Տարբերությունն

այն էր, որ ճայերն այստեղ իր նման էին մտածում: Նրանցից յուրաքանչյուրի համար ամենաէականը կյանքում կատարելության հասնելու ձգտումն էր, աշխարհում ամեն ինչից շատ նրանք թռչել էին սիրում: Նրանք բոլորն էլ զարմանալի թռչուններ էին, որ ամեն օր, ամեն ժամ մարզումներ էին անում, փորձում նորանոր թռիչքաձևեր:

Վաղուց արդեն Ջոնաթանը մոռացել էր այն աշխարհի մասին, որտեղից եկել էր ինքը, այն աշխարհի, ուր երամն ապրում էր աչքերն ամուր փակած թռիչքի երջանկության դեմ՝ թևերն օգտագործելով միայն կեր գտնելու և այն իրարից փախցնելու համար: Բայց ժամանակ առ ժամանակ այդ հիշողությունները մի պահ նորից արթնանում էին:

Մի առավոտ, երբ ծալված թևերով ակնթարթային պտույտներ գործելու պարապմունքից հետո ուսուցչի հետ հանգստանում էին ափին, նա դարձյալ հիշեց այդ ամենը:

— Իսկ ո՞ւր են մյուսները, Սալիվան – հարցրեց նա առանց խոսքի՝ մի հրաշալի հեռազգացությամբ, որով լուռ հաղորդակցվում էին այստեղի ճայերը փոխանակ ճչալու և աղմկելու:

— Ինչո՞ւ մենք քիչ ենք այստեղ: Այնտեղ, որտեղից ես եկել եմ, ապրում էին...

— ...հարյուրավոր ու հազարավոր ճայեր, գիտեմ,— գլխով արեց Սալիվանը: — Ես մի պատասխան կարող եմ տալ, Ջոնաթան, դա այն է, որ դու մեն-միակն ես միլիոնավոր թռչունների մեջ: Մեր մեծամասնությունը միշտ էլ դանդաղ է շարժվել առաջ: Մի աշխարհից մենք գալիս ենք դրան բոլորովին նման մեկ ուրիշը, իսկույն մոռանում ենք այն նախորդը, որտեղից եկել ենք, և, չմտածելով, թե ուր ենք գնալու, ապրում ենք պահի համար: Պատկերացնում ես, թե քանի կյանք է հարկավոր եղել, մինչև կծնվեր առաջին միտքն այն մասին, որ կյանքում շատ ավելի բարձր բաներ կան, քան ուտելը, կռվելն ու երամին իշխելը: Հազարավոր կյանքեր, Ջոն, տաս հազարավոր, և էլի ուրիշ հարյուրավոր կյանքեր պետք եկան, մինչև սկսեցինք հասկանալ, որ կա կատարելություն կոչվածը, ու էլի այդքան, մինչև այն գաղափարը, որ մեր կյանքի նպատակն այսուհետև այդ կատարելությունը հայտնաբերելն ու ցուցադրելն է: Նույն կանոնն, անշուշտ, գործում է նաև մեզ համար: Մենք մեր հաջորդ աշխարհն ընտրում ենք ելնելով նրանից, ինչ սովորել ենք այս մեկում: Երբ ոչինչ չես սովորում, ապա հաջորդ աշխարհն ըստ էության նույնն է, ինչ և այս մեկը՝ հաղթահարման սպասող նույն խոչընդոտներով ու կապարե ծանրությամբ:

Նա տարածեց թևերը և շրջվեց՝ դեմքը դարձնելով քամուն:

— Բայց դու, Ջոն,— ասաց նա,— կարճ ժամանակում այնքան շատ բան ես սովորել, որ հազարավոր կյանքերի կարիքը չունեցար այստեղ հասնելու համար:

Մի վայրկյանում նրանք կրկին հայտնվեցին օդում մարզումներ անելու: Համատեղ գալարաթռիչքները դժվարությամբ էին հաջողվում: Կիսով չափ շրջված ընթանալով՝ Ջոնաթանը ստիպված էր մտածել գլխիվայր կախված՝ ուսուցչի հետ ներդաշնակորեն հակառակ շրջելով թևի աղեղը:

Եկ դա նորից փորձենք, — էլի ու էլի կրկնում էր Սալիվանը, եկ դա նորից փորձենք: — Ապա վերջապես. — լավ է: — Եվ նրանք դարձյալ սկսեցին մահվան օղակների եռանդագին մարզումները:

Մի երեկո գիշերային թռիչքի չգնացած ճայերը մտքի մեջ սուզված կանգնած էին ավազին: Իր ողջ քաջությունը հավաքելով Ջոնաթանը դիմեց Ավագ Ճային, որն, ասում էին, շուտով հեռանալու էր այս աշխարհից:

- Չիանգ, — ասաց նա փոքր-ինչ հուզված:

Ծեր ճայը բարությամբ նայեց նրան: — Այո, որդիս: — Տարիների հետ թուլանալու փոխարեն Տոհմապետն ավելի ուժեղ էր դարձել, նա կարող էր գերազանցել երամի ցանկացած ճային և գիտեր այնպիսի հմտություններ, որ մյուսները նոր էին միայն յուրացնում:

Չիանգ, այս աշխարհը ամենևին էլ երկինքը չէ, ճիշտ է:

Տոհմապետը ժպտաց՝ ողողված լուսնի լույսով: — Դու դարձյալ ավորում ես, Ջոնաթան Ճայ, — ասաց նա:

Լավ, իսկ ինչ է լինելու սրանից հետո, ուր ենք մենք գնում: Իսկականում կա՞ այնպիսի մի տեղ, որ երկինք է կոչվում:

Ոչ, Ջոնաթան, այդպիսի տեղ չկա: Երկինքը ոչ տարածություն է և ոչ էլ ժամանակ: Երկինքը կատարյալ լինելն է: — Նա մի պահ լուռ էր: — Դու շատ արագ թռչող ես, այնպես չէ:

Ես... ես հաճույք եմ զգում արագությունից, — ասաց Ջոնաթանը շփոթված, բայց և հպարտ, որ Տոհմապետը նկատել էր իրեն:

Երկնքին սկսում ես հասնել այն ժամանակ, Ջոնաթան, երբ հասնում ես բացարձակ արագության: Դա ժամում հազար կամ միլիոն մղոն անցնելը չէ և ոչ իսկ լույսի արագությամբ թռչելը, բանզի յուրաքանչյուր թիվ սահման է, իսկ կատարելությունը սահմաններ չունի: Բացարձակ արագությունը, որդիս, այնտեղ հայտնվելն է:

Չիանգը հանկարծ չքացավ և մի ակնթարթում հայտնվեց ջրի եզրին՝ հիսուն ոտնաչափ հեռու: Ապա կրկին չքացավ և մեկ եռազարերորդական վայրկյան անց կանգնեց Ջոնաթանի կողքին:

Սա միայն կատակ էր, — ասաց նա:

Ջոնաթանն ապշել էր: Նա մոռացավ երկնքի մասին հարցնելը:

Ինչպես ես այդ անում: Ինչ ես զգում այդ պահին: Որքա՞ն տարածություն կարող ես անցնել:

Ցանկացած պահի կարելի է հայտնվել ցանկացած տեղում, ուր կամենաս, — ասաց Տոհմապետը: — Ցանկացած պահի ես կարող եմ լինել ամենուր, ուր հասնում է միտքս: — Նա հայացքը հառեց ծովին: — Տարօրինակ է, այն ճայերը, որոնք կատարելությունը ստորադասում են պարզ տեղափոխությանը, լճանում են ու այդպես էլ ոչ մի տեղ չեն գնում: Իսկ նրանք, որոնք հրաժարվում են պարզ տեղափոխությունից հանուն կատարելության, վայրկենապես հայտնվում են ցանկացած տեղում: Հիշիր, Ջոնաթան, երկինքը տարածություն չէ և ոչ էլ ժամանակ, քանի որ տարա-

ծությունն ու ժամանակը բոլորովին զուրկ են որևէ իմաստից: Երկինքը...

— Կարող ես ինձ սովորեցնել այդպես թռչել,— հարցրեց Ջոնաթան Ճայը՝ մի նոր անհայտի նվաճման մտքից դողահար:

— Իհարկե, եթե ուզում ես սովորել:

— Ուզում եմ: Երբ կարող ենք սկսել:

— Հենց հիմա էլ կարող ենք սկսել, եթե համաձայն ես:

— Ես ուզում եմ սովորել քեզ նման թռչել, — ասաց Ջոնաթանը, և աչքերը վառվեցին տարօրինակ փայլով: — Ասա ինձ, թե ինչ եմ անելու:

Չիանգը խոսում էր դանդաղ՝ հետևելով միշտ ջանասեր այդ պատանի ճային: — Մտքի արագությամբ թռչել՝ նշանակում է լինել ցանկացած տեղում, — ասաց նա, — դու առաջին հերթին պետք է սկսես սովորել հասկանալ, որ արդեն հասել ես:

Չիանգի ասելով բանի էությունն այն էր, որ Ջոնաթանը պիտի դադարեր դիտել իրեն որպես քառասուներկու մատնաչափ թևերի բացվածք և նախապես տրված հնարավորություններ ունեցող սահմանափակ կարողություններով օժտված մարմնի գերի: Էությունն այն բանի գիտակցումն էր, որ իր իսկական ես-ը այնպես բացարձակորեն, ինչպես անվերջ թիվը, միաժամանակ ապրում է տարածության ու ժամանակի ցանկացած կետում:

Ջոնաթանը շարունակում էր մարզվել, մարզվել համառորեն, ամեն օր, արևածագից մինչև կեսգիշեր, և, չնայած բոլոր ջանքերին, մի փետրաչափ իսկ առաջ չէր շարժվում տեղից:

— Մոռացիր հավատի մասին, — նորից ու նորից կրկնում էր Չիանգը, — թռչել սովորելիս հավատը քեզ պետք չեկավ, դու պետք է թռիչքը հասկանաս: Դա հենց այն է, ինչ պետք է: Այժմ նորից փորձիր:

Մի օր, երբ Ջոնաթանը փակ աչքերով ափին կանգնած կենտրոնանում էր, մտքի հանկարծակի մի փայլատակումով հասկացավ, թե ինչ էր ասում Չիանգը. «Իհարկե, դա ճշմարիտ է, իմ հնարավորություններն անսահման են, ես կատարյալ ճայ եմ»: Երջանկության հզոր ալիքը ցնցեց նրան:

— Լավ է, — ասաց Չիանգը հաղթականորեն:

Ջոնաթանը բացեց աչքերը: Ինքն ու Տոհմապետը միայնակ կանգնած էին միանգամայն անծանոթ մի ափում՝ ծովեզրին խոնարհված ծառերով ու կրկնակի դեղին արևներով՝ հայտնված իրենց գլխավերևում:

— Վերջապես պատկերացրիր, — ասաց Չիանգը, — բայց կառավարումդ փոքր-ինչ մշակման կարիք ունի:

Ջոնաթանն ապշել էր: — Այս որտեղ ենք մենք:

— Կանաչ երկնքով ու արևի տեղ կրկնակ աստղերով ինչ-որ մոլորակի վրա, — տարօրինակ շրջապատի հանդեպ կատարյալ անտարբերությամբ, իմիջիայլոց պատասխանեց Տոհմապետը:

Ջոնաթանը հիացմունքի ճիչ արձակեց, առաջին հնչյունը՝ երկիրը թողնելուց հետո: — ՍՏԱՑՎՈՒՄ է:

— Այո, իհարկե ստացվում է, Ջոն, — ասաց Չիանգը, — միշտ

Է։ ստացվում է, երբ գիտես, թե ինչ ես անում: Իսկ այժմ կառավարման մասին...

Արդեն մութ էր, երբ նրանք վերադարձան: Ճայերը Ջոնաթանին հատեցին իրենց ակնածալից ոսկեգույն աչքերը. նրանք տեսել էին անշարժ դիրքից նրա անհետանալը:

Մի քանի վայրկյան ականջ դնելով իրեն ուղղված շնորհավորանքներին՝ նա ասաց. — Ես այստեղ նորեկ եմ, դեռ բոլորովին սկսնակ, և այդ ամենը ձեզանից պիտի սովորեմ:

Ջարմանում եմ, Ջոն, — նրա կողքին կանգնելով ասաց Սալիվանը: — Տաս հազար տարում իմ տեսած բոլոր ճայերից դու ամենահամարձակն ես սովորելու մեջ: — Երամը լռեց, Ջոնաթանը հոգվեց շփոթմունքից:

Եթե ուզում ես, կարող ենք սկսել աշխատել ժամանակի վրա, — ասաց Չիանգը, — մինչև կսովորես թռչել դեպի անցյալը և դեպի ապագան: Այնժամ դու պատրաստ կլինես ամենադժվարը, ամենահզորն ու ամենագրավիչը սկսելուն: Դու պատրաստ կլինես սկսել վերընթաց թռչել և կհասկանաս, թե ինչ են բարին ու սերը:

Ամբ մի ամիս Ջոնաթանը խելահեղ արագությամբ յուրացնում էր ամեն ինչ: Փորձը ցույց էր տվել, որ նա միշտ էլ արագ էր սովորում, իսկ այժմ հենց իրեն՝ Տոհմապետին աշակերտելով՝ այնպես էր ընդունում նոր գաղափարները, ասես փետրավոր հաշվիչ մեքենա լիներ:

Սակայն եկավ այն օրը, երբ Չիանգն անհետացավ: Նա հանդարտ զրուցում էր բոլորի հետ՝ հորդորելով, որ նրանք երբեք չդադարեն սովորելն ու մարզվելը, որ մշտապես ջանան ավելի ու ավելի խորն ըմբռնել կյանքի իսկական, աներևույթ, անտեսանելի էությունը: Խոսելու ընթացքում նրա փետուրները հետզհետե ավելի ու ավելի պայծառ էին շողում, իսկ վերջին պահին այնպես փայլատակեցին, որ ոչ մի ճայ չկարողացավ նրան նայել:

Ջոնաթան, — ասաց նա, և դրանք նրա արտասանած վերջին բառերն էին, — աշխատիր ըմբռնել, թե ինչ է սերը:

Այլ նրանք վերստացան տեսնելու կարողությունը, Չիանգն այլևս չկար: Որքան օրերն անցնում էին, այնքան ավելի հաճախ էր Ջոնաթանն իրեն գտնում նորից ու նորից երկրի մասին մտածելիս, այն Երկրի, որտեղից եկել էր: Եթե ինքն այնտեղ գիտենար այն ամենի մեկ տասներորդ, թեկուզ մեկ հարյուրերորդ մասը միայն, ինչ իմացավ այստեղ, որքան ավելի իմաստալից կլիներ կյանքը: Ավելին կսնգնած նա հետաքրքրությամբ մտածում էր, թե գուցե այնտեղ եղել է մի ճայ, որը կարող էր խորտակել իրեն կաշկանդող ամիմաններն ու դուրս գալ դրանցից, որ կարող էր թիանավից հացի փշրանքներ փախցնելուց անդին տեսնել թռիչքի իմաստը: Հավանաբար նա նույնիսկ կարող է հասցրած լինել Աքսորյալ դառնալ իր հմտությունը Երամի երեսին ասելու համար: Եվ որքան ավելի էր Ջոնաթանը մարզվում բարության դասերը յուրացնելու համար, որքան ավելի էր աշխատում ըմբռնել սիրո բնույթը, այնքան ավելի էր ցանկանում վերադառնալ Երկիր: Չնայած իր միայնակ անցյալին, Ջոնաթան ճայը ծնվել էր ուսուցիչ լինելու համար. սիրո

արտահայտման նրա եղանակը իր հայտնաբերած ճշմարտությունը նվիրելն էր յուրաքանչյուր ճայի, որն ուզում է գտնել այն:

Սալիվանը, որն այժմ մտքի արագությամբ թռիչքների գիտակ էր և օգնում էր մյուսներին յուրացնել դա, հավանություն չէր տալիս դրան:

— Ջոն, դու մի անգամ արդեն Աքսորյալ ես եղել: Ինչու՞ ես կարծում, որ նույն այդ ճայերից ոմանք այժմ կցանկանան լսել քեզ, այն էլ քո այս տարիքում: Դու գիտես առածը և այն ճիշտ է. «Որքան ճայը բարձր է թռչում, այնքան հեռուն է տեսնում»: Այն ճայերը, որոնցից դու հեռացել ես, կպած են գետնին, նրանք ճչում են ու կռվում իրար հետ: Նրանք հազարավոր մղոններ հեռու են երկնքից, իսկ դու ուզում ես այնտեղից ցույց տալ նրանց երկինքը: Ախր նրանք իրենց սեփական թևերի ծայրերն անգամ չեն կարողանում տեսնել, Ջոն: Մնա այստեղ, օգնիր այստեղի նորեկներին, նրանց, որոնք բավականաչափ բարձր են թռել հասկանալու համար այն, ինչ ունես նրանց ասելու: — Նա մի պահ լռեց, ապա ասաց: — Ի՞նչ կլիներ, եթե Չիանգը վերադառնար իր նախկին աշխարհը: Որտեղ կլիներիր այսօր դու:

Վերջին փաստարկը համոզիչ էր հնչում, Սալիվանն իրավացի էր. որքան ճայը բարձր է թռչում, այնքան հեռուն է տեսնում:

Ջոնաթանը մնաց և պարապում էր նորեկ թռչունների հետ, որոնք բոլորն էլ շատ ընդունակ էին և արագ յուրացնում էին ամեն ինչ: Բայց նախկին զգացումը նորից արթնացավ, և նա չէր կարողանում չմտածել, որ երկրի վրա հավանաբար կլինեն մեկ-երկու ճայ, որոնք նույնպես կարող էին սովորել: Ինչքան շատ բան նա կիմանար այժմ, եթե Չիանգն իր կողքին լիներ այն օրերին, երբ ինքն Աքսորյալ էր:

— Ես պետք է վերադառնամ, Սալլի,— ի վերջո ասաց նա: — Քո աշակերտները հիանալի առաջադիմում են: Նրանք կարող են օգնել քեզ նորեկներին ուսուցանելու:

Սալիվանը հոգոց հանեց, բայց չառարկեց: — Կարծում եմ կկարոտեմ քեզ, Ջոնաթան, — միայն ասաց նա:

— Ամոթ է, Սալլի, — հանդիմանեց նրան Ջոնաթանը, — այդքան խենթ մի լինիր: Հապա ինչով ենք մենք զբաղվում ամեն օր: Եթե մեր բարեկամությունը դեռևս կախված է այնպիսի բաներից, ինչպիսիք են տարածությունն ու ժամանակը, ապա, վերջնականապես հաղթահարելով դրանք՝ մենք խորտակած կլինենք մեր երամակցական կապերը: Հաղթահարելով տարածությունը՝ մենք կստանանք Այստեղ: Հաղթահարելով ժամանակը՝ կունենանք Այժմ: Չե՞ս կարծում, որ կարող ենք մեկ-երկու անգամ հանդիպել Այստեղի և Այժմվա միջև մի ինչ-որ կետում:

Սալիվանն ակամա ծիծաղեց: — Դու խենթ ես, — համակրանքով ասաց նա: — Եթե կա մեկը, որ կարող է գետնին կպած որևէ էակի ցույց տալ, թե ինչպես կարելի է հազարավոր մղոնների չափ հեռուն տեսնել, ապա դա Ջոնաթան Լիվինգսթոն Ճայն է: — Նա հայացքը հառեց ավազին: — Մնաս բարով, Ջոն, բարեկամս:

— Ցտեսություն, Սալլի, մենք էլի կհանդիպենք: — Այս ասելով

Տոնաթանը մտաբերեց ճայերի մեծ երամների պատկերը մի այլ ժամանակի մեջ և սովորական թեթևությամբ զգաց, որ փետուր ու ոսկոր չէ ինքը, այլ ազատության ու թռիչքի բացարձակ գաղափարը, որ ոչնչով չի սահմանափակվում:

Ֆլեթչեր Լինդ Ճայը դեռ բոլորովին ջահել էր, բայց արդեն գիտեր, որ երբևէ չէր եղել մի այլ թռչուն, որի հետ որևէ երամ ոլորտան անգթորեն վարված լիներ կամ այդքան անարդարացի:

«Ինձ համար միևնույն է, թե ինչ կասեն նրանք,— զայրացած մտածեց նա և աչքերը մշուշվեցին, երբ թռչում էր դեպի Հեռավոր Ժայռերը: — Թռչելը շատ ավելին է, քան տեղից-տեղ փոխադրվելու համար թևերը թափահարելը, դե դա... դա ախր... դա մոծակն էլ կանի: Ինձանենը մի փոքրիկ գալարաթռիչք Տոհմապետի շուրջը, հենց այնպես, կատակի համար միայն, և ահա ես Աքսորյալ եմ: Նրանք կուր են, ինչ է, միթե չեն տեսնում, միթե չեն պատկերացնում այն փառահեղ կյանքը, որ կունենանք մենք, երբ իսկապես սովորենք թռչել:

Ինձ համար միևնույն է, թե ինչ կմտածեն նրանք: Ես նրանց դուրս կտամ, թե ինչ է թռիչքը: Ես իսկական օրինախախտ կլինեմ, եթե նրանք այդպես են ցանկանում: Բայց նրանք դեռ շատ կզղջան դրա համար»:

Ցայտը եկավ հենց իր ներսից ու թեև այն չափազանց նուրբ էր, ալեոամենայնիվ, այնքան վախեցրեց, որ նա երերաց ու կարկամեց օդում:

Մի չարանա նրանց վրա, Ճայ Ֆլեթչեր: Քեզ վտարելով՝ մյուս ճայերը միայն իրենց են վնասել, մի օր նրանք կհասկանան դա, մի օր կտեսնեն այն, ինչ դու ես տեսնում: Ներիր նրանց և սկսիր հասկանալ:

Նրա աջ կողքով մի ադամանդափայլ ճայ էր թռչում, աշխարհի ամենաուժեղ ճայը: Նա սահում էր առանց որևէ ջանքի, փետուր իսկ չշարժելով, և դա այն դեպքում, երբ ինքը՝ Ֆլեթչերը թռչում էր գրեթե առավելագույն արագությամբ:

Պատանի ճայի հոգում մի պահ ամեն ինչ իրար խառնվեց:

«Այս ինչ է կատարվում: Ես խելագարվել եմ, ես մեռել եմ: Ինչ է սա», զարմանում էր երիտասարդ ճայը:

Ցածր ու հանգիստ, ճայը թափանցեց նրա հոգու խորքերը՝ պատասխան պահանջելով. — Ֆլեթչեր Լինդ Ճայ, դու ուզում ես թռչել:

ԱՅՈ, ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ԹՌՉԵԼ:

Ֆլեթչեր Լինդ Ճայ, դու արդյոք այնքան շատ ես ուզում թռչել, որ կներես երամին, կսովորես ու մի օր այնտեղ կվերադառնաս և կաշխատես օգնել նրանց իմանալու քո սովորածը:

Դեպի հպարտությանն ու կրած վիրավորանքին, Ֆլեթչերն անկարող էր ստել այդ հիասքանչ, հմուտ արարածին:

Այո, — մեղմորեն ասաց նա:

Այդ դեպքում, Ֆլեթչ, — ասաց այդ լուսաշող արարածը, և այդ ճայնի մեջ այնքան բարություն կար, — եկ սկսենք Հորիզոնական թռիչքից:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

Ջոնաթանը դանդաղ պտույտներ էր գործում Հեռավոր ժայռերի վրա՝ դիտելով դրանք: Այդ անտաշ, ջահել Ֆլեթչերը գրեթե կատարյալ աշակերտ դուրս եկավ: Օդում նա ուժեղ էր, թեթև, արագաշարժ, բայց, որ ամենկարևորն էր, նա լի էր թռչել սովորելու կրքոտ ցանկությամբ:

Հենց որ նա հայտնվեց այստեղ, նրա աղոտ, գորշ կերպարանքը աղմուկով դուրս եկավ խոյաթռիչքից և ուսուցչի մոտով սահեց սուրալով ժամում հարյուր հինգսուն մղոն արագությամբ: Նա կտրուկ պոկվեց և փորձեց տասնվեց պտույտանի ուղղահայաց, դանդաղեցված գալարաթռիչք կատարել՝ բարձրաձայն հաշվելով պտույտները.

— ... ութ... ինը... տասն... տես, Ջոնաթան, ես պտտվում եմ հնարավոր առավելագույն արագությամբ... տասնմեկ... Ջոնաթան, ես ուզում եմ այնպես գնդեցիկ ու հստակ կանգ առնել, ինչպես դու... տասներկու... բայց ոչ մի կերպ չեմ .կարողանում, գրողը տանի... տասներեք... այս վերջին երեք պտույտները... առանց... տասնչորս... ամաչ:

Անհաջողության հարուցած զայրույթն ու կատաղությունը բոլորովին փչացրին գործը, և Ֆլեթչերը խելահեղորեն թավալվեց ցածր: Նա ընկավ մեջքի վրա, թա լալգլոր տալով՝ անշնորհք կերպով գալարվեց հակառակ պտույտի ջրի մեջ և, երբ ծանր շնչելով վերջապես ուղղվեց՝ թռչում էր ուսուցչից հարյուր ոտնաչափ ներքև:

— Դու ժամանակդ իզուր վատնում ես ինձ վրա, Ջոնաթան: Ես հիմար եմ ու անհասկացող: Անընդհատ փորձում եմ ու փորձում, բայց ինձ մոտ դա երբեք էլ չի ստացվի:

Ջոնաթանը ներքև նայեց ու գլխով արեց: — Իհարկե, չի ստացվի, չի ստացվի այնքան ժամանակ, քանի դեռ դու այդքան կտրուկ ես կանգ առնում: Սկզբում, Ֆլեթչեր, դու ժամում քառասուն մղոն կորցրիր: Դու պիտի այդ անես կտրուկ, բայց սահուն, կիիշես:

Նա իջավ ու հավասարվեց ջահել ճային: — Եկ այժմ միասին փորձենք: Ուշադրություն դարձրու գալարաթռիչքից դուրս գալուն: Հանգիստ սկսիր, և այն սահուն կլինի:

Երրորդ ամսվա վերջում Ջոնաթանն ուներ ևս վեց աշակերտ, բոլորն էլ Աքսորյալներ՝ հրապուրված իրենց նոր, տարօրինակ գաղափարով՝ թռչել հանուն թռիչքի երջանկության:

Նրանց համար դեռևս ավելի հեշտ էր վարժությունների հստակ կատարման մեջ հմտանալը, քան դրանց ներքին իմաստը հասկանալը:

— Մեզանից յուրաքանչյուրն իրականում Մեծ Ճայի գաղափարի մարմնացումն է, ազատության համապարփակ գաղափարի մարմնացումը, — երեկոները սովորաբար կրկնում էր Ջոնաթանն ափում, — վարպետորեն թռչելը միայն մի քայլ է դեպի մեր իսկական էության արտահայտումը: Պետք է մի կողմ թողնել այն ամենն, ինչ սահմանափակում է մեզ: Ահա թե ինչի համար են և բարձր արագության, և ցածր արագության, և ձևավոր թռիչքների բոլոր այս մարզումները...

Իսկ ցերեկային թռիչքներից հոգնած նրա աշակերտները սովորաբար քնած էին լինում: Նրանք գործնական վարժություններ էին սիրում, որովհետև դրանց արագությունը խենթացնում էր, դրանք հագեցնում էին սովորելու նրանց ծարավը, որ յուրաքանչյուր պարապմունքի հետ ավելի էր սաստկանում: Բայց նրանցից և ոչ մեկը, նույնիսկ Ֆլեթչեր Լինդը, չէին կարողանում պատկերացնել, որ գաղափարների թռիչքը կարող է լինել նույնքան իրական, որքան քամունը կամ փետուրինը:

Ձեր ողջ մարմինը մի թևածայրից մինչև մյուսը, — մի ուրիշ անգամ ասում էր Ջոնաթանը, — այլ բան չէ, քան հենց ձեր միտքը՝ տրված տեսանելի ձևի մեջ: Փշրեք ձեր մտքի կապանքները, և դուք կփշրեք նաև ձեր մարմնի կապանքները: — Բայց դրանն էլ նա խոսում էր, միևնույն է, այդ ամենը հնչում էր որպես հեռավոր պատրանք, իսկ նրանք ավելի շատ քնել էին ուզում:

Ընդամենը մի ամիս էր անցել, երբ Ջոնաթանն ասաց, որ ժամանակն է Երամի մոտ վերադառնալու:

Մենք պատրաստ չենք, — ասաց Հենրի Կալվինը: — Մենք ասելի ենք նրանց համար, մենք Աքսորյալ ենք: Մենք անկարող ենք ստիպել մեզ գնալու այնտեղ, ուր մեր երեսն իսկ չեն ուզում տեսնել, դե միթե կարող ենք:

Մենք ազատ ենք գնալու ուր ուզենք և լինելու այնպիսին, ինչպիսին կանք, — պատասխանեց Ջոնաթանը և գետնից բարձրանալով ուղղվեց արևելք՝ դեպի հայրենի ափերը, դեպի Երամը:

Աշակերտները որոշ ժամանակ շփոթված էին, որովհետև Երամի օրենքն ասում է, որ Աքսորյալը երբեք չի վերադառնում, և այդ օրենքը տասհազար տարվա ընթացքում երբեք չէր խախտվել: Օրենքն ասում էր՝ մնացեք, Ջոնաթանը՝ եկեք. իսկ այդ պահին նա ոչինչ մի մոլոր ճանապարհ էր անցել: Եթե իրենք մի քիչ էլ հապաղեին, նա մեն-մենակ կհանդիպեր թշնամական Երամին:

Լավ, մենք ինչու պիտի ենթարկվենք, եթե Երամի անդամը չենք, — ասաց ինչ վախվորած խոսեց Ֆլեթչերը: — Եվ, բացի այդ, եթե կռիվ լինի, մենք այնտեղ ավելի օգտակար կլինենք, քան այստեղ:

Եվ այսպես, արևմուտքից նրանք թռան-եկան այդ առավոտ, բոլոր ուժը, գույց ռմբաձև շարքով՝ թևածայրերով մասամբ իրար ծածկելով: Նրանք եկան Երամի Խորհրդի Ափով՝ ժամում հարյուր երեսունհինգ մղոն արագությամբ: Ջոնաթանը գնում էր առջևից, նրա այ թևում սահունորեն թռչում էր Ֆլեթչերը, ձախում՝ տոկունորեն ցանում էր Հենրի Կալվինը: Ողջ շարքը մեկի պես դանդաղորեն թեքվեց դեպի աջ... հավասարվեց... մոտեցավ... շրջվեց... ավելի մոտեցավ... հավասարվեց... քամին մտրակում էր նրանց:

Երամի ծանող ճիչերի առօրյա աղմուկը ասես հսկայական դաշույնի հարվածով՝ միանգամից կտրվեց ճայաշարի հայտնվելով, և ութ

հազար աչքեր անթարթ հառվեցին նրանց վրա: ՈՒթ թռչունները մեկը մյուսի ետևից կտրուկ բարձրացան վեր՝ մահվան օղակ կատարելու, ապա, ողջ ճանապարհին դանդաղեցնելով ընթացքը, բացարձակորեն անշարժացան՝ իջնելով յավազին: Հետո, ասես արտասովոր ոչինչ չէր պատահել, Ջոնաթանն սկսեց քննարկել թռիչքի թերությունները:

— **Նախ և առաջ,** — ասաց նա ծուռ ժպտալով, — դուք բոլորդ էլ **մի փոքր** հապաղեցիք շարք մտնել...

Երամով մեկ կայծակի արագությամբ մի միտք անցավ. այս թռչունները Աքսորյալներ են, և նրանք վերադարձել են: Բայց չէ որ դա... դա չի կարող պատահել: Երամի շփոթվածության շնորհիվ կռվի մասին Ֆլեթչերի նախագուշակությունները չիրականացան:

— Դե լավ, ասենք, թե նրանք Աքսորյալներ են, — ասաց երիտասարդ ճայերից մեկը, — բայց ինչ կա որ, այնուամենայնիվ հետաքրքիր է, չէ, թե որտեղ են նրանք սովորել այդպես թռչել:

Գրեթե մի ժամ պահանջվեց, մինչև որ Երամով մեկ կանցներ Տոհմապետի հրամանը. արհամարհել նրանց: Աքսորյալի հետ խոսող ճայը ինքն էլ է դառնում Աքսորյալ: Աքսորյալին նայողը խախտում է Երամի օրենքը: Այդ պահից ճայերն իրենց գորշափետուր թիկունքներն էին դարձնում Ջոնաթանին, բայց նա կարծես ոչինչ չէր նկատում: Նա գործնական պարապմունքներն անցկացնում էր հենց Խորհրդի Ափին և առաջին անգամ սկսեց քամել իր աշակերտներին մինչև նրանց հնարավորությունների վերջին սահմանը:

— Մարտին, — կանչում էր նա երկնքից, — դու ասում ես, թե գիտես ցածր արագությամբ թռչել: Դու ոչինչ չգիտես, քանի դեռ չես ապացուցել դա, ԹՌԻՐ:

Այդ այնքան փոքրիկ, սուսիկ-փուսիկ Մարտին Ուիլյամ Ճայը համառորեն ջանում ու ջանում էր՝ վախենալով ուսուցչի զայրույթից, և ինքն էլ հանկարծակիի եկավ, երբ հրաշքներ գործեց ցածր արագության թռիչքների մեջ: Առանց մի թևաբախման նա կարողացավ փետուրները կորացնելով վեր բարձրանալ ավազից ու նորից ցած իջնել:

Իսկ Չարլզ-Ռոլանդը բարձրացավ Հողմերի Մեծ Լեռան կատարը՝ քսանչորս հազար ոտնաչափ և ցուրտ, նոսր օդից կապտած իջավ ապշահար ու երջանիկ, վաղն ևեթ ավելի բարձր թռչելու վճռականությամբ լի:

Ֆլեթչեր Ճայը, որն ամենից ավելի ձևավոր թռիչքներ էր սիրում, դժվարությամբ հաղթահարեց իր տասնվեցպտույտանի ուղղահայաց, դանդաղեցված գալարաթռիչքը, իսկ հաջորդ օրը կրկնեց այն թևի վրայով դարձող եռակի պտույտով: Արևի ճերմակ շողերի մեջ նրա փետուրները կայծկլտում էին՝ ցոլքեր սփռելով ափին, որտեղից բազմաթիվ աչքեր հետևում էին նրան:

Ջոնաթանը միշտ հասցնում էր լինել իր աշակերտներից յուրաքանչյուրի կողքին, ցույց տալ, խորհուրդ տալ, ազդել նրանց վրա,

ուղղություն տալ: Նա աշակերտների հետ թռչում էր և գիշերը, և ամպոտ եղանակին, և փոթորկի ժամանակ, թռչում էր հենց միայն թռչելու համար, իսկ նույն այդ ժամանակ երամը տխուր կուչ էր գալիս ու սեղմվում գետնին:

Թռչել-վերջացնելուց հետո աշակերտները հանգստանում էին ավազին, ժամանակի հետ նրանք ավելի ու ավելի ուշադիր էին լսում Ջոնաթանին: Նա ինչ-որ խենթ գաղափարներ ուներ, որ իրենք չէին կարողանում հասկանալ, բայց կային նաև ինչ-որ լավ բաներ, որ հասկանալի էին:

Գիշերները աշակերտների խմբի շուրջը աստիճանաբար մի ուրիշ շրջան էր գոյանում, հետաքրքրասեր ճայերի շրջանը, որոնք ժամեր շարունակ ականջ էին դնում խավարում և, չցանկանալով նկատել մյուսներին ու նկատվել որևէ մեկի կողմից՝ անհետանում էին լուսաբացից առաջ:

Նրանց վերադարձից մի ամիս անց միայն երամի առաջին ճայը խախտեց-անցավ սահմանը և հարցրեց, թե ինչպես կարելի է սովորել թռչել: Այդ հարցնելով Թերրենս Լոուել ճայը դարձավ Աքսորյալ և Ջոնաթանի ութերորդ աշակերտը:

Հաջորդ գիշեր Երամից անջատվեց Քիրք Մեյնըրդ ճայը. ավազի վրա կողքից-կողք օրորվելով ու ձախ թևը քարշ տալով՝ եկավ ու փլվեց Ջոնաթանի ոտքերի մոտ: — Օգնիր ինձ, - ասաց նա այնքան կամացուկ, ասես մեռնում էր, — աշխարհում ամենից ավելի ես թռչել եմ ուզում:

— Դե ինչ, առաջ արի, — ասաց Ջոնաթանը, — ինձ հետ միասին բարձրացիր գետնից և սկսենք:

— Դու ինձ չհասկացար: Թևս, ես չեմ կարողանում թևս շարժել:

— Մեյնըրդ ճայ, դու ազատ ես այստեղ և այժմ լինելու այնպիսին, ինչպիսին քո ես-ն է, քո իսկական ես-ը, և ոչինչ չի կարող խանգարել քեզ: Դա Մեծ Ճայի օրենքն է, և օրենքն այդպիսին է:

— Դու ասում ես, որ ես կարող եմ թռչել:

— Ես ասում եմ, որ դու ազատ ես:

Այնպես պարզ ու արագ, ինչպես ասվել էր, Քիրք Մեյնըրդն առանց մի ճիգի տարածեց թևերը և բարձրացավ դեպի գիշերային խավար երկինքը: Երամն արթնացավ նրա ճայնից. հինգ հարյուր ոտնաչափ բարձրությունից նա ողջ ուժով ճչում էր. — ես կարող եմ թռչել, լսում եք: ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԹՌՉԵԼ:

Արևածագին շուրջ հազար ճայեր շրջապատել էին աշակերտների խմբին և հետաքրքրությամբ նայում էին Մեյնըրդին: Նրանց հոգն էլ չէր՝ տեսնում են իրենց, թե ոչ, նրանք լսում էին Ջոնաթանին և փորձում հասկանալ նրա ասածները:

Նա խոսում էր շատ պարզ բաների մասին՝ որ ճայն իրավունք ունի թռչելու, որ ազատությունը նրա բուն իսկ էության մեջ է, որ պետք է թոթափել ազատությանը խոչընդոտող ամեն ինչ, լինի դա սովորույթ, նախապաշարմունք, թե ցանկացած կարգի սահմանափակում:

— Թոթափել — լսվեց բազմության միջից, — եթե նույնիսկ դա Երամի օրենքը լինի:

— Միակ ճշմարիտ օրենքն այն է, որ տանում է դեպի ազատություն, — ասաց Ջոնաթանը, — ուրիշ օրենք չկա:

— Իսկ մենք դեռ ինչքան պիտի սպասենք, մինչև կարողանանք քեզ պես թռչել, — լսվեց մի ուրիշ ձայն — Ախր դու յուրահատուկ ես, տաղանդավոր, աստվածային, դու վեր ես մյուսներից:

— Նայեցեք Ֆլեթչերին, Լոուելին, Չարլզ-Ռոլանդին, Ջուդի Լիին, նրանք նույնպես յուրահատուկ են, տաղանդավոր, աստվածային: Ոչ ավելի, քան դուք, ոչ ավելի, քան ես: Միակ, մեն ու միակ տարբերությունն այն է, որ նրանք սկսել են հասկանալ, թե ով են իրենք իրականում և սկսել են այդպես ապրել:

Նրա աշակերտները, բացառությամբ Ֆլեթչերի, դժվարանում էին գլուխ հանել այդ ամենից: Նրանց մտքով իսկ չէր անցել, որ դա հենց այն էր, ինչ իրենք անում էին:

Ամբոխն օրեցօր մեծանում էր, գալիս էին հարցնելու, մեծարելու, ծաղրելու:

— Երամում խոսում են, որ եթե դու Մեծ Ճայի Որդին չես, — մի առավոտ, Բարձր Արագության Վարժանքից հետո, պատմում էր Ֆլեթչերը Ջոնաթանին, — ապա հազար տարով առաջ ես անցել քո ժամանակից:

Ջոնաթանը հոգոց հանեց. «Ահա տգիտության պտուղները, — մտածեց նա: — Քեզ սատանա՝ են անվանում կամ աստված»: — Ինչ ես կարծում, Ֆլեթչ, մենք առաջ ենք անցել մեր ժամանակից:

Երկար լռություն տիրեց:

— Իմ կարծիքով թռիչք ասվածը միշտ էլ գոյություն է ունեցել յուրաքանչյուրի համար, ով ցանկացել է այն գտնել: Դա ոչ մի կապ չունի ժամանակի հետ: Թերևս մենք առաջ ենք անցել ընդունվածից, առաջ ենք անցել այն ճանապարհին, որը տանում է դեպի բոլոր ճայերի թռիչքը:

— Ահա թե ինչ, — ասաց Ջոնաթանը՝ ճոճվելով թռիչքի գնալիս և ապա մի պահ շրջվելով, — և հետո, դա ամենևին էլ վատ չէ, ինչպես նաև քո ժամանակից առաջ ընկնելը:

Դա պատահեց ուղիղ մի շաբաթ անց, Ֆլեթչերը մի խումբ նոր աշակերտների ցուցադրում էր բարձր արագության թռիչքի տարրերը: Յոթ հազար ոտնաչափ բարձրության վրա նա դեռ նոր էր դուրս եկել խոյաթռիչքից և երկար ու գորշ մի հետագիծ թողնելով դեռ սլանում էր ափից մի քանի մատնաչափի վրա, երբ իր առաջին թռիչքն անող մի ջահել ճայ մորը կանչելիս ուղիղ հայտնվեց նրա

ճանապարհին: Գոնե մեկ-տասներորդական վայրկյանով պատու-
նուց խույս տալու համար Ֆլեթչեր Լինդ Ճայը կտրուկ կերպով մեծ
դժվարությամբ նետվեց դեպի ձախ և ժամում երկու հարյուր մղոնից ավելի արագությամբ խոյացավ դեպի գրանիտե կարծր ժայռը:

Ժայռը նրան մի այլ աշխարհ տանող հսկայական. ծանր դուռ թվաց: Այրող սարսափ, հարված ու խավար. իսկ հետո չգիտես ինչպես ինքը հայտնվել էր մի տարօրինակ երկնքում, մոռանում էր, հիշում, նորից մոռանում, սարսափելի էր, տխուր ու ցավալի, անասելիորեն ցավալի:

Ճայնը նրան հասավ ինչպես այն առաջին օրը, երբ ինքը հանդիպեց Ջոնաթան Լիվինգսթոնին:

- Բանն այն է, Ֆլեթչեր, որ մենք համբերությամբ փորձում ենք հաղթահարել մեր հնարավորությունների նախապես տրված սահմանները: Մենք դեռևս չենք սովորել ժայռերի միջով թռչել, դրան պիտի հասնենք քիչ ավելի ուշ:

— Ջոնաթան:

— Անվանյալ նաև Մեծ Ճայի Որդի, - խստորեն ասաց ուսուցիչը:

— Դու այստեղ ինչ ես անում: Ժայռը: Ես արդեն... Միթե ես... միթե չեմ մեռել:

— Ախ, Ֆլեթչ, ուշքի եկ: Մտածիր: Եթե դու այժմ խոսում ես ինձ հետ, ուրեմն պարզ է, որ չես մեռել, այնպես չէ: Քեզ հետ կատարվածն այլ բան չէ, քան այն, որ քո գիտակցության մակարդակը պարզապես կտրուկ կերպով փոխվել է: Հիմա ինքդ ընտրիր: Ուղիղ այս է՝ դու կարող ես մնալ այստեղ և սովորել այս մակարդակում, որն իրոք քիչ ավելի բարձր է, քան այն, որում դու ապրել ես, կարող ես նաև վերադառնալ և շարունակել աշխատանքդ Երամի հետ: Ավագներն, իհարկե, հույս ունեին, որ մի ինչ-որ աղետ կպատահի և, չնայած դրան, ցնցվեցին սարսափած, բայց և գոհ, որ այդպիսի առիթ տվիր իրենց:

— Ես, իհարկե, ուզում եմ վերադառնալ Երամի մոտ: Ես հենց նոր եմ սկսել պարապել նորեկների մի խմբի հետ:

Ֆլեթչերը ցնցեց գլուխը, տարածեց թևերն ու բացեց աչքերը և գտավ իրեն ժայռի ստորոտում՝ իր շուրջը խմբված Երամի կենտրոնում: Հենց որ նա շարժվեց, ճայամբոխից ճիչ ու աղաղակների սարսափելի աղմուկ բարձրացավ:

— Նա կենդանի է: Մեռած էր և հիմա կենդանի է:

— Մեծ Ճայի Որդին դիպավ ու կյանքի կոչեց նրան:

— Ոչ, նա հերքում է դա: Նա դև է, ՍԱՏԱՆԱ: Նա եկել է կործանելու Երամը:

Կատարվածը սարսափելի էր ազդել չորս հազար ճայերի ամբոխին, և օվկիանոսային փոթորկի նման թռչում էր նրանց ճիչը՝

ՍԱՏԱՆԱ: Ապակեփայլ աչքերով, կտուցներն ամուր սեղմած, նրանք ավելի ու ավելի էին մոտենում՝ պատրաստ հոշոտելու:

— Դու քեզ ավելի լավ չէիր զգա, եթե մենք հեռանայինք, Ֆլեթչեր, — հարցրեց Ջոնաթանը:

— Ես, իհարկե, բոլորովին դեմ չէի լինի, որ մենք...

Մի ակնթարթում նրանք հայտնվեցին այդտեղից կես մղոն հեռավորության վրա, և ճայամբոխի պարզած կտուցները մխրճվեցին դատարկության մեջ:

— Ինչո՞ւ է այսպես, — տարակուսում էր Ջոնաթանը, — աշխարհում ամենադժվար բանը թռչունին համոզելն է, որ ինքն ազատ է, և որ ինքն իրեն կարող է ապացուցել դա, եթե մի քիչ մարզվի: Ախր ինչո՞ւ է դա այդքան դժվար:

Ֆլեթչերը դեռ աչքերն էր թարթում՝ տեսարանի փոփոխությունից ապշած: — Դու այս ինչ արեցիր: Ինչպես մենք հայտնվեցինք այստեղ:

— Դու ինքդ ասացիր, որ կուզեիր հեռու լինել ամբոխից, ճիշտ է:

— Այո, բայց ինչպես ես...

— Ինչպես ցանկացած այլ բան, Ֆլեթչեր՝ վարժանք:

Առավոտյան Երամն արդեն մոռացել էր իր երեկվա խելացնորությունը, բայց Ֆլեթչերը հիշում էր այն: — Ջոնաթան, հիշո՞ւմ ես, թե ինչ էիր ասում այն ժամանակ Երամի հանդեպ ունենալիք այնպիսի սիրո մասին, որը կստիպի վերադառնալ նրանց մոտ և օգնել նրանց սովորելու:

— Այո, իհարկե:

— Չեմ հասկանում: Ինչպես դու կարող ես սիրել թռչունների այդ ամբոխը, որն ուղղակի փորձում էր սպանել քեզ:

— Օհ, Ֆլեթչ, դու չէ՞ որ սիրում ես: Դու, իհարկե, ատելությունն ու չարությունը չես սիրում: Դու պարտավոր ես վարժվել և նրանցից ամեն մեկի մեջ բարին տեսնել, տեսնել ճշմարիտ ճային և օգնել նրանց իրենց մեջ հայտնաբերելու այն: Ահա սիրո իմ ըմբռնումը: Ուղղակի երջանկություն է, եթե հասել ես այդ անելու հմտությանը:

— Ես հիշում եմ մի տաքարյուն, երիտասարդ ճայի, ի դեպ, Ֆլեթչեր Լինդ է նրա անունը: Հենց նոր Աքսորյալ դարձած, Երամի հետ կենաց ու մահու կռիվ տալու պատրաստ, նա իր սեփական դժոխքն էր պատրաստվում ստեղծել Հեռավոր Ժայռերի վրա: Իսկ այսօր ահա նա իր սեփական երկինքն է ստեղծում դրա փոխարեն և ողջ Երամն առաջնորդում դեպի այնտեղ:

Ֆլեթչերը շրջվեց ուսուցչի կողմը, նրա աչքերում մի պահ սարսափ հայտնվեց: — Ես առաջնորդում եմ: Դու ինչ նկատի ունես, ասելով, թե ես եմ առաջնորդում: Այստեղ ուսուցիչը դու ես: Դու չես կարող լքել մեզ, դա անկարելի է:

— Անկարելի՞ ասում ես: Իսկ քո մտքով չի՞ անցնում, որ կարող

են գոյություն ունենալ ուրիշ երամներ և ուրիշ Ֆլեթչերներ, որոնք ավելի շատ են ուսուցչի կարիք զգում, քան այս մեկը, որն արդեն կանգնած է դեպի լույս տանող ճանապարհին:

— Ես, Զոն, ախր ես ընդամենը մի սովորական ճայ եմ, իսկ դու...

— ... Մեծ Ճայի միակ Որդին, այնպես չէ, — հառաչեց Զոնաթանը հայացքը ծովին հառելով: — Դու իմ կարիքն այլևս չունես: Դու անընդհատ ինքդ քեզ գտնելու կարիք ունես միայն. ամեն օր մի վայրկյան ավելին իմանալու իսկական, ոչնչով չսահմանափակված Ֆլեթչեր Լինի, Ճայի մասին: Նա է քո ուսուցիչը: Քեզ անհրաժեշտ է ճանաչել նրան և կյանքի կոչել:

Մի պահ անց Զոնաթանի մարմինը կայծկլտալով տարուբերվեց ու սկսեց աստիճանաբար լուծվել օդում: — Թույլ մի տուր նրանց հիմարություններ տարածել իմ մասին կամ աստվածացնել ինձ, լավ, Ֆլեթչ: Ես ճայ եմ, ես սիրում եմ թռչել, գուցե...

— ՁՈՆԱԹԱՆ:

— Խեղճ Ֆլեթչ: Աչքերիդ մի հավատա, նրանք ամեն ինչ չէ, որ տեսնում են: Դու մտքով նայիր, ի մի բեր ու խորն ըմբռնիր այն ամենն, ինչ արդեն գիտես և կտեսնես թռիչքի տանող ճանապարհը:

Շողարձակումը դադարեց: Զոնաթանն անհետացել էր երկնքի անհունում:

Որոշ ժամանակ անց Ֆլեթչերը, հազիվ պահելով իրեն երկընքում, ներկայացավ իրենց առաջին դասին սպասող աշակերտների նոր խմբին:

— Առաջին հերթին, — ծանրորեն ասաց նա,— դուք պետք է հասկանաք, որ ճայը ազատության համապարփակ գաղափարի մարմնացումն է, Մեծ Ճայի կերպարը, և ձեր ողջ մարմինը, մի թևածայրից մինչև մյուսը, այլ բան չէ, քան ձեր միտքը:

Զահել ճայերը տարակուսանքով էին նայում նրան: «Հեյ, բարեկամ, — մտածում էին նրանք, — դա ամենևին էլ օղակ կատարելու կանոն չէ»:

Ֆլեթչերը հոգոց հանեց ու նորից սկսեց: — Հըմ: Ահ... Շատ լավ, — ասաց նա՝ քննադատաբար զննելով նրանց: — Եկեք սկսենք Հորիզոնական թռիչքից: — Եվ այդ ասելիս նա միանգամից հասկացավ, որ իր բարեկամն իրականում աստվածային էր ոչ ավելի, քան ինքը՝ Ֆլեթչերը:

«Ուրեմն սահմաններ չկան, Զոնաթան, — մտածեց նա: — Դե ինչ, այդ դեպքում հեռու չէ այն ժամը, երբ ամպերի միջից կհայտնվեմ քո ափին ու քեզ մեկ-երկու թռիչքաձևեր ցույց կտամ»:

Ու թեև Ֆլեթչերը փորձում էր աշակերտներին նայել պահանջված խստությամբ, բայց և այնպես նա հանկարծ բոլորին տեսավ այնպիսին, ինչպիսին նրանք կային իրականում: Դա մի պահ տևեց միայն, բայց այդ ընթացքում նա ոչ միայն հավանեց, այլև սիրեց այն, ինչ տեսավ: «Ուրեմն սահմաններ չկան, Զոնաթան», մտածեց նա և ժպտաց: Սովորելու իր երթն սկսված էր:

ԳԱԲՐԻԵԼ ԳԱՐՍԻԱ ՄԱՐԿԵՍ

ՄԻ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՐՈՆԻԿԱ

Իսպաներենից թարգմանեց
ՀԵՆՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԸ

«Սիրո որսը մեծամտության արդյունք է»:
ԽԻԼ ՎԻՍԵՆՏԵ

Այն օրը, երբ պետք է սպանեին նրան, Սանտյագո Նասարը արթնանում է առավոտյան 5-ն անց 30-ին, որպեսզի դիմավորի շոգենավը, որով պետք է ժամաներ եպիսկոպոսը: Երազում նա թզենիների անտառում էր, մեղմ անձրև էր մաղում, մի պահ նա իրեն երջանիկ զգաց, բայց արթնացավ ամբողջովին թռչունների ճնշումում կորած: «Երազում միշտ ծառեր էր տեսնում, — 27 տարի անց վերհիշելով անիծյալ երկուշաբթվա մանրամասնությունները, ասաց ինձ նրա մայրը՝ Պլասիդա Լիներոն: — Անցյալ շաբաթ երազ էր տեսել, իբր թռչում է նրբաթիթեղից պատրաստված ինքնաթիռում՝ առանց արգելքի հանդիպելու, թռչում է նշենիների միջով», ասաց նա ինձ: Սակայն, անոթի փորով պատմած երազները ճիշտ գուշակողի բարի համբավը վայելելով, նա որդու այդ երազների միջև չի նկատում ոչ մի ճակատագրական կապ, ինչպես չէր նկատել առաջներում, երբ որդին արթնանալով առավոտյան, իր ծառազարդ երազներն էր պատմում նրան:

Սանտյագո Նասարը չէր հավատում կանխանշաններին: Նա քիչ ու վատ էր քնել, առանց շորերը հանելու. արթնացել էր գլխացավով, քիմքում՝ ինչ-որ տհաճ համ, որը նա բացատրում էր որպես մինչև կեսգիշեր տևած հարսանյաց խրախճանքի բնական հետևանք: Բոլորը, ում նա հանդիպում է 6-ն անց 05-ին տանից դուրս գալուց հետո, մինչև մեկ ժամ անց ինքը խոզի պես կտոր-կտոր կլիներ, նրան հիշում էին քնաթաթախ, թեև լավ տրամադրությամբ, և բոլորին էլ առանց որևէ հիմքի համոզում է, որ օրը հրաշալի է: Ոչ ոք հաստատ չկարողացավ ասել՝ արդյոք նա եղանակը նկատի ուներ: Շատերն էին համաձայն, որ առավոտը յուսառատ էր, իսկ ծովից փչող թեթև զեփյուռը կորչում էր թզենիների մեջ և, ուրեմն, դեպքը կատարվել էր փետրվարյան մի գեղեցիկ օր: Բայց ոմանք էլ պնդում էին, որ եղանակը վատն էր, երկնքից գորշ, գետնահուպ ամպեր էին կախվել, կուտակված ջրերի ծանր հոտ կար, իսկ դժվարության պահին Սանտյագո Նասարի երազում տեսած բարակ անձրևն էր մաղում: Հարսանիքի գինարբուքից հետո ես ինձ գցել էի Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսի աստվածային գիրկը, որտեղ ինձ չկարողացան գտնել նույնիսկ ահաբեկված զանգերը, որոնք, ով իմանա, գուցե եպիսկոպոսի պատվին էին ղողանջում:

Սանտյագո Նասարը հագնում է չօսլայած սպիտակ կտավե տուսբատ ու վերնաշապիկ, ինչպիսին նա հագել էր հարսանյաց

[illegible] դրել։ Դա վսանգավոր ճոխություն էր նրա համար։ Գրեթե Եպիսկոպոսի ժամանումը, կիագներ խակե վերնաշապիկն ու հեծյալի երկարաճիտ կոշիկները և ամեն երկուշաբթվա պես կմեկներ հորից ժառանգած՝ իր «Աստվածային պատկերը» փարախը, որ կառավարվում էր բարեխղճորեն, բայց առանց որևէ հաջողության։ Այդ օրերին նրա ձիու թամբին «357-Մագնումն» էր, որից արձակած գնդակը, ինչպես ինքն էր ասում, ուզածդ ձիուն երկու կես կաներ։ Իսկ պահարանում դեռ «3006 Մալինչեր Շյոնաու» կար, «300 Հոլանդ Մագնում», հեռադիտակային երկփողանի «22-Հորնետ» ու նաև «Վինչեստեր»։ Նա իր քնելաձևն էլ հորից էր ժառանգել՝ զենքը միշտ բարձի տակ։ Բայց այն օրը, տանից հեռանալիս, նա հանում է փամփուշտներն ու փակում գրասեղանի դարակում։ «Երբեք պահեստատուփը լցրած չէր թողնում», ասաց ինձ նրա մայրը։ Ես դա գիտեի, գիտեի նաև, որ զենքը պահում էր մի տեղ, իսկ փամփուշտները՝ մի այլ, որպեսզի տանը ոչ ոք չօգտվեր դրանցից։ Այդ սովորությունը հայրն էր մտցրել այն օրից, երբ աղախինը բարձրացնում է բարձը և հրացանը ընկնում է հատակին ու... պայթում, գնդակը ջարդում է պահարանը, ծակում դահլիճի պատը, աղմուկ հանում հարևանի ճաշասենյակում և հրապարակի մյուս եզրին ջարդուփշուր անում եկեղեցու նախասրահում դրված գիպսե սրբուհուն։ Սանտյագո Նասարը, որ այն ժամանակ դեռ շատ փոքր էր, հետագայում երբեք չի մոռանում այդ դասը։

Վերջին անգամ մայրը նրան տեսավ ննջասենյակով փութկոտ քայլերով անցնելիս։ Նա արթնացավ, երբ տղան լոգարանում մթության մեջ ասպիրինի հաբեր էր փնտրում, և երբ վառեց լույսը, նա կանգնած էր դռների մեջ՝ ձեռքին ջրամանը, ու այդպես էլ մնաց մոր հիշողության մեջ։ Այդ ժամանակ էլ Սանտյագո Նասարը պատմեց մորը իր երազը, բայց մայրը նրա երազում տեսած անտառին նշանակություն չտվեց։

— Թռչունների մասին բոլոր երազները քաջառողջության հետևանք են, — ասաց նա։

Նա տեսավ որդուն նույն մահճակալին և նույն վիճակում, ինչ վիճակում գտա ես նրան. երբ վերադարձա այդ մոռացված գյուղակը, որպեսզի ցրված բեկորների օգնությամբ վերականգնեմ հիշողությանս փշրված հայելին, գտա նրան նույն մահճակալի մեջ և նույն վիճակում՝ շուլալված ծերության վերջին շողերով։ Աղոտ լույսի տակ հազիվ էին նշմարվում նրա դիմագծերը, գլխատակին երևում էին մշտական գլխացավի դեղատոմսերը, որ հանձնել էր որդին ննջասենյակով անցնելիս։ Պառկած էր մահճակալի ճաղե-

լին կպած, որպեսզի կարողանա անհրաժեշտ դեպքում բարձրանալ: Կիսամութից բորբոսահոտ էր գալիս, որն ինձ ոճրագործության այն առավոտը հիշեցրեց:

Երբ ես երևացի դռան քառանկյունում, նա իսկույն որդուն՝ Սանտյագո Նասարին հիշեց: «Այդտեղ էր կանգնած, — ասաց նա ինձ:

Հագին սովորական ջրով լվացած սպիտակ կտավե տաբատն էր. ծնված օրից չէր կարողանում տանել օսլայի խշշոցը՝ շատ նրբազգաց էր»: Այդպես մահճակալին պառկած, նա հիլի ընկույզներ էր ծամում, մինչև որդու վերադարձն հիշեցնող տեսիլքը չքացավ աչքերից: Հետո ծանր հոգոց հանեց. «Իմ կյանքում նա միակ իսկական տղամարդն էր»:

Մոր այդ վերհուշի մեջ ես տեսա նրան: Քսանմեկ տարին լրացել էր հունվարի վերջին շաբաթ օրը: Բարեկազմ, գունատ դեմքով, արաբական կոպերով, հոր գանգուր մազերով: Նա միակ զավակն էր ամուսնական զույգի, որը ոչ մի երջանիկ օր չէր տեսել, սակայն ինքը երջանիկ էր հոր հետ՝ մինչև վերջինիս հանկարծամահ լինելը, և հետո էլ մինչև այն անիծյալ երկուշաբթին, երբ տարի շարունակ իրեն երջանիկ էր համարում նաև մոր հետ: Մորից էլ իր բնազդն էր ժառանգել: Իսկ հորից՝ զենքին տիրապետելու, թամբին վստահ նստելու վարպետությունը, ձիասիրությունը, քաջության և ողջախոհության արվեստը: Նա հոր հետ արաբերեն էր խոսում, բայց ոչ Պլասիդա Լիներոյի ներկայությամբ, որպեսզի մայրը չընկճվի: Նա զենք չէր կրում, միայն մեկ անգամ գյուղում նրան տեսան զենքը ձեռքին, այն էլ որսորդական բազեների ցուցադրման միջոցին: Հորից հետո նա թողեց ուսումը երկրորդ կարգի դպրոցի վերջին դասարանից և զբաղվեց ընտանիքի գործերով: Ուրախ, խաղաղ, բարի սրտի տեր մարդ էր Սանտյագո Նասարը:

Այն օրը, երբ նրան պետք է սպանեին, մայրը տեսնում է նրան սպիտակ հագուստով, և թվում է, թե որդին շփոթել է ամսաթիվը: «Հիշեցրի, որ օրը երկուշաբթի է», ասաց նա ինձ: Որդին պատասխանում է, որ քահանայական հագուստը վրան է քաշել նրա համար, որ գուցե հանկարծ ստիպված լինի համբուրել եպիսկոպոսի աջը: Մայրը անտարբեր է ընդունում որդու այդ խոսքերը:

— Գուցե նավից նույնիսկ չիջնի էլ, — պատասխանում է մայրը:

Մի չնչին օրհնանք կնետի և կդառնա եկած ճանապարհով: Նա զզվում է այս մարդկանցից:

Սանտյագո Նասարը հասկանում է, որ մայրը ճիշտ է, բայց եկեղեցական կանոններն աներկբա հնազանդություն են պարտադրում: «Ասես կինո լինի», մեկ անգամ ասաց նա ինձ: Եպիսկոպոսի ժամանման հետ կապված միակ բանը, որ հետաքրքրում էր մորը, այն էր, որ որդին անձրևի տակ չընկներ՝ գիշերը նա լսել

էր որդու հազը քնած ժամանակ: Ստիպում է անձրևանոց վերցնել՝ բայց ով էր լսողը. որդին ձեռքով հրաժեշտ է տալիս մորը և դուրս ելնում: Դա նրանց վերջին հանդիպումն էր:

Վիկտորիա Գուսմանը, խոհարարուհին, համոզված էր, որ անձրև չկար ոչ այն օրը, ոչ էլ ամբողջ փետրվարին: «Ընդհակառակը, — ասաց նա ինձ, երբ մահվանից քիչ առաջ ես տեսության գնացի նրան: — Արևը սկսեց այրել ավելի ուժգին, քան օգոստոսին»: Շներով շրջապատված, նա երկրորդ նախաճաշի համար նապաստակներ էր մորթում, երբ Սանտյագո Նասարը խոհանոց է մտնում: «Սովորաբար արթնանում էր դժվար անցկացրած գիշերվա հետքերը դեմքին», դժկամորեն հիշում էր Վիկտորիա Գուսմանը: Արդեն հասունացած Դիվինա Ֆլորը, նրա դուստրը, ինչպես միշտ, կոնյակով սուրճ է մատուցում Սանտյագո Նասարին, նախորդ գիշերվա ծանրությունից նրան ազատելու համար: Խոհանոցում կրակի ճտճտոցը, կեռերից կախված նապաստակները խորհրդավոր տեսք ունեին: Սանտյագո Նասարը ասպիրինի ևս մեկ հաբ է կուլ տալիս, նստում և դանդաղ կումերով սուրճ է խմում, երազկոտ հայացքը չկտրելով կանանցից, որոնք կրակի մոտ նապաստակների փորոտիքն են մաքրում: Իհարկե, չնայած տարիքին, Վիկտորիա Գուսմանը լավ էր պահպանված, իսկ աղջիկը՝ վայրենի, դեռևս չթամբած, ասես սեփական կրծքերի գրոհից ճնշված: Երբ նա մոտենում է դատարկ բաժակը վերցնելու, Սանտյագո Նասարը բռնում է նրա դաստակը:

— Արդեն թամբելուդ ժամանակն է, — ասում է նա:

Վիկտորիա Գուսմանը ցույց է տալիս արյունոտ դանակը:

— Զայնդ, լպստածի մեկը, — սաստում է նա: — Քանի ես ողջ եմ, դու այդ ջրից չես խմի:

Իբրահիմ Նասարի սիրուհին չէր կարողանում մոռանալ՝ իր ցավը: Կալվածքի տարբեր անկյուններում երկար տարիներ վայելած գաղտնի սիրո հաճույքը վաղուց էր սպառվել, խարսխվել խոհանոցին, և նա, տանտիրուհու փոխարեն, դարձել էր ընտանիքի աղախինը: Ահա սա էլ՝ Դիվինա Ֆլորը, վերջին սիրո պտուղը, իրեն պարտադրված էր զգում Սանտյագո Նասարի մահճակալի քաղցրության գաղտնիքներն իմանալուն և այդ մտահոգության պատճառով ժամանակից շուտ տանջանքների մեջ էր ընկել: «Նրա նման մարդ դեռ չի ծնվել», ասաց նա ինձ հպարտ, բայց թախծոտ ձայնով, շրջապատված իր մյուս սերերի պտուղներով: «Իսկը հոր կտորն էր, — նետեց Վիկտորիա Գուսմանը: — Կղկղանք»: Բայց չկարողացավ խեղդել հոգում բարձրացած փոթորիկը, երբ հիշեց, թե ինչպիսի սարսափ պատեց Սանտյագո Նասարին, երբ այն օրն ինքը ճղեց ճագարներից մեկի փորն ու գարշահոտ փորոտիքը նետեց շներին:

— Մի լինի բարբարոս, — ասել էր նա: — Պատկերացրու, որ դա էլ աստծո ծնունդ է:

Վիկտորիա Գուսմանին պետք էր քսան տարի՝ հասկանալու համար, որ անօգնական կենդանի սպանողը նույն անտարբերությամբ էլ կարող է մարդ սպանել: «Տեր աստված, — գոչեց նա սարսափահար, — ուրեմն նա կանխազգում էր այդ ամենը»: Բառացիորեն այդ առավոտ նա այնքան դառնություն էր ճաշակել, որ [illegible]նակում էր կերակրել շներին մյուս ճագարների փորոտիքով սրայն թե դառնացներ Սանտյագո Նասարի նախաճաշը: Նույն պահին էլ գյուղն արթնանում է նավի շչակների սուլոցից, որ եպիսկոպոսի ժամանումն էր ազդարարում:

Տունը երկհարկանի հին շինություն էր, որի երկթեք ցինկապատ տանիքը դարձել էր բակում ավելորդ թվացող իրերի պահեստ: Կառուցված էր դեռ այն ժամանակ, երբ գետը նավարկելի էր, և ծովային մակույկներն ու նավերը, օգտագործելով բնական ջրավազանները, մինչև այս վայրերն էին հասնում: Երբ քաղաքացիական կռիվներից հետո Իբրահիմ Նասարը ժամանեց արաբների հետ, ջուրն արդեն նվազել էր, և նավերն այլևս չէին հասնում այստեղ, ոչ էլ պահեստներն էին օգտագործվում: Իբրահիմ Նասարը մի փոքրիկ գումարով գնեց պահեստները՝ որպեսզի խանութ բացի, օգտագործի, բայց չբացեց, այլ ամուսնացավ և դրանք վերածեց բնակելի տան: Ներքնահարկի սենյակներից մեկը դարձրեց արհեստանոց, խորքում ախոռ կառուցեց իր չորս առույգ, բանող ձիերի համար, մի սենյակն էլ, որի պատուհանները նայում էին գարշահոտ ջրերով ողողված բակին, վերածեց խոհանոցի: Միակ բանը, որ նա անփոփոխ թողեց սրահում, ինչ-որ նավից փրկած զսպանակաձև աստիճաններն էին: Վերնահարկում, ուր անցյալում նավավարչության աշխատասենյակներն էին, սարքավորեց երկու ընդարձակ ննջասենյակ, հինգ փոքրիկ սենյակներն էլ մանկասենյակների վերածեց՝ իր ապագա բազմաթիվ երեխաների համար: Բակի ծառերի վրա հարթակ սարքավորեց, ուր Պլասիդա Լիներոն մարտի երեկոներին իր մենությունն էր կարճացնում: Շենքի ճակատի կողմից պահպանեց գլխավոր մուտքը, որի երկու կողմից նախշազարդ պատուհաններ բացեց: Պահպանեց նաև ետնամուտքը, լոկ փոքր-ինչ բարձրացրեց այն, որպեսզի հնարավոր լիներ ձին հեծած ներս մտնել: Օգտագործման մեջ դրեց նաև նավամատույցի մի մասը: Այդ մուտքն էլ դարձավ ամենաբանուկը, և ոչ միայն այն պատճառով, որ ճաշասենյակ էր տանում ու բակ ելնելու և այն շրջանցելու հարկ չկար, այլև՝ ուղիղ բացվում էր դեպի նոր նավահանգիստ տանող փողոցը: Շքամուտքը, բացի տոնահանդեսներից, միշտ փակ էր, սողնակն էլ գցված:

Քսանչորս տարեկան և միմյանց այնքան նման, որ հազիվ էի տարբերվում: «Փորձված, բայց բարեկիրթ բնավորության տեր մորից», ասված էր եզրակացության մեջ: Ես ճանաչում էի նրանց առաջին կարգի դպրոցից և նույնը կասեի: Այդ առավոտյան նրանց հագին դեռ հարսանյաց սև կոստյումներն էին՝ Էլ-Կարիբեի համար բավականին գորշ և հասարակ, դեմքերի արտահայտությունը տանջված էր, բայց սափրվելու իրենց պարտականությունը նրանք կատարել էին բարեխղճորեն: Հարսանիքի նախօրյակից էին սկսել խմելը, երեք օր էր անցել, սակայն հարբած չէին, միայն անքնություն էր տանջում: Եվ այժմ, Կլոտիլդե Արմենտայի կրպակում երեք ժամ անօգուտ սպասելուց հետո, արևի առաջին շողերի հետ քուն էին մտել՝ շաբաթ օրվանից սկսած առաջին անգամ: Երբ եպիսկոպոսի շոգենավը սկսում է սուլել, նրանք նույնիսկ աչք չեն բացում, բայց հենց որ Սանտյագո Նասարը դուրս է գալիս տանից, բնազդն արթնացնում է նրանց: Նրանք բացում են լրագրերի փաթեթներն ու Պեդրո Վիկարիոն բարձրանում է տեղից:

— Ի սեր աստծու, — աղերսում է Կլոտիլդե Արմենտան, — գոնե սենյոր եպիսկոպոսի պատվի համար քիչ սպասեցեք:

«Դա սուրբ հոգու վերջին ճիչն էր», հաճախ էր կրկնում Կլոտիլդե Արմենտան: Իրականում դա բնազդային պատահականություն էր, որպեսզի բարեգթություն: Վիկարիո երկվորյակները միապահ մտածում են, և նա, որ արդեն բարձրացել էր տեղից, նորից նստում է: ՈՒ հետևում են, թե ինչպես է Սանտյագո Նասարը անցնում հրապարակով: «Նայում էին ավելի շուտ խղճահարությամբ», ասում էր Կլոտիլդե Արմենտան: Ծխական դպրոցից վերադարձող երեխաներն այդ պահին լցվում են հրապարակ և իրենց գյուղական խայտաբղետ հագուստներով անփույթ խառնաշփոթ ստեղծում այնտեղ:

Պլասիդա Լիներոն ճիշտ էր. եպիսկոպոսը նույնիսկ չիջավ շոգենավից: Բացի երեխաներից ու պաշտոնական ներկայացուցիչներից, նավամատույցում ահագին ժողովուրդ էր հավաքվել, յուրաքանչյուրի ձեռքին՝ ցանցավանդակ, մեջը՝ լավ բտած աքաղաղ, որ եպիսկոպոսին նվեր էին բերել. բոլորին քաջ հայտնի էր, թե նա ինչպես էր սիրում աքաղաղների կատարներից պատրաստած ապուրը: Նավամատույցում այնքան փայտ էր կուտակված, որ բարձելու համար երկու ժամից ավելի էր պետք: Բայց շոգենավը կանգ չի առնում: Հրեշի պես փնչացնելով նա հայտնվում է գետաբերանին, այդ պահին երաժշտախումբը նվագում է եպիսկոպոսի հիմնը, վանդակներում փակված աքաղաղները աղմուկ են բարձրացնում ու ոտքի հանում գյուղի բոլոր աքաղաղներին:

Այն ժամանակներում փայտի օգնությամբ շարժման մեջ դրվող

առասպելական շոգենավերը անհայտանալու վրա էին, այն քչերն էլ, որ դեռ օգտագործվում էին, ոչ երաժշտական սրահ ունեին, ոչ էլ մեղրամիսն անցկացնելու համար հարմարեցված մենախցեր: Նրանք հազիվ էին շարժվում հոսանքին հակառակ: Բայց սա նոր նավ էր, մեկի փոխարեն ուներ երկու ծխնելույզ: Դրանց վրա օղակաձև դրոշներ էին նկարված, նավախելին գտնվող շրջանաձև ղեկանիվը իսկական ծովային նավի տեսք էր տալիս նրան: Վերին տախտակամածին, նավապետի խցիկի կողքին կանգնած էր եպիսկոպոսն իր ճերմակ թիկնոցով, շրջապատված իսպանացիներից կազմված շքախմբով: «Հարության տոների առթիվ շրջագայություն էր կատարում», ասաց ինձ իմ քույր Մարգոն: Ինչպես նա բացատրեց՝ նավը խտացած գոլորշու մի ամպ է թողնում նավամատույցի մոտով անցնելիս և ցրցամում մարդկանց գոլորշու կաթիլներով:

Եպիսկոպոսը ձեռքի խաչով սկսում է խաչակնքել նավամատույցում հավաքվածներին, երևի նույնն է անում նաև մտովին, մինչև շոգենավն անհետանում է տեսադաշտից, և մնում է միայն աքաղաղների բարձրացրած աղմուկը:

Սանտյագո Նասարը իրեն խաբված զգալու հիմքեր ուներ: Պադրե Ամադորի օգնությամբ նա մի քանի կույտ փայտ էր պատրաստել, անձամբ ձեռք էր բերել ամենաթմփլիկ աքաղաղները: Բայց նրա սրտնեղությունը որոպեներ է տևում: Իմ քույր Մարգոն, որ նավամատույցում նրա կողքին էր կանգնած, գտնում էր, որ նրա տրամադրությունը բարձր էր, նույնիսկ տոնահանդեսը շարունակելու ցանկություն էր հայտնել, թեև ասպիրինի հաբերը ոչ մի օգուտ չէին բերել: «Նա բոլորովին էլ մրսած չէր երևում, միայն անընդհատ հաշվում էր, թե ինչքան նստած կլիներ հարսանիքը», ասաց նա ինձ: Նրանց հետ էր նաև Քրիստո Բեդոյան. ըստ նրա հաշվումների, հարսանյաց ծախսերն ավելի մեծ են եղել: Հարսանիքից հետո մենք միասին էինք՝ ես, Սանտյագո Նասարն ու Քրիստո Բեդոյան, բայց մեզանից բաժանվելով այս վերջինս ոչ թե մեկնում է ծնողների մոտ քնելու, այլ մնում է տատի տանը՝ նրա հետ զրուցելու: Այնտեղ էլ նա ստանում է անհրաժեշտ տվյալներ, որոնք լրացնում են հարսանիքի ծախսերի ընդհանուր պատկերը: Հյուրերի պատվին իրենք զոհաբերում են քառասուն հնդկահավ, տասնմեկ խոճկոր, ինչպես նաև չորս հորթ, որ փեսացուն մորթել է տալիս իր կողմից՝ հրապարակում հավաքված ամբոխի համար: Ոչնչացվում է մաքսանենգներից ձեռք բերած 205 արկղ խմիչք՝ մոտավորապես 2000 շիշ շաքարեղեգնի ռոմ, որ բաժանում են ամբոխին: Ամեն ոք, աղքատ թե հարուստ, իր բաժինն է ստանում այդ աղմկաշատ գինարբուքի սեղանից: Սանտյագո Նասարը բարձրաձայն երազում է.

— Իմ ամուսնությունն էլ այսպիսին է լինելու, — ասում է նա: — Մարդիկ մինչև իրենց կյանքի վերջ նրա մասին են խոսելու:

Քրոջս թվում է, թե երկնքից հրեշտակ է իջել: Նա նախանձով է հիշում Ֆլորա Միգելին, նրա բարի բախտը, որը, կյանքում այնքան բան ունենալուց հետո, այս տարվա Հարության տոներին պետք է ունենար նաև Սանտյագո Նասարին: «Ես հասկացա, որ նրանից բացի ուրիշ զույգ նա դժվար թե ճարի, — ասաց նա ինձ: — Պատկերացնո՞ւմ ես՝ գեղեցիկ, կարգապահ. քսանմեկ տարեկանում այդպիսի հաջողություններ»: Սովորաբար քույրս նախաճաշի էր հրավիրում նրան, երբ տանը մանիոկայի բլիթներ էին լինում, իսկ մայրս այդ առավոտ բլիթներ էր պատրաստել: Այդ անգամ էլ Սանտյագո Նասարը ուրախացած համաձայնել էր:

— Իսկույն փոխեմ շորերս ու հասնեմ քեզ, — ասում է և հանկարծ հիշում, որ ժամացույցը թողել է գրասեղանի վրա: — Ժամը քանիսն է:

Ժամը 6-ն անց է լինում 25: Սանտյագո Նասարը բռնում է Քրիստոս Բեդոյայի թևը և տանում դեպի հրապարակ:

— Քառորդ ժամից ձեր տանն եմ, — ասում է նա քրոջս:

Քույրս առաջարկում է մեկնել հենց նույն պահին, միասին, քանի որ նախաճաշը արդեն սեղանին է: «Առաջարկությունն արվեց իմիջիայլոց, — ասաց ինձ Քրիստո Բեդոյան: — Ինձ նույնիսկ թվաց, թե Մարգոն գիտեր, որ պետք է սպանեն նրան և ուզում էր փրկել»: Բայց Սանտյագո Նասարը համոզում է նրան՝ շարունակել ճանապարհը. նա պետք է հագներ հեծյալի զգեստները, առավոտյան մեկնելու էր «Աստվածային պատկեր»՝ խոզերին կրտելու: Քրոջս հրաժեշտ է տալիս ձեռքի նույն թափահարումով և գնում դեպի հրապարակ, տանելով իր հետ թևանցուկ արած Քրիստո Բեդոյային: Դա վերջին անգամն էր, որ քույրս տեսնում էր նրան:

Նավամատույցում հավաքվածներից շատերին էր հայտնի, որ պետք է սպանեին Սանտյագո Նասարին: Դոն Լազարո Ապոնտեն, ակադեմիայի՝ զորքի կանոնավոր նահանջի դասընթացների ունկընդիրն ու ահա արդեն տասնմեկ տարի մունիցիպալ ալկալդը, ձեռքի շարժումով ողջույն է հղում նրան: «Ես իմ սեփական հաստատ կարծիքն ունեի այն մասին, որ այլևս ոչ մի դժբախտություն չի պատահի», ասաց նա ինձ: Պադրե Կարմեն Ամադորը ևս չի անհանգստանում: «Երբ տեսա նրան ողջ և առողջ, մտածեցի, որ այդ ամենը անհիմն է», ասաց նա ինձ: Ոչ մեկն ինքն իրեն հարց չի տալիս նույնիսկ, թե Սանտյագո Նասարը նախազգուշացվա՞ծ է արդյոք, որովհետև բոլորին անկարելի է թվում, որ նա նախազգուշացված չլինի:

Իրականում իմ քույր Մարգոն մեկն էր այն սակավաթիվ մարդկանցից, ովքեր դեռևս չէին հավատում, որ կարող են սպանել նրան: «Իմանալու դեպքում, ես տուն կտանեի նրան, եթե նույնիսկ անհրաժեշտ լիներ նրան կապկպել», հայտարարեց նա քննիչին: Տարօրինակ ու զարմանալին այն էր, որ մայրս նույնպես անտեղյակ էր: Արդեն երկար ժամանակ նա տանից դուրս չէր գալիս, անգամ պատարագին չէր մասնակցում, բայց ամեն ինչ բոլորից շուտ էր իմանում: Ես դա հասկացա այն ժամանակ, երբ դպրոցի պատճառով սկսեցի վաղ արթնանալ: Մայրս՝ գունատ, խորհրդավոր դեմքով, ավելը ձեռքին, այգաթագի լույսով ողողված, մթընշաղում բակն էր ավլում և սուրճի իմ ամեն կումի հետ ինձ պատմում էր մեր քնած ժամանակ աշխարհում տեղի ունեցածը: Ասես գաղտնի թելերով էր կապված գյուղի բնակիչների, առանձնապես իր հասակակիցների հետ. դեռ տեղի չունեցած այնպիսի նորություններ էր հայտնում, որ ոչ մի կերպ չէր կարող իմանալ, եթե գուշակելու ընդունակությունը չունենար: Այն առավոտ, սակայն, նա չունեցավ լուսադեմի ժամը երեքից գյուղում թևածող ողբերգության նախազգացումը: Նա վերջացրել էր բակն ավլելը և բլիթների համար մանիոկա էր մաքրում: «Աքաղաղների կանչեր էին լսվում», սովորաբար ասում է մայրս, հիշելով այն օրը: Սակայն հեռվից լսվող աղմուկը կապում էր ոչ թե եպիսկոպոսի ժամանման, այլ հարսանիքի վերջին ժամերի հետ:

Մեր տունը գտնվում էր գլխավոր հրապարակից հեռու, գետի ափին, մանգոյի անտառի եզրին: Իմ քույր Մարգոն նավամատույց է գնում գետի ափով: Մարդկանց ուղեղում եպիսկոպոսի ժամանումն էր, ուրիշ նորություններով զբաղվելու ժամանակ չկար: Հիվանդներին նստեցնում են պատշգամբներում, որպեսզի նրանք աստծո դեղորայքն ընդունելու հնարավորություն ունենան, կանայք բակերից դուրս են վազում՝ ձեռքներին հավեր, խոճկորներ, զանազան ուտելիքներ, դիմացի ափից մոտենում են ծաղիկներով բեռնված նավակներ: Բայց երբ մեկնում է եպիսկոպոսը, ոտնահետք անգամ չթողնելով ափին, աղմուկ-աղաղակով իրեն զգալ է տալիս մի ուրիշ նորություն: Իմ քույր Մարգոյի ականջին այդ լուրը հասնում է ինչպես շանթի հարված. Անխելիա Վիկկարիոն, նախորդ օրն ամուսնացած գեղեցիկ աղջկնակը, ետ է ուղարկվել ծնողների տուն, որովհետև փեսացունպարզել է, որ նա զրկված է եղել կուսական սրբությունից: «Թվաց, թե այդ ես պետք է մեռնեի,— ասաց քույրս: — Բայց ինչքան էլ տեղի ունեցած դեպքը ծամեցին-ծամծմեցին, ոչ ոք չկարողացավ բացատրել, թե այդ ինչպես դժբախտ Սանտյագո Նասարը դարձավ նման չարախոսության առարկա»: Միակ բանը, որ հաստատ հայտնի էր բոլորին, այն էր, որ Անխելա Վիկարիոյի եղբայրները նրան էին սպասում, որ սպանեն նրան:

Քույրս տուն է դառնում, իր մեջ հազիվ խեղդելով լաց լինելու ցանկությունը: Նա մորս հանդիպում է ճաշասենյակում, տնային կապույտ ծաղկավոր զգեստով, որ նա հագել էր եպիսկոպոսի պատվին, եթե հանկարծ վերջինս բարեհաճեր պատվո այցելություն կատարել մեր տուն: Քթի տակ անպատասխան սիրո ֆադո մռտալով, նա սեղան գցելիս է լինում: Քույրս նկատում է, որ սեղանը սովորականից ճոխ է:

— Սանտյագո Նասարի պատվին է,— ասում է մայրս: — Ինձ ասացին, որ դու նրան նախաճաշի ես հրավիրել:

— Վերջ տուր,— բարկանում է քույրս:

Եվ նույն պահին էլ պատմում է ամեն ինչ: «Բայց նա ասես արդեն գիտեր այդ մասին,— ասաց ինձ քույրս: — Եղավ այնպես, ինչպես միշտ, ինչ որ բան էր պատմում, և դեռ պատմությունը կեսին չհասած, ան արդեն գիտեր, թե ինչպես է վերջանալու»: Այդ դժբախտ լուրը մորս համարանլուծելի խնդիր էր: Նասարին մորս պատվին էին Սանտյագո կոչել, նա նրա կնքամայրն էր, բայց մայրս արյան կապի մեջ էր նաև Պուրա Վիկարոյին՝ ետ ուղարկված հարսնացուի մոր հետ: Լուրը մինչև վերջ չլսելով, ան հագնում է բարձրակրունկ կոշիկներն ու վրան գցում սև թիկնոցը, որ օգտագործում էր միայն դժբախտ դեպքերի պահին: Հայրս, պառկած տեղից լսելով խոսակցությունը, տնային զգեստով հայտնվում է ճաշասենյակում և անհանգիստ հարցնում, թե այդ ուր է պատրաստվում նա:

— Խնամի Պլասիդային զգուշացնելու,— պատասխանում է մայրս: — Արդար բան չի. երբ ողջ աշխարհը գիտի, որ երեխային պետք է սպանեն, իսկ նա չպետք է իմանա:

— Ինչպես նրա հետ ենք կապված, այնպես էլ կապված ենք Վիկարիոների հետ,— ասում է հայրս:

— Բայց հարկավոր է միշտ լինել նրա կողմը, ում մահ է սպառնում,— ասում է մայրս:

Կից սենյակից երևում են փոքրիկ եղբայրներս: Ամենափոքրը, ահաբեկված ողբերգական հեռանկարից, սկսում է լաց լինել: Կյանքում առաջին անգամ մայրս ուշադրություն չի դարձնում ոչ նրանց, ոչ էլ ամուսնու վրա:

— Սպասիր, հագնվեմ,— ասում է նրան հայրս:

Բայց մայրս արդեն փողոցում է լինում: Իմ եղբայր Խայմեն, որ ընդամենը յոթ տարեկան էր, պատրաստվել էր դպրոց գնար:

— ՈՒղեկցիր մորդ,— հրամայում է հայրս:

Խայմեն վազում է մորս ետևից, չիմանալով, թե ինչ է կատարվում և ուր են գնում, կախվում է նրա թևից: «Նա ինքն իրեն խոսելով էր գնում,— ասաց ինձ Խայմեն: — «Անօրեն մարդիկ, ՀՀնջում էր նա, կեղտոտ կենդանիներ, որ բացի դժբախտություն բերելուց, ոչ մի շնորհք չունեք»: Նա նույնիսկ գլխի չր ընկնում, որ ետևից քարշ է տալիս թևից կախված երեխային: «Երևի մարդիկ մտածեին՝ ցնդել եմ,— ասաց նա ինձ: — Միակ բանը, որ ես հիշում

 եմ, հեռվից եկող աղմուկն էր, ասես հարսանյաց հանդեսը նոր էր

սկսվել, և ամբողջ աշխարհը վազում էր դեպի հրապարակ»: Նա ինչքան ուժ ուներ, արագացնում է քայլերը, որքան հնարավորություն էր տալիս տարիքը՝ գործադրում է այդ ուժը, մինչև որ դիմացից վազող ինչ-որ մեկը նրան հանում է զառանցանքից:

— Մի անհանգստացեք, Լուիզա Սանտյագա,— գոռում է ան, անցնելով կողքից,— արդեն սպանեցին նրան:

Բայարդո Սան Ռոմանը, որ ետ է ուղարկում նորահարսին, հայտնվել էր գյուղում նախորդ տարվա օգոստոսին, հարսանիքից վեց ամիս առաջ: Նա ժամանել էր շաբաթօրյա շոգենավով, արծաթե փայլուն սուսերակալը ուսերին, գոտու համապատասխան ճարմանդով և երկարաճիտ կոշիկների ցողուն խթաններով: Երեսունին մոտ, լավ հագնված, ցլամարտիկի բարեկազմ մարմնով, աչքերը փայլուն, մաշկը արևի հուր-կրակով այրված: Ժամանեց՝ հագին կարճ պիճակ, լայն ճտքերով տաբատ, երկուսն էլ բնական խրոմից, նույն գույնի մի զույգ ձեռնոցներով: Նրա հետ ժամանեց նաև Մագդալենա Օլիվերը, որ ամբողջ նավարկության ժամանակ աչքը չէր կրտել նրանից: «Ասես կաչաղակ լիներ,— ասաց նա ինձ: – Այնպիսի հրապուրիչ տեսք ուներ, որ մնում էր վրան կարագ քսել ու ողջ-ողջ ուտել»: Նա առաջինը չէր և ոչ էլ վերջինը, որ այդպես մտածեց և Բայարդո Սան Ռոմանին անվանեց տղամարկությունից զուրկ ոչնչություն:

Մայրս օգոստոսի վերջերին նամակ է գրում ինձ՝ քոլեջ և, իմիջիայլոց, հայտնում. «Մեզ մոտ է եկել հազվագյուտ մի տիպ»: Հաջորդ նամակում հաղորդում է. «Այն հազվագյուտ տիպին կոչում են Բայարդո Սան Ռոման, ասում են, որ սքանչելի մարդ է, բայց ես ինչ-որ չեմ նկատել»: Թե նա ինչու էր ժամանել, այնպես էլ չիմացվեց: Հարսանիքից առաջ ինչ-որ մեկը չկարողացավ զսպել հետաքրքրասիրությունը, և նա պատասխանեց. «Գյուղից գյուղ ընկած հարսնացու էի փնտրում»: Ով իմանա, գուցեև ճիշտ էր ասում, նման ձևով կարող էր նաև ուրիշ բան ասել. այնպես էր խոսում, որ ավելի շուտ մտքերն էր թաքցնում:

Հենց նույն երկեկո կինոյում մարդկանց հասկացնում է, թե իբր շոգեքարշաշինարար է, խոսում է երկաթուղու կառուցման մասին, որը գյուղակը կկապի արտաքին աշխարհի հետ և կփրկի նրան գետի քմահաճույքներից: Հաջորդ օրը հեռագրատիպի վրա անձամբ ինչ-որ հեռագիր տկտկացնում, հեռագրավարին սովորեցնում է լիցքաթափված էլեկտրամարտկոցների օգտագործման սեփական ձևը: Նույն ձևով զրուցում է շրջանում տարածված հիվանդությունների կապակցությամբ գյուղ ժամանած զինվորական բժշկի հետ: Նրան դուր են գալիս աղմկալի, երկարատև ֆիեստաները, նա լավ խմում է, նույն հաջողությամբ լուծում ծագող վիճաբանություններն ու դառնում թղթախաղի կատաղի թշնամի: Մի կիրակի, ժամերգությունից հետո, հավաքում է բոլոր լողորդներին ու մրցումներ կազմակերպում. նույնիսկ ամենաճարպիկներին թողնում

կես ճանապարհին: Մայրս այդ մասին հայտնեց ինձ հետևյալ նամակում. «Երևում է՝ նա լողում է նաև ոսկու մեջ»: Այդպիսին էր նրա կարծիքը իսկույն ծնված այն առասպելի մասին, ըստ որի Բայարդո Սան Ռոմանը ոչ միայն ամեն ինչ էր շատ լավ անում, այլև ուներ շատ մեծ հարստություն:

Մայրս նրա վերջնական գնահատականը տվեց հոկտեմբերին ուղարկած նամակում. «Մարդիկ շատ են սիրում նրան,— գրում էր նա ինձ: — Ասում են՝ պատվավոր, բարեսիրտ մարդ է: Անցյալ կիրակի ծնկի եկավ և մասնակցեց լատիներեն պատարագին»: Այն ժամանակներում չէր թույլատրվում հոտնկայս պատարագ կարդալ, օգտագործվում էր միայն լատիներենը, բայց մայրս սովորաբար հայտնի փաստերի էր դիմում, երբ ուզում էր թափանցել իրերի խորքը: Իր այդ աստվածահաճո հայտնագործությունից հետո նա էլի երկու նամակ գրեց ինձ, բայց Բայարդո Սան Ռոմանի մասին ոչինչ չէր հայտնում, նույնիսկ երբ հայտնի էր դարձել, որ վերջինս պատրաստվում է ամուսնանալ Անխելա Վիկարիոյի հետ: Միայն անիծյալ հարսանիքից շատ անց նա հաղորդեց, որ շատ ուշ է ճանաչել նրան, երբ արդեն անհնար էր ուղղել հոկտեմբերին ուղարկած նամակը, և որ նրա ոսկեգույն աչքերը իրեն տագնապ են ներշնչել:

— Նա ինձ վրա սատանայի տպավորություն թողեց,— ասաց նա ինձ: — Բայց ինքդ ես ասել, որ այդպիսի բաներ նամակում չի կարելի գրել:

Ես ծանոթացա նրա հետ ավելի ուշ, քան մայրս, երբ Հարության տոների առթիվ արձակուրդ էի եկել: Նա այնքան էլ վատ տպավորություն չթողեց, ինչպես ասում էին: Ուշագրավ էր, թեև ոչ այնպես, ինչպես իր իդեալական երազներում պատկերացնում էր Մագդալենա Օլիվերը: Ավելի զուսպ թվաց, քան իր թեթևսոլիկություններն էին, նրա մեջ նկատելի էր ինչ-որ քողարկված խստություն, որ նա դժվարությամբ էր թաքցնում նրբաճաշակ շարժուձևի օգնությամբ: Բայց և տխուր թվաց ինձ: Նա արդեն կարգավորել էր Անխելա Վիկարիոյի հետ կապված սիրային բոլոր ձևականությունները:

Այնպես էլ չիմացվեց, թե ինչպես էին նրանք ծանոթացել: Ամուրիների կացարանի տիրուհին, ուր բնակություն էր հաստատել Բայարդո Սան Ռոմանը, պատմեց հետևյալը. սեպտեմբերի վերջին, սրահներից մեկում, ցանցաճոճին պառկած, նա ետճաշյա սիեստա է վայելում, երբ նկատում է Անխելա Վիկարիոյին՝ մոր հետ հրապարակով անցնելիս, ձեռքերին արհեստական ծաղիկներով լի զամբյուղ: Բայարդո Սան Ռոմանն աչքերը կիսաբաց է անում, տեսնում է սևազգեստ կանանց, որ՝ ետճաշյա թմրության այդ ժամին միակ շնչավորներն են լինում, և հարցնում է, թե ով է այդ երիտասարդ աղջիկը: Տիրուհին պատասխանում է, որ կնոջ կրտսեր դուստրն է՝ Անխելա Վիկարիոն: Բայարդո Սան Ռոման

հայացքով ուղեկցում է նրանց մինչև հրապարակի հեռավոր անկյունը:

— Շատ լավ անուն ունի,— ասում է նա:

Հետո գլուխը վերստին դնում է ցանցաճոճի թիկնակին և փակում աչքերը:

— Երբ արթնանամ,— ասում է նա,— հիշեցրու ինձ, որ պետք է գնամ նրա հետ ամուսնանալու:

Անխելա Վիկարիոն պատմեց ինձ, որ կացարանի տիրուհին հայտնել էր իրեն այդ մասին ավելի շուտ, քան Բայարդո Սան Ռոմանը սեր կբացատրեր: «Դա ինձ վախեցրեց», ասաց նա ինձ: Կացարանում բնակվողներից երեքը հաստատեցին այդ փաստը, բայց մյուս չորսը ժխտեցին: Իսկ տվյալները վկայում են, որ Անխելա Վիկարիոն և Բայարդո Սան Ռոմանը գալիս, մոտենում է աջ կողմում դրված վիճակախաղի արկղին, որը մինչ բռնակը ծածկված է լինում սև կտավով, և հարցնում է, թե ինչ արժե սադափե նախշերով զարդարված երաժշտական գործիքը: Աղջիկը հայտնում է, որ գործիքը հանված է վիճակախաղի և ոչ թե վաճառքի:

— Ավելի լավ է,— ասում է նա: — Այդպես ավելի հեշտ կլինի, ավելի էժան կնստի:

Աղջիկը խոստովանեց ինձ, որ նա ցանկացել է զարմացնել իրեն, բայց ոչ սիրային դրդապատճառներից ելնելով: Ընդհակառակը: «Բարձրահասակ մարդիկ միշտ էլ տհաճություն են պատճառել ինձ, սակայն այդպիսի փառամոլի երբեք չէի հանդիպել,— ասաց ինձ, հիշելով այն օրը: — Բացի դրանից, ինձ թվաց, թե նա լեհ է»: Նա ավելի է լցվում ատելությամբ, երբ վիճակախաղի համարը հանելուց հետո, ի զարմանս բոլորի, պարզվում է, որ երաժշտական գործիքն իսկապես Բայարդո Սան Ռոմանն է շահել: Դժվար էր ենթադրել, որ նա, լոկ աղջկան զարմացնելու համար, կարող էր գնել վիճակախաղի բոլոր տոմսերը:

Երեկոյան տուն դառնալով, Անխելա Վիկարիոն երաժշտական գործիքը գտնում է իրենց տանը՝ թղթով փաթաթված և գեղեցիկ ժապավենով կապած: «Ես այնպես էլ չհասկացա, թե նա որտեղից էր իմացել, որ իմ ծննդյան օրն էր», ասաց նա ինձ: Նա մեծ դժվարությամբ է հավատացնում ծնողներին, որ ինքը Բայարդո Սան Ռոմանին այդպիսի նվիրատվության ոչ մի առիթ չի տվել, առավել ևս մի այնպիսի ձևով, որը ոչ ոքի համար չէր կարող աննկատ մնալ: Այնպես որ ավագ եղբայրները, Պեդրոն ու Պաբլոն, նվագարանը կացարան են տանում տիրոջ վերադարձնելու նպատակով, և դա անում են մի այնպիսի աղմուկ-աղաղակով, որ մարդ չի մնում, որ նվագարանի բերելը տեսած լիներ, տանելը՝ ոչ: Բայց թե ինչ քաղցր լեզվով է հարցը լուծում Բայարդո Սան Ռոմանը, մնում է գաղտնիք: Երկվորյակները չեն երևում մինչև լուսաբաց: Առավոտյան, հիմնովին հարբած, նորից ետ են բերում նվագարանը, իսկ նրա հետ՝ նաև Բայարդո Սան

Ռոմանին, որպեսզի անավարտ թողած խրախճանքը շարունակեն իրենց տանը:

Անխելա Վիկարիոն իրենց կարիքավոր ընտանիքի կրտսեր աղջիկն էր: Հայրը՝ հասարակ ոսկերիչ Պոնսիո Վիկարիոն, ընտանիքի պատիվը մի կերպ պահպանելու համար այնքան էր լարված աշխատել, որ զրկվել էր աչքերի լույսից: Մայրը՝ Պուրիսիմա դել Կարմենը, մինչև ամուսնանալը ուսուցչություն էր անում: Դեմքի անհանգիստ, փոքր-ինչ ցրված արտահայտությունը լավ էր քողարկում նրա բնավորության խստությունը: «Իսկական միապետուհու էր նման», հիշում է Մերսեդեսը: Նա այնպիսի ինքնազոհաբերությամբ է նվիրվում ամուսնուն ու երեխաների դաստիարակությանը, որ մարդիկ հաճախ մոռանում են նրա գոյության մասին: Երկու ավագ դստերին ուշ է ամուսնացնում: Թաղում է տենդից մահացած միջնեկ աղջկան, երկու տարի անց էլ շարունակում է կրել սև սգաշորը, որը տանը իր սիրտն է մխիթարում, փողոցում՝ խստություն տարածում նրա շուրջ: Երկվորյակ եղբայրները արդեն հասունացել էին, աղջիկները՝ ամուսնական շեմին կանգնել: Նրանք ասեղնագործությամբ էին զբաղվում, մեքենայի վրա կար անում, ժանյակներ գործում, լվացք անում և արդուկում, արհեստական ծաղիկներ և քաղցրեղեն պատրաստում և, վերջապես, կարողանում էին խմբագրել գործնական փաստաթղթերը: Ի հակադրություն ժամանակակից շատ աղջիկների, որոնք անտարբեր են մահվան նկատմամբ, չորս քույրն էլ քաջածանոթ էին հիվանդներին բուժելու ժողովրդական ավանդույթներին, գիտեին՝ ինչպես հուսադրել մահամերձերին և ինչպես հագցնել հանգուցյալներին: Միակ բանը, որի պատճառով մայրս կշտամբում էր նրանց, քնելուց առաջ մազերը սանրելն էր: «Աղջիկներ, — ասում էր նրանց մայրս, — քնելուց առաջ մի սանրվեք, բախտներդ կփախչի»: Բայց նա համոզված էր, որ նրանցից կիրթ աղջիկներ գոյություն չունեին: «Կրթված աղջիկներ են, — հաճախ էի լսում ես նրանից: — Ամեն մարդ էլ նրանց հետ երջանիկ կլինի. նրանք ամեն ինչ կարող են անել»: Սակայն երկու ավագ քույրերի ամուսինները չկարողացան կտրել նրանց կապը, որովհետև ամեն տեղ նրանք շարունակում էին միասին գնալ, ամուրի կանանց պարեր էին կազմակերպում և միշտ պատրաստ էին լինում նորից արձագանքելու տղամարդկանց ոտնձգություններին:

Անխելա Վիկարիոն չորս քույրերից ամենագեղեցիկն էր. մայրս հաճախ էր կրկնում, որ նա ծնվել էր ինչպես պատմությանը հայտնի բոլոր թագուհիները՝ պորտալարը վզին փաթաթված: Բայց նա անպաշտպան և հոգեպես աղքատ էր, նրան խախուտ ապագա էր սպասում: Ամեն տարի, երբ արձակուրդի էի գալիս Հարության տոների առթիվ, ես հանդիպում էի նրան, և ամեն անգամ նա թվում էր ավելի անօգնական: Պատուհանի գոգին նստած, նա երեկոները թղթե ծաղիկներ էր պատրաստում կամ էլ հարևան աղջիկների հետ

Խոային վալսեր երգում: «Հիմար ազգականդ, — ասում էր ինձ Սանտյագո Նասարը, — պատրաստ է առաջին պատահած թելից կառչելու»: Երբ, քրոջ մահից քիչ առաջ, նրան առաջին անգամ հանդիպեցի փողոցում, կանացի գեղեցիկ տեսք ուներ, մազերը խոպոպած էին, և հազիվ ճանաչեցի: Բայց այդ տպավորությունը լոպեական էր. նրա հոգեկան աղքատությունը տարիների ընթացքում ավելի էր խորացել, խորացել էր այնպես, որ երբ հայտնի դառնում, որ Բայարդո Սան Ռոմանը ցանկանում է ամուսնանալ նրա հետ, դա շատերին չարակամների սարքած դավադրություն է թվում:

Ծնողները ոչ միայն լուրջ են ընդունում այդ լուրը, այլև պարծության աղմուկ են բարձրացնում: Ելքը գտնում է Պուրա Վիկարիոն. նա առաջարկում է Բայարդո Սան Ռոմանին պարզաբանել իր ով լինելը, քանի որ դա ոչ ոքի հայտնի չէր: Իսկ այդ անցյալը հեռու չէր գնում այն երեկոյից, երբ նա ափ իջավ իր գերասանական հանդերձանքով, իսկ այդ հանդերձանքն այնպես էր ձուլվել նրա բնավորությանը, որ ամենահիմար ենթադրությունն էլ կարող էր ճշմարտություն թվալ: Օրինակ, որ նրա հրամանատարությամբ Կասանարեում գյուղեր են հողին հավասարեցրել և սարսափ են տարածել, որ նա փախել է Կայենայից, որ նրան տեսել են Պերնամբուկոյում՝ վարժեցրած արջեր խաղացնելիս, և որ Քամիների ջրանցքում թաքցրել է ոսկով բեռնված իսպանական գալերայի ջարդված աճյունը: Բայարդո Սան Ռոմանը մի հարվածով վերջ է տալիս այդ բամբասանքներին. նա գնում և բերում է իր ընտանիքը՝ լրիվ կազմով:

Նրանք չորսն էին՝ հայրը, մայրը և երկու աղմկարար քույրերը: Ժամանում են պաշտոնական տարբերանշաններ կրող «ֆորդ» T-ով, որի ազդանշանները առավոտյան տասնմեկին ոտքի են հանում փողոցները: Մայրը՝ Ալբերտա Սիմոնսը, կյուրասաոցի մի աժդահա մուլատուհի, որ շարունակում է խոսել կրեոլների հեռամնաց իսպաներենով, երիտասարդ հասակում ճանաչված էր Անտիլյան կղզիների 200 գեղեցկուհիներից ամենագեղեցիկը: Քույրերը, արդեն հասունացած, երկու անհանգիստ զամբիկների են նմանվում: Բայց գլխավոր խաղաքարտը հայրն էր՝ գեներալ Պետրոնիո Սան Ռոմանը, անցյալ դարի քաղաքացիական կռիվների հերոսը և պահպանողական վարչակազմի գլխավոր փառակիրներից մեկը, որն այդ պատվին արժանացել էր Տուկուրինկայի դժոխքից գնդապետ Աուրելիանո Բուենդիայի փախուստը կազմակերպելու համար: Մայրս միակն էր, որ դուրս չեկավ նրան դիմավորելու: «Իհարկե, շատ լավ էր, որ նրանք ամուսնանում էին, — ասաց նա ինձ: — Բայց մի բան էր այդ ամուսնությունը և բոլորովին այլ բան՝ ձեռք մեկնել մի այնպիսի մարդու, որ հրամայել էր թիկունքից կրակել Խերինելդո Մարկեսի վրա»: Այն պահից, երբ նա մեքենայի պատուհանից սկսում է սպիտակ սոմբրերոյով ողջունել մարդկանց, բոլորն էլ ճանաչում են նրան շնորհիվ բազմաթիվ նկարների

Հագին ցորնագույն քաթանե կոստյում կար, խաչաձև քուղերով կոշիկներ, ահագին քթին ոսկե շրջանակներով ակնոցն էր նստած, բարակ շղթայով ամրացված բաճկոնի կոճկառից: Պիջակի լամբակին «Փառքի շքանշանն» էր ամրացված, իսկ սուսերի բռնատեղին՝ ազգային գերբ կրող մականը: Նա առաջինն է իջնում մեր անխնամ փողոցների այրող փոշու մեջ կորած մեքենայից. բավական էր ոտքն իջեցնի մեքենայից, որպեսզի ամբողջ աշխարհը հասկանար, որ Բայարդո Սան Ռոմանը կարող էր ամուսնանալ ուզածդ աղջկա հետ:

Իսկ Անխելա Վիկարիոն չէր ցանկանում նրա հետ ամուսնանալ: «Նա ինձ համար ավելի քան տղամարդ էր երևում», ասաց նա ինձ: Բացի դրանից, Բայարդո Սան Ռոմանը չի բարեհաճում նրա հետ նույնիսկ խոսել, այլ իր հմայքներով ուղղակի հրապուրում է նրա ծնողներին: Անխելա Վիկարիոն երբեք չէր մոռանում այն սարսափելի երեկոն, երբ ծնողներն ու ավագ քույրերը, իրենց ամուսիններ հետ դահլիճում համախմբված, ստիպում էին իրեն ամուսնանալ մի մարդու հետ, որին ինքը նույնիսկ չէր տեսել: Երկվորյակները մի կողմ են քաշվում: «Մեզ թվաց, թե դրանք կանացի հիմարություններ են», ասաց ինձ Պաբլո Վիկարիոն: Ծնողների վճռական փաստարկն այն էր, որ սահմանափակ հնարավորությունների տեր ընտանիքն իրավունք չպետք է ունենա հրաժարվելու ճակատագրի մի այդպիսի պարգևից: Անխելա Վիկարիոն դիմում է սիրո բացակայության փաստին, բայց մայրը մի նախադասությամբ ոչնչացնում է նրա բոլոր փաստարկները:

— Սիրուն էլ են ընտելանում:

Այն ժամանակներում նշանադրությունները խիստ էին և տևում էին երկար: Սակայն Բայարդո Սան Ռոմանի նշանադրությունը տևում է ընդամենը չորս ամիս: Ավելի կարճ չի տևում լոկ այն պատճառով, որ Պուրա Վիկարիոն նրան ստիպում է սպասել ընտանիքի սգի վերջանալուն: Ժամանակն անցավ այն թեթևությամբ, ինչ թեթևությամբ Բայարդո Սան Ռոմանը կարգավորեց բոլոր գործերը: «Մի երեկո նա հարցրեց, թե որ տունն է բոլորից շատ դուր գալիս ինձ, — պատմեց ինձ Անխելա Վիկարիոն: — Ես էլ, չիմանալով, թե դա նրա ինչին էր պետք, պատասխանեցի, որ գյուղի ամենագեղեցիկ տունը դե-Քսիուս այրու ամառանոցն է»: Ես էլ նույնը կասեի: Նա կանգնած էր մի գեղեցիկ բարձունքի վրա և նրա սանդղահարթակից մանուշակագույն ծաղիկներով ծածկված դաշտերի անսահման գեղեցկություններն էին բացվում. ամառան պարզ երեկոներին կարող էիր տեսնել էլ-Կարիբեի մաքուր հորիզոնն ու Հնդկական Կարտախենայից եկող զբոսաշրջիկներով լի օվկիանոսային հսկա նավերը: Նույն երեկոյան Բայարդո Սան Ռոմանը գնում է Հասարակաց ակումբ և նստում դե-Քսիուս այրու հետ մի պարտիա դոմինո խաղալու:

— Այրի, — ասում է նա, — ես գնում եմ քո տունը:

— Նա չի վաճառվում, — պատասխանում է այրին:

— Առնում եմ ներսի եղած-չեղածով:

Դե-Քսիուս այրին իր հին բարի դաստիարակությամբ պատասխանում է, որ այդ իրերը, ամբողջ կյանքում ինքն իրեն զրկելով, ձեռք է բերել հանգուցյալ կինը, և որ դրանք իր համար մնում են որպես կնոջ մի մասը: «Նա խոսում էր, ասես հոգին տալով, — ասաց ինձ դոկտոր Դիոնիսիո Իգուարանը, որ նրանց հետ նույնպես դոմինո էր խաղում: — Ես չէի կասկածում, որ նա կգերադասի մեռնել, բայց չի վաճառի այն տունը, որտեղ երեսուն տարի երջանիկ կյանք էր վայելել»: Պատճառը հասկանում է նաև Բայարդո Սան Ռոմանը:

— Լավ, — ասում է նա,— այդ դեպքում վաճառիր միայն դատարկ տունը:

Բայց այրին մինչև պարտիայի վերջանալը մնում է անկոտրում: Երեք օր անց Բայարդո Սան Ռոմանը, ավելի լավ նախապատրաստված, վերադառնում է դոմինոյի սեղանի մոտ:

— Այրի, — նորից է սկսում նա, — ինչ արժե քո տունը:

— Նա գին չունի:

— Ասա մի որևէ գին:

— Ցավում եմ, Բայարդո, — ասում է այրին, — բայց դուք, երիտասարդներդ, սրտի փաստարկները չեք հասկանում:

Բայարդո Սան Ռոմանը նույնիսկ չի մտածում:

— Ասենք՝ հինգ հազար պեսո, — ասում է նա:

— Ազնվորեն խաղա, — պատասխանում է նրան այրին՝ պատշաճ հարգանքով: — Դա՞ չէ այդ տան գինը:

— Տաս հազար, — ասում է Բայարդո Սան Ռոմանը: — Հենց հիմա, դրամը՝ կանխիկ:

Այրին նայում է նրան արցունքոտ աչքերով: «Բարկությունից էր լաց լինում, — ասաց ինձ դոկտոր Դիոնիսիո Իգուարանը, որը բժիշկ լինելուց բացի, նաև կրթված մարդ էր: — Պատկերացնո՞ւմ ես, ձեռքի տակ ունենալ այդպիսի մի գումար ու հոգեկան հասարակ թուլության պատճառով ասել՝ չէ»: Այրի դե-Քսիուսի ձայնը չի լսվում, բայց նա բացասաբար տարուբերում է գլուխը:

— Այդ դեպքում կատարեք իմ վերջին խնդրանքը, — ասում է Բայարդո Սան Ռոմանը: — Սպասեցեք ինձ այստեղ հինգ րոպե:

Եվ իսկապես, հինգ րոպե անց նա Հասարակաց ակումբ է վերադառնում արծաթապատ թղթապանակը ձեռքին և սեղանին է դնում թղթադրամների տաս կապոց՝ յուրաքանչյուրը հազար պեսո, որոնց վրա դեռևս Պետական բանկի կնքադրոշմը կար: Այրի դե-Քսիուսը մահանում է երկու ամիս հետո: «Դրա պատճառով մահացավ, — ասում էր դոկտոր Դիոնիսիո Իգուարանը: — Նա մեզանից առողջ էր, բայց եթե քննեիր նրան, կլսեիր, թե ինչպես են արցունքները եռում նրա սրտում»: Որովհետև նա ոչ միայն վաճառում է տունը իր ամեն ինչով, այլև խնդրում է Բայարդո Սան Ռոմանին մաս-մաս վճարել, որովհետև տանը նույնիսկ մի փոքրիկ սնդուկ չի մնում, որտեղ կարողանար պահել մի այդպիսի մեծ գումար:

Ոչ ոքի մտքով չէր անցնում նույնիսկ, որ Անխելա Վիկարիոն կարող էր իր կուսական սրբությունը կորցրած լինել: Երբեք ոչ մի տղայի ծանոթ չլինելով, մեծացել էր ավագ քույրերի հետ մի այնպիսի պողպատակամ կնոջ հսկողության տակ, որպիսին նրա մայրն էր: Նույնիսկ երբ հարսանիքին երկու ամիս էր մնում, Պուրա Վիկարիոն չի թույլատրում նրան Բայարդո Սան Ռոմանի հետ գնալ ապագա տունը տեսնելու, այլ ամուսնու հետ միասին անձամբ ուղեկցում է նրան, որպեսզի հսկի աղջկա պատիվը: «Աստծուց միայն մի բան էի խնդրում՝ ուժ տալ, որ կարողանամ անձնասպան լինել, — ասաց ինձ Անխելա Վիկարիոն: — Բայց նա չտվեց ինձ այդ ուժը»: Ազդված, նա որոշում է պատմել մորը ճշմարտությունը, որպեսզի ազատվի այդ տանջանքից, բայց ընկերուհիները, որ պատուհանի մոտ նստած օգնում էին նրան կտորից ծաղիկներ պատրաստել, ետ են պահում այդ խելացի քայլից: «Ես էլ հիմարաբար լսեցի նրանց, — ասաց նա ինձ: — Ինձ թվաց, թե նրանք տղամարդկանց խաբեբայությունների լավ գիտակներ են»: Նրան համոզում են, որ կանայք առհասարակ «պատվո նշանը» կորցնում են մանուկ հասակում այս կամ այն դժբախտության հետևանքով: Պնդում են, որ անհրաժեշտ դեպքում կարելի է կոծկել ամեն ինչ: Հավատացնում են, որ տղամարդկանցից շատերը հարսանյաց գիշերն այնպես են կորցնում գլուխները, որ առանց կինարմատի օգնության ոչինչ չեն կարողանում անել և ճշմարտությունն ապացուցելու պահին չեն կարողանում պատասխանել իրենց իսկ կատարածի համար: «Նրանք միայն սավանի վրա տեսածին են հավատում», պնդում են ընկերուհիները: Սովորեցնում են, թե ինչպես քողարկել այդ տանջանքի հետքերը կրող սավանը, որպեսզի բոլորը տեսնեն այն:

Եվ նա ամուսնանում է: Բայարդո Սան Ռոմանն էլ իր հերթին է տարվում հարստությամբ և բախտի բերումով երջանկություն գտնելու երազներով, որովհետև խնջույքի հետ կապված ծախսերի համահավասար մեծանում է նաև նրա ախորժակը: Իմանալով եպիսկոպոսի այցելության մասին, նա նույնիսկ աշխատում է մեկ օրով հետաձգել հարսանիքը, որպեսզի առաքյալն անձամբ ամուսնացնի իրենց, բայց Անխելա Վիկարիոն հակառակվում է: «Իրականում, — ասաց նա ինձ, — ես չէի ցանկանում ստանալ այն մարդու բարեմաղթումները, որ ապուրի համար կտրում էր աքաղաղների կատարները, իսկ աքաղաղներին նետում աղբանոց»: Բայց առանց եպիսկոպոսի բարեմաղթությունների էլ, հենց իր ներքին ուժով, հարսանիքը վերածվում է մի այնպիսի բարդ խրախճանքի, որ դուրս է գալիս Բայարդո Սան Ռոմանի հսկողության տակից և դառնում համաժողովրդական կերուխում:

Այս անգամ գեներալ Պետրոնիո Սան Ռոմանն ընտանիքի հետ ժամանում է Ազգային կոնգրեսի հատուկ շոգենավով, որ մինչև ֆիեստայի վերջանալը երևում է նավամատույցին կպած, իսկ նրա հետ ժամանած պաշտոնական անձինք բազմության մեջ դառնում

են աննշան դեմքեր: Նվերներն այնքան են լինում, որ էլեկտրականության առաջին բումի ժամանակներում հարգարժան հյուրերի համար կառուցված և արդեն մոռացության մատնված սենյակի անհրաժեշտությունն է զգացվում: Իսկ օժիտն ուղղակի տեղափոխում են դե-Քսիուս այրու հնաոճ մենատունը, որ արդեն պատրաստ է լինում ընդունելու նորապսակներին: Փեսացուին ավտոմեքենա են նվիրում, որի գործարանային դրոշմանիշի տակ գոթական տառերով նշված էր նրա մակնիշը: Հարսնացուին նվիրում են մաքուր ոսկուց պատրաստած պիտույքատուփ՝ քսանչորս անձի համար: Հրավիրում են նաև պարոհիներ և երկու նվագախումբ, որոնց միանում են տեղական նվագախումբն ու գինարբուքի աղմուկ-աղաղակի վրա հավաքված բազմաթիվ ակորդեոնիստներ:

Վիկարիո ընտանիքն ապրում էր աղյուսաշեն տան մեջ. նա ուներ արմավենուց պատրաստած երկու ձեղնահարկ, որտեղ ամեն հունվար հավերն էին թուխս նստում: Առջևում տերրասն էր իր ծաղկամաններով, բակում անթիվ հավեր ու պտղատու ծառեր կային: Բակի խորքում ախոռատունն էր, ուր գտնվում էր երկվորյակների արհեստանոց-սպանդանոցն ու մսամշակման սեղանը: Պոնսիո Վիկարիոյի կուրանալուց հետո այդ ախոռատունն էր ընտանիքի եկամուտի միակ աղբյուրը: Գործն սկսել էր Պեդրո Վիկարիոն, բայց երբ նա զինվորական ծառայության էր գնացել, դրան ձեռնամուխ էր եղել երկվորյակ եղբայրը:

Սենյակները քիչ էին, բնակվելուն հազիվ էին բավարարում: Ավագ քույրերը մի այդպիսի բազմամարդ հարսանիքի համար փորձեցին վարձով տուն ճարել: «Պատկերացնո՞ւմ ես, — ասաց ինձ Անխելա Վիկարիոն, — նրանք ի նկատի ունեին Պլասիդա Լիներոյի տունը, բայց, բարեբախտաբար, ծնողներս հայտարարեցին, որ մեր երեխաները կամ մեր հարկի տակ պետք է ամուսնանան, կամ էլ չպետք է ամուսնանան»: Այնպես որ ներկում են տունը իր բնական դեղին գույնով, կարգի են բերում դռներն ու ամրացնում են աստիճանների հարթակները. մի խոսքով, համապատասխան տեսք են տալիս: Երկվորյակները անասունները տեղափոխում են ուրիշ տեղ, խոզանոցում չվառած կիր են փռում: Բայց նույնիսկ այդ վիճակում խոզանոցը մնում է իր թափթփված տեսքով: Ի վերջո Բայարդո Սան Ռոմանի առաջարկով, քանդում են բակի պատերը, վարձում հարևանի կից սենյակներն ու հնդկական արմավենիների ստվերի տակ բացում ճաշասեղանները:

Միակ չնախատեսված իրարանցումն ինքը՝ փեսացուն է գցում, որ Անխելա Վիկարիոյի ետևից երկու ժամ ուշացումով է գալիս. աղջիկը չի համաձայնում հագնել հարսանյաց հանդերձանքը, մինչև չտեսնի նրան իր առջև: «Պատկերացնո՞ւմ ես, — ասաց նա ինձ, — ես ուրախ կլինեի, եթե նա չգար, բայց երբեք թույլ չէի տա, որ նա լքեր ինձ, երբ ես արդեն հագած լինեի հարսանյաց շորերը»: Դա բնական էր. կնոջ համար չկա ավելի մեծ խայտառա-

կություն մարդկանց աչքում, քան հարսնաշորում լքված լինելը: Եվ ընդհակառակը, առանց անարատ լինելու ծաղկազարդվելն ու հարսնաքողը գլխին գցելը հետագայում կարող էր մեկնաբանվել որպես Անխելա Վիկարիոյի կողմից անարատության խորհրդանիշի պղծում: Մայրս միակն էր, որ գնահատեց մինչև վերջ հաստատակամ ու անգիջում մնալու նրա այդ քայլը: «Այն ժամանակներում, — պատասխանեց նա ինձ, — աստված այդպիսի բաների շուտ էր տեղեկանում»: Իսկ թե ինչ խաղաթղթեր էր խաղացնում Բայարդո Սան Ռոմանը, մինչև հիմա ոչ ոք չգիտի: Սերթուկով ու ցիլինդրով երևալու պահից մինչև իր տանջանքների աղբյուրի հետ փախչելու պահը, նա երջանիկ փեսացուի կատարյալ օրինակ էր:

Չիմացվեց նաև, թե ինչ խաղաքարտեր էր խաղացնում Սանտյագո Նասարը: Հարսանիքին, հետո նաև եկեղեցում, մենք միասին էին՝ Սանտյագո Նասարը, եղբայրս՝ Լուիս Էնրիկեն, Քրիստո Բեդոյան ու ես, և մեզանից ոչ մեկը նրա մեջ ոչ մի փոփոխություն չնկատեց: Այս հանգամանքը ես շատ անգամ եմ հիշել. մենք չորսս էլ դպրոցում միասին ենք մեծացել, արձակուրդներին եղել ենք մի խմբի մեջ, և ոչ մեկս չենք մտածել նույնիսկ, որ կարող ենք մյուսից գաղտնիք պահել, առավել ևս՝ այդպիսի գաղտնիք:

Սանտյագո Նասարը խրախճասեր մարդ էր, մահվան նախօրյակին նա չտեսնված բավականություն ստացավ, հաշվելով հարսանիքի հետ կապված ծախսերը: Եկեղեցում նա մեծ ուրախություն ապրեց, ծաղկեփնջեր նկատելով գերեզմանաքարին, որի տակ հանգչողը կրկնել էր տասնչորս հերոսների սխրանքը: Այդ տեսարանը երկար տարիներ պետք է հետապնդեր ինձ, որովհետև Սանտյագո Նասարը բազմիցս կրկնել էր, որ փականքի տակ գտնվող ծաղիկների հոտը, իր կարծիքով, անմիջական կապ ունի մահվան հետ, իսկ այն օրը եկեղեցի մտնելիս նա նույնը կրկնեց: «Ես չեմ ուզում, որ իմ գերեզմանին ծաղիկներ լինեն», ասաց նա ինձ, չմտածելով, որ հենց երկրորդ օրը ես պետք է զբաղվեմ այն բանով, որ ծաղիկներ, իսկապես, չլինեն: Վիկարիոների տուն վերադառնալիս նա հաշվեց փողոցները զարդարող գունավոր ծաղկեփնջերի արժեքը, ավելացրեց երաժշտության և հրավառության գինը և նույնիսկ ահագին քանակությամբ այն բրնձի արժեքը, որով դիմավորեցին մեզ ֆիեստայի ժամանակ: Կեսօրվա թմրության պահին նորապսակները մտան բակ: Բայարդո Սան Ռոմանը դարձել էր մեր բարեկամը, ինչպես այն ժամանակ էին ասում՝ մեր բաժակակից ընկերը. նա լավ էր զգում իրեն մեր սեղանի շուրջը: Անխելա Վիկարիոն, առանց հարսնաքողի և թագի, հասարակ քրտնապատ շորով, շուտով իր դեմքին ամուսնացած կնոջ տեսք հաղորդեց: Սանտյագո Նասարը շարունակում էր հաշվել, հետո ասաց Բայարդո Սան Ռոմանին, որ մինչև այս պահը հարսանիքը, երևի, ինը հազար պեսո նստած կլինի: Երևի նորահարսն ընդունեց այդ որպես ոչ ժամանակին արտահայտած միտք:

«Մայրս ասել է, որ օտար մարդկանց ներկայությամբ երբեք փողի մասին խոսել չի կարելի», ասաց նա ինձ: Ընդհակառակը, Բայարդո Սան Ռոմանն ընդունեց դա մեծ բավականությամբ և նույնիսկ պարծեցավ.

— Համարյա, — ասաց նա: — Բայց մենք դեռ նոր ենք սկսում: Վերջում մոտավորապես կկրկնապատկվի:

Սանտյագո Նասարը փորձում է հաշվել մինչև վերջին սանտիմը, բայց կյանքն այլ բաժին է հանում նրան: Նավահանգստում, մահից քառասունհինգ րոպե առաջ, Քրիստո Բեդոյան հաղորդում է նրան վերջնական տվյալները, և նա գալիս է այն եզրակացության, որ Բայարդո Սան Ռոմանի ենթադրությունները ճիշտ են եղել:

Ֆիեստայից ստացած և մտքիս հեռավոր խորքերում պահած տպավորությունները ես հետագայում մաս-մաս արեցի: Պարզվեց, որ երկար տարիների ընթացքում մեր տանը խոսելիս են եղել այն մասին, թե ինչպես հայրս նորից ձեռքն է առել երիտասարդ օրերի իր ջութակն ու սկսել է նվագել նորապսակների պատվին, թե ինչպես միանձնուհի քույրս ցլամարտիկի իր սովորությամբ մերենգե է պարել, դոկտոր Դիոնիսիո Իգուարանը, մորս հորեղբոր տղան, ստիպել է նավ նստեցնել իրեն և հեռացնել, որպեսզի եպիսկոպոսի ժամանման երկրորդ օրը չգտնվի այնտեղ: Այս խրոնիկայի համար նյութերն ուսումնասիրելիս, ես հայտնաբերեցի լուսանցքներում կատարած բազմաթիվ նշումներ, և նրանց մեջ՝ Բայարդո Սան Ռոմանի քույրերի ուշադրության արժանի հուշերը. նրանց թիթեռնիկներով նախշազարդված թավշյա զգեստներն արժանանում են ավելի մեծ ուշադրության, քան նրանց հոր հնդկահավային գոռոզությունն ու ռազմական շքանշանների շարանը: Նշված էր նաև, որ ես, գինարբուքից գլուխս կորցրած, ինձ հետ ամուսնանալ եմ առաջարկել Մերսեդես Բարչային, որ նոր էր ավարտել առաջին կարգի դպրոցը: Եվ երբ տասնչորս տարի անց մենք ամուսնացանք, նա էլ նույնը հիշեցրեց ինձ: Բայց ամենածանր պատկերը, որ անիծյալ կիրակին թողեց իմ մեջ, բակի կենտրոնում դրված աթոռին նստած ծեր Պոնսիո Վիկարիոյի պատկերն էր: Երևի նրան այնտեղ նստեցրել էին, մտածելով, որ դա ամենապատվավոր տեղն է: Հյուրերը բախվում էին նրան, գցում ուրիշների վրա, հետո փոխում էին նրա տեղը, որ չխանգարի, իսկ նա, նոր կուրացածի անօգնական դժվարությամբ, այս-այն կողմն էր թեքում ալեհեր գլուխը, պատասխանում իրեն չուղղված հարցերին ու ողջույններին, երջանիկ՝ իր մոռացության շրջանակներում, հագին՝ հարսանիքի առթիվ գնած օսլայից փայտացած վերնաշապիկ, իսկ ձեռքին՝ նոր ձեռնափայտ: Ձևական մասն ավարտվեց երեկոյան վեցին, երբ մեկնեցին պատվավոր հյուրերը: Նավը, իր բոլոր լույսերը վառած, իրենից հետո թողեց դաշնամուրի արձակած վալսի հնչյունները, և մի պահ մենք մնացինք անշարժ, ասես անհայտության անդունդի եզրին կանգնած, մինչև նորից նկատեցինք միմյանց ու սուզվեցինք գինարբուքի խորքերը: Քիչ

անց, բաց մեքենայի մեջ երևացին նորապսակները: Բայարդո Սան Ռոմանը հրավառություն սկսեց, աջից-ձախից առաջարկած շշերից ագուարդիենտե խմեց և Անխելա Վիկարիոյի հետ իջավ մեքենայից՝ նորից սուզվելու իրարանցման ոլորտը: Ի վերջո, հրամայեց պարել, ինչպես ինքն ասաց՝ մինչև կյանքի վերջը, իսկ ինքը սարսափահար հարսնացուին տարավ իր երազած տունը, որտեղ դե-Քսիուս այրին ապրել էր երջանկության մեջ:

Ընդհանուր խրախճանքն ավարտվեց կեսգիշերին, միայն Կլոտիլդե Արմենտայի ձեռնարկությունը մնաց բաց հրապարակի մի անկյունում: Ես և Սանտյագո Նասարը, եղբորս՝ Լուիս Էնրիկեի և Քրիստո Բեդոյայի հետ, մեկնեցինք Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսի բարեգթության օրրանը: Եկան նաև Վիկարիո եղբայրները, որ Սանտյագո Նասարի հետ խմում ու երգում էին նրան սպանելուց հինգ ժամ առաջ: Հարսանյաց քեֆի ցիրուցան եղած բեկորները դեռ շարունակում էին խրախճանքը, մեզ էին հասնում երաժշտության հնչյուններ, հեռավոր աղմուկ-աղաղակ, որ, թեև նվազած, բայց լսվում էին նույնիսկ այն պահին, երբ երևաց եպիսկոպոսի շոգենավը:

Պուրա Վիկարիոն պատմել էր մորս, որ աղջիկների օգնությամբ հարսանիքի թափթփուկները կարգի բերելուց հետո, անկողին է մտնում երեկոյան ժամը տասնմեկին: Իսկ տասի մոտերքը, երբ դեռ մի քանի հարբած շարունակում են երգել բակում, Անխելա Վիկարիոն մարդ է ուղարկում իր անձնական իրերի փոքրիկ ճամպրուկի ետևից, մայրը ցանկանում է ուղարկել նաև ամենօրյա շորերի ճամպրուկը, բայց հանձնակատարը չի սպասում: Հետո պառկում է քնելու: Խոր քնի մեջ լսում է, որ դուռը ծեծում են: «Երեք անհանգիստ հարված, — պատմել էր նա մորս, — բայց նրանց մեջ վատ լուրերի ինչ-որ տագնապ զգացի»: Որպեսզի ոչ ոքի չարթնացնի, դուռը բացում է առանց լույսը վառելու և փողոցի լույսի տակ տեսնում է Բայարդո Սան Ռոմանին, չկոճկված մետաքսյա վերնաշապիկով, ուսակալներով պահվող տաբատով: «Դեմքը կանաչ գույն ուներ, ասես ցնորված լիներ», ասել էր Պուրա Վիկարիոն մորս: Անխելա Վիկարիոն ստվերում է լինում, նրան նկատում է միայն այն ժամանակ, երբ Բայարդո Սան Ռոմանը նրա ձեռքից բռնած լույսի տակ է քաշում: Շապիկը պատառոտված, մարմինը մինչև գոտկատեղը երեսսրբիչով փաթաթված: Պուրա Վիկարիոյին մի պահ թվում է, թե մեքենան վթարի է ենթարկվել, և նրանք ջարդուփշուր են եղել:

— Սուրբ Մարիամ աստվածածին, — շշնջում է սարսափահար: — Պատասխանեցեք, եթե դեռ այն աշխարհը չեք գնացել:

Բայարդո Սան Ռոմանը ներս չի մտնում, կնոջը ներս է հրում սենյակ, առանց որևէ բառ արտասանելու: Հետո համբուրում է Պուրա Վիկարիոյի այտը:

— Շնորհակալություն ամեն ինչի համար, մայրիկ, — ասում է նա թախծոտ ձայնով: — Դուք ինքը՝ սրբությունն եք:

Միայն Պուրա Վիկարիոյին հայտնի մնաց, թե ինչ էր անում նա

հետագա երկու ժամում, և նա այդպես էլ գնաց այս աշխարհից, տանելով իր հետ իր գաղտնիքը: «Միայն հիշում եմ, որ, մի ձեռքով մազերիցս բռնած, մյուսով այնպիսի մոլուցքով էր հարվածում, որ թվում էր՝ ուր որ է շունչս կփչեմ», պատմեց ինձ Անխելա Վիկարիոն: Բայց նույնիսկ դա անում է այնպես, որ հարևան սենյակնեում քնած ամուսինն ու ավագ աղջիկները ոչինչ չեն իմանում մինչև առավոտ:

Երկվորյակները, որոնց տագնապահար կանչում է նրանց մայրը, ուն են վերադառնում երեքից քիչ պակաս: Նրանք Անխելա Վիկարիոյին գտնում են ճաշասենյակում՝ գզգզված մազերով և ապտակներից կարմրատակած դեմքով, երեսնիվայր ընկած թախտին: «Այլևս չէի վախենում, — ասաց նա ինձ: — Ընդհակառակը, այնպես էի զգում, ասես վրաս մահվան թմրություն էր իջել: Միայն ուզում էի, որ ամեն ինչ շուտ վերջանար, և ես կարողանայի քուն մտնել»: Պեդրո Վիկարիոն, ամենավճռականը, բարձրացնում է նրան թախտից և տանում, նստեցնում ճաշասենյակի սեղանի վրա:

— Դե, աղջիկս, — ասում է զայրույթից դողալով, — ասա մեզ՝ ով էր:

Անունն ասելու համար նա հազիվ մի անհրաժեշտ ընդմիջում է անում: Այդ անունը նա փնտրում է մտքի խավարում, առաջին իսկ վայրկյանից գտնում այս ու այն աշխարհներում ցրված այնքան ու այնքան անունների մեջ և, ինչպես ցանցն ընկած թիթեռնիկի, որի դատավճիռը հանված է ծնված օրից, նետի դիպուկ հարվածով մեխում է պատին.

— Սանտյագո Նասարը, — ասում է նա:

Դատախազը պաշտպանում է այն միտքը, որ սպանությունը պատիվը օրինական կերպով պաշտպանելու հետևանք էր. դա հավանություն է գտնում երդվյալ ատենակալների կողմից, իսկ դատի ավարտից հետո երկվորյակները հայտարարում են, որ այդ նույն պատճառով նույնը կանեին թեկուզ հազար անգամ: Ինքնապաշտպանության այդ միտքը նրանց ուղեղում ծագում է այն պահին, երբ սպանությունից քիչ անց անձնատուր են լինում եկեղեցու առջև: Հազիվ փրկվելով ետևներից ընկած արաբների խելահեղ խմբից, նրանք ներս են ընկնում դատարան և սայրերն արդեն մաքրած դանակները դնում են պադրե Ամադորի սեղանին: Նրանք ուժասպառ էին եղել սպանության բարբարոսական արարքից, շորերին ու ձեռքերին՝ արյան հետքեր, դեմքերը՝ քրտինքի և դեռևս չչորացած արյան մեջ կորած. սակայն ծխական քահանան նրանց անձնատրության արարողությունը հիշում է որպես անձնուրաց մի երևույթ:

— Դիտմամբ սպանեցինք նրան, — ասում է Պեդրո Վիկարիոն, բայց մենք անմեղ ենք:

— Գուցե միայն Աստծո առջև, — ասում է պադրե Ամադորը:

— Աստծո և մարդկանց առջև, — ասում է Պաբլո Վիկարիոն:

— Դա պատվի հարց էր:

Դեռ ավելին. դեպքերի վերականգնման ընթացքում պարզվեց,

որ սպանությունն ավելի դաժան էր եղել, քան իրականում, այն
պես որ անհրաժեշտ է լինում նույնիսկ որոշում՝ հանել Պլասիդ
Լիներոյի տան գլխավոր մուտքի դուռը, որ տեղահան էր եղ
դանակների հարվածներից, համայնքի դրամական միջոցներ
հաշվին վերականգնելու մասին: Ռիոաչայի նախնական կալանա
վորման առանձնատանը, որտեղ նրանք, գրավականով ազատվե
լու համար վճարելու ոչինչ չունենալու պատճառով անց են կաց
նում երեք տարի՝ սպասելով դատին, բանտարկյալները հիշու
էին, որ նրանք բնավորությամբ բարի և հոգով մարդամոտ էին
բայց նրանց մեջ երբեք չեն նկատել զղջումի հետք անգամ: Իս
փաստերը վկայում են, որ Վիկարիո եղբայրները նույնիսկ չե
փորձում Սանտյագո Նասարին սպանել հանկարծակի, ծածուկ
առանց որևէ ուշադրություն գրավելու: Ընդհակառակը, նրան
շատ բան են անում, որպեսզի որևէ մեկը հասկանա և խանգար
իրենց, բայց ուշադրություն դարձնող չի լինում:

Ինչպես իրենք պատմեցին ինձ տարիներ հետո, նրանք սկսու
են փնտրել նրան Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսի տանը
որտեղ մինչև ժամը երկուսը միասին են լինում: Այս և մյուս շա
տվյալներ ընդհանուր եզրակացության փաստաթղթերում չեն նշ
ված: Իրականում այն ժամին, երբ երկվորյակները գնում են նրա
ետևից, Սանտյագո Նասարն արդեն այնտեղ չի լինում: Մենք
դուրս էինք եկել գիշերային շրջագայության. երկվորյակներ
ճիշտ չէին ասում: «Նրանք երբեք չեն վերադարձել», ասաց ին
Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսը, և, լավ ճանաչելով նրան, ե
երբեք չկասկածեցի, որ նա ասում էր ճշմարտությունը: Նրան
սպասում են նրան Կլոտիլդե Արմենտայի կրպակում, որտեղ աշ
խարհի կեսն էր հաճախում, Սանտյագո Նասարից բացի: «Դա միա
բաց վայրն էր», հայտարարում են նրանք քննիչին: «Վաղ թե ու
նա պետք է հայտնվեր այնտեղ», ասացին ինձ արդարացումի
հետո: Բոլորին հայտնի էր, որ Պլասիդա Լիներոյի տան գլխավո
մուտքի դուռը միշտ էլ ներսից փակ էր լինում, իսկ Սանտյագ
Նասարը միշտ իր մոտ էր պահում ետնամուտքի դռան բանալին
Երբ երկվորյակները մեկ ժամից ավելի տան մյուս կողմում սպասու
են նրան, նա տուն է մտնում իսկապես այդ դռնից, իսկ այն
հանգամանքը, որ եպիսկոպոսին դիմավորելու համար դուրս է գա
լիս դեպի հրապարակ բացվող դռնով, այնքան հասարակ փաստ
է թվում, որ քննիչը նույնիսկ ուշադրություն չի դարձնում դրա վրա

Այդքան հայտնի սպանություն երբեք չէր եղել: Քրոջից իմանալով
անունը, Վիկարիո երկվորյակները մտնում են խոզանոցի հարակից
պահեստը, ընտրում երկու ամենալավ դանակները, մեկը՝ մասնատ
ման, տաս մատնաչափ երկարությամբ և երկուսուկես՝ լայնությամբ
մյուսը՝ մաքրիչ, յոթ մատնաչափ երկարությամբ և մեկուկես՝ լայ
նությամբ: Դրանք փաթաթում են կտորի մեջ և տանում շուկա
սրելու: Նոր բացվող կրպակներում հաճախորդները քիչ են լինում

բայց հետագայում քսաներկու հոգի հայտարարում են, որ երկվորյակները դիտմամբ բարձրաձայն էին խոսում, որպեսզի իրենք լսեն: Ֆաուստինո Սանտոսը, ծանոթ մսագործը, նկատում է նրանց ներս մտնելիս 3-ն անց 20-ին, երբ հենց նոր էր բացվել կրպակը, ու չի հասկանում, թե ինչու են նրանք եկել երկուշաբթի օրը, այդքան վաղ, այն էլ հարսանյաց սև կոստյումները հագած: Սովորաբար գալիս էին ուրբաթ օրերը, քիչ ավելի ուշ, կաշվե գոգնոցներով, որ հագնում էին տավարը մորթելու ժամանակ: «Կարծեցի, թե այնպես են հարբել, — ասաց ինձ Ֆաուստինո Սանտոսը, — որ ոչ միայն ժամն են խառնել, այլև օրը»: Եվ հիշեցնում է նրանց, որ օրը երկուշաբթի է:

— Իսկ դա ո՞վ չգիտի, հիմար, — լավ տրամադրությամբ պատասխանում է Պաբլո Վիկարիոն: — Եկել ենք միայն դանակները սրելու:

Ինչպես միշտ, դանակները սրում են պտտաքարի վրա. Պեդրոն դանակներն է շուռումուռ տալիս, իսկ Պաբլոն բռնակի օգնությամբ քարն է պտտեցնում: Միևնույն ժամանակ պատմում են հարսանիքի ճոխության մասին: Մի քանիսը բողոքում են, որ նրանց ընկերը լինելով հանդերձ, իրենց փայաբաժին կարկանդակը չեն ստացել: Երկվորյակները խոստանում են ուղարկել այդ փայաբաժինը: Վերջացնում են գործը, դանակները խփում են քարին, ունկնդրում դրանց արձակած զնգոցը: Պաբլոն իր դանակը գննում է լույսի տակ ու հիանում նրա փայլով:

— Պետք է սպանենք Սանտյագո Նասարին, — ասում է նա:

Նրանք պատվավոր մարդու այնպիսի համբավ էին վայելում, որ ոչ ոք բանի տեղ չի դնում այդ հայտարարությունը: «Մտածեցինք՝ երևի շատ խմելուց խելքները թռցրել են», Հայտարարեցին մսագործներից շատերը, Վիկտորիա Գուսմանը և էլի ուրիշներ, որ հետագայում հանդիպել էին նրանց: Ես մսագործներին մի քանի անգամ հարց տվեցի, թե՝ արդյոք այնտեղ, արհեստանոցում չէ՞ին հող նախապատրաստել մարդասպանության համար: Նրանք բողոքեցին: «Երբ մարդ անասուն է մորթում, չի համարձակվում նույնիսկ նրա աչքերին նայել»: Իսկ նրանցից մեկը նույնիսկ հայտնեց, որ չի կարողանում ուտել իր մորթած անասունի միսը: Մի ուրիշն ասաց, որ ընդունակ չի լինի մորթել իր ճանաչած անասունին, առավել ևս, եթե խմել է նրա կաթը: Ես հիշեցրի, որ Վիկարիո եղբայրները մորթում էին հենց իրենց աճեցրած կենդանիներին, որոնց այնքան էին ընտելանում, որ տարբերում էին միայն անուններով: «Ճիշտ է, — պատասխանեց նրանցից մեկը: — Բայց լավ իմացիր, որ նրանք այդ անասուններին միայն ծաղիկների անուններ էին տալիս»: Ֆաուստինո Սանտոսը միակն էր, որ լուրջ է ընդունում Պաբլո Վիկարիոյի սպառնալիքը և կատակով հարցնում, թե այդ ինչո՞ւ են ուզում սպանել Սանտյագո Նասարին, երբ շրջապատում մահվան արժանի այնքան հարուստներ կան:

— Սանտյագո Նասարը գիտի, թե ինչու, — պատասխանեց

Պեդրո Վիկարիոն: Ֆաուստինո Սանտոսը պատմեց, որ իր կասկածը չի փարատվում. նա լուրը հաղորդում է գործակատարին, որ քիչ անց գալիս է ալկալդի նախաճաշի համար մի ֆունտ լյարդ գնելու: Գործակատարի անունը, ըստ եզրակացական փաստաթղթերի, Լեանդրո Պորնոյ էր. նա մահանում է մի տարի անց, տոնահանդեսի ժամանակ, ցլի հարվածից: Այնպես որ ես երբեք չկարողացա խոսել նրա հետ, բայց Կլոտիլդե Արմենտան հայտարարեց, որ ինքն առաջինը կրպակ մտավ, երբ Վիկարիո եղբայրներն արդեն նստած սպասում էին:

Կլոտիլդե Արմենտան վաճառասեղանի մոտ նոր էր ամուսնուն փոխարինել: Դա սովորական երևույթ էր: Կրպակում առավոտյան կաթ էին վաճառում, օրվա ընթացքում՝ փորոտիք, իսկ երեկոյան յոթից հետո այն վերածվում էր գինետան: Կլոտիլդե Արմենտան կրպակը բացում էր լուսադեմին՝ 3-անց 30-ին: Ամուսինը, բարի դոն Ռոխելիո դե-լա-Ֆլորը, մինչև փակելը վարում էր գինետան գործերը: Սակայն այդ գիշեր խրախճանքից ետ մնացած այնքան հարսանքավորներ կային, որ նա պառկում է արդեն երեքն անց, առանց դուռը փակելու, իսկ Կլոտիլդե Արմենտան արթնանում է սովորականից շուտ, որպեսզի կաթը վաճառի մինչև եպիսկոպոսի ժամանումը:

Վիկարիո եղբայրները ներս են մտնում 4-ն անց 10-ին: Այդ ժամին միայն մթերք էր վաճառվում, բայց Կլոտիլդե Արմենտան մի շիշ ագուարդիենտե է զիջում նրանց ոչ միայն այն պատճառով, որ շատ էր հարգում նրանց. նա հարսանյաց սեղանից ստացել էր երկվորյակների ուղարկած իր բաժին կարկանդակը: Նրանք երկու շնչում դատարկում են շիշը, բայց չեն հագենում: «Մրսած էին երևում, — ասաց ինձ Կլոտիլդե Արմենտան: — Մի ամբողջ նավի բերած նավթով չէի տաքացնի նրանց»: Հետո հանում են մահուդե ժակետները, զգուշությամբ կախում աթոռների թիկնակներին և խնդրում մի նոր շիշ: Վերնաշապիկներին չորացած քրտինքի հետքեր կային, դեմքերին՝ նախորդ օրվա միրուքը, որը նրանց լեռնցու տեսք է հաղորդում: Երկրորդ շիշը դատարկում են ավելի դանդաղ, հետևելով փողոցի մյուս ափին՝ Պլասիդա Լիներոյի տան փակ պատուհաններին: Պատշգամբ ելնող պատուհաններից ամենամեծը Սանտյագո Նասարի ննջասենյակի պատուհանն էր: Պեդրո Վիկարիոն Կլոտիլդե Արմենտային հարցնում է, թե այդ պատուհանում լույս չի՞ տեսել, և նա պատասխանում է, որ՝ ոչ, չի տեսել, սակայն հարցը տարօրինակ է թվում:

— Ինչ է, բա՞ն է պատահել, — հարցնում է նա:

— Ոչինչ, — պատասխանում է Պեդրո Վիկարիոն: — Ուղղակի մենք նրան փնտրում ենք, որ սպանենք:

Պատասխանն այնքան բնական է հնչում, որ նա չի հավատում: Բայց նկատում է, որ երկվորյակների ձեռքին խոհանոցային փալասներում փաթաթած մսագործի երկու դանակ կա:

— Կարելի է իմանալ, թե ինչու եք ուզում այսքան վաղ սպանել նրան, — հարցնում է նա:

— Ինքը գիտի, թե ինչու, — պատասխանում է Պեդրո Վիկարիոն:

Կլոտիլդե Արմենտան էլ ավելի լրջորեն է հարցաքննում նրանց: Նա այնքան քան լավ գիտեր նրանց, որ կարող էր նույնիսկ տարբերակել, առավել ևս բանակից Պեդրո Վիկարիոյի վերադառնալուց հետո: «Երկու երեխայի էին նման», ասաց նա ինձ: Եվ սարսափում է իր իսկ ենթադրությունից, որովհետև միշտ այն կարծիքին էր, որ միայն երեխաներն են ամեն ինչի ընդունակ: Այնպես որ կաթը վաճառքի պատրաստելուն պես, արթնացնում է ամուսնուն և հաղորդում կրպակում տեղի ունեցածը: Դոն Ռոխելիո դե-լա-Ֆլորը լսում է նրան կիսաքուն վիճակում:

— Հիմար մի լինի, — ասում է նա կնոջը: — Սրանք ընդունակ չեն ոչ ոքի սպանելու, առավել ևս՝ հարուստի:

Երբ Կլոտիլդե Արմենտան վերադառնում է կրպակ, երկվորյակները զրուցելիս են լինում ալկալդի համար կաթի եկած Լեանդրո Պորնոյի հետ: Նա չի լսում զրույցը, բայց ենթադրում է, որ իրենց մտադրության մասին են խոսում, որովհետև նկատում է, թե դուրս գնալիս գործակատարն ինչպիսի հայացք է գցում դանակների վրա:

Գնդապետ Լազարո Ապոնտեն արթնանում է չորսից քիչ պակաս: Նա նոր է վերջացնում սափրվելը, երբ գործակատար Լեանդրո Պորնոյը ներս է մտնում և հաղորդում Վիկարիո երկվորյակների մտադրության մասին: Նախորդ գիշեր նա բարեկամների արած այնքան հիմարություններ էր տեսել, որ չարձագանքեց ևս մեկին: Լուռ հագնվում է, բազմիցս փորձելուց հետո, վերջապես տեղը նստեցնում վզկապ-թիթեռնիկն ու վիզը գցում Սուրբ Մարիամի միաբանության թալիսմանը: Նա պատրաստ էր դիմավորելու եպիսկոպոսին: Մինչ կնախաճաշեր սոխի օղակներով ծածկված լյարդով, կինը ոգևորված պատմում է, որ Բայարդո Սան Ռոմանը ետ է ուղարկել Անխելա Վիկարիոյին, նա այդ լուրն ընդունում է ավելի հանգիստ:

— Աստված իմ, — մրթմրթում է նա: — Ի՞նչ կմտածի եպիսկոպոսը:

Բայց մինչ կվերջացներ ընթրիքը, հիշում է գործակատարի հենց նոր հաղորդածը, ի մի է բերում երկու նորություններն ու հանկարծ հասկանում, որ դրանք զարմանալի կերպով լրացնում են միմյանց, ինչպես մի հեքիաթի երկու մաս: Եվ նոր նավամատույց տանող փողոցով, որի երկու կողմից ձգված տներն սկսում են արթնանալ, գնում է դեպի հրապարակ: «Ստույգ հիշում եմ, որ ժամը հինգն էր դառնում և սկսում էր անձրև մաղել», ասաց ինձ Լազարո Ապոնտեն: Ճանապարհին երեք հոգի կանգնեցնում են նրան և ծածուկ հայտնում, որ Վիկարիո եղբայրները սպասում են Սանտյագո Նասարին, որ սպանեն նրան: Մեկը նույնիսկ ասում է, թե որտեղ են սպասում:

Նա գտնում է նրանց Կլոտիլդե Արմենտայի կրպակում: «Երբ տեսա, մտածեցի, որ պարզապես պարծենկոտություն են արել — հայտնեց նա ինձ իր պաշտոնական միտքը: — Նրանք այնքան էլ հարբած չէին, ինչպես կարծում էի»: Նա չի հարցաքննում նրանց, այլ խլում է դանակներն ու հրամայում գնալ քնել: Վարվում է նույն ինքնավստահ ներողամտությամբ, որի օգնությամբ վերջ էր տվել կնոջ իրարանցմանը:

— Պատկերացնո՞ւմ եք, — ասում է նա նրանց, — թե ինչ կասի եպիսկոպոսը, եթե տեսնի ձեզ այս վիճակում:

Եղբայրները գնում են: Կլոտիլդե Արմենտան զղջում է ալկալդի այդ քայլի համար. նա գտնում է, որ անհրաժեշտ էր ձերբակալել երկվորյակներին, մինչ կպարզվեր ճշմարտությունը: Գնդապետ Ապոնտեն նրան ցույց է տալիս դանակները՝ որպես վերջնական լուծման վկայություն:

— Այլևս ոչ ոքի չեն կարողանա սպանել, — ասում է նա:

— Դա չէ գլխավորը, —ասում է Կլոտիլդե Արմենտան: — Գլխավորը այդ խեղճ տղաներին գլուխները մտած սարսափելի վտանգից փրկելն է:

Որովհետև նա նախազգում է, որ Վիկարիո եղբայրները ոչ այնքան ձգտում են ի կատար ածել իրենց մտադրությունը, ինչքան հանդիպել մեկին, որ բարեհաճի արգելել իրենց: Բայց գնդապետ Ապոնտեն խաղաղ գոյակցության մեջ էր իր սեփական խղճի հետ:

— Կասկածների պատճառով մարդկանց չեն ձերբակալում — ասում է նա: — Այժմ անհրաժեշտ է նախազգուշացնել Սանտյագո Նասարին, և... ցանկանում եմ ձեզ բարի Նոր տարի:

Կլոտիլդե Արմենտան հետագայում միշտ հիշելու է, որ գնդապետ Ապոնտեի սահմանափակ տաղանդը նրա իսկական դժբախտության պատճառն էր, բայց ես նրան հիշում եմ որպես երջանիկ մարդու, թեև, հեռակա կարգով ստացած հոգեբանության գիտելիքների յուրովի կիրառման պատճառով, փոքր-ինչ հետամնաց երկուշաբթի օրվա նրա վարքագիծը նրա դյուրահավատության վերջնական փորձությունն էր: Ճշմարտությունն այն է, որ նա այլևս չի հիշում Սանտյագո Նասարի մասին՝ մինչև նավամատուցում նրան հանդիպելը, և ինքն իրեն շնորհավորել է՝ արդար որոշում ընդունելու համար:

Վիկարիո եղբայրները իրենց մտադրությունը հաղորդում են խանութ եկած ավելի քան տասներկու մարդու, վերջիններս մինչև վեցը այդ լուրը տարածում են ամեն տեղ: Կլոտիլդե Արմենտային անկարելի է թվում, որ դիմացի շենքում կարող են չիմանալ այդ մասին: Նա կարծում է, որ Սանտյագո Նասարը տանը չէ, քանի որ ննջարանի լույսը վառած չէ, և բոլորին խնդրում է նախազգուշացնել նրան, որտեղ էլ հանդիպեն: Նույնիսկ միանձնուհիների համար կաթի եկած կուսանոցի մատուցողուհուն ուղարկում է պադրե Ամադորին հայտնելու այդ մասին: Իսկ չորսից հետո, երբ

Պլասիդա Լիներոյի տան խոհանոցում լույս է նկատում, շտապ հանձնարարությամբ Վիկտորիա Գուսմանի մոտ է ուղարկում այն մուրացկանուհուն, որն ամեն առավոտ գալիս էր մի բաժակ կաթ խնդրելու: Երբ լսվեցին եպիսկոպոսի շոգենավի սուլոցները, ամբողջ աշխարհը ոտքի ելավ, և միայն շատ քչերի հայտնի չէր, որ Վիկարիո երկվորյակները սպասում են Սանտյագո Նասարին, որ սպանեն նրան, թեև սպանության դրդապատճառը իր բոլոր մանրամասնություններով արդեն հայտնի էր բոլորին:

Կլոտիլդե Արմենտան կաթը դեռ չէր վաճառել, երբ վերադառնում են Վիկարիո եղբայրները՝ լրագրերում փաթաթած ուրիշ երկու դանակներով: Մեկը միս կտրելու դանակ, ժանգոտած, բայց ամուր սայրով, տասներկու մատնաչափ երկարությամբ ու երեք մատնաչափ լայնությամբ, որ ինչ-որ մետաղից ինքը՝ Պեդրո Վիկարիոն էր պատրաստել, երբ պատերազմի պատճառով այս կողմերում գերմանական դանակներ չէին վաճառվում: Երկրորդն ավելի կարճ էր, բայց լայն սայրով ու կեռ: Հատուկ քննիչը դա նկարագրել է եզրակացությունում, բայց չի կարողացել տալ իսկական նկարագրությունը և լոկ համարձակվել է նշել, որ այն նման էր փոքրիկ սուսերի: Հանցագործությունն այդ դանակներով է կատարվում:

Ֆաուստինո Սանտոսը չի կարողանում հասկանալ տեղի ունեցածը: «Նրանք նորից եկան սրելու դանակները, — ասաց նա ինձ: — Եվ նորից սկսեցին գոռալ, որ թափելու են Սանտյագո Նասարի փորը: Դե, ես էլ ուշադրություն չդարձրեցի ոչ նրանց գոռգոռոցի վրա, ոչ էլ դանակների, կարծեցի նույն դանակներն են»: Բայց Կլոտիլդե Արմենտան նրանց ներս մտնելուն պես նկատում է, որ այլևս առաջվա վճռականությունը չունեն:

Իրականում նրանց միջև տեղի էր ունեցել առաջին ընդհարումը: Նրանք ոչ միայն տարբեր էին ներքուստ այնքան, ինչքան արտաքուստ նման էին թվում, այլև դժվար պահերին բոլորովին հակառակ բնավորություններ ունեին: Մենք, նրանց ընկերները, դա նկատել էինք դեռևս առաջին աստիճանի դպրոցում: Պաբլո Վիկարիոն եղբորից վեց րոպեով մեծ էր, ավելի դյուրագրգիռ, սակայն ավելի վճռական: Պեդրո Վիկարիոն ինձ միշտ ավելի սենտիմենտալ էր թվում, գուցե այդ պատճառով էլ՝ ավելի հեղինակավոր: Քսան տարեկանում նրանք միասին ներկայանում են զինվորական ծառայության, բայց Պաբլո Վիկարիոյին ազատում են, որպեսզի ընտանիքի հոգսերը հոգա: Պեդրո Վիկարիոն տասնմեկ ամսվա ընթացքում հասարակական հանգիստն հսկելով է կատարում իր զինվորական պարտքը: Զինվորական կարգուկանոնը, նաև վախը մահվան նկատմամբ ամրապնդում են նրա մեջ հրամայելու ձգտումն ու եղբոր փոխարեն որոշում ընդունելու սովորությունը: Նա վերադառնում է սերժանտական տրիպերով, հակադրվում զինվորական բժշկության ամենադաժան մեթոդներին, զառիկադեղի բոլոր սրբսկումներին և դոկտոր Դիոնիսիո Իգուարանի աղի մագնեզիումով

ստամոքսի մաքրումներին: Միայն մեկուսարանում են կարողան բուժել նրան: Մենք, նրանց ընկերները, շուտով նկատեցինք, Պաբլո Վիկարիոն անծպտուն ենթարկվում է զորանոցային ոգ դաստիարակված կրտսեր եղբորը՝ նրա զինվորական ծառայությ նից վերադառնալուց հետո, հատկապես երբ Պեդրո Վիկարիոն ամ հանդիպողի առջև վեր էր քաշում վերնաշապիկի փեշն ու ցու տալիս ձախ կողքին գնդակի սպիացած վերքը: Բայց, չնայած դրա նա մի ինչ-որ ամոթ էր զգում եղբոր փոխարեն, որը, հասունաց այր լինելով հանդերձ, ցուցադրում էր իր հիվանդությունը մար կանց որպես մարտական պարգև:

Պեդրո Վիկարիոն, ըստ սեփական հայտարարության, ինք է ընդունում Սանտյագո Նասարին սպանելու որոշումը, իսկ ե բայրը սկզբում միայն հետևում է նրան: Բայց և ինքն է աս հաշտվում, երբ ալկալդը զինաթափում է նրանց: Սակայն այդ պահի Պաբլո Վիկարիոն է իր վրա վեցնում հրամանատարությունը: Քնի չին առանձին-առանձին արած վկայության ժամանակ նրանցից մեկը չի հիշում այս տարաձայնությունը: Իսկ Պաբլո Վիկարիո բազմիցս կրկնեց ինձ, որ իր համար հեշտ չի եղել համոզել եղբոր վերջնական որոշում ընդունել: Գուցեև այդպես է եղել: Բայց փաստ այն է, որ Պաբլո Վիկարիոն մենակ է մտնում սպանդանոց՝ մյու երկու դանակի ետևից այն պահին, երբ եղբայրը ծառի տակ, ջանալո միզել, ողողված է լինում քրտինքի մեջ: «Եղբայրս ոչ մի պատկերա ցում չուներ, թե դա ինչ է նշանակում, — ասաց ինձ Պեդրո Վիկարիոն մեր միակ հանդիպման ժամանակ: — Ասես փշրած ապակ միզելիս լինեի»: Պաբլո Վիկարիոն, վերադառնալով դանակներ ձեռքին, նրան գտնում է ծառին դիմհար: «Ցավից կորել էր սառ քրտինքի մեջ, ասաց նա ինձ: — Նա փորձեց համոզել ինձ, որ ե մենակ մեկնեմ, որ ինքը ոչ ոքի սպանելու ուժ չունի»: Նա նստու է ծառի տակ՝ հարսանյաց ճաշկերույթի համար դրված հյուսն սեղաններից մեկի մոտ և տաբատը իջեցնում մինչև ծնկները: «Մ կես ժամ մոտի բինտով վիրակապն էր փոխում», ասաց ինձ Պաբլ Վիկարիոն: Իրականում տաս րոպե էլ չի տևում, բայց Պաբլ Վիկարիոյին դա այնքան դժվար, այնքան տհաճ է թվում, որ նա դ համարում էր որպես մինչև առավոտ ժամանակ շահելու՝ եղբոր խորամանկություններից մեկը: Այնպես որ նա եղբոր ձեռքն է խոթու դանակը և ուժով տանում իր ետևից՝ քրոջ կորած պատիվը փնտրելու:

— Սրանից պրծում չկա, — ասում է նա եղբորը: — Սա ժառանգություն ստանալու նման բան է:

Շների հաչոցի ուղեկցությամբ նրանք դուրս են գալիս զուգա- րան տանող ետնադռնից, ձեռքներին՝ մերկ դանակները: Լույսը սկսում է բացվել: «Անձրև չէր գալիս», հիշում էր Պաբլո Վիկարի- ոն: «Ընդհակառակը, — հիշում էր Պեդրոն, — ծովից քամի է փչում, և դեռ կարելի էր հաշվել աստղերը»: Իսկ լուրն այնքա

 է տարածվում, որ Հորտենզիա Բաուտեն բացում է իր պատուհան

ճիշտ այն պահին, երբ նրանք անցնում են տան մոտով, և առաջինն է արցունք թափում Սանտյագո Նասարի համար: «Այնպես թվաց, թե արդեն սպանել են նրան, — ասաց նա ինձ: — Փողոցային լույսի տակ նկատեցի դանակները, որոնցից ասես արյուն էր կաթում»: Մեկն այն սակավաթիվ տներից, որոնց դռները բաց էին այդ լքված փողոցում, Պաբլո Վիկարիոյի հարսնացուի՝ Պրուդենսիա Կոտեսի տունն էր: Միշտ, երբ երկվորյակներն այդ ժամին անցնում էին այս կողմով, հատկապես ուրբաթ օրերը շուկա գնալիս, ներս էին մտնում առաջին բաժակ սուրճը խմելու: Նրանք հրում են բակի դուռը, անցնում շների կողքով, որոնք մթնշաղում ճանաչում են նրանց. բարևում են այդ ժամին խոհանոցում գըտնըվող Պրուդենսիա Կոտեսի մորը: Սակայն սուրճը դեռ պատրաստ չի լինում:

— Սուրճը՝ հետո, — ասում է Պաբլո Վիկարիոն: — Այժմ մենք շտապում ենք:

— Հասկանում եմ, զավակներս, — ասում է պառավը: — Պատիվը չի սպասում:

Բայցևայնպես նրանք սպասում են, և արդեն Պեդրո Վիկարիոյին է թվում, թե եղբայրը դիտմամբ է ձգում ժամանակը: Մինչ նրանք սուրճ են խմում, խոհանոց է մտնում լիովին հասունացած Պրուդենսիա Կոտեսը, ձեռքին վառարան վառելու լրագրերի կապոց: «Ես գիտեի՝ ուր են գնում, — ասաց նա ինձ: — Եվ ոչ միայն համաձայն էի, այլև երբեք չէի ամուսնանա նրա հետ, եթե նա չկատարեր իր տղամարդկային պարտքը»: Նախքան խոհանոցից դուրս գալը Պաբլո Վիկարիոն վերցնում է նրանից երկու լրագիր և դրանցից մեկը մեկնում եղբորը: Պրուդենսիա Կոտեսը խոհանոցում սպասում է այնքան ժամանակ, մինչև տեսնում է նրանց բակի դռնից դուրս գնալիս, և այդպես էլ շարունակում է սպասել ամբողջ երեք տարի, մինչև որ Պաբլո Վիկարիոն դուրս է գալիս բանտից, և նա բովանդակ կյանքում դառնում է նրա հավատարիմ կինը:

— Զգույշ եղեք, — ասում է նրանց:

Այնպես որ, Կլոտիլդե Արմենտան չի սխալվում, երբ նրան թվում է, թե երկվորյակներն առաջվա նման համարձակ չեն, և նրանց մի շիշ դեղձախտի ծաղիկներից պատրաստած խմիչք է տալիս՝ վերջնականապես սթափեցնելու հույսով: «Այդ օրը ես հասկացա, — ասաց նա ինձ, — թե ինչքան ենք մենք, կանայքս, միայնակ այս աշխարհում»: Պեդրո Վիկարիոն նրանից խնդրում է ամուսնու սափրվելու գործիքները, և նա բերում է վրձնիկը, օճառը, սեղանի հայելին, անվտանգ ածելին՝ իր նոր սայրով, բայց Պեդրոն սափրըվում է իր հետ բերած դանակով: Կլոտիլդե Արմենտային թվում է, թե դա բուժման նորագույն ձև է: «Ասես կինոնկարներում տեսած վարձկան մարդասպան լիներ», ասաց նա ինձ: Հետագայում Պեդրոն հայտնեց, որ մեկուսարանում էր սովորել դանակով սափրըվելը և այլևս երբեք ուրիշ կերպ սափրվել չէր կարողանում: Եվ դա

ճիշտ էր: Եղբայրն իր հերթին սափրվում էր ամենահասարակ ձևով՝ դոն Ռոքելիո դե-լա-Ֆլորի տված ածելիով: Վերջում լուռ, ձգելով դատարկում են շիշը, մեկ-մեկ հայացք նետում դիմացի տան՝ լուսաբացի մանուշակագույն ներկված փակ պատուհանին, իսկ այդ ժամանակ սուտի հաճախորդներ են ներսուդուրս անում, առանց անհրաժեշտության կաթ են գնում, չեղած ուտեստեղենի մասին հարցեր են տալիս, և այդ ամենը անում են լոկ մի նպատակով՝ իմանալ՝ ճիշտ է, արդյոք, որ սպասում են Սանտյագո Նասարին, որ սպանեն նրան:

Վիկարիո եղբայրները դիմացի պատուհանում այնպես էլ լույս չեն տեսնում: Սանտյագո Նասարը տուն է մտնում 4-ն անց 20-ին, բայց ննջարան անցնելու համար լույսը վառելու կարիք չի զգում. սանդղահարթակի լույսը վառած է լինում ամբողջ գիշեր: Մթության մեջ, առանց շորերը հանելու, իրեն մահճակալին է գցում՝ քանի որ քնելու համար մնում է ընդամենը մեկ ժամ: Հենց այդպես էլ նրան գտնում է Վիկտորիա Գուսմանը, երբ ներս է մտնում արթնացնելու, որպեսզի մեկնի եպիսկոպոսին դիմավորելու: Մենք մինչև երեքն անց միասին էինք Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսի տանը, երբ նա անձամբ ճանապարհեց երաժիշտներին և հանգցրեց պարահրապարակի լույսերը, որպեսզի իրեն օգնող մուլատ աղջիկները պառկեն հանգստանալու: Նրանք աշխատել էին երեք օր անընդհատ, նախ՝ սպասարկելով պատվավոր հյուրերին, և ապա՝ դուրս տանելով նրանց, ում հետ մենք չէինք կարողացել կիսել հարսանյաց խրախճանքի սեղանը: Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսը, ում մասին ասում էին, թե կքնի միայն մեկ անգամ, այն էլ հավերժական քնով, ամենագեղեցիկ ու ամենահեզ կինն էր, որին ես երբևէ հանդիպել էի, նաև ամենահնազանդը անկողնում, բայց և ամենախիստը: Նա ծնվել և մեծացել էր այստեղ, այստեղ էլ ապրում էր, նրա վարձով տրվող բազմաթիվ սենյակների դռները միշտ բաց էին, հսկայական բակը պարերի էր հարմարեցված, զարդարված էր լուսարձակներով, որ նա ձեռք էր բերել Պարամարիբոյի սև շուկայում: Այդ նա էր, որ իմ սերնդին զրկեց սրբությունից: Նա մեզ սովորեցրեց շատ ավելին, քան պետք է մենք իմանայինք, բայց ամենից առաջ մեզ սովորեցրեց, որ ոչ մի բան այնպես չի վախեցնում մարդուն, ինչպես թափուր անկողինը: Սանտյագո Նասարն ուշքն ու միտքը կորցրեց, երբ առաջին անգամ տեսավ նրան: Ես նախազգուշացրեցի. **Եթե բազեն ձկնկուլին դարձավ ընկեր, դե ուրեմն ցանցն է ընկել:** Բայց նա, Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսի համար մրմունջներով հարբած, չլսեց ինձ: Նա նրա անբուժելի ցավն էր, 15-ամյա հասակում նրա արցունքների պատճառը, մինչև որ Իբրահիմ Նասարը գոտու օգնությամբ չհանեց նրան իր մահճակալից և մի ամբողջ տարի չփակեց՝ «Աստվածային պատկերում»: Դրանից հետո նրանց կապերը դարձան լուրջ, բայց առանց սերն աղտոտելու, և նա այլևս Սանտյագո Նասարի ներկայությամբ ոչ ոքի հետ անկողին չմտավ: Մեր այն

վերջին արձակուրդների ժամանակ նա մեզ շուտ էր ճանապարհ դնում, պատճառ բռնելով սուտ հոգնածությունը, բայց ներսից դուռը չէր փակում, միջանցքի լույսն էլ թողնում էր վառ, որպեսզի ես կարողանամ գաղտնի ետ դառնալ:

Սանտյագո Նասարը տաղանդավոր տղա էր, նրա սիրած զբաղմունքն էր մուլատ աղջիկներին իրար խառնելը: Գողանում էր մեկի շորերն ու հագցնում մի ուրիշին, և աղջիկները նմանվում էին այդ ուրիշին: Մի այդպիսի դեպքից հետո աղջիկներից մեկը, նկատելով դեմը կանգնած ամբողջովին իրեն կրկնող մուլատուհուն, կորցնում է խոսելու ընդունակությունը: «Ջենց կարծեցի ես եմ հայելուց դուրս պրծել», ասաց նա ինձ: Բայց այն երեկո Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսը թույլ չտվեց Սանտյագո Նասարին գործադրել իր ընդունակությունները, և դա արեց մի այնպիսի սառնասրտությամբ, որ այդ դեպքի ծանր հետևանքները շրջեցին նրա ողջ կյանքը: Մենք երաժիշտներին մեզ հետ տարանք գիշերային շրջագայության և շարունակեցինք ֆիեստան մեր ցանկացած ձևով այն ժամանակ, երբ Վիկարիո երկվորյակներն սպասում էին Սանտյագո Նասարին, որ սպանեն նրան: Իսկ նա չորսի մոտերքը առաջարկեց բարձրանալ դե-Քսիուս այրու՝ տան բարձունքն ու նորապսակների համար սերենադներ երգել:

Մենք ոչ միայն երգեցինք պատուհանների տակ, այլև այգում հրավառություն սարքեցինք, բայց սենյակներում կյանքի ոչ մի նշույլ չնկատեցինք: Հազիվ թե մենք գլխի ընկնեինք, որ ներսը մարդ չկար, քանի որ մուտքի մոտ կանգնած էր դեռևս մաքուր, փայլուն կապոտով ավտոմեքենան՝ գունավոր ժապավեններով ու թղթե ծաղկեփնջերով ծածկված, որոնցով այն զարդարել էին ֆիեստայի ժամանակ: Եղբայրս՝ Լուիս Էնրիկեն, որ մասնագետ երաժշտի նման կիթառ էր նվագում, նորապսակների համար մի երգ երգեց՝ ամուսնական անհավատարմության մասին: Մինչև այդ պահը անձրև չէր գալիս: Ընդհակառակը, լուսինը երկնքի զենիթում էր: Օդը թափանցիկ էր: Ձորի խորքից երևում էին գերեզմանոցի լուսավոր ցոլքերը: Դիմացի ափին, լուսնի լույսի տակ, տարբերվում էին կապույտին տվող բանանի թփերը, սարսափելի խորխորատներն ու հորիզոնի վրա՝ Կարիբեի լուսավոր ուրվագիծը: Սանտյագո Նասարը ցույց տվեց ծովում նշմարվող լույսի կետը և ասաց, որ դա Սենեգալի ստրուկներով բեռնավորված նեգրական նավի հոգու առկայծումն է, որ խորտակվել է Հնդկական Կարտախենայի գլխավոր մուտքի դիմաց: Դժվար էր ենթադրել, թե դա նրա ծանր մտքերի հետևանքն էր, թեև այն ժամանակ ինձ դեռևս հայտնի չէր, որ Անխելա Վիկարիոյի ամուսնական երջանիկ կյանքը վերջացել էր երկու ժամ առաջ: Բայարդո Սան Ռոմանը նրան հոր տուն էր տարել ոտքով, որպեսզի շարժիչի աղմուկը ժամանակից շուտ չտարածի իր դժբախտության լուրը, և այժմ նորից մենակ էր դե-Քսիուս այրու՝ լույսերը հանգցրած կալվածքի ներսում:

Երբ բարձունքից իջանք, եղբայրս մեզ հրավիրեց շուկայի կըր-

պակներից մեկում խորոված ձուկ ուտելու, բայց Սանտյագո Նասարը մերժեց՝ մինչև եպիսկոպոսի ժամանելը ցանկանում էր գոնե մեկ ժամ քնել: Նա հեռացավ Քրիստո Բեդոյայի հետ, խույս տալով աղքատների տներից, որ հին թաղամասում էին և ուր արդեն սկսել էին վառել լույսերը: Եվ մինչ կշրջեր վերջին անկյունը, ձեռքով հրաժեշտ հղեց մեզ: Դա վերջին անգամն էր, որ մենք տեսանք նրան:

Քրիստո Բեդոյան, որի հետ պայմանավորվում են ավելի ուշ հանդիպել նավահանգստում, Նասարից բաժանվում է նրանց տան ետնամուտքի մոտ: Շները, ըստ սովորության, սկսում են հաչել, երբ նա մոտենում է դռանը, բայց Սանտյագո Նասարը բանալիների սովորական զնգզնգոցով հանգստացնում է նրանց: Վիկտորիա Գուսմանը կրակի մոտ սուրճով էր զբաղված, երբ նա անցնում է խոհանոցով և գնում դեպի խորքի սենյակը:

— Մաքրամոլ, — կանչում է նա, — սուրճը հիմա պատրաստ կլինի:

Սանտյագո Նասարը պատասխանում է, որ սուրճ կխմի ավելի ուշ, և խնդրում է հաղորդել Դիվինա Ֆլորին, որպեսզի իրեն արթնացնի հինգն անց կեսին և պատրաստի մի զույգ մաքուր փոխնորդ, այնպիսին, ինչպիսին հագին է: Նրա պառկելուց փոքր-ինչ անց, Վիկտորի Գուսմանը կաթի մատուցողուհու միջոցով ստանում է Կլոտիլդե Արմենտայի նախազգուշացման լուրը: 5-ն անց 30-ին նա կատարում է արթնացնելու հրամանը, բայց ոչ թե Դիվինա Ֆլորին է ուղարկում, այլ՝ կտավե գոգնոցը կապած, ինքն է ննջարան բարձրանում, որովհետև երբեք չէր մոռանում հեռու պահել աղջկան տիրոջ ոտնձգություններից:

Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսը տան դուռը բաց էր թողել: Ես բաժանվեցի եղբորիցս, անցա միջանցքով, որտեղ ծաղկամանների արանքում իրար վրա թափված քնել էին մուլատուհիների կատուները, և առանց բախելու հրեցի ննջասենյակի դուռը: Լույսը մարած էր, բայց մտնելուն պես զգացի կնոջ տաք մարմնի բույրը և տեսա մթում փայլող ընձառյուծի աչքերը, և հետո այլևս մոռացա ինձ, մինչև որ սկսեցին զարկել զանգերը:

Տուն գնալու ճանապարհին եղբայրս մտնում է Կլոտիլդե Արմանտայի կրպակը՝ ծխախոտ գնելու: Նա այնքան էր խմել, որ իր հաջողություններն այդ հանդիպման մասին միշտ էլ խավարով պատված մնացին, բայց նա երբեք չմոռացավ մահաբեր այն բաժակը, որ մեկնեց իրեն Պեդրո Վիկարիոն: «Կատարյալ կրակ էր, կրակ», ասաց նա ինձ: Կիսաքուն Պաբլո Վիկարիոն նրա ներս մտնելուն պես թռչում է տեղից և ցույց տալիս դանակը:

— Պետք է սպանենք Սանտյագո Նասարին, — ասում է նա:

Եղբայրս չի հիշում այդ դեպքը: «Հիշեի էլ՝ չէի հավատա, — շատ անգամ է կրկնել նա ինձ: — Այդ որ հիմարի գլխին կփչեր հավատալ, որ երկվորյակները մարդ պետք է սպանեն, այն էլ մսագործի դանակով»: Հետո նրանք հարցնում են, թե որտեղ

է Սանտյագո Նասարը, քանի որ տեսել էին նրանց միասին: Բայց եղբայրս այնպես էլ չկարողացավ վերհիշել իր պատասխանը: Իսկ Կլոտիլդե Արմենտան և Վիկարիո եղբայրները, այդ լսելով, այնպես են զարմանում, որ միմյանցից անկախ տրված բացատրության մեջ նշում են նույն պատասխանը: Ըստ նրանց, եղբայրս պատասխանում է. «Սանտյագո Նասարը մեռած է»: Հետո եպիսկոպոսի հասցեին մի հայհոյանք է նետում, հենվում է բազրիքին և ճոճվելով դուրս գնում: Հրապարակի կենտրոնում բախվում է պադրե Ամադորին: Պադրեն, զանգը ձեռքին, օգնականի ուղեկցությամբ իր պաշտոնական հանդերձանքով գնալիս է լինում նավահանգիստ: Նրա ետևից մի քանի մարդ տանում էին ամբիոնը՝ եպիսկոպոսի պատվին բացօթյա ժամերգություն կատարելու համար: Տեսնելով նրանց, Վիկարիո եղբայրները խաչակնքում են երեսները:

Կլոտիլդե Արմենտան պատմեց, որ իրենք կորցրեցին վերջին հույսը, երբ ծխական քահանան անցավ նրանց տան մոտով: «Մտածեցի, որ իմ ուղարկած լուրը չի ստացել», ասաց նա: Բայց, շատ տարիներ անց, պադրե Ամադորը, որ աշխարհից հեռացել և փակվել էր Կալաֆելի առողջատանը, ապշեցրեց ինձ, հայտնելով, որ Կլոտիլդե Արմենտայի ուղերձն ու էլի մի քանի այլ նախազգուշացում ստացել էր այն պահին, երբ պատրաստվում էր նավահանգիստ մեկնել: «Ճշմարտությունն այն է, որ ես չգիտեի ինչ անել, — ասաց նա ինձ: — Առաջին պահին մտածեցի, որ դա ոչ թե իմ, այլ քաղաքացիական պաշտոնյաների գործն է, բայց հետո որոշեցի հայտնել այդ մասին Պլասիդա Լիներոյին»: Բայց երբ հրապարակն անցնում է, բոլորովին մոռանում է որոշումը: «Դուք պետք է հասկանաք,— ասաց նա ինձ: — Այն անիծյալ օրը ժամանում էր եպիսկոպոսը»: Ոճրագործության պահին գլուխն այնպես է կորցնում, այնպես է ատում ինքն իրեն, որ չի կարողանում անել ավելին, քան հրամայել՝ կրակ բացել:

Եղբայրս՝ Լուիս Էնրիկեն, տուն է մտնում խոհանոցի դռնից, որ մայրս միշտ բաց էր պահում, որպեսզի հայս չիմանար մեր ներս գալը: Պառկելուց առաջ մտնում է լոգարան, բայց քնում է զուգարանակոնքին նստած, ու երբ Խայմեն՝ եղբայրս, արթնանում է դրսից գնալու համար, գտնում է նրան սալահատակին երեսնիվայր ընկած, քնի մեջ երգելիս: Միանձնուհի քույրս, որ ճանապարհորդությունների հանդեպ ունեցած վախի պատճառով մտադիր չէր եպիսկոպոսին դիմավորելու, չի համարձակվում արթնացնել նրան: «Երբ ես լոգարան մտա, ժամացույցը զարկեց ժամը հինգը», ասաց նա ինձ: Ավելի ուշ, երբ քույրս՝ Մարգոն, նավահանգիստ մեկնելուց առաջ մտնում է լոգարան լվացվելու, գտնում է նրան ու մեծ դժվարությամբ ննջարան տեղափոխում: Եվ դեռ չարթնացած, երազների այն աշխարհից, նա լսում է եպիսկոպոսի շոգենավի շչակների սուլոցը: Հետո, գինարբուքից հոգնած, քնում է հիմնավորապես, մինչև որ միանձնուհի քույրս մտնում է ննջասենյակ,

որպեսզի վրան առնի ճանապարհի հագուստն ու արթնացնի նրան հիստերիկ գոռոցով.

— Սանտյագո Նասարին սպանեցին...

Դանակների հարվածները հազիվ թե պատճառ լինեին դաժան դիահերձման, որ դոկտոր Դիոնիսիո Իգուարանի բացակայության ժամանակ կատարեց պադրե Ամադորը: «Ասես մահից հետո մենք նորից սպանեցինք նրան,— ասաց ինձ ծխական քահանան Կալաֆելի իր մեկուսարանում: — Բայց դա ալկալդի հրամանն էր, իսկ այդ բարբարոսի հրամանները, ինչքան էլ որ անմիտ լինեին, պետք է կատարվեին»: Նա ճիշտ էր ոչ լրիվ: Այն անմիտ երկուշաբթվա իրարանցման մեջ գնդապետ Ապոնտեն հեռախոսով շտապ կապվում է նահանգապետի հետ, իսկ այս վերջինս նրան լիազորում է կատարել նախնական հետաքննությունը, մինչև պաշտոնական քննիչի ժամանումը: Ալկալդն առաջներում զինվորական սպա էր եղել, իրավաբանական հարցերի մասին որևէ պատկերացումից զուրկ և բավական էլ ինքնահավան մարդ էր, որպեսզի որևէ մեկին հարցներ, թե գործն ինչից սկսի: Առաջին միտքը, որ ծագում է նրա ուղեղում, դիահերձումն է լինում: Քրիստո Բեդոյան, որ բժշկականի ուսանող էր, Սանտյագո Նասարի բարեկամի իրավունքով փորձում է դիմադրել: Մի պահ Ալկալդը մտածում է, որ մինչ դոկտոր Դիոնիսիո Իգուարանի վերադառնալը դիակը կարելի է սառցարանում պահել, բայց մոտերքում ոչ մի մարդաբոյ սառցարան չի գտնում, իսկ շուկայի միակ հարմար սառցարանն էլ չէր գործում: Մինչև դագաղ պատրաստելը դիակը տեղավորում են դահլիճի կենտրոնում, մետաղյա ծալովի նեղ մահճակալի վրա: Ննջասենյակից և հարևանների տներից բերում են օդափոխիչներ, բայց նրան տեսնել ցանկացողների թիվն այնքան շատ է լինում, որ ստիպված դուրս են տանում կահույքն ու ծաղկասեղանները և տեղահան անում սենյակների միջնորմները: Բայց շոգը մնում է անտանելի: Դիակի հոտից բորբոքված շները վտանգն ավելի են ավելացնում: Նրանք հաչում էին այն պահից, երբ ես դահլիճ մտա, իսկ Սանտյագո Նասարը խոհանոցում դեռևս հոգևարքի մեջ էր: Իսկ երբ մտա խոհանոց, Դիվինա Ֆլորը բարձրաձայն լաց էր լինում ու երկար փայտով քշում շներին:

— Օգնիր, — կանչեց նա ինձ: — Աղիքներն են ուզում տանել:

Նրանց մի կերպ փակեցինք շնանոցում: Ավելի ուշ Պլասիդա Լիներոն հրամայեց մի հեռու տեղ տանել նրանց, մինչև մարմինը հողին կհանձնեն: Բայց կեսօրին, աստված գիտի թե ինչպես, նրանք փախան իրենց մեկուսարանից և գազազած տուն թափվեցին: Պլաստիդա Լիներոն միանգամից կորցրեց համբերությունը:

— Օ՛, այս զզվելի շները, — գոռաց նա: — Սպանեցեք դրանց:

Հրամանն իսկույն ի կատար ածվեց և սենյակներում նորից
 լռություն տիրեց: Մինչ այդ պահը դիակի վիճակը անհանգստա-

նալու որևէ առիթ չէր տալիս: Դեմքի արտահայտությունն անփոփոխ էր, այնպես, ինչպես կար, երբ նա երգում էր. Քրիստո Բեդոյան փորոտիքն իր տեղն էր դրել և ծածկել քաթանով: Բայց երեկոյան վերքից սկսեց ծորալ դեղնագույն հեղուկ, ու ճանճեր հավաքվեցին: Կզակին երևաց մանուշակագույն մի բիծ, որ դանդաղ, ասես ամպի ստվերը ջրի երեսին, սկսեց շարժվել դեպի մազերի հիմքերը: Ժպիտը, որ միշտ ներողամիտ էր, թշնամական արտահայտություն ստացավ, և մայրս ստիպված եղավ դեմքը ծածկել թաշկինակով: Գնդապետ Ապոնտեն հասկացավ, որ այլևս սպասելն անհնար է, և պադրե Ամադորին հրամայեց սկսել դիահերձումը: «Մեկ շաբաթից հետո հողից հանելն ավելի վատ կլինի», ասաց նա: Քահանան Սալամանկայում բժշկություն և վիրահատում էր ուսումնասիրել, բայց սեմինարի էր ընդունվել առանց քննությունների, իսկ որ դիահերձման համար անհրաժեշտ էր պաշտոնական թույլտվություն՝ նույնիսկ ալկալդին էր հայտնի: Չնայած դրան, նա ստիպեց կատարել հրամանը:

Դա սպանություն էր՝ գրառումներ կատարող դեղագործի և արձակուրդի եկած բժշկականի առաջին կուրսի ուսանողի եզրակացությամբ, իրագործված աշխարհիկ դպրոցի շենքում: Նրանց ձեռքի տակ միայն վիրահատման մի քանի հասարակ գործիք կար, մնացածը պարզունակ եղանակով պատրաստվել էր տեղում: Ինչ վերաբերում է զուտ դիահերձմանը, ապա պադրե Ամադորի գրառումներն այնքան հակիրճ էին, որ քննիչը դրանք միացրեց եզրակացությանը, որպես շատ օգտակար հաղորդումներ:

Բազմաթիվ վերքերից յոթը մահացու էին: Դանակի երկու ուժեղ հարվածից լյարդը երկու կես էր եղել: Ստամոքսին հասցված էր չորս վերք՝ մեկն այնքան խոր, որ դանակն անցել էր նրա միջով և վնասել ենթաստամոքսային գեղձը: Հասցված էր նաև վեց թեք հարված խթաղին և բազմաթիվ ավելի թույլ հարվածներ երկար աղիքին: Մեջքին հասցված միակ հարվածը դիպել էր ողնաշարի երրորդ ողի բարձրությանը և ծակել աջ երիկամը: Որովայնախոռոչը ծածկված էր արյան հետքերով: Ոսկե մեդալիոնը, որ Սանտյագո Նասարը կրում էր չորս տարեկան հասակից, հայտնաբերվեց ստամոքսում հավաքված կղկղանքի մեջ: Երկու հարված իջել էր կրծքավանդակին, մեկը՝ աջ կիսավանդակի երկրորդ միջկողոսկրի սահմանում, հասել թոքին, երկրորդը՝ ձախ թևատակին շատ մոտ: Վեց տեղից խոցված էին թևերն ու ձեռնափերը, կար նաև երկու հորիզոնական կտրվածք, մեկը աջ ազդրին, մյուսը՝ փորին: Աջ ձեռքի դաստակին խոր կտրվածք կար: Գրառումների մեջ ասված է. «Ասես խաչ էին հանել նրան»: Ուղեղը յոթանասուն գրամ ավելի էր կշռում, քան նորմալ անգլիացունը, և պադրե Ամադորն իր տեղեկության մեջ նշեց, որ Սանտյագո Նասարը վերին աստիճանի կրթված անձնավորություն էր, որին սպասում էր փայլուն ապագա: Սակայն վերջնական գրառումների մեջ նշված էր լյարդի գերաճ, որ վերագրվում էր

չբուժված շնչահեղձությանը: «Այսինքն, — ասաց նա ինձ, — բոլոր դեպքերում նրա ապրելուն քիչ տարիներ էին մնում»: Դոկտոր Դիոնիսիո Իգուարանը, որ Սանտյագո Նասարի շնչահեղձությունը նկատել էր դեռևս տասներկու տարեկան հասակում, վրդովմունքով էր հիշում այդ դիահերձումը: «Այդքան հիմար լինելու համար հարկավոր էր քահանա լինել, — ասաց նա ինձ: — Ես այնպես էլ չկարողացա հասկացնել նրան, որ տրոպիկներում ապրող մարդիկ ավելի մեծ լյարդ ունեն, քան գալլերը»: Տեղեկության մեջ ասված է, որ մահը վրա է հասել յոթ խոր վերքերից մեկի արյունահոսության հետևանքով:

Նրանք բոլորովին այլ դիակ վերադարձրին մեզ: Ոսկրաշաղափման հետևանքով գանգի կեսը ջարդված էր, իսկ գեղեցիկ դեմքը, որին մահը նույնպես խնայել էր, կորցրել էր իր նմանությունը: Վանականն ամբողջովին հանել էր փորոտիքը, բայց, չիմանալով ինչպես վարվել դրա հետ, բարկությունից մի անեծք էր արձակել և փորոտիքը նետել աղբարկղը: Դպրոցի պատուհաններից կպած հետաքրքրասերների համար ներկայացումը վերջանում է. անհայտանում է օգնականը, իսկ բազում մահեր տեսած գնդապետ Լազարո Ապոնտեն վերջացնում է նրանով, որ, բացի հոգեբան լինելուց, դառնում է նաև բուսակեր: Լաթերով ու չվառած կրով լցրած, մախաթի և կոպիտ քուղի օգնությամբ մի կերպ կարկատած պատիճը քիչ էր մնում մաս-մաս լիներ, երբ այն իջեցնում էինք մետաքսյա փափուկ դագաղի մեջ: «Մտածեցի, որ այդպես ավելի երկար կպահպանվի», ասաց ինձ պադրե Ամադորը: Բայց պատահեց հակառակը. ստիպված էինք լուսադեմին շտապ կերպով հողին հանձնել դիակը, որովհետև այնպիսի դրության մեջ էր, որ տանը պահելն անկարելի էր:

Գալիս էր անհանգիստ երեքշաբթին: Ես համարձակություն չունեցա այդքան ճնշող դեպքերից հետո մենակ քնել, և հրեցի Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսի տան դուռը այն հույսով, որ սողնակը գցած չէր լինի: Ծառերի վրա լապտերները դեռ շողում էին, պարահրապարակում ահագին փայտակույտեր էին վառվում, կաթսաների մեջ, որոնցից գոլորշու ամպեր էին բարձրանում, մուլատ աղջիկները ձողի օգնությամբ իրենց պարահագուստն էին խառնում: Ես Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսին գտա, ինչպես միշտ, արթուն և, ինչպես միշտ, բոլորովին մերկ, երբ տանը կողմնակի մարդ չէր լինում: Նա արևելյան ձևով նստած էր թագավորական իր մահճակալի վրա, ուտեստեղենով լի բաբելոնյան սկուտեղի առջև. հորթուկի կողոսկր, տապակած հավ, խոզի ոտ, մրգեղենի և բանջարեղենի մի մեծ կույտ, որ հինգ հոգու կբավարարեր: Անչափ ուտելը նրա արտասվելու միակ ձևն էր, և ես նրան երբեք չէի տեսել նման դժվարությամբ այդ պարտականությունը կատարելիս: Հագնված, առանց մի խոսք ասելու, ինքս էլ իմ ձևով արտասվելով, պառկեցի նրա կողքին: Ես մտածում էի Սանտյագո Նասարի դաժան ճակատագրի մասին, որն իր անիծյալ քսան տարվա մեջ պարունակում էր

ոչ միայն մահ, այլև մարմնի քառատում, մարմնամասերի ցրում ու ոչնչացում: Երազումս մի կին ներս մտավ երեխան ձեռքին, և այդ երեխան ինչ-որ բան էր ուտում, թեև ձեռքին ոչինչ չուներ. բրնձի հատիկները համարյա տեսանելի լցվում էին նրա ստամոքսը: Կինն ասաց ինձ. «Երեխան ինչ-որ բան է գտել ու ծամում է, թեև զզվելով ու սիրտը խառնելով»: Հանկարծ զգացի, որ ինչ-որ ձեռքեր, արձակում են վերնաշապիկիս կոճակները, զգացի մեջքիս սեղմված սիրո գազանիկների վտանգավոր բույրը, զգացի, որ նա թաղում է ինձ իր մարմնի շարժուն ավազի հմայքներում: Բայց հանկարծ նա թափով թռավ տեղից և իրեն դուրս մղեց իմ էությունից:

— Չեմ կարող, — ասաց նա, — քեզանից նրա հոտն է գալիս...

Ոչ միայն ինձանից: Այդ օրն ամեն ինչից Սանտյագո Նասարի հոտն էր փչում: Վիկարիո եղբայրները դա զգում են բանտախցում, որտեղ ալկալդը փակում է նրանց, մինչև կորոշի, թե ինչպես վարվել նրանց հետ: «Ինչքան էլ օճառով ու ճիլոպով լվացվեցի, էլի այդ հոտից փրկում չեղավ», ասաց ինձ Պեդրո Վիկարիոն: Թեև երեք գիշեր չէին քնել, չէին կարողանում հանգստանալ, որովհետև աչքերը փակելուն պես կարծես վերստին ոճիր էին գործում: Եվ արդեն համարյա ծերացած, ջանալով բացատրել այն անիծյալ օրն ապրած իր վիճակը, Պաբլո Վիկարիոն շատ հանգիստ ասաց ինձ. «Կարծես երկրորդ անգամ էի արթանում»: Այս խոսքերից ես հասկացա, որ բանտախցում նրանց համար ամենածանրը պետք է որ մտքի պայծառացումը լիներ:

Բանտախուցն ուներ երեք մետր լայնություն, ցանցապատ ձեղնանցք, փոքրիկ ոտատեղ, լվացարան՝ իր տաշտով ու սապնամանով, և քարից շարած երկու մահճակալ, իրենց ծղոտե ներքնակներով: Գնդապետ Ապոնտեն, որի ղեկավարությամբ այն կառուցվել էր, պնդում էր, որ երբեք այդպիսի մարդավայել հյուրանոց չի եղել: Եղբայրս՝ Լուիս Էնրիկեն, համաձայն էր դրան, որովհետև մի երեկո նվագողների հետ վիճելու համար նրան ձերբակալել էին, և ալկալդը թույլ էր տվել,որ մուլատուհիներից մեկը ընկերակցի նրան: Երևի Վիկարիո եղբայրներն էլ նույնն էին մտածում առավոտյան ութին, երբ իրենց արդեն փրկված էին զգում արաբների ձեռքից: Այդ պահին նրանք ոգևորվում էին պարտքը կատարողի զգացումով: Լոկ այն անտանելի հոտից էին անհանգստանում: Նրանք տաք ջուր են խնդրում, ահագին կույտ օճառ, ճիլոպ և լվանում են ձեռքերի և դեմքերի արյունը, վերնաշապիկները, բայց չեն կարողանում հանգստանալ: Պեդրո Վիկարիոն պահանջում է ստամոքսի մաքրման և միզամուղ դեղորայք: Պահանջում է նաև մի փաթեթ մաքուր բինտ և երկու անգամ փոխում է վիրակապը: Սակայն օրը բացվելու հետ կյանքը նրա համար այնքան է դժվարանում, որ հոտը մոռացվում է: Ժամը երկուսին մոտ շոգն այնպես է սեղմում, որ Պեդրո Վիկարիոն ոչ կարողանում է պառկել քարե մահճակալին, ոչ էլ ոտքի վրա մնալ: Աճուկների ցավից

մարմինը ջարդվում է, մեզը՝ կապվում, նրան թվում է, թե ամբողջ կյանքում այլևս չի կարողանալու քնել: «Տասնմեկ ամիս շարունակ չեմ քնել», ասաց նա ինձ: Ես լավ էի ճանաչում նրան՝ նա ճիշտ էր ասում: Նա ուտել անգամ չի կարողանում: Իսկ Պաբլո Վիկարիոն բերածից մի-մի պատառ ուտելուց քառորդ ժամ հետո ընկնում է հիվանդագին վիճակի մեջ: Երեկոյան ժամը վեցին, երբ դիահերձում են Սանտյագո Նասարին, Պեդրո Վիկարիոն պահանջում է շտապ կերպով կանչել ալկալդին. նրան թվում է, թե եղբորը թունավորել են: «Քրտինքի մեջ կորել էր, — ասաց ինձ Պաբլո Վիկարիոն: — Չէինք կարողանում ազատվել այն մտքից, որ այդ ամենը թուրքերի սարքած դավերն են»: Մինչ այդ, երկու անգամ մաքրում են փոքրիկ զուգարանը, մի վեց անգամ էլ հսկիչն է նրան քաղաքային ոստաճանապարհ ուղեկցում: Հանդիպելով նրան այնտեղ և տեսնելով, թե ինչ դժվարությամբ է նա իր բնական պարտքը կատարում, գնդապետ Ապոնտեն մտածում է, որ թունավորելու միտքն այնքան էլ հեռու չէ իրականությունից: Բայց երբ պարզվում է, որ ջրից ու Պուրա Վիկարիոյի ուղարկած ընթրիքից բացի, նա բան չի դրել բերանը, գնդապետը հրաժարվում է այդ մտքից: Սակայն ալկալդն այնպես է հուզվում, որ բանտարկյալներին տեղափոխում է իր տուն և պահում հատուկ հսկողության տակ, մինչև ժամանում է պաշտոնական քննիչն ու նրանց Ռիոհաչայի բանտ ուղարկում:

Երկվորյակների վախն արձագանքվում է փողոցում: Իհարկե, արաբների կողմից բռնության դիմելը չէր բացառվում, բայց ոչ ոք նույն թվում նաև Վիկարիո եղբայրները, չէին հավատում թունավորելուն: Արաբներն ավելի շուտ կարող էին գիշերով նավթ լցնել ձեղնանցքից և բանտախցում այրել նրանց: Սակայն դա էլ հեշտ գործ չէր: Արաբները ներգաղթածների մի խաղաղ համայնք էին կազմում, որ դարասկզբին հիմնավորվել էր Կարիբեի ամենաաղքատ ու շրջապատից կտրված շրջակայքում: Նրանք ապրում էին գունավոր լաթերի և առօրյա մանրուքների վաճառքով: Նրանք համախմբված էին, աշխատասեր և... կաթոլիկ: Ամուսնանում էին իրար հետ, արտահանում էին ցորեն, պահում էին ոչխարներ, աճեցնում անուշաբույր մրգեր ու բադրիջան: Նրանց միակ վտանգավոր զբաղմունքը թղթախաղն էր: Ավագները շարունակում էին խոսել հայրենիքից բերած գյուղական արաբերենով, օջախներում նրանք այդ լեզուն պահպանեցին մինչև երկրորդ սերունդը, սակայն երրորդ սերունդը, բացառությամբ Սանտյագո Նասարի, ծնողներին լսում էր արաբերեն և պատասխանում իսպաներեն: Այնպես որ, դժվար թե նրանց մեջ հառներ պապական ոգին և փոխհատուցում պահանջեր հայրենակցի մահվան համար, մի մահ, որի պատճառը գուցեև մենք բոլորս էինք: Նույնիսկ Պլասիդա Լիներոյի ընտանիքի կողմից խոսք չէր կարող լինել վրիժառության մասին. նրա անդամները, մինչև հաջողությունը կլքեր նրանց

հայտնի, ազնիվ և համարձակ մարդիկ էին, որ ժամանակին իրենց անվան շնորհիվ ոչ քիչ հարբեցող վարձկանների կյանք էին փրկել: Այդ շշուկներից անհանգստացած, գնդապետ Ապոնտեն մեկ առ մեկ այցելեց արաբական ընտանիքները և այս անգամ ստացավ առնվազն դրական տպավորություն: Նա գտավ նրանց խուճապահար ու վախեցած, մեչիդների բարձրությունից իրենց ցավը ողբալիս, բայց նրանցից ոչ մեկը վրիժառության համար ոչ մի քայլի չէր դիմել: Լուրերը լուսադեմին կատարված հանցագործության թարմ հետևանք էին, և իրենք՝ հանցագործները համաձայնեցին, որ, բոլոր դեպքերում, հազիվ թե փրկվեն: Ընդհակառակը, ինքը՝ հարյուրամյա Սուսեմե Աբդալան սովորեցրեց օշինդրի և ուրիշ ծաղիկների խառնուրդից պատրաստած դեղամիջոցը, որը փրկեց ցավից ոչ միայն Պաբլո Վիկարիոյին, այլև վերջ տվեց նրա երկվորյակ եղբոր ծորացող ցավին: Պեդրո Վիկարիոն խոր քուն մտավ, իսկ առողջացած եղբայրը սուզվեց իր առաջին անտագնապ երազները: Այդ վիճակում գտավ նրանց Պուրիսիմա Վիկարիոն, երբ երեքշաբթի լուսադեմին ալկալդը նրան բերեց տղաներին հրաժեշտ տալու:

Նրանք գնդապետ Ապոնտեի գլխավորությամբ եկան լրիվ կազմով, նույնիսկ ավագ աղջիկները՝ իրենց ամուսինների հետ: Եկան աննկատ, օգտվելով ժողովրդի հոգնած անտարբերությունից, երբ մենք Սանտյագո Նասարի դիակն էինք հանձնում հողին: Եկան լուռ, ինչպես բոլոր ոգիները և, ինչպես ալկալդն էր վճռել, գնացին լուռ, գնացին և այլևս երբեք չվերադարձան: Պուրա Վիկարիոն, հարվածների հետքերը քողարկելու համար, լաթի կտորով ծածկել էր ետ եկած աղջկա դեմքն ու հագցրել վառ-կարմիր շոր, որ չասեին, թե սիրեցյալի սուգն էր պահում: Հեռանալուց առաջ նա պադրե Ամադորից խնդրում է մեղքերի թողություն տալ զավակներին, բայց Պեդրո Վիկարիոն մերժում է, համոզելով եղբորը, որ իրենք մեղք չեն գործել: Նրանք մնում են մենակ և համոզված իրենց ճշմարտության մեջ: Ռիոաչա տեղափոխվելու օրը այնպես համարձակ են պահում իրենց, որ պահանջում են տեղափոխել օրը ցերեկով, ճակատները բաց, այլ ոչ թե այնպես, ինչպես իրենց ընտանիքի անդամներին: Հայրը, Պոնսո Վիկարիոն մահանում է քիչ ժամանակ անց: «Նրան տարավ հոգեկան ծանր վիշտը», ասաց ինձ Անխելա Վիկարիոն: Արդարացվելուց հետո երկվորյակները մնում էն Ռիոաչայում, որտեղից մինչև Մանաուրե, ուր ապրում էր ընտանիքը, ընդամենը մեկ օրվա ճանապարհ էր: Մեկնեց նաև Պրուդենսիա Կոտեսը, որպեսզի ամուսնանա Պաբլո Վիկարիոյի հետ, որը հոր արհեստանոցում աշխատում էր որպես իսկական ոսկերիչ: Պեդրո Վիկարիոն երեք տարուց հետո նորից զինվորական ծառայության է մտնում, ստանում է կրտսեր սերժանտի ուսադիրներ, մի պայծառ օր էլ նրա պարեկախումբը պոռնկական երգեր երգելով մեկնում է պարտիզանների կողմից

ազատագրված շրջաններն ու այլևս նրա մասին ոչ ոք ոչինչ չ
իմանում:

Ճնշող մեծամասնության համար միայն Բայարդո Սան Ռոմանն էր զոհը: Ընդունում էին, որ ողբերգության մյուս մասնակիցները անձնվիրաբար, նույնիսկ հերոսաբար կատարեցին իրենց պարտքը կյանքի նկատմամբ: Սանտյագո Նասարը զրպարտության զոհ դարձավ, Վիկարիո եղբայրները տղամարդու իրենց պատիժը կրեցին, զրպարտված քույրը նորից վերականգնվեց իր պատվո իրավունքներում: Միակ մարդը, որ կորցրեց ամեն ինչ, Բայարդո Սան Ռոմանն էր: «Խեղճ Բայարդո», ինչպես անվանում էին նրան տարիներ շարունակ: Սակայն ոչ ոք նրան չհիշեց մինչև այն շաբաթ օրը, երբ տեղի ունեցավ լուսնի խավարում, իսկ դե-Քսիուս այրին ալկալդին պատմեց իր տան կտուրին նկատած այլ լուսարձակ թռչնակի մասին, որը, երևի, կնոջ հոգին էր, որ շարունակում էր պահանջել իր բաժինը: Ալկալդը աջով զարկում է ճակատին դա, ծակայն, այրու նկատած տեսիլքի հետ ոչ մի կապ չուներ:

— Սատանան տանի, — գոչում է ալկալդը, — ես մոռացել եմ այն խեղճ մարդու մասին:

Պարեկի հետ բլուրն է բարձրանում, ամառանոցի դիմաց նկատում է բաց մեքենան, ննջարանում լույս է տեսնում, բայց նրա կանչերին ոչ ոք չի պատասխանում: Ջարդում են դուռը և ստուգում ճրագներով լուսավորված սենյակները: «Ամեն ինչ ասես կրակի ճարակ էր դարձել», պատմեց ինձ ալկալդը: Բայարդո Սան Ռոմանն անկենդան ընկած էր մահճակալին այնպես, ինչպես տեսել էր նրան Պուրտո Վիկարիոն երեքշաբթի լուսադեմին՝ գեղեցիկ տաբատով, մետաքսյա վերնաշապկով, բայց առանց կոշիկների: Դատարկ շշերը՝ հատակին, ավելի շատ դեռ չբացած շշեր՝ մահճակալի կողքին շարված, ու ոչ մի ուտելիք: «Նա հարբեցողության վերջին աստիճանին էր հասել», ասաց ինձ դոկտոր Դիոնիսիո Իգուարանը, որ փրկել էր նրան: Հետո նա ուշքի է գալիս, և հենց որ խելքը գլուխն է հավաքում, բոլորին դուրս է վռնդում տանից այն հեշտությամբ, որին միայն ինքն էր ընդունակ:

— Բոլորդ չքվեցեք աչքիցս, — գոռում է նա, — նույնիսկ հայրս վետերանի իր արդուզարդով:

Ալկալդը դեպքի մասին, մինչև վերջին բառը, տագնապալի հեռագրով հայտնում է գեներալ Պետրոնիո Սան Ռոմանին: Գեներալ Սան Ռոմանը ստիպված էր ոտքի հանել որդու ամբողջ արիությունը, որովհետև ոչ թե ինքն է գալիս նրան օգնության՝ այլ ուղարկում է կնոջը, դստերի և երկու տարեց կանանց հետ, որոնք, ըստ երևույթին, իր քույրերը պետք է լինեին: Նրանք ժամանում են բեռնատար մեքենայով, և, ի նշան Բայարդո Սան Ռոմանի դժբախտության՝ խառնիխուռն մազերով, ոտքից գլուխ սև հագած: Մինչ ամուր հոդին իջնելը, նրանք հանում են կոշիկներ ու փողոցի այրող փոշու միջով ոտաբոբիկ քայլում դեպի բլրագագաթին կանգնած մենատունը: Նրանք ճանկռոտում են երեսներ

ու գոռում են այնպես, ասես ուրախություն լինի: Ես նկատեցի նրանց Մագդալենա Օլիվերի տան պատշգամբից և, հիշում եմ, մտածեց նույնիսկ, որ ողբի նման արտահայտումը երևի կոչված է քողարկելու մի ուրիշ, ավելի մեծ ամոթ:

Գնդապետ Լազարո Ապոնտեն ուղեկցում է նրանց դեպի բլրակ, իսկ քիչ անց ժամանում է նաև դոկտոր Դիոնիսիո Իգուարանը՝ իր շտապ օգնության ջորու վրա: Երբ արևը բարձրանում է, գավառի երկու ներկայացուցիչ Բայարդո Սան Ռոմանին դուրս են բերում իրենց ուսերին՝ երկար ձողից կապված ցանցաձոճին պառկած և մինչև գլուխը կարպետով ծածկված: Նրանց ուղեկցում է ողբասացների շքախումբը:

Մագդալենա Օլիվերին թվաց, թե նա մեռել է:

— Տեր իմ աստված, — բացականչեց նա, — ինչպիսի կորուստ:

Թեև նա արդեն երկրորդ անգամ էր ալկոհոլից ուշքը կորցրել, բայց շնչում էր. աջ ձեռքը կախվել էր և քարշ էր գալիս գետնին. հենց որ վայրը այն դնում էր ցանցաձոճի մեջ, ձեռքը նորից էր կախվում, ասես մենատան սանդղահարթակից մինչև մեքենայի դուռը ինչ-որ կորած բան էր փնտրում: Սա էր նրանից մեզ մնացած վերջին հուշը՝ հուշը այդ զոհի մասին: Մենատունը դատարկվեց: Ես և եղբայրներս, երբ արձակուրդի էինք գալիս, երեկոներն այնտեղ կերուխում էինք սարքում, սակայն ամեն գալով լքված սենյակներում ավելի ու ավելի քիչ արժեքավոր բան էինք գտնում: Մի օր էլ նկատեցինք Անխելա Վիկարիոյի ձեռքի ճամպրուկը, որ նա հարսանյաց գիշերը խնդրել էր մորից, բայց ուշադրություն չդարձրինք վրան: Մեջը սափրվելու և կնոջ դեմքին գեղեցկություն հաղորդելու պիտույքներ էին, որոնց իսկական նշանակությունը հասկացա լոկ այն ժամանակ, երբ տարիներ անց Անխելա Վիկարիոն պատմեց, թե ինչ խորհուրդներ էր տվել իրեն քավորկինը՝ ամուսնուն խաբելու համար: Դա միակ ապացույցն էր, որ իր հնգժամյա ամուսնության վայրում թողել էր Անխելա Վիկարիոն:

Տարիներ անց, երբ ես վերադարձա այստեղ՝ այս խրոնիկայի համար անհրաժեշտ փաստեր հավաքելու, անհետացել էին Յոլանդա դե-Քսիուսի հոգին լուսավորող մոմակալները: Անտեսելով գնդապետ Լազարո Ապոնտեի ձեռնարկած բոլոր միջոցները, աստիճանաբար անհայտանում էին իրերը. անհետացավ նաև վեց դռնանի հսկա պահարանը, որ Մոմպոքսի վարպետները հավաքել էին հենց տան ներսում, քանի որ հավաքած վիճակում նրա ներս տանելը անհնար էր: Սկզբից դե-Քսիուս այրին հանգիստ էր, կարծելով, թե դա կնոջ օյինբազություններն են, որը ձգտում է ստանալ իրեն հասանելիքը: Գնդապետ Լազարո Ապոնտեն ձեռք է առնում նրան: Բորբոքված, նա մի երեկո որոշում է, այդ անեծքը փարատելու համար, մասնակցել հոգեհանգստի ժամերգությանը, և Յոլանդա դե-Քսեուսի հոգին վարագույրների ետևից շարժուձևով հասկացնում է նրան, որ իբր ինքն է իր անդրշիրիմյան

մենախցիկ տեղափոխում այդ երջանկաբեր կահ-կարասիքը: Մ
նատունն սկսեց ավերվել: Մուտքի մոտ կանգնած հարսանեկա
մեքենան քանդված-տարված էր, մնացել էր ժամանակից ժանգ
տած կմախքը: Երկար տարիներ տանտիրոջ մասին լուր չկա
եզրակացությունում կա նրա ցուցմունքը, բայց այնքան հակիր
և խորիմաստ, որ, թվում է, արված է միայն մի նպատակով: Երբ 2
տարի անց ես նրա հետ խոսելու փորձ արեցի, նա հարձակողակա
դիրք ընդունեց ու հրաժարվեց հիշել այն վերջին պահը, որ
օգնությամբ ես կկարողանայի որոշել ողբերգության մեջ նրա
մասնակցության սահմանները: Նույնիսկ ծնողները չգիտեին նրա
մասին ավելին, քան մենք: Հայտնի չէր, թե նա ինչու էր եկել այ
խուլ ու մոռացված անկյունը և ամուսնացել մի կնոջ հետ, որի
երբեք չէր տեսել:

Եվ ընդհակառակը, Անխելա Վիկարիոյի մասին ես միշտ բազ
մաթիվ լուրեր էի ստանում, որոնք իմ մեջ մի իդեալականացվա
պատկեր ստեղծեցին: Ջանալով պահպանել իր աստվածապաշ
տության վերջին բեկորները, իմ միանձնուհի քույրը որոշ ժամա
նակ ապրեց Գուախիրայի կուսանոցում: Եվ Կարիբեն շրջապատո
դաշտերում, որտեղ ջանում է կործանել Անխելա Վիկարիոյի կյան
քը, քույրս հաճախ էր զրույցի բռնվում նրա հետ: «Ողջույնն
հորեղբորդ աղջկանից», ասում էր ինձ միանձնուհի քույրս: Ի
Մարգոն, որ առաջին շրջանում նույնպես այցելում էր նրա
պատմեց, որ նրանք մի մեծ, բարեշեն տուն են գնել, որի ընդա
ձակ բակում քամիներն են վզզում, մակընթացության ժամանա
կղկղանքը ելնում է ջրի երես, իսկ ննջասենյակներում ձկներն ե
թպրտում: Տեսնողներն ասում էին, որ նա ամբողջովին տարվա
էր իր կարի մեքենայով, որի օգնությամբ հանգիստ էր ձեռք բերե

Շատ ժամանակ անց, որոնումների այն տարիներին, երբ Գուա
խիրոյի գյուղերում հանրագիտարաններ և բժշկության մասի
գրքեր գնելով, ես աշխատում էի հասկանալ ինքս ինձ, բախտ
բերմամբ ընկա հնդիկների այդ փոքրիկ գյուղակը: Օրվա թե
ժամին ծովափին կանգնած տներից մեկի պատուհանում նկատեց
կարի մեքենայից կառչած մի կնոջ՝ սևը հագին, մետաղյա ակնոց
աչքերին, մազերը՝ կիսաճերմակ: Գլխավերևում կախված վանդա
կից անդադար լսվում էր դեղձանիկի երգի ձայնը: Ես չէի ցանկա
նում հավատալ, որ դա նա էր, իմ իմացած կինը, ներքուստ ձգտո
էի ընդդիմանալ այն մտքին, որ կյանքը կարող է վերջանա
այնպես, ինչպես վերջանում է վատ գրքերի մեջ: Բայց նա է
Անխելա Վիկարիոն, ողբերգությունից 23 տարի անց:

Նա ինձ, որպես հարազատ հորեղբոր տղայի, լավ ընդունե
ազնվորեն, նույնիսկ հումորով պատասխանեց հարցերիս: Ն
առույգ էր, աշխատունակ, դժվար էր պատկերացնել, որ դա ա

նույն աղջիկն էր: Անհավատալի էր, բայց նա հասկացել էր սեփական կյանքը: Մի քանի րոպե անց նա արդեն չէր թվում այնքան պառաված, ինչպես առաջին հայացքից. ջահել էր, ինչպես հիշողության մեջ, և ոչ մի կապ չուներ այն աղջնակի հետ, որը ստիպված էր 20 տարեկան հասակում ամուսնանալ առանց սիրո զգացմունքի: Պառաված մայրն ընդունեց ինձ՝ որպես թե դժվար ըմբռնելի տեսիլքի: Նա հրաժարվեց վերհիշել անցյալը, և ես ստիպված էի այս խրոնիկայի համար անհրաժեշտ փաստերը կորզել մորս հետ ունեցած նրա կցկտուր զրույցներից, օգնության կանչելով նաև սեփական հուշերիս փշուրները: Անխելա Վիկարիոյին ողջ-ողջ թաղելու համար նա արել էր հնարավորից ավելին, սակայն աղջիկն ինքն էր ջարդուփշուր արել մոր երազանքները, սեփական դժբախտությունից ոչ մի գաղտնիք չսարքելով: Ընդհակառակը: Նա բոլորին պատմում էր այդ դժբախտության մասին, բայց երբեք չէր բացում գլխավորը. ով, երբ և ինչպես էր իրեն պատվազրկել: Ոչ ոք չէր հավատում, որ իրականում դա կարող էր լինել Սանտյագո Նասարը:

Նրանք երկու տարբեր աշխարհից էին: Ոչ ոք նրանց միասին չէր տեսել, առավել ևս՝ միայնակ: Սանտյագո Նասարը բավականին բարձր էր, որպեսզի ուշադրություն դարձներ նրա վրա: «Քո հիմար ազգականը», ասում էր նա, երբ ստիպված էր լինում այս կամ այն առիթով հիշել նրան: Սանտյագո Նասարը բարձր թռիչքի տեր մարդկանցից էր: Հոր պես միշտ մենակ, փշրելով աղջիկների սիրտը, նա թափառում էր սարերում. գյուղում նա ոչ ոքի հետ կապ չուներ, լոկ Ֆլորա Միգելի հետ կապված պայմանն էր ու մեկ էլ այն կարկուտը, որ ամբողջ տասնչորս ամիս տեղում էր նրա գլխին Մարիա Ալեխանդրինա Սերվանտեսը: Ճիշտը գուցե այն էր, որ Անխելա Վիկարիոն թաքցնում էր իր իսկական սիրեցյալի անունը, իսկ Սանտյագո Նասարի անունը տվել էր իմիջիայլոց, չենթադրելով, որ եղբայրները կարող են ծառս լինել նրա դեմ: Ես ինքս փորձեցի պարզել այդ ենթադրությունը, երբ երկրորդ անգամ, փաստերով զինված, այցելեցի նրան, նա հազիվ հայացքը կտրեց կարի մեքենայից:

— Մի փորփրիր անցյալը, եղբայրս, — ասաց նա ինձ: — Նա էր:

Մնացածը նա պատմեց առանց թաքցնելու, նույնիսկ այն անիծյալ հարսանյաց գիշերը նկարագրեց: Պատմեց, որ ընկերուհիները խորհուրդ էին տվել ամուսնական մահիճ մտնելուց առաջ հարբեցնել ամուսնուն, նրա առջև ամոթխածություն խաղալ և ստիպել հանգցնել լույսը, կարմրաջուր պատրաստել և սավանի վրա բծեր քաշել՝ երկրորդ օրը նորապսակների՝ իրենց բակում կախելու համար: Նրանց խորհուրդները միայն երկու բան ի նկատի չունեին. գինեմոլ Բոյարդո Սան Ռոմանի վճռական դիմադրությունն ու

սուրբ անմեղությունը, որ կրում էր Անխելա Վիկարիոն իր միամիտ երազներում: «Ես նրանց ասածներից ոչ էլ մեկն չարեցի, — ասաց նա ինձ: — Ինչքան մտածում էի, այնքան լավ էի հասկանում, որ դրանք հիմարություններ են, որոնցով չի կարելի ամբաստանել ոչ ոքի, առավել ևս մի խեղճ մարդու, որը դժբախտություն է ունեցել ամուսնանալ ինձ հետ»: Եվ նա թույլ է տալիս մերկացնել իրեն լուսավորված ննջասենյակում, լավ հասկանալով իր հետագա կյանքին սպառնացող բոլոր վտանգները: «Դա շատ հեշտ էր,— ասաց նա ինձ,— որովհետև ես պատրաստ էի մեռնելու»:

Իր դժբախտության մասին խոսելիս, նա չէր փորձում նույնիսկ թաքցնել իսկական դժբախտությունը, որ իրեն տակնուվրա էր անում ներսից: Ոչ ոք չէր հավատա, որ իրեն ետ ուղարկող Բայարդո Սան Ռոմանն առհավետ կմնա նրա սրտում: Նա ինքը ասաց ինձ այդ մասին: Դա հազիվ խոստովանություն էր: «Հենց որ մայրս սկսեց հարվածել ինձ, ես հիշեցի նրան», ասաց նա ինձ:

Հարվածները նրան ցավ չէին պատճառում, քանի որ այդ հարվածները ստանում էր նրա պատճառով: Ամեն ինչ մոռացած, ընկած ճաշասենյակի թախտին, նա աղեկտուր լաց էր լինում և... մտածում նրա մասին: «Ոչ հարվածներն էին ցավ պատճառում ինձ, ոչ էլ կատարվածը, — ասաց նա ինձ: — Ես լաց էի լինում նրա համար»: Շարունակում է մտածել նրա մասին, երբ մայրը սառը կոմպրեսներ էր դնում, նույնիսկ երբ փողոցից գոռոցների և զանգերի տագնապալի ձայներ է լսում, և երբ մայրը ներս է մտնում հաղորդելու, որ այժմ կարող է հանգիստ քնել, որովհետև ամենասարսափելին արդեն կատարվել է:

Նա շարունակում է պահել նրան իր խոհերում: Մի օր մոր հետ Ռիոաչայի հիվանդանոց գնալիս ճանապարհին մտնում են հիվանդանոց: Պուրա Վիկարիոն մի բաժակ ջուր է խնդրում հյուրանոցի ծանոթ տիրոջից: Մեջքով դեպի աղջիկը կանգնած, մայրը ջուր է խմում: Հանկարծ սրահի հայելիների մեջ երևում է այդքան տարվա նրա մտատանջանքների առարկան: Անխելա Վիկարիոն շրջվում է դեպի նա, բայց... ապարդյուն. առանց որևէ ուշադրություն դարձնելու նրա վրա, նա դուրս է գալիս հյուրանոցի դռներից: Աղջիկը փշրված սրտով շրջվում է դեպի մայրը: Պուրա Վիկարիոն ափով սրբում է շրթունքներն ու ապակու միջից ժպտում աղջկան: Այդ ժպիտի մեջ առաջին անգամ Անխելա Վիկարիոն տեսնում է մորը այնպիսին, ինչպիսին նա կար իրականում. սեփական թերություններին գերի դարձած մի խեղճ կին: «Կեղտոտի մեկը», մտածում է աղջիկը: Նա այնպես է ազդվում, որ վերադարձի ամբողջ ճանապարհին բարձրաձայն երգում է, հետո էլ, երեք օր շարունակ մահճակալին ընկած, լաց է լինում:

Եվ նա վերածնվում է: «Նրա համար խենթացել էի, — ասաց նա ինձ,— գժվել էի ամբողջովին»: Բավական էր փակեր աչքերը, տեսնում էր նրան, ծովի հառաչում լսում էր նրա շշունջը, կեսգի-

շերին արթնանում էր անկողնում նրա մարմնի առկայության պատրանքից: Եվ, վերջնականապես հանգիստը կորցրած, ամսվա վերջին գրում է նրան առաջին նամակը: Համառոտ ուղերձի մեջ հայտնում է, որ տեսել է նրան հյուրանոցից դուրս գալիս, և հաճելի կլիներ, եթե նա էլ իրեն նկատած լիներ: Սրտատրոփ սպասում է պատասխանի: Սպասումից հոգնելով, նա գրում է նույն բովանդակությամբ երկրորդ նամակը, որի արատավոր կողմը գուցեև այն լիներ, որ նա մեղադրում է նրան քաղաքավարության մեջ: Վեց ամսում նա արդեն վեց անպատասխան նամակ է գրած լինում, բայց նրան մխիթարում է այն միտքը, որ նամակները հասնում են հասցեատիրոջը:

Առաջին անգամ սեփական ձակատագրի տերը լինելով, Անխելա Վիկարիոն հայտնաբերում է, որ ատելությունն ու սերը նույնանման զգացմունքներ են: Ինչքան շատ է գրում, այնքան շատ է բորբոքվում կրակը նրա ներսում, ինչպես նաև բորբոքվում է ատելություն մոր նկատմամբ: «Մորս տեսքն անգամ սիրտս տակնուվրա էր անում,— ասաց նա ինձ: — Ամեն անգամ մորս տեսնելիս անմիջապես նրան էի հիշում»:

Կյանքն անցնում է նույն հեշտությամբ, ինչպես չամուսնացած տարիներին. և ինչպես հնում կտորից և թղթից ծաղիկներ ու թռչուններ էր պատրաստում, այնպես էլ այժմ կարի մեքենայի անիվն է պտտեցնում ընկերուհիների հետ, բայց հենց որ մայրը մտնում է անկողին, նա նստում և մինչև լույս անհույս նամակներ է գրում: Նա սիրունանում է, դառնում վայելչագեղ, իր բախտի տերը: Նա դառնում է սուրբ՝ միայն նրա համար, չի ընդունում ոչ մի հեղինակություն, բացի նրա հեղինակությունից, ոչ մի ծառայություն, բացի իր մտքում նրան ծառայելուց:

Նա շաբաթական մեկ նամակ է գրում, և այդպես ամբողջ կես կյանքը: «Հաճախ չէի իմանում՝ ինչ գրել, — ասաց նա ինձ ծիծաղից թուլացած: — Բայց ինձ համար բավական էր իմանալ, որ նա ստանում է նամակներս»: Սկզբում դրանք հաշվելու ակնարկներ էին, հետո՝ սիրուհու գաղտնի նամակներ, թորշոմած հարսնացուի բույրը հիշեցնող գրություններ, գործնական հուշեր, սիրո վկայագրեր, և ի վերջո նրանք դարձան ստահոդ նամակները լքված կնոջ, որը սոսկալի հիվանդություններ է հնարում, միայն թե նրան ստիպի վերադառնալ: Մի երեկո թանաքը թափվում է նամակի վրա, և փոխանակ պատռելու, հետգրությամբ նա ավելացնում է. «Որպես սիրուս վկայություն՝ ճամփում եմ քեզ արցունքներս»: Հաճախ, արցունքներից հոգնած, ծիծաղում է ինքն իր հիմարության վրա: Վեց անգամ փոխվում է փոստի աշխատակցուհին, և վեց անգամ շարունակվում է նրանց համագործակցությունը: Նա միայն իր ձեռնարկած գործից ետ կանգնելու մասին չի մտածում: Բայց նրա տառապանքները մնում են անպատասխան: Ասես նա գրում է... ոչ-ոքի:

Անցնում է տաս տարի: Մի օր նա արթնանում է այն զգացումից,

թե իբր Նա, մերկ, պառկած է իր հետ անկողնում: Եվ նա գրում է քսան էջից բաղկացած մի նամակ ու, առանց ամաչելու, հայտնում բոլոր դառնությունների մասին, որ այն անիծյալ երեկոյից հետո կրել է իր սրտում: Գրում է մշտական ցավերի մասին, որ նա թողել էր իր մարմնում, նրա լեզվի քաղցրության մասին, նրա աչքերում խաղացող կայծերի մասին: Նամակը հանձնում է փոստի աշխատակցուհուն, որն ուրբաթ օրերին գալիս, նրանից նամակներ էր ստանում, և որոշում է, որ դա իր տանջանքների վերջին ճիչը կլինի: Պատասխան չի ստացվում: Այդ օրից հետո նա արդեն չի գիտակցում, թե ում և ինչ է գրում, բայց շարունակում է գրել էլի՝ տասնվեց երկար տարիներ:

Օգոստոսյան մի շոգ օր, ընկերուհիների հետ կար անելիս, հանկարծ զգում է, որ ինչ-որ մեկը մոտենում է դռանը: Գլուխը բարձրացնելու նույնիսկ կարիք չի զգում՝ իմանալու համար, թե ով է եկողը: «Գիրացել էր, մազերն սկսել էին թափվել, արդեն ակնոցների կարիք էր զգում, — ասաց նա ինձ: — Բայց նա էր, սատանան տանի, նա էր»: Տխրում է, որ, երևի, նա էլ իրեն է գտնում այդքան մաշված, ինչպես ինքը՝ նրան. չի կարողանում հավատալ, որ նրան պահելու համար իր մեջ եղած սիրուց կարող էր նաև նրա մեջ լինել: Հագին քրտինքի մեջ կորած նույն վերնաշապիկն էր, որ տեսել էր առաջին անգամ՝ հայրենի գյուղ ժամանելիս, կապել էր նույն գոտին և արծաթե զարդանշաններով նույն ուսակալները: Բայարդո Սան Ռոմանը մի քայլ առաջ է գնում, ուշադրություն չդարձնելով կարով զբաղված կանանց վրա, հանում է ուսակալներն ու դնում կարի մեքենայի վրա:

— Ահա և ես, — ասում է նա:

Ձեռքին շորեղենի ճամպրուկն էր ու նաև մի փոքրիկ ճամպրուկ՝ մոտ երկու հազար նամակներով, որ գրել էր նրան: Նամակները դասավորված էին ըստ ամսաթվերի՝ գույնզգույն քուղերով կապած ծրարների մեջ և բոլորն էլ... չբացած:

***

Տարիների ընթացքում մենք չէինք կարողանում խոսել այլ բաների մասին: Մեր ամենօրյա խոսակցությունը, որ մինչ այդ պտտվում էր հասարակ իրադարձությունների շուրջ, միանգամից սկսվեց պտտվել այդ ընդհանուր ցավի շուրջը: Ամեն առավոտ աքաղաղներն իրենց կանչերով փորձում էին ստիպել մեզ կարգավորել այն բազմաթիվ իրար հաջորդող պարտականությունները, որ հնարավոր դարձրին թյուրիմացությունը, բայց մենք չէինք անում դա ոչ թե այն պատճառով, որ վախենում էինք բոլոր գաղտնիքները լուսաբանելուց, այլ այն պատճառով, որ մեզանից ոչ մեկը ամբողջ կյանքում հանգիստ չէր քնի, եթե հանկարծ նախախնամությունը պարզեր յուրաքանչյուրիս հատկացված տեղն ու դերը:

 Եվ դա այդպես էլ չիմացվեց: Քրիստո Բեդոյան, հետագայում

ճանաչված վիրաբույժը, չի գնում ծնողների մոտ, որտեղ նրան սպասում են լուրն հայտնելու համար, այլ մնում է տատի տանը և եպիսկոպոսի ժամանմանը նախորդող երկու ժամը կորցնում է այդտեղ. նա այդպես էլ երբեք չկարողացավ ներել իրեն: Իսկ նրանք, ովքեր կարող էին, բայց չկանխեցին դժբախտությունը, հանդգնորեն հայտարարեցին, որ պատվի հարցերը մութ ոլորտներ են, որոնց գաղտնիքները միայն դրամայի մասնակիցներին են հայտնի: «Պատիվը սերն է»,հաճախ էր կրկնում մայրս: Հորտենզիա Բաուտեն, որի մասնակցությունը լոկ այն էր, որ տեսել էր արնաթաթախ դանակը, երբ դա դեռևս այդպիսին չէր, այնպես է ազդվում պատրանքից, որ ի վերջո կորցնում է հոգեկան հավասարակշռությունը ու մի օր էլ, փախչելով երևակայական հետապնդումից, մերկացած ընկնում է փողոցները: Ֆլորա Միգելը, Սանտյագո Նասարի հարսնացուն, փախչում է սահմանապահ սպաներից մեկի հետ ու պոռնկանում, ձեռքից-ձեռք ընկնում Վիչադայի ռետինագործների շրջապատում: Աուրա Վիլլերսոնը, որի օգնությամբ երեք սերունդ էր լույս աշխարհ եկել, լուրն իմանալուն պես միզափամփուշտի խցանում է ստանում և մինչև կյանքի վերջը խողովակի օգնությամբ միզում: Դոն Ռոխելիո դե-լա-Ֆլորը, Կլոտիլդե Արմենտայի բարի ամուսինը, երկարակեցության 86 տարեկան բացառիկ նմուշը, վերջին անգամ տեղից բարձրանում է տեսնելու, թե ինչպես են Սանտյագո Նասարին դաշունահարում սեփական տան փակ դռանը մեխած, և այլևս չի տանում այդ հարվածը: Պլասիդա Լիներոն այդ դուռը փակում է վերջին վայրկյանին, բայց հետագայում նա էլ է իրեն ազատում մեղքից: «Ես դուռը փակեցի, քանի որ Դիվինա Ֆլորը երդվեց, որ տեսել էր տղայիս ներս մտնելիս, — պատմեց նա ինձ: — Բայց, ցավոք, դա ճիշտ չէր»: Սակայն նա երբեք չներեց, որ ծառերի խաղաղ հանգիստը խանգարվում էր թռչունների ճռվողյունով, և շարունակեց այն ժամանակների իր հիմար սովորությունը՝ հիլի հատիկներ չրթացնելը:

Հանցագործությունից տասներկու օր անց պաշտոնական հետաքննիչը գյուղը գտնում է առույգ և ուրախ վիճակում: Գավառական ակումբի կեղտոտ սենյակներից մեկում, օգտվելով բուրավետ սուրճի և շաքարեղեգնի ռոմի խառնուրդից, որպես շոգի դեմ պայքարելու միակ միջոց, նա ստիպված է լինում զինված ուժ պահանջել, որպեսզի կարգի հրավիրի ամբոխին, մի ամբոխ, որը ձգտում է շեշտած լինել դրամայի մեջ իր կատարած դերը: Ուսումը նոր ավարտած, նա տակավին չէր ազատվել իրավաբանական ուսումնարանի սև համազգեստից և ուսումնարանի գերբը կրող ոսկե մատանուց, ինչպես նաև փառամոլությունից ու երջանիկ ամուսնության հեռանկարներից: Նրա անունը երբեք չիմացվեց: Նրա բնութագրության տեղեկությունները ես հայթայթեցի վերջնական եզրակացությունից, որ քսան տարի հետո, շատ շատերի

օգնությամբ, հայտնաբերեցի Ռիոաչայի Իրավաբանության Պալատում: Արխիվը թափթփված էր, իսկ շենքը, որ երկու օր Ֆրենսիս Դրեյկի համար ծառայել էր որպես ամրոց, իր ուսերին էր կրում զավթիչների կուտակած հարյուրամյա բեռը: Ներքնահարկը մակընթացության ժամանակ միշտ լցվում էր ջրով և ցիրուցան եղած հատորները լողում էին լքված սենյակներում: Մինչև ծնկներս ջրի մեջ, ես անձամբ հետազոտեցի կորցրած գործերի այդ ջրամբարը, և միայն պատահականությունն ինձ օգնեց, հինգ տարի անընդհատ փնտրելուց հետո, հայտնաբերել 322 խառնաշփոթ էջ՝ ավելի քան 500 էջից, որ պետք է ունենար եզրակացությունը:

Քննիչի անունը չգտա, բայց որ նա գրագետ էր եղել՝ կասկած չկար: Նա ծանոթ էր եղել իսպանական դասականներին, որոշ լատինացիների, Նիցշեին՝ այն տարիներին ուսանողների շրջանում ամենահայտնի հեղինակին: Լուսանցքների գրառումներն ասես արյամբ էին կատարված, և ոչ միայն գունավոր թանաքի պատճառով: Սարսափելով իրեն բաժին ընկած գաղտնիքից և շրջանցելով այն, հակառակ իր անմիջական պարտականություններին, նա բազմաթիվ լիրիկական զեղումներ է արել: Կատարվել էր սպանություն, կատարվել էր անարգել, նրան նախորդել էր պատահականությունների մի ամբողջ կծիկ, որ, առհասարակ, արգելվում է գրականության բոլոր օրենքներով: Եվ նա զարմանքից քար է կտրում, թե այդ ինչպես կարող էր այդպես ստացվել:

Նա լավ է աշխատում, աշխատում է բարեխղճորեն, սակայն ոչ մի կերպ չի կարողանում հանդիպել դժբախտության մեջ Սանտյագո Նասարի ունեցած մեղքի նույնիսկ չնչին ակնարկի: Անխելա Վիկարիոյի մտերիմ ընկերուհիները երկար տարիներ շարունակում էին պնդել, որ նա իրենց տեղյակ էր դարձրել իր գաղտնիքին հարսանիքից դեռ շատ առաջ, բայց ոչ մի անուն չէր հայտնել: Եզրակացությունում գրանցված էր նրանց ցուցմունքը: «Նա հայտնեց մեզ հրաշքի մասին, բայց չտվեց հրաշագործի անունը»: Անկոտրում է մնում նաև ինքը՝ Անխելա Վիկարիոն: Երբ պաշտոնական քննիչը հարևանցիորեն հարցնում է, թե նա գիտեր, արդյոք, թե ով էր հանգուցյալ Սանտյագո Նասարը, նա անտարբերությամբ պատասխանում է.

— Նա ինձ հետ կատարվածի հեղինակն էր:

Ընդամենը երեք օր տևած հետաքննության ընթացքում քաղաքացիական ներկայացուցիչն էլ իր բաժինն է մտցնում հարցն ավելի աղավաղելու գործում: Չգտնելով Սանտյագո Նասարի դեմ ուղղված որևէ փաստ, բարեխիղճ պաշտոնական քննիչը կորցնում է իրեն, հուսահատվում: 416-րդ էջի լուսանցքում դեղագործի կարմիր թանաքով նա անձամբ գրում է. «Տվեք ինձ նախապաշարմունք, և ես կշրջեմ երկիրը»: Հուսահատությամբ շնչող այս ձևափոխության տակ նա նետահարված սիրտ է նկարում: Նրա, ինչպես նաև Սանտյագո Նասարի բարեկամների համար, հե-

տաքննության վերջին պահին դրսևորված այսօրինակ վարքագիծը համազոր էր վերջնական կարծիքի:

Սեփական մահվան օրը Սանտյագո Նասարը շատ լավ գիտակցում է, թե ինչպիսին է լինելու իրեն վերագրվող անարդարության գինը. դրանում ոչ մի կասկած չկար: Նա լավ էր ճանաչում շրջապատը, գիտեր, որ երկվորյակները կնահանջեն, եթե դիմադրություն ցույց տրվի նրանց: Ոչ ոք չէր ճանաչում Բայարդո Սան Ռոմանին, բայց Սանտյագո Նասարը գիտեր, որ հասարակ փառամոլության տակ քողարկվում են շատ պարզ բնական ձգտումներ: Գիտեր, բայց ուշադրություն չէր դարձնում: Հենց այդ տարբերությունն էր, որ դարձավ նրա սպանության պատճառը: Երբ վերջին պահին նա իմանում է, որ Վիկարիո եղբայրները իրեն են սպասում, որ սպանեն, հակառակ ընդհանուր կարծիքի, նա չի տագնապում, այլ ավելի բացահայտ է ցույց տալիս իր անտարբերությունը:

Իմ կարծիքով՝ նա մահացավ, չհասկանալով սեփական մահը: Քրոջս՝ Մարգոյի հետ ընթրիքի մասին պայմանավորվելուց հետո, Քրիստո Բեդոյան թևանցուկ է անում նրան և տանում նավամատույցից: Նրանց անհոգ տեսքը կեղծ գոհունակության պատրանք է ստեղծում շրջապատում: «Այնքան ուրախ էին քայլում, — ասաց ինձ Մեմե Լուիզան, — որ ես փառք տվեցի աստծուն. թվաց՝ հարցն արդեն լուծված է»: Բայց ոչ բոլորն էին սիրում Սանտյագո Նասարին: Պոլո Կառիլյոյին, էլեկտրական ցանցի սեփականատիրոջը, թվում էր, թե նրա հպարտությունը ցինիզմից է, ոչ թե գիտելիքներից: «Կարծում էր՝ հարստությունն անձեռնմխելի է դարձնում իրեն», ասաց նա ինձ: Կինը, Ֆաուստա Լոպեսը, մեկնաբանեց. «ինչպես բոլոր թուրքերը»: Ինդոլեսիո Պարդոն նոր է դուրս ելնում Կլոտիլդե Արմենտայի կրպակից, երկվորյակները հայտնում են նրան, որ եպիսկոպոսի մեկնելուն պես պետք է սպանեն Սանտյագո Նասարին: Նա էլ իր հերթին էր մտածում, որ դրանք հարբածների զառանցանքներ են, բայց Կլոտիլդե Արմենտան հասկացնում է նրան և խնդրում՝ զգուշացնել Սանտյագո Նասարին:

— Նույնիսկ նեղություն չքաշես,— ասում է նրան Պեդրո Վիկարիոն: — Ինչ էլ լինի, կարող ես հաշվել, որ նա արդեն մեռած է:

Դա արդեն մարտահրավեր էր: Որ Ինդոլեսիո Պարդոն Սանտյագո Նասարի մտերիմն էր՝ քաջ հայտնի էր երկվորյակներին: Հայտնի էր նաև, որ նա միակ մարդն էր, որ կարող էր կանխել ոճրագործությունը, չվարկաբեկելով իրենց՝ երկվորյակներին: Սակայն Ինդոլեսիո Պարդոն նավամատույցից վերադարձող բազմության մեջ հանդիպում է Սանտյագո Նասարին Քրիստո Բեդոյայի հետ թևանցուկ քայլելիս և չի համարձակվում նախազգուշացնել: «Տագնապս անցավ», ասաց նա ինձ: Ձեռքով թմփթմփացնում է երկուսի ուսին և թողնում, որ շարունակեն ճանապարհը: Նրանք, Ինդոլեսիո Պարդոյի վրա հազիվ ուշադրություն դարձրած, շարունակում են հարսանիքից ստացած տպավորությունների փոխանակումը:

Նույն ուղղությամբ դեպի հրապարակն է շարժվումժողովուրդը: Հրմշտոցում Էսկոլաստիկո Սիսներոսը նկատում է, որ ընկերներն ինչ-որ շրջանակի մեջ են առնված՝ դատարկ շրջանակի, ասես մարդիկ, գիտենալով, որ Սանտյագո Նասարը պետք է մեռնի, խուսափում են նրա հետ շփվելուց: Քրիստո Բեդոյան նույն բանն է հիշում՝ ինչ-որ տարօրինակ վերաբերմունք իրենց նկատմամբ: «Մեզ նայում էին այնպես, ասես երեսներիս բան էր նկարած», ասաց նա ինձ: Սարա Նորյեգան կոշկեղենի կրպակը բացում է նրանց անցնելու պահին և սարսափում է Սանտյագո Նասարի դեմքի գունատությունից:

— Ծառին հենվիր, Սարա աղջիկ, — ասում է նա առանց կանգ առնելու:

Տնային շորերով դռան շեմին նստած Սելեստե Դանգոդը, ծաղրելով նրանց, ովքեր պճնազարդվել էին եպիսկոպոսի պատվին, Սանտյագո Նասարին հրավիրում է սուրճ խմելու: «Ժամանակ՝ շահելու համար, մինչև կմտածեի՝ ինչ անել», ասաց նա ինձ: Սանտյագո Նասարը պատասխանում է, որ պետք է շտապ կերպով փոխի շորերն ու գնա քրոջս հետ նախաճաշելու: «Եվ ես տեղի տվեցի,— բացատրեց ինձ Սելեստե Դանգոդը: — Թվաց, թե իր անելիքներում այդքան վստահ մարդուն դժվար թե կարողանան սպանել»: Ջամիլ Շաուին միակն է, որն անում է այն, ինչ անհրաժեշտ էր անել: Շշուկներն իմանալուն պես, նա կանգնում է իր պարենային խանութի շեմին և սպասում Սանտյագո Նասարին: Իբրահիմ Նասարի հետ եկած վերջին արաբը մինչև վերջ նրա հավատարիմ գործընկերն էր և այժմ էլ մնում էր նրա ընտանիքի ամենամոտ խորհրդատուն: Միայն նա ուներ Սանտյագո Նասարի հետ խոսելու ամենամեծ իրավունքը: Սակայն նա մտածում է, որ շշուկները կարող են անհիմն լինել, և այդ դեպքում ինքն անտեղի անհանգստություն կարող է պատճառել նրան. որոշում է դիմել Քրիստո Բեդոյային և պարզել, թե արդյոք, այս վերջինս լավատեղյակ է գործին: Ձայն է տալիս: Քրիստո Բեդոյան հրապարակի անկյունում ձեռքով թփթփացնում է Սանտյագո Նասարի մեջքին և գնում դեպի Ջամիլ Շաուին:

— Մինչև շաբաթ, — բաժանվելիս ասում է նրան:

Սանտյագո Նասարը չի պատասխանում, այլ ինչ-որ բան է ասում Ջամիլ Շաուիին արաբերեն, վերջինս, բարձրաձայն ծիծաղելով, պատասխանում է նույնպես արաբերեն: «Բառախաղ էր, որ միշտ փոխանակում էինք», ասաց ինձ Ջամիլ Շաուին: Սանտյագո Նասարը ձեռքի շարժումով իր սովորական նշանն է անում

նրանց և թեքվում հրապարակի անկյունը: Դա վերջին անգամն էր, որ նրանք տեսնում են նրան:

Ջամիլ Շաուիից լուրն իմանալուն պես, Քրիստո Բեդոյան դուրս է թռչում խանութից և վազում Սանտյագո Նասարի ետևից: Նկատում է նրան անկյունում թեքվելիս, վազում է, բայց ցրվող բազմության մեջ չի գտնում նրան: Ում դիմում է, նույն պատասխանն է ստանում:

— Հենց նոր նրան քեզ հետ տեսանք:

Անհնար է թվում, որ այդքան կարճ ժամանակում նա կարող էր տուն հասնել, բայց վազում է տուն: Այդ պահերին սովորաբար բաց մնացող դռնով նա ներս է ընկնում, չնկատելով հատակին ընկած ծրարը: Մարդկանց չանհանգստացնելու համար, անշշուկ, խավարի մեջ անցնում է դահլիճը: Շները ընդառաջ են գալիս, բայց նա տանտիրոջ պես բանալիների զնգզնգոցով հանգստացնում է նրանց և նրանց ուղեկցությամբ էլ մտնում խոհանոց: Միջանցքում հանդիպում է Դիվինա Ֆլորին, որը ջրով լի թասն ու փալասը ձեռքին գնում է դահլիճի փոշին մաքրելու: Նրանից իմանում է, որ Սանտյագո Նասարը չի վերադարձել: Երբ նա մտնում է խոհանոց, Վիկտորիա Գուսմանը հենց նոր է կրակին դրած լինում ճագարի մսով ապուրը: Աղջիկն անմիջապես հասկանում է: «Միրտը բերանից դուրս էր գալիս», ասաց նա ինձ: Քրիստո Բեդոյան Սանտյագո Նասարի մասին է հարցնում, աղջիկն անփույթ պատասխանում է, որ դեռևս չի եկել քնելու:

— Հարցը լուրջ է, — ասում է նրան Քրիստո Բեդոյան: — Նրան փնտրում են, որ սպանեն նրան:

Եվ Վիկտորիա Գուսմանը մոռանում է իր անփութությունը:

— Այդ ողորմելիները ոչ ոքի էլ չեն սպանի, — ասում է նա:

— Նրանք խմում են շաբաթ օրվանից, — ասում է Քրիստո Բեդոյան:

— Հենց այդ պատճառով, — պատասխանում է աղջիկը: — Ոչ մի հարբած իր կղկղանքը չի ուտում:

Քրիստո Բեդոյան վերադառնում է դահլիճ, որտեղ Դիվինա Ֆլորը հենց նոր է բացած լինում պատուհանները: «Երևի այն պատճառով, որ անձրև չէր գալիս, — ասաց ինձ Քրիստո Բեդոյան: — Դեռ ժամը յոթը չկար, իսկ ոսկեշող արևն արդեն պատուհաններից ներս էր ընկել»: Նորից է հարցնում Դիվինա Ֆլորին, թե վստահ է, արդյոք, որ Սանտյագո Նասարը դահլիճի դռնով ներս չի մտել: Այս անգամ աղջիկն առաջվա նման վստահ չէր: Հետո հարցնում է Պլասիդա Լիներոյից, աղջիկը պատասխանում է, որ երկու րոպե առաջ գիշերային սեղանին սուրճ է դրել, բայց չի արթնացրել նրան: Այդպես էր. կարթնանար յոթին, սուրճ կխմեր և ցած կիջներ՝

ընթրիքի հրահանգներ տալու: Քրիստո Բեդոյան նայում է ժամացույցին. ժամը 6-ն անց էր 56 րոպե: Բարձրանում է երկրորդ հարկ, համոզվելու, որ Սանտյագո Նասարը ներս չի մտել:

Ննջասենյակի դուռը ներսից փակ էր: Սանտյագո Նասարը մոր ննջարանով էր դուրս գնացել: Քրիստո Բեդոյան ոչ միայն լավ էր ճանաչում սենյակները, այլև այս ընտանիքում վայելում էր այնպիսի վստահություն, որ ուղղակի Պլասիդա Լիներոյի ննջարանով է անցնում կից սենյակը: Ցանցաճոճի վրա կողքի-պառկած, ձեղնահարկից ընկնող արևի շողը դեմքին, ձեռնափն այտին սեղմած կինը հրեշտակ է հիշեցնում նրան. «Ասես տեսիլք լիներ», ասաց ինձ Քրիստո Բեդոյան: Այդ գեղեցկությամբ տարված՝ մի պահ հիանում է նրանով, հետո անձայն դուրս է գալիս ննջարանից, անցնում լոգարանի կողքով և մտնում Սանտյագո Նասարի ննջասենյակը: Տեսնում է տեղաշորը հավաքած, աթոռի վրա՝ խնամքով ծալած ամենօրյա հագուստը, վրան՝ հեծյալի սոմբրերոն, հատակին, մտրակի կողքին՝ երկարաճիտ կոշիկները: Գրասեղանի վրա Սանտյագո Նասարի զարթուցիչը ցույց է տալիս 6-ն անց 58: «Մտածեցի՝ երևի զինվել ու նորից դուրս է գնացել», ասաց ինձ Քրիստո Բեդոյան: Բայց ատրճանակը գտնում է գրասեղանի դարակում: «Նա երբեք զենք չէր կրակել,— ասաց ինձ Քրիստո Բեդոյան: — Որոշեցի վերցնել ատրճանակն ու տանել Սանտյագո Նասարին»: Ատրճանակը վերնաշապիկի տակից կոխում է գոտկատեղն ու միայն հանցագործությունից հետո է նկատում, որ այն դատարկ է: Հենց դարակը փակելիս էլ Պլասիդա Լիներոն սուրճի գավաթը ձեռքին հայտնվում է դռների մեջ:

— Տեր Աստված,— բացականչում է նա: — Այս ինչպես վախեցրիր ինձ:

Քրիստո Բեդոյան էլ իր հերթին է վախենում: Տեսնում է նրան վառ լույսի տակ, ոսկեգույն, նախշազարդ շրջազգեստը հագին, մազերն արձակած, և նրա սկզբնական հիացմունքը իսպառ ցնդում է: Փոքր-ինչ շփոթված պատասխանում է, որ եկել է Սանտյագո Նասարի ետևից:

— Գնացել է եպիսկոպոսին դիմավորելու, — ասում է Պլասիդա Լիներոն:

— Այնտեղից վերադարձավ, — ասում է նա:

— Ես ենթադրում էի... — շշնջում է կինը: — Նա անարժան մոր զավակ է:

Նկատելով, որ Քրիստո Բեդոյան չի կարողանում հանգիստ կանգնել, կտրում է խոսքը: «Հուսով եմ՝ աստված ինձ կների, — ասաց ինձ Պլասիդա Լիներոն,— բայց նրա շփոթմունքն այն-

պիսին էր, որ ասես գողության էր եկել»: Հարցնում է, թե ինչ է պատահել: Քրիստո Բեդոյան վախենում է կասկածանք առաջացնելուց և չի համարձակվում ասել ճշմարտությունը:

— Ոչինչ, — պատասխանում է նա: — Ուղղակի ոչ մի որպե աչք չեմ փակել:

Հեռանում է, այլևս ոչ մի բացատրություն չտալով: «Բոլոր դեպքերում, —ասաց նա ինձ, — նրան միշտ էլ թվում էր, որ իրեն կողոպտում են»: Հրապարակում հանդիպում է բացօթյա ժամերգությունից եկեղեցի վերադարձող պադրե Ամադորին, բայց մտածում է, որ վերջինս Սանտյագո Նասարի հոգին փրկելու համար ոչինչ անել չի կարող: Որոշում է վերադառնալ նավամատույց, երբ նկատում է, որ Կլոտիլդե Արմենտայի կրպակից կանչում են իրեն: Մազերը խառնած, դեմքի գույնը գցած, կոճակներն արձակած վերնաշապիկի թևերը վեր քշտած, սուսերի ծայրից անձամբ շինած դանակը ձեռքին, շեմքին կանգնած էր Պեդրո Վիկարիոն: Նրա տեսքն ավելի թշվառ էր թվում, քան հանցագործը կունենար, բայց դա այն բանի միակ ու ակնհայտ վկայությունը չէր, որ նա վերջին որպեին էլի մի փորձ է անում, որպեսզի թույլ չտան ոճրագործությունն իրականացնել:

— Քրիստոբա՛լ, — գոռում է նա, — ասա Սանտյագո Նասարին, որ այստեղ իրեն ենք սպասում, որ սպանենք:

Քրիստո Բեդոյան գուցեև նրան խանգարելու այդ ծառայությունը մատուցեր: «Եթե ես ատրճանակ կրակել իմանայի, Սանտյագո Նասարն այժմ ողջ կլիներ», ասաց նա ինձ: Բայց ատրճանակի փողին դեմ առնող գնդակի պայթման վտանգի մասին այնքան խոսակցություններ լսելուց հետո, նա սարսափում է այդ մտքից:

— Նախազգուշացնում եմ՝ նա զինված է այնպիսի զենքով, որ մեքենա կարող է ջարդուփշուր անել, — գոռում է նա:

Պեդրո Վիկարիոն գիտեր, որ դա ճիշտ չէ: «Նա երբեք չէր զինվում, եթե հեծյալի զգեստ հագած չէր լինում», ասաց նա ինձ: Սակայն երևի կգերադասեր, որ նա զինված լիներ, երբ ինքը որոշեց մաքրել քրոջ պատիվը:

— Մեռածները չեն կրակում, — գոռում է նա:

Դռներում հայտնվում է Պաբլո Վիկարիոն: Դեմքը եղբոր դեմքի նման գունատ, հարսանյաց երեկոյին հագած ժակետով, ձեռքում՝ լրագրի մեջ փաթաթած դանակը: «Եթե դա չլիներ, — ասաց ինձ Քրիստո Բեդոյան, — երբեք չէի իմանա, թե նրանցից ով՝ ով է»: Պաբլո Վիկարիոյի թիկունքում հայտնվում է Կլոտիլդե Արմենտան: Նա գոռում է Քրիստո Բեդոյային, որ շտապի, և որ թուլամորթների այս երկրում միայն նրա պես մարդը կարող է խափանել ողբերգությունը:

Այն, ինչ կատարվում է հետո, դառնում է հանուրի սեփականություն: Նավամատույցից վերադարձող ժողովուրդը, գոռոցներից բորբոքված, սկսում է հրապարակի շուրջը տեղ գրավել, որպեսզի ներկա լինի հանցագործ արարքին: Քրիստո Բեդոյան ծանոթներին հարցնում է Սանտյագո Նասարի մասին, բայց ոչ ոք նրան տեսած չի լինում: Հասարակաց ակումբի մուտքի մոտ հանդիպում է գնդապետ Լազարո Ապոնտեին և պատմում Կլոտիլդե Արմենտայի կրպակի դիմաց հենց նոր տեղի ունեցածի մասին:

— Չի կարող պատահել, — ասում է գնդապետ Ապոնտեն: — Ես նրանց ուղարկեցի քնելու:

— Ես հենց նոր հանդիպեցի նրանց խոզ մորթելու դանակները ձեռքներին, — ասում է Քրիստո Բեդոյան:

— Չի կարող պատահել, որովհետև նախքան քնելու ուղարկելը, ես խլեցի նրանց դանակները, — ասում է ալկալդը: — Երևի դու դրանից առաջ ես տեսել նրանց:

— Ես նրանց երկու րոպե առաջ տեսա, ամեն մեկի ձեռքին մի-մի խոզ մորթելու դանակ, — ասում է Քրիստո Բեդոյան:

— Սատանան տանի, — ասում է քաղաքագլուխը: — ՈՒրեմն նրանք վերադարձել են ուրիշ դանակներով:

Նա խոսք է տալիս անմիջապես զբաղվել այդ հարցով, բայց մտնում է Հասարակաց ակումբ՝ երեկոյի համար մի պարտիա դոմինո պատվիրելու, իսկ երբ դուրս է գալիս այնտեղից, ոճիրն արդեն կատարված է լինում: Քրիստո Բեդոյան կատարում է իր միակ մահացու սխալը. վճռելով, որ Սանտյագո Նասարը վերջին պահին որոշել է առանց շորերը փոխելու գնալ մեր տուն ընթրիքի, ինքն էլ գնում է նրա ետևից: Շտապ քայլերով անցնում է գետափով, ամեն հանդիպողի հարցնում, թե, արդյոք, չեն տեսել, բայց ոչ ոք չի կարողանում ճիշտ պատասխան տալ: Նա չի վհատվում՝ մեր տուն տանող ուրիշ ճնապարհներ էլ կային: Պրոսպերա Արանգոն, պճնուհին, աղերսում է նրան որևէ օգնություն ցույց տալ մահճակալի վրա ընկած մահամերձ հորը՝ նրան եպիսկոպոսի անեծքից փրկելու համար: «Ես նրան տեսա անցնելիս,— ասաց ինձ քույրս՝ Մարգոն: — Դեմքը հանգուցյալի դեմքի էր նման»: Քրիստո Բեդոյան կորցնում է չորս րոպե, խոստանում է վերադառնալ ավելի ուշ և հիվանդին ավելի մանրազնին քննել, սակայն Պրոսպերա Արանգոյին օգնում է հիվանդին ննջարան տեղափոխել և էլի երեք րոպե է կորցնում: Երբ վերջապես դուրս է գալիս, լսում է հեռավոր աղմուկ, և նրան թվում է, թե հրապարակում հրաձգություն է սկսվել: Փորձում է վազել, բայց գոտկատակը

խոթած ատրճանակը խանգարում է նրան: Շրջանցելով վերջին անկյունը, թիկունքից ճանաչում է մորս, որ քարշ տալով տուն էր տանում փոքր տղային:

— Լուիզա Սանտյագա, — գոռում է նա, — ուր է քո սանիկը:

Մայրս հազիվ է շրջում արցունքներով ողողված դեմքը:

— Ախ, որդիս, — պատասխանում է նա, — ասում են՝ նրան սպանեցին:

Այդպես էր: Այն ժամանակ, երբ Քրիստո Բեդոյան փնտրում է նրան, Սանտյագո Նասարը մտնում է նշանածի՝ Ֆլորա Միգելի տուն, որ գտնվում էր ճիշտ այնտեղ անկյունում, որտեղ Քրիստո Բեդոյան վերջին անգամ տեսել էր նրան: «Մտքովս անգամ չանցավ, որ նա կարող էր այնտեղ լինել, — ասաց ինձ նա, — որովհետև այդ տան ապրողները երբեք կեսօրից շուտ չէին արթնանում»: Դա սովորական երևույթ էր. Նաիր Միգելն ամբողջ համայնքի կողմից հարգված մարդ էր, նրա հեղինակությունն անառարկելի էր, և, համաձայն նրա կամքի, ընտանիքի բոլոր անդամները քնում էին մինչև ժամը տասներկուսը: «Դա է պատճառը, որ անհոգ Ֆլորա Միգելը բացված վարդի է նման», ասում էր Մերսեդեսը: Ճշմարտությունն այն էր, որ նրանք շուտ արթնացող և աշխատասեր մարդիկ էին: Սանտյագո Նասարի և Ֆլորա Միգելի ամուսնության պայմանը ծնողներն էին կապել: Սանտյագո Նասարը պաշտպանում էր ամուսնության նկատմամբ հոր ունեցած հայացքները և վճռականորեն կողմ էր պայմանի իրականացմանը: Թեև Ֆլորա Միգելը լիովին օգտվում էր իր ծաղկուն վիճակից, բայց ազնվության և համեստության հարցերում դեռ շատ պակասություններ ուներ: Նա արդեն քավորկին էր եղել իր սերնդակիցների բոլոր հարսանիքներին, այնպես որ ծնողների պայմանը ուղղակի չտեսնված փրկություն էր նրա համար: Նրանց նշանադրությունը հասարակ էր, առանց այցելությունների և սրտագին հառաչանքների: Բազմիցս հետաձգված հարսանիքը վերջապես նշանակված էր գալիք Հարության տոների վերջերին:

Այն օրը Ֆլորա Միգելն արթնանում է եպիսկոպոսի շոգենավի սուլոցից և քիչ անց իմանում, որ Վիկարիո երկվորյակները սպասում են Սանտյագո Նասարին, որ սպանեն նրան: Միանձնուհի քրոջս, որ դժբախտությունից հետո արժանացել էր նրա հետ խոսելու բախտին, չի կարողանում ասել, թե ով էր հայտնել իրեն նախատեսվող սպանության լուրը: «Միայն հիշում եմ, որ առավոտյան ժամը վեցին ողջ աշխարհը գիտեր այդ մասին», ասել էր նա քրոջս: Բայց նա չի հավատում, որ կարող են սպանել Սանտ-

յագո Նասարին, այլ մտածում էր, որ, երևի, ուզում են բռնի կերպով ամուսնացնել Անխելա Վիկարիոյի հետ՝ վերջինիս կորցրած պատիվը վերականգնելու նպատակով: Նա ստորացման ճնշնաժամ է ապրում: Եվ երբ բոլորը եպիսկոպոսին են սպասում, նա ննջարանում խեղդվում է հուսահատության արցունքներից և զայրույթով արկղիկն է ճխտում Սանտյագո Նասարի՝ քուլեջից ուղարկած նամակները:

Ֆլորա Միգելին այցելելիս Սանտյագո Նասարը բանալիներով միշտ տկտկացնում էր պատուհանների մետաղյա ճաղերը, թեկուզ տանը Ֆլորա Միգելից բացի ուրիշ մարդ չլիներ: Այդ օրն աղջիկը սպասում էր նրան. արկղիկը փեշի տակ պահած: Սանտյագո Նասարը փողոցից չէր կարող տեսնել նրան, և, մինչև բանալիներով կտկտացներ, աղջիկը մետաղյա ճաղերի միջից նկատում է նրան:

— Մտիր, — ասում է նա:

Առավոտյան 6-ն անց 45-ին այդ տան դուռը բացող դեռ չէր եղել, նույնիսկ բժիշկը: Սանտյագո Նասարը Ջամիլ Շաուիի կըրպակի մոտ հենց նոր էր բաժանվել Քրիստո Բեդոյայից. անհավատալի է, որ հրապարակում գտնվող այնքան մարդկանցից ոչ ոք նկատած չլիներ նրա՝ հարսնացուի տուն մտնելը: Պաշտոնական քննիչը փորձեց գտնել գոնե մեկին, որ տեսած լիներ: Նա այդ անում է նույն այն համառությամբ, ինչ որ ես, բայց՝ ապարդյուն: Եվ եզրակացության 382-րդ էջի լուսանցքում կարմիր թանաքով գրում է մի նոր իմաստնություն. **«Ճակատագիրը մեզ կույր է դարձնում»:** Սանտյագո Նասարը մտնում է գլխավոր մուտքից, բոլորի աչքի առջև: Ֆլորա Միգելը, զայրույթից դեղնած, սպասում է նրան դահլիճում և, վերջինիս ներս մտնելուն պես, նրան է մեկնում նամակների արկղը:

— Առ, — ասում է նա: — Եվ թեկուզ սպանեն քեզ:

Արկղն ընկնում է ապշած Սանտյագո Նասարի ձեռքից, նամակները ցրվում են հատակով մեկ: Նա փորձում է մտնել ննջարան, բայց Ֆլորա Միգելը փակում է դուռն ու գցում սողնակը: Նա բախում է դուռը, ժամին անպատեհ աղմուկ բարձրացնում, ամբողջ տունը ոտքի հանում: Երևում են թվով տասնչորսից ավելի նրա արյունակիցները՝ մեծ ու փոքր դիվանագետները: Վերջինը հայտնվում է Նաիր Միգելը՝ ներկած մորուքով, հայրենիքից բերած բեդվինի չալմայով, որ երբեք գլխից չէր հանում, նույնիսկ տանը: Ես ճանաչում էի նրան. ծանրակշիռ, հաղթանդամ մարդ էր նա, բայց նրա ուժը նրա հեղինակության մեջ էր:

— Ֆլորա, — կանչում է նա իր լեզվով, — բացիր դուռը:

Նա մտնում է աղջկա ննջարանը, մյուսները զարմացած նայում են Սանտյագո Նասարին, որ, ծնկաչոք, հատակից հավաքում է նամակներն ու դարսում արկղիկի մեջ: «Խղճալի տեսարան էր», ասացին ինձ: Մի քանի րոպե անց Նաիր Միգելը դուրս է գալիս ննջարանից, ձեռքով նշան է անում, և ընտանիքի բոլոր անդամներն իսկույն անհետանում են:

Նա Սանտյագո Նասարի հետ խոսում է արաբերեն: «Իսկույն զգացի, որ իմ հայտնածի մասին նա ոչ մի տեղեկություն չուներ», ասաց նա ինձ: Տեղեկանում է, թե գիտի, արդյոք, որ Վիկարիո եղբայրները նրան են փնտրում, որ սպանեն: «Գույնը գցեց, իրեն այնպես կորցրեց, որ դժվար էր որոշել՝ հասկանում է թե՞ ոչ», ասաց նա ինձ: Եվ որոշում է, որ նրա այդ վիճակը ոչ թե վախից է, այլ շփոթմունքից:•

— Դու ինքդ պետք է գիտենաս՝ նրանք ճիշտ են, թե՞ ոչ, — ասում է նա: — Բոլոր դեպքերում դու միայն երկու ելք ունես. կամ պատսպարվում ես այս տանը, որ նաև քո տունն է, կամ վերցնում ես հետդ իմ հրացանը:

— Ես դրանից ոչինչ չեմ հասկանում, — ասում է Սանտյագո Նասարը:

Դա միակ նախադասությունն է լինում, որ նա արտասանում է իսպաներեն: «Ասես թրջված ծիտ լիներ», ասաց ինձ Նաիր Միգելը: Նա նրա ձեռքից վերցնում է արկղիկը, որ շփոթված Սանտյագո Նասարը չի իմանում, ուր դնել, երբ ուզում է բացել դուռը:

— Նրանք երկուսով կլինեն քո դեմ, — ասում է նրան:

Սանտյագո Նասարը մեկնում է: Հրապարակում հավաքված ժողովուրդն ասես ներկայացման սպասելիս լիներ: Բոլորը նկատում են նրան, բոլորը հասկանում են, որ նա արդեն գիտի, որ պետք է սպանեն իրեն, բայց չի կարողանում գտնել տան ճանապարհը: Ասում են՝ իբր ինչ-որ մեկը պատշգամբից գոռում է. «Ոչ այստեղով, թուրք... Հին դռնով, հին...»: Սանտյագո Նասարը փորձում է գտնել այդ գոռացողին: Ջամիլ Շաուին գոռում է, որ վազի դեպի իր կրպակը, իսկ ինքը տուն է ընկնում որսորդական հրացանի ետևից, բայց չի կարողանում հիշել, թե որտեղ է պահել փամփուշտները: Սկսում են գոռալ ամեն կողմից, և Սանտյագո Նասարը, միաժամանակ լսվող այդքան ձայներից շփոթված, մի քանի անգամ աջ ու ձախ է վազում: Նա վազում է դեպի տան ետնամուտքը, բայց հանկարծ հիշում է, որ գլխավոր մուտքի դուռը բաց է:

— Գալիս է, — ասում է Պեդրո Վիկարիոն:

Երկուսն էլ միաժամանակ են նկատում նրան: Պաբլո Վիկարիոն հանում է ժակետը, կախում է աթոռի թիկնակից, բացում է փաթեթն ու դանակը բարձրացնում, ինչպես յաթաղան: Իարից անկախ նրանք խաչակնքում են երեսները: Կլոտիլդե Արմենտան կառչում է Պեդրո Վիկարիոյի վերնաշապիկից և գոռում Սանտյագո Նասարին, որ փախչի, որ ուր-որ է կսպանեն նրան: Նրա այդ ահռելի գոռոցը ծածկում է բոլոր ձայները: «Սկզբում նա վախեցավ, — ասաց ինձ Կլոտիլդե Արմենտան, — չհասկացավ, թե ով և որտեղից է գոռում»: Բայց երբ նկատում է նրան, տեսնում է նաև Պեդրո Վիկարիոյին, որը մի հարվածով գետին է տապալում կնոջն ու եղբորից առաջ իջնում: Սանտյագո Նասարը այդ պահին գտնվում էր տանից մոտ 50 մետր հեռավորության վրա. վազում է դեպի գլխավոր մոտքը:

Դրանից հինգ րոպե առաջ Վիկտորիա Գուսմանը խոհանոցում պատմում է Պլասիդա Լիներոյին այն, ինչն արդեն հայտնի էր ամբողջ աշխարհին: Պլասիդա Լիներոյի ջղերն ամուր էին, և նա չի ընկնում իրարանցման մեջ: Հարցնում է Վիկտորիա Գուսմանին, թե նա հայտնե՞լ է, արդյոք, տղային այդ մասին, և վերջինս կանխակալ ստում է, պատասխանելով, որ, իբր, երբ տղան իջել է սուրճ խմելու, ինքը դեռևս ոչնչի տեղյակ չի եղել: Դիվինա Ֆլորը շարունակում է սրահի փոշին մաքրել և հանկարծ նկատում է Սանտյագո Նասարին, որ մտնում է հրապարակ և սկսում է բարձրանալ ննջարան տանող հին նավամատույցի աստիճաններով: «Դա, իրոք, տեսիլքի էր նման, — պատմեց ինձ Դիվինա Ֆլորը: — Հագին սպիտակ շորերն էին, ձեռքին ինչ-որ բան ուներ. ինձ թվաց, թե վարդերի փունջ էր գրկել»: Այնպես որ, երբ Պլասիդա Լիներոն հարցնում է, Դիվինա Ֆլորը հանգստացնում է նրան:

— Մեկ րոպե առաջ սենյակ մտավ, — ասում է նրան:

Այդ պահին Պլասիդա Լիներոն նկատում է հատակին ընկած ծրարը, բայց չի մտածում բարձրացնել այն: Միայն հետո, ողբերգական շփոթության պահին, ինչ-որ մեկը հաղորդում է նրան նամակի իմաստը: Բայց դռնից նա հանկարծ նկատում է Վիկարիո եղբայրներին, որ մերկացրած դանակներով վազում են դեպի իրենց դուռը: Իր տեղից նա տեսնում է նրանց, բայց չի կարողանում տեսնել որդուն, որ դեպի դուռն է վազում մյուս անկյունից: «Մտածեցի, որ նրանք ուզում են ներս խուժել և տանը սպանել նրան», ասաց նա ինձ: Նա վազում է դեպի դուռն ու կտրուկ փակում այն: Արդեն սողնակը գցած, լսում է Սանտյագո Նասարի գոռոցն ու դռանը իջնող տագնապալի հարվածները, բայց կարծում է, թե այդ գոռգոռոցը ննջարանի պատշգամբից է գալիս, որտեղից տղան հայհոյանք է թափում Վիկարիո եղբայրների գլխներին: ՈՒ ինքն էլ նետվում է օգնելու նրան:

Մի քանի վայրկյան է մնում, որ Սանտյագո Նասարը տուն գցի իրեն, երբ դուռը փակվում է ներսից: Նա բռունցքներով

ծեծում է դուռը, բայց նույն պահին էլ ստիպված է լինում շրջվել և անզեն ձեռքերով դիմավորել թշնամիներին: «Ես սարսափեցի, երբ տեսա նրան դեմս կանգնած, — ասաց ինձ Պաբլո Վիկարիոն: — Նա կրկնակի մեծ թվաց, քան կար իրականում»: Սանտյագո Նասարը բարձրացնում է ձեռքը, որ կասեցնի աջից հարձակվող Պեդրո Վիկարիոյի առաջին հարվածը:

— Պոռնիկի լակոտներ, — գոռում է նա:

Դանակը անցնում է նրա աջ դաստակի միջով և մինչև կոթը խրվում կողը: Նրա գոռոցի ձայնը լսում են բոլորը:

— Ախ, մայրիկ...

Մսագործ Պեդրո Վիկարիոն դանակը դուրս է քաշում ըստ սովորության և մի երկրորդ հարված է հասցնում հենց նույն տեղը: «Զարմանալին այն էր, որ դանակը մաքուր էր դուրս գալիս, — հայտարարեց Պեդրո Վիկարիոն քննիչին: — Ամենաքիչը երեք հարված հասցրեցի, բայց մի կաթ արյուն չկաթեց»: Երրորդ հարվածից հետո Սանտյագո Նասարը փորն է պաշտպանում ձեռքերով, հետո գազանի նման մռնչում և փորձում է մեջքը դարձնել նրանց: Զախից Պաբլո Վիկարիոն կեռ դանակով միակ հարվածն է հասցնում գոտկատեղին և արյան ուժեղ շիթը ցրցամում է նրա վերնաշապիկը: «Արյունից էլ նրա հոտն էր գալիս», ասաց նա ինձ: Երեք անգամ մահացու վիրավորված, Սանտյագո Նասարը դեմքը նորից է նրանց դարձնում, հենվում է մեջքով մայրական դռանն ու այլևս ոչ մի դիմադրություն ցույց չի տալիս: «Էլ չէր գոռում, — ասաց Պեդրո Վիկարիոն քննիչին: — Թվաց թե նունիսկ ծիծաղում է»: Եվ վախի սահմանն անցածի կույր համարձակությամբ նրանք սկսում են դաշունահարել նրան՝ դռանը սեղմած, համաչափ, թեթև հարվածներով: Նրանք չեն լսում իրենց իսկ ոճրագործությունից սարսափահար եղած ամբոխի աղմուկ-աղաղակը: «Ինձ զգում էի անպես, ինչպես արագ ընթացող ձիավորն է զգում իրեն», հայտարարեց Պաբլո Վիկարիոն: Ուժասպառ եղած, շուտով երկուսն էլ ուշքի են գալիս, բայց... նրանց թվում է, թե Սանտյագո Նասարը երբեք չի ընկնելու: «Սարսափելի բան, եղբայրս, — ասաց ինձ Պաբլո Վիկարիոն, — դու չես պատկերացնում, թե ինչքան դժվար է մարդ սպանելը»: Որպեսզի միանգամից վերջացնի գործը, Պեդրո Վիկարիոն փնտրում է նրա սիրտը այնտեղ, որտեղ առհասարակ խոզերի սիրտն է լինում: Իրականում Սանտյագո Նասարը չի ընկնում այն պատճառով, որ դանակի հարվածները նրան գամած են լինում դռանը: Գազազած Պաբլո Վիկարիոն մի հորիզոնական հարված է հասցնում փորին և փորոտիքը բլթոցով դուրս է թափվում: Պեդրո Վիկարիոն պատրաստվում է նույնպիսի հարված հասցնել, բայց վախից սիրտը կանգնում է, և հարվածը գալիս է ազդրին: Սանտյագո Նասարը էլի որոշ ժամանակ մնում է դռանը հենված, հետո նկատում է լույս աշխարհ ելած սեփական կապտագույն փորոտիքն ու... ծնկի է իջնում:

Ննջասենյակներում բարձրաձայն կանչելուց հետո, Պլասիդա. Լիներոն մոտենում է պատուհանին և նկատում հրապարակով դեպի եկեղեցի վազող Վիկարիո երկվորյակներին: Որսորդական հրացանը ձեռքին նրանց ետևից են վազում Ջամիլ Շաուին ու էլի մի խումբ անզեն արաբներ, և Պլասիդա Լիներոն մտածում է, որ վտանգն արդեն անցել է: Նա պատշգամբ է ելնում և մուտքի մոտ, կեղտի ու փոշու մեջ նկատում Սանտյագո Նասարին, որ փորձում է վեր կենալ սեփական արյան միջից: Մի կերպ ոտքի կանգնելով, նա ձեռքի մեջ է հավաքում դուրս թափված սեփական փորոտիքն ու սկսում է քայլել:

Շենքը լրիվ շրջանցելու և խոհանոցի մուտքից ներս մտնելու համար, նա անցնում է հարյուր մետրից ավելի: Նա դեռևս պարզորոշ հասկանում է, որ փողոցի կողմից ճանապարհը երկար է, և մտնում է հարևան բակը: Պոնչո Լանաոն, նրա կինն ու հինգ երեխաները չեն լսում, թե իրենց մուտքից քսան մետրի վրա ինչ է կատարվում: «Աղմուկ լսում էինք, — ասաց ինձ նրա կինը, — բայց մտածեցինք, որ, երևի, եպիսկոպոսի պատվին են գոռում»: Եվ՝ այն պահին, երբ նրանք պատրաստվում են ընթրիքի նստել, ներս է մտնում արնաթաթախ Սանտյագո Նասարը, որ գրկած բերում է սեփական փորոտիքի կույտը: Պանչո Լանաոն ասաց ինձ. «Երբեք չեմ կարողանում մոռանալ նրանից փչող կղկղանքի հոտը»: Նրա ավագ դուստրը, Արխենիդա Լանաոն, պատմեց, որ Սանտյագո Նասարը քայլում էր իր մշտական հպարտությամբ, հաստատ քայլերով, իսկ գանգուր մազերով շրջափակված արաբական դեմքն ավելի գեղեցիկ էր, քան երբևէ: Սեղանի մոտով անցնելիս նա ժպտում է նրանց և գնում դեպի խորքում գտնվող դուռը: «Վախից քար էինք կտրել», ասաց ինձ Արխենիդա Լանաոն: Այդ պահին իմ հորաքույր Վենեֆրիդա Մարկեսը, որ գետի մյուս ափին գտնվող իր տան բակում ձուկ էր չորացնում, նկատում է նրան հին նավամատույցի աստիճաններով բարձրանալիս:

— Սանտյագո՛, որդիս, — գոռում է նա, — այդ ինչ է պատահել քեզ:

Սանտյագո Նասարը նույնիսկ կարողանում է ճանաչել նրան:

— Այն, որ ինձ սպանեցին, Վենե մորաքույր, — պատասխանում է նա:

Վերջին աստիճանի վրա սայթաքում է, բայց իսկույն ոտքի է կանգնում: «Նույնիսկ չմոռացավ ձեռքով աղիքներից մաքրել հողը», ասաց ինձ իմ հորաքույր Վենեն: Հետո նա տուն է մտնում ետին դռից, որ բաց էր առավոտյան ժամը վեցից, և երեսնիվայր ընկնում է խոհանոցի հատակին:

ԱԼԲԵՐ ՔԱՄՅՈՒ. ԱՆԿՈՒՄ

Ֆրանսիացի նշանավոր թատերագիր, թատերգակ, էսսեիստ և փիլիսոփա Ա.Քամյուի (1913—1960) «Անկում» վիպակը լույս տեսավ 1956 թվականին: Այն հեղինակի ստեղծագործություններում առանձնահատուկ նշանակություն ունի. ինչպես նշվել է՝ վիպակը նշանավոր գրողի ողջ գրական-տեսական ժառանգության յուրօրինակ համառոտագրությունն է, ուր, ասես ոսպնյակում, ի մի են բերված ստեղծագործական գրեթե բոլոր մոտիվները: Իր հերոսի ինքնախոստովանությամբ՝ Ա.Քամյուն տվել է ժամանակակից մարդու ներաշխարհի ամբողջական և ուրույն մի համայնապատկեր, որը, կարելի է ասել, բնութագրական է դարաշրջանային իմաստով: Վիպակի հիմնախնդիրը համատարած ա ն կ մ ա ն պատմությունը կերտելն է, որում բացահայտված են ստի, կեղծիքի, փարիսեցիության, աբսուրդի (իր բոլոր դրսևորումներով), մարդկային հարաբերությունների ենթագիտակցական այլասերման, օտարման, խորթացումի հոգևոր, հոգեբանական, սոցիալական և բարոյական հիմքերը:

ԹՈՄԱՍ ՎՈՒԼՖ. ԵՐԿՐԻ ՈՍՏԱՅՆԸ

«Վուլֆյան խոսքի կերտվածքը հիշեցնում է Հոմերոսին,- դա հնադարի երգասացի ասք-արտասանություն է». Մալքոլմ Քաուլիի այս արտահայտությունը լավագույնս բնութագրում է ամերիկյան գրականության հսկայի՝ Թոմաս Վուլֆի (1900—1938) ողջ գրականությունը: «Երկրի ոստայնը» վիպակը հրատարակվել է հետմահու (1939 թ-ին): Ինչպես «Նայիր տանը քո, հրեշտակ», «Ժամանակի և գետի մասին» և «Դեպի տուն վերադարձ չկա» վեպերում՝ հեղինակն այստեղ ստեղծագործում է ֆոլքներյան հայտնի բնորոշմամբ՝ ողջ աշխարհը տեղավորել ասեղի ծակի մեջ: Ամերիկացի գեղջկուհու մենախոսություն-պատմության գրեթե առասպելաբանական կառույցը ներառում է գոյության ողջ խռովքն ու խուլ տագնապը: «Մեզանից դուրս և մեր մեջ իսկ ինչ-որ «անբացատրելի» բան կա»՝ արձակագրի հենց այս խոստովանության մեջ էլ թաքնված է վիպակի վսեմ և ողբերգական, տագնապալի և արարչագործ կենսառիթմը:

ՌԻՉԱՐԴ ԲԱԽ. ՋՈՆԱԹԱՆ ԼԻՎԻՆԳՍԹՈՆ ՃԱՅԸ

Ռիչարդ Բախը (ծնվ. 1933 թ.) ամերիկացի օդաչու է, գերմանացի մեծ կոմպոզիտոր Յո.Ս.Բախի շառավիղներից: Գրականությամբ հիմնավորապես երբեք չզբաղված հեղինակը յոթանասնական թվականներին հրատարակեց «Ջոնաթան Լիվինգսթոն ճայը» այլաբանություն-վիպակը, որն իսկույն բեսթսելեր դարձավ՝ մի տարվա մեջ այն թարգմանվեց աշխարհի

բազմաթիվ լեզուներով: Ամերիկյան քննադատությունն այն նույնիսկ հանրահայտ «Մոբի Դիքի» կողքը դրեց:

Վիպակում գրողի անշո՛ւշտ նաև «օդաչուական» փորձից ծնված վերապրումը միահյուսված է ավետարանական (գուցե նաև բուդդայական) ընկալումներին. «բացարձակ թռիչքի» հոգևոր վիճակում ընթերցողը կնկատի քրիստոնեական վարդապետության նուրբ, նորովի և արդիական մի ընկալում, որը մարդուն հաղորդակից է դարձնում անդրանցումային գոյությանը, մաքրագործում է նրան և միաձուլում համատիեզերական կեցությանը:

ՋՈՐՋ ՕՐՎԵԼ. ԱՆԱՍՆԱՖԵՐՄԱ

Անգլիացի հռչակավոր գրողի (1903—1950) «84» և «Անասնաֆերմա» վեպերը քսաներորդ դարի «հակաուտոպիայի» հանրահայտ նմուշներ են, ուր հեղինակը քննարկում է տոտալ ռեժիմների պայմաններում անհատականության ոչնչացման գործընթացը: «Անասնաֆերման» ս՛ո վ ե տ ա կ ա ն ընթերցողին մեկնելու հարկ հազիվ թե լինի. նա իսկույն (ինչպես ասում են՝ առաջին հայացքից) կճանաչի և անասնաֆերման, և... թող ներվի ասել՝ անասուններին:

ԳԱԲՐԻԵԼ ԳԱՐՍԻԱ ՄԱՐԿԵՍ. ՄԻ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՐՈՆԻԿԱ

«Մոգական ռեալիզմի» կարկառուն դեմքերից մեկի՝ Գ.Գ. Մարկեսի (ծնվ. 1928 թ.) վիպակը շարունակում է «Հարյուր տարվա մենություն» և «Նահապետի աշունը» վեպերի գեղագիտական խնդիրը՝ ֆանտաստիկայի և հեքիաթային պատումի հնարքներով պատկերել կյանքը, տալ նրա հավաստի պատկերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ալբեր Քամյու. ԱՆԿՈՒՄ (թարգմ. Գր. Քեշիշյանի)
Թոմաս Վուլֆ. ԵՐԿՐԻ ՈՍՏԱՅՆԸ (թարգմ. Ա. Ջիվա
Ջորջ Օրվել. ԱՆԱՄՆԱՖԵՐՄԱ (թարգմ. Ա. Էմինի)
Ռիչարդ Բախ. ՋՈՆԱԹԱՆ ԼԻՎԻՆԳՍԹՈՆ ՃԱՅԸ
(թարգմ. Ն. Հարությունյանի) . . . . . .
Գաբրիել Գարսիա Մարկես. ՄԻ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՍՊԼ
ԽՐՈՆԻԿԱ (թարգմ. Հ. Սահակյանի) . . . . . .
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . .

ԱԼԲԵՐ ՔԱՄՅՈՒ
ԹՈՄԱՍ ՎՈՒԼՖ
ՌԻՉԱՐԴ ԲԱԽ

ՋՈՐՋ ՕՐՎԵԼ
ԳԱԲՐԻԵԼ ԳԱՐՍԻԱ ՄԱՐԿԵՍ

ԱՊԱՅՈՒՆ

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂ, 1991 ԹՎԱԿԱՆԻՆ
«ԳԱՐՈՒՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԳՐԱԳԱՐԱՆԸ ՁԵՋ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ
ՀԵՏԵՎՅԱԼ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ

ԹՈՄԱՍ ԷԼԻՈԹ. «ՄԵՌՅԱԼ ԵՐԿԻՐԸ»
ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ. «ՀԻՍՈՒՍ ՈՐԴԻ»
ԽՈՐԽԵ ԼՈՒԻՍ ԲՈՐԽԵՍ. «ԵՐԿՈՒ ԱՐՔԱՆԵՐՆ ՈՒ
ԵՐԿՈՒ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՆԵՐԸ»
ՕՍԿՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄ. «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ԳԻՆԸ 6ռ.